Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

А. Г. ВАРДАНЯН

ВОПРОС ОСВОБОЖДЕНИЯ ЗАПАДНЫХ АРМЯН И АРМЯНСКИЕ ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКИЕ ТЕЧЕНИЯ

В ПОСЛЕДНЕЙ ЧЕТВЕРТИ XIX ВЕКА

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1967

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ. Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ

XIX Դ. ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1967

Ժամանակի մամուլի, գրականության և արխիվային փաստաթղթերի լայն օգտագործման հիման վրա, աշխատությունը լուսաբանում է արևմտահայերի իրավա-քաղաքական վիճակը, բացահայտում ու մերկացնում է սուլթանական կառավարության հայաջինջ քաղաքականությունը հատկապես 1878 թվականի Բեռլինի կոնգրեսից հետո։ Ապացուցում է հայ ժողովրդի սուլթանական բռնապետության դեմ ուղղված ազգային-ազատագրական պայքարի արդարացիությունը, մերկացնում է եվրոպական խոշոր պետությունների դիվանագիտական խաղերը հայերի և Հայկական հարցի նկատմամբ։

Մենագրությունում ցույց է տրվում հայ հասարակական-քաղաքական հոսանքների, աչքի ընկնող մտավորականների ու քաղաքական գործիչների դիրքորոշումը արևմտահայերի ազատագրության հարցում։

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1

Հայ ժողովուրդը ավելի քան հինգ հարյուր տարի տառապել է օսմանյան արյունարբու նվաճողների տիրապետության ներքո։

Հրով ու սրով հաստատելով իրենց գերիշխանությունը, օսմանյան բարբարոսները կործանում էին ժողովրդի տնտեսությունն ու կուլտուրան, վարում էին ասիմիլացման և ֆիզիկական ոչնչացման քաղաքականություն։

Հայ ժողովրդի ողբալի անցյալի նկարագրությանն անդրադառնալիս 1935 թ. նոյեմբերի 28-ի առաջնորդողում «Պրավդան» գրում էր. «Հայաստան... Ով չգիտե այդ ժողովրդի ողբերգական ու կոշմարային անցյալը։ Գտնվելով երկու աշխարհների ու երկու աշխարհամասերի՝ Եվրոպայի և Ասիայի սահմանների վրա, լինելով Հին Արևելքի երբեմնի հզորագույն երկրներից մեկը, Հայաստանը եղել է անվերջ ճակատամարտերի ու ասպատակությունների թատերաբեմ։ Մի նվաճողին փոխարինում էին մյուսները։ Սրով ու մրրկով սլանում էին երկրի վրայով հոները, պարսիկները, հոռոմեացիները, արաբները, բյուզանդացիները, սելջուկները, մոնղոլները և օսմանցիները։ Հազիվ էր ժողովուրդը ուշքի գալիս մի ավերիչ փոթորկից, երբ վրա էր հասնում նորը։ Եվ նորից կործանվում էին գյուղերը, քաղաքները, կործանվում էր կուլտուրան, ոչնչանում էին աշխատավոր հայերը»[1]։

Բայց հայ ժողովուրդը հեզությամբ չի տարել օտար բռնակալների լուծը։ Նրա պատմությունը միաժամանակ եղել է օտար նվաճողների դեմ մղված հերոսական պայքարի պատմություն, պատմություն, որը սերտորեն առնչվել է արևելյան և արևմտյան տերու-

1 «Պրավդա», № 327 (6573), 1935։

թյունների միջև տեղի ունեցած պատերազմների և աշխարհակալական զավթումների հետ։

Հայաստանը եղել է այդ ոստիկների ընդհարումների ասպարեզ։ Նրանց առաջխաղացումները չէին կարող տեղի ունենալ այլ կերպ, քան Հայաստանի վրայով, առաջխաղացումներ, որոնք լրջորեն շոշափում էին հայ ժողովրդի կենսական շահերը։

Պատմական Հայաստանը հանդիսացել է «Եվրոպայի և Ասիայի կամուրջը»[2]—գրում է Բաֆֆին, իսկ հայ ժողովրդի կրած ծանր տառապանքների մասին, շարունակում է նա «Հունաց կայսրը մեկ կողմից, պարսից արքան մյուս կողմից, երկու անհագ վիշապների նման, բերանները բաց արած, մաքառում էին միմյանց դեմ, թե ո՞րը ավելի շուտ կկլանե անտեր մնացած երկիրը...»[3]։

Այդ աշխարհակալների համար Հայաստանը «մի կամուրջ էր, որտեղից պետք է անցնեին սրանք՝ միմյանց հանդիպելու համար»։ Ուստի, գրում է Բաֆֆին, «Հայաստանը մնաց երկու կրակի մեջտեղում, դեպի որ կողմը որ մոտենում էր, այրվում էր»[4]։

Հայ ժողովրդի անձնուրաց զավակները անօրինակ սխրագործություններ են կատարել օտար բռնակալների դեմ մղված ազատագրական պայքարում, բայց ուժերի անհավասարության հետևանքով նրանք տանուլ են տվել։ Այդ մասին հայ մեծ դեմոկրատ-լուսավորիչ Խ. Աբովյանը տառապալից հպարտությամբ գրում է. «Սար ըլեր՝ փուլ կգար, երկաթ ըլեր՝ կհալչեր, ծով ըլեր՝ կպակասեր, կցամաքեր, բայց Աստվածասեր հայ ազգը՝ մինչև էսօր գերօրինակ հսկայությամբ տարավ բոլորը ու իր անունը պահեց»[5]։

Բագրատունիների ժամանակ հայերը սկսեցին մի քիչ շունչ քաշել և կարողացան քաղաքական կարևոր դիրք գրավել Արևելքում։ Բայց կենտրոնացված իշխանության բացակայության պատճառով XI դարի կեսին հույները գրավեցին Հայաստանը։

Առաջավոր Ասիան և Անդրկովկասը ավար դարձան Լենկ-Թեմուրի (1336—1403 թթ.) թուրք-մոնղոլական նվաճումներին, որոնց տիրապետության ժամանակ կործանման եզրին հասան երկրի արտադրողական ուժերը, գյուղատնտեսությունն ու ոռոգման սիստեմը, ժողովրդի կուլտուրան։

---

2 «Մշակ», № 126, 1879։

3 Բաֆֆի, Սամվել, Հայպետհրատ, 1957, էջ 27։

4 Նույն տեղում։

5 Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, 1955, էջ 97։

«Ավերիչ մի պատերազմ,—գրում է Էնգելսը,—ընդունակ էր մի քանի դարով անմարդաբնակ անել երկիրը և զրկել նրան իր ամբողջ քաղաքակրթությունից»[6]։

Սելջուկները ու մոնղոլները երկար չէին մնում իրենց նվաճած երկրներում։ Նրանք արագորեն թողնում էին այդ տերիտորիաները։ Այլ էր թուրք-թաթարական հորդաների տիրապետությունը։ Սրանք հանդիսացան է՛լ ավելի դաժան բռնակալներ։

Թուրքերի նախահայրերն ապրում էին Միջին Ասիայի տափաստաններում։ Հինգ հարյուր տարվա ընթացքում հրի ու սրի մատնելով բազմաթիվ ժողովուրդների, թուրքական հորդաները դարձան Արևելքի հզոր տիրակալները, որոնք իրենց տիրապետությանը ենթարկեցին Աֆրիկայի, Ասիայի ու Եվրոպայի շատ ժողովուրդների։ Նրանք Փոքր Ասիայում եկվորներ են։ «Ժամանակագրական քաղվածքներ» աշխատության մեջ Կ. Մարքսը հաղորդում է, որ թուրքերն առաջին անգամ երևան են եկել իրենց գրված ժամանակակից սահմաններում 1230 թվականից։ Ուստի «գրեթե հենց այդ նույն ժամանակ,—գրում է Մարքսը,—թուրք օսմանցիների հորդան մուտք է գործում Փոքր Ասիա, որտեղ նախ և առաջ նրանք հիմնում են Ղարահիսար ավազակային պետությունը»[7]։

Օսմանյան ցեղերը ձգտում էին տիրել բազմաթիվ ժողովուրդների, ասիմիլյացնել նրանց և հաստատել իրենց համաշխարհային տիրապետությունը։ Նրանք մեծ ախորժակ ունեին գրավելու Եվրոպան։ Դրա համար պետք է ընդհարվեին այն ժամանակ իրենց առջև ծառացած Բյուզանդական կայսրության հետ, որի տերիտորիան կամուրջ էր՝ Եվրոպա ներխուժելու համար։

Թուրքական հորդաները արագորեն գրավեցին Պելեպոնեսն ու Ալբանիան, Ղրիմն ու Մոլդավիան, Պարսկաստանն ու Հայաստանը, Ասորիքը, Պաղեստինն ու Եգիպտոսը, Սիրիան, Հունգարիայի զգալի մասը, Միջագետքն ու Վրաստանը, մոտեցան Վիեննային։

XVII դարի սկզբից օսմանյան նվաճողների և պարսկական ցեղերի միջև տեղի ունեցան երկարատև պատերազմներ՝ Փոքր Ասիային և Անդրկովկասին տիրապետելու համար։ Անդրկովկասի ժողովուրդները կանգնեցին նոր ու սարսափելի աղետների առջև։ Պարսկաստանի Շահ Աբբաս I-ի բանակը 1603—1608 թվականներին գրավեց Ադրբեջանը, Հայաստանը և Արևելյան Վրաստանը։

---

6 *Կ. Մարքս և Ֆ. Էնգելս.* Сочинения, т. 9, Москва, 1957, էջ 132։

7 Архив К. Маркса и Ф. Энгельса, т. V, էջ 223։

Այսպիսով, Արևելքում կազմավորվեցին երկու հզոր ռազմա-ֆեոդալական տերություններ՝ օսմանյան և պարսկական, որոնք տեսական կոիվների ճանապարհով 1639 թվականին վերջնականապես իրար մեջ բաժանեցին Հայաստանը և սահմանեցին իրենց արյունոտ տիրապետությունը։

Հայ ժողովրդի պատմության մեջ վրա հասան ամենամռայլ ժամանակները։ Թուրքիայի ներքին ուժերի բախումները, հպատակ ժողովուրդների ազատագրական շարժումները և 1683 թվականին Վիեննայի մոտ ստացած լուրջ հարվածը թուլացրին Օսմանյան կայսրության երբեմնի ռազմական հզորությունն ու փառքը։

1768—1774 թվականների ռուս-թուրքական պատերազմում Թուրքիայի կրած պարտությունը և Ռուսաստանի տարած հաղթանակը հզոր հարված էր օսմանյան հզփացած նվաճողներին։

Թուրքիայի դեմ Ռուսաստանի մղած պատերազմների հաջողությունները և հպատակ ժողովուրդների համակրության աճումն ու զարգացումը Ռուսաստանի նկատմամբ Անգլիային ու Ֆրանսիային մղեցին դեպի թուրքապաշտպանական դիրքը, Թուրքիային հովանավորելու քաղաքականության, որոնք ամենից ավելի մեծ շահեր ունեին Թուրքիայում։

1801 թվականին Վրաստանի միացումը Ռուսաստանին, 1813 թվականին կնքված Գյուլիստանի հաշտության պայմանագիրը Անգլիային ու Ֆրանսիային ավելի ու ավելի էին գաղափարնում Ռուսաստանի դեմ։ Դրա համար էլ նրանք 1815 թվականին Վիեննայի կոնգրեսում սահմանեցին, այսպես կոչված՝ «Status quo»—Թուրքիայի անձեռնմխելիությունը, որը միաժամանակ ուղղված էր հպատակ ժողովուրդների ազատագրական շարժումների դեմ։ Հետևապես, Անգլիայի ու Ֆրանսիայի այդ քաղաքականությունը հպատակ ժողովուրդներին ավելի էր մղում Ռուսաստանի գիրկը։ Վիեննայի կոնգրեսից հետո եվրոպական տերությունների շահերի բախման հետևանքով, իր գործած բոլոր ոճրագործություններով հանդերձ՝ Թուրքիան մնաց կանգուն։

Անգլիական բուրժուազիայի ականավոր քաղաքագետ Լլոյդ Ջորջը «Ճշմարտություն հաշտության պայմանագրերի մասին» վերնագրով իր մեմուարներում Թուրքիայի մասին գրել է. «Թուրքերը կառավարում, ավելի ճիշտ՝ ճնշում էին աշխարհի ամենապտղաբեր ու փառապանծ երկրամասերի ժողովուրդներին։ Նրանց կառավարությունը ոչ մի հաջողություն չուներ նվաճած տերիտորիաներից և ոչ մեկում, և, ինձ թվում է, որ նրանք թերևս աշխարհի այն միակ ժողովուրդն են, որի մասին այդ կարելի է ասել առանց որևէ վերապահության։ Թուրքերը կառավարել են այն երկրները, որոնք եղել են քաղաքակրթության օրրաններ, քաղաքակրթության տաճարներ, իսկ նյութական տեսակետից, նրանք ժամանակին եղել են քաղաքակրթության շտեմարաններ։ Այժմ այդ գեղեցիկ երկրները ամայի անապատներ են... Մեծ նվաճում կլինի, եթե մենք այդ փառապանծ երկրներին վերադարձնենք իրենց նախկին մեծությունը, եթե նրանց հնարավորություն տանք կրկին մասնակցելու ամբողջ աշխարհի բարգավաճության ու ծաղկման ուղղությամբ կատարվող ընդհանուր աշխատանքին»[8]։

1768—1774 թվականների ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ռուսական կայսրուհի Եկատերինա II-ը և նրա հաջորդները ձգտում էին Թուրքիայի ջախջախմանը, նրա առաջխաղացումների կասեցմանն ու դեպի իր ելման կետը քշելուն։ Բայց Անգլիան ու Ֆրանսիան սահմանեցին «Status quo» և դրանով իսկ լուրջ արգելք հանդիսացան հպատակ ժողովուրդների ազատագրական հակումներին։

«Status quo»-ն չկարողացավ խանգարել Ռուսաստանին՝ նոր պատերազմներ մղելու Թուրքիայի ու Պարսկաստանի դեմ։ 1826—1828 թվականներին Ռուսաստանը հաղթանակ շահեց Պարսկաստանի դեմ մղված պատերազմում և Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանն ազատագրվեց պարսկական ֆեոդալների տիրապետությունից, և իր բախտը կապեց ռուս մեծ ժողովրդի հետ։

Ընդունելով Ռուսաստանի հպատակությունը, արևելահայ ժողովուրդը տնտեսական և կուլտուրական կապ ստեղծեց համեմատաբար ավելի առաջադեմ ժողովրդի հետ, որը Արևելքի նկատմամբ քաղաքակրթության ու պրոգրեսի միսիա ուներ։

Ալամդարյանը, Թաղիադյանը և Աբովյանը ողջունեցին Պարսկաստանի դեմ ռուսական զենքի տարած հաղթանակը, ջերմորեն ընդունեցին Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պատմական ակտը։ Նրանք հայ և ռուս ժողովուրդների անխախտ բարեկամության մեջ էին տեսնում նաև արևմտահայ հատվածի ազատագրությունը թուրքական բռնապետությունից։ Խ. Աբովյանն այդ պատմական ակտը դիտում էր իբրև նոր դարագլուխ հայ ժողովրդի կյանքում։

«Սեր, խաղաղություն պահեն զամենայն
Զազգս և զազգինս ի բարօրության»[9]։

---

8 *Ллойд Джордж.* Правда о мирных договорах, т. 1, Москва, 1957, էջ 63։

9 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 374։

1827 թ. հոկտեմբերի 12-ին Թիֆլիսից Երևան, Ներսես Աշտարակեցուն (1771—1857) ուղղած իր նամակով Ալամդարյանը ողջունեց Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պատմական ակտը։

1828 թվականին Երևանի իր բարեկամներին ուղարկած նամակում, որն առաջին անգամ տպագրվել է 1880 թվականին «Փորձ» ամսագրում, Մեսրոպ Թաղիադյանը (1803—1857) գրում է. «Աչքներդ լույս, որ մեր քաղցր աշխարհքն պարսից դառն չարչարանքից ազատվեց, քրիստոնեա տէրութեան ներքո ընկավ։ Փառք բարերարին Աստուծոյ, որ այսուհետև ան էլ նեղութիւն չեք ունենալու, ազատ քաղաքի քաղաքացի պիտի անուանիք, ձեր ազատագրության լուրն և արուեստից յառաջադիմութիւնն բոլոր աշխարհ պիտի տարածուին։

Իմ լա՛վ քաղաքացիք.—էսպէս երջանիկ բախտի, որ դուք եք պատահել, կարծեմ որ մեր նախնիքն ևս Արշակունի թագաւորութեան ժամանակն էլ չէին պատահել, գերա թէպէտ և թագավորութիւնն իւրեանցն էր, սակայն բարբարոսութիւն և զուլումն պակաս չէր»[10]։

Անկախ ռուսական ցարիզմի հետապնդած նվաճողական քաղաքականությունից, 1853—1856 թվականների Ղրիմի պատերազմի ժամանակ հայ ժողովուրդն ամեն կերպ օգնում էր Ռուսաստանին և նրա բանակի հաղթանակին։ Հայ ժողովրդի զավակները, վրացիների ու ադրբեջանիցների հետ միասին քաջաբար կռվում էին ռուսական բանակի շարքերում, նյութապես ու բարոյապես աջակցում նրա հաղթանակին, որի հետ կապվում էր թուրքական բռնակալության տակ տառապող հայերի ազատագրության հույսը։

Անգլիան, Ֆրանսիան և Սարդինիայի թագավորությունը պաշտպանեցին Թուրքիային։ Ռուսաստանը պարտություն կրեց։ **Ուժի մեջ մնաց «Status quo»-ն։**

Անգլիան ու Ֆրանսիան կամենում էին կախման մեջ պահել Թուրքիան և նրան ծառայեցնել Ռուսաստանի դեմ։ Թուրքիայում առաջացավ մի հոսանք, որն ուներ եվրոպական օրիենտացիա և կամենում էր եվրոպականացնել երկիրը։ 1839 թվականին **բանզիմաթը**, 1856 թվականի Հաթթի-Հումայունը և 1876 թվականի Միդհաթի Սահմանադրությունը այդ նպատակն էին հետապնդում։

10 «Կենսագրութիւն Մեսրոպայ Դաւթին Թաղիադեանց Երևանցւոյ», հավաքեց և խմբագրեց Տ. Հովհաննէս, Կ. Մկրեան, Թիֆլիս, 1886, էջ 183։

Առաջացան երիտասարդ թուրքերը՝ պանիսլամիզմի և պանթուրքիզմի գաղափարախոսները, որոնք ջանում էին ասիմիլյացնել Թուրքիայի բոլոր հպատակ ժողովուրդներին ու ցեղերին, դարձնել թուրքիան միասնական ազգ՝ միասնական պետություն ստեղծելու դիտավորությամբ։ Այդ ուղղության ականավոր ներկայացուցիչներից մեկն էր Ցուլադ փաշան, որը Աբդուլ Ազիզին թողած իր կտակ-նամակում (1869 թ.) Թուրքիայի գոյության անհրաժեշտ պայմանը համարում էր հպատակ ժողովուրդների միաձուլումը։

Աբդուլ Համիդի տիրապետության ժամանակաշրջանում (1876—1908 թթ.) Թուրքիան շարունակեց իր նախորդների քաղաքականությունը։

2

Թուրքիայում հպատակ ժողովուրդների համար ստեղծվել էին կյանքի ծանր պայմաններ։ Առանձնապես ծանր էր հայ ժողովրդի դրությունը։ Քրիստոնյաներն իրավազուրկ էին։ Տնտեսական հարստահարությունները, ազգային ու կրոնական հալածանքները, կյանքի ու գույքի անապահովությունը, մարդկային արժանապատվության ու ընտանեկան պատվի արատավորումը,—այդ ժողովուրդներին պետք է մղեին, և իրոք մղեցին ազատագրական պայքարի ուղին։

Ռուսաստանի արևելյան քաղաքականության հաջողությունների հետ կապված հպատակ ժողովուրդները ավելի աշխուժացրին իրենց ազատագրական շարժումները թուրքական բռնապետության դեմ։ 1804 թվականին պայքարի ելան սերբերը, 1821 թվականին զինված ապստամբություն բարձրացրին հույները, 1862 թ. օգոստոսին տեղի ունեցավ Զեյթունի հայության զինված ելույթը։ Ապստամբական շարժումներ տեղի ունեցան Չերնոգորիայում՝ 1862 թվականին, Կրետեում՝ 1866—1868 թվականներին, Բոսնիայում և Հերցեգովինայում՝ 1875 թվականին, Բուլղարիայում՝ 1876 թվականին, Զեյթունում՝ 1878—1879 թվականներին։

Թուրքական բռնապետության դեմ ուղղված հպատակ ժողովուրդների մղած ազատագրական շարժումները արդարացի էին։ Իրենց ազատության նվաճման համար նրանք պետք է հենվեին մի զորեղ տերության օգնության վրա։ Այդ տերությունը Ռուսաստանն էր։

Այդ նկատառումով 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմը, իր պատմական օբյեկտիվ բերումով, անկախ ռուսա-

կան ցարիզմի նվաճողական դիտավորություններից,—պրոգրեսիվ դեր խաղաց։ Նա ազատագրեց բալկանյան սլավոն ժողովուրդներին և նրանց հնարավորություն տվեց ընթանալու կապիտալիզմի ու կապիտալիստական հարաբերությունների հաստատման ու զարգացման ուղիով։

1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմը մի կողմից, բալկանյան ժողովուրդների ազատագրական շարժումները՝ մյուս կողմից, է՛լ ավելի բարձրացրին հայ աշխատավորական մասսաների ինքնագիտակցությունն ու ինքնաճանաչողությունը։ Նրանք նույնպես ազատագրական պատերազմի ելան, օգնեցին ռուսական բանակին և ստեղծված պատմական կոնկրետ դրությունից ելնելով՝ Հայկական հարցի լուծումը կապում էին Ռուսաստանի օգնության հետ։

1878 թվականին Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրով Ռուսաստանն իր վրա վերցրեց լուծելու Հայկական հարցը։ Այդ դաշնագրի 16-րդ հոդվածով Ռուսաստանը Թուրքիային հարկադրում էր անհապաղ կիրառել բարենորոգումներ և ապահովել հայերի կյանքն ու գույքը թուրքական փաշաներից, քրդական բեկերից և չերքեզներից։

Արևմտաեվրոպական մեծ տերությունները կոալիցիա կազմեցին Ռուսաստանի դեմ։ 1878 թվականին Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը հատկացրին Հայկական հարցին։ Վեց տերությունների կոլեկտիվ խնամակալությանը հանձնվեց այդ հարցը, որի անորոշությունից օգտվելով՝ սուլթան Աբդուլ Համիդը ձեռնարկեց հայերի ոչնչացումը՝ սրի, արտաքսման և ասիմիլյացիայի միջոցով։

Անգլիական բուրժուազիայի քաղաքականագետ Լլոյդ Ջորջը հարկադրված խոստովանեց, որ Հայաստանը միաժամանակ եղել է Անգլիայի քաղաքականության զոհը։

«Սան-Ստեֆանոյի դաշնագրի համաձայն, ռուսական բանակը պետք է օկուպացներ Հայաստանը,—գրում է նա,—քանի դեռ չէին կիրառվել անհրաժեշտ ռեֆորմներ։ Այդ որոշումը փոխվեց 1878 թվականի Բեռլինի դաշնագրով, որը ամբողջապես մեր ճնշման արդյունքն էր, և գովաբանվեց մեր կողմից որպես Անգլիայի խոշորագույն հաղթական երթ և դիտվեց որպես պատվավոր հաշտություն... Հայաստանը մեր փառապանծ հաղթական սեղանի զոհ դարձավ»[11]։

[11] *Ллойд Джордж*, Правда о мирных договорах, т. 1, էջ 389—390։

Լլոյդ Ջորջը միաժամանակ Անգլիայի վրա է բարդում հայերի ողբերգության հանցանքի պատասխանատվությունը։ «...Մենք տվինք թուրքերին հնարավորություն կատարելու այդ հանցագործությունը, մեր վրա ընկավ բարոյական պարտք օգտագործելու առաջին իսկ առիթը, որպեսզի ուղղենք մեր կողմից թույլ տրված անարդարությունը և, որքանով կների մեր ուժը, անհնարին դարձնել այդ սարսափը, որի համար պատմությունը միշտ մեր վրա կբարդի հանցանքի պատասխանատվությունը»[12]։

Այսպիսով, Լլոյդ Ջորջը Անգլիային հանցավոր է համարում հայերի կոտորածների համար և գտնում է, որ այդ քաղաքականությունը ստիպել է հայերին՝ իրենց փրկության հույսը կապելու Ռուսաստանի օգնության հետ։ Նա դառնությամբ ընդունեց, որ Թուրքիայի հպատակ ժողովուրդները ազատագրվել են Ռուսաստանի օգնությամբ։

«Նրա (իմա՝ Ռուսաստանի—Հ. Վ.) նախորդ պատերազմները մի մասին՝ հայկական լեռնաշխարհում։ Եթե մեր շարաբաստիկ միջամտությունը չլիներ, այն ժամանակ, 1878 թ. Սան-Ստեֆանոյի դաշնագրով հայերի մեծամասնությունը կլիներ ռուսական դրոշի պաշտպանության ներքո»[13]։

Ռուսաստանն առաջին անգամ առաջ քաշեց և միջազգային քաղաքականության հարցերի շուրջը դասեց Հայկական հարցը։ 1913 թվականին «Հորիզոն»-ում տպագրված «Հայկական հարցն ու իր լուծումը» հոդվածում Հ. Թումանյանը գրում է, որ արևելյան երկու բռնակալական երկրների անտանելի լծի տակ այդ հարցը դարձել է «արյունոտ և արցունքոտ» հարց[14]։

Մերկացնելով եվրոպական տերությունների շաղակրատությունները ու նենգ դիտավորությունները, Թումանյանը ցույց է տալիս, որ «տաճկահայ ժողովուրդը... եղել է եվրոպական պետությունների հակամարտության դժբախտ զոհերից մեկը և անպայման ամենադժբախտը»[15]։

Թումանյանը Հայկական հարցի լուծումը կապում էր Ռուսաստանի հետ և նրան համարում էր այդ հարցի լուծման ավանդական պաշտպանը։ «Իրերի պատմական... դասավորությունից ափաշ-

[12] *Ллойд Джордж*, Правда о мирных договорах, т. 1, էջ 390։

[13] Նույն տեղում։

[14] Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Հայպետհրատ, 1951, էջ 226։

[15] Նույն տեղում, էջ 226։

կարա պարզ է,—գրում է նա,—որ հայ ժողովուրդը պետք է լիներ ռուսի հետ և իր կյանքի, գույքի ու պատվի ապահովության հույսը պետք է կապեր Ռուսաստանի հաջողությունների հետ»[16]։

Այսպիսով, Ռուսաստանն էր, որ առաջին անգամ առաջ քաշեց Հայկական հարցը՝ Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածով և դրանով իսկ նրան միջազգային նշանակություն տվեց։ Բայց այդ հարցը համաեվրոպական կերպարանք ստացավ և միջազգային դիվանագիտության հարցերի շարքում դասվեց Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով։

Հետևապես, ճիշտ չեն նրանք, ովքեր հայերի ազատագրական շարժումները շփոթում են Հայկական հարցի հետ։ «Հայոց հարցի վավերագրեր»-ի ներածականում Լեոն գրում է. «Հայոց հարցը նույնքան հին է, որքան ինքը հայ ազգը։ Քրիստոսից 6 դար առաջ էր, որ հայ ազգը դուրս եկավ խավարի անհայտությունից պատմության լուսավոր ասպարեզը և հենց այդ առաջին քայլերի հետ նա անհայտությունից իր հետ դուրս է բերում իր ազգային գոյությունը պահպանելու մեծ հոգսը։ Իսկ հայոց հարցը... հայ ժողովրդի ազգային գոյության հարցն է... Այսպիսով հայոց հարցի պատմությունը հայ ազգի պատմությունն է սկզբից մինչև մեր օրերը»[17]։

Սուլթան Համիդի կառավարությունը օգտվելով եվրոպական տերությունների հակամարտությունների սրումից, ուժեղացրեց հայերի նկատմամբ սոցիալական և ազգային ճնշումն ու հալածանքը, որի նպատակը հայերի բնաջնջումն էր, որը է՛լ ավելի էր բորբոքում հայերի ատելությունը թուրքական բռնապետության դեմ։

Ռուս-թուրքական պատերազմից հետո է՛լ ավելի ուժեղացան արևմտահայերի ազատագրական ձգտումները։ Առաջանում են ազգային գաղտնի խմբակներ ու կազմակերպություններ։

1880-ական թվականներին ազգային-ազատագրական շարժումներ ծավալվեցին Էրզրումում, Վասպուրականում, Ալաշկերտում և Սասունում։ 1884 թվականին ազատագրական շարժում սկսվեց Զեյթունում և 1886 թվականին՝ Վանում։ Ազգային-ազատագրական շարժումները ինքնարուխ էին։ Նրանց վերելքը սուլթանական կառավարության հայաջինջ քաղաքականության արգասիք էր։

Ազգային-ազատագրական շարժումներն է՛լ ավելի ուժեղացան 1890-ական թվականներին, երբ սուլթան Համիդի կառավարությունն սկսեց կազմակերպել համիդիեական քրդական զորագնդեր և ձեռնարկեց հայերի մասսայական կոտորածը։

Սուլթան Համիդի կառավարությունը սրի քաշեց ավելի քան 300 հազար անմեղ հայերի՝ եվրոպական տերությունների և Ռուսաստանի դիվանագետների աչքի առջև։ Հայերի ազատագրական հակումները ոչ մի հիմք չէին տալիս այդպիսի եղեռնագործությունների։ Այդ էր Հայկական հարցի «լուծման» թուրքական եղանակը։ Հայկական հարցն ապրեց իր ճգնաժամը։

Չնայած իրենց հայացքների ու նպատակների էական տարբերություններին, այնուամենայնիվ, Ռ. Պատկանյանը, Բաֆֆին, Գր. Արծրունին, Ս. Շահազիզը, Մ. Մամուրյանը, Մերենցը, Խրիմյանը, Փորթուգալյանը, Ա. Արփիարյանը և ուրիշներ, հանդիսանում էին ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսները։ Նրանց գաղափարախոսությունը ընդառաջ էր գնում հայ ազատագրական շարժմանը և պրոգրեսիվ էր։

Հայ հեղափոխական դեմոկրատական հոսանքը, որի երևան գալը կապված էր Մ. Նալբանդյանի անվան ու գործունեության հետ, մեր ժողովրդի ազատագրության հեռանկարը տեսնում էր ռուսական դեմոկրատական հեղափոխության հաղթանակի մեջ։ Նա այդ հեղափոխության հաղթանակը միաժամանակ համարում էր բոլոր ճնշված ժողովուրդների ազատագրության նախադրյալը։

Հեղափոխական դեմոկրատական հոսանքը նշավակում էր արևմտահայ կղերա-պահպանողական հոսանքին, որը պաշտպանում էր սուլթանական կարգերը Թուրքիայում և դատապարտում էր հայերի ազատագրական ձգտումները, նրանց ազատագրական շարժումներն ու գաղափարախոսությունը։ Այդ հոսանքը քննադատում էր նաև արևմտահայ ազգային լիբերալների արևմտա-եվրոպական օրիենտացիան, լիբերալներ, որոնք եվրոպական տերությունների դիվանագիտական միջամտության հետ էին կապում հայերի ազատագրությունը սուլթանական բռնապետությունից։

Արևելահայ ազգային լիբերալները և ազգային դեմոկրատները նմանապես կանգնած էին ռուսական օրիենտացիայի դիրքերում և Ռուսաստանի օգնության հետ էին կապում արևմտահայ ժողովրդի փրկության հույսը։ Բայց այդ հոսանքները ամենևին չէին կտրում իրենց հույսը եվրոպական դիվանագիտության օգնությունից։ Մեծ տերությունների դեմ ուղղված նրանց քննադատությունը նպատակ ուներ ակտիվացնելու այդ տերությունների միջամտությունը։

16 Հ. Թումանյան. Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 226։
17 Լեո. Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 1։

Արևելահայ ազգային լիբերալները և ազգային դեմոկրատները լուրջ պայքար ծավալեցին կղերա-պահպանողական և ազգային պահպանողական հոսանքների դեմ, որոնք նույնպես դեմ էին հայերի ազգային-ազատագրական պայքարին ու նրա գաղափարախոսությանը և արևմտահայ ժողովրդի ազատության հույսը կապում էին արևմտաեվրոպական տերությունների դիվանագիտության միջամտության հետ։

Արևմտահայ ազգային դեմոկրատական ուղղության կողմնակիցները, ռուսական ցարիզմի հակահայկական, ազգային ճնշման քաղաքականության դեմ էին զայրացած։ Եվ այդ էր պատճառը, որ նրանք դեմ էին ռուսական օրիենտացիային։ Բայց նրանց մեջ գտնվեցին այնպիսիները, որոնք կարողացան հասկանալ, որ աշխատավորական Ռուսաստանը և միապետական Ռուսաստանը միևնույն բանը չեն։ Նրանք կանգնեցին ռուսական օրիենտացիայի դիրքերում։ Այդպիսիք էին Մ. Մամուրյանը (որոշ դեգերումներով), Ա. Արփիարյանը, Ե. Օտյանը և ուրիշներ։

Արփիարյանը իրավացի կերպով նշում է, որ «Ազգային քաղաքականության կողմնացույցը դեպի Ռուսիա կը հակե...»[18]։ Մեղադրելով Անգլիային, Արփիարյանը ցույց է տալիս, որ նա իր շահադիտական քաղաքականությամբ ձախողում է Բեռլինի դաշնագրով հայերին խոստացված բարենորոգումները։

Արփիարյանը խիստ կերպով նշավակում էր արևմտահայ լիբերալներին, որոնք Բեռլինի կոնգրեսից հետո ոչ մի հետևություն չարին և նորից հայ ժողովրդին կերակրում էին կոլեկտիվ խնամակալության սին խոստումներով և աշխատում էին նրան շեղել ռուսական օրիենտացիայից։ «...Նոքա որք ուրիշ գործ չարին,—գրում է նա,—բայց միայն Ռուսիո դեմ որոտալ, մի՞թե այսօր Հայաստանի վիճակն չնկատելով չպիտի հարցնեն ինքնին թե ի՞նչ շահեցանք։—Դեռ խրատվելու ժամը չհասա՞վ մեզ համար»[19]։

Մերկացնելով ռուսական ցարիզմի հակահայկական քաղաքականությունը, Արփիարյանը չէր շփոթում ռուս ժողովուրդը ռեակցիոն ցարիզմի հետ։ Նա բարձր է գնահատում ռուս ժողովրդին ու նրա պրոգրեսիվ մտավորականներին։ Նա ռուս ժողովրդին համարում էր բոլոր ճնշված ժողովուրդների բարեկամը։ Ուստի, գրում է նա, «երիտասարդ, լի կորովով կերևի ռուս ժողովուրդը»[20]։

18 «Մշակ», № 77, 1879։
19 «Մշակ», № 80, 1879։
20 «Մասիս», № 3736, 1884, էջ 194։

Հակառակ ռուս ժողովրդի ապաշնորհ կառավարողների ռեակցիոն քաղաքականության, մամուլի, գրականության և առաջավոր մտածողների նկատմամբ գործադրած հալածանքների, Արփիարյանը ռուս ժողովրդի մեջ տեսնում էր պոտենցիալ ուժ ու եռանդ՝ այդ ամենի հետ հաշվեհարդար կատարելու համար։

Այդ ամենի հետ միասին «Բաֆֆի և հայ վիպասանությունը» խորագիրը կրող հոդվածաշարում Արփիարյանը գտնում էր, որ Ռուսաստանում գրական խոշոր դեմքերն ավելի բարձր են գնահատվում։ «Ռուսիո հայոց մեջ գրական անձինք միշտ կանգնած են բարձր պատվանդանի վրա,—գրում է նա,—և ժողովուրդը կարդարացնե նոցա անուններն անկեղծությամբ և համակրանոք։ Ռուս ժողովուրդը մեծապես նպաստած է այս զգացման և գաղափարաբ զարգացմանն ի հայս։ Հրապարակախոս, վիպասան, պատմաբան, գրականության ամեն ճյուղերուն պատկանող անձնավորությունք վայելած են ամեն ատեն ռուս ազգին սերը, և իրենց ազդեցությունը միշտ մեծ եղած է իրենց ազգին վրա։ Ռուս ազգը մին է ի նոցանե, որք ինչքան ալ թերության ենթակա լինի, բայց և այնպես հայրենյաց սերը իրենց առաքինության գլխավորն է։ Հայրենասեր ժողովուրդ մը պետք է նաև լինի գրասեր։ Ազգային ոգու զարթնում և ազգային գրականության բարգավաճում ժամանակակից են միմյանց»[21]։

Այսպիսով, Արփիարյանը տեսնում էր ռուս ժողովրդի մեջ աճող ցասումը ընդդեմ բռնակալության։

Բեռլինի կոնգրես մեկնած հայ պատվիրակության քարտուղար և թարգման Մինաս Չերազը ամեն կերպ փորձում էր ապացուցել, որ հայոց պատրիարքարանի և պատվիրակության խնդրագրերի քաղաքականությունը եղել է ճիշտ և դեմ էր հայերի ազատագրության հույսը Ռուսաստանի օգնության հետ կապելուն։

Քննադատելով Չերազին, Չոբանյանը իրավացիորեն ցույց է տալիս, որ ո՛չ արևմտաեվրոպական տերությունների և ո՛չ էլ Անգլիայի սին խոստումների մեջ է հայ ժողովրդի փրկությունը, նրա ֆիզիկական ու բարոյական գոյությունը, այլ «Ամենեն ավելի Ռուսիո մեջ է, որ պետք է մկրտել այդ բարոյական ամենակարևոր գործունեությունը»[22]։

Անգլո-Հայկական ընկերության «Լ. Արմենիա» թերթի խմբագիր պրոֆեսոր Կ. Թումայանը, որը իր «Պատմություն Արևելյան խնդրո

21 «Մասիս», № 3737, 1884, էջ 215։
22 «Անահիտ», № 4, Փարիզ, 1899, էջ 84։

և առաջնորդ Հայկական հարցի» երկհատորանոց աշխատության մեջ լուրջ քննադատության է ենթարկում եվրոպական տերությունների արևելյան քաղաքականության շահադիտականությունը, գրում է, որ հայ ժողովուրդը զոհ է եղել այդ քաղաքականությանը, բայց և այնպես հանգում է սխալ եզրակացության, մերժում է ռուսական օրիենտացիան, Ռուսաստանի հետ չի կապում հայ ժողովրդի ազատագրության հարցը և օբյեկտիվորեն մնում է թուրքական օրիենտացիայի վրա կանգնած մտավորականների դիրքերում։

Բացասաբար տրամադրված լինելով ռուսական ցարիզմի նկատմամբ, Թումայանը չկարողացավ տեսնել աշխատավորական Ռուսաստանը, որի ազատագրությունը պետք է նախապայման հանդիսանար նաև հայ ժողովրդի ազատագրության։ Նա խորհուրդ էր տալիս թուրքական իշխանություններին՝ հայերին տալ ինքնավարություն՝ Թուրքիայի հովանավորության ներքո, որպեսզի նրանք չհակվեն դեպի Ռուսաստանը։ «Հայոց համակրությունը և հավատարմությունը եղած է դեպի օսմանյան պետությունը։ Հայք բնականաբար Ռուսիային նախապատիվ կը համարեին Թուրքիան»[23]։

Թումայանի դատողության իմաստը պարզ է ու հասկանալի։ Նա ցավում էր, որ Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին և թուրքական կառավարողներին նախազգուշացնում էր Արևմտյան Հայաստանը չկորցնելու համար։ Ըստ նրա ստացվում է, որ հայերի ու թուրքական կառավարողների հարաբերությունները վատացան միայն Աբդուլ Համիդի տիրապետության ժամանակ, երբ նա հրաժարվեց նրանց տալ ինքնավարություն և իրագործել Բեռլինի դաշնագրով նախատեսված բարենորոգումները։ Սա առնվազն պատմության կեղծումն է։ Չէ՞ որ շուրջ 500 տարի հայ ժողովուրդը հերոսաբար կռվել է պարսկական ու թուրքական բռնապետական կարգերի դեմ՝ հանուն իր կյանքի, գույքի ու պատվի, հանուն իր ազգային ինքնուրույնության, իր կուլտուրայի անխափան զարգացման, հանուն իր ազատության։

Թումայանը և ընդհանրապես անգլիական օրիենտացիայի դիրքերում կանգնած հոսանքներն ու քաղաքական գործիչները չէին ուզում ընդունել, որ Թուրքիայի ու Ռուսաստանի միջև տեղի ունեցած պատերազմների ընթացքում հայերի համակրանքը պետք է լիներ և էր Ռուսաստանի կողմը։

23 Կ. Թումայան, Պատմություն Արևելյան խնդրո և առաջնորդ Հայկական հարցին, հատ. Ա, Լոնդոն, 1905, էջ 158—159։

«Մասիս»-ի խմբագիր-տնօրեն Բյուզանդ Քեչյանը ռուսական օրիենտացիայի հակառակորդ էր և դատապարտում էր Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պատմական ակտը. «...Հայոց ազգային ճշմարիտ շահը նկատելով,—գրում էր Քեչյանը,—որ կուզեմք ուշադրություն հրավիրել Ռուսիո շնորհած ազատության կասկածելի հանգամանաց վրա։ Այդ ազատությունք երաշխավորյալ չեն. ուստի չեմք կըրներ քաղաքական ծրագիր մը հիմնել նոցա վրա. ասկից զատ այդ ազատությունք քաղաքական դրդմամբ արված են, հետևաբար, անկեղծ չեն, կասկածելի են»[24]։

Բյուզանդ Քեչյանի, Յուսուֆյանի, Շիշմանյանի (Ներենց) և «Արևելք»-ի վարչության մյուս լիբերալ անդամների—«Մասիս»-ի շուրջը համախմբված լիբերալների սխալ դիրքավորումների դեմ ճիշտ էին պայքարում Արփիարյանը և նրա գրչակիցները, ճիշտ էին պայքարում արևելահայ ազգային լիբերալները և, հատկապես, նրանց առաջնորդ Գր. Արծրունին։

Այդ օրգանների շուրջը համախմբված լիբերալներն ուղղակի դեմ էին հայերի ազգային-ազատագրական պայքարին ու նրա գաղափարախոսությանը, քարոզում էին հայերին կույր հնազանդություն Օսմանյան կայսրությանը և նրանց նյութական ու բարոյական զարգացումը պայմանավորում էին այդ կայսրության անսասանությամբ։ Նրանք գտնում էին, որ հայ ժողովուրդը յուր «նյութական ու բարոյական բարեկեցության» զարգացումը «օսմանյան փառապանծ գահույն ներքև միայն կըրնա գտնել»[25], որ հայերը թուրքական կայսրության «հովանավորության ներքև կապահովեն իրենց բարոյական և նյութական ամենայն հառաջադիմությունք ու բարօրությունք»[26]։

Արևելահայ ազգային պահպանողական հոսանքները կանգնած էին արևմտահայ ազգային-լիբերալների դիրքերում, դեմ էին ռուսական օրիենտացիային, պաշտպանում էին Թուրքիայում գոյություն ունեցող կարգերը, դատապարտում էին հայերի ազատագրական պայքարն ու նրա գաղափարախոսությունը։

«Կռունկ»-ի խմբագիրներն ու հրատարակիչները ողջունեցին դաշնակից տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի ու Թուրքիայի հաղթանակը 1853—1856 թվականների Ղրիմի պատերազմում։ «Պետք է հուսանք,—գրում է «Կռունկ»-ը,—որ Ֆրանսիո, Անգլիո և

24 «Մասիս», № 2781, 1880։

25 «Արևելք», № 1459, 12(24) նոյեմբերի, 1888։

26 «Կռունկ հայոց աշխարհի», 1863, Թիֆլիս, էջ 616։

Տաճկաստանի ընդդեմ հյուսիսի հսկային արած փառավոր պատերազմից հետո, 1854-ից մինչև 1856 Տաճկաստանի քրիստոնյայք առհասարակ և մասնավորապես հայք մի նոր թվական կը վայելեն, և իրենց վիճակը քիչ շատ կը լավանա և իրենց մտավորական և ընկերական կործանված վիճակից կվերականգնեն և իրենց տգիտությունից և թշվառությունից կպրծնեն»[27]։

Ղրիմի պատերազմում դաշնակից տերությունների հաղթանակը Ռուսաստանի դեմ է՛լ ավելի ամրապնդեց Թուրքիայի խախտված դիրքերը և է՛լ ավելի վատացրեց հպատակ ժողովուրդների դրությունը։

Կ. Շահնազարյանը դատապարտում էր հայերի այն ջանքերը, «որոնք տեղի ունեցան Հայաստանում անցկացած դարում և որոնք հայերուն փոխանակ մի կանոնավոր գոյություն տալու, հնչտացրին Պարսկաստանի կործանումը և ռուսաց հաստատվիլն այս երկրում»[28]։ Արևելյան Հայաստանի ազատագրումը պարսկական բռնապետությունից նա համարում էր մի չարիք, որը նրան «դատապարտեց ավելի դաժան մի ստրկության»[29]։

«Մեղու Հայաստան»-ի առաջնորդողը գտնում էր, որ Թուրքիայի (կիսալուսինի) «Դրոշակի տակ ապրողներն սկսում են վայելել... մարդկային բոլոր իրավունքները»[30]։ Նա պահանջում էր լինել խոհեմ ու հնազանդ թուրքական կառավարությանը, որով հայերը կարող են իրենց համար հանգիստ կյանք նվաճել։ Նա դեմ էր հայերի ինքնավարության պահանջին, պատճառաբանելով, թե հայերը Հայաստանում «մի նշանավոր մեծություն չեն կազմում»[31]։ Նա Հայաստանը համարում էր լոկ աշխարհագրական հասկացողություն, ասում էր այն, ինչ ասում էին թուրքական կառավարողները։

Դիմադարձ լինելով արևմտահայ ազատագրական շարժման նկատմամբ, քարոզելով հայերին կույր հնազանդություն թուրքական բռնապետությանը, այդ հոսանքները արգելք էին դառնում հայերի ազատագրության գործին։

Արևելահայ լիբերալները շարունակեցին «Հյուսիսափայլ»-ի ռուսական օրիենտացիայի գիծը՝ Ստ. Նազարյանցի գիծը, հայ ժողովրդի ազատագրության հույսը կապեցին Ռուսաստանի օգնության հետ և գաղափարական ուղղություն տվին հայ ազատագրական շարժմանը, անհաշտ պայքար ծավալեցին բոլոր այն հոսանքների ու քաղաքական գործիչների դեմ, ովքեր հայ ժողովրդի գոյությունը պայմանավորում էին Թուրքիայի գոյությամբ, ովքեր դիմադարձ էին լինում հայ ազատագրական շարժումներից։

Շարունակելով Նազարյանցի գործը, արևելահայ ազգային լիբերալները, անկասկած, նայում էին դեպի միապետական—բուրժուական Ռուսաստանը։ Բայց նրանց վերցրած կուրսը ճիշտ կողմնորոշում էր տալիս արևմտահայ հատվածին։

Գր. Արծրունին գտնում էր, որ ռուսական բանակը մեծ միսիա ունի Արևելքում. «Ռուսաց զորքերը կոչումն ունեն այս բոպեիս եվրոպական քաղաքակրթության մի լայն ճանապարհ բաց անելու դեպի Արևելք»[32]։

Գր. Արծրունին նշում էր, որ 61-րդ հոդվածից հետո «Թուրքաց հայերը ավելի վատ դրության մեջ են», որ «Անգլիան ստանալով Կիպրոսը և մի քանի բազաներ Բոսֆորի վրա, այլևս չէր պնդում Թուրքիայի քրիստոնյաներին մարդավայել իրավունքներ տալու անհրաժեշտության վրա»[33]։

Այսպիսով, Գր. Արծրունու ժամանակաշրջանում նշանակալից է եղել արևելահայ ազգային-լիբերալների խաղացած դերը հայ ազատագրական շարժման ու նրա գաղափարախոսության պրոպագանդման բնագավառում։

3

1880—1890-ական թվականներին հայերի տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցած հեղաբեկումների և սուլթանական բռնապետության դեմ արևմտահայ հատվածի ուժեղացած ազգային-ազատագրական շարժման ժամանակաշրջանում առաջ եկան ազգային-քաղաքական կուսակցություններ՝ Արմենականներ (1885 թ.), Հնչակյաններ (1887 թ.), Դաշնակցություն՝ (1890 թ.), որոնք նմանապես դրսևորեցին իրենց վերաբերմունքը Հայկական հարցի կամ արևմտահայերի ազատագրության նկատմամբ։

Այս քաղաքական հոսանքները, անկասկած, բարյացակամորեն էին տրամադրված դեպի արևմտահայ ժողովուրդը, դեպի նրա

27 «Կռունկ Հայոց աշխարհի», 1886, Թիֆլիս, էջ 616։
28 Նույն տեղում։
29 Նույն տեղում։
30 «Մեղու Հայաստանի», № 37, 1879։
31 «Մեղու Հայաստանի», № 17, 1879։

32 «Մշակ», № 45, 1876։
33 «Մշակ», № 29, 1881։

ազատագրությունը։ Սակայն տարբեր էր նրանց գործելակերպը, նրանց տակտիկան։ Հնչակյանների ու դաշնակցության գործադրած տակտիկան սխալ էր ու երբեմն՝ վնասակար։ Համեմատաբար արմենականները տակտիկական ճիշտ դիրքավորում ունեին։

Լինելով անհեռատես քաղաքագետներ, խաբվելով արևմտաեվրոպական դիվանագիտության սին խոստումներից, հայ ժողովրդի ազատագրությունը կապելով այդ դիվանագիտության միջամտության հետ, անժամանակ ցույցերի ու դավադրությունների եղանակով հայ ազգային կուսակցությունները կամենում էին ակտիվացնել եվրոպական տերությունների միջամտությունը հայկական դատի նկատմամբ։ Իրականում այդ տերություններն օգնում էին Թուրքիային և Հայկական հարցը ծառայեցնում էին իրենց զավթողական նպատակներին։

«Կողմնորոշված դեպի իմպերիալիստական տերությունների այս կամ այն խմբակցությունը,—գրում է Աշոտ Հովհաննիսյանը,—բուրժուական կազմակերպությունները հրահրում էին Թուրքահայ մասսաների ապստամբական ելույթները սոսկ որպես պետությունների զինական կամ դիվանագիտական միջամտությունն առիթելու միջոց։ Թուրքահայ ժողովրդի բախտը ստորադրվում էր իմպերիալիստների քաղաքականությանը, որի վարքագիծը գործնականապես հանգում էր ոչ թե Թուրքահայերի ազատագրման, այլ նրանց բնաջնջման՝ Թուրք բարբարոս կառավարության կազմակերպած ջարդերի միջոցով»[34]։

Արևմտահայ ժողովրդի ազատագրության հարցի նկատմամբ միանգամայն յուրահատուկ գիծ են ունեցել հայ հեղափոխական մարքսիստները, որոնք ղեկավարվում էին մարքսիզմ-լենինիզմի հեղափոխական թեորիայով ու պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներով։

Բարձր գնահատելով Թուրքական բռնապետության դեմ ուղղված հայ ժողովրդի ազատագրական պայքարը, հեղափոխական մարքսիստները միաժամանակ նրան հասկացնում էին, որ հայ ազգայնականների նախընտրած ուղին չի կարող լավ հետևանքների հասցնել։ 1903 թվականին Կովկասյան միութենական կոմիտեն ողջունեց պայքարող հայ ժողովրդին և արտահայտեց իր վստահությունը նրա շուտափույթ ազատագրության համար։

34 Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, Հայպետհրատ, 1956, հատ. 2, էջ 572։

Ղեկավարվելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի անխախտ սկզբունքներով, հեղափոխական մարքսիստները համագործակցում էին բոլոր ճնշված ժողովուրդների հետ՝ ընդդեմ բռնակալների։ Նրանք մասսաներին նախապատրաստում էին հեղափոխության համար, հայ ժողովրդին համախմբեցին ցարիզմի ու բուրժուազիայի դեմ ծավալված հեղափոխական շարժման մեջ, շարժում, որը հասցրեց Ռուսաստանում շահագործողների տիրապետության տապալման ու պրոլետարիատի դիկտատուրայի հաստատմանը, որի շնորհիվ հայ ժողովուրդը փրկվեց ֆիզիկական բնաջնջումից և կանգնեց ազգային վերածննդի ուղու վրա։

Այսպիսով, ձեռնարկելով սույն մենագրությունը, մենք նպատակ ենք ունեցել բացահայտելու և մերկացնելու սուլթանական կառավարության չար դիտավորությունները Բեռլինի կոնգրեսից հետո հայերի բնաջնջման գործում, մերկացնելու եվրոպական մեծ տերությունների դիվանագիտության խարդախությունները ու շահադիտականությունը Հայկական հարցում, ապացուցել սուլթանական բռնապետական կարգերի դեմ ուղղված հայերի ազգային-ազատագրական պայքարի արդարացիությունը և երևան հանելու հայ հասարակական-քաղաքական հոսանքների դիրքավորումը այդ հարցում։

Խնդրի հաջող լուծման համար մենք օգտագործել ենք մարքսիզմ-լենինիզմի կլասիկների, հայ առաջավոր մտավորականների բազմաթիվ աշխատություններն ու հրապարակախոսական ելույթները, հայ պարբերական մամուլը, կենտրոնական և տեղական արխիվային բազմաթիվ նյութեր ու փաստեր, որոնցից շատերը նոր են մտնում գիտական շրջանառության մեջ, ռուսերեն թարգմանված եվրոպական հասարակական-քաղաքական գործիչների աշխատությունները հայերի ու Հայկական հարցի մասին և այլն։ Օգտագործված շատ հեղինակների ու հոսանքների ներկայացուցիչների աշխատությունների նկատմամբ ցուցաբերել ենք քննական մոտեցում՝ մեկնելով պատմական գիտության կուսակցականության լենինյան սկզբունքից։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ (1850—1870-ԱԿԱՆ ԹԹ.)

1

Արևմտահայերի տնտեսական և իրավա-քաղաքական ծանր դրությունը սերտորեն կապված էր Թուրքիայում իշխող հասարակական, պետական կարգերի գոյության հետ։ Թուրքիան իրենից ներկայացնում էր ֆեոդալական հետամնացության և արևելյան բռնապետության մարմնացումը։

Թուրքիայում տիրապետող և ներքուստ փտող ասիական բարբարոս, բռնապետական կարգը չէր համապատասխանում երկրի հասարակական-քաղաքական կյանքի զարգացման առաջընթացին, լուրջ արգելք էր հանդիսանում երկրի արտադրողական ուժերի, մարդկանց ու ժողովուրդների ստեղծագործական ունակությունների ծավալմանն ու զարգացմանը։

Մարքսն ու Էնգելսը Թուրքիայում տիրապետող բռնապետական կարգը անհամատեղելի էին համարում քաղաքակրթության զարգացման ու կապիտալիստական կարգերի հետ։

Ֆեոդալական հարաբերությունների, ֆեոդալական կարգերի լիկվիդացման հետ միասին, կապիտալիզմն իր հետ բերում է նաև ճնշված ժողովուրդների ազգային գիտակցության արթնացումը, նրանց ազգային-ազատագրական պայքարը գոյություն ունեցող բռնակալական կարգերի դեմ՝ իրենց ազատ ու անկախ զարգացման համար։ Մարքսն ու Էնգելսը Թուրքիայում իշխող պետական կարգը և ֆանատիզմը համարում էին կապիտալիզմի ու կապիտալիստա-

կան հարաբերությունների զարգացման, ժողովուրդների քաղաքակրթության լուրջ արգելքներ։

Թուրքիայում և հատկապես նրա եվրոպական մասում առևտուրն ու արդյունագործությունը ծավալվում էր հպատակ ժողովուրդների՝ սլավոնների, հույների, հայերի և հրեաների նախաձեռնությամբ։ Քաղաքակրթություն տարածողը նրանք էին։ «Թող հեռացնեն Եվրոպայից բոլոր թուրքերին,—գրում է Էնգելսը,—առևտուրը դրանից չի տուժի»[1]։

Հույները, սլավոնները, հայերը, հրեաները իրենց կապիտալով, առևտրական ու արդյունագործական գործողություններով նշանակալից դեր էին խաղում Թուրքիայում։ Առանձնապես նշանակալից դեր էր խաղում հայ կոմպրադորական բուրժուազիան՝ Թուրքիան կապիտալիստական շրջապտույտի մեջ ներքաշելու ուղղությամբ։ Եվ, պատահական չէր, որ Կոստանդնուպոլսի և Տրապիզոնի «հույն և հայ վաճառականները,—գրում են Մարքսն ու Էնգելսը,—մեծ քանակությամբ անգլիական գործարանային ապրանքներ են ներմուծում, որոնք, շնորհիվ իրենց ցածր գների, արագ կարգով շրջանառությունից դուրս են վանում ասիական հարեմների տնային ինդուստրիայի ապրանքները»[2]։

Թուրքիայում եղան եվրոպական քաղաքակրթության կողմնակիցներ։ Սակայն նրանք փոքրաթիվ էին։ 1834 թվականի հողային ռեֆորմը, 1839 թվականի Թանզիմաթը, 1854, 1856 թվականների օրենսդրական ակտերը, 1858 թվականի հողային ռեֆորմը և 1876 թվականի Սահմանադրությունը կապիտալիզմի զարգացման արգելքները վերացնելու թույլ փորձեր էին։ Այդուհանդերձ, դրանք մնացին որպես օրենսդրական ձևական ակտեր և ամենևին չխախտեցին ֆեոդալիզմի հիմքերը։

Թուրքական սուլթանները հենվում էին խոշոր կալվածատերերի վրա, արտահայտում էին նրանց կամքն ու ցանկությունը, որոնց համար խորթ ու վնասակար էր քաղաքակրթությունը։ Այդ առումով էլ Մարքսի խոսքերով ասած՝ Օսմանյան կայսրության անխուսափելի անկումը միայն նրան այս կամ այն ճանապարհով գցելու էր եվրոպական քաղաքակրթության գերիշխանության տակ։

Ոչ մի երկրում ժողովրդական մասսաները և հատկապես հպատակ ժողովուրդները այնքան ճնշման, հարստահարությունների ու

[1] *Կ. Մարքս* և *Ֆ. Էնգելս*. Сочинение, т. 9, Москва, 1957, էջ 25։

[2] Նույն տեղում, էջ 12։

իրավազրկման չէին ենթարկվում, որքան Թուրքիայում։ Բացառիկ կերպով ծանր էր հայ ժողովրդի վիճակը։

Թուրքիայում գոյություն ունեին բազմաթիվ հարկեր ու տուրքեր, որոնց գանձումները կատարվում էին քմահաճ եղանակով, օրենքի բոլոր տարրական նորմաների խախտման ճանապարհով։ Աշխատավորներից գանձվում էին.

1. Եմլակ կամ հողային տուրք, 2. աշար կամ տասանորդ, 3. Թեմեթթահաթ կամ առևտրական տուրք, 4. աղնում՝ ոչխարների և մյուս մանր կենդանիների գլխատուրք, 5. մաորիֆ հրսասի՝ դպրոցական տուրք, 6. բեդելի ասկերիե՝ զինվորական տուրք, 7. շենքերի տուրք, 8. ժառանգական տուրք, 9. ճանապարհների և կամուրջների տուրք, 10. աղի, մետաքսի, ծխախոտի պլանտացիաների տուրք, 11. դրոշմաթղթի տուրք, 12. մաքսային տուրք և 13. զանազան ուրիշ տուրքեր[3]։

Հարկային այսպիսի ծանր լուծ էին կրում աշխատավորները և հատկապես հպատակ ժողովուրդները։ Քրիստոնյաները մինչև թանզիմաթը, պարտավոր էին վճարել նաև գլխահարկ կամ խարջ, որը թուրքական կառավարողները ժառանգություն էին ստացել ասիական իրենց զավթած երկրներից։ «Ասիական այն երկրներում,—գրում է Թ. Ավդալբեկյանը,—որ նախորդ պետություններից նվաճել էր Տաճկաստանը,—սա գլխահարկը ժառանգություն ստացավ խարջ անունով»[4]։

Թուրքիայում հողահարկն էլ խարաջ էր անվանվում, որի հետևանքով հարկման ենթակա հողերը կոչվում էին խարջիե՝ «տարբերվելով աշար (տասանորդ) վճարող հողերից, որոնք այս բառով կոչվում էին ուշրիե»[5]։

Հարկերի ու տուրքերի գանձումները տրվում էին բարձր աստիճանավորների մերձավորներին՝ կապալով։ Այդ կապալառուները ուղղակի կեղեքում էին աշխատավոր մասսաներին՝ ընդհանրապես, և հայ ժողովրդին՝ մասնավորապես։

1876 թվականին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի հրատարակած «Տեղեկագիրք»-ում արձանագրված են գավառահայության

3 Տե՛ս Ա. Կարինյան, Հին Թուրքիան և Թուրքահայաստանը, «Նորք», № 1—2, 1926, էջ 158։

4 Թադ. Ավդալբեկյան, Գլխահարկը Թուրքիայում 17—18-րդ դարերում, հայ պատմագրության տվյալներով (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», № 1, Երևան, 1959), էջ 175։

5 Նույն տեղում։

նկատմամբ կապալառու հարկահավաքների և թուրքական տեղական պաշտոնյաների գործադրած հարստահարությունների, կամայականությունների, գույքի հափշտակման ու պատվի արատավորման բազմաթիվ զայրացուցիչ փաստեր։

Պատրիարքարանին ուղարկած իրենց նամակներում հայ գյուղացիները գրում են.

«Կիները և անչափահաս մանուկները բռնաբարվում են մահմեդական կրոն չընդունելու համար։

Ոչ-մահմեդականների վկայությունը չընդունելով, մահմեդականների՝ հայերի վերաբերմամբ կատարած առևանգությունները, գողություններն ու սպանությունները մնում են անպատիժ։

Զինյալ քրդերի, լեռնաբնակ ցեղերի, չերքեզների և բնիկ թուրք դերեբեյների (ինքնիշխան բռնակալ) և այլ հարստահարողների ներքո հայ ժողովուրդը տանջվում և կեղեքվում է։

Կիները, հարսները, այլև կույս աղջիկները առևանգվելով՝ բռնաբարվում են»[6]։

Փաստերը ցույց են տալիս, որ գավառահայությունը Թուրքիայում իրավազուրկ էր։ Թուրքական կառավարությունը և նրա տեղական իշխանության բռնակալները ստեղծել էին ճորտային պայմաններ աշխատավորների համար։ Զանազան հարկերի միջոցով թուրքական պետությունը խլում էր գյուղացիության եկամուտի 67 տոկոսը, չհաշված տեղական իշխանությունների և քրդական բեկերի ապօրինի գանձումները։

«Խալամը 19-րդ դարում» վերտառությամբ իր գրքի ներածականում գերմանացի Վամբերին, ուսումնասիրելով Թուրքիայի աշխատավոր մասսաների գոյավիճակը, տեսնելով Թուրքիայում տիրող համատարած աղքատությունն ու ժողովրդական մասսաների իրավազրկությունը, դիմելով իր ընթերցողներին, հարցնում է. «Մեզանից ո՞վ կարող է ընկճել այն ցավակցական զգացմունքը, որ ծագում է մարդուս մեջ, տեսնելով սարսափելի աղքատությունը շատ անգամ բնության հարուստ պարագաների մեջ, տեսնելով սրամիտ և մտավորապես ընդունակ արևելցուն անկարող յուրյան հասարակական ցավերը դարմանելու, ուր շռայլությամբ զարդարված հոյակապ պալատների մոտ ցեխի և աղքատության մեջ թաթախված ողորմելի խրճիթներ են կեցած, ուր միլիոնավոր մարդկանց կյանքն ու ստացվածքը խաղալիք է հեշտախտության մեջ ընկղմված և գերմարդկային պատվով շրջապատված մի քանի բռնակալների ձեռքին»[7]։

Վամբերին միանգամայն ճշմարտացիորեն ցույց է տալիս, որ Թուրքիայի տնտեսական ու քաղաքական կյանքի լճացման ու անշարժության, աշխատավորական մասսաների աղքատության ու թշվառության պատճառները գոյություն ունեցող կարգերն են, որոնք իրենց հարստահարիչ ու դաժան քաղաքականությամբ արգելակում են երկրի պրոգրեսին։ Նա ցույց է տալիս, որ թուրքական կառավարության ներկայացուցիչները դեպի ժողովուրդն են գնում իրենց գրպանները հարստացնելու համար։ «Սոքա,—գրում է նա,—գնում են գավառները ոչ թե երկրները կառավարելու կամ ծաղկեցնելու, այլ յուրյանց քսակը լեցունելու և նորից կենտրոնը վերադառնալու նպատակով։ Եթե այդ կենտրոնաձիգ զորությունը չլիներ, եթե յոթնաբլրյան մայրաքաղաքը չունենար այն վայելչությունը ի բնե դատարկապորտ արևելցու համար... թերևս շատ բան փոխված կլիներ... Հասկանալի է ուրեմն, թե ինչի՞ երկրագործը ավելի լավ է համարում ձեռքերը ծալած նստել, քան թե յուր երեսի քրտինքով հարկահանին հարստացնել»[8]։

Վամբերին իրավացի է։ Գյուղացիական մասսաները չէին ցուցաբերում ոչ մի շահագրգռվածություն իրենց եկամուտի ակունքներն ընդարձակելու և զարգացնելու ուղղությամբ, որովհետև թե՛ պետությունը և թե՛ վամպիրների մի ամբողջ ոհմակ խլում, հափշտակում էին նրանցից ամեն ինչ։

Թուրքական սուլթանը համարվում էր բոլոր հավատացյալների տերը, նրանց խալիֆան։ Նա համարվում էր աստծո ներկայացուցիչը երկրի վրա։ Սուլթանը երկրի տերն էր, իսկ հպատակ ժողովուրդները՝ նրա ղուլը կամ ստրուկներն էին։ «Սուլթանը նույում էր հպատակներին իբրև ստրուկների,—գրում էր Կ. Պոլսի անգլիական դեսպաններից Բիկոն,—որոնց նա ժառանգություն էր ստացել իր նախնիների կողմից։ Բնական է այնուհետև, որ սուլթանը այդ ստրուկների նկատմամբ լինի ոչ միայն կյանքի, այլև նրանց ամբողջ սեփականության տերը։ Պետության մեջ գտնվող բոլոր անշարժ կայքերը, բացի այնպիսիներից, որոնք ծառայում էին աստծու գործերին, պատկանում էին սուլթանին»[9]։

6 «Մշակ», № 145, 1878։

7 «Մշակ», № 16, 1875։

8 «Մշակ», № 17, 1875։

9 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոի ֆ., թղթապանակ № 12, վավերագիր № 38, թերթ 2։

Որպես մարգարեի հաջորդի՝ խալիֆի, սուլթանը հանդիսանում էր նաև կրոնական բարձրագույն պետը։ Ըստ իսլամական կրոնի, սուլթանը հանդիսանում էր ամեն տեսակ պատվերների, ամեն մի երջանկության և մարդկանց շնորհքների աղբյուրը։ Նրա հպատակության տակ գտնվող բոլորը, մեծից մինչև փոքրը, իբր թե ապրում են սուլթանի ողորմածությամբ, նրանից են ստանում ապրուստի միջոցները, նրա հաշվին կերակրվում, նրա ջրով հագեցնում իրենց ծարավը։

Երկրի ամբողջ հողը պատկանում էր սուլթանին։ Հողի նկատմամբ մահմեդական օրենքն ասում է. «Ամբողջ տիեզերքը աստծուն է պատկանում,—գրում էր Բաֆֆին,—սուլթանը աստծու խալիֆան կամ ներկայացուցիչն է երկրի վրա, իսկ հողը նրա սեփականությունն է»[10]։

Թուրքական սուլթանները կարծում էին, որ բոլոր այն երկրները, ուր ոտք է դնում իսլամի թագավորը, հողը ամբողջությամբ պետք է պատկանի նրան։ Եվ իրոք, սուլթանը հողի տերն էր, իսկ մշակող գյուղացին՝ հողի վարձակալը կամ կապալառուն էր։ Մահմեդականների և քրիստոնյա հպատակների մասնավոր հողատիրական իրավունքները տարբեր էին։ Պետությունը սրանցից հարկեր էր գանձում իր հայեցողությամբ։ Բնության աղետների, անբերրիության տարիներին էլ հարկերը մնում էին անփոփոխ։

Թուրքիայում ազգաբնակչության կենսունակ մասն էր կազմում հայ գյուղացիությունը, որի զգալի մասը ուներ հող մշակելու, պետությանը և հարստահարիչ մյուս խավերին հարստացնելու պարտականություն, իսկ հողի եկամուտից օգտվելու չնչին իրավունքներ։ «Տաճկաստանում,—գրում է Բաֆֆին,—սեփականության անապահովությունը և հետևապես ապրուստի դժվարությունը կայանում է գլխավորապես այն բանի մեջ, որ հայը հող չունի, այս պատճառով նա կյանքի հաստատուն հիմք չունի»[11]։

Բաֆֆու այդ միտքը հաստատում է Գ. Սրվանձտյանը։ «Թորոս աղբար» աշխատության մեջ նա Խարբերդի գյուղացիության կյանքը նկարագրում է հետևյալ կերպ. «Հողերը մեծ մասամբ բեկերու սեփականություն էին և թափուն[12] իրենց վրա ըրած քիչ բա-

10 «Մշակ», № 162, 1878։

11 Մելիքզադե, «Ի՞նչ վերանորոգություններ են պետք Տաճկական Հայաստանում», «Մշակ», № 162, 1878։

12 Թափուն՝ այն կալվածագիրն էր, որով մեկի հողը կամ կալվածքը տրվում էր օգտագործման իրեն կամ մեկ ուրիշի՝ 1858 թ. հրամանագրով։

ցառությամբ։ Գեղացիք առհասարակ մարաբա[13] էին, Խարբերդի բեկերը կամ հողատերերը կատարյալ սակատներ էին, իրենց երկրագործներն ալ կատարյալ ստրուկներ, այնքան ստրկացած էին, որ չէին գիտեր, թե իրավունք ունի՞ն կամ կարո՞ղ էին ձայն ունենալ բողոքելու իրենց բեկերուն լկանց և զրկանց դեմ»[14]։

Թուրքիայում գավառահայության մի մասը, հատկապես քրդախառն հայկական գավառներում, ճորտային կախման մեջ էր։ Թուրքական կալվածատերերը, քրդական ու թուրքական ինքնիշխան բռնակալները (դերեբեյները) և բեկերը վարում էին ճորտատիրական տնտեսություն, ինչպես գրում է Լենինը. «Կալվածատերերն ստրկացնում են գյուղացիներին, ինչպես եղել է սրանից և հարյուր, և երեք հարյուր, և հինգ հարյուր տարի առաջ, ստիպելով նրանց՝ գյուղացիական ծիով, գյուղացիական գործիքներով մշակելու հողը... Այդ հին չինարեն է։ Այդ թուրքականորեն է։ Այդ ճորտատիրականորեն է»[15]։

Հայ գեղջուկը չէր կարողանում վճարել հողի հարկը—թափուն, բազմաթիվ այլ կարգի հարկերն ու տուրքերը, որի պատճառով թողնում էր հայրենի երկիրը ու դիմում պանդխտության, որը սոցիալական և ազգային մեծ չարիք էր, հուզում էր ամբողջ հայ պրոգրեսիվ գործիչներին ու մտածողներին։

Ո՞րն էր պանդխտության պատճառը, այս հարցին մենք դեռևս կանդրադառնանք։ Այժմ նկատենք, որ դրա պատճառը հողազրկությունն էր, կյանքի ու գույքի անապահովությունը, սոցիալական և ազգային ճնշումն ու հարստահարությունը։ Ո՞րն էր այս դրությունից դուրս գալու ճանապարհը, նրա ելքը։ «Հայն իր հայրենի երկրի հետ կապելու համար, գաղթականությունը դադարեցնելու համար միակ և ամենակարևոր միջոցն է,—գրում է Բաֆֆին,—նրան (իմա՝ գյուղացուն—Հ. Վ.) պետք է իրավունք տալ ազատ կալվածատեր (հողատեր) լինելու, ուր նա որպես սեփականություն իր հողն ունենա։ Դրանով կարելի է միայն հնար տալ գյուղացուն իր աշխատությամբ իր հացը հայթայթելու։ Նա չպետք է լինի վարձակալ,

13 Այն գյուղացիները, որոնք զուրկ էին հողից, մշակում էին բեկերի հողերը և դրանով իրենց ապրուստի միջոցներ հայթայթում, կոչվում էին մարաբա։ Այս դասին պատկանող մարդիկ ամրացված չէին հողին և ցանկացած ժամանակ կարող էին հեռանալ։

14 Գ. Վ. Սրվանձտյան, Թորոս աղբար, հատ. 2, Կ. Պոլիս, 1884, էջ 141։

15 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 19, Հայպետհրատ, 1950, էջ 228։

այլ հողը պետք է լինի նրա սեփականությունը, մի հաստատուն ժառանգություն, որ անցնում է սերնդից սերունդ»[16]։

Հայերի սոցիալական ու ազգային ճնշման, հարստահարման իր քաղաքականությամբ օսմանյան կառավարությունը հատուկ նպատակ էր հետապնդում մաքրել Հայաստանը հայերից՝ նրանց արտաքսման ճանապարհով։ Հետևապես, հայերի գաղթը և պանդխտության դիմելու նրանց քայլերը Թուրքիայի կառավարության պետական քաղաքականության արդյունքն էր ու հետևանքը։

Անդրադառնալով համազգային չարիք հանդիսացող պանդխտության հարցին, գիտականորեն բացահայտելով նրա պատճառները, Մ. Նալբանդյանը դառնությամբ գրում է. «Ազգը օրըստօրէ թողնում է յուր երկիրը և կենտրոնանում քաղաքներում. Աղքատությունը ստիպում է նրան թողուլ յուր տունը, յուր ընտանիքը, յուր ամուսինը, յուր զավակներն ու գնալ Պոլիս կամ այլ քաղաք աղքատությունից ազատվելու համար»[17]։

Նախապես հարկ ենք համարում ասել, որ կղերա-պահպանողական հոսանքի օրգանները՝ «Մեղու Հայաստանի»-ն, «Նոր դար»-ը սխալ դիրքերից էին մոտենում այս խնդրին։ Նրանք հայերի գաղթի պատճառը չէին կապում Թուրքական կառավարության քաղաքականության, հարստահարությունների ու հողազրկության հետ, այլ համարում էին հայերի շահադիտական ձգտում, ուրիշ վայրերում փող շատ վաստակելու փափագ, որի մասին մենք հանգամանորեն կխոսենք ստորև։

Մ. Մամուրյանը խոր զայրույթով լցված, անդրադառնալով պանդխտության հարցին, ցույց է տալիս, որ Թուրքական կառավարության և նրա տեղական ինքնիշխան բռնակալների անողոք կեղեքումների հետևանքով գաղթում են բոլորը։ Նա գրում է. «Վաճառականը կը գաղթե, երկրագործը կը գաղթե, արհեստավորը կը գաղթե, բանվորը կը գաղթե։ Մեկ խոսքով ամենքը կը գաղթեն և Հայաստանը կը մնա շատ շատ տեղ միայն ծերեր, կիներ, մանկունք»[18]։

Բայց փառասեր հարստահարիչների կյանքն էլ երկար չէր։ Երբ սուլթանը տեսնում էր, որ «հարուստ մեկը չի մեռնում իր բնական մահով և կարող էր շատ ժամանակ ունենալ իր գանձերը թաքցնելու համար,—ասում է անգլիական դեսպան Թիկոն,—ուղղակի մահվան հրաման էր տալիս։ Եվ որովհետև խոշոր հարստությունները կենտրոնանում էին ավելի այն մարդկանց ձեռքում, որոնք մոտիկ էին սուլթանին և պետական բարձր պաշտոններ էին վարում, ուստի շատ հաճախ այդպիսիներն էլ էին մահվան դատապարտվում։ Սուլթանական մի հրամանով պալատ էին տանում դրանց ոսկին, արծաթը, գոհարեղենը և գլուխը։ Դա սուլթանի անձնական հարստության մի աղբյուրն էր։ Մի ուրիշ աղբյուր էլ այն հաստատ և բացարձակ կարգն էր, որով յուրաքանչյուր պաշտոնյա, որ կանչվում էր պետական բարձր պաշտոնի, պարտավոր էր բարեբարության փոխարեն մատուցանել սուլթանին փեշքեշ կամ ընծա, որի արժողությունը պետք է համապատասխաներ ընդունողի մեծությանը։ Այդ ընծաներն ահագին գումարների էին հասնում»[19]։

Բոլոր բարձր պաշտոնյաներին անձամբ նշանակում էր սուլթանը։ Կային սուլթանի սիրելիները, որոնք միջնորդում էին սրան կամ նրան համապատասխան պաշտոնի ընդունելու համար։ Ընդունվող յուրաքանչյուր պաշտոնյա պարտավոր էր կաշառք տալ ոչ միայն սուլթանին, այլև միջնորդ բարեխոսներին, որոնք հրապարակով պաշտոնավաճառությամբ էին զբաղվում։

Պաշտոնների գինը որոշելու համար նկատի էր առնվում նրա արդյունավետությունը։ Նահանգապետները պետք է վճարեին 400 հազար էկյու[20]։ Իսկ սովորական գներն էին՝ 200 հազար, 100 հազար, 50 հազար։ Այդ գումարները պաշտոն ստացող փաշաները պարտք էին վերցնում վաճառականներից՝ 40—50 տոկոսով։ Բայց երբ գումարներն անցնում էին պաշտոնական ներքինիների ձեռքով՝ կրկնապատկվում էին։

Պաշտոնյաները նահանգներ էին մեկնում պարտքերի մեջ թաղված, անվստահ իրենց ապագայի վրա։ Ուրիշ միջոց չկար պարտքերը մարելու և հարստանալու համար, բացի աշխատավոր մասսաների կեղեքումից։ Ժողովրդական մասսաներին կեղեքող այս փաշաներն իրենց հերթին պահում էին բազմաթիվ կեղեքիչներ ու կողոպտիչներ։ Ամեն մի նահանգապետ իր մոտ պահում էր ազդեցիկ երեք պաշտոնյա. «Սյուֆթին, Ռեյի-էֆենդին և Տեֆթերդար-բաշին».

16 Մելիքզադե, Ի՞նչ վերանորոգություններ են պետք Տաճկական Հայաստանին, «Մշակ», № 162, 1878։

17 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 73։

18 Մ. Մամուրյան, Անկլիական նամականի, էջ 200։

19 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոի ֆոնդ, թղթապ. № 12, վավերագիր № 38, թերթ 3։

20 Մեկ էկյուն հավասար էր 3 ֆրանկի։

որոնք նահանգապետի առաջին մինիստրներն ու խորհրդատուներն էին»[21]—ասում է Բիկոնը։

Պաշտոնյաների, Թուրքական և քրդական ինքնիշխան բռնակալների, բեկերի ու էֆենդիների կողմից աշխատավոր մասսաների ու մասնավորապես հպատակ ժողովուրդների կեղեքումների սիստեմը շատ ընդարձակ էր։ Նա ոչ մի անհանգստություն չէր պատճառում կառավարությանը և, ընդհակառակը, այն դիտվում էր որպես շատ օգտակար՝ գոյություն ունեցող դեսպոտական կարգը պահպանելու տեսակետից։

Սուլթանական Թուրքիայում իսկական իմաստով օրենք գոյություն չուներ։ Մահմեդական աշխարհը, բացի շարիաթից, չէր ընդունում ուրիշ որևէ օրենսդրություն։ Մահմեդական կառավարողներին թույլատրվում էր հրատարակել օրենքի ուժ ունեցող կանոններ միայն այն պայմանով, որ դրանք միանգամայն համապատասխանեին շարիաթի սկզբունքներին։ Բացի դուրանից, շարիաթը հենվում էր իսլամի առաջին դարերի ավանդությունների, նշանավոր աստվածաբանների և առաջին խալիֆաների ավանդությունների վրա։

Իսլամական դավանությունը Թուրքական փաշաներին, խաներին, իսլամացած քրդական բեկերին և այդ մոլեռանդությամբ սնված մյուս խավերին իրավունք էր վերապահում հալածելու, կողոպտելու, ոչնչացնելու հպատակ ժողովուրդներին, մասնավորապես քրիստոնյաներին։ Հենց «Սրբազան Շարիաթի օրենքներով» է ներծծված եղել սուլթանական Թուրքիայի ազգային քաղաքականությունը, մի քաղաքականություն, որը իրար հետ համերաշխ աշխատող և բարեկամ աշխատավոր ժողովուրդներին կրոնական և ազգային հողի վրա լարում էր միմյանց դեմ։

«Ղուրանը և դրա վրա հիմնված մուսուլմանական օրենսդրությունը,—գրում է Մարքսը,—աշխարհագրությունը և ամբողջ աշխարհի ազգագրությունը հանգեցնում է երկու կեսի՝ ուղղահավատների և անհավատների պարզ ու հարմարին ֆորմուլին։ Անհավատը՝ դա գյավուրն է. նա թշնամի է։ Իսլամն անիծում է անհավատների ազգը և անընդհատ թշնամության վիճակ է ստեղծում մահմեդականների և անհավատների միջև»[22]։

---

21 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոի ֆոնդ, թղթապ. № 12, վավերագիր № 38։

22 К. Маркс и Ф. Энгельс. Сочинения, т. 10, Москва, 1958, էջ 167։

Թուրքական մոլլաները քարոզում էին, թե ճշմարիտ հավատը մահմեդականությունն է, որ «Աշխարհիս մեջ գտնվող քրիստոնյաները անհավատներ են,—Աստված նրանց մեր հաճույքի համար է ստեղծել, նրանց ամեն ինչը մեզ կպատկանի. թե՛ հարստություն, թե՛ արական և իգական սեռի գեղեցիկները, նրանց ուտեստի վերաբերյալ ամեն ինչ մեզ հալալ է, նրանց ոչխարներն ու անասունները տանելը մեղք չէ, մուսուլման ժողովուրդը պետք է միշտ խրոխտ և հաղթական դիրք ունենա նրանց վրա, չէ՞ որ նրանք մեր ստրուկներն են...»[23],—գրում է վանեցի Սաքո Թարգյուլյանը գեներալ-գնդապետ Հ. Լազարյանցին։

Այդ վարդապետությամբ ղեկավարվելով, Թուրքական մոլեռանդները և իսլամացած քրդերն իրենց իրավունք էին վերապահում հայերի հետ վարվելու քմահաճորեն, որոնց համարում էին իրենց գերիները կամ ստրուկները։

1839—1858 թվականների ռեֆորմները կամ օրենսդրական ակտերը ձևական արարողություններ էին, Թուրքիայի եվրոպականացման անհաջող փորձեր, Անգլիայի, Ֆրանսիայի ու Ավստրիայի թելադրանքը՝ Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները կասեցնելու նպատակով։ Նրանք դրանով կամենում էին հասկացնել տալ Ռուսաստանին, թե ազգային հարցը Թուրքիայում լուծվում է ռեֆորմներով և, հետևապես, ավելորդ է խառնվել նրա ներքին գործերին։ Այդ տերությունների և Ռուսաստանի միջև պայքար էր գնում հպատակ ժողովուրդներին իրենց քաղաքականությանը ծառայեցնելու համար։ 1856 թվականի Փարիզյան դաշնագրով սահմանված՝ Թուրքիայի տերիտորիալ ու քաղաքական անձեռնմխելիությունը հպատակ ժողովուրդներին ավելի ու ավելի էր մղում ազատագրական պայքարի ուղին։

Պաշտպանելով Թուրքական սուլթաններին, արևմտաեվրոպական տերությունները դրանով իսկ պաշտպանում էին հպատակ ժողովուրդների նկատմամբ եղած ճնշումն ու հարստահարությունները և դեմ էին նրանց ազգային-ազատագրական շարժումներին։

«Եվրոպական տերությունները,—գրում է Մ. Նալբանդյանը,—անդադար օգնություն են ցույց տալիս Թուրքիային, որ նա դիմանա և չկործանվի։

Որպեսզի Թուրքին ստրկացած հայ, սլավոն և հույն ժողովուրդը քաղաքակրթիչ հոգաբարձուից չզրկվի։

---

23 ՀՍՍՀ ՊԿՊ, Հ. Լազարյանցի ֆոնդ, № 42, գործ № 11, թ. 66։

— Կուրանով Ավետարանի որդի՞ք քաղաքակրթել։

— Այդ քաղաքակրթությունը ավելի փրկարար է։ Ավետարանից թերևս ազատություն կարող է ծագել, իսկ Կուրանից այդ երկյուղը չկա»[24]։

Թուրքիայում հայերը բացարձակապես անպաշտպան և իրավազուրկ էին՝ չհաշված սուլթանական իշխանությունների կողմից հովանավորվող հայ հարստահարիչները։

«Հայերը Թուրքիայում բոլորովին անպաշտպան են,—գրում է Մ. Նալբանդյանը 1863 թ. ապրիլի 8-ին Ղազարոս Նալբանդյանին ուղարկած նամակում,—անգլիական ու ֆրանսիական կառավարություններն այդ հանգամանքը գործադրում էին իրենց օգտին։ Փաշաների բռնություններից իրենց պաշտպանության տակ են վերցնում այն քրիստոնյաներին, որոնք բողոքական կամ կաթոլիկ են դառնում»[25]։

2

Արևմտահայերի մտավորականության՝ Կ. Պոլսում ծավալած հասարակական-քաղաքական շարժումների ճնշման ներքո Աբդուլ Ազիզի կառավարությունը հայերին տվեց, այսպես կոչված, Ազգային Սահմանադրություն, որը ավելի շուտ հայերի ներքին կյանքի վերաբերյալ մի կանոնադրություն էր, որը սահմանափակում էր հայ ամիրա սեղանավորների իրավունքները և տեղ տալիս հայ կոմպրադորական բուրժուազիային։ Գավառահայությունը Սահմանադրությունից գրեթե ոչինչ չէր ստանում։ Նա նորից մնում էր հարստահարությունների և իրավազրկության պայմաններում։

Արևմտահայերի Ազգային Սահմանադրության մասին միջազգային իրավունքի խոշոր մասնագետ Ռոլլեն Ժեքմենը գրում է. «Այստեղ ամեն ինչ կար, բացի մի հոդվածից, որի վրա հայը կարողանար հենվել, որպեսզի քուրդը չխլեր նրա ոչխարները, բեյը չբռնաբարեր նրա աղջիկներին և չգրավեր նրա հողը, հարկահավաքը երկու կամ երեք անգամ չպահանջեր միևնույն հարկը. մի խոսքով ամեն ինչ կար, բացի մի այնպիսի կարգադրությունից, որն իրոք երաշխիք լիներ թուրքական կառավարության կամայականության դեմ»[26]։

24 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 89։
25 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 188։
26 Роллен—Жек-Мен. Армения, армяне и трактаты, Москва, 1898, էջ 19։

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին ուղարկված գավառահայության բազմաթիվ բողոքներն ու դիմումներն իրենց հարստահարությունների ու իրավազրկման, կյանքի, գույքի և պատվի անապահովության մասին ապացույց են այն բանի, որ Ազգային Սահմանադրությունը աչքակապություն էր և գլխավորապես ծառայում էր միայն հայ հարուստների շահերին։ «Իրավ է,—գրում է Մ. Մամուրյանը,—որ երբեմն անիրավ և վատ գործերու օրինավորության գույն տալու համար, պեյ, էֆենդի խորհուրդ կկազմեն, ազգին տունը կառնեին, կը ծախեին, կը կերտեին, կը թափեին և ապա Բ. Դուռը կերթային ու կըսեին. «Ազգային կամքն այս է»[27]։

Գրիգոր Արծրունին միանգամայն իրավացիորեն մեղադրում է արևմտահայ լիբերալներին և բոլոր նրանց, ովքեր հրճվում էին Ազգային Սահմանադրությամբ և աչք էին փակում գավառահայության հարստահարությունների, ճնշման ու իրավազրկման հանդեպ։ Նա այդ Սահմանադրությունը համարում է խաբուսիկ թուղթ, որը երբեք չէր կարող բուժել հայ ժողովրդի վերքերը, չէր կարող պաշտպանել տառապյալ հայի ոտնահարված իրավունքը։ «Հային կողոպտում են,—գրում է նա,—հարստահարում են, ծեծում են, անպատվում են,—ո՞ւր է Սահմանադրությունը, որ պետք է պաշտպաներ նրան»[28]։

Ազգային ժողովի անդամ Մինաս Չերազը նշավակում էր հայ ունևոր խավերին, որոնք իրենց փողի ուժով ընտրվում էին երեսփոխաններ, խափանում էին աշխատավոր մասսաների մուտքը ազգային հիմնարկությունները, վարկաբեկում էին Սահմանադրության սկզբունքները։

«Նկատելով,—ասում է նա,—որ դրամական սեղմումներ ազգի փոքրամասնությանը կը նետեն կատարել երեսփոխանական ընտրություններ։

Նկատելով, որ այդ փոքրամասնության մի ընչին փոքրամասնությունն կը գործադրե ստեպ յուր ընտրողական իրավունքը։

Նկատելով, որ այս զանցառության շնորհիվ, մինչև իսկ 10—15 հայերե ընտրված մի անհատ կը հռչակվի երեսփոխան և կկոչվի լինել ազգի ներկայացուցիչ, ըստ 93-րդ հոդվածի Ազգային Սահմանադրության, և վճռել 4.000.000 հայերի ճակատագիրն։

Նկատելով, որ այս համեմատություն է անարդար և անարդարանալի, և կեղծ է սահմանադրական գաղափարն, ժողովրդապե-

27 Մ. Մամուրյան, Հայկական նամականի, էջ 169։
28 «Մշակ», № 45, 1876։

տության անունին տակ ստեղծելով մի ճշմարիտ սակավապետություն։

Կառաջարկեմ, որ Ազգային ժողովն մերժե այսուհետև իբրև անբավական ամեն երեսփոխանական ընտրություն, որ չէ կրցած ստանալ ընտրող ժողովրդի մեծամասնությունն»[29]։

Մինաս Չերազի մոտ հայերի թիվը չափազանցված է։ Բայց ճշմարիտ է այն, որ երեք միլիոն հայերից Կ. Պոլսում կային 250 հազար, որոնք Ազգային ժողովի համար տալիս էին 100 երեսփոխան, իսկ մնացած՝ 2.750 հազար գավառահայությունը տալիս էր 40։ Դրա համար էլ Չերազն առաջարկում էր, որ «Ազգային Սահմանադրության 93-րդ հոդվածը բարեփոխվի և այսուհետև կենտրոնական երեսփոխաններ լինեն 40 և գավառականները՝ 100»։ Նա գտնում էր, որ ընտրության այս ձևը «կը վիրավորե մեր գավառացի եղբայրները և մի տեսակ հարստահարություն է անոնց դեմ»[30]։

Չերազի ցանկությունները մնացին անիրագործելի։ Հայ ունևոր խավերը չէին զիջում իրենց ղեկավար դիրքերը, որոնց համար ոչ մի էական նշանակություն չունեին գավառահայերի կրած տառապանքները։ Ազգային Սահմանադրությունը հայ աշխատավոր մասսաների համար մնում էր որպես մեռած տառ։

Այդուհանդերձ, Սահմանադրությունն այն կարևոր առանցքն էր, որի շուրջը մեկ տասնամյակից ավելի ծավալվեցին հասարակական-քաղաքական շարժումներ, որն առիթ տվեց թեր ու դեմ կարծիքների բախման։ Սահմանադրական պայքարը քաղաքականապես հասունացրեց արևմտահայ առաջավոր մտավորականությանը, նրան նախապատրաստեց ազգային-ազատագրական պայքարի։

Հայ աշխատավորության համար մեռած տառ և խաբեություն էր նաև 1876 թվականի Միդհաթ փաշայի խոստացած Սահմանադրությունը։ Իսլամական կրոնը և նրա հետ կապված ֆանատիզմը Թուրքիայում անփոփոխ էր թողնում կառավարման ձևը և, հետևապես, անհնար էր դարձնում մահմեդականների և քրիստոնյաների հավասար իրավունքը։ Դրա համար էլ գերմանացի Գլենարը շատ իրավացիորեն 1876 թ. դեկտեմբերի 23-ի Սահմանադրությունը

29 «Ատենագրություն Ազգային ժողովոյ», հատոր Ե, Կ. Պոլիս, 1876։

30 Նույն տեղում, էջ 89։

համարում էր «աչքակապություն», մի տեսակ խաղ, անխելոք կատակ և ուրիշ ոչինչ»[31]։

Գլենարը միաժամանակ այդ Սահմանադրությունը համարում էր «դատարկ ցույց, պառլամենտական կապկություն»։ «Սուլթանները,—գրում է նա,—օրենսդրության վրա կարող են գործադրել ինչքան որ կամենան թուղթ, Հատտի-շերիֆներ, Հատտի-հումայուններ, բայց չեն հավատա այդ ասածների մի խոսքին, որ կարող են խոսել, գրել կամ տպել, շատ լավ գիտեն ինչ գործադրական գին ունեն բոլոր այդ գեղեցիկ պաշտոնական վկայությունները...»[32]։

Գլենարը մատնացույց է անում Աբդուլ-Մեջիդի կառավարության օրոք հրապարակված օրենսդրական ակտերը և եվրոպական դեսպանների առջև արած սնապարծ խոստումները՝ սրբությամբ կենսագործելու այդ օրենսդրական ակտերի բոլոր կետերը։ Բայց դրանք միայն խոստումներ էին։ Ամեն ինչ երկրում ընթանում էր նախկին ձևով։

«Եվ ի՞նչ էր այս հրովարտակի այսպիսի հանդիսավոր կերպով հրատարակելու հետևանքը,—ասում է Գլենարը,—որ նվիրել է սուլթանը Տաճկաստանի քրիստոնյաներին։ Ոչինչ։ Բոլոր այս խոստումները մնացին անզոր այնպես, ինչպես մարգարեի հագուստը կմնա անփոփոխ մինչև աշխարհիս վերջը։ Բայց ինչո՞ւ,—հարցնում է Գլենարը և ապա պատասխանում.—որովհետև Տաճկական տերությունը հիմնված է մահմեդականության սուրբ օրենքի վրա, բայց այդ օրենքը անպայման արգելում է ամենայն տեսակ հավասարություն մահմեդականի և ոչ-մահմեդականի մեջ»[33]։

Խոսքով Սահմանադրություն, իսկ իրականում հպատակ ժողովուրդների իրավազրկության և հարստահարությունների ուժեղացում։

«Հայաստանի մեջ շատ տեղեր քրիստոնյաներին եկեղեցու մեջ զանգակահարությունն արգելելն,—գրում է «Մշակ»-ի հրապարակախոս Հրանտը (Մ. Փորթուգալյանը),—անչափահաս քրիստոնյաներին մահմեդականություն ընդունել տալը օրենքին հակառակ.—Մի՞թե ամենախայտառակ խաբեություն չէ՞»[34]։

31 Տե՛ս Հ. Լազարյանց, Դարձյալ մի քանի խոսք տաճկահայերի վիճակի բարվոքման մասին և մի քանի հայացք Հայաստանի քրդերի և նրանց ծագման վրա հոդվածը, «Մեղու Հայաստանի», № 129, 1882։

32 Նույն տեղում։

33 Նույն տեղում։

34 «Մշակ», № 5, 1878, տե՛ս «Միդհաթ փաշա և քրիստոնյաների զինվորագրությունը Թուրքիայի մեջ» հոդվածը։

Հենց այդ Սահմանադրության գոյության պայմաններում հպատակ ժողովուրդների և մասնավորապես գավառահայության դրությունն էլ ավելի վատացավ։

«Հայոց գինվորական ծառայության հարցը Տաճկաստանում» վերնագրով հոդվածում «Մշակ»-ի թղթակիցը գրում է. «Թուրքի փաշաները կեղեքում են ժողովուրդը... Թուրքի դատարանը արդար չէ հայերի համար. Հայաստանի քյոփդերը սպանում են հայերին, այրում են նրանց տները և խանութները, ոտնակոխ են անում նրանց արտերը, քշում են նրանց նախիրը և ոչխարները»[35]։

Գավառահայության ստրկական և բացահայտ անապահով վիճակի մասին ուշագրավ է 1869 թվականին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին ուղարկված 129 քահանաների բողոքը՝ Էջմիածնի Սինոդին ներկայացնելու համար։ Այդ բողոքում ցույց են տրված թուրքական ու քրդական կեղեքիչների կողմից հայերի նկատմամբ գործադրած գազանությունները, որոնց կանխելու ուղղությամբ օսմանյան կառավարությունը մտածել անգամ չէր ցանկանում։

Նշված փաստերը վկայում են այն մասին, որ սուլթանական Թուրքիայում գավառահայությունն օրենքից դուրս էր մնում։ Նա ենթակա էր թուրքական և քրդական կեղեքիչների քմահաճույքներին, նա բառիս իսկական իմաստով ստրկացված էր, իսկ եղած օրենսդրական ակտերը ամրացնում էին այդ դրությունը, պաշտպանում և հովանավորում էին հանցագործությունը, սպանությունն ու հարստահարությունը։

1870 թ. նոյեմբերի 16-ին պատրիարքարանին ուղարկած իր նամակում Վասպուրականի հայ աշխատավորների կրած ֆիզիկական տանջանքների մասին Գ. Սրվանձտյանը գրում է. «Այն երիտասարդը, որ սպանած են, վարունկի պես մանրած են, իսկ եթե այս կողմերու ցավերը մանրամասնաբար գրի առնելու ըլլամ, բավական օրեր պիտի անցնեն վրայես։ Օ, եղբայր, այս բռնություններն, որ քրդեր կընեն հայոց ազգին—պատմելու չէ, երանի թե փարավոնի դրություն ըլլար, ինչպես իսրայելցիք, որ նեղություն կրեցին փարավոնեն»[36]։

Այսպիսով, սուլթանական կառավարության օրենսդրական բոլոր ակտերը ձևական էին, աչքակապություն ու խաբեություն։

---

35 «Մշակ», № 6, 1878։

36 «Դիվան հայոց պատմության», հատ. ԺԳ, էջ 50։

1876 թվականին պատրիարքարանը հրատարակեց երկրորդ «Տեղեկագիրք», որի մեջ զետեղված են գավառահայերի 39 բողոքներ ու նամակներ՝ իրենց հարստահարությունների ու իրավազրկման փաստերի մասին՝ 1872—1876 թվականների ընթացքում։

Հայոց պատրիարքարանը խնամքով գրանցում էր այս փաստերը, բողոքներ էր ներկայացնում թուրքական կառավարությանը և դրանով իր պարտքը կատարած էր համարում։

Դեպի գավառահայերի բողոքներն ու դիմումները շատ անտարբեր էր վարվում նաև Ազգային ժողովը։ Բայց նրա որոշ առաջավոր խավերը՝ Ստ. Փափազյանը, Մինաս Չերազը պահանջում էին կտրուկ քայլերի դիմել և Բ. Դոնից շուտափույթ պատասխան պահանջել։ Ազգային ժողովի նիստերից մեկում Ստ. Փափազյանն ասում է. «Դարձյալ գիտենալ կուզեմ, թե Զեյթունի մարդասպան գայմագամն ինչո՞ւ չը կախվեցավ, թե ինչո՞ւ Մշո աղջիկն առևանգող չարագործը չը փնտրվեցավ և չպատժվեցավ... Ինչո՞ւ քյուրդ ավշար, չերքեզ և այլք գան համարձակ կողոպտեն և կողոպտյալ հայն չկրնա անոնց դիմադրել։ Քանի որ քյուրդն զհայն կը սպանե և չպատժվիր, քանի որ Բ. Դոնեն հրամանագիր կերթա և չգործադրվիր, մեր ազգայնոց վիճակը իհարկե օրավուր ավելի կը վատթարանա»[37]։

Հրապարակված «Տեղեկագրքի» բովանդակության մասին Ազգային ժողովի նիստում Ստ. Փափազյանի զեկուցումը ցույց է տալիս, որ թուրքական իշխանությունները, քրդական բեկերը ստրկացրել էին գավառահայությանը։ Իր չարանենգ դիտավորություններն իրականացնելու նպատակով, թուրքական կառավարությունը եվրոպական նահանգներից ևս չերքեզներ էր տեղափոխում ասիական նահանգները, որը լուրջ սպառնալիք էր հայերի համար։ Անդրադառնալով այդ հարցին «Московская ведемость»-ը գրում է. «Մի՞թե այդ նոր վտանգ չի ներկայացնում հայերի համար։ Խոստովանում ենք, մենք չենք կարող հասկանալ, թե ինչո՞վ է մեղավոր երեք միլիոն հայոց ազգությունը Թուրքիայի ասիական մասում, և ի՞նչ է պատճառը, որ հայ ժողովուրդը արժանացավ Եվրոպայի բարկությանը։ Մի՞թե քիչ են տանջվել նրանք վայրենի քուրդ-

---

37 «Ատենագրություն Ազգային ժողովոյ», Կ. Պոլիս, 1876, էջ 179։

դերից, որ դարձյալ ուզում են, որ այդ վերջինների օգնությամբ, ուղարկել նրանց երկիրը և չերքեզներին»[38]։

Չերքեզներին Թուրքիայի ասիական նահանգներում բնակեցնելու քաղաքականությունը յուր սուր ծայրով ուղղված էր հայ ժողովրդի գոյության դեմ։ Քրդական բեկերը, թուրքական և չերքեզական խաները ապօրինի ճանապարհով զանազան գավառներում հայերից խլում են 263 գյուղ՝ իրենց պատկանած հողամասերով, հափշտակում են 21 եկեղեցապատկան հողեր և այլն։ Հայկական գյուղերը, վանքերն ու եկեղեցիները հարկատու էին դառնում քրդական, չերքեզական և թուրքական ինքնիշխան բռնակալներին և ազդեցություն ունեցող մուֆթիներին ու շեյխերին։ «Դա մի ակամա հարկատվություն էր,—գրում է Բաֆֆին,—որ ժողովուրդը ճարահատյալ վճարում էր իր հարստահարողին, որպեսզի իրեն հանգիստ թողնե։ Այսպիսով, ժողովրդի վրա ծանրանում է երկու տեսակ հարկատվություն. մինը՝ տաճկաց կառավարությանը, մյուսը՝ քուրդ կամ թուրք դերեբեկիներին և ինքնիշխան բռնակալներին»[39]։

Անպաշտպան հայերն իրենց կյանքը փրկելու համար հարկադրված մտնում էին այս կամ այն ինքնիշխան բռնակալի հովանավորության տակ, դառնում էին իրենց «պաշտպանների» քմահաճույքներից կախված, մնում էին որպես իրավազուրկ և բանող ստրուկներ։ Թուրքիայում հայերի համար ստեղծված վիճակը ոչ այլ ինչ էր, նկատում է Բաֆֆին, քան «մի կամավոր ստրկություն», այնպիսի դրություն, «Որով անզորը հպատակվում է հզորին և դառնում է նրա կամքի բոլորովին կրավորական առարկա»[40]։

Այսպիսով, քրդական ապստամբությունները կանխելու, քրդերին հայերի հետ գժտեցնելու նենգ դիտավորությամբ թուրքական կառավարությունը հողազրկում էր հայերին և նրանց հողերի վրա բնակեցնում քրդերին ու չերքեզներին։ Ի՞նչ կարող էր անել հայ գեղջուկը, երբ թուրքական կառավարությունը՝ մի կողմից, քրդական ու թուրքական հարստահարիչները՝ մյուս կողմից, խլում էին նրա աշխատանքի վաստակը ու դրանով խափանում նրա ստեղծագործական եռանդը, տնտեսության մեջ նորաձևություն մտցնելու շահագրգռվածությունը, սովի, աղքատության ու գաղթի ուղին մղելով նրան։

38 Տե՛ս «Մշակ», № 47, 1876։
39 Տե՛ս «Մշակ», № 149, 1878։
40 Նույն տեղում։

Սուլթանական Թուրքիայի հասարակական-պետական կարգերը ներքուստ նեխած էին։ Վերևում հիշատակված օրենսդրական ակտերը նրան առաջ չմղեցին։ Շարիաթը և իսլամիզմը իրենց կնիքն էին դրել երկրի հասարակական-քաղաքական կյանքի վրա և արգելք էին հանդիսանում ժողովրդի առաջընթացին։

Բաֆֆին իրավացիորեն խարազանում է բոլոր դյուրահավատներին, ովքեր կարծում էին, թե Թուրքիան եվրոպականացել կամ մտել է քաղաքակիրթ ժողովուրդների զարգացման ուղին։

«Ոչ,—ասում է Բաֆֆին,— Տաճկաստանի բարբարոսությունները ծածկող, նրա երևակայական հառաջադիմությունը հռչակող անձնական հաշիվներով կուրացած մարդիկ հայտնում են, թե այժմ Տաճկաստանը բավական բարեկարգված է և քրիստոնյա հպատակների դրությունը այժմ համեմատաբար շատ լավ է, քան թե առաջ, և նրանք համարյա կատարյալ ազատություն են վայելում և այլն...»։ Այս բոլորը դատարկ խոսքեր են։ Տաճկաստանը առաջ է գնացել միայն մեկ բանի մեջ՝ այն է իր արտաքին կերպարանքը պաճուճել է որպես մի եվրոպական տերություն, իսկ սրտով, հոգով և գործով մնացել է միշտ մոնղոլ, նույն բնավորությամբ, որպիսին էր նա երբեմն Թուրանի անապատներում»[41]։

Գավառահայության բազմաթիվ գանգատներից ու բողոքներից հետո պատրիարքարանի կողմից սուլթանի կառավարությանը ներկայացված թագրիրները ձևական նշանակություն ունեին, որոնց հետ բոլորովին հաշվի չէր նստում սուլթանը։ Բայց դրանք չխանգարեցին պատրիարքարանին՝ ամբողջ հայության անունից հայտարարելու, թե նա գոհ է «բարեխնամ կառավարությունից», որին Բաֆֆին որակեց որպես «մեծ խաբեություն»[42]։ Հայ հարուստներն ու պատրիարքարանը, նկատում է Բաֆֆին, Ազգային Սահմանադրության թմբկահարություններով են զբաղված, երբ գավառահայությունը արցունք է թափում ու արյուն թքում։

«Կ. Պոլսի Ազգային Սահմանադրությունը ուրիշ ոչինչ չի եղել,—գրում է նա,—բայց միայն մի մանկական խաղալիք, որ խորամանկ դայակը տալիս է երեխայի ձեռքը, որ նա հանգիստ մնա, որ նրանով զբաղվի, չարություն չգործի... Եվ Կ. Պոլսի տղայամիտ էֆենդիները շատ գոհ և ուրախ էին այս խաղալիքով, և ամեն տարի Բոսֆորի ափերի մոտ տոնում էին իրենց ողորմելի պատրանքը»[43]։

41 «Մշակ», № 146, 1878։
42 Նույն տեղում։
43 «Մշակ», № 146, 1878։

Մոտենում էր ռուս-թուրքական պատերազմը։ Բալկանյան սլավոն ժողովուրդները ծավալել էին ազգային-ազատագրական պայքարն ընդդեմ թուրքական բռնապետության։ Հայերի դրությունն ավելի էր ծանրանում։ Հայ ժողովրդին ազգային-ազատագրական պատերազմի կոչելու փոխարեն, Կ. Պոլսի ազգային ջոջերն սկսեցին փառաբանել օսմանյան գահը և կոչ էին անում պաշտպանելու սուլթանի իշխանությունը։ Իր առաջնորդող հոդվածում «Մասիս»-ը գրում է. «Հայերը քանի որ օսմանյան հպատակության ներքև են, իրենց բախտն անբաժանելի կերպով միացյալ է օսմանյան տերության բախտին և ապագային հետ։ Հայերն ուրիշ ազգաց նման ո՛չ մի մասնավոր նպատակ և ո՛չ քաղաքական միտումներ ունին։ Իրենց շահն ամենայն անկեղծությամբ Թուրքիո շահուն հարակից է»[44]։

«Մասիս»-ի խմբագրությունը Կ. Պոլսի հայ էֆենդիների և մի բուռն հարուստների շահերը հրամցնում էր որպես ազգի շահ, այդ հարուստների արտոնյալ վիճակը համարում էր որպես ազգի համար եղած արտոնություն։ Իրենց գծուծ ու եսական շահերից ելնելով՝ հայ էֆենդիները, նրանց օրգանը, հայերին կոչ էին անում զենք վերցնել և կռվել սլավոն ժողովուրդների և Ռուսաստանի դեմ։ «Հայերն այս պատերազմին մասնակցելով,—գրում է «Մասիս»-ը իր առաջնորդողում,—ամեն մասամբ կը շահին, նյութապես երկրին մեջ իրենց արժանավոր դիրք կը բռնեն և բարոյապես փառք ու պատիվ կը վաստակին»[45]։ Փաստորեն արևմտահայ լիբերալների այդ օրգանը պահանջում էր, որ հայերն իրենց սեփական ձեռքով կռեին իրենց ստրկության շղթաները։

Արդարացնելով սուլթանի կառավարության ռեակցիոն քաղաքականությունը, «Մասիս»-ը գտնում էր, որ «Հայոց գանգատները կառավարության դեմ չեն», որ «կենտրոնական կառավարությունն և գավառական բարձր պաշտոնեայք մեծ մասամբ հայոց վրա ամեն ժամանակ համակրություն ցույց տված են»[46]։ Վախ զգալով դեպի Ռուսաստանը եղած գավառահայության համակրանքի աճումից, «Մասիս»-ը հայերին կոչ էր անում՝ թուրքերի հետ միասին պատերազմի ելնել Ռուսաստանի դեմ։ «Ասիո մեջ,—գրում է նա,—հայք օսմանյան իշխանությունն յուր պակասություններով հանդերձ նախամեծար կը համարին Ռուսիո բռնապետութենեն»[47], որ «եթե Ռուսիո հաջողի Հայաստանեն մեծ մաս մ՝ալ կորզել, հայոց ազգության, լեզվին, եկեղեցվույն, ավանդության, բարյաց և ազատ զարգացման վերջին օրն է։ Սահմանադրաբար ապրելու և բարոյապես և մտավորապես հառաջադիմելու քաղցր հույսերին հրաժեշտ տալու ենք»[48]։

Այսպիսով, «Մասիս»-ի խմբագիրների համար Հայաստան հասկացողությունը սահմանափակվում էր Կ. Պոլսի հայ գաղութով, որտեղ հայ ունևոր խավերը վայելում էին սուլթանի կառավարության հովանավորությունն ու աջակցությունը և որոնք աշխատավորական մասսաների սարսափելի հարստահարիչներն ու պետական գանձարանը հարստացնողներն էին։ «Հայաստանի փայլը,—գրում է «Մասիս»-ը,—կը պայծառանա Կ. Պոլսի մեջ։ Հայը գրական փոխանադրական թղթերու մեջ կը լողա, ինչպես ձուկը ջրո մեջ, Կ. Պոլիս կը բնակեն 200.000 հայեր, որոնք իբրև հարկահան, սեղանավոր, վաճառական, առևտրական միջնորդ, թարգման, խորհրդական...»[49]։

Այդ նկատառումով էլ «Մասիս»-ի խմբագրությունը, Ազգային ժողովն ու պատրիարքարանը արձագանքեցին թուրքական կառավարությանը և հայերին կոչ արին պայքարի ելնել Ռուսաստանի դեմ և պատերազմը հասցնել իր հաղթական վախճանին։ Թուրքական Սահմանադրությունը՝ օսմանյան խաբեություն էր։ Չնայած այդ ամենին, պատրիարք Ներսես Վարժապետյանը, կրոնական և Ազգային ժողովի համաձայնությամբ, մի կոնդակ հրապարակեց՝ հայերին Բալկանյան ժողովուրդների և Ռուսաստանի դեմ զենք վերցնելու կոչ արեց։ Այդ կոնդակը Գր. Արծրունին անվանեց «Կ. Պոլսի Ներսես պատրիարքի խայտառակ և ամոթալի շրջաբերական»[50]։

Պատերազմելով Բալկանյան ժողովուրդների և Ռուսաստանի դեմ, թուրքական կառավարությունը պատերազմական ծախսերի մեծ մասը գանձեց ընչազուրկ և քաղցի մատնված գավառահայ

44 «Մասիս», № 1848, 1877։
45 Նույն տեղում։
46 «Մասիս», № 1874, 1877։

47 Նույն տեղում։
48 «Մասիս», № 1884, 1877։
49 «Մասիս», № 2324, 1879։
50 «Մշակ», № 33, 1876։

աշխատավորներից։ Նա դրանով կամենում էր թուլացնել հայերի ուժը, խափանել Ռուսաստանին միանալու նրանց հակումները։

Վանեցի Սաքո Թարգուլյանը գեներալ-լեյտենանտ Հ. Լազարյանցին ուղարկած իր ձեռագիր աշխատության մեջ նկարագրում է թուրքական իշխանությունների և քրդական բեկերի կողմից հայերի հարստահարությունների, ճնշման ու իրավազրկման ծանր դրությունը՝ կապված պատերազմական դրության հետ։ «...Արդ ինչ կարող է ընել ժողովուրդը այս պարագայիս մեջ, վասնզի իր իրավունքը պաշտպանելու անկարող ժողովուրդ մը եղած է, քանզի երբ որ կառավարությունը թե՛ ուղղակի և թե՛ անուղղակի կերպով կամենա իր հպատակ ժողովուրդը հարստահարել, կեղեքել, ոչընչացնել։ Հարկավ ժողովուրդը ցիր ու ցան պետք է լինի»[51]։

Մի վանեցի պատմում է. «Ափսոս նորափթիթ հասակիս, որ հասած է 35 տարուն, զի ամեն օր հոգսերով մաշեցուցի կյանքս. չը ծաղկած թառամեցա, մազերս ճերմակեցան որպես ձյուն...» որ «աշխարհիս վերջն հասած է, ալ չի պիտի կարողանամ ազատ շունչ քաշել, ամեն օր տոկանք, ամեն օր արյուն, բանտ, տառապանք, շարչարանք, անպատվություն, բռնաբարություն. այս ամեն քաշածներս հերիք չէ մեզ, այս օրս ալ Մահմետ փաշան հրամայեց, որ հայերս, ամեն ոք իր տան մեջ զորքերի համար չոր հաց պատրաստեն, 2 զույգ գուլպա, 2 զույգ շապիկ, 2 զույգ ոտից շոր, հնուց մնացած կառավարական հին և նոր տուրքերը ընդամենը մինչև 15 օր պատրաստենք, չէ, մեր սուլթան Համիդ մոտկաց օրերումս պատերազմ պիտի ընե. այսինքն Ռուսիո...»[52]։

Իրադրությունները բարդանում էին։ Բայց հայերը չէին վհատվում, նրանք մնում էին կամքով արի ու քաջ, սպասում էին հարմար առիթի, գործում էին ինքնուրույն։ Այդ հարմար առիթը ռուս-թուրքական պատերազմն էր և Թուրքիայի նկատմամբ Ռուսաստանի ձեռք բերած հաղթանակը, Ռուսաստանը, որի բանակներին նյութապես ու բարոյապես օգնում էին հայերը։

Ստեղծված բարենպաստ պայմաններում հարկավոր էր օգնության ձեռք մեկնել արևմտահայերին, ղեկավարել և ուղղություն տալ նրանց ազգային-ազատագրական պայքարին, բարձրացնել ժողովրդական մասսաների ազգային ինքնագիտակցությունն ու ինքնաճանաչողությունը։ Այդ գործում զգալի դեր խաղացին

51 ՀՍՍՀ ՊԿՊԱ, Լազարյանցի ֆ. № 42, գործ 11, թ. 24։
52 Նույն տեղում, թ. 26։

«Մշակ»-ը և նրա խմբագիր Գր. Արծրունին, արևելահայ ազգային լիբերալներն ու ազգային դեմոկրատները, որոնք ունեին ռուսական օրիենտացիա։ Նրանք հայերին կոչ էին անում ոտքի կանգնել, զենք վերցնել և ռուսական զորքի հետ միասին կռվել թուրքական բռնապետության դեմ և հույս էին տածում, թե Ռուսաստանը օգնության ձեռք կմեկնի հայությանը։ «Թուրքիայի հայերը ճնշված, ստորացված են,—գրում էր Գր. Արծրունին,—մինչև այն աստիճան կրավորական են դարձած, որ իրենց սեփական շրջանից անկարելի է սպասել բռնավորության, հալածանքի, ճնշման դեմ բողոք... Պետք է մի դրսի հզոր ուժ, դրսի ազդեցություն հայտնվի, որ մարդասիրական գութից շարժված, մեկներ այդ հոգով ընկած, անդադար բռնաբարության տակ հուսահատված և մաշված ազգությանը իր օգնության ձեռքը...»[53]։

5

1876 թվականին գահ բարձրացավ սուլթան Աբդուլ Համիդ II-ը (1876—1908), որը հետևողականորեն շարունակեց հպատակ քրիստոնյաների և, առաջին հերթին, հայերի սոցիալական ու ազգային ճնշման քաղաքականությունը։ Ավելին. կանգնած լինելով վերահաս պատերազմի վտանգի առջև, սուլթան Համիդը հայերին ուժասպառ անելու կուրս վերցրեց, որպեսզի Ռուսաստանը չկարողանար նրանց օգտագործել իր նպատակների համար։

Իր այդ դիտավորությունն իրագործելու համար, սուլթան Համիդը գործի դրեց ոստիկանությունը, լրտեսների, կաշառակեր պաշտոնյաների, դավադրությունների, խաբեությունների մեջ փորձված սուլթանական իշխանության ողջ կարողությունը։ Աբդուլ Համիդը հետևելով իր պապի՝ Սուլթան Մահմեդի օրինակին՝ սկսեց սրի ուժով ղեկավարել երկիրը։

«Սուլթան Ապտյուլ Համիտ ինչպես մեռավ» ուշագրավ իր աշխատության մեջ Արամ անունով հեղինակը Սուլթան Համիդի դաժանությունների մասին գրում է.

«Ով դուք, որ հոս կը մտնեք,
Լքեցեք ամեն հույս։

53 «Մշակ», № 24, 1876։

Եվ միթե արքայության քո դժոխք ալ պետք չէ... Ո՜հ, բազմաթիվ, խիստ բազմաթիվ են հոն մտնողները, գաղտնի ոստիկանության հսկողությամբ պալատ բերվելեն ետքը։ Բայց դուրս եկող... Ոչ ոք։ Այր և կին, ծեր և տղա, կույս և պատանի, ով որ ինկած է այդ որջին մեջ, վեհապետին հանդեպ իր իրական կամ կարծեցյալ անհավատարմությունը անպատմելի և երկայնատև տանջանքներու մեջ քավելե ետքը, կես ողջ, կես մեռած, պալատին և փողոցներուն տակեն, գետնափոր նկուղներե քաշկոտելով ծովը նետված է, գիշերվան այն ժամերուն, ուր ամբողջ բնությունը կը հանգչի և ուր Արարաչին միշտ արթուն աչքերը միայն կը տեսնեն...»[54]։

Բնութագրելով սուլթանական կառավարության կերպարը, Անդրե Մանդելշտամը գրում է. «1876-են ի վեր, երբ Ապտյուլ Համիտ ճամբու դրած էր օսմանյան առաջին խորհրդարանին երեսփոխանները, ամեն մասնավոր կամ հանրային նախաձեռնություն, ամենեն բուռն անգթությամբ մը ճնշված էր»[55]։ Նույն հեղինակը նշում է, որ սուլթան Համիդը իր տիրապետության 33 տարիների ընթացքում հպատակ ժողովուրդներին պահում էր ահ ու դողի մեջ։ Նրա կառավարությունը «հատկանշված է իբրև ընդարձակ կազմակերպություն մը կողոպուտի և թալանի համար»[56]։

Սուլթանական բռնապետությունը նպաստավոր առիթների էր սպասում հայերի դեմ հարձակում սկսելու համար։ Այդ առիթներն էին՝ 1875—1876 թվականների Բալկանյան սլավոնների ազգային-ազատագրական պատերազմները և 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմը։ Հայերի դրությունը գնալով ծանրանում էր։ Առանձնապես խոր վշտի մեջ էր Վան-Վասպուրականի հայությունը։

1876 թ. դեկտեմբերի 1-ին, սուլթանական կառավարության թելադրանքով, զինվորական հրամանատարի օգնական չերքեզ Մահմեդ բեկի նախաձեռնությամբ կազմակերպվեց Վանի շուկայի մեծ հրդեհը, որը շատ լուրջ աղետ էր հայերի համար։ «Վանը,— գրում է Համբարձում Երամյանը,—իբրև Ռուսիո ամենեն մոտիկ հայաշատ, բարգավաճ և ոգևորյալ կենտրոն, կըրնար ռուսական արշավանքի մը ընթացքին վտանգավոր դառնալ, ուստի և պետք էր

54 Արամ, *Սուլթան Ապտյուլ Համիտ ինչպե՞ս մեռավ*, Գահիրե, 1908, էջ 10—11։

55 Ա. Մանդելշտամ, *Օսմանյան կայսրության ճակատագիրը*, Կ. Պոլիս, 1919, էջ 18։

56 Նույն տեղում։

լախտի հարված մը տալ Վասպուրականի հայության, որ այն ատեն 250 հազարե կանցներ և որուն գլխավոր շնչերակն էր Վանը»[57]։

Հայերին սպառնացող ահեղ վտանգի առիթով Խրիմյանը հանդես եկավ «Վանգոյժ» աշխատությամբ։ Նա գտնում էր, որ այդ հանցագործության հեղինակը սուլթանական կառավարությունն է, որը Վան-Վասպուրականը ուժասպառ անելու կուրս էր վերցրել։

Սուլթանական միահեծանության գործադրած գազանությունների հանդեպ լռելը Խրիմյանը համարում էր դատապարտելի և Բալկանյան սլավոնների օրինակով հայերին ազգային-ազատագրական պայքարի էր կոչում։ «Դու գիտե՞ս,—գրում էր նա,—որ հավատարիմ ժողովուրդ հայոց, մարդիկ և ազգեր կան, որ քո այնչափ հավատարմությունդ կը ծաղրեն ու կը մեղադրեն զքեզ, երբ կը տեսնեն, որ խիստ անմռունչ և անզգա կը լինես հավատարմությանդ մեջ, մինչև անշունչ, անբարբառ դիակ մը կը դառնաս դու, այնպես որ քու պարկեշտությունդ կը նշավակեն և կոխոտելով կանցնին վրայեդ և դու չես իմանար։ Մի՞թե գռեհյաց կավ ես դու աշխարհիս երես. ես էլ կը դատիմ թե այդ չափ ստրկանաս և աղարտես մարդկության ազատ պատիվը»[58]։

«Վանգոյժ»-ը և նրան հաջորդող «Հայգոյժը» հայ ժողովրդի կենդանի բողոքն էին թուրքական իշխանությունների և քրդական բեկերի կողմից հայերի նկատմամբ գործադրած չարագործությունների ու ավերածությունների դեմ։ Այդ աշխատությունները հայերին մոբիլիզացնում էին իրենց մղած արդարացի պայքարում։ «Ելե՛ք ուրեմն,—գրում է Խրիմյանը,—մի՛ նստիք և հուսահատ ողբաք այդ ապաժոյժ ավերակաց վերա. ելե՛ք, վանեցիք, թաղեցեք այդ մեռելը, վրան կոթող մը կանգնեցեք ու գրեցեք այս հիշատակարանը. «Աստ թաղեցավ վանեցի հայ ժողովրդոց գանձն ու կյանքը»[59]։

Խրիմյանը և Վան-Վասպուրականի հայությունը լուրջ սպասելիքներ ունեին վերահաս ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի հաղթանակից։ Դրա համար էլ Խրիմյանը իր վերոհիշյալ աշխատություններում հայ ժողովրդի համար նախատեսում էր լավ ապագա. «Գարուն մոտ է,—գրում է նա,—հայոց աշխարհ, և պիտի գա ծիծեռնակ քեզ ավետիս տա, թե Թուրքիո աշխարհին երկունք

57 Համբարձում Երամյան, *Հուշարձան Վան-Վասպուրականի*, Ալեքսանդրիա, 1929, էջ 92—93։

58 Խրիմյան Հայրիկ, *Վանգոյժ*, Կ. Պոլիս, 1903, էջ 11։

59 Նույն տեղում, էջ 12։

կանցնի և յուր վերածնության օրը հասած է, և դու տես յայնժամ թե ինչպես այդ մոխրակույտ ագարակն արդեն բողբոջելով կը կանաչի, և քո վերջին բարգավաճ կը լինի քան զառաջին»[60]։

Բայց, ցավոք սրտի, այդ գարունը չեկավ, ավետաբեր ծիծեռնակը չերևաց հայկական աշխարհի վրա, որովհետև սուլթանական Թուրքիային հովանավորեցին եվրոպական մի քանի մեծ տերություններ, գլխավորապես Անգլիան ու Ավստրիան։ Պատերազմից հետո, չնայած Թուրքիայի կրած ծանր պարտությանը, այնուամենայնիվ, նա է՛լ ավելի ուժեղացրեց հայերի սոցիալական ու ազգային ճնշումը՝ նրանց բնաջնջելու նպատակով։

60 Արիմյան Հայրիկ, Վանգոյժ, Կ. Պոլիս, 1908, էջ 14։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

1877—1878 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ։ ՍԱՆ-ՍՏԵՖԱՆՈՅԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ։ ԲԵՌԼԻՆԻ ԿՈՆԳՐԵՍԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

1

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը ծագեց գլխավորապես Արևելյան հարցի շուրջը ստեղծված կրիզիսի հետևանքով։

Թուրքական կայսրության հպատակ ժողովուրդները և գլխավորապես բալկանյան սլավոնները ազգային-ազատագրական պայքար էին մղում թուրքական բռնապետության դեմ իրենց ազգային անկախության համար։

Արևելյան հարցը թևակոխեց իր զարգացման նոր փուլը։ Ռուսաստանը հանդես եկավ ակտիվ դերում։ Նա աշխատեց Արևելյան հարցը և նրա շուրջը ստեղծված կրիզիսը լուծել պատերազմի ճանապարհով։ Ռուսաստանի այդ քայլը ավելի սրեց միջազգային հարաբերությունները։

Ռուս-թուրքական պատերազմը և բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները է՛լ ավելի բարձրացրին հայերի ազգային ինքնագիտակցությունն ու ինքնաճանաչումը։ Նրանք նույնպես ազգային-ազատագրական պայքարի ելան ընդդեմ սուլթանական բռնապետության՝ հանուն իրենց ազգային անկախության։

Ռուսաստանը շահագրգռված էր Բալկաններով և Կովկասով՝ ընդհանրապես, և Անդրկովկասով՝ մասնավորապես։ Այդ երկրները շատ էական նշանակություն ունեին նրա համար։ Անդրկովկասը

թահմանակից է Պարսկաստանին ու Թուրքիային։ Գրավելով այն, Ռուսաստանը իրեն համար ստեղծեց բացառիկ կարևոր պյացդարմ՝ Արևելքում։ Պարսկաստանի և Թուրքիայի դեմ պատերազմելիս, Ռուսաստանը կարողանում էր վստահորեն օգտագործել կովկասյան ռազմաբեմը։ Կովկասում Ռուսաստանի տարած հաղթանակները նպաստավոր հող էին նրա պատերազմական գործողությունների համար Բալկաններում։

1853—1856 թվականների արևելյան պատերազմը խափանեց Ռուսաստանի հաջողությունների սերիան։ Արտաքին քաղաքականության մեջ այն հասցրեց նրա ազդեցության թուլացմանը։ Անգլիան ու Ֆրանսիան պաշտպանեցին Թուրքիային և Փարիզյան դաշնագրով սահմանեցին նրա տերիտորիալ ու քաղաքական անձեռնմխելիությունը կամ «Status quo»-ն, որը պատմության մեջ խոշոր հանցագործություն էր։

Ռուսաստանը չէր կարող հաշտվել Փարիզի դաշնագրով ունեցած իր կորուստների հետ։ Պատրաստվելով նոր պատերազմի, նա խոշոր ջանքեր գործադրեց հպատակ ժողովուրդների, և հատկապես հայերի համակրանքն ու աջակցությունը շահելու համար։ Հասկանալով Ռուսաստանի դիտավորությունները, դաշնակից տերությունները, և գլխավորապես Անգլիան, Ֆրանսիան ու Թուրքիան աշխատում էին իրենց կողմը պահել հպատակ ժողովուրդների համակրությունն ու աջակցությունը։

«Հայկական հարցը Արևելյան հարցի մեջ» խորագիրը կրող իր ուշագրավ աշխատության մեջ արևմտահայ պատմաբան Խորեն Գաբիկյանը գրում է. «Ռուսիան կը ջանա էջմիածնի ազդեցությունը զորացնել օսմանյան հայության վրա, օսմանյան կառավարությունը կուզե ձերբազատել օտար ազդեցութենե»[1]։

Անգլիան ու Ֆրանսիան, գրում է նույն հեղինակը, բոլոր ջանքերը գործադրում էին արևմտահայերին էջմիածնի ազդեցությունից հեռու պահելու համար։ Նրանք հասկանում էին, որ հայերի համակրությունը Ռուսաստանի կողմն է և պատերազմի դեպքում կաջակցեն նրան։ Ռուսաստանն էլ իր կողմից գործադրում էր բոլոր հնարավոր միջոցները Անգլիայի ու Ֆրանսիայի դիտավորությունները ձախողելու համար։ «Իկնատևի համար,—գրում է Խ. Գաբիկյանը,—հայերու էջմիածնեն բաժանումը պիտի վտանգեր Ռուսիո շահերը

1 Խ. Գաբիկյան, Հայկական հարցը Արևելյան հարցի մեջ (1860—1880), Պեյրութ, 1962, էջ 65։

Արևելյան հարցի տեսակետեն։ Ռուսիա կը պատրաստվեր պատռելու Փարիզի դաշնագիրը, հարմարագույն առիթը պիտի ներկայանար մոտ ատենեն, և հարցը կը բացվեր Օսմ. կայսրության ծայրերեն՝ Պոսնիայեն և արևելյան նահանգներեն»[2]։

Թուրքական բռնապետության դեմ ուղղված հայերի դժգոհություններն ու բողոքները Անգլիան ու Ֆրանսիան համարում էին Ռուսաստանի դրդումների արդյունք։

Մեղադրելով Անգլիային՝ Թուրքիային հովանավորելու և հայերի նկատմամբ բացասական դիրք գրավելու համար, Խ. Գաբիկյանը գրում է. «Խրիմի պատերազմին ատեն անգլիական դեսպան սըր Սթրետ Ֆորտ կընդուներ, որ հայերը ռուս քաղաքականության գործիք են։ Էրզրումի անգլիական հյուպատոսը 1869-ին նույնը կը գրեր իր կառավարության. «Կապույտ գիրք»-երը կը վկայեն, որ Խրիմի պատերազմեն ի վեր Անգլիան կաշխատի իր կողմը շահիլ հայերը»[3]։

Հայերին իրենց ազդեցության տակ առնելու և դեպի Ռուսաստանը եղած նրանց հակումները վերացնելու նպատակով, Անգլիան ու Ֆրանսիան կամենում էին դավանափոխել հայերին։ Կ. Պոլսի ֆրանսիական դեսպանատան պատասխանատու աշխատակիցներից՝ Բուվրնելը 1855 թվականին իր կառավարությանը հաղորդում էր. «Բոլոր բայաները պատերազմին սկիզբը Ռուսիո ի նպաստ արտահայտվեցան։ Մեր հաղթանակները զանոնք ընկճած են», թե «խոստովանելու է, որ քրիստոնյաները, զորս Անգլիա և Ֆրանսիա կուզեն ազատագրել, կաթոլիկության մատչելի չեն, իրենց դավանանքին համար նվազագույն մտահոգություն մը զիրենք պիտի դարձնե դեպի Ռուսիա»[4]։

Անգլիայի ու Ֆրանսիայի մտադրությունները խափանվեցին։ Թուրքիայի կողմից ճնշված բոլոր քրիստոնյա ժողովուրդները մնացին հավատարիմ իրենց դավանանքին և իրենց ազատության հույսերը կապեցին Ռուսաստանի հետ։

Ուշագրավ է 1857 թ. մարտի 29-ին ֆելդմարշալ Բարյատինսկու նամակը վարչապետ Գորչակովին՝ հայերին Ռուսաստանի կողմը գրավելու կապակցությամբ։ Բարյատինսկին իր կառավարությունից պահանջում էր հայերի, նրանց դավանանքի ու եկեղեցու նկատ-

2 Խ. Գաբիկյան, նշված աշխատությունը, էջ 66։
3 Նույն տեղում, էջ 88։
4 Նույն տեղում, էջ 78։

մամբ վարել այնպիսի քաղաքականություն, որն ապահովի նրանց աջակցությունն ու համակրանքը Ռուսաստանի կողմը, որպես գալիք պատերազմում նրա հաջողությունների կարևոր պայմաններից մեկը. «Ինչ վերաբերում է մեզ համար արտակարգ կարևորություն ունեցող թուրքահայերին, մեր ազդեցությունը Արևելքում պահելու իմաստով,—գրում է նա,—ապա ես լիովին բաժանում եմ իշխան Կիսելյովի տեսակետը։ Ինչպես նա, ես ևս կարծում եմ, որ մենք պետք է հակադրվենք արևմտյան տերությունների ռազմական և հոգևոր գործողություններին։ Կրոնը, ազգությունը և մեր կողմից հովանավորվող հայերը մեզ հնարավորություն կտան օգտվելու նրանց համակրությունից»[5]։

Կաթողիկոսական ընտրություններին լուրջ քաղաքական նշանակություն տալով, Բարյատինսկին պահանջում էր իր կառավարության բարյացակամ վերաբերմունքն այդ գործին, որպես արևմտահայությանը Ռուսաստանի կողմը գրավելու լավագույն երաշխիք։ «Ներկա ժամանակ մեզ համար հատուկ կարևորություն է ներկայացնում այն,—գրում է նա,—որ էջմիածնի պատրիարքի տեղը ազատ է։ Հենց նրա համար, որ էջմիածնի եկեղեցին գտնվում է Ռուսաստանում և պատրիարքը ճանաչված է բոլոր հայերի կողմից որպես ամբողջ ազգի հոգևոր առաջնորդ, մենք մեր ձեռքում ունենք մեծ միջոց բոլոր հայերին մեր կողմը գրավելու համար»[6]։

Թուրքիան կործանումից փրկելու և նրա վաղեմի ռազմական փառքը վերականգնելու դիտավորություններով, թուրքական կառավարողներն էլ մշակում էին իրենց նոր քաղաքականությունը։

1869 թվականին Աբդուլ Ազիզին ուղարկած իր կտակ-նամակում, Ֆուադ փաշան Արևելյան հարցը հրապարակից հանելու, Թուրքիային սպառնացող վտանգը կանխելու նպատակով, պահանջում էր նախ և առաջ միաձուլել հպատակ ժողովուրդներին և ամեն կերպ խափանել նրանց ազատագրական տենչանքները։ «Մեր քրիստոնյաները,—գրում է նա,—չափից դուրս շտապում են իրենց նախկին տերերի տեղը բռնել։ Մանավանդ հայերն այդ կողմից չափազանց ձգտում են ցույց տալիս։ Արդար կլիներ չափավորել նրանց եռանդը, բանալով պետական ծառայության ասպարեզ միայն նրանց համար, որոնք անկեղծ կերպով ընդունում են մեր կայսրության սկզբունքները»[7]։ Ուստի Ֆուադ փաշան պահանջում էր արագացնել

5 «Русский архив» 1889, книга 3/9), էջ 332:
6 Նույն տեղում։
7 «Մշակ», № 143, 1896, «Ֆուադ փաշայի կտակը»։

միաձուլումը և դրա մեջն էր տեսնում իր կայսրության վաղեմի հզորության վերականգնման պայմաններից մեկը։ «Մեր ներքին գործերի մեջ բոլոր ջանքերը պետք է ուղղված լինեն դեպի մի նպատակ,—գրում է նա,—միաձուլել մեր ազգը։ Առանց այդ միաձուլման մեր կայսրության ապագա գոյությունն ինձ, հիրավի, անհնարին է թվում... Արևելյան կայսրությունը կարող է գոյություն ունենալ միայն Արևելքի բոլոր ազգերի միացմամբ»[8]։

Անցնելով արտաքին քաղաքականության հարցերին, Ֆուադ փաշան Անգլիային էր համարում Թուրքիայի ամենահավատարիմ դաշնակիցը նրա երազանքների իրագործման համար մղվող պայքարում։ «Մեր օտար դաշնակիցների շարքում,—գրում է նա,—դուք միշտ առաջին տեղում կգտնեք Անգլիան... Անգլիան մեզ ահագին ծառայություններ է մատուցել և անկարելի է, որ մենք կառավարվենք առանց այդ ծառայությունների, որ նա դեռ կարող է մատուցել մեզ... Ես նախամեծար կհամարեի մի քանի նահանգներ կորցնել, քան տեսնել Բ. Դուռը լքված Անգլիայի կողմից»[9]։

Տեսնելով Արևելյան հարցի հետ կապված Թուրքիային սպառնացող նորանոր վտանգների անխուսափելիությունը, Ֆուադ փաշան միաժամանակ առաջարկում էր զարկ տալ տնտեսությանը, ռազմական տեխնիկային ու գիտությանը։ «Իմ միտքը ավելի պարզելու համար,—գրում է նա,—ես կասեմ, որ ձեր կայսրությունը մահվան երկյուղի տակ պարտավոր է այնքան փող ունենալ, որքան ունի Անգլիան, այնքան լուսավորություն, որքան ունի Ֆրանսիան և այնքան զինվորներ, որքան ունի Ռուսաստանը»[10]։

Անցնելով Թուրքիայի ու Ռուսաստանի փոխհարաբերություններին, Ֆուադ փաշան Ռուսաստանին համարում էր Օսմանյան կայսրության վաղեմի թշնամի և պահանջում էր Ավստրիայի ու Գերմանիայի հետ դաշինք կնքել և միասնական ուժերով ձախողել նրա արևելյան քաղաքականությունը։ «Ես հասնում եմ վերջապես Ռուսաստանին,—գրում է նա,—այն է՝ մեր կայսրության ակամա թշնամուն։ Այդ պետության ընդարձակումը Արևելքում, Մոսկվայի ճակատագրական օրենքն է։ Եթե ես ինքս ռուս մինիստր լինեի, ես տակն ու վրա կանեի ամբողջ աշխարհը՝ Կ. Պոլիսը գրավելու համար»[11]։

8 «Մշակ» № 143, 1896, «Ֆուադ փաշայի կտակը»։
9 Նույն տեղում։
10 «Մշակ» № 142, 1896։
11 Նույն տեղում։

Այսպիսով, տեսնելով Արևելյան հարցի շուրջը զարգացող իրադարձությունների բարդությունը և Թուրքիային սպառնացող վտանգը, Ֆուադ փաշան իր կառավարությանը Ռուսաստանի դեմ պատերազմ սկսելու կոչ էր անում։ 1876 թվականին գահ բարձրանալով Աբդուլ Համիդը, կարծես թե կատարեց Ֆուադ փաշայի կտակը։

1875 թվականի ամռանը կապալառու հարկահանները կամայականորեն տանջում էին աշխատավորներին՝ առիթ տալով Բոսնիայում և Հերցեգովինայում ժողովրդական ապստամբությունների։ Այդ ապստամբությունները լուծելու նպատակով զենքի տակ պահված հրոսակների վրա եղած ամբողջ ծախսերը թուրքական կառավարությունը գանձում էր սովի մատնված աշխատավորներից։

Սլավոն քրիստոնյաների ապստամբությունները ճնշելու դիտավորությամբ թուրքական բռնապետները դիմեցին պրովոկացիոն մեթոդների, կազմակերպեցին քրիստոնյաների ջարդեր, գրգռեցին իսլամական մոլեռանդությամբ մոլորված թուրքական ամբոխի կրքերը, տեղի տվեցին արյունահեղությունների։

1876 թ. ապրիլին թուրքական բռնապետության դեմ ապստամբություն բարձրացրին բուլղարները, որոնք բացարձակապես իրավազուրկ էին։ Բուլղար ժողովրդին ապստամբության ոտքի հանելու գործում մեծ դեր խաղաց Բուլղարիայի Հեղափոխական կոմիտեն։ Այդ կոմիտեի երկու անդամների՝ Խրիստո Բոտեևի և Ստամբոլովի կողմից կազմակերպված և 1875 թ. սեպտեմբերի 8-ին հրապարակված թռուցիկներից մեկում ասված է.

«Հարազատ բուլղարական ժողովուրդ.

Քեզ շրջապատող ժողովուրդները բոլոր կողմերով ապրում են երջանիկ։ Միայն դու և քո հարևանները, դուք անբախտ եք՝ ապրելով թուրքական կառավարության տիրապետության տակ և, զրկված մարդկային անվիճելի իրավունքներից, ծանր հառաչում եք բարբարոսների լծի տակ»[12]։

Աբդուլ Համիդը ձեռնարկեց բոլոր հնարավոր միջոցները սլավոն ժողովուրդների ազատագրական շարժումները ճնշելու, Ռուսաստանի հաջողությունները նախօրոք խափանելու համար։ Բալկանյան սլավոնները, սկսելով ազգային-ազատագրական շարժումները, հաստատ համոզված էին, որ Ռուսաստանը օգնության ձեռք

[12] *Захарии Стоянов*, Записки о болгарских восстаниях, Москва, 1953, էջ 133։

կմեկնի իրենց։ Մարքսի խոսքերով ասած՝ սլավոն ժողովուրդները, «Պետերբուրգից են սպասում իրենց մեսիան, որ կփրկի նրանց ամենայն չարիքից»։

1875—1876 թվականների Արևելյան կրիզիսը Ռուսաստանի համար նպաստավոր պայման հանդիսացավ ակտիվացնելու իր արտաքին քաղաքականությունը և Փարիզյան դաշնագրի մի քանի հոդվածներ չեղյալ համարելու համար, որոնք սահմանափակում էին նրա իրավունքները Սև ծովի վրա[13]։

Ստեղծված իրադրությունները մի կողմից, Թուրքիայի դեմ Ռուսաստանի կողմից նախապատրաստվող պատերազմը՝ մյուս կողմից, լուրջ փոփոխություններ առաջ բերին կապիտալիստական խոշոր տերությունների հարաբերություններում։

Անգլիան, որը Թուրքիային վեր էր ածել կիսագաղութի, չէր կարող հաշտվել նրա կորստի հետ, 1872 թվականին միայն բրիտանական ներմուծումը Թուրքիայում հասավ 7,4 միլիոն ֆունտ ստեռլինգի։ Արտասահմանյան կապիտալը իր ձեռքն էր կենտրոնացրել երկաթուղիների կառուցման ու շահագործման կոնցեսիան։ Թուրքիայի արտաքին պարտքը աճեց 5,3 միլիարդ ֆրանկով։ Նա ի վիճակի չէր վճարել նույնիսկ նրա տոկոսները, որի պատճառով կանգնել էր կատարյալ սնանկության առջև[14]։

Հետևապես, Անգլիան չէր կարող հաշտվել Ռուսաստանի ոտընձգությունների հետ և պահանջում էր պահպանել «Status quo»-ն։

Արևելյան ճգնաժամի հանդեպ սառնասիրտ չէր նաև Ավստրո-Հունգարիան։ Նա չէր կամենում իր սահմաններում տեսնել սլավոնական ինքնուրույն պետություններ, չէր ուզում տեսնել Ռուսաստանի ազդեցության ուժեղացումը Բալկաններում և, հետևապես, նա նույնպես դեմ էր թուրքահպատակ ժողովուրդների ազատագրական հակումներին։ Նրան հարկավոր էր Բալկաններում ուժեղացնել իր ազդեցությունը։ Ռուսաստանը հասկանում էր, որ իր զավթողական ծրագրի իրագործման դեմ է կանգնած ոչ միայն

[13] 1870 թ. հոկտեմբերին ռուսական կառավարությունը եվրոպական տերություններին իրազեկ դարձրեց Փարիզյան դաշնագրի մի քանի հոդվածներից իր հրաժարականի մասին։ Չնայած Անգլիայի դիմադրությանը, 1871 թ. հունվար-մարտ ամիսներում հրավիրված դեսպանների Լոնդոնի կոնֆերանսը համաձայնվեց այդ դաշնագրի մի շարք հոդվածները փոխելու Ռուսաստանի պահանջի համեմատ (տե՛ս О. Бисмарк. Мысли и воспоминания, том второй, Москва, 1940, էջ 113)։

[14] *Н. И. Беляев.* Русско-турецкая война 1877—1878 гг., Москва, 1956, էջ 11։

Անգլիան, այլև Ավստրո-Հունգարիան։ Այդ մասին իր հիշողություններում Բիսմարկը գրում է. «...Սուլթանը կարող է մտածել, որ եվրոպական տերությունների հակամարտությունները երաշխիք են իրեն՝ Ռուսաստանի դեմ։ Անգլիայի և Ավստրիայի համար Թուրքիայի պահպանումը հանդիսանում է տրադիցիոն քաղաքականություն»[15]։

Արևելյան կրիզիսի հարցում անտարբեր չէր կարող մնալ նաև Գերմանիան։ 1876 թ. գարնանը Բիսմարկը իր հանգստավայրում՝ Վարցինում, Լոնդոնի իր կառավարության ռազմական լիազոր-ներկայացուցիչ գեներալ Վերդերից ստանում է հեռագիր, որի մեջ նա ռուսական կայսր Ալեքսանդր II-ի հանձնարարությամբ խնդրում է հաղորդել, թե Գերմանիան արդյոք կմնա՞ չեզոք, եթե Ռուսաստանը պատերազմ սկսի Ավստրիայի դեմ։ Բիսմարկը գտնում էր, որ Վերդերը չուներ բարձրաստիճան լիազորություն և, հետևապես, անհնար էր պատասխանել նման հարցին։ Գորչակովը այդ մասին իրազեկ պահեց ռուսական կայսրին։ Ընդհատելով իր բանակցությունները Գերմանիայի հետ, Ռուսաստանը գաղտնի բանակցություններ սկսեց Ավստրիայի հետ։

1876 թ. հուլիսի 8-ին Ռեյխշտադտ (չեխական-Զակոպի) քաղաքում տեղի է ունենում Ալեքսանդր II-ի և Ավստրիայի կայսրի տեսակցությունը Բալկանյան հարցի քննարկման կապակցությամբ։ Ռուսաստանը և Ավստրիան համաձայնության եկան, որ եթե թուրքական կայսրությունը հաղթանակ տանի 1875 թ. ամռանը Թուրքիայի դեմ ապստամբված Բալկանյան քրիստոնյաների նկատմամբ, այն դեպքում երկու տերությունները պետք է դուրս գան Թուրքիայի դեմ։ Թուրքական կայսրության անկման դեպքում Ավստրիան պետք է ստանար Բոսնիան և Հերցեգովինան, իսկ Ռուսաստանը պետք է ստանար 1856 թվականի դաշնագրով կորցրած Բեսարաբիայի մի մասը, Բուլղարիան և Ռումելիան պետք է ստանային ինքնուրույնություն։ Բալկաններում սլավոնական մեծ պետություն ստեղծելու հնարավորությունը մեջտեղից հանվեց։ Կոստանդնուպոլիսը դառնալու էր ազատ քաղաք։ Այս պայմանները գրանցվեցին 1877 թ. հունվարի 15-ի Բուդապեշտի լրացուցիչ պայմանագրում։ Նշված պայմանագրի բոլոր կետերից գլխավորը երկրորդ կետն էր, որով «Ավստրիան հանձն էր առնում մնալ չեզոք՝ Թուրքիայի դեմ Ռուսաստանի վարած պատերազմի ընթացքում»[16],

15 *Օ. Бисмарк*, Мысли и воспоминания, том второй, էջ 238։
16 Նույն տեղում, էջ 193։

Գերմանիան մի կողմից Ռուսաստանին խրախուսում էր պատերազմի Թուրքիայի դեմ, իսկ մյուս կողմից նախապատրաստում էր Ավստրո-Հունգարիայի հետ միություն ստեղծելու ծրագիրը։ «Եթե Ռուսաստանը ստիպի մեզ ընտրություն կատարել իրեն և Ավստրիայի միջև, ապա ես կարծում եմ, որ Ավստրիան մեզ ցույց կտա պահպանողական և խաղաղ ուղղություն, իսկ Ռուսաստանին՝ անբարյացակամություն[17],—գրում է Բիսմարկը։

Գերմանիան իր երկդիմի քաղաքականությամբ աշխատում էր ազատ պահել իր ձեռքերը Ֆրանսիայի դեմ։ Ֆրանսիայի և Գերմանիայի հակամարտությունների մասին Բիսմարկը գրում է. «Ֆրանսիան պետք է միշտ մեր դեմ լինի, որովհետև նրա շահերը Հռենոսում ավելի կարևոր են, քան Արևելքում և Բոսֆորում»[18]։

Սպառնալով Ռուսաստանին՝ Ֆրանսիային հովանավորելու համար, Բիսմարկը գրում է. «Լիովին հասկանալի է, որ ռուսական քաղաքականության տեսակետից Եվրոպայում Ֆրանսիայի տեսակարար կշիռը չպետք է որոշ սահմաններից իջնի։ Ինձ թվում է, որ այդ սահմանները նշվեցին 1870—1871 թթ. Ֆրանկֆուրտի հաշտությամբ։ Պետերբուրգում, կարող է պատահել, որ դեռ ոչ լիակատար հստակությամբ են հաշիվ տալիս իրենց, ինչպես հինգ տարի անց։ Ֆրանսիայի դեմ մեր ունեցած պատերազմի ժամանակ Պետերբուրգյան կաբինետը, կարծում եմ, հազիվ թե կարողանար նախատեսել, որ պատերազմից հետո նա իրեն հարևան կունենա շատ ուժեղ ու միավորված Գերմանիա»[19]։

Այսպիսին էին միջազգային հարաբերությունները Արևելյան հարցի շուրջը։ Պատերազմը դարձել էր անխուսափելի։ Ռուսաստանը վճռեց Արևելյան կրիզիսը լուծել պատերազմի միջոցով, օգնության ձեռք մեկնել սլավոն ժողովուրդներին և միաժամանակ օգտագործել նրանց ազատագրական շարժումները իր դիտավորությունները ի կատար ածելու համար։ Ռուսական ցարիզմը ելնում էր նաև այն մտադրությունից, թե հաղթական պատերազմը Թուրքիայի դեմ վերջ կտա իր երկրի ներսում աճող հեղափոխական գործողություններին։

17 *Օ. Бисмарк*, Мысли и воспоминания, том второй, էջ 218։
18 Նույն տեղում, էջ 240։
19 Նույն տեղում, էջ 210։

2

Ռուս-Թուրքական պատերազմը սկսվեց 1877 թ. ապրիլին։ Նախահարձակ կողմը Ռուսաստանն էր։ Նա Թուրքիայի դեմ իր պատերազմական գործողությունները սկսեց բալկանյան և կովկասյան ռազմաճակատներում։

Թուրքիան անպատրաստ չդիմավորեց Ռուսաստանի կողմից սկսված պատերազմին։ Նրա թիկունքում կանգնած էին Անգլիան, Ամերիկան և Գերմանիան, որոնք օգնում էին նրա բանակների ամրացմանն ու սպառազինմանը։ Պատերազմի ժամանակ նրա բանակներում հաշվվում էր 700.000 մարդ։

Թուրքական բանակի հետևակային զորքերի 70 տոկոսը զինված էր ամերիկյան «Պիպոդին-Մարտինի» սիստեմի հրացաններով, 30 տոկոսը՝ անգլիական «Սնայպեր» սիստեմի հրացաններով, իսկ ամբողջ հեծելազորը զինված էր ամերիկյան «Վենչեստեր» սիստեմի հրացաններով։

Պատերազմի հենց առաջին ամիսներին ամերիկյան շոգենավը հասնում է Կ. Պոլիս «բերելով 26.000 հրացան և 40 միլիոն փամփուշտ»[20]։

Դանուբի ռազմաճակատում Թուրքիան նախատեսել էր ունենալ 158 հազար զինվոր, բայց այդ թիվը նա հասցրեց 227 հազարից մինչև 268 հազարի։

Ռուսաստանը, որպես հարձակվող կողմ, պետք է դուրս բերեր կրկնապատիկը՝ 450.000-ից մինչև 570.000 զինվոր[21]։ 1877 թ. նոյեմբերի կեսերին Դանուբի ռազմաճակատում Ռուսաստանը ուներ կենտրոնացված 373.000 զինվոր, իսկ Թուրքիան՝ 227.000 զինվոր[22]։

Թուրքիայի դեմ Ռուսաստանի պատերազմական գործողությունների համար չափազանց կարևոր նշանակություն ուներ Կովկասյան ռազմաճակատը։ Այստեղ նա կենտրոնացրել էր 120.513 զինվոր՝ 276 թնդանոթով, իսկ Թուրքական կառավարությունը կենտրոնացրել էր 90.000 զինվոր[23]։ Փոքր Ասիայի և Աֆրիկայի ռազմաճակատներում նա կենտրոնացրել էր 140—157 հազար զինվոր։ Անատոլիայի բանակի գլխավոր հրամանատարն էր Մուխտար փաշան։

---

20 «Մասիս», 1877, 22 մայիսի։

21 *Н. И. Беляев*, Русско-труецкая война 1877—1878 гг., էջ 73—74։

22 Նույն տեղում, էջ 269։

23 ЦГИА в Ленинграде, фонд Лорис Меликова № 866, дело № 7, թ. 7։

Պատերազմի ռուսական երկու ճակատներում կենտրոնացված էին ավելի քան 450 հազար զինվոր՝ 1134 թնդանոթով։ Գործող բանակներն անընդհատ համալրվում էին։ Բալկաններում ռուսական զորքերի հետ միասին կռվում էին սլավոն ժողովուրդների զինված աշխարհազորայինները, իսկ Կովկասյան ճակատում՝ հայերը, վրացիները, ադրբեջանցիները։ Ռուսական զորքերի ընդհանուր հրամանատարն էր Ալեքսանդր II-ի եղբայր Միխայիլ Նիկոլաևիչը։

1877 թվականի վերջում Բալկաններում գործող ռուսական բանակը լուրջ հաղթանակներ տարավ։ Դեկտեմբերի 10-ին (հ. տ.) ավարտվեցին Շիպկայի և Պլևնայի համար մղվող համառ մարտերը։ Պլևնայի թուրքական կայազորը անձնատուր եղավ։ Ռուսները գերի վերցրին 2128 հրամանատար, 6 փաշա և 40.000 զինվոր։ Պլևնայի անկումը վճռեց պատերազմի բախտը այդ ռազմաճակատում՝ ի վնաս Թուրքիայի։

Ռազմական խոշոր գործողություններ ծավալվեցին Կովկասյան ռազմաճակատում։

Կովկասյան ռազմաճակատի ռուսական զորքերը հարձակման անցան 1877 թ. գարնանը և թշնամուն լուրջ հարվածներ հասցրին։ Առաջին 12 օրվա մարտական գործողությունների հետևանքով ռուսական զորքերը գրավեցին Կաղզվանը։ Տեր-Ղուկասովի զորքերը համառ մարտերով գրավեցին Բայազետը, որը Էրզրումի գրավման համար կարևոր ստրատեգիական նշանակություն ուներ։ Ապրիլի վերջում Ալի փաշայի զորքերին հսկայական կորուստներ պատճառելով, նրանք գրավեցին Դիադինը (Բայազետը), իսկ մայիսի 26-ին՝ Ղարաքիլիսան, Պենյակն ու Օլթին։

1877 թ. մայիսի 5-ին Դևիլի զորքերը գեներալ Գեյմանի օգնությամբ գրավեցին Արդահանը։ Նրանք գլխովին ջախջախեցին թուրքական զորքերին և հեշտացրին Կարսի գրավումը։

Արդահանի գրավման նշանակության մասին Կովկասյան գործող զորաբանակի հրամանատարի 1877 թ. մայիսի 14-ի հրամանում ասված է, որ Արդահանյան զորաբանակը ինքը գրոհեց թշնամու վրա և նրան հասցրեց այնպիսի պարտություն, որ թույլ չտվեց հակառակորդին նահանջելու իր ամրացրած ճամբարը։ Թշնամին լրիվ կերպով պարտված է և, հետևապես, «վերևում նշված տվյալները լրիվ իրավունք էին տալիս պարգևատրելու գնդապետ Կոմարովին Ս. Գիորգիևսկի շքանշանով»[24]։

---

24 ЦГИА в Ленинграде, фонд Лорис Меликова, № 866, дело № 68, թ. 8։

Տեր-Ղուկասովի զորքերի տեղաշարժը դեպի Կարս, ունեցավ իր բացասական հետևանքը։ Թուրքական զինվորական միավորումները՝ 20.000 հետևակով, 5.000 հեծելազորով, 9 դաշտային և 3 լեռնային հրանոթներով հարձակվեցին Բայազետի վրա։ Բայազետը պաշարված էր և գտնվում էր կրակի օղակում։

Կովկասյան գործող զորաբանակի կոմիսարը՝ գեներալ Պավլովը Մուխտար փաշայի դիտավորությունների մասին հաղորդում էր, որ «Տեր-Ղուկասովը շրջապատված է 30 հազարով, որոնց նշանակալից մասը բերված է Էրզրումից...»[25]։ Այդ նույն հաղորդագրության մեջ միաժամանակ ասված է, որ Մուխտար փաշայի հրամանատարության տակ են գործում նաև քրդական հեծյալ գնդերը։ Մուխտար փաշան Բայազետի գրավման հետ միաժամանակ կամենում էր շարժվել դեպի Արարատյան դաշտավայրը, դեպի Արաքսը։ «...Մուխտար փաշան իր գլխավոր ուժերով շուռ եկավ գեներալ Տեր-Ղուկասովի դեմ, որի դրությունը պետք է համարել ծանր, եթե ոչ կրիտիկական...»[26]։

Գտնվելով ծանր վիճակում, փոխգնդապետ Պասկևիչը հեռագրով շտապ օգնություն է խնդրում։ Իգդիրում գտնվող գեներալ Քելբալի խանը Կովկասյան բանակի հրամանատարությանը զեկուցագիր է ներկայացնում բերդում պաշարված կայազորի մարտիկների վիճակի մասին։ «Նոր ստացա հետևյալ գրությունը Բայազետ քաղաքի պարետից գաղտնի կերպով դուրս պրծած մարդու միջոցով, որը ուղարկված է հունիսի 8-ին, ժամը 9-ին... Մեր բոլոր զորքերը ամսույս 6-ին, առավոտյան ժամը 10-ին շրջապատված են Բայազետի բերդում։ Թուրքերը ռմբակոծում են, դրությունը կրիտիկական է, գլխավորն այն է, որ չկա ոչ մի կաթիլ ջուր։ Մեր կորուստը մեծ է. Պասկևիչը վիրավոր է, Կովալևսկին սպանված. թշնամին վերցրել է հեծյալների բոլոր ձիերը. մեզ շուտափույթ օգնություն է հարկավոր, այլապես բոլորս էլ կորած ենք. փամփուշտը շատ քիչ է, հակառակորդի գրոհները առայժմ ետ են մղված»[27]։

Լորիս Մելիքովը 1877 թ. մայիսի 30-ին Տեր-Ղուկասովին հեռագրում է հետևյալը. «Եթե որևէ անսպասելի դեպք չխանգարի, հուլիսի 1-ի լուսաբացին սկսել Կարսի ռմբակոծությունը և շարունակել մի քանի օր։ Առաջարկում եմ Ձեզ անհապաղ ու եռանդով

25 ЦГВИА, фонд № 485, дело № 1250, թ. 4։
26 ЦГВИА, фонд № 485, дело № 1251, թ. 4։
27 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. № 101, գ. 70, թ. 16։

շարունակել հարձակումը Սողանլուղում կենտրոնացված թշնամու վրա և ամեն կերպ խափանել Կարսը փրկելու նրա փորձերը»[28]։

Դևիլի, Գեյմանի և Տեր-Ղուկասովի զորասյուները 1877 թ. օգոստոսից մինչև նոյեմբերի 6-ը իրենց ուժեղ գրոհներով՝ 26.372 հետևակով, 6.351 հեծյալներով և 122 թնդանոթներով՝ գրավեցին Կարսը։ Նրանք գերի վերցրին 17.000 զինվոր, 5 փաշա և 800 սպա, գրավեցին 303 թնդանոթ և ռազմական ու պարենային շատ պահեստներ։ Թշնամու բանակում դասալքումն ու փախուստը մասսայական բնույթ էին կրում։

Թուրքական սուլթանը Բ. Դոան կարգադրում է ձեռք առնել բոլոր միջոցները՝ դրությունը արագորեն վերականգնելու համար։ Մուխտար փաշային արված կարգադրության մեջ ասված է. «Պատերազմներում լինում են և հաղթանակներ, և պարտություններ։ Անկասկած, երբեմն լինում են և փախուստի դեպքեր։ Եթե հնարավոր չլինի վերականգնել դրությունը, այն ժամանակ պարտության հետևանքները կլինեն շատ ծանր և անուղղելի»[29]։

Սուլթանի հրամանով ձեռք առնված բոլոր հնարավոր միջոցները՝ կորուստը ետ վերադարձնելու նպատակով, ապարդյուն եղան։ Ռուսական զորքերը ամրապնդում էին ձեռք բերված հաջողություններն ու խնամքով նախապատրաստվում էրզրումի վրա հարձակվելու համար։ Էրզրումի դաշտավայրը հանդիսանում էր Թուրքիայի բնական «պլացդարմ-բերդը» Հայաստանում[30]։

Էրզրումը համարվում էր Անատոլիայի վարչական կենտրոնը, նրա մայրաքաղաքը։ Թուրքական սուլթանը Էրզրումի բացառիկ նշանակությունից ելնելով, նրան համարում էր «Թուրքիայի հույսն ու բանալին»[31]։

Դեռևս Կարսի համար մղվող համառ պայքարի օրերին, տեսնելով Էրզրումին սպառնացող վտանգը, սուլթան Համիդը հեռագրով Մուխտար փաշային նախազգուշացնում էր. «Իմ վեզիր Մուխտար փաշա։ Այն դիրքը, որի վրա դուք այժմ կանգնած եք, հանդիսանում է Ասիայի ամենակարևոր կետը և կազմում է շարամտորեն տրամադրված թշնամու ձգտման նպատակը։ Այդ դիրքը գտնվում է մեծ

28 ЦГИА в Ленинграде, фонд Лорис Меликова № 866, дело № 74, թ. 21։
29 ЦГВИА, фонд № 485, дело № 1260, թ. 98։
30 *Б. Колюбокин*—Русско-турецкая война 1877—1878 гг. на Кавказе и в Малой Азии, часть 1, СП, 1906, էջ 15.
31 Նույն տեղում։

վտանգի մեջ։ Եթե աստված ոչ արասցե այժմ էլ տեղի ունենան փախուստներ... և եթե թշնամին ձեռք է մեկնում Էրզրումի գրավման կողմը, այն ժամանակ ավելորդ է նկարագրել այն վերքերը, որոնք կհասցվեն պետությանը այդ տխուր դեպքերով։ Դրա համար դուք հենց այսօր պետք է ձգտեք ցույց տալ ձեր նվիրվածությունը և երևան բերել այն եռանդը, որին ձեզանից սպասում է մուսուլմանական ժողովուրդը»[32]։

Ռուսների կողմից Էրզրումի գրավումը սուլթանը համարում էր Թուրքիայի հույսերի կործանումը։ Դրա համար հատուկ կոչով դիմեց Էրզրումի բնակիչներին, պահանջելով նրանցից կյանքի զոհողություն հանուն հայրենիքի։ Ուստի «...Հրամայում եմ ձեզ համախմբվել մուսուլմանական դրոշի ներքո և մինչև վերջ դիմադրել թշնամուն, որից կախված է մեր հայրենիքի փրկությունը։ Մաղթում եմ ձեզ ամենայն հաջողություններ և աստվածային օգնություն»[33]։

1877 թ. դեկտեմբերի 30-ին ռուսական զորքերը ամբողջապես շրջապատեցին Էրզրումը, իսկ Բալկաններում գործող ռուսական զորքերը թուրքական բանակների դեմ լուրջ հաղթանակներ տանելով, շարժվում էին դեպի Կ. Պոլիս։ Թուրքական սուլթանը դիմեց ռուսական կայսրին, խնդրելով զինադադար և պատերազմական գործողությունների դադարեցում բոլոր ռազմաճակատներում։

Ձեռնարկելով թուրքական բանակների համալրման գործը, Մուխտար փաշան հավաստիացնում էր սուլթանին, որ ռուսների դեմ սկսած իր հարձակումները բարենպաստ կդարձնեն հաշտության պայմանները Թուրքիայի համար։ «Եթե Ռուսաստանը պետք է թելադրի հաշտության պայմանները,— գրում է նա,— ապա անհրաժեշտ է, որ Թուրքիան մի նոր անգամ ցույց տա, որ ինքը ընդունակ է դիմադրել և համառել պատերազմում»[34]։

Դրությունը հուսահատական էր։ Թուրքական կառավարությունը հարկադրված եղավ ընդունել Ռուսաստանի առաջարկած պայմանները՝ լիակատար կապիտուլյացիա՝ խուսափելով հետագա աղետներից։

Անգլիան ու Ավստրո-Հունգարիան պաշտպանում էին Թուրքիային ընդդեմ Ռուսաստանի։ 1878 թ. հունվարի 3-ին Անգլիայի

32 ЦГБИА, фонд № 485, дело № 1260, թ. 124—125։
33 ЦГВИА, фонд № 485, дело № 1261, թ. 100։
34 ЦГВИА, фонд № 485, дело № 1260, թ. 98։

մինիստրների խորհուրդը որոշեց նախազգուշացնել Ռուսաստանին, որ «Անգլիան չի ճանաչի Բ. Դռան հետ Ռուսաստանի անջատ հաշտության կնքումը»[35]։

Անգլիայի ու Ավստրո-Հունգարիայի կողմից Ռուսաստանին սպառնացող պատերազմի վտանգը չէր կարող չազդել հաշտության բանակցությունների հաջող ընթացքի վրա։ «...Անգլիացիներն ու Ավստրիան այնպես էին գաղազել Ռուսաստանի դեմ,— գրում է Ս. Սուխոտինը,— որ վերջին րոպեի ամեն կերպ կամենում էին խլել մեզանից մեր հաղթանակի հաջողությունները և մարել նրանց փայլը։ Հավանական է, որ հաշտությունը կնքվի, բայց ոչ այն փառավոր ու խնդալից հաշտությունը, որպիսին մենք ենք սպասում»[36]։

1878 թ. փետրվարի 19-ին (մարտի 3-ին) Սան-Ստեֆանոյում ստորագրվեց հաշտության պայմանագիր։ Այդ պայմանագրով ընդլայնվում էր Բուլղարիայի տերիտորիան։ Գորչակովի պլանով Բուլղարիան պետք է հանդիսանար միասնական պետություն, որն ընդգրկելու էր Բալկանյան թերակղզու մեծ մասը և համաձայն չէր նրա մասնատմանը, որպիսին Անգլիան էր պահանջում։

Հաշտության պայմանագիրը նախատեսում էր Ձերնոգորիայի, Սերբիայի, Ռումինիայի լիակատար իրավահավասարությունը, ռումինական իշխանություններին էր հանձնվում Հյուսիսային Դոբրուջան։ Ռուսաստանին վերադարձվում էին Հարավ-արևելյան Բեսարաբիան, Կարսը, Արդահանը, Բայազետը, Բաթումը, իսկ Սերբիային միացվում էր փոքր տերիտորիա։

Հաշտության պայմանագիրը Թուրքիային պարտավորեցնում էր վճարել ռազմական տուգանք 1.100 միլիոն ռուբլի։ Սակայն այդ գումարը նա վճարել չէր կարող։ Ուստի դրա դիմաց նա պետք է աներ տերիտորիալ զիջումներ. այն է՝ «Ասիայում՝ Բաթումը, Կարսը, Արդահանը, Ալաշկերտը, Բայազետը, Եվրոպայում՝ Տուլչա-Սանջակը»[37]։ Այդ բոլորի հետ միասին Թուրքիան պետք է վճարեր 300 միլիոն ռուբլի։

Սակայն «Ստորագրված Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը կոչվում է «մոտավոր»— գրում է Միլյուտինը,— պահանջվում է նորից Եվրոպայի սանկցիան. կհաստատի՞ նա անխոս ստորագրված բոլոր պայմանները, դեռևս հայտնի չէ»[38]։

35 Дневник *Д. А. Милютина*, 1878—1880, том 3, էջ 10։
36 Русский архив, 1894, книга первая, էջ 67—68:
37 *Записка* графа *Н. Н. Игнатева*, О Бан-Стефано, 1915, էջ 236։
38 Дневник *Д. А. Милютина*, 1878—1880, էջ 24։

Ռուսաստանի կողմից Թուրքիայից պահանջված տերիտորիալ զիջումները զգալիորեն արդարացնում էին հայերի ու վրացիների հույսերը, բավարարում էին նրանց պահանջները։

3

Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերի տարած հաղթանակների գործում իրենց արժանի տեղն են գրավում Անդրկովկասի ժողովուրդները և, հատկապես, հայ ժողովուրդը։ Այդ ժողովուրդները շատ բարյացակամորեն դիմավորեցին Ռուսաստանի կողմից Թուրքիայի դեմ ուղղված պատերազմին։ Նրանց զավակները մտան տեղական միլիցիական ջոկատներում, աշխարհազորներում և ռուսական զորքերի հետ միասին արիաբար մարտեր էին մղում ընդհանուր թշնամու դեմ, որի ընթացքում է՛լ ավելի էր ամրապնդվում ռուս և անդրկովկասյան ժողովուրդների դարավոր բարեկամությունը։

Երևանի նահանգի հեծյալ զորամասը գլխավորում են Նախիջևանի գեներալ-մայոր Քելբալի խանը։ Նրա հրամանատարության տակ զինվորական բրիգադներ էին ղեկավարում «Մկրտիչ Տեր-Ստեփանյանը և Իոսիֆ Նիկոլաձեն»[39]։

Կովկասի ջոկատները հերոսաբար էին կռվում թուրքական զորքերի դեմ։ Ալեքսանդրապոլի հեծյալ ռեդուլյար գնդի շատ մարտիկներ արժանացան պարգևատրման։

Պոլսահայ պատմաբան Ա. Աճեմյանը «Պատմություն Արևելյան պատերազմի» խորագրով իր աշխատության մեջ ուշագրավ փաստեր է հրապարակում, որոնք վերաբերում են ռուս-թուրքական պատերազմում հայերի ունեցած մասնակցությանն ու ռուսների հետ նրանց համատեղ պայքարին։

«Ալեքսանդրապոլի բնակիչները,—նշել է Կովկասյան ռազմաճակատի մարտերի մասնակիցներից մեկը,—հազարներով կուգային և զինվորաց կօգնեին սայլերն ու թնդանոթները զառիթափները վեր հանելու համար։ Այնչափ էր հայոց խանդը, որ հարյուրավոր սայլերուն կլծվեին, թնդանոթաց հաստատություններուն կհետևեին, անիվներու հետևեն կմղեին, չվանն կքաշեին, ցնծության աղաղակներով ահագին բեռներ վեր հանելով»[40]։

39 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. № 101, գ. 71, թ. 16։

40 Ա. Աճեմյան, Պատմություն Արևելյան պատերազմի, Կ. Պոլիս, 1879, հատ. 1, էջ 204։

Ա. Աճեմյանը նշում է, որ Կովկասյան ռուսական բանակի շարքերում հաշվում էին 100-ից ավելի սպաներ հետևակային զորամասերում, 40-ից ավելի՝ հրետանային զորամասերում և 30-ից ավելի՝ հեծյալ զորամասերում»[41]։

Հայ և վրացի ժողովուրդների շահագրգռվածությունը Թուրքիայի պարտությամբ և Ռուսաստանի հաղթանակով՝ իր պատճառն ուներ։ Ռուսաստանի հաղթանակի հետևանքով Հայաստանի և Վրաստանի մի շարք քաղաքներ ու շրջաններ ազատվում էին թուրքական տիրապետությունից, անցնում էին Ռուսաստանի տիրապետության ներքո։

Ռուսաստանը չէր կարող հաշտվել Կովկասը կորցնելու մտքի հետ, որը նրա տիրակալած բոլոր երկրների մարգարիտն էր. «Жемчужину среди остольных владений»[42]—գրում է Ա. Ի. Զիսերմանը։

Ռուս-թուրքական պատերազմի ընթացքում, ոչ լրիվ տվյալներով Անդրկովկասի ժողովուրդներից մոբիլիզացվել էր ավելի քան 42.000 մարդ, որը մոտավորապես կազմում էր Կովկասյան ռուսական բանակի մեկ քառորդ մասը[43]։

Անդրկովկասի ժողովուրդները միաժամանակ նյութապես էին օգնում գործող ռուսական-կովկասյան բանակին։ 1877 թվականի ընթացքում Կովկասյան բանակի համար մթերվել է 4.160.094 փութ հաց և կրուպա կամ 564.081 չետվերտ, որից 336.081 չետվերտ տվել են կովկասյան ժողովուրդները (ալյուր և ցորեն՝ 288.222 չետվերտ, կրուպա և գարի 47.859 չետվերտ)։ Կարսի, Արդահանի և Երևանի մարզերից լրացուցիչ կերպով մթերվել է 12.000 չետվերտ[44]։

Այդ նույն թվականին միայն Երևանի նահանգի բնակիչները ռուսական կովկասյան «զորքերին տրամադրեցին 35.858 սայլ։ 1074 ձի և 5.703 ուղտ։ Միաժամանակ զորքին ուղարկում էին ալյուր, հաց, գինի և այլ տեսակի սննդամթերք»[45]։

Ալաշկերտի, Բայազետի և Ագարակի կողմերից քրդական ու թուրքական հրոսակները հարձակման էին անցել, կոտորում էին

41 Ա. Աճեմյան, նշվ. աշխ. Կ. Պոլիս, 1873, հատ. 1, էջ 147։

42 «Русский архив», 1885, книга первая, էջ 102։

43 *Ш. В. Мегреладзе*—Грузия в русско-турецкой войне 1877—1878 гг. Батуми, 1955, էջ 47։

44 *Б. Колюбокин.*—Русско-турецкая война 1877—1878 гг. на Кавказе и в Малой Азии, часть 1, էջ 180։

45 Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական լծի դեմ, Երևան, 1955, էջ 204։

հայերին՝ «ռուսներին Թուրքիայի դեմ պատերազմի կանչելու» մեղադրանքով, բայց այդ օրհասական օրերին հայերը կարողացան հայթայթել ռուսական բանակի համար. «4000 սոմար (12.000 փութ) ցորեն և գարի»[46]—գրում է Հ. Լազարյանցը։

Հայերի ակտիվ ծառայությունների և ցուցաբերած սխրագործությունների մասին գեներալ-լեյտենանտ Մ. Քիշմիշովը գրում է. «...Անցած պատերազմների ընթացքում տաճկահայերը ի հայտ բերեցին այնպիսի սխրագործություններ, որոնք զուգակցվում էին նրանց գույքի և նույնիսկ կյանքի կորստի հետ և այնքան անշահախնդիր ձգտում դեպի մեզ, որ մենք չէինք կարող չհամոզվել... որ հայերը մեր միակ դաշնակիցներն են Փոքր Ասիայում»[47]։

Նույն գեներալը նշում է, որ Կարսի վրա կազմակերպված գիշերային գրոհի ժամանակ «երեք գլխավոր շարասյուներում ուղեկցողները հայերն էին, նրանք շինելներ էին հագել և գրոհի ժամանակ քայլում էին առջևից»[48]։

Հայ ժողովրդի քաջարի զավակ, ապարանցի Սամսոն Տեր-Պողոսյանը (Բաֆֆու «Խենթը») հերոսաբար կատարեց հրամանատարության կողմից իրեն տրված առաջադրանքը։ Օգտվելով գիշերվա խավարից, հմտորեն ու անվախ կերպով Տեր-Պողոսյանը ճեղքեց Բայազետը և նրա միջնաբերդը շրջապատած թուրքական ու քրդական զորքերի շղթան և գեներալ Տեր-Ղուկասովին հայտնեց պաշարված ռուսական զորքի ծանր վիճակը՝ նրանց շտապ կերպով օգնության հասնելու համար։

Ուշագրավ է վանեցի Սաքո Թարգուլյանի վկայությունը Վանում տեղի ունեցած անցքերի մասին։ Պատերազմի ժամանակ թուրքերին հաջողվում է գերի վերցնել 20 ռուս զինվորների և փոխադրել Վան, ձեռքերը շղթայակապ ման են ածում փողոցներում և ամեն տեսակ անարգանքի ենթարկում։ Չնայած հայերի համար ստեղծված հուսահատական դրությանը, այնուամենայնիվ նրանց հաջողվում է գաղտնի կերպով իմանալ գերի զինվորների բանտի տեղը և գիշերով նրանց օգնություն են հասցնում։ Լազարյանցին գրած իր նամակում Թարգուլյանը ասում է. «Ահա այսպես մեր (հարազատ) կրոնակից եղբայրներին տանելով լցրին քաղաքի միջի

46 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. № 42, գ. 30, թ. 59։

47 С. О. Кишмишов, Война в турецкой Армении в 1877—1878 гг. СП, 1884, էջ, 127:

48 Նույն տեղում, էջ 84։

մեծ զորանոցի բանտի մութ խորշերը։ Հայերս մեր օրհասական կյանքում տեսնելով այս աղեխարշ կսկիծները՝ գիշեր-ցերեկ աղոթում էինք, եկեղեցիներում հսկում անելով պաշտում, որ մեզ արժանի անի մեկ անգամ տեսնելու ռուսական պետության արծիվի հաղթական դրոշի Վանում ծածանվելը»[49]։

Այս տողերում արտահայտված են հայերի սերն ու համակրանքը դեպի Ռուսաստանը, դեպի ռուս մեծ ժողովուրդը։ Առավել ևս այդ սերը հայերը ցուցաբերում էին թուրքական վանդալների ղնդաններում տառապող ռուս զինվորներին ցույց տված իրենց անձնական ծառայություններով։ «Անցավ մի քանի օր,—գրում է Ս. Թարգուլյանը,—հայերս ռուսների բանտարկության տեղն իմանալով, կարողացանք ծածուկ նոցա հետ տեսակցել։ Իմանալով նոցա քաշած տառապանքները՝ խոր տրամադրության մեջ ընկանք, բայց չէինք կարող հայտնապես նյութականով օգնել նրանց և ծածկվել. մեծամեծ վտանգներ էին նշմարվում, ինչևիցե՝ ի սեր մարդասիրության, մահն աչքներիս առնելով, բավականաչափ հանգանակություն արինք և թաշկինակի մեջ կապած դիշերով բանտի պատուհանից ներս գցինք։ Մնում էր հաց ևս հասցնել, որ խիստ դժվար գործ էր. մի հնարքով 4—5 օր հետո, կարողացանք հեշտ կերպով պատուհաններից ներս ձգել մեծ-մեծ փաթեթներով։ Բայց վեցերորդ երեկոն, երբ հաց ներս ձգելու համար որոշված անձինք պատրաստվում էին կրկնել իրենց գործողությունը, պահապան զինվորները տեսան և հրացաններով հարձակվեցին, հրացանի կոթով այս երեք անձանց այնքան անողթորեն զարկեցին, որ գլուխները և թևերը ջախջախված ուշաթափ գետին ընկան»[50]։

Թուրքական բարբարոսները փոքրիկ առիթ էին որոնում, որպեսզի գազանաբար հալածեին ու սպանեին հայերին՝ ռուսական բանակին ցույց տված օգնության համար։

Ռուս-թուրքական պատերազմին մասնակից զինվորական հրամանատարությունը և ռուս պրոգրեսիվ հասարակայնությունը բարձր էին գնահատում հայ ժողովրդի մատուցած ծառայությունները ռուսական բանակի հաղթանակի ապահովման գործում։ «Հայերը ոգևորված լինելով ռուսաց զորքերի հաջողություններով,—գրում է «Голос»-ը իր առաջնորդողում,—Ասիայում բարձրացնում են իրենց գլուխը և ոչինչ այնպես չեն ցանկանում, ինչ-

49 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. № 42, գ. 11, թ. 70։

50 Նույն տեղում։

պես ազատվել օսմանյան լծից։ Անկախ, կամ ռուսական Հայաստան,—այս է ընդհանուր արձագանքը, որ հնչում է այդ բազմադարյան մահմեդականության զոհը եղածների մեջ»[51]։

Հայերի մատուցած ծառայությունների համար ռուսական կառավարությունը Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը նվիրեց Հայկական հարցին։ Ռուսաստանը «կործանելով օսմանյան տերության կես միլիոն ուժը,—գրում է Հ. Լազարյանցը,—յուր ավարով և հազար թնդանոթներով հաղթական դրոշակը ձեռքին 19 փետրվարի 1878 թվականի յուր Բ. Դռան հետ ունեցած դաշնագրում չմոռանալով ի միջի այլոց մի մանրամասն հոդված նվիրել հայոց...»[52]։

Այդ հոդվածը չէր լուծում Հայկական հարցը՝ իր ամբողջությամբ, բայց Ռուսաստանի հսկողության պայմաններում ապահովում էր արևմտահայերի կյանքն ու գույքը թուրքական, քրդական ու չերքեզական հրոսակներից։ Ռուսական զորքերի կողմից գրավված հայաբնակ որոշ գավառներ պետք է վերադարձվեին Թուրքիային, ռուսական զորքերը պետք է թողնեին այդ տերիտորիաները։ Իսկ դա կարող էր տեղիք տալ հայերի ու թուրքերի բախումների, որոնք կարող էին թշնամություն առաջացնել երկու տերությունների միջև ու վատացնել նրանց հարաբերությունները։ Ուստի Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը Բ. Դռանը պարտավորեցնում էր անհապաղ մտցնել բարենորոգումներ հայաբնակ նահանգներում ու պատասխանատու լինել հայերի կյանքի ապահովության համար՝ քրդերից ու չերքեզներից։

Ռուսաստանի այդ քայլը Թուրքիայի նկատմամբ գերիշխող ազդեցություն ունենալու նրա ձգտումը դուր չեկավ Անգլիային, որը Ավստրիայի հետ միասին, սկսեց պատերազմով սպառնալ նրան և Սան-Ստեֆանոյի դաշնագիրը միջազգային կոնգրեսի քննությանը ներկայացնելու պահանջ առաջ քաշեց, մի պահանջ, որը միաժամանակ ձախողում էր հայերի անվտանգությունը։

Խոսելով Ռուսաստանի նկատմամբ Անգլիայի թշնամական քաղաքականության մասին, Էնգելսը գրում է. «Տևական կռվից հետո, 1878 թվականի հունվարին, ռուսական զորքերն ընդհուպ մոտեցան թուրքական մայրաքաղաքի դարպասներին և հանկարծ Բոսֆորում հանդես եկան անգլիական չորս զրահակիրներ և հարկադրեցին

51 «Голос», 24 декабря 1878.

52 «Մեղու Հայաստանի», № 128, 1882։

ռուսներին, որոնց արդեն նկատելի էր Սոֆիայի տաճարի գմբեթը, կանգ առնել և տալ իրենց համաձայնությունը Սան-Ստեֆանոյի պայմանագիրը եվրոպական կոնգրեսում քննելու համար»[53]։

Այսպիսով, 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը վերջացավ Ռուսաստանի հաղթանակով։ Սակայն նրա հաղթանակը վաղանցիկ եղավ։ Սան-Ստեֆանոյի դաշնագիրը Ռուսաստանի դեմ լարեց Անգլիային, Ավստրիային ու Գերմանիային, որոնք վախենում էին նրա տնտեսական ու ռազմաքաղաքական հզորության ամրապնդումից, վախենում էին Փոքր Ասիայում իրենց դիրքերի կորստից։ Դրա համար էլ նրանք այդ պայմանագիրը եվրոպական կոնգրեսի քննության առարկա դարձրին։ Ռուսաստանը հակառակելու ուժ չուներ։ Նրան կոալիցիայի կողմից պատերազմի վտանգ էր սպառնում։

1878 թ. մայիսի 18-ին (30-ին) ստորագրվեց անգլո-ռուսական համաձայնությունը, ըստ որի Բուլղարիան բաժանվում էր երկու մասի՝ Հյուսիսային և Հարավային Բուլղարիայի։ Բուլղարիայի հյուսիսային մասը ստանում էր քաղաքական ինքնուրույնություն, իսկ հարավայինը ստանում էր վարչական ինքնուրույնություն՝ գեներալ-նահանգապետի իշխանության ներքո։ Գեներալ-նահանգապետը նշանակվում էր Թուրքիայի հպատակ քրիստոնյաներից՝ եվրոպական տերությունների համաձայնությամբ։

Այսպիսով, Ռումելիան անջատվում էր Բուլղարիայից։ Բալկանյան լեռնաշղթան ծառայում էր որպես Հյուսիսային և Հարավային Բուլղարիայի սահմանը։ Նոր Ռումելիայի ստեղծմամբ, Անգլիան պատնեշ էր կանգնեցնում Ռուսաստանի առջև, փակում էր Կ. Պոլիս թափանցելու նրա ցամաքային ուղիները։

Անգլիան համաձայնվեց Ռուսաստանին միացնելու Կարսը, Բաթումը և Բեսարաբիայի հարավային մասը։ Դրա հետ միատեղ նա իրեն իրավունք էր վերապահում կոնգրեսում հարց բարձրացնելու Բուլղարիայից ռուսական զորքերը դուրս հանելու համար։ Այդ համաձայնությանը զուգընթաց՝ Անգլիան Թուրքիայի հետ գաղտնի պայմանագիր կնքելու բանակցություններ էր վարում։

1878 թ. հունիսի 4-ին Անգլիան Թուրքիայի հետ գաղտնի պայմանագիր կնքեց, օկուպացրեց Կիպրոսը՝ Եգիպտոսի նախադուռը։ Նա կամենում էր գրավել Եգիպտոսը, խեղդել նրա ժողովրդի ազատագրական շարժումները և պատնեշ կառուցել Ռուսաստանի

53 *К. Маркс* и *Ф. Энгельс*, Сочинения, т. 22, Москва, 1962, էջ 43։

առաջխաղացումների դեմ։ Այդ պայմանագրի համաձայն Անգլիան պարտավորվում էր զենքով օգնել Թուրքիային՝ նրա ասիական տիրապետության պահպանման համար, այդ թվում Կարսի և Բաթումի համար։ Դրա դիմաց նա ստանում էր Կիպրոսի օկուպացման և կառավարման իրավունքը։ Անգլիայի այդ շահադիտական-եսական քաղաքականությունը լուրջ հարված էր հայ ժողովրդին, նրա շահերին։ Նա փաստորեն Կիպրոսը ձեռք բերեց հայերի արյան գնով, «Երևում է,—գրում էր Գր. Արծրունին,—որ թե Թուրքիայի և թե Անգլիայի համար հայերը և Հայաստանը աչքի փուշ են դարձել։ Նրանց գաղտնի դաշնագրությունը նրա մեջն էր կայանում, որ հայերին ոչնչացնեին Հայաստանի մեջ, աքսորեն հայերին Հայաստանից»[54]։

Կարսը, Արդահանը, Ալաշկերտը և Բայազետը Փոքր Ասիայի թուրքական այն վիլայեթներն էին, որոնց բնակչության մեծ մասը գերազանցապես հայերն էին կազմում՝ թուրքերի համեմատությամբ։ Վերադարձնելով այդ վիլայեթները Թուրքիային, Անգլիան դրանով օգնում էր հայերի հարստահարություններին ու իրավազրկմանը։

1878 թ. հունիսի 6-ին Անգլիան համաձայնություն կնքեց Ավստրիայի հետ՝ կոնգրեսում Ռուսաստանի դեմ միատեղ հանդես գալու համար։

Բեռլինի կոնգրեսը բացվեց 1878 թ. հունիսի 13-ին՝ Բիսմարկի նախագահությամբ և իր աշխատանքներն ավարտեց հուլիսի 13-ին։ Կոնգրեսին մասնակցում էին խոշոր տերությունների դիվանագետները Բալկանյան պետությունների ներկայացուցիչները, բայց ոչ որպես նրա լիիրավ անդամներ։

Բեռլինի կոնգրեսի հիմնական հարցը 1878 թ. մայիսի 30-ի անգլո-ռուսական համաձայնության և Անգլիայի կողմից Կիպրոսի օկուպացման ակտի օրինականացման հարցերն էին։ Կոնգրեսում Անգլիայի հետ միասին Ռուսաստանի դեմ հանդես էր գալիս Ավստրիան։ Գերմանիայի դիրքը Ռուսաստանի նկատմամբ նույնպես անբարյացակամ էր։ Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր իշխան Գորչակովին Բիսմարկը հայտնեց, որ ինքն իր վրա է վերցնում «ազնիվ մակլերի» դեր՝ ծագած վեճերին խաղաղ ընթացք տալու համար»[55]։

---

54 «Մշակ», № 6, 1879։

55 *Н. И. Кравченко*, Очерки из истории междун. отношений конца XIX и начала XX вв., Саратов, 1925, էջ 7։

1878 թ. հուլիսի 13-ին ստորագրվեց Բեռլինի դաշնագիրը, որը փոխարինեց Սան-Ստեֆանոյի դաշնագրին՝ զգալիորեն կրճատելով Ռուսաստանի տերիտորիալ նվաճումները։ Ավստրո-Հունգարիան, որը պատերազմի ընթացքում ոչ մի գնդակ չէր արձակել, ստանում էր Բոսնիան, Հերցոգովինան և ուրիշ մարզեր։ Նրա ձեռք բերած նվաճումները Բալկանյան թերակղզում կազմում էին «980 քառակուսի մղոն տարածություն՝ 1.200.000 բնակչությամբ»[56]։

Անգլիայի շահադիտական քաղաքականության թելադրանքով, Բեռլինի դաշնագրից զգալի չափով օգտվեց Թուրքիան։ Սան-Ստեֆանոյի դաշնագիրը Թուրքիայի եվրոպական սահմանները հասցնում էր մինչև Կոստանդնուպոլսի դարպասները, իսկ Բեռլինի դաշնագիրը Բալկաններում զգալի չափով ընդարձակում էր նրա տիրապետությունը՝ «3.667 քառակուսի մղոն տարածությամբ և 6,5 միլիոն ազգաբնակչությամբ»[57]։

Բեռլինի կոնգրեսում Ռուսաստանը դիվանագիտական նահանջ կատարեց՝ վախենալով կոալիցիայի մեջ մտնող պետությունների կողմից իրեն սպառնացող վտանգից և երկրում աճող ռևոլյուցիոն շարժումներից։ Ալեքսանդր II-ին գրած նամակներից մեկում Լոնդոնի ռուսական դեսպան Շուվալովը գրում է. «Բեռլինի դաշնագիրը հանդիսանում է սև էջ իմ ծառայության ամբողջ պատմության մեջ»[58]։ Ռուսաստանի դիվանագիտական նահանջը խիստ վրդովմունք առաջ բերեց սլավոնաֆիլների շրջանում, որոնց գլուխն էր կանգնած պահպանողական Ակսակովը։

Բեռլինի կոնգրեսում Ֆրանսիայի պատվիրակների բռնած դիրքը Ռուսաստանի հանդեպ նույնպես անբարյացակամ էր։ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր և պատվիրակության ղեկավար Վատինգտոնը կոնգրեսի աշխատանքների ավարտումից մեկ տարի հետո՝ 1879 թ. հուլիսի 14-ին վարչապետ Տյուֆուրին հաղորդում է հետևյալը՝ Ռուսաստանի և Անգլիայի միջև եղած վեճերի ընթացքում իր կառավարության պատվիրակության բռնած դիրքի մասին. «Մենք ուղղակի չմասնակցեցանք այս վիճաբանության, բայց օժանդակեցինք ամեն աշխատանքի, որ կը ձգտեր մեղմացնել Թուրքիո կորուստները այդ մասերուն մեջ և ուրկե պիտի ապահովվեր Եվրոպայի և Պարսկաստանի հաղորդակցությունները Տրապիզոնի

---

56 «Մասիս», 1878, № 2156, էջ 1։

57 «Правительственный вестник», № 179, 1879.

58 *Н. К. Кравченко.* Очерки из истории междун. отношений конца XIX и начала XX вв., էջ 22։

միջոցով։ Ռուսիա երևութապես անտարբեր մնաց Կիպրոսի համաձայնագրին հանդեպ, թեև այդ կողմն տևական սպառնալիք մըն է իրեն դեմ և կը ստեղծե ծայր աստիճան վտանգավոր անհանդարտ վիճակ մը Հայաստանի մեջ ունեցած իր ստացվածքներուն համար»[59]։ Ֆրանսիան իր շահերն ուներ Թուրքիայում։ Ուստի նրան ձեռնտու չէր Ռուսաստանի հզորացումը։

Այսպիսով, կոալիցիայի կողմից սպառնացող պատերազմի հետևանքով Ռուսաստանի դիվանագիտական նահանջը պետք է ազդեր նաև Հայկական հարցի ընթացքի վրա։

Բեռլինի կոնգրեսը զբաղվեց նաև Հայկական հարցով։ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի և Ազգային ժողովի որոշմամբ կոնգրեսի աշխատանքներին մասնակցելու համար մեկնեց հայ պատվիրակությունը՝ Կ. Պոլսի նախկին պատրիարք Խրիմյան Հայրիկի գլխավորությամբ[60]։

1878 թ. մարտի 15—17-ը պատվիրակությունը լինում է Հռոմում և հանդիպում է ունենում Իտալիայի արտաքին գործերի մինիստր Կորտիի հետ, որին հանձնում է պատրիարքարանի կողմից մշակված հայկական ռեֆորմների նախագծի մեկ օրինակը։ Կորտին ընդունեց հայ պատվիրակությանը և խոստացավ կոնգրեսում անպայման պաշտպանել հայերի իրավունքը, նրանց օրինական պահանջները։ Նա պատվիրակությանը հավաստիացրեց, որ կարդացել է պատրիարքարանի հիշատակագիրը, նրա մասին իրազեկ է պահել իր կառավարությանը և անխոս կերպով կպաշտպանի հայկական դատը։ Պատվիրակությունը մեծ խանդավառությամբ և լի հույսերով հեռացավ Իտալիայի մայրաքաղաքից։

1878 թ. մարտի 19—31-ը հայ պատվիրակությունը լինում է Փարիզում, Խրիմյանը Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Վիլյամ Վատինգտոնին է ներկայացնում և նրան հանձնում բարեկարգումների նախագծի մեկ օրինակ։ Վատինգտոնը ևս Խրիմյանին հավաստիացրեց, որ կոնգրեսում ջերմորեն կպաշտպանի Հայկական հարցը։ «Կարող եք ապահով լինել,— ասում է նա,— որ Ֆրանսիան անտարբեր չէ Հայաստանին։ Ես անձամբ համակրում եմ ձեր դատին, որովհետև պտտել եմ Ասիայում, ուսումնասիրել եմ ձեր պատմությունն ու գրականությունը։ Ես տրամադիր եմ ձեր

59 Խ. Գաբիկյան, Հայկական հարցը Արևելյան հարցի մեջ (1860—1880), էջ 327։

60 Պատվիրակության կազմում էին՝ Խրիմյանը, Խորեն-Նարպեյը, Ստեփան Փափազյանը և Մինաս Չերազը՝ որպես քարտուղար և թարգմանիչ։

դատը պաշտպանելու կոնգրեսում, որ ոչ ոք ինձնից լավ չի ճանաչում ձեր ազգն ու երկիրը»[61]։

Այս սիրալիր խոսքերից ոգևորված՝ հայ պատվիրակությունը մեկնեց Անգլիա։ 1878 թ. հուլիսի 1-ին Անգլո-Հայկական ընկերությունը Լոնդոնում կազմակերպում է միտինգ, որին մասնակցում են Անգլիայի հասարակական-քաղաքական ականավոր գործիչները։ Միտինգի նշանակության մասին ասված է. «Լոնդոնի Անգլո-Հայկական հանձնաժողովի հրավերով Երուսաղեմյան դահլիճում ժողովեցավ մի որոշ թիվ այր և կին մարդոց այն նպատակով, որ հայտնեն յուրյանց համաձայնությունը հայոց ազգին միջնորդ լինեն նորա համար ներկա քաղաքական ճգնաժամին և շնորհակալություն հայտնեն Բրիտանական կառավարությանը նորա տված խոստումների համար՝ հոգալու, որ Բեռլինի վեհաժողովում պատշաճավոր ուշադրություն դարձնի հայերի վիճակի վրա»[62]։

Միտինգում ելույթներ են ունենում հռետորները, կարդացվում են առանձին մարդկանց հեռագրեր, որոնք իրենց համակրությունն են արտահայտում հայերի ու նրանց դատի նկատմամբ, պարտավորեցնում են լորդ Սալսբերիին՝ պաշտպանելու հայերի պահանջները։

Նախագահության աթոռից Բրայսը իր ելույթում հայտարարում է, որ Անգլիայի կառավարության պատվիրակությունը պաշտպան կկանգնի հայոց դատին՝ գնահատելով հայ ժողովրդի խաղացած դերը մարդկության պատմության մեջ։ «Հաստատակամությունը և հայրենասիրությունը միշտ հայերի գերազանց հատկություններն են եղել,— ասում է նա,— որով և բացատրվում է նոցա հաստատուն սերը դեպի հայրենի երկիրը և այն, որ նոցա մեծ մասը, չնայած ամեն տեսակ թշվառությունների, դեռ բնակվում է սրբազան Արարատի հովիտներում»[63]։

Բրայսը հայ պատվիրակությանը և նրա ղեկավար Խրիմյանին համոզում էր, որ անգլիական ժողովուրդը և նրա կառավարությունը մեծ համակրանք են տածում հայ ժողովրդի նկատմամբ, որի կենդանի ապացույցը համարում է գումարված միտինգը։ Վերջացնելով իր ճառը, նա թելադրում է իր բանաձևը, որպես հայերի պահանջը. «Հայաստանի լավ վարչություն, հայերի ազատությունը

61 Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգ. Սահմանադրությունը Թուրքիայում (1860—1910), Թիֆլիս, 1912, էջ 371։

62 «Արձագանք», № 138, 1894։

63 Նույն տեղում։

քուրդերի և տաճկական հարստահարիչ և ապականված վարչության իշխանությունից, հայերի կենաց, ընչից և պատվո ապահովությունը,— և այս է այն փառավոր հարցը, որ յուր հզոր ազդեցությամբ լուծելու կոչված է քրիստոնյա Անգլիան»[64]։

Կոմս Շեֆտերբյուրին իր ելույթում համաձայնություն հայտնեց առաջարկված բանաձևին և միաժամանակ Հայկական հարցը համարեց միանգամայն ակտուալ։ Նա հակիրճ կերպով բնութագրեց հայ ժողովրդին՝ իր պատմական ամբողջ անցյալով, իր մատուցած ծառայություններով։

Անգլո-Հայկական ընկերության հայ անդամները, նրանց նախագահ Փանոսյանը, ինչպես նաև կոնգրես մեկնող հայ պատվիրակները շատ քաջալերվեցին այդ ելույթներով ու եղած ողջույններով։

Փանոսյանն իր ելույթում հայ ժողովրդի անունից շնորհակալություն և գոհունակություն հայտնեց այն բանի համար, որ անգլիական պատվիրակությունը հանձն էր առնում կոնգրեսում պաշտպանելու հայոց դատը։ «Այն մեծ համակրությունը,— ասում է նա,— որ անգլիական կառավարությունն ու ժողովուրդը ցույց տվին մեր գործին, հույս է տալիս մեզ նորին մեծություն թագուհու լիազոր պատգամավորները կպաշտպանեն նրան վեհաժողովում՝ հասնելով արդարության այն չափին, որին, կարծում ենք, իրավունք ունենք»[65]։

Միտինգը վերջացավ, ճառերն ու ողջույնները դադարեցին։ Հայ պատվիրակները բարի խոսքերով և մեծ հույսերով սպառազինված՝ մեկնեցին Բեռլին, կոնգրեսին մասնակցելու համար։ Սակայն նրանց թույլ չտրվեց մասնակցել կոնգրեսի և ոչ մի նիստին[66]։

64 «Արձագանք», № 138, 1894։

65 Նույն տեղում։

66 Կոնգրես մեկնող հայ պատվիրակության անդամ Խորեն Նար-Պեյը գտնվում է Պետերբուրգում։ Նա լինում է վարչապետ Գորչակովի մոտ և նրան է ներկայացնում Հայաստանի ինքնավարության ծրագիրը։ Գորչակովի կողմից ջերմ ընդունելություն գտնելով, Նար-Պեյը նամակ է ուղարկում Խրիմյանին՝ Գևորգ 4-րդ կաթողիկոսին հանձնելու համար և խնդրում է կաթողիկոսի կողմից հատուկ միջնորդություն ռուսական ցարին՝ Հայկական դատի պաշտպանության կապակցությամբ։ Խրիմյանը մեկնում է էջմիածին նամակը կաթողիկոսին հանձնելու նպատակով։ Վեց օր հետո կաթողիկոսը ընդունում է Խրիմյանին և ասում. «Գնա ըսկ պատրիարքին, որ այդպիսի հիմարություններ ետ կենա, սուլթանը ցարեն լավ է հայերուն համար»։ Մինչև պատասխան ստանալը Նար-Պեյը տեսակցություն է ունենում Իգնատիևի հետ և նրա միջնորդությամբ ցարին է ներկայացնում հայկա-

Անգլիական ժողովրդի կողմից հայերի նկատմամբ ցուցաբերված բարյացակամությունը Լոնդոնի սահմաններից դուրս չեկան։ Անգլիական կառավարողները Թուրքիային պատժելու, հայերի արդար պահանջները բավարարելու փոխարեն իրենց վրա վերցրին Թուրքիայի հովանավորությունը Բեռլինի կոնգրեսում։

Հայկական հարցի անփառունակ վախճանի պատճառը այն չէր, որ Բեռլին մեկնող պատվիրակները կղերականներ էին։ Պատվիրակների մեղքը նրանումն էր, որ նրանք շատ էին հրապուրվում արևմտաեվրոպական դիվանագիտության սին խոստումներով և, հատկապես, մեծ սպասելիքներ ունեին Թուրքին հովանավորող և նրա հետ դաշինք կռած Անգլիայից։ Հայ պատվիրակներից Ստեփան Փափազյանը դեռևս 1876 թ. դեկտեմբերի 10(22-ին) Ազգային ժողովի նիստում հայտարարեց, որ «Հայ ազգը մասնավոր շահեր ունի օսմ. կայսրության գոյության և ամբողջության մեջ։ Հայաստան իր բնական դիրքով օսմ. տերության բնական թշնամիների դեմ զորավոր պատնեշ մըն է։ Հայ ազգը օսմ. տերության բնական գինակիցն է»[67] (ընդգծումը բնագրինն է—Հ. Վ.)։

Արտահայտելով իրենց հակակրանքը Ռուսաստանի նկատմամբ, արևմտահայ ազգային ջոջերը իրականում իրենց օրիենտացիայով գործիք էին դառնում անգլիական դիվանագիտության ձեռքում և արգելակ դառնում Հայկական հարցի դրական ընթացքին։ Կ. Պոլսի անգլիական դեսպան Լայարդը 1877 թ. դեկտեմբերի 12-ին Սալսբերիին հեռագրում էր. «...Ռուսիա կաշխատի տկարացնել սուլթանին հեղինակությունը, կարգելե այս հողամասին իրական հառաջադիմությունը՝ միշտ գրգռելով քրիստոնյա բնակչությանը...։ Պաթումի գրավումով Ռուսիա կունենա ռազմական խարիսխ։

կան ինքնավարության ծրագիրը և հայտնում, որ հայերի հույսը Ռուսաստանի վրա է. «Չենք կրնար հույս դնել Թուրքիո վրա, մեր թերահավատությունը հասկանալի է 1856-ի և ավելի առաջ տրված խոստումները չկատարվելեն ետք։ Եթե հայոց հարցը չը կարգադրվի, նա ավելի կը բարդանա»։

Ռուսական ցարին տեղեկացնելով հայերի մեջ եղած մեծ իրարանցումների մասին և ստանալով դրական պատասխան՝ Ռուսաստանի կողմից Հայկական դատը պաշտպանելու գործում, Նար-Պեյը Պետերբուրգից հաղորդում է. «Կը խոստանան, որ ապագա Վեհաժողովին մեջ ռուս կառավարությունը պիտի համաձայնի մյուս պետությանց հետ ի նպաստ հայերուն՝ պահանջելու համար ինքնավար վարչություն մը կամ քրիստոնյա կառավարություն մը Լիբանանի նման» (Տե՛ս Խ. Գաբիկյան. «Հայկական հարցը Արևելյան հարցի մեջ» (1860—1880), էջ 198)։

67 Խ. Գաբիկյան, Հայկական հարցը Արևելյան հարցի մեջ, (1860—1880), էջ 130։

մը և կը ձգտե Սև ծովի տիրապետության... Եթե Հայաստանը Բ. Դրան իշխանութենեն վերցվի Ռուսիայեն՝ Պարսից ծովը սպառնալիքի տակ կմնա։ Կը տիրե այն ատեն Եփրատի ափերուն, Գարուն գետին, որ կանցնի Պարսկաստանի ամենեն հարուստ գավառներուն մեկուն մեջեն, ատկե և Եփրատի հովիտեն կարելի է իջնել պարսկական գավառները և Պելուճիստան... Թույլատրելու չենք, որ Ռուսիա հողային գրավումներ կատարե Հայաստանի մեջ։ Ռուսական առաջին հաջողությունները կը շարժին Էպիրոսի, Թեսալիոն, Մակեդոնիո հույն բնակիչները, կըրնան ըմբոստանալ»[68]։

Ահա թե ինչու Անգլիան պետք է հանդես գար Սան-Ստեֆանոյի դաշնագրի դեմ և այն միջազգային կոնգրեսի քննությանը դներ։ ահա թե ինչու նա 1878 թ. հունիսի 4-ին պետք է գաղտնի համաձայնություն կնքեր Թուրքիայի հետ, որը ոչ միայն Ռուսաստանի դեմ էր ուղղված, այլև՝ հայերի սպասելիքների և ազատագրական հակումների դեմ։ Այս ճշմարտությունը չհասկացան հայ պատվիրակները։

Բեռլինի կոնգրեսը Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը փոխարինեց 61-րդ հոդվածով, Հայկական հարցը հանձնեց վեց տերությունների կոլեկտիվ խնամակալությանը, այն դարձրեց միջազգային դիվանագիտության հարց։ Այդ հոդվածում ասված է. «Բ. Դուռը պարտավորվում է իրագործել այն բարվոքումները և բարեգործությունները, որոնք առաջ կբերեն հայաբնակ գավառների տեղական պահանջները և ապահովել նրանց անվտանգությունը չերքեզներից և քրդերից։ Նա պարտավոր է պարբերաբար տեղեկություններ հաղորդել այդ նպատակի համար ձեռք առած միջոցառումների վերաբերմամբ այն տերություններին, որոնք պետք է հետևեն նրանց իրագործմանը»[69]։

Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ և Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածների բովանդակությունների միջև եղած տարբերությունը շատ ակնբախ է։

Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը Թուրքիային պարտավորեցնում էր հաշվետու և պատասխանատու լինել մեկ տերության՝ Ռուսաստանի առաջ, որը բավականին մոտիկ էր և ուժ ուներ ռեալ կերպով իրագործել տալու խոստացված բարենորոգումները։ Իսկ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը այն հանձնեց

68 Խ. Գարիկյան, Հայկական հարցը Արևելյան հարցի մեջ (1860—1880)։
69 История дипломатии, т. II, Москва—Ленинград, 1945, էջ 118։

վեց տերություններին, բարվոքումների ու բարենորոգումների իրագործման ուղղությամբ Թուրքական կառավարությունը պարտավորվում էր պարբերաբար տեղեկություններ տալ նրանց, իսկ դրանք չիրագործելու դեպքում, այդ տերությունները հանձն չեն առնում հսկելու նրանց իրագործման ընթացքի վրա։ Հետևապես, 61-րդ հոդվածը անորոշ էր։ Նա անորոշ վիճակում թողեց հայ ժողովրդի բախտը, որից օգտվեց Թուրքական սուլթանը՝ Հայկական հարցը իր ցանկացած եղանակով «լուծելու» համար։

Հակառակ Լոնդոնում եղած կարեկցական ճառերի, Անգլիայի արտաքին գործերի մինիստր Սալսբերին միանգամայն թշնամական դիրք գրավեց հայերի օրինական պահանջի նկատմամբ։ Նա աշխատում էր ամեն կերպ նվազեցնել հայերի թիվը՝ նրանց ինքնավարության պահանջը անօրինական և վաղաժամ համարելու դիտավորությամբ։

Անգլիայի պահպանողականների կառավարությունը հասկանում էր, որ հայերի ինքնավարությունը կուժեղացնի Ռուսաստանի դիրքերը և հայերի աչքում կբարձրացնի նրա հեղինակությունը։ Դեռևս 1876 թվականին, անգլիական լորդերի պալատում հայտարարություն էր եղել այն մասին, որ «ռուսների կողմից Հայաստանի վրա տիրելը... կապահովի այդ պետության համար Սև ծովի արևելյան երկրների վրա իշխելը, կտա նրան կարողություն հսկելու Փոքր Ասիայի անցքերի վրա և հրամայել Եփրատի և Տիգրիսի հովիտներին»[70]։

Այսպիսով, 1878 թ. հունիսի 4-ի անգլո-թուրքական կոնվենցիան դավաճանություն էր հայ ժողովրդի նկատմամբ։ Այն շատ անորոշ ու մշուշապատ դարձրեց Հայկական հարցը, իսկ Բեռլինի կոնգրեսը առավել ևս խտացրեց անորոշությունը։ Իրականում Սան-Ստեֆանոյից մինչև Բեռլին հասնելը այնքան կերպարանափոխվեց Հայկական դատի լուծման համար առաջարկված հոդվածը, որ վերջ ի վերջո դառավ դատարկահնչուն ֆրազ։

1878 թ. սեպտեմբերին լույս է տեսնում Մինաս Չերազի «Թե ի՞նչ շահեցանք Պերլինի վեհաժողովեն» վերնագրով գրքույկը, որը նվիրված էր պատրիարք Ներսես Վարժապետյանին։ Չերազը գրում է։ «Մի՞թե ներելի է հուսահատիլ մի ժողովրդի, որ կը հավատա թե ապագա ունի։ Ազգս ոչ միայն վնաս չը կրեց, այլ մեծապես շահեցավ Պերլինի վեհաժողովեն... Մենք ավելի շահեցանք Պերլինի,

70 «Մշակ», № 60, 1876։

քան Սան-Ստեֆանոյի մեջ և անհնարին էր ավելի շահիլ լեզվով և գրչով։ Սան-Ստեֆանոյի հոդվածը աղաչանքներե ծանր էր։ Պերլին ամրապնդեց զայն յուր վեհավճռով... Պերլինի վեհաժողովեն մի ոսկեհանք շահեցանք, մեզ անկե խիզախել և հանել ոսկին»[71]։ Հայ ժողովուրդը այդ «ոսկեհանքը» չտեսավ. նա տեսավ նորանոր աղետներ, հալածանք ու բնաջնջում։

Ծաղրելով 61-րդ հոդվածի երկրպագուներին, Կ. Պոլսում նստած ազգային ջոջերին, Բաֆֆին գրում է. «Ուրիշ օրինակ անհարմար կլիներ բերել, քան թե այն, որ Բեռլինի վեհաժողովի ժամանակ, Կ. Պոլսի հայոց դրությունը նման էր մի վաճառականի, որ կամենում է սկսել մի մեծ առևտրական սպեկուլյացիա, առանց նախապես գիտենալու իր դրամական վիճակը, նա հասկանում է, որ կասսան դատարկ է այն ժամանակ միայն, երբ գործն արդեն սկսել էր»[72]։

Հայ խոշոր երգիծաբան Հ. Պարոնյանը Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածից հետո վեց տերությունների կոլեկտիվ խնամակալությունից մեծ սպասելիքներ ունեցող քաղաքական կարճատես գործիչների ծաղրական վիճակի մասին հեգնանքով գրում է. «1878 թվին իբրև ազգային նվիրակ Խրիմյանի հետ Պերլինի ավագաժողովը ղրկվեցավ։ Թեպետ և չգիտակցելով, թե ինչու չկրցին ավագաժողովին ներկայանալ, սակայն շատերը պնդեցին այն ատեն, թե ազգը մեծ օգուտ քաղեց անոնց ուղևորութենեն, թե ձայն հանելու չէ, այդ օգուտին ինչ ըլլալը վերջեն պիտի հասկացվի»[73]։

Արևմտահայերի կյանքում բարենորոգումներ իրականացնելու ուղղությամբ սուլթանի կառավարության խոստումները Պարոնյանը համարում է կեղծ ու խաբեություն, որովհետև նա ամենևին չէր վախենում եվրոպական տերությունների ձևական ազդարարություններից։ «Դուռը կխոստանա Հայաստանի մեջ բարենորոգումներ գործադրել,—գրում է նա,—միայն թե երեք ամիս պայմանաժամ կինդրե։ Եթե երեք ամսվա մեջ այդ բարենորոգումները չգործադրվին՝ Բ. Դուռը իրավունք կուտա տերություններուն, որ դարձյալ ազդարարություններ ընեն իրեն։

Ինչ գեղեցիկ առաջարկություն։

71 Հ. Աճեմյան, Հայոց Հայրիկ, էջ 510, Թավրիզ, 1929։

72 Մելիքզադե, Ի՞նչ կապ կա մեր և տաճկահայերի միջև, («Մշակ», № 122, 1879)։

73 Հ. Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 19։

Եթե ազդարարություններն դարձյալ օգուտ չընեն՝ տերություններն դարձյալ իրավունք կունենան ազդարարություն ընկել։

Ազդարարություն ընեն որչափ որ ուզեն, իսկ ճնշում չենք ընդունիր»[74]։

Բեռլինի կոնգրեսից բոլորովին այլ տպավորություններով և համոզմունքներով վերադարձավ Խրիմյան Հայրիկը։ Նա եկավ այն համոզման, որ Մերձավոր Արևելքի և Փոքր Ասիայի համար մղվող պայքարի ժամանակաշրջանում կապիտալիստական այդ խոշոր տերությունները հաշտ ու համերաշխ ապրել չեն կարող և, հետևապես, Հայկական հարցում կոլեկտիվ միջամտություն չի կարող լինել։

Կ. Պոլսի հայկական մայր եկեղեցում ժողովրդի առջև ունեցած իր ելույթում Խրիմյանը ցույց տվեց, որ իրավունքը ուժի մեջ է, որ Բալկանյան թերակղզու սլավոն ժողովուրդները կոնգրեսին ներկայացան սրերով, թրերով և հրացաններով, իսկ հայ պատվիրակությունը՝ իր խղճուկ աղերսագրով։ «Վեհաժողովը բացվեցավ,—ասում է նա,—աշխարհի մեծ պետությանց քաղաքագետ պատգամավորները շարվեցան կանաչ սփռոցով ծածկված դիվանագիտական սեղաններուն բոլորտիք, իսկ փոքր և ճնշված ազգաց պատգամավորներս վեհաժողովեն դուրս կսպասեինք։ Վեհաժողովին մեջ տեղը... սեղանի մը վրա, դրված էր մեծ կաթսա մը խարիսա, ուրկից բաժին պիտի ստանային աշխարհիս մեծ ու փոքր ազգերն ու տերությունք։ ...Սկսան կարգով, մի առ մի, ներս կանչել փոքր ազգաց պատգամավորներ։ Նախ պուլկար ներս մտավ, ապա սերբիացին, դարագաղցին, որոնց կողերեն կախված սուրերու չաքուրչուքոց գրավեց ժողովականներու ուշադրությունը.... Այս երեք պատգամավորներ քաշեցին իրենց սուրերը և իբրև երկաթյա շերեփ խոթելով խարիսայի կաթսայի մեջ, իրենց բաժին խարիսան առին և հպարտ ու համարձակ հեռացան։ Կարգն եկավ հայոց պատգամավորին, ես մոտեցա և Ազգային ժողովին կողմե ձեռքս տրված աղերսաթուղթը ներկայացուցի և աղաչեցի, որ իմ ամանս ալ լնուն խարիսա։ Յայն ժամ կաթսայի գլուխ սպասող մեծավորները ինձ հարցուցին.—«Ո՞ւր է քո երկաթյա շերեփը, հիրավի հոս խարիսա կբաժանվի, բայց երկաթյա շերեփ չունեցողը չի կարող անոր մոտենալ, զայս իմացիր, որ եթե մոտ ատեն այս խարիսան կրկին բաժանվի, յայնժամ առանց շերեփի չգաս, զի պարապ հետ կդառ-

74 Հ. Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 66։

նաս։ Է՛հ, սիրելի ժողովուրդ հայոց, ես կրնայի խարիսայի կաթսայի մեջ խորթել իմ թղթե շերեփը, որ պիտի թրջվեր և հոն մնար։ Հոն, ուր զենքն է խոսողը, ուր սուրերը կշողշողան, հոն ի՞նչ գործ ունին խնդիրք և աղերսաթղթեր»[75]։

Այս ամենից հետո Խրիմյանը հայերին կոչ է անում յուրացնել քաջ զեյթունցիների, սասունցիների և շատախցիների հերոսության ու զինված պայքարի օրինակները, ազատություն ձեռք բերել սեփական ուժերով, զենք ձեռք բերել և զինվել։ Նա կոչ է անում գավառները վերադառնալիս իրենց հետ զենք տանեն և հայերին զինեն։ «...Մեկ մեկ զենք տարեք, զե՛նք առեք և դարձյալ զենք։ Ժողովո՛ւրդ, ամենեն առաջ քո ազատության նույսը քո վրա դիր, քո խելքին և քո բազուկին ուժ տուր, մարդ ինքնիրեն պետք է աշխատի, որ փրկվի»[76]։

Արևմտաեվրոպական օրիենտացիայի վրա կանգնած, բայց արդեն հիասթափված Խրիմյանը հրապարակ է գալիս որպես հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի, զինված ապստամբության պրոպագանդիստ։ Խրիմյանը փաստորեն հայերին ինքնապաշտպանության կազմակերպման ու զինված ապստամբության ճանապարհով սուլթանական ռեժիմից ազատագրվելու կոչ էր անում, որովհետև լավ էր հասկանում, որ Հայկական հարցի շուրջը ստեղծված կատակերգությանը հաջորդելու էր ծանր ողբերգության ժամանակաշրջանը։

Այսպիսով, ի՞նչ էր Հայկական հարցը, ո՞րն էր նրա էությունը։ Հայկական հարցը հայ ժողովրդի քաղաքական ինքնորոշման, նրա միջազգային իրավունքի հարցն էր։ Դրա համար էլ Բեռլինի կոնգրեսը, թեկուզ խոշոր տերությունների եսական շահերից ելնելով, այնուամենայնիվ, այդ հարցը դասեց միջազգային դիվանագիտության խնդիրների շարքը։ Հետևապես, Հայկական հարցի բուն էությունը հանդիսացել է պետությունների դիրքավորումը հայ ժողովրդի քաղաքական ինքնորոշման նկատմամբ։

---

75 Հ. Անմյան, Հայոց Հայրիկ, էջ 511—512։

76 Նույն տեղում, էջ 513։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՋԻՆՋ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԵՌԼԻՆԻ ԿՈՆԳՐԵՍԻՑ ՀԵՏՈ։ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԵԼՔԸ 1870—1880-ԱԿԱՆԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1

Բեռլինի կոնգրեսը ժողովուրդներին խաղաղություն չբերեց և բերել չէր կարող։ Արևելյան հարցը, ամբողջությամբ վերցրած, դեռ չէր լուծված։ Մերձավոր Արևելքի և Փոքր Ասիայի համար խոշոր տերությունների կողմից մղվող պայքարը մնում էր օրակարգում, նրանց հակամարտությունները գնալով ավելի ու ավելի էին ուժեղանում։ Եվրոպայի մթնոլորտը հղի էր նոր պատերազմի որոտներով։

Սուլթանական կառավարությունը ուշադրությամբ հետևում էր զարգացող իրադարձություններին, եվրոպական պետությունների անհամաձայնությանը և, օգտվելով հանգամանքներից, սկսեց դաժան դատաստան տեսնել հայերի հետ։ Նա մշակեց հայերի բնաջնջման ծրագիրը՝ բարենորոգումներ մտցնելուց խուսափելու, Հայկական հարցը հրապարակից հանելու և իր ներքին գործերին եվրոպական տերությունների միջամտություններին ընդմիշտ վերջ տալու դիտավորությամբ։ Այդ էր Հայկական հարցի «լուծման» թուրքական եղանակը։

Քյամիլ փաշան իր կայսրին գրում է. «...եթե Եվրոպիո մեջ մեր ծոցը օձ սնուցինք, պետք չէ, որ նույն հիմարությունները ընենք մեր ասիական Տաճկաստանի մեջ. խելոքությունը բնաջնջել—վերացնելն է այն ամեն տարերքը, որ օր մը կրնան մեզ նույն վտանգը ծնանել և օտարին ձեռնամխության առիթ և գործիք լինել։

Հիմա, այսօր, գոնե Անգլիո շահերն կը պահանջեն, որ Փոքր Ասիո (մենք և Անգլիան Հայաստան բառը ոչ միայն չենք ճանաչեր, այլ այդ անուն հնչող կղակները պետք է ջախջախենք) մեր ունեցած երկրները ազատ մնան օտարի միջամտութենեն և միջամտության ամեն առիթներեն. ուստի այդ սուրբ նպատակին համար պետք է, և պետական իրավունքը կը պահանջե, որ որևիցե կասկածելի տարրը անհետ ընենք, որպեսզի ապագան ապահովենք. ուրեմն այդ հայ ազգը վերացնելու, անհետ ընելու ենք: Եվ այդ ի գլուխ հանելու համար դան չի պակասիր մեզ, ամեն գործիք պատրաստ ունենք— կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամենայն ինչ. կրոնական պատերազմ մը կը հրապարակենք և դյուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ, որ ո՛չ զենք ունի, ո՛չ զինվորություն և ո՛չ պաշտպան... Եվ եթե այդ հայ ազգը բնաջինջ լինի և քրիստոնյա Եվրոպան (իմա՝ Ռուսաստանը—Հ. Վ.) կրոնակից մը փնտրե, և չգտնե տաճկական Ասիո մեջ, կը թողու զմեզ հանգիստ և այն ատեն կը զբաղվինք ներքին գործերով և բարեկարգությամբ...»[1] (ընդգծումները մերն են—Հ. Վ.):

Հայերի բնաջնջման իր գազանաբարո քաղաքականությունը իրագործելիս, օսմանյան Թուրքիան, առաջին հերթին, հենվում էր քրդական ցեղապետների, բեկերի ու շեյխերի վրա: Ջեռնամուխ լինելով քրդերի հավաքագրմանը, որոնց մեջ «ծայր էին առնում ապստամբական շարժումներ՝ անկախություն ձեռք բերելու համար»[2], թուրքական կառավարողները պրովոկացիոն կերպով գրգռում էին նրանց կրոնական մոլեռանդությունը հայերի դեմ: Նրանք քրդերին համոզում էին, թե հայերը նրանց թշնամիներ են, որոնք քրիստոնյա Եվրոպայի օգնությամբ կամենում են իշխանության հասնել և իշխել քրդերի վրա: Այս պրովոկացիան քրդական վերնախավերին մոտեցնում էր կառավարությանը ու նրանց մղում հայերի դեմ:

Այդ նպատակով Սամի փաշան Վանում խնամքով հավաքագրում էր Վասպուրականի քրդերին, փայփայում ու պետական բարձր աստիճաններում պաշտոնի նշանակում: «Կարնո ճանապարհի վրա,—գրում է «Մշակ»-ի թղթակիցը,—մինչև Վան պատահած բոլոր ավազակապետ քյուրդերն փոխանակ ձերբակալելու, մեծ պատվով քաջալերեց և խրախուսեց զիրենք իրենց ընթացքին մեջ...

1 «Փորձ» № 7—8, 1879, էջ 204—205:

2 Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հատ. Ա, էջ 117:

Հայդարանալի Ալի աղայի մանչ Մուսա աղան, որ 35 գյուղ հրկեզ անելով և անթիվ կողոպուտներով ձգեր Պարսկաստան փախեր էր, փոխանակ պատժելու զայն, դարձյալ կանչեց և յուր հոր տեղ էլազասի կարգեց՝ ամսական 2.000 ղուրուշ ոսկի դրամ հատկացնելով»[3]:

Ռուս-թուրքական պատերազմից հետո Վանում ռուսական փոխհյուպատոս նշանակվեց Կ. Կամսարականը: Այդ առիթը ևս սուլթանական կառավարությունը օգտագործեց քրդական հրոսակներին հայերի դեմ տրամադրելու համար: Նրանք բռնում էին հայերին և լկտիաբար ասում. «Գնա ռուսաց կոնսուլին բարև արա, իր իսկ սիրուն այդ բաներ կանենք, որ ցուցանե մեզ իր տերության զորությունը»[4]:

Հավաքագրելով քրդերին, սուլթանական կառավարությունը Անգլիայի օգնությամբ կազմակերպում էր քրդական միություն՝ քրդերին հայերին հակադրելու և Հայաստանը Քուրդստանով փոխարինելու համար: Այդ իսկ պատճառով անգլիական և թուրքական աղբյուրները փորձում էին ամեն կերպ նվազեցնել հայերի թիվը Թուրքիայի ասիական նահանգներում: «Հայերի և Հայաստանի մասին,—գրում է ռուսական «Գոլոս» թերթը,—Անգլիայում տարօրինակ կարծիք է կազմվել: Ջեյմս Բրայսը կարծում է, որ Հայաստանը ոչ թե երկիր է, այլ աշխարհագրական տերմին, որը չունի ոչ բնական սահմաններ, ոչ ցեղային մեծամասնություն...»[5]:

Նվազեցնելով հայերի թիվը, ընդառաջելով սուլթանական կառավարության միտումներին, Անգլիան Հայաստանին հակադրում էր Քուրդստանը: Էրզրումի անգլիական հյուպատոս կապիտան Տրոտտերը այդ ռեակցիոն կոնցեպցիայի առաջին մունետիկն էր: Այդ դիտավորությամբ Կ. Պոլսի անգլիական դեսպան Լայարդը հայտարարում էր, թե «Վաղ է դեռևս մտցնել ռեֆորմներ Հայաստանում»[6]: Անգլիական կառավարողներն ու նրանց դիվանագետները ուղղակի հայտարարում էին, թե «Չկա Հայաստան, այլ կա Քուրդստան: Այն երկիրը, որ դուք անվանում եք իբրև հայաբնակ, նա Քուրդստան է, ազգաբնակության մեծամասնությունը քուրդ»[7]:

3 «Մշակ», № 207, 1879:

4 «Մշակ», № 89, 1879: Նամակ Վանից:

5 «Մշակ», № 110, 1878:

6 Ա. Ալպոյաճյան, Մինաս Չերազ, էջ 229:

7 «Մշակ», № 189, 1878: «Քյուրդերը և հայերը» հոդվածը:

Հայաստանին հակադրելով Քուրդստանը, հովանավորելով քրդական միություն ստեղծելու սուլթանական կառավարության քաղաքականությունը, անգլիական կառավարողները իրականում աջակցում էին հայերի բնաջնջման նրա ծրագրի իրականացմանը։ Դրա համար էլ Աբդուլ-Համիդը եվրոպական պետություններից ժամանակ էր պահանջում հայերի շարքերը նոսրացնելու և բարենորոգումների հարցը հրապարակից հանելու համար։ «Բ. Դուռը,— գրում է Գր. Արծրունին,—Հայաստանում ռեֆորմներ մտցնելու համար չորս ամիս ժամանակ է պահանջել Եվրոպայից։ Այդ չորս ամսվա ընթացքում նա ժամանակ կվաստակի, քուրդերը կավերեն Հայաստանը, կոչնչացնեն հայերին,—և ահա այն ժամանակ հայոց խնդիրը ինքնիրեն կվճռվի, որովհետև թուրքաց Հայաստանի հայերը բոլորն էլ ջնջված կլինեն»[8]։

Բաֆֆին նույնպես հայերին նախազգուշացնում էր, որ սուլթանական կառավարությունը վրեժ է լուծելու, հայերին բնաջնջելու կուրս է ընդունել և «չորս ամիսը բավական ժամանակ է այդ բոլորը կատարելու համար»[9]։

Քրդական միություն ստեղծելու գործը հանձնարարված էր շեյխ Ուբեյդուլլահին, որը պետք է գրավեր պարսկական Ատրպատականը, այնտեղ մի անկախ քրդական պետություն հիմնելու համար։ Նա իր ծննդավայր Շեմդինան գյուղում հրավիրում է քրդական ցեղապետների համագումար։ Հայերին մութ չմնաց այդ միության ստեղծման բուն նպատակը։ Նրանք հասկացան, որ սուլթանական կառավարությունը այդ միությունը ուղղելու է հայերի դեմ՝ նրանց բնաջնջելու նպատակով։

1880 թ. հուլիսի 2-ին, Վանում եղած ժամանակ, Ուբեյդուլլահի քրդական միությունից հայերին սպառնացող մահացու վտանգի մասին Խրիմյանը գրում էր. «Այլևս կասկած չկա, քրդական միություն է կազմակերպվում կենտրոնական կառավարության դրդումով, որ ուզում է անդամալուծել հայկական հարցը, նրան հակադրելով մի նոր հարց՝ քրդականը։ Այս միության հոգին օսմանյան քաղաքականությունն է։ Շեյխ Ուբեյդուլլահը նրա անվանական կենտրոնն է։ Բահրի բեյը՝ Բեդերխան բեյի որդին, նրա աննկուն գաղտնի գործակալն է... Քրդերին միացնում են... Քրդական միությունը Թուրքիայում իր համար օջախ կազմելու մտքով՝ ամենավայրագ

8 «Մշակ», № 182, 1880։ «Քաղաքական մտածմունքներ»։

9 Բաֆֆի, Տաճկահայք, Թիֆլիս, 1894, էջ 23։

գործողություններ է կատարում Աղբակը, «Հեքյարին» հայերից դատարկելու համար»[10]։ Այսպիսով, քրդական միությունը ահավոր վտանգ էր հայերի գույքի, պատվի ու ֆիզիկական գոյության համար։ Դրան էր ձգտում օսմանյան կառավարությունը։

Ի՞նչ էր մնում անել, ո՞րն էր ելքը։ Հայերը կամ հեզությամբ պետք է դեպի կորուստ գնային, կամ պետք է զինվեին ու պաշտպանեին իրենց կյանքն ու պատիվը։ Նրանց պետք է թույլ տրվեր, որ «իրենք իրենց պաշտպանեն», թույլ տրվեր, որ «հայերը զենք կրեն», «պետք է հայը ինքը հնար ունենա յուր անձը պաշտպանելու»[11],—գրում է Բաֆֆին։

Հայերի համար ստեղծված հուսահատական դրությունից ելնելով, Պարսկաստանից «Մշակ»-ի թղթակիցը գրում է. «Քանի որ գործերը այս դրության մեջ են, քանի որ թուրքաց հայերին սպասում է մի օրհասական հարված, որ հավիտյան վերջ պիտի գտնե նրանց գոյությունը, իմ կարծիքով, թուրքաց հայերին ուրիշ ոչինչ չի մնում, բացի նրանից, որ իրենք հոգ տանեն իրենց անձնապաշտպանության համար, եթե չեն ցանկանում խսպառ ոչնչանալ և ջնջվել աշխարհի երեսից»[12]։

Թուրքական կառավարությունը այնքան սանձարձակ դարձավ, որ Կ. Պոլսի հայոց պատրիարքին հայտնեց, թե «յուր պետության մեջ Հայաստան անուն երկիր չի ճանաչում»[13]։

Իսլամացած քրդական բեկերի միջոցով թուրքական կառավարությունը կամենում էր վերջ տալ հայերին։ Քրդական այդ խավերին իրավունք էր վերապահվում տիրելու հայրենական սեփականությանը և ստրկացնելու նրանց այն աստիճան, որ նրանք ստիպված լինեն հեռանալ հայրենի երկրից։ «Այժմ հայերը, ճիշտ ասած,—գրում է Հ. Լազարյանցը,—անպաշտպան ստրուկներ են կապկպած ձեռքերով, առանց զենք կրելու իրավունք ունենալու, որով գոնե մասամբ կարողանային պաշտպանել իրենց կյանքը, կարողությունը և ընտանիքը այնպիսի չարագործություններից, ինչպես քուրդ Մադոն է, որ յուր զինվորված յոթ սպասավորների միջնորդությամբ կատաղաբար (ինչպես մի գայլ ոչխարի հոտում) սարսափ է գցում հայոց Մուշ գավառի Քյառքյառու գյուղի վրա, ուր

10 Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հատ. Ա, էջ 125։

11 «Մշակ» № 191, 1879։

12 Նույն տեղում։

13 Բաֆֆի, Տաճկահայք, էջ 71։

բնակվում են 115 տուն ճնշված ու հարստահարված քրիստոնյաները»[14]։

Մադոյի, Դիարի, Ջալալեդդինի, Ուբեյդուլլահի նման դահիճները մեծ ծառայություն էին մատուցում սուլթանիզմին՝ հայերի նկատմամբ իր չարանենգ դիտավորություններն ի կատար ածելու, հայերին արտաքսելու, բնաջնջելու գործում։ «Ուրեմն Տաճկահայաստանի այժմյան դրությունը անփոփոխ պահելու համար մի խնդիր է առաջանում,—գրում է Հ. Լազարյանցը,—կամ հայերին պահել մշտական անիրավ ու ստրկական դրության մեջ և կամ հեռացնել նրանց իրենց նախնի հայրենիքից (որտեղ նրանք 44 դար շարունակ ապրել են), և կամ դարձնել երկիրը իսկական Քուրդիստան»[15]։

Ռուս-թուրքական պատերազմից և հատկապես Բեռլինի կոնգրեսից հետո սուլթանական կառավարությունը անհանդուրժելի էր համարում հայերի գոյությունը Օսմանյան կայսրության սահմաններում։ Այդ կայսրության ամրապնդման ու անվտանգության առաջին նախապայմաններից մեկը սուլթանի կառավարությունը համարում էր հպատակ ժողովուրդների և, առաջին հերթին, հայերի ասիմիլացումը։

Կրոնը սուլթանի կառավարության համար հանդիսանում էր քաղաքական մի գործիք ամբոխի մոլեռանդությունը շահագործելու համար։ Ելնելով իսլամիզմի սկզբունքից, ղեկավարվելով նրանով, սուլթանի կառավարությունը կառավարման թուրքական սիստեմը դիտում էր որպես «մարդու կամքի աստվածային արտահայտության բացարձակ ձև», որը «ենթակա չէ ոչ մի ռեֆորմի՝ մասնավորապես, երբ այն վերաբերում է քրիստոնյաների ու մուսուլմանների հարաբերություններին»[16]։

Էմիլ Դիլլոնը նշում է, որ Թուրքիայում «քրիստոնյաների համար օրենք չկա,—«Ռայա»-ն իրավազուրկ է. այն բողոքական հայը, որի երեխան են սպանել, բռնաբարել են աղջկան, տարել են կնոջը, թուրքական կառավարիչները հալածում են մտրակներով, ատելությամբ բանտարկում են»[17]։

Հայերի սոցիալական և ազգային ճնշման ուժեղացմամբ թուրքական կառավարությունը դրանով արագացնում էր ասիմիլացման

14 «Մեղու Հայաստանի», № 129, 1882։
15 Նույն տեղում։
16 «Положение армян в Турции», 1896, էջ 131։
17 Նույն տեղում, էջ XIII։

պրոցեսը։ Նկարագրելով հայերի նկատմամբ գործադրված հարստահարությունների անտանելի չարագործությունները Վասպուրականի նահանգում, Վանի «Մշակ»-ի թղթակիցը հարցնում է. «Ե՞րբ պիտի լինի, որ մեզ համար ազատության ժամը հնչե...»[18]։ Կ. Պոլսից «Մշակ»-ի թղթակիցը գրում է, որ «Մուշեն, Սեբաստիայեն տխուր լուրեր կհասնին, կառավարությունը ժողովրդեն բոլոր տուրքերը հավաքելե հետո, ապագա երեք տարիներու տուրքերն ալ այժմեն կանխիկ կպահանջե, ժողովուրդը հուսահատված է»[19]։

Գավառահայության բազմաթիվ բողոքների ու դիմումների առիթով Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը թուրքական մեծ վեզիրին է ներկայացնում մի բողոքագիր-զեկուցագիր, որի մեջ ասված է. «Ներքո ստորագրող, հայոց պատրիարք, պատիվ ունի հայտնել ձեզ հետևյալը. Տարաբախտաբար ամենքին հայտնի է, որ խաղաղությունը և ապահովությունը Հայաստանից աքսորված է և մեր կրոնակիցները Ասիայում ենթարկվում են ամեն տեսակ դժբախտությունների և հալածանքների»[20]։ Աղերսագրում ասված է միաժամանակ, որ հայերի նկատմամբ գործադրված դազանությունները կատարվում են կառավարության թելադրանքով։

Պատրիարքը պահանջում էր Բեռլինի դաշնագրի 61-րդ և 62-րդ հոդվածների կիրառումը, որի մասին սուլթանի կառավարությունը լսել անգամ չէր կամենում։ Հայերի դրությունը գնալով բարդանում էր։ Բոլոր կողմերից միալար լսվում էին նրանց ողբն ու հառաչանքը։ Հայերը ստիպված դաղթում էին, քրդական ու չերքեզական վերնախավերը՝ կառավարության թողտվությամբ հափշտակում էին հայերի գյուղերն ու ունեցվածքը, իսկ կոլեկտիվ խնամակալություն ստանձնած եվրոպական վեց տերություններն ու նրանց դեսպանները աչքերը փակում ու խուլ էին ձևանում։ «Մեր աշխարհի մեջ մեկ ծայրեն մյուս ծայրը,—հաղորդում են Վաղարշակերտից հայոց պատրիարքությանը,—չի մնաց ավան մը, գյուղ մը, որ յուր ցավալի և արտասվելի պատմություն չունենա, չի մնաց սար մը, ձոր մը, որ հայու արյունով ներկված և քարուքանդ եղած չըլլա։ Թող լսեն բոլոր աշխարհը, թող իմանան մեր հեռավոր ազգայինք մեր վիճակը, և զմեր գաղթականության չի պարսվեն, այնպիսի գաղթականություն, որ 1000 տուն ժողովրդեն 4213 մարդ կո-

18 «Մշակ», № 94, 1878։
19 «Մշակ», № 134, 1878։
20 «Մշակ», № 30, 1878։

ռուս, և առանց սակայն բոլորնիս ալ անգութ քրդերու սրուն զոհ պիտի երթայինք, այնպես որ մեր թշնամիք մոլեռանդությամբ գրգռյալ ծարավն էին մեր արյան վերջին կաթիլին»[21]։

Այս ամենի հիման վրա Ներսես Վարժապետյանը գրավոր զեկուցում է ներկայացնում թուրքական կառավարությանը, որի մեջ ասված է. «Այն նահանգաց մեջ, ուր քուրդ և չերքեզ հրոսակներ կան, կասպատակեն անարգել և համարձակ, սպանություններ կգործեն, կհափշտակեն երկրագործ ժողովրդյան գույքն ու կենդանիները, կվառեն անոնց պարենքն ու խոտի դեզերը, ձմռան եղանակին մեջ գյուղացիք չգտնելով ուտեստ՝ ոչ իրենց և ոչ ալ կենդանյաց համար, կհարկադրեն թողուլ անոնց իրենց կենդանիները։

Հայերը մեծ մասամբ երկրագործությամբ կզբաղվեին գավառաց մեջ և սակայն այն հողերը, որոնք ամենեն հին բնիկ երկրեն՝ տիրացած են արդեն և իրենց քրտամբք արտասվորելով՝ անոնց արյամբ կլնան արքունի գանձն, կխլվին իրենց ձեռքեն զանազան միջոցներով»[22]։

Թուրքական սուլթանին ներկայացրած իր զեկուցագրում Վարժապետյանը առանձնապես մատնացույց է անում Էրզրումի, Վանի, Սասունի, Զեյթունի հայերի ծանր վիճակը։

«Մուշեն, Բաղեշեն և ուրիշ կողմերեն հասած գրություններն ալ նույնպես սոսկալի դժգոհության և այլ և այլ հարստահարության մանրամասն նկարագիրը կընեն, նկարագիր, որ ընթերցողին սոսկում կպատճառե։ Բաղեշեն գրած նամակ մը կրսե, թե տեղվույն հայ ժողովուրդը՝ գործառած հարստահարության չկրնալով դիմանալ, այլուր գաղթելու կպատրաստվի»[23]։

Ներսես Վարժապետյանը բողոքում է քրդական ու չերքեզական հրոսակների սպառազինման, քրդական միության կազմակերպման թուրքական կառավարության քաղաքականության դեմ և նշում է, որ այդ քաղաքականությունը հայերի համար հղի է նորանոր ահեղ սարսափներով։

«Դյուրին է ըմբռնել, թե այս չարիքներն որքան կասստկանան և կգործվին ապերասան կերպով, երբ հեծելազոր գնդեր կազմվեն քուրդերե և ասպատակությամբ, հափշտակությամբ և սպառնությամբ սնանող այս տարրը բանակի մը վերածվելով՝ զինվոր պաշտոնապես իրենց բռնությունը չափ չունին այլևս և տեղ տեղ ժողովուրդն առ ահի իրենց տուներեն անգամ դուրս չեն կարող ելնել. իսկ բողոք անոնց արարմանց դեմ, ոչ քաղաքական իշխանությունը կլսի և ոչ ալ զինվորականը՝ յուրաքանչյուրը ձեռնհաս չգտնելով զինքը, և հեծելազոր քուրդը կլինի ամենազոր ուզածն ընելու։

Պատվո ապահովության մասին գալով՝ աղջիկներ, նոր հարսեր արատավորել—իրողություններ են, և մինչև բանտերու մեջ պատանյաց պատիվ ոճրագործներու տոփանց զոհելու և մեր գերդաստանի պատկանող կիներն ու այրերը մերկացնելով բռնի շինյալ դեպքեր տեղի ունեցած են»[24]։

Սուլթանական կառավարությունը հալածանք էր սկսել հայկական մամուլի, գրականության, լեզվի, դպրոցներում հայոց պատմություն դասավանդելու, առաջավոր հասարակական-քաղաքական գործիչների, գրողների ու հրապարակախոսների դեմ։ Վարժապետյանի զեկուցագրում այդ մասին ասված է. «Առանց փոփոխման և հապավման չարտոնվեր նաև հայոց պատմության տարեգրությունն, ինչպես նաև դասագրքաց մեջ հայոց նախնի թագավորաց, իշխանաց և զորապետաց անունները կհանվին և այլ անուններ կդրվին հանրային կրթության կողմե, ինչպես նաև կարգելվի հրատարակությանց մեջ գործածել քաղաքներու հայերեն անունները։

Ոչ նվազ ցավալի է նաև, որ կուզվի զլանալ Հայաստանյաց եկեղեցուն՝ իր դարավոր հատուկ անուն կրելու իրավունքը, ինչպես կկրե յուրաքանչյուր քրիստոնյա եկեղեցի և ջնջվիլ կուզե Հայաստանյաց բառը»[25]։

Այս զեկուցագրում ճշտորեն արտացոլված են Թուրքիայում եղած ծանր իրադրությունները, հայերի դեմ գործադրված գազանությունների պատկերը։ Հայերի համար անտանելի էր սուլթանական ռեժիմը։ Թուրքական լուծը «հպատակություն ըլլալեն դադարած՝ գերության լուծ եղած է»։ Թուրքիան հայ ժողովրդի համար դարձել էր դժոխային երկիր։ «Ես կկարծեմ,—գրում է Հ. Պարոնյանը,—թե կուսակալ Սեբաստիո բոլոր հայերը բանտարկված են և, հետևապես, դուրսը մարդ չէ մնացել, որ անոնց բանտարկվելն հեռագրով իմացնեն մեզ... Տաճկաստանի մեջ բանտ, բանտի մեջ բանտ...»[26]։

---

21 *«Մասիս», № 30, 1878։*

22 *Մաշտոցի անվան Մատենադարան, Իզմիրլյանի արխիվ, թղթապ. № 14, վավերագիր 521։*

23 *Նույն տեղում։*

24 *Մաշտոցի անվան Մատենադարան, Իզմիրլյանի արխիվ, թղթապ. № 14, վավերագիր 521։*

25 *Նույն տեղում։*

26 *Հ. Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 14, էջ 137։*

2

Հայերի համար աղետ էր 1880 թվականի սուլթանական կառավարության հարկային նոր քաղաքականությունը, որը նրանց կանգնեցրեց սովի ու գաղթի առջև։ Այս նոր քաղաքականությունը ևս հայերին բնաջինջ անելու նպատակ էր հետապնդում։

1877—1878 թվականների պատերազմի ժամանակ Էրզրումի նահանգապետ Սահիդ փաշան բանակի կարիքների համար հայերից հարկադրաբար գանձումներ կատարեց, որոնց դիմաց տրվեցին երաշխավորագրեր այն պայմանով, որ պատերազմի վերջում նրանց հատկացումները կհաշվեն հարկերի ու տուրքերի դիմաց։ Բայց դա մի խաբեություն էր, որը հայերին նյութապես է՛լ ավելի սնանկացնելու դիտավորություն ուներ։

1878 թ. սեպտեմբերին Էրզրումից ռուսական զորքերի հեռանալուց հետո, այդ նույն փաշան իր մոտ է կանչում գյուղական դատարանների ավագներին՝ «Մուխտար մեջլիս»-ներին և առաջարկում է նրանց անհապաղ մտցնել նոր հարկեր։ Գյուղացիները պատասխանեցին, որ բանակի համար կատարված իրենց հատկացումները գերազանցում են պետական պաշտոնական հարկերին ու տուրքերին։ Սահիդ փաշան ետ է պահանջում նրանց տրված բոլոր պարտավորագրերը և հայտարարում, թե պետությունը ոչինչ պարտք չէ։

1880 թվականին Մուշի փաշան հայերին հայտարարեց, որ «բանակի և ձիերի պահպանման համար ձեր հատկացումները պետությունը չի կամենում ընդունել հարկերի դիմաց. հրամայված է հարկման ենթարկել անցած երկու տարվա համար»[27]։

Ըստ նոր հրամանի քրիստոնյաները արական սեռին պատկանող յուրաքանչյուր շնչի համար (երեխայի ծնվելու առաջին իսկ օրից) վճարելու էին երկու մեջիդիե։ Հայերը օրեցօր սպասում էին բարենորոգումների, իսկ թուրքական կառավարությունը արհամարհելով Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը, նորանոր աղետների էր ենթարկում նրանց։

«Ի միջի այլոց Դուռը,—գրում է Հ. Լազարյանցը,—հրաժարվելով բավարարելու հայերին նրանց բոլոր ծախսումների դիմաց, հարկման ենթարկեց ամբողջ երկու տարվա համար։ Այսպիսի բռնությամբ նա հայերին հասցրեց քայքայման, որը սկիզբ հանդիսացավ նրանց կործանարար հարստահարությունների»[28]։

27 ՀՍՍՀ ՊԿՊԱ, Հ. Լազարյանցի ֆ., № 42, գործ 28, թերթ 8։

28 Նույն տեղում։

Մուշի փաշայությունում 14 տարվա ընթացքում «նուֆուս» կոչված հարկը ավելացել է հետևյալ չափով.

Առաջ ամեն մի ծխից գանձվում էր տարեկան մեկ մեջիդիե (1 ռ. 60 կ.), որը փոխարինում էր բնավճարին, իսկ նոր հարկային սիստեմով ամեն մի ծուխը վճարում էր ավելի քան 10 մեջիդին (16 ռուբլի)[29]։

Հ. Լազարյանցը նշում է, որ եթե Աբդուլ Մեջիդի և Աբդուլ Ազիզի թագավորությունների ժամանակներում հայերը դեռ ապրելու որոշ հնարավորություններ ունեին, ապա «ներկայումս, կրկնում ենք, բոլորը դարձել են աղքատներ և այդ դրությունը հայերի համար այլևս տանելի չէ»[30]։

Թուրքական կառավարության և քրդական հարստահարիչների հետ միասին, հայ գեղջուկին հարստահարում էին նաև երևան եկած նոր կեղեքիչները՝ առևտրականներն ու վաշխառուները։

1870-ական թվականներից արևմտահայ գյուղը նույնպես հեղաբեկվում էր։ Կապիտալիստական հարաբերությունները ներթափանցում էին գյուղ, առաջ էին գալիս նոր հարստահարիչներ՝ առևտրականն ու վաշխառուն։

«Ստեպ գյուղացիք Նուֆուսին, աղնամի, էմալքի հարկերի ստակը չունենալով,—գրում է ճանապարհորդներից մեկը,—սեղանավորաց կդիմեն և սաստիկ տոկոսի մը տակ կընկճվին, ուսկից ազատելն այլևս անհնար է։ Ամենուրեք առած են հրեա սեղանավորք, իբրև անգութ վաշխառու անձանց, բայց մեր ազգակից հայ սեղանավորք զանոնց գերազանցեցին»[31]։

Ի՞նչ պետք է աներ խեղճ գեղջուկը։ Պետությունը նրան հարկերով ու տուրքերով խեղդում էր, թուրքական և քրդական հարստահարիչները խեղդում էին։ Չկար ոչ մի շահագրգռվածություն տնտեսության զարգացման գործում։ Տիրապետող կարգերը արգելակում էին աշխատավորների նախաձեռնության զարգացմանը, նյութական բարիքները շատացնելու ամեն մի հնարավորություն։

Թուրքական կառավարության հարկային նոր քաղաքականությունը, աշխատավոր մասսաների անընդհատ աճող հարստահարությունները առաջացրին երկրում սովի նոր սպառնալիք։ Սովը Թուրքիայում դարձել էր խրոնիկական երևույթ։ Համաճարակային էր Վան-Վասպուրականի 1879—1881 թվականների սովը։

29 ՀՍՍՀ ՊԿՊԱ, Լազարյանցի ֆոնդ, № 42, գործ 28, թերթ 8։

30 Նույն տեղում։

31 «Արևելք» № 2002, 1890, «Հայոց գյուղացիի կյանքը» հոդվածը։

Հ. Լազարյանցին ուղարկած իր նամակում Վանեցի Սաքո Թարգուլյանը գրում է. «Պատերազմը իր հետ բերեց ամենասոսկալի ավերիչ սովը, որը հեղեղի նման արագավազ քայլերով տիրապետեց Հայաստանի ամեն խուլ անկյունները, որից ազատվող հայերի կյանքը ընկնում էր սովի սուր գերանդիի տակ, ո՛չ ընտանի անասուն, ո՛չ ցորեն, ո՛չ մի բարիք կար, որով գոնե կարողանային իրենց սովը հագեցնել. տեսած կա՞ք, որ սնունդ ստանալու համար ձիու կտրած սմբակները կրծեն։ Մեկ չափ ցորենը, այսինքն՝ 4 փութը ծախվում է 5 ոսկի կամ մոտավորապես 45 ռուբլի»։

Թուրքիայի ասիական նահանգներում սկսված համատարած սովի մասին առաջին անգամ արտահայտվեց գերմանական «Allgemeinezeitung» թերթը։ Հենվելով այդ թերթի ստույգ տվյալների վրա, «Մշակ»-ը տպագրեց «Սովը Հայաստանում» վերնագրով հոդվածը, որի մեջ ասված է. «...Փոքր Ասիայի քրիստոնյա բնակիչները թողնում են իրենց բնակարանները և գնում են ճանապարհների վրա լեշերով կերակրվելու համար»[32]։

Ամբողջ հայ հասարակայնությունը, նրա հրապարակախոսներն ու պրոգրեսիվ մամուլը զբաղված էին սովի դեմ պայքարելու, ժողովրդին այդ աղետից մի կերպ փրկելու հարցով։ Վանի նահանգի «մի գյուղի մեջ 120 բնակիչներից միայն 40 հոգի մնացին, իսկ մյուսի մեջ՝ 280-ից՝ միայն 70»[33], ասված է «Մշակ»-ի նույն հոդվածում։

Սովի դեմ պայքարելու նպատակով Կ. Պոլսում կազմակերպված «Սովելոց կեդրոնական հանձնաժողովի» հաղորդման մեջ ասված է, որ «Հայաստանում ներկա տարվա աշնանացանը խիստ սակավ և աղքատ է. հողագործական անասունները մեծ մասամբ կոտորված կամ գերված են, և առհասարակ ամբողջ Հայաստանը զուրկ է ցորենից»[34]։

Այդ հանձնաժողովի տեղեկագիրը ազդարարում էր սովի հետ կապված հայերի նոր գաղթի անխուսափելիության մասին և պահանջում էր շուտափույթ օգնություն։ «Մինչև այսօր միայն ձյուն և սաստիկ ձմեռը կարողացան ժողովրդին իր բնիկ երկրի մեջ պահել։ Բայց երբ ձյունը կհալվի և ճանապարհները կբացվեն, այն ժամանակ սովյալ ժողովուրդը մորեխի նման կտարածվի դեպի այն գավառները, ուր կարող են հաց գտնել»[35]։

Տեղեկագրում ցույց է տրվում, որ 1880 թ. մարտին Ալաշկերտում սովամահ են եղել 106 հոգի, Ղարաքիլիսա-Ալաշկերտի մեջ «ավելի քան 3500 հոգի հացի կարոտ չքավորներ են։ Եթե իր ժամանակին նրանց պիտույքների համար արագ օգնություն չհասնի, ապագան խիստ ահավոր է»[36]։

Հայ ժողովրդին սպառնացող այդ նոր, ահավոր վտանգի կապակցությամբ «Ձենք արժանի» վերնագրով «Մշակ»-ի առաջնորդող հոդվածում ասված է, որ սովը այնպիսի չարիքներ պատճառեց, որ հայերը բոլորովին մոռացան 61-րդ հոդվածը։ «Բանը հասել է այնտեղ, որ պետք է միայն մտածել, ինչպե՞ս անել, որ մինչև եկող տարի Հայաստանի հողի վրա գոնե մի հատ տկլոր, բայց կենդանի հայ մնա»[37]։

Սովը բնական պատահարների հետևանք չէր, ինչպես սովորաբար լինում են ժողովուրդների կյանքում։ Այն գլխավորապես թուրքական կառավարության, քրդական բեկերի, չերքեզական վերնախավերի անողոք հարստահարությունների արդյունքն էր, որը հետապնդում էր հայերի բնաջնջման քաղաքականության իրագործումը։

«Սով Հայաստանի մեջ» Պերայից գերմանական «Allgemeine Zeitung»-ը 1880 թ. ապրիլի 1-ի իր առաջնորդողում գրում է. «Վանի նահանգի բնակիչների մեծամասնությունը հայերն են կազմում, այդ պատճառով հայ հոգևորականությունը համոզված է, որ թուրքաց իշխանությունը, արհեստական կերպով սաստկացնելով ժողովրդական աղքատությունը, իր նպատակն է դարձրել ոչնչացնել այդ մեծամասնությունը։ Եվ ճշմարիտ ամեն բան արվում է այդ ենթադրությունը արդարացնելու համար»[38]։

Սուլթանական կառավարությունը, շարունակում է նույն թերթը, Մուսա բեկ Հայդերալիին գայմական նշանակեց 20 լիրա ռոճիկով, որը «երեք տարիների ընթացքում 36 հայաբնակ գյուղեր այրեց»[39]։

32 «Մշակ», № 64, 1880։
33 Նույն տեղում։
34 «Մշակ», № 65, 1880։

35 «Մշակ», № 65, 1880։
36 Նույն տեղում։
37 «Մշակ», № 66, 1880։
38 «Մշակ», № 70, 1880։
39 Նույն տեղում։

Սուլթանական ռեժիմի կողմից հայերին հալածելու, սովի մատնելու, Հայաստանը ամայացնելու վերաբերյալ եղած բազմաթիվ ստույգ փաստերի հիման վրա ռուսական «Գոլոս» թերթը հանգում է այն հետևության, որ «Գործի այսպիսի դրությունը բնաջինջ է անում քրիստոնյաներին»[40]։ Թերթը շատ իրավացիորեն սուլթանական կառավարությանը մեղադրում է ոչ միայն Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով հայերի կյանքում բարենորոգումներ մտցնելու ուղղությամբ իր ստանձնած պարտավորություններից հրաժարվելու, այլև 62-րդ հոդվածը կոպիտ կերպով խախտելու համար։ «Թուրքաց կառավարության ոչ մի բաժնի մեջ,— ասում է Բեռլինի դաշնագրի 62-րդ հոդվածը,— դավանության զանազանությունը չի կարող զրկել մեկին քաղաքային կամ քաղաքական իրավունքներ վայելելուց և հասարակական պաշտոններ վարելուց։ Դատարանների մեջ, դավանության վրա ուշադրություն չդարձնելով, ամենքը կարող են վկա լինել»[41]։

Պրոֆեսոր Էմիլ Դիլլոնը վկայում է, որ Թուրքիայում քրիստոնյաները ծանր հարկման էին ենթարկվում։ Էրզրումում 8000 մահմեդական տնտեսություն մուծում էր 139.000 պիաստր (1/100 թուրքական լիրա), իսկ 2000 քրիստոնյա ընտանիքներ մուծում էին 430.000 պիաստր[42]։

Ծանր էր հայ ժողովրդի դրությունը։ Սովը տանջում էր նրան։ Վասպուրականում սովատանջների թիվը հասնում էր 60.000-ի, որի կեսից ավելին հայեր էին[43]։

Կ. Պոլսում, սովի դեմ պայքարող կենտրոնական հանձնաժողովի նախագահ Խրիմյանը դիմում է Ալեքսանդր Թայիրովին և խնդրում է կազմակերպել արևելահայ հատվածի մասնակցությունը սովյալներին օգնելու գործին։ Դիմումի մեջ ասված է. «Եթե թշվառությունն յուր ամեն ձևերով կծանրանա հայոց ազգին այս մարտիրոս ժողովրդյան վրա, և մեր հոգին ի խոր կխոցե, կմխիթարվենք, սակայն և կքաջալերվինք տեսնելով, որ մեր ազգայիններն աշխարհի ամեն կողմերեն որ ցիրուցան տարրերը սփռել է զիրենք ճակատագրին, եղբայրության սիրով կապված են իրարու և համերաշխաբար վտանգի ժամերու մեջ կփութան զիրար պաշտպանել,

40 «Մշակ», № 74, 1880։

41 Նույն տեղում։

42 Տե՛ս «Положение армян в Турции», էջ XIII։

43 Լեո, Գրիգոր Արծրունի, հատ. 3, էջ 142։

այնպես որ երբ Հայաստանի ժողովրդեն հարված մը ընդունի, Պոլսո, Տփխիսի, Ռումինիո և Մանչեսթրի հայոց սիրտը կարյունի»[44]։

Այս դիմումը լայն արձագանք գտավ ողջ հայության շրջաններում։ «Մշակ»-ը հավաքեց և Կ. Պոլիս ուղարկեց 36.000 ռուբլի։ Ռուսահայերի կողմից ուղարկվեց 100.000 ռուբլուց ավելի։ «Այս պատկառելի գումարը այն համերաշխության և համակրելի չափն է ցույց տալիս,— գրում է Լեոն,— որ տածում էին ռուսահայերը դեպի իրենց դժբախտ եղբայրները»[45]։ Այսպիսով, հայ ժողովրդի երկու հատվածների մերձեցման և եղբայրական կապերը գնալով ամրանում էին։

Բայց ամենուրեք եղած օգնությունը չկարողացավ կասեցնել հայերի մասսայական գաղթը, որը մի ահավոր ցասում էր՝ ուղղված թուրքական հանցագործ վարչական ռեժիմի դեմ։ Էրզրումից ռուսական զորքերը հայրենիք վերադառնալիս, հայերը վճռեցին գաղթել՝ իրենց կյանքը թուրքական ու քրդական մոլեռանդների կատաղի հարձակումներից փրկելու համար։ Այդ նույն ժամանակ քաղաքում գտնվող թուրքական կառավարության ներկայացուցիչ Ալի էֆենդի Արաբզադեն հրճվանքով բացականչեց. «Թող կորչեն այդ հայերը, իսկ նրանց տեղ թող գան այստեղ ռուսահպատակ մահմեդականները, գոնե խիտ մահմեդական ազգաբնակչություն կունենանք, ազատ քրիստոնեական տարրերից»[46]։

Սուլթանական իշխանությունները հասկանում էին, որ ամայացնելով Հայաստանը, իրենք զրկվում են ամենակենսունակ տարրերից։ Բայց հանդուրժում էին, որովհետև այդ էր թելադրում նրանց հայաջինջ քաղաքականությունը։

Օգտվելով հարմար առիթից, անգլո-ամերիկյան միսիոնարներն աշխատում էին որսալ անպաշտպան հայերին և իրենց երկիրն ուղարկել նրանց իբրև էժան բանվորական ձեռքեր։ Հայերի գաղթականությունը ուրախություն ու երջանկություն էր անգլո-ամերիկյան կապիտալիստների համար։ Ուստի «այդպիսի հանգամանքներում զարմանալի չէ,— գրում է «Մշակ»-ը,— որ հայերը ամերիկյան միսիոնարների դրդմամբ, մեծ թվով գաղթում են դեպի հեռավոր Ամերիկան նոր բաղդ փնտրելու»[47]։

44 Մաշտոցի անվան Մատենադարան, Ա. Երիցյանի արխիվ, թղթապ. № 149, վավ. 144։

45 Լեո, Գրիգոր Արծրունի, հատ. 3, էջ 147։

46 Գր. Արծրունի, Թուրքաց հայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1894, էջ 34։

47 «Մշակ», № 67, 1886։

Դեռևս 1873 թ. Կ. Պոլսի «Մեղու»-ն անգլո-ամերիկյան միսիոնարների ռեակցիոն գործունեության մասին «Բռնի կրոնափոխություն» վերնագիրը կրող իր հոդվածում գրում էր. «Միայն Լոպերթյան վարժարանի պատվելի տնօրենը չէ, որ հայերը կրոնափոխության կհրավիրե, Սեբաստիո կուսակալն ալ ողջ ըլլա, ձեռքեն եկածին չափ կաշխատի կոր անվնաս բռնությամբ տանկացնելու։

Ո՛վ Լուսավորիչ Հայր, ի՞նչ է քու հանցանքդ, որ մեկ կողմեն Լոյալարի աշակերտները, մյուս կողմից Լուտերի առաքյալները, երրորդ կողմից ալ Մուղթիմը քու զավակներդ գրկեդ հափշտակելու կաշխատին»[48]։

Անգլո-ամերիկյան միսիոնարները կապիտալի կողմից փորձված ագենտներ էին, որոնք քայքայիչ աշխատանքներ էին տանում Թուրքիայում և հայերին հրահրում էին դեպի գաղթականության ուղին։ Նրանք իրենց գործունեությամբ օգնում էին թուրքական կառավարությանը՝ Թուրքիան հայերից մաքրելու գործում։

Անգլո-ամերիկյան միսիոնարական ընկերության կողմից հայերին դավանափոխելու նենգ դիտավորությունների առիթով 1886 թ. հունվարին՝ «Ցտար միսիոնարության առթիվ» վերնագիրը կրող իր առաջնորդող հոդվածում «Արևելք»-ը գրում է. «Շատ անգամ արտահայտած ենք սա գաղափարը, թե ամերիկացի և եվրոպացի կրոնական և բարեգործական ընկերությանց ու հաստատությանց հայոց մեջ կրոնափոխություն հառաջ բերելու համար ըրած ճիգերն ու վարած մեծամեծ գումարներն ո՛չ մարդկության և ո՛չ ալ քրիստոնեության տեսակետով օգտակար բան մը չունին... Եթե միսիոնարք կուզեն անպատճառ մեր մեջ մնալ, թող լավ համարին ուժ տալ գիտությանց, լեզվաց և արհեստից մշակման, նպաստելով քաղաքակրթության ծավալման»[49]։ «Արևելք»-ը միաժամանակ հրապարակում է անգլիացի եկեղեցական Պ. Իսահակ Դեյլի՝ 1887 թ. դեկտեմբերի 27-ին «Թայմս» թերթում տպած հոդվածը, որն ուղղված էր միսիոներների դեմ։ Իսահակ Դեյլը նշավակում է նրանց որպես շահամոլների։ Նա գրում է. «Միսիոնարական ընկերության դեմ մեր ըրած ամբաստանությունը, որ չէ հերքված, սա է թե ընկերություն մը, որ հեթանոսները դարձի բերելու հռչակյալ նպատակ ունի՝ դրամ կվատնե յուր նպատակեն դուրս բաներու համար»[50]։

48 «Մեղու», № 173, 1873, Կ. Պոլիս։
49 «Արևելք», № 1295, 1888։
50 «Արևելք», № 1205, 1888։

Անգլո-ամերիկյան միսիոնարների գործունեության էլակետը հայերի շարքերում պառակտում առաջացնելու քաղաքականությունն էր, որը էլ ավելի էր քաջալերում թուրքական փաշաներին, քրդական բեկերին ու շեյխերին՝ հայերին ճնշելու, հարստահարելու, քնավեր անելու համար։

Կ. Պոլսի հայոց պատրիարքի մի պաշտոնական հրատարակության մեջ, որը վերաբերում է 1876 թվականին, հիշատակված են 276 հայկական գյուղեր, որոնց հողերի մեծ մասը հափշտակված են եղել քրդական բեկերի ու թուրքական ազդեցիկ պաշտոնյաների ձեռքով[51]։ Պատրիարքարանի 1912 թվականի ֆրանսերեն լեզվով հրատարակված տեղեկագրի մեջ մանրամասն տեղեկություններ են հիշատակված զանազան ժամանակներում հայերից խլված հողերի, տների և առհասարակ անշարժ կալվածների մասին։ «...Հափշտակված են արտեր 26.185, տներ 2591, խաղողի և այլ այգիներ 1190, մարգեր 2007, կառուցվածքներ 1066, արոտներ 460։ Իսկ մի ուրիշ մասնավոր աղբյուր հափշտակված հողերի ընդհանուր տարածությունը որոշում է 1.030.000 օրավար»[52]։

Սուլթանական կառավարության հովանավորությամբ ու թելադրանքով հայ ժողովրդին ծանր աղետներ էր պատճառում շեյխ Մուսա բեկը։ Նա իր ավազակախմբերով մի մահաբեր փոթորիկ էր, որ անցնում էր հայերի վրայով՝ մահ սպառնալով նրանց։ Մուսա բեկը «քաջալերված թուրք կառավարութենեն,—գրում է Արմենուհի Տեր Կարապետյանը (Գևոնյանը),—ոչ միայն կը կողոպտեր և անյուր տանջանքներու կենթարկեր հայ գյուղացիները, այլ նաև կարատավորեր հայ շինականի պատիվը»[53]։

Տարոնի Զըխուր Պուլանըգի շրջանի հայ աշխատավորները ահ ու սարսափի տակ էին։ Բացառիկ ծանր էր Ղարց, Արտոնք, Վարդենիս և Արգավան գյուղերի հայերի վիճակը։ Այդ ավազակապետի ու նրա հրոսակների չարագործություններից հուսահատված՝ հայերը բռնում էին գաղթի ճանապարհը։ Մուսա բեկը, հռչակավոր ավազակապետ Միրզա բեկի որդին, գիտեր հայերեն, ընտելացել էր հայերի նիստ ու կացին, իրեն իրավուք էր վերապահում մաս-

51 Տե՛ս «Տեղեկագիրք գավառական հարստահարության», Կ. Պոլիս, 1876, էջ 10, 13։
52 Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հատ. Ա, էջ 51։
53 Ա. Տեր Կարապետյան (Գևոնյան), Գյուլիզար, Փարիզ, 1946, էջ 9։

նակցելու հայկական խնջույքներին ու հարսանյաց հանդեսներին և իր հարեմի համար ընտրում էր սիրուն աղջիկներ ու նորապսակ հարսներ։ Տղամարդկանց առջև նա համարձակորեն արատավորում էր նրանց ընտանեկան պատիվը։ «Հարսանիքեն վերջ,—գրում է Ա. Տեր Կարապետյանը (Գևոնյանը),—ոտնակոխ ընելով ամեն սրբություն, փեսայեն առաջ կը մտներ հարսին սենյակը և բռնի կը հագեցներ իր գազանային կրքերը»[54]։

Հայերը Ղարց գյուղի ռես Միրոյի և Արգավան գյուղի ռես Օհանի գլխավորությամբ խնդրագրեր ու հեռագրեր են ուղարկում Բիթլիսի վալիին և Մուշի մյութեսարֆին՝ Մուսա բեկի չարագործություններից իրենց ազատելու նպատակով։ Այդ դահիճը ձևականորեն երեք օր կալանավորվում է, բայց վալի էտհեմ փաշային մոտիկ լինելու և 300 ոսկի կաշառք տալու ճանապարհով ազատվում է երեք օրից հետո։ Մուսա բեկը վճռում է տակնուվրա անել հայկական գյուղերը և սպանել հեռագիր տվողներին։ Նրան հաջողվում է Բիթլիսից գյուղ վերադառնալիս խարույկի վրա այրել ռես Օհանին, կողոպտել Միրոյի ընտանիքը և հափշտակել նրա աղջկան՝ Գյուլիզարին։

1889 թ. մայիսի 7-ի (19-ի) գիշերը Մուսա բեկը յուր 30 ավազակներով գնում է Հափավան գյուղը, երբ արդեն բոլորը քնել էին։ Մեծում է գյուղի աչքի ընկնող Վերգոյանի տան դուռը։ Մանուկ անունով մեկը բացում է դուռը և ներս հրավիրում անկոչ հյուրին։ Այդ նույն ժամանակ Մուսա բեկը հանում է պատյանից սուրը և սպառնալից կերպով հարցնում՝ «Որդիդ ո՞ւր է»։ Նրան պատասխանում են, որ «այսօր նա տուն չի եկել»։ Այդ գազանը ձեռքի սրով ծանր վիրավորում է տանտիրոջը։ Տնեցիները նրա որդի Հակոբին ծանր հիվանդ վիճակում մի տեղից մյուս տեղն են փոխադրում՝ նրա կյանքը փրկելու համար։ Բայց այդ գազանը որսի շան հոտառությամբ հետքը գտնում է, քաշում, բերում է հրապարակ և «հորն ու որդուն տեղն ու տեղը սպանում»[55]։

Հայերի բողոքի ձայնը հասնում էր աշխարհի բոլոր կողմերը։ Եվրոպական հասարակայնության աճող ցասումը լռեցնելու նպատակով, սուլթանական կառավարությունը կամեցավ դատի տալ Մուսա բեկին։ Նա 1889 թ. հուլիսի 26-ին շոգենավով մեկնում է

54 Ա. Տեր Կարապետյան (Գևոնյան), Գյուլիզար, Փարիզ, 1946, էջ 9։

55 «Արևելք», № 403, 1889։ «Մուսա բեկի չարագործությունները» հոդվածը։ էջ 27։

Կ. Պոլիս։ Աբդուլ-Համիդը նրան դիմավորելու է ուղարկում Հասան և Պահրի փաշաներին՝ կայսերական պալատը հրավիրելու համար։ Մուսա բեկը իջևանում է Պահրի փաշայի տանը, որը սուլթանի ընտանիքի հետ բարեկամական կապեր ուներ։ Քյամիլ բեկի հովանավորության ներքո, այդ դահիճը երեք ամիս հանգիստ շրջում է Կ. Պոլսում։

Հիսուն մշեցիներ մեկ շաբաթ գտնվում էին Կ. Պոլսում՝ Մուսա բեկի դատավարությանը մասնակցելու, իրենց կրած տառապանքների մասին դատարանին պատմելու համար։ Այդ հիսուն մշեցիների թվումն էր նաև Գյուլիզարը, որին հաջողվեց Կ. Պոլիս ընկնել՝ հնարքներ գործադրելու ճանապարհով։ Մուսա բեկի հրոսակներից Զազոն, որի հսկողության տակ էր գտնվում Գյուլիզարը, հայտնում է նրան, որ սուլթանի հրամանով պետք է մեկնի Կ. Պոլիս։ «Մուսա բեկին խոստացած եմ մահվան գնով միայն քեզ հասցնել կառավարության,—ասում էր Զազոն,—շուտ ըրե, պետք է մեկնենք»[56]։

Ներքուստ Գյուլիզարն անսահման ուրախության մեջ էր, բայց Զազոյին համոզում էր, որ ինքը հոգով քուրդ է և եթե սուլթանի մոտ էլ տանի՝ կհաստատի իր վճիռը։ Զազոն զայրացած բացականչում է. «Չէ, ես քո խոսքիդ չեմ հավատա, վրադ վստահություն չունիմ. պետք է մեկնինք»[57]։ Գյուլիզարը հագնում է քուրդ տղամարդու հագուստ և տասը քրդերի ուղեկցությամբ ճանապարհ է ընկնում դեպի Կ. Պոլիս։ Նրան ուղեկցող քրդերից մեկը խոստովանություն է պահանջում քրդությանը հավատարիմ մնալու համար։ Գյուլիզարը առանց վարանելու պատասխանում է. «Բակ էֆենդի, ճիշտ է, շատ ջահելություններ ըրի, աչքերս ալ վնասվեցան, սակայն կը տեսնեմ, որ սխալված եմ։ Խենթ չեմ, որ երթամ առնեմ հայ աղքատ հոտաղ մը։ Սուլթանին ալ տանիք, վալիին ալ, ես քյուրդ եմ, մի վախենաք զիս դատարան տանելե»[58]։

Հասնելով Բիթլիս, Վալին Գյուլիզարին հարցնում է. «Աղջիկս, քեզ հոս բերած ենք սուլթանին հրամանով. մի քաշվիր ու համարձակ պատասխանե հարցումներուս։ Մուսա բեկ քեզ բռնի՞ տարավ, թե քու կամքովդ գացիր իր տուն»։ Գյուլիզարը չի պատասխանում։ Վալին շարունակում է. «Աղջիկս, ինչո՞ւ չես պատասխաներ, ըսե

56 Ա. Տեր-Կարապետյան (Գևոնյան), Գյուլիզար, էջ 67։

57 Նույն տեղում։

58 Նույն տեղում, էջ 91։

տեսնեմ, քեզ ինչպե՞ս տարավ Մուսա բեկ»[59]։ Գյուլիզարը սկսում է պատասխանել Վալիի հարցերին։ «Վալի էֆենտի, դուք ալ գիտեք, որ Մուսա բեկ գիշերանց 150 քյուրտերով հարձակվեցավ հորս տան վրա, սպանեց ծնողքս, կողոպտեց մեր տունը, զիս առևանգելով բռնի տարավ Իվներ»[60]։

«Հայ ես, թե՞ թուրք» Վալիի տված կրկնվող հարցերին Գյուլիզարը արիաբար պատասխանում է. «Վալի փաշա, ես հայ եմ. կաղաչեմ տվեք զիս իմ մորս։ Ես հայ աղքատ հոտաղ մը կառնեմ, չեմ ուզեր հարուստ բեկի կին ըլլալ»[61]։ Վալին Գյուլիզարին ծնողներին է հանձնում, որոնց հետ Կ. Պոլիս է մեկնում և դատարանի առջև հայտարարում. «Ես քրիստոնյա եմ և քրիստոնյա պիտի մեռնիմ»։

Մուսա բեկը և քրդական մյուս ավազակապետները կատարում էին հայերի բնաջնջման սուլթանական կառավարության պատվերը։ Այդ իսկ պատճառով Աբդուլ-Համիդը դատարանին և դատախազությանը Մուսա բեկին արդարացնելու հրահանգ էր տվել։ Դրա համար էլ դատավարության խեղկատակության ժամը մոտենալիս, Մուսա բեկը սպառնալով մշեցիներին ասում էր. «Քիչ ատեն Մուշ պիտի վերադառնամ և այս անգամ ձեռքս անցած հայերը ողջ չպիտի թողում, որպեսզի Պոլիս չգան և ձեզ պես փողոցներ պտտելով՝ ինծի պես բեկի դեմ բողոքեն։ Խընդրրներ... այս անգամ եթե Մուշ ուղևորիմ, հայության նմուշն իսկ չպիտի թողում։ Մուշ եկեք և հոն կը տեսնվինք...»[62]։

1890 թ. դեկտեմբերի 5-ին թուրքական դատարանը արդարացրեց Մուսա բեկին և եվրոպական դեսպաններին հասկացնում էր, թե նրա դեմ հարուցված մեղադրանքները «անհիմն են», թե «հայերը զրպարտիչներ» են։ Այսպիսով, արյունարբու Մուսա բեկին պատժելու փոխարեն, սուլթանական կառավարությունը մեղքը բարդեց հայերի վրա և դատական խեղկատակության ամբողջ ծախսերը գանձեց նրանցից։

Հայերի համբերության սահմանն անցել էր, դանակը ոսկրին էր հասել. նրանք ստիպված դիմում էին գաղթի, որովհետև իրենց կանանց ու դեռատի աղջիկների բռնի մահմեդականացումը, ընտանեկան պատվի արատավորումը թուրքական ու քրդական մոլեռանդների կողմից, շատ ավելի մահացու վիրավորանք էին, քան հայրենի հողից ու սեփականությունից զրկվելը։

Ֆրանսիացի պատմաբան Ժակ դը Մորգանը ցույց է տալիս, որ 1870—1890-ական թվականներին 100.000 հայեր բռնի ճանապարհով «կը մահմեդականացվին, 100.000 ավելի կիներ, դեռատի աղջիկներ կառևանգվին և կը զրկվին հարեմները»[63]։

Հայերի ասիմիլացման իր քաղաքականությամբ սուլթանական կառավարությունը խաչ էր քաշում նրանց կյանքում բարենորոգումներ մտցնելու պահանջի վրա։ «...քաղաքական նմանօրինակ կազմակերպության (իմա՝ ինքնավարության—Հ. Վ.) մտածողությունն իսկ,—գրում է Ժակ դը Մորգանը,—նվաստացուցիչ էր, մարգարեի պատվերներուն հակառակ, ալլահի ծառաներուն անարժան, մինչդեռ ղորանի «Սուր և պատերազմ» գլուխներու պատվիրած բնաջնջումը նվիրական գործ մը կթվար։ Ապտյուլ-Համիդ՝ քաջալերված Վիլհելմի բռնած դիրքեն, մահմեդականներու հանդեպ ունեցած համակրութենեն, կորոշի կոտորել»[64]։

Այսպիսով, սոցիալական ու ազգային ճնշման ուժեղացումը, անողոք հարստահարությունները, հարկերի ու տուրքերի եռապատկումը, հողազրկումն ու արտաքսումը, բռնի իսլամացումն ու սպանությունները, ահա այն մեթոդները, որոնք գործադրվում էին օսմանյան պետության կողմից իր հայաջինջ քաղաքականությունը առաջ մղելու համար։ «Արևելյան խնդիրն իր սաղմի մեջ խեղդելու համար,—գրում է Խ. Սարաճյանը,—օսմանյան պետությունը մի հատիկ սիստեմ նախընտրեց, այսինքն՝ սպանել, հափշտակել, բռնի իսլամացնել և ամեն շարժում տեղն ու տեղը խեղդել, մինչև որ ժողովուրդը իր մարդկային տարրական իրավունքը, այն է՝ իր գոյությունը պահպանելու համար հարկադրվեցավ ըմբոստանալ և զենքի դիմել»[65]։

Դիվանագիտական ճանապարհի վրա պարտություն կրած և բոլորովին հուսախաբված հայերը պետք է ուժեղացնեին և իրոք ուժեղացրին ազգային-ազատագրական շարժումը, որը ռուս-թուրքական պատերազմից և Բեռլինի կոնգրեսից հետո նոր եռանդ ու նոր թափ ստացավ։

---

59 Ա. Տեր Կարապետյան (Գևոնյան), Գյուլիզար, էջ 91։

60 Նույն տեղում։

61 Նույն տեղում, էջ 95 և հետո։

62 Հ. Ճանկյուլյան, Հիշատակներ հայկական ճգնաժամեն, Կ. Պոլիս, 1913, էջ 170։

63 Ժակ դը Մորգան, Հայ ժողովրդի պատմությունը, էջ 346։

64 Նույն տեղում, էջ 330։

65 «Մշակ», № 26, 1913։

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը ինքնաբուխ էր և ոչ թե արհեստական մղումների, առանձին մարդկանց ցանկությունների կամ դրսից եղած ներգործությունների արդյունք, ինչպես կարծում էին առանձին ազգային նիհիլիստներ և պատմության թուրքական կեղծարարները։

Ազգային ինքնագիտակցության եկած հայերը հասկացան, որ փրկության հույսը միայն իրենց վրա պետք է դնել։

«Բռնակալը,—գրում է Ռաֆֆին,—ինքն է պատրաստում իր համար թշնամիներ... Եթե Թուրքը այսպես չվարվեր մեզ հետ, մենք մինչև անգամ կսիրեինք նրան, թող նա մեր մսից և արյունից չլիներ»[66]։

1870—1880-ական թվականներին քաղաքական որոշակի նպատակներով երևան են գալիս գաղտնի կազմակերպություններ, տեղի են ունենում հայերի առանձին ապստամբական ելույթներ, որոնք ազգային-ազատագրական շարժման վերելքի ցուցանիշներ էին։

1872 թվականին Վանում հիմնվում է «Միություն ի փրկություն» անունով գաղտնի կազմակերպություն, որի նպատակն էր ազատել հայերին թուրքական բռնապետական ծանր ու անտանելի լծից։ Միության անդրանիկ կոչում լրիվ կերպով արտացոլված է գավառահայության ծանր վիճակը. «Գնաց մեր պատիվը, պղծվեցան մեր եկեղեցիք, առևանգվեցին մեր հարսունք ու երիտասարդունք, հատկապես կխլեն մեր իրավունք մեր ձեռքեն և իսպառ մեր ազգության սերունդը ջնջելու կճգնեն։ Վասն ի որո կամ պետք է մեռնել և չտեսնել այս սարսափելի վիճակը, և կամ վերակենդանություն ստանալ ի ծոց հայրենյաց։ Ալ ինչ կսպասենք։ Կյանք չունենք, մահե կվախենանք։ Ստացվածքներս ու վաստակներս մերը չէ, եկեղեցիք ունինք ամեն օր հալածանաց մեջ է ու կնախատվի։ Զասունք հերիք սպասելով՝ պահ մը արթնանանք։ Միախորհուրդ երդվինք ի խաչ և փրկության միջոց փնտրենք, ապա թե ոչ կորուստ մեր ի սպառ»[67]։

Ազատագրական պայքարի այս կոչը իր արձագանքն ունեցավ։ 1872 թ. ապրիլի 26-ին Անգեղ գյուղի բնակիչները նամակով իրենց համակրությունը հայտնեցին միավորվելու միության դրոշի ներքո՝ «Պատրաստ եմք արյան և մահու չափ ձեզ հետ քալելու,—

66 Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 3, էջ 254։

67 «Դիվան հայոց պատմության», հ. ԺԳ, Թիֆլիս, 1915, էջ 270—271։

ասված է նրանց նամակում,—որ ուր զմեզ փրկության հույսը զմեզ տանի...»[68]։

Վանում հիմնված այդ միությունը իր պայքարի հաջողությունները և ժողովրդի փրկությունը կապում էր Ռուսաստանի անմիջական օգնության հետ։

1872 թ. ապրիլի 28-ին Միությունը դիմում է Կ. Պոլիս՝ ռուսական դեսպանին՝ ռուսական հպատակություն ընդունելու համար։ Դիմումի մեջ ասված է. «...ուստի ալ չկարողանալով տոկալ այս սարսափելի վիճակին և աննկարագրելի լուծին՝ Ձեզ կդիմենք այսօր, թե ինչ միջոց որ նպաստավոր է այս չարիքներեն փրկվելուն՝ պատրաստ ենք արյան ու մահու չափ ձեզ հետ քալելու. թե՛ ռուսանալ՝ ռուսանանք միասին, թե՝ գաղթել՝ գաղթենք միասին, թե՛ վերջապես մեռնել հասած է մեզ՝ մեռնենք, բայց փրկվենք, այս է մեր աղերսն թե՛ առ մեզ և թե՛ առ աստված... որ չբաժանվենք իրարմե, բայց թե մահվամբ միայն»[69]։

Միությունն պատգամավորներ է ուղարկում Երևան և Թիֆլիս՝ իր դիմումը ռուսական կայսրին հանձնելու, Վանում ռուսական հյուպատոս նշանակել տալու, հայերի կյանքն ու գույքը ապահով դարձնելու նպատակով։ Պատգամավորությանը գլխավորում էին Հակոբ Կալոյանը և Նշան Շիրվանյանը, նրանք դիմումը ներկայացնում են Երևանի նահանգապետին և Կովկասի փոխարքային։

«Միություն ի փրկություն» գաղտնի կազմակերպության անդամները գյուղացիներ, արհեստավորներ և մանր առևտրականներ էին։

Արևմտահայերին քաջալերելով իրենց մղած ազգային-ազատագրական պայքարում, Գր. Արծրունին համառորեն ու վստահորեն պնդում էր, որ նրանք այդ պայքարի ընթացքում օգնություն կստանան Ռուսաստանից։ «Մենք ցավակցելով մեր Թուրքահպատակ եղբայրների դառն վիճակին,—գրում է Գր. Արծրունին,—մեր բոլոր հույսերը նոցա դրության բարվոքման մասին դնում ենք միմիայն Ռուսաստանի վրա, Ռուսաստանի հզոր օգնության վրա և հավատացած ենք, որ Ռուսաստանը կօգնի նրանց դրության թեթևացման համար»[70]։

68 «Դիվան հայոց պատմության», հ. ԺԳ, Թիֆլիս. 1915, էջ 271—272։

69 Նույն տեղում, էջ 272։ Տե՛ս նաև Մ. Գ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ», 1955, Երևան, էջ 169—171։

70 «Մշակ», № 23, 1877։

Գաղտնի կազմակերպությունների ստեղծման, զինված ապըստամբության դիմելու գործում նշանակալից դեր խաղաց Բեռլինի կոնգրեսի հայ պատգամավորության ղեկավար Խրիմյան Հայրիկը Կ. Պոլսի մայր եկեղեցու իր նշանավոր ելույթով դիմում է ժողովրդին՝ «Հայաստանցիներ այսուհետև սիրեցեք երկաթը, ձեր փրկությունը երկաթով կլինի. այն պատվական երկաթով ամեն բան կշինվի, խոփ, մանգաղ, սուր, հրացան և այլն։ Ձենք գործածել սկսեք»[71]։

1878 թվականին Զեյթունը նորից բարձրացրեց ազգային-ազատագրական պայքարի դրոշը։ Այս անգամ Զեյթունի հայ դյուցազունները ոտքի հանեցին նաև լեռնական քուրդ աշխատավորներին, որոնք նույնպես կեղեքվում ու ճնշվում էին ինչպես թուրքական պետական իշխանության, այնպես էլ նրա տեղական հարբստահարիչների կողմից։ «Զեյթունի ապստամբությունը կշարունակվի,—գրում է Ա. Արփիարյանը,—Խոզանի քուրդ լեռնականները, որք ժամանակով գրեթե ինքնագլուխ էին զեյթունցիների նման և հետո թուրքաց կառավարության լուծի տակ հնազանդած էին, այժմ ապստամբած են՝ հայոց հետ դաշնակից եղած։ Այդ ապստամբության գլուխ եղած է Ահմեդ փաշան, որ ժամանակով Խոզանի կառավարիչն էր»[72]։

Ազգային-ազատագրական շարժման հիմնական ու գլխավոր ուժը հայ աշխատավորությունն էր։ Ազատագրական պայքարի գաղափարախոսությունը ընդառաջում էր նրա մղած պայքարին, օգնում էր նրա ազգային ինքնագիտակցության բարձրացմանը, նրա ինքնաճանաչմանը, մոբիլիզացնում, կազմակերպում և ուղղություն էր տալիս նրա պայքարին։ Նա զենքով և հաճախ անզեն կռվում էր ֆեոդալական և ազգային ճնշումների, բռնությունների ու կամայականությունների դեմ։

Սուլթանական բռնապետության դեմ ազգային-ազատագրական պայքար մղող հայ ժողովուրդը գիտակցում էր ընդհանրակյա կազմակերպություններ ստեղծելու, զինված ելույթների դիմելու անհրաժեշտությունը։ «...Թուրքիայի հայը,—գրում է Գր. Արծրունին,—գրեթե ամեն տեղ սկսում է զինվել։ Բայց արդյոք դրանով նա ընդդեմ է գնում իր բռնած պատմական ընթացքին... Չեմ կարծում։ Եթե հայը Թուրքիայում զինվում է նրա համար, որ բռնավորության դեմ պաշտպանողական դիրք բռնի միայն և ոչ թե հարձակողական, եթե Թուրքիայի հայը մի ձեռքով մուրճ, արոր կամ բահ բռնելով—մյուս ձեռքով հրացան բռնի,—այդ գուցե կլինի միակ միջոց թուրքաց տիրապետության տակ ճնշված հայոց ազգի համար պաշտպանել և ապահովել իր ազգի գոյությունը»[73]։

Այսպիսով, իրադրության պատմական ընթացքը հայությանը մղում էր իր կյանքն ու պատիվը սրով պաշտպանելու անհրաժեշտությանը, որքան էլ դա խորթ ու հակառակ էր իր ստեղծագործ ու շինարար ազգային ոգուն։ Գր. Արծրունին խորհուրդ էր տալիս, որ այդ զենքը դրվի ակտիվ գործունեության մեջ, պայմանների թելադրանքով ինքնապաշտպանությունից անցնելու հարձակողական գործողությունների։ Նա խորհուրդ էր տալիս հետևել Զեյթունի հերոս ժողովրդի օրինակին, որը զենքով նվաճեց իր կիսաանկախությունը և պայքարի ընթացքում մշակեց իր գործողությունների տակտիկան։ «Եվ նույնիսկ այս բոպեին,—գրում է նա,—Զեյթունը արյուն է թափում Թուրքիայի դեմ իր մարդկային իրավունքները ձեռք բերելու համար»[74]։

1879 թվականին Էրզրումի տեղական իշխանությունները բացարձակապես հարձակման են անցնում հայերի դեմ, որի հետևանքով ուժեղացավ նրանց հուզումներն ու գաղթը։ Բազմաթիվ բողոքների հետևանքով Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, Գարեգին վարդապետի գլխավորությամբ, մի հանձնաժողով է ուղարկում Էրզրումի դրությունը պարզելու և գաղթը կասեցնելու նպատակով։

Պատրիարքարանին ներկայացրած իր զեկուցագրում Գարեգին վարդապետը գրում է. «Զերդ սրբազնութենեն տարած օրհնություններն ու հույսերը սփռելով Հայաստանի անհույս ժողովրդյան մեջ, մխիթարեցինք զիրենք... կսիրենք, կըսեն, տեսնել քաղցր առտուցարևուն ճառագայթներ ծագած մառախլապատ լեռանց գագաթին... կսիրենք մնալ և ապրիլ մեր ծխնյաց ոսկերաց քով, կսիրենք սպասել և շնչել մեր ընտանյաց և զավակաց հետ մեր հայրենական հողի վրա, մեր երկնից ներքև, մեր ջրերուն ափը...»[75]։

Այս ամենի հետ միասին Գարեգին վարդապետը նշում է հայերի նկատմամբ գործադրված գազանությունների բազմաթիվ փաստեր, նրանց հուսահատական վիճակը, որոնք օգնություն են

71 «Մշակ», № 159, 1878։

72 «Մշակ», № 152, 1878։

73 Գր. Արծրունի, Թուրքաց հայերի տնտեսական դրությունը, էջ 37—38։

74 Նույն տեղում։

75 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեռի ֆոնդ, թղթապ. № 3, թերթ 90—100։

խնդրում։ «Կհավելուեն ասել,—գրում է նա,—մինչև առուն ջուր գա, գորտի աչքերը դուրս կու գա։ Ո՞ւր է մեր հույսը, ուստի՞ պիտի գա մեր ջուրը»[76]։

Այո՛, ժողովրդի հուսահատությանը սահման չկար։ Նա արդեն կորցրել էր որևէ մեկից օգնություն ստանալու հույսը, դատապարտում էր եվրոպական խոշոր տերություններին, որոնք հեռու էին կանգնած իրենց պարտավորությունների կատարումից։ Միակ ելքը մնում էր ապավինել իրենց ուժին ու միջոցներին։ «Օտարեն պետք չէ բան հուսալ,—ասված է նույն զեկուցագրում,—ջանանք զմեզ հոգալ, պատրաստվիլ, և ցույց տալ ազգաց, թե մենք ալ ազգ ենք, մեր պատմության և մեր հայրենյաց արժանիքը մեր վրա ցուցանել, մեր սուրբ եկեղեցու ու դարուս լուսավորության զենքերով սպառազինվել, գիտությամբ զորանալ, միության դիմանալ, գործել և պահպանել զմեզ, պատրաստել մարդեր, հասցունել այրեր, կազմել ընկերություններ, չի խնայել հետին լուման, զրկել ղիրենք և տալ այս նպատակի համար։ Այս է մեր միակ փրկության ճամփան, և ահա այս էր իմ առաքելության ավետարանը»[77]։

Տեսնելով իրենց սպառնացող վտանգը, Էրզրումի հայերը գավառապետ Խեյրեդդին փաշայի միջոցով դիմեցին նահանգապետին (վեզիրին)՝ պահանջելով երաշխիք իրենց կյանքի անվտանգության համար։ Նահանգապետը լկտիաբար հայտարարեց, թե «ձեր գործը չէ բնավ խառնվել պետական քաղաքականության մեջ, և մի այդպիսի տեսակետից նայել գործի վրա։ Բարի ճանապարհ այն հայերին, որոնք կկամենան գաղթել։ Ես կբնակեցնեմ երկիրը չերքեզներով և ուրիշ ցեղերով»[78]։

1881 թվականի երկրորդ կեսին Էրզրումում կազմակերպվում է գաղտնի ընկերություն՝ «Պաշտպան հայրենյաց» անունով, որը թուրքական իշխանությունների դեմ ուղղված ժողովրդական մասսաների կուտակված զայրույթի արտահայտությունն էր։

Իր մեմուարներում այդ ընկերության առաջացման մասին Լեոն գրում է. «1880-ի հուշագրերից հետո հայկական հարցը եվրոպական դիվանագիտության կողմից մատնվում էր կատարյալ մոռացության։ Ի՞նչ անեին հայ գործիչները, որ լավ լիներ։ Նրանք զբաղվում են մի հոգսով, այն է՝ աշխատում են չլռեցնել հայկական

76 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոի ֆոնդ, թղթապ. № 3, թերթ 90—100։

77 ՀՍՍՀ ԳԱ պատմութ. ինստիտուտի արխիվ, Լեոի ֆոնդ, թղթապ. 3։

78 Տե՛ս «Մշակ» № 5, 1880։

հարցը. աշխատում են հիշեցնել արյունածարավ» գովված Եվրոպային, թե հայեր կան, հայոց հարց կա։ Դիվանագիտական ճանապարհի վրա պարտված հայերը հետզհետե ամրանալ են աշխատում հայդուկային հեղափոխական ճանապարհի վրա։

Այս հեղափոխությունն առաջին անգամ կազմակերպված շարժման շավիղն է մտնում 1881 թվականի երկրորդ կեսից, երբ Էրզրումի մեջ գոյություն է ստանում «Պաշտպան հայրենյաց» անունով գաղտնի ընկերությունը։ Այստեղ մենք միացած ենք տեսնում ռուսահայերին թուրքահայերի հետ։ Էրզրումում զինանոց է շինված, անդամագրական տոմսակներ են տարածվում։ Ռուսահայերից Էրզրում է գնացել, գաղտնի ընկերության հետ սերտ հարաբերություն է սկսել այժմ գործերից ետ քաշված ծերունազարդ բժշկապետ Բագրատ Նավասարդյանը»[79]։

«Պաշտպան հայրենյաց» գաղտնի ընկերության առաջացման արտաքին ու ներքին պատճառների մասին ժամանակին խոսել է Էրզրումի հայկական թեմի առաջնորդ Մաղաքիա Օրմանյանը։ Նա գրում է. «Այդ գրգիռները դուրս են լսվելով ու ներսեն զգացվելով փոփոխություն մը առաջ բերին հայ մտայնության վրա, և 1878-ե 1882 հանդարտ աղերսագույն և խղճուկ աղաչավորը գրեթե բռնադատյալ նոր միջոցներու մղեցավ, և հայուն կյանքին ու գործին վրա փոփոխություն մը նշմարվեցավ»[80]։

«Պաշտպան հայրենյաց» ընկերությունը միաժամանակ իր վրա էր կրում «Բարձր հայոց գաղտնի ընկերություն» անունը։ Թուրքական լրտեսական հիմնարկությունները ուշադրությամբ էին հետևում հայերի գործողություններին։ Նրանք «բարձր» բառին քաղաքական գունավորում տվեցին և անմիջապես արգելեցին ընկերության գոյությունը։ Սակայն պայքարի ելած հայերը չվհատվեցին։ Նրանք սկսեցին կազմակերպել «Երկրագործական ընկերություն», որը իրեն նպատակ էր դրել կազմակերպելու ժողովրդի ինքնապաշտպանությունը՝ սպառնացող վտանգը կանխելու համար։

Այդ ընկերության անդամները գերազանցապես հողագործ գյուղացիներ էին և արհեստավորներ։ «Հայերու շարժումին առաջին քայլերը,—գրում է Մ. Օրմանյանը,—1882-են կրսկսին գլխավորապես Վանի, Մուշի և Կարինի գերազանցապես հարստահարված կուսակալության մեջ»[81]։

79 Լեո, Անցյալից, էջ 40, Թիֆլիս, 1925։

80 «Ազգապատում», մասն երրորդ, Երուսաղեմ, 1927, էջ 4406։

81 Նույն տեղում։

1882 թ. նոյեմբերի 26-ին Էրզրումում տեղի է ունենում հայերի կողմից կազմակերպված ցույց, որին մասնակցում են «գյուղացիներն ու արհեստավորները»։ Օրմանյանը նշում է, որ ցույցը կազմակերպվեց Գ. Տ. Մելիքսեդեկյանի դռան առաջ, որի ժամանակ վրա է հասնում ոստիկանությունը և ձերբակալում է ցուցարարներին։ Նրանց «վրանին խուզարկած ատեն զինակիր ընկերության մը մասնակից ըլլալնին երևան եկավ», որ այդ «զինակիր ընկերությունը» սկզբում կոչվել է «Գերագույն խորհուրդ», իսկ հետագայում վերանվանվել է «Պաշտպան հայրենյաց»[82]։

Ընկերության ղեկավարներն էին Խաչատուր Կերեկյանը և նրա մերձավոր զինակից՝ Էրզրումցի Հովհաննես Աստուրյանը։ Ընկերությանը միացան մանր վաճառականներ՝ Կարապետ Նշկյանը և Հակոբ Յուզբաշյանը։ Կերեկյանը մեկնում է Վան՝ արևմտահայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման գաղափարախոս Խրիմյան Հայրիկից ցուցումներ ստանալու համար։ Ողջունելով Էրզրումցիների նախաձեռնությունն ու համարձակությունը, Խրիմյանը միաժամանակ նախազգուշացնում է նրանց՝ լինել զգույշ և աչալուրջ, որպեսզի տաքարյունությամբ չփչացնել սկսած «սուրբ գործը»։ Այս հարցը սխալ է մեկնաբանում Սարուխանը։ Նա գտնում է, որ «Խրիմյանը զգուշության և խոհեմության քարոզներով ետ ճամբեց նրան» (իմա՝ Խ. Կերեկյանին—Հ. Վ.)[83]։

Խրիմյանի ցուցումներով Կերեկյանը մեկնում է Թիֆլիս՝ մշակականներից նյութական ու բարոյական օգնություն ստանալու հարցերով։ Նրա հույսերը որոշ չափով արդարացան։

Ընկերությանը կոնկրետ օգնություն կազմակերպելու նպատակով Էրզրում են մեկնում բժ. Բագրատ Նավասարդյանը և Արսեն Թոխմախյանը։ Այսպիսով, սկսվում է Էրզրումի և Թիֆլիսի միջև որոշ կապերի ու հարաբերությունների զարգացումը։ Որոշ ժամանակից հետո ընկերության կողմից Թիֆլիս է գործուղվում Կարապետ Նշկյանը։ «Վերջին անգամ,—գրում է Սարուխանը,—Թիֆլիս եկողը հանուն կազմակերպության Կարապետ Նշկյանն էր»[84]։

«Երկրագործների ընկերությունը» զբաղվում էր «ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության պրոպագանդայով, կազմակերպում էր ժողովրդի ինքնապաշտպանությունը։ Նա սերտորեն կապված էր ժողովրդական մասսաների հետ, դաստիարակում էր նրանց ապստամբության ճանապարհով ազատություն նվաճելու գաղափարով, զինում էր նրանց։ Ժողովրդին զինելու հարցը ընկերության գործունեության կենտրոնումն էր դրված[85]։

Իր հիմնադրման օրից վեց ամիս անց ընկերությունն ուներ 300 անդամ։ Նա արագորեն աճում էր, ձգտում էր իր կազմակերպություններն ունենալ նաև մյուս քաղաքներում և խիստ կոնսպիրատիվ էր։

«Կազմակերպությունը,—գրում է Սարուխանը,—հիմնված էր տասնապետական սկզբունքի վրա։ Ամեն մի անդամ պիտի աշխատեր 5—10 ընկեր գտնել, որոնց վրա ինքը պիտի լիներ տասնապետ և այս ընկերներն զգուշության համար միայն իրենց տասնապետին պիտի ճանաչեին անձամբ։ Ամեն մի տասնապետի գլխավոր պարտականությունն էր հոգալ, որ իր խմբի բոլոր անդամները զենք ունենային։ Զինյալ անդամը պարտավոր էր ի պահանջել հարկին ոչ միայն յուրայիններին, այլև նրանց, որոնց մասին հրահանգ ստանար իր տասնապետից։ Բոլոր անդամակիցները երդման էին ենթարկվում ընդունելության ժամանակ։ Կազմակերպությունն իր գաղտնի վիմագրությունն ուներ, որ պահվում էր Կերեկյանի և ապա ջորապետ Կարապետի տանը»[86]։

1882 թ. նոյեմբերի 26-ին ընկերության անդամները ձերբակալվում են։ Ոստիկանությունը սկսում է հարցաքննություն թե՛ քաղաքում և թե՛ գյուղում։ «Հարցաքննություններով և հետախուզություններով,—գրում է Օրմանյանը,—72 հոգի ձերբակալվեցան, ամենքն ալ ստորին դասակարգի՝ երկաթագործ կամ հողագործ երիտասարդներ։ Կազմակերպության ղեկավար Խաչատուր Կերեկյան, երիզագործ աղքատ արհեստավոր մը էր»[87]։

---

82 «Ազգապատում», մասն երրորդ, Երուսաղեմ, 1827, էջ 4406։

83 Սարուխան, Առաջին ժողովրդ. շարժումը Տաճկահայաստանում, Բաքու, 1917, էջ 5։

84 Տե՛ս «Գործ», № 3, էջ 6։

85 Լեոն գտնում է, որ այդ ընկերությունը իր նպատակն է համարել «հիմնել հայոց թագավորություն Էրզրումի նահանգը օսմանյան տիրապետությունից կորզելու միջոցով» («Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը», հատ. 1, էջ 139)։ Պետք է ասել, որ պատմական ոչ մի փաստով չի հիմնավորվում և ապացուցվում Լեոի այս պնդումը։ Ընկերության անդամների նկատմամբ նման հորինված քաղաքական մեղադրանք հարուցեցին թուրքական կառավարությունն ու նրա դատական օրգանները։

86 «Գործ» № 3, էջ 6—7։ Տե՛ս նաև Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, աշխատությունը, էջ 182—199։

87 «Ազգապատում», մասն երրորդ, էջ 4406—4407։

Սարուխանը հաստատում է, որ ընկերության անդամների գերազանցող մեծամասնությունը աշխատավորությունն էր կազմում։ Բայց ձերբակալվածների թվի հարցում Օրմանյանի և Սարուխանի տվյալները չեն համընկնում։ Վերջինիս տվյալներն ավելի ստույգ են, որովհետև ժամանակակից հայ պարբերականները նույնն են վկայում։

Այսպիսով, ձերբակալվածների թիվը եղել է 76 հոգի, որից 36-ը մեղավորներ ճանաչվեցին։ Նրանցից 20-ը՝ գյուղացիներ, 13-ը կոշկակարներ, 6-ը դերձակներ էին, իսկ մնացածները՝ դարբիններ, հյուսներ, ակնաբուժներ, ջրաղացպաններ և ջորապետներ էին։ Միաժամանակ ձերբակալվածների կազմում կային երեք վաճառական, երկու ուսուցիչ, մեկ ընթերցարանապետ և մեկ նկարիչ[88]։

Այդ ընկերությունը կապված էր Թուրքիայի փոքրասիական մի շարք գավառների և Անդրկովկասի հետ, ուներ հեկտոգրաֆ, որով տպագրում էր իր կոչերն ու երդումնագրերը։ Դրա համար էլ նա մեծ աղմուկ հանեց։

Թուրքական թերթերը զբաղված էին Էրզրումի գործերով. կառավարությունը այդ պատրվակով սկսեց հայերի մասսայական ձերբակալություններ։ Թուրքական կառավարությունը ամեն ջանք գործ դրեց ընկերության բոլոր անդամներին հայտնաբերելու համար։

«Մշակ»-ի էջերում տպագրված հաղորդագրության մեջ ասված է, որ Էրզրումում սկսված շարժումը տեղական նեղ բնույթ չի կրում, այլ լայն մասսայական շարժում է, որը «շատ ծանրակշիռ նշանակություն ունի և արդեն տարածվել է Կարնո, Վանի, Բիթլիսի, Տիգրանակերտի վիլայեթների վրա»[89]։

Թուրքական կառավարությունը ամեն ինչ կատարում էր լռությամբ։ Նա կամենում էր թաքցնել եվրոպական հասարակայնությունից իր ոճրագործությունները։ Սակայն նրան այդ չհաջողվեց։

1883 թ. հունվարի 8-ին Լոնդոնի թերթերը տպագրում են լուրեր Էրզրումի անցքերի մասին։ Պաշտոնական թերթերից մեկի էջերում եղած թղթակցության մեջ ասված է. «Կարնո մեջ 1882 թ. հայտնաբերված էր հայոց գաղտնի ընկերություն՝ Թուրքական բռնակալության դեմ պայքարելու համար։ Նա կոչվում էր հայրենասիրական... Գործը առաջ տանելու համար սահմանված են տասնապետների, հարյուրապետների և հազարապետների պաշտոններ։ Թեև փոքր քանակությամբ, բայց ոչ միայն կային, այլև Կարնո դաշտի գյուղացոց տներում գտնվել են զենքեր»[90]։

«Մշակ»-ի Էրզրումի թղթակիցը 1883 թ. հունվարի 18-ին «Նամակ Թուրքիայից» վերնագրով իր թղթակցության մեջ հանգամանորեն երևան է հանում այն պատճառները, որոնք ստիպեցին հայերին դիմելու գաղտնի ընկերության ստեղծման ու ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպմանը։

Անցնելով Էրզրումի դեպքերի նկարագրությանը, այդ նույն թղթակիցը գրում է. «Մի ամիս ավելի է, որ կառավարությունը հանուն գաղտնի ընկերության կալանավորեց 300-ի չափ հայերի (որոնցից այժմ մինչև 100 հոգի մնում են բանտում, մյուսները արձակվեցին), խառն ի խուռն թե քաղաքացիներից և թե գյուղացիներից, որոնք պատկանում են ընդհանրապես երկրագործ և արհեստավոր դասակարգերին»։ Ընկերության ձերբակալությունը, հաստատում է թղթակիցը, տեղի ունեցավ շնորհիվ հայ մատնիչների[91]։

Կալանավորում են մի արհեստավորի, որի միջոցով Վալի փաշայի ձեռքն է ընկնում լիտոգրաֆիայի քարտերը, որոնք հենց այդ կալանավորված արհեստավորի գործիքներն էին։ «Հիշյալ արհեստավորը,—ասում է նույն թղթակիցը,—մի ժամանակ ազգային դպրոցում գծագրության և աշխարհագրության ուսուցիչ էր։ Այժմ ամենաստոր պաշտոն ընդունելով Թուրք կառավարությունից, լկտիաբար մատնում է իր ժողովրդին, մինչև անգամ հանդգնեց ասելու, թե ընկերության պարագլուխները՝ Ներսես պատրիարքն է և Խրիմյան Հայրիկը։ Այդ մարդը ինքը տփխիսեցի էր[92]։

Թուրքական կառավարության պաշտոնյաները սկսեցին տարածել ստահոդ լուրեր այն մասին, թե հայերն ապստամբություն են կազմակերպում սուլթանի իշխանության դեմ և դրանով գրգռեցին թուրքական ռեակցիոն խավերի մոլեռանդ կրքերը, զարթեցրին նրանց մեջ մի գազանային ատելություն ընդդեմ հայ ժողովրդի։ Նրանք տարածեցին զրպարտիչ լուրեր, թե «Կարնո հայոց եկեղեցու տակից գտել են 6000 հրացան—թնդանոթներ» և «Սվազում հայերը հարձակվել են թուրքաց մզկիթների վրա և 200 տուճիկ սպանել են»[93]։

88 Տե՛ս «Գործ», № 3, էջ 9։
89 «Մշակ», № 4, 1883։
90 «Մշակ», № 4, 1883։
91 «Մշակ», № 12, 1883։
92 Նույն տեղում։
93 Նույն տեղում։

Թուրքական պրովոկատորները Էրզրումի անցքերը օգտագործեցին հայերի նկատմամբ իրենց նողկալի ծրագիրը անպատիժ կերպով ի կատար ածելու համար։ Նրանք բանտարկեցին հարյուրավոր անմեղ մարդկանց։

«Մշակ»-ի թղթակիցը նկարագրում է այդ անմեղ մարդկանց ընտանիքների թշվառ վիճակը և միաժամանակ նախատում է հայ հարուստներին, որոնք ոչ մի օգնության ձեռք չէին մեկնում անմեղ զոհերին, քաղցի մատնված նրանց ընտանիքներին[94]։

Անգլիական «Daily news» թերթի Վարնայի թղթակիցը Էրզրումի անցքերի և հայերի համար ստեղծված օրհասական դրության մասին գրում է. «Այն հայերը, որոնք արգելված են Կարնո բանտերում, զանազան հիվանդությանց են ենթարկվել։ Երեքը նոցանից մեռել են և երեքը մերձիմահ հիվանդ են։ Տաճկական կառավարությունը վերին աստիճանի խիստ է վարվում հայ ազգաբնակության հետ։ Վերջին երկու շաբաթվա ընթացքում խլեցին հայերից շատ հայկական գրքեր, թեև սոցանից մի քանիսը տերության հակառակ կարող են համարվել։ Գրքերի պակասության պատճառով հարկ կլինի ուսումնարաններից շատերը գոցել։ Հայ մատենագիրները և հրապարակախոսները նմանապես ձերբակալված են։ Այդ միջոցների շնորհիվ և բազմաթիվ լրտեսների երկյուղից, այժմ Հայաստանում ամենեքյան կասկածավոր են դարձել և ընդհանուր դժգոհությունը արտահայտվում է կատարյալ լռությամբ»[95]։

1883 թ. փետրվարի 25-ին «Արձագանք»-ի խմբագրությանն ուղարկված իր նամակում Էրզրումի թղթակիցը նշում է, որ գաղտնի ընկերության գործունեության և նրա անդամների հայտնաբերման ուղղությամբ թուրքական կառավարության ձերբակալումները նորանոր աղետների առջև են կանգնեցրել հայերին։ Նա այդ դեպքը օգտագործեց հայերից վրեժ լուծելու համար։ «Գյուղացոց վիճակը բոլորովին դառնացել է։ Ոստիկանությունը զենք ժողովելու համար դուրս է եկել գյուղերը, որու պատրվակով, խեղճերի ամեն մի խորշերը տակն ու վար կանե, թուղթ ու ատրճանակ գտնելու առիթով կանանց վրագլուխը կշոշափեն. այս անիրավության դիմադրող մի հայ երիտասարդ մի քանի օրից հետո յուր կենաց վերջին շունչը փչեց, անգութ տաճիկներից անողոքաբար ծեծկվելուց...

Բանտարկյալների ընտանիքները սաստիկ նեղ դրության մեջ

94 «Մշակ», № 12, 1883։

95 «Արձագանք», № 12, 1883, էջ 175։

են. նրանց բոկոտն մատաղ մանկտին ազգային դիվանատների և այլոց տները կպտտվին մի կտոր հաց մուրալու»[96]։

«Մի՞թե Եվրոպան չի ձեռնարկել վերջապես յուր խոստման համաձայն Հայաստանում այնպիսի կարգեր հաստատելու,—գրում է «Արձագանք»-ը, որոնք ապահովեն հայի պատիվը և կյանքը։ Մի՞թե Եվրոպան կշարունակե թույլ տալ, որ աշխարհիս առաջին քրիստոնյա ազգի երեք միլիոն որդիքը Թուրքիայում այն միակ քրիստոնյաները լինեն, որոնք զրկված են բոլոր մարդկային իրավունքներից»[97]։

«Մշակ»-ի թղթակիցը Վանից «Արձագանք»-ի խմբագրությանը ուղարկած իր նամակում անիրավացիորեն նշում է, որ Էրզրումի գաղտնի կազմակերպության անդամների ձերբակալման պատճառ եղել են որոշ հայ վաճառականներ։ Ընկերության ղեկավարությունը, գտնվելով նյութական ծանր վիճակում, դիմում է հայ վաճառականներին՝ դրամական օգնություն խնդրելով։ «...Երկու ամսի չափ առաջ,—գրում է թղթակիցը,—ապստամբական ընկերությունը դրամական նեղ վիճակի մեջ լինելով և փողի շատ պետք ունենալով, Էրզրումի մի քանի վաճառականներին նամակներ կգրե, սպառնալով, որ եթե այսչափ հազարավոր ոսկի չբերեն այսինչ տեղ, իրենց կյանքը վտանգի մեջ է։ Այդ վաճառականները կտանեն նամակները և կհանձնեն կառավարությանը»[98]։

Ընկերության սահմանած կոնսպիրացիան դժվար թե նրան իր միջից մատնության հասցներ։ Խստիվ կարգապահությունը և գաղտնապահությունը ընկերության ներքին կյանքի սրբազան սկզբունքներն էին։ Նրա շարքերում ընդունվող յուրաքանչյուր անդամը տալիս էր հետևյալ երդումը. «Ներքո ստորագրողը երդվում է, որ նա հանձն է առնում կրել ամեն տեսակ զոհողություն և եթե հարկը պահանջե նաև չխնայել յուր արյունը, որպեսզի ազատե յուր ազգը քրդերի և չերքեզների բռնություններից և թուրք ծառայողների հարստահարություններից»[99]։

Ինչպես տեսնում ենք, այդ ընկերությունը իրեն նպատակ էր համարում պայքարել քրդական բեկերի ու չերքեզների բռնությունների, թուրքական հարստահարիչների դեմ։ Նա իրեն նպատակ չէր

96 «Արձագանք», № 12, 1883, էջ 176։

97 «Արձագանք», № 2, 1883, էջ 18։

98 «Արձագանք», № 3, 1883, էջ 41։

99 «Արձագանք», № 4, 1883, էջ 57։

դրել հաստատելու հայոց թագավորության և Էրզրումի նահանգը կորզելու թուրքական տիրապետությունից, ինչպես պնդում էր Լեոն։

Վանից եղած թղթակցության մեջ ասված է, որ մինչև 1883 թ. հունվարը Էրզրումում կալանավորների թիվը հասնում է 400 մարդու, որի հետևանքով «քաղաքական բանտը բոլոր կալանավորներին չէ կարող տեղավորել յուր մեջ, այս պատճառով նոցա տեղավորել են զորանոցներում։ Բանտարկյալների դատը կսկսվի միմիայն այն ժամանակ, երբ կհաջողվի բռնել շարժման պարագլուխներից մեկին, որ մինչև օրս դեռևս չէ հաջողվել, որովհետև կալանավորները չեն մատնում, չեն ցույց տալիս իրենց համախոհներին։ Բոլոր կալանավորները համարյա մշակներ և գյուղացիք են. նրանցից ոչ մեկը առաջավոր դասին չէ պատկանում»[100]։

Տրապիզոնից «Մշակ»-ի թղթակից Շավարշը գրում է, որ հայերի համար միանգամայն հասկանալի է դարձել սեփական ուժերով ազատություն նվաճելու գիտակցությունը։ Նա ցույց է տալիս այն մեծ համակրությունը, որը աճում է հայերի մեջ Էրզրումի գաղտնի ընկերության նկատմամբ։ Նա իրավացիորեն Էրզրումի անցքերը համարում է հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ նշանակալից էջ։

«Վերջապես,—գրում է նա,—Կարինից առնված ամեն տեղեկությունները կհաստատեն ընդարձակ կազմակերպության մը գոյությունը Կարնո մեջ և մի՞թե սա զարմանալի է»[101]։ Նշանակում է, որ զինված ապստամբության ճանապարհով ազատություն նվաճելու գաղափարը դարձել էր աշխատավոր մասսաների ու նրանց առաջավոր գործիչների սեփականությունը։ Այդ միտքը հաստատում է «Մշակ»-ի հրապարակախոս Հայկակը։ Նա նշում է, որ օրվա գլխավոր հարցը «Հայաստանի ապստամբական շարժման խնդիրն է միշտ»։

Չնայած թուրքական կառավարության գործադրած խստություններին և մոլեգնած ռեակցիային, հայ ժողովրդի մարտական կորովը չէր ընկճված։

«...Մենք մեր մեջ հարկ է չափազանցորեն չնկատենք Կարնո խնդիրը,—գրում է Հայկակը,—ինչ որ եղած է նախնական պատասխանատվություններ են. տակավին տեղ մը չէ գտնված ոչ

100 «Արձագանք», № 4, 1883, էջ 57։
101 «Մշակ», № 20, 1883։

վառոդ, ոչ զենքեր։ Գործը շուտ հայտնվեցավ, սակայն ասկե չհետևիր, թե հայք հուսահատվելով ետ պիտի կենան իրենց այս գաղափարեն։ Ընդհակառակը, նոքա ավելի քաջալերվում են, տեսնելով թե ինչպես կհամակրի Եվրոպա այսպիսի շարժման մը։ Այդ համակրութենեն կսարսափի թուրք կառավարությունը։ Ապստամբության գլուխ կանգնածները կրնան մեծապես օգտվիլ այս փորձութենեն, որպեսզի այլ կերպ ընեն իրենց պատրաստությունները»[102]։

«Մասիս»-ի ապագա խմբագիր Բյուզանդ Քեչյանը Էրզրումի գաղտնի ընկերությունը համարում էր ընկերվարական հեղափոխական կարգերի հաստատման համար պայքարող կազմակերպություն և դատապարտում էր այն։ Քեչյանն իրականում արտահայտում էր արևմտահայ լիբերալների և կղերապահպանողական հոսանքի տրամադրությունները, որոնք խիստ թշնամական դիրք էին բռնում հայերի ազգային-ազատագրական պայքարի ու նրա գաղափարախոսության հանդեպ։

Քեչյանը գովերգում է Ռուսաստանում, Թուրքիայում, Գերմանիայում գոյություն ունեցող միապետական կարգերը։ Բայց միաժամանակ կշտամբում է Ավստրիային ու Գերմանիային այն բանի համար, որ նրանք հանդուրժում են իրենց երկրներում ընկերվարական կազմակերպությունների գոյությունը։ Նա գրում է, որ Ռուսաստանի ժողովուրդը ճանաչում և համակրում է իր թագավորին, իսկ «Ավստրիան ծածկված է ընկերվարանաց իլյուզիաներով, որոնց յուրաքանչյուր հեղափոխականաց ծրագրին մեկ-մեկ մասն ի գործ դնել կաշխատի»[103]։

Մեղադրելով Իտալիային ու Գերմանիային, որոնցում ընկերվարական շարժումները ծավալվում էին արագորեն, Քեչյանը բարկանում է նրա համար, որ այդ ընկերվարականների գլուխն են կանգնած գերմանացիները։

«Քառլ Մարքս,—գրում է նա,—որ անցյալ օր մեռավ ի Բարիզ, գերմանացի մ՚ էր, և 1864-ին հիմնած է ինդերնացիոնալ (իմա՝ ինտերնացիոնալ—Հ. Վ.) կոչված ընկերական—հեղափոխական միջազգային ընկերություն, որ կանգնած է դեռ»[104]։

Արդարացնելով թուրքական կառավարության ձեռնարկումները հայերի ազգային-ազատագրական շարժումների դեմ՝ ընդ-

102 «Մշակ», № 84, 1883։
103 «Մասիս», № 3422, 1883։
104 Նույն տեղում։

հանրապես, և Էրզրումի անցքերի նկատմամբ՝ մասնավորապես, Քեչյանը այդ անցքերը կապում է հեղափոխական—ընկերվարական կարգերի հաստատման համար Եվրոպայում ծավալված շարժումների հետ և միաժամանակ ողջունում է թուրքական բռնակալին, որը կարողանում է զերծ պահել իր երկիրը այդպիսի շարժումներից։ «Միայն Թուրքիա,—գրում է Քեչյանը,—կատարյալ հանգստություն կվայելե ընկերվարական—հեղափոխականաց կողմե, միայն Թուրքիո մեջ իրենց բացակայությամբ կփայլեին պետական և ընկերական կարգաց և հաստատությանց գեմ ուղղյալ հեղափոխական ձեռնարկումներ ի գլուխ հանելու ընդունակ և տրամադիր անձինք և ընկերություններ»[105]։

Խորանալով իր այդ միանգամայն հակահայրենասիրական մտայնության մեջ, Քեչյանը արդարացնում է Թուրքիայում գոյություն ունեցող ռազմա-ֆեոդալական կարգերը։ Ահա թե ինչ է գրում նա. «Տեսնելով թե Եվրոպիո գրեթե ամեն կողմ ընկերվարանք իրենց ծայրահեղությամբ ինչպիսի նորանոր չարիք կպատճառեն իբրև հավելված այս չարյաց վրա զոր բառնալու պաշտոնն ստանձնած են, կրնանք գոհ լինել մտածելով, թե մեր երկիրը, ընկերվարություններու և հեղափոխականներու բացակայությամբ, այդ նոր տեսակ չարիքներե ազատ մնացած է»[106]։ Ինչպես տեսնում ենք, Քեչյանը փաստորեն դատապարտում է Էրզրումի անցքերը, պաշտպանում և արդարացնում է թուրքական կառավարության կողմից հայերի բանտարկություններն ու հալածանքները։

Քեչյանը Էրզրումի գաղտնի ընկերության կողմից ծավալված ազգային-ազատագրական շարժումը դիտում է որպես ընկերվարական-հեղափոխական շարժում, որպես «հեղափոխական տարափոխիկ ախտ»։ Եվ պատահական չէ այն, որ սուլթան Համիդը ռուսական ցարին նախազգուշացնում էր, թե հայերի ազատագրական շարժումներից կարող է առաջանալ «համաշխարհային սոցիալական հեղափոխություն»։

Երկրորդ պատճառը, ըստ Քեչյանի, որ ստիպում էր Թուրքիային հետևելու իր սահմաններին՝ այն էր, որ նա արգելում էր հեղափոխական գաղափարների մուտքը իր երկիրը։ Քեչյանը դատապարտում է եվրոպական հեղափոխական բոլոր ուղղությունները և սրբագործում է սուլթանի իշխանության կողմից կազմակերպած

105 «Մասիս», № 3422, 1883։

106 Նույն տեղում։

ռեակցիան, որն արգելում էր առաջադեմ գրականության և մամուլի մուտքը իր երկիրը։

Այսպիսով, Էրզրումում տեղի ունեցած անցքերը իրենց վրա էին կենտրոնացրել ինչպես առաջադեմ, այնպես էլ հետադեմ ուղղությունների ուշադրությունը։ Այդ անցքերը հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման վերելքի հիանալի օրինակներ էին։

1883 թ. ապրիլի 6-ին Էրզրումի դատարանը քննության առավ «Պաշտպան հայրենյաց» ընկերության ձերբակալված անդամների հարցը։ Դատարանի առջևն էին կանգնած 57 հոգի, որոնցից մեկը ռուսահպատակ էր[107]։ Դրա համար էլ դատարանի նիստերին թույլատրվեց մասնակցել ռուսական հյուպատոսարանի թարգման Արսեն Շ.-ին։

Մեղադրական ակտում ասված է. «Ձերբակալված 56 թուրքահպատակ և մեկ ռուսահպատակ հայեր մեղադրվում են, որ նրանք Էրզրում քաղաքը և շրջակայքը Թուրքիայի տիրապետությունից հանելու նպատակով հեղափոխություն են կազմակերպել և այդ նպատակն իրագործելու համար վնասակար (մյուզիրը) գործերի ձեռնամուխ են եղել...։ Այս հեղափոխական միտքը հղացել են հայոց ընթերցարանում Խաչատուր Կերեկյանը, ընթերցարանապետ Հովհաննես (Աստուրյան) և Հակոբ Թերզիբաշյան, երբ լրագիրներում կարդացել են, թե նաև Գարադաղի (Ձերնոգորիայի), հետո Հունաստանի խնդիրները կարգադրելուց հետո հերթ պիտի գար Հայաստանի բարենորոգումներին, բայց Թունիսի հարցը մեջտեղ գալով դարձյալ հետաձգվել է»[108]։

Դատարանը բոլորին էլ մեղավոր ճանաչեց՝ ըստ քրեական օրենսգրքի 58-րդ հոդվածի, որը պահանջում էր մահապատիժ, իսկ մեղմացնելու դեպքում 5 տարվա բանտարկություն. դատարանը վճռեց. «...Խաչատուր Կերեկյան 15 տարի, բացակա Կարապետ Նշկյան 13 տարի, Հովհաննես Աստուրյան և Հակոբ Յուղղալցյան—10-ական տարի, կոշկակար Եթալիկյան 7 տարի, 4 հոգի 6-ական և 31 հոգի 5-ական տարի բանտարկության դատապարտվեցին»[109]։

Էրզրումի կազմակերպության նկատմամբ ներկայացված մեղադրանքները չափազանցված էին։ Վճռաբեկ ատյանին ներկայաց-

107 Ռուսահպատակ էր երզրումցի Կարապետ Իսրայելյանը։

108 Սարովյան, Առաջին ժողովրդական շարժումը Տաճկական Հայաստանում, «Գործ», № 3, 1917, էջ 9։

109 Նույն տեղում։

ված ներման իրենց խնդրանքի մեջ արտահայտելով իրենց զայ-ությունը ներկայացրած մեղադրանքների դեմ, դատապարտված հայերը գրում են. «Գալով գրավված թղթերի բովանդակության, խնդրում ենք պահանջեցեք, լավ թարգմանել տվեք և կտեսնեք, որ ոչ մի կետում մի խոսք անգամ չկա ժողովուրդն ապստամբեցնելու և Թուրքիայի որևէ մասն օսմանյան տիրապետությունից հանելու մասին։ Ոչ մի պարագա նշան իսկ չկա այն մեղադրանքի, որի հիման վրա մեզ արժանի են դատում ամբաստանագրի մեջ հիշված օրենքի հոդվածի սահմանած ամենածանր պատժին։ Այդ հոդվածը ոչ մի կերպ չի վերաբերում ներկա գործին»[110];

Այսպես վերջացան Էրզրումի անցքերը։ Բայց դրանք ամենևին չընկճեցին ազգային-ազատագրական պայքարի դրոշ բարձրացրած հայ ժողովրդի մարտական եռանդը։ Թուրքական կառավարության դաժան և անօրինական վարմունքը է՛լ ավելի բորբոքեց հայերի խոր ատելությունը դեպի գոյություն ունեցող ծայրահեղ անարդար կարգերը։

Արևմտահայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումներին օգնելու նպատակով գաղտնի կազմակերպություններ ստեղծվեցին նաև Ռուսաստանում։

1882 թվականի Էրզրումի դեպքերի ժամանակ, Մոսկվայում սովորող հայ ուսանողների նախաձեռնությամբ հիմնվեց «Հայրենասերների միություն» անունով ազգային-դեմոկրատական ուղղություն ունեցող մի կազմակերպություն, որը իր վրա կրում էր հեղափոխական նարոդնիկության գաղափարախոսության ազդեցությունը և ղեկավարվում էր բռնության դեմ պայքարի նրա վարած ահաբեկումների տակտիկայով։

«Հայրենասերների միությունը» իր գլխավոր խնդիրն էր համարում օգնել թուրքական բռնապետության դեմ ուղղված արևմտահայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին, օգնել նրա ազատագրությանը։ Նա ուներ իր օրգանը՝ **«Ազատության ավետաբեր»** *անունով, հրատարակում էր թռուցիկներ։ Հայերի ազատագրական շարժումները ղեկավարելու և ուղղություն տալու նպատակով միությունը իր անդամներին Թուրքիա էր ուղարկում։*

«Հայրենասերների միությունը»—*գրում է Վ. Պարսամյանը,—հիմնել էին հայ ուսանողները 1881 թվականին Մոսկվայում*[111];

110 Սարուխան, *Առաջին ժողովրդական շարժումը Տաճկական Հայաստանում, «Գործ» № 3, 1917, էջ 11։*

111 *Մ. Օրմանյանը «Հայրենասերների միության» հիմնադրման սկիզբը համարում է 1882 թվականը, որ շատ ավելի համոզիչ է։*

խմբակի կազմակերպիչն էր Ներսես Աբելյանը, աչքի ընկնող անդամներից էին՝ Թամարա Ադամյանը, Դավիթ Ներսիսյանը և ուրիշներ։ Հայրենասերների միությունը հեկտոգրաֆի վրա անլեգալ կերպով հրատարակում է իր օրգանը՝ **«Ազատության ավետաբեր»** *խորագրով։ Միության անդամներից ոմանք սերտ կապեր ունեին ռուս և վրացի հեղափոխականների հետ»*[112];

Էրզրումի անցքերի կապակցությամբ միությունը բաց է թողնում իր թռուցիկները՝ ուղղված հայ ժողովրդին։ Նա Էրզրումի հայերի ելույթը համարում է թուրքական բռնապետության դեմ ուղղված ապստամբություն։ Միության կոչերը խիստ կերպով մերկացնում են եվրոպական խոշոր տերությունների շահագիտական քաղաքականությունը և հայ ժողովրդի ազատագրությունը իրեն՝ ժողովրդի գործն են համարում[113];

«Հայրենասերների միությունը» կոչ է անում բոլոր միջոցներով օգնության ձեռք մեկնելու բանտերում տառապող հայերին և նրանց քաղցի մատնված ընտանիքներին։

Հայրենասերների միության նպատակի մասին «Ազատության ավետաբեր»-ը գրում է. «Եթե Հայաստանի ժողովուրդը հարստահարվում է, եթե նրա ստացվածքը, նրա աշխատանքի պտուղները հափշտակում են, եթե նրա մարդկային սուրբ իրավունքները և սկզբունքները ոտնակոխ են լինում, անկասկած այդ բոլոր չարիքների սկզբնապատճառը թուրքերի բարբարոս կառավարությունն է. նա ինքն է ամենամեծ հարստահարողը, ավազակը, որի հովանավորության տակ ապրում և գործում են մնացյալ փոքր ասպատակողները և արյուն ծծողները։ Ուստի Հայրենասերների միությունը համառիթ պատերազմ է հայտարարում Թուրքիայի կառավարությանը... Միությունն իր բոլոր ուժերը ուղղել է ոչնչացնելու նրա վարած պետական կազմվածքը, որը կաշկանդել է ազգերի կանոնավոր զարգացումը...»[114];

Անկասկած է, որ միության հետապնդած նպատակը բարի էր. նրա ցանկությունն էր օգնել օրհասական վիճակում գտնվող իր

112 Վ. Պարսամյան, *Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Հայպետհրատ, 1958, էջ 259։*

113 *Տե՛ս* Վ. Պարսամյան, *Նշված աշխատության ծանոթագրությունը, էջ 259—263։*

114 *«Հայ ժողովրդի պատմություն», հատ. 2, Հայպետհրատ, 1957, էջ 145։*

եղբայրակիցներին։ Բայց նա իր սակավաթիվ ուժերով, առանց Ռուսաստանի օգնության, մեկուսացած հպատակ մյուս ճնշված ժողովուրդներից, սուլթանական կարգերը տապալել չէր կարող։

«Հայրենասերների միության» երևան գալը ապացույց էր այն բանի, որ «Պաշտպան Հայրենյաց» ընկերության հետապնդած նպատակը և նրա ձեռնարկումները լայն ժողովրդայնություն ունեին։ Օրմանյանը իրազեկ լինելով իրերի դրությանը, նշում է, որ ընկերության անդամները 1884 թ. հունիսի 30-ին բանտից ազատվեցին «ժողովրդական մեծ խանդավառության մեջ»[115]։

«Հայրենասերների միությունը» երկար կյանք չունեցավ։ 1884 թվականին նա ինքնալիկվիդացվեց։ Նրա որոշ անդամներ հետագայում հարեցին հնչակյան մանրբուրժուական և դաշնակցական բուրժուա-ազգայնական կուսակցություններին։

«Հայրենասերների միության» բաց թողած կոչերի հիմնական բովանդակությունը կազմում էր թուրքական բռնապետական ռեժիմից արևմտահայ հատվածի ազատագրության հարցը։ Այդ միության գոյությունը Հայաստանի երկու հատվածների միջև եղած կապերի ամրապնդման ու ծավալման ցուցանիշն էր։

Այսպիսով, 1870—1880-ական թվականներին առաջացած գաղտնի կազմակերպությունները, Էրզրումի, Վանի, Զեյթունի ժողովրդական մասսաների ապստամբական ելույթները հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման վերելքի ապացույցներն էին։ Նրանք վկայում էին այն մասին, որ հայ ժողովրդի դրությունը Թուրքիայում անասելի կերպով ծանր էր ու հուսահատական։ Նրանք վկայում են հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության և ինքնաճանաչողության, նրա ազատասիրական հակումների աճման փաստերի մասին։ Նրանք վկայում են նաև այն մասին, որ հայերի ազատագրական շարժումները պատասխան էին սուլթանական կառավարության հայաջինջ քաղաքականության, ինքնապաշտպանության նպատակն էին հետապնդում։

* * *

Հայերի ազգային-ազատագրական շարժման նկատմամբ թուրքական կառավարությունը գործադրեց խափանիչ վայրագ միջոցներ։ 1880-ական թվականներից սկսած ռեակցիան Թուրքիայում

115 «Ազգապատում», մասն երրորդ, էջ 4467։

մոլեգնում էր իր ամբողջ սարսափներով։ Բանտերն արդեն լցված էին հազարավոր անմեղ հայերով։

Հ. Լազարյանցին ուղարկած իր նամակում վանեցի Սաքո Թարգյուլյանը գրում է. «Նշանավոր ավազակապետ Շեքիր, որ Խալիլ փաշայի օրով բանտարկված էր, Պահրի փաշան ազատեց և թույլ տվեց յուր ոխը հանելու հայերից։ Այս ավազակապետը իր զինված քրդական հրոսակների միջոցով սկսում է հարձակվել հայ նշանավոր գյուղերի վրա, անասելի կերպով հարստահարում ու կողոպտում է հայերին, տանում նրանց անասունները, նրանց գույքը։ Շատախի վրա հարձակվելով 25 հոգու չափ, սպանեց այստեղ կառավարության պաշտոնյաների աչքի առաջ և այսպես ամեն օր սպանության դեպք էր լսվում»[116]։

Անցնելով բանտարկված հայերի նկատմամբ գործադրված գազանությունների նկարագրությանը, նույն հեղինակը գրում է. «Սկսվեցին դատաստանական քննությունները, երամ-երամ բերում էին բանտարկված հայերին հարցաքննելու, վզերին երկաթե ծանր շղթաներ ձգած, ձեռքեր կապած... երբ դիմադրում էին, իսկույն հրամայում էին նրանց բանտ տանել և չարչարել»[117]։

Մարդկային հասարակության պատմության նախորդող ժամանակաշրջանում ոչ մի իրավակարգում բանտարկյալների նկատմամբ չեն գործադրվել այնպիսի հրեշային գազանություններ, պատժի այնպիսի նողկալի ձևեր ու մեթոդներ, որպիսիք գործադրվում էին Թուրքիայում՝ սուլթան Աբդուլ Համիդի գահակալության ժամանակաշրջանում։

Հ. Լազարյանցին գրած նամակում Ս. Թարգյուլյանը թվարկում է պատժի ձևերը.

«Ա. Նրանց (իմա՝ բանտարկյալներին—Հ. Վ.) սենյակի մեջ մի լավ քրտնեցնում էին ձմեռը և հետո դուրս հանելով սենյակից՝ սառը ջուր էին ածում նրանց վրա՝ մեկ ժամի չափ պահում էին...

Բ. Մերկացնելով պառկեցնում էին մի տախտակի վրա, մեկ տախտակ էլ վրան դնելով ծանր քարեր էին դարսում, այնպես որ պառկող թշվառի ոսկորները փշրվեին։

Գ. Մերկացնելով թաց կաշիով փաթաթում էին, հետո կաշին, երբ չորանում էր, քաշելով պոկում էին, որ մարդու կաշին էլ հետն էր պլոկվում։

116 ՀՍՍՀ ՊԿՊԱ, Հ. Լազարյանցի ֆոնդ, № 42, գ. 11, թ. 79։
117 Նույն տեղում, թ. 89։

Դ. Փոքրիկ քարի ավազանի մեջ նստեցնելով սառը ջուր ածում և երկու օրը մի ֆունտ հաց էին տալիս։

Ե. Կապարը հալելով ձեռքերի մեջ էին լցնում։

Զ. Կրակ դարձած շամփուրներով մարմինը խորովում։

Է. Գլխին և կողքերի մեջ երկաթի բևեռներ շարում։

Ը. Մինչև կիսամեռ լինելը ծեծում։

Թ. Հաստ շղթաներ ձգելով, ձեռքերն ու ոտքերը երկաթե շղթայով կապում, պառկեցնում էին քարե ավազանի մեջ, իսկ վզի շղթայի ծայրը դռան շեմքից դուրս հանելով կապում էին ցցի, և այնքան քաշում էին շղթան, որ գլուխը գետնին կպչելով անշարժ մնար»[118]։

Պատժի այս ձևերը միայն Վան քաղաքի բանտարկյալների նկատմամբ չէր։ Դրանք ընդհանուր էին և կիրառվում էին բոլոր բանտարկյալների նկատմամբ։ Իսկ Վանի, Էրզրումի, Սասունի, Զեյթունի հանդեպ, որպես հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների կենտրոնների, թուրքական կառավարությունը պատժի հատուկ միջոցներ էր գործադրում։

Վանի երիտասարդները Խրիմյանին, Փորթուգալյանին, Մ. Ավետիսյանին Վանից հեռացնելու և տասնյակ առաջավոր մտավորականների բանտարկությամբ ու աքսորով իրենց սպասող տագնապալից վիճակի մասին երգում էին.

Վասպուրականի երիտասարդներ
Եվ օրիորդներ հագան սև լաթեր,
Լաց ու տրտմությամբ մոռացան ծաղկազարդը,
Ինչպես որ սոխակը իր սիրելի վարդը[119]։

Թուրքիայում սաստակացած ռեակցիայի կապակցությամբ Լոնդոնի հայ հասարակայնությունը մի աղերսական դիմում է ներկայացնում Անգլիայի վարչապետին։ Ի պատասխան այդ դիմումի 1888 թ. մարտի 29-ին լորդ Սալսբերին Կ. Պոլսի անգլիական դեսպան սեր Վ. Հուայթին գրում է. «Ձերդ վսեմություն, կուղարկեմ մի օրինակ այն հիշատակագրեն, զոր ընդունում եմ Լոնդոնի հայ ազգաբնակության ներկայացուցչական մասնախմբեն, և որով նոքա ուշադրություն կհրավիրեն Թուրքիո հայ ժողովրդյան տառապանքներու և Պերլինի 61-րդ հոդվածի համաձայն Դրան խոստացած բարեկարգություններու բացակայության մասին։ Կներփակեմ մի օրինակ՝ այս թղթակցության տված պատասխանը։ Կխնդրեմ միանգամայն, որպեսզի սոցա պարունակած իրողության մասին բացատրական տեղեկագիր մը գրեք մեզ, որպեսզի կարողանանք դատել, թե կարելի՞ է արդյոք ներկայացնել սոքա Բ. Դռան ու հաջող արդյունք մը ակնկալել»[120]։ Այսպիսով, հայերին հոշոտում էին, իսկ անգլիական պարոնները դեռ պետք է զբաղվեին նրանց դիմումի իսկությունը պարզելու հարցով։ Հենց դրանից էլ օգտվում էր սուլթանի կառավարությունը։

Անգլո-Հայկական ընկերությունը Լոնդոնում ստանում է Վանի հայերի դիմումը, որով նրանք Անգլիայի օգնությունն ու պաշտպանությունն են խնդրում։ 1888 թ. ապրիլի 30-ին դիմումը հանձնվում է Սալսբերիին, հետևյալ բացատրական խոսքով. «Պատիվ ունիմ, Լոնդոնի հայ ազգաբնակության ներկայացուցչական մասնախմբի բաղձանքին համաձայն, ուղարկել Ձեր բարձրության ներփակ կոչը, զոր Վանի հայ ազգաբնակությունը կուղարկե Մեծն Բրիտանական ժողովրդին ու կառավարությանը։ Սորա բնագիրը գրված է հայերեն լեզվով ու կկրե 1888 21 հունվարի թվականը։ Քաջածանոթ եմ այդ զարգացած և պատվավոր խմբակին, որոնք ղրկած են զայն ու կվստահեցնեն զի թե հավաստի աղբյուրներն քաղած են այդ իրողությունները, շատ մը պարագաներու մեջ նույնիսկ իրենք լինելով ականատեսները Հայաստանի մեջ գործ դրված բռնություններու։ Գրությունը չի ստորագրված երկյուղի ազդեցության տակ»[121]։

Վանի հասարակության կոչում հատուկ տեղ է գրավում բանտարկված հազարավոր մարդկանց ծանր զրկանքների ու կրած տառապանքների նկարագրությունը։

«Բանտերը լեցուն են անմեղ քրիստոնյաներով (որոնցմե շատերը կրոնավորներ են), որք ձերբակալվում են անհիմն պատճառներով։ Որո՞ւ սիրտը կարող է դիմանալ ի տես կամ ի լուր այն չարչարանաց, որոնց կենթարկվի այս դժբախտ ժողովուրդը ինքն իսկ տեղյակ չըլլալով պատճառներուն։ Ոմանք կպահվին բանտերին մեջ առավել քան 40 ժամ՝ անոթի ու ծարավ, ձեռքերնին, ոտքերնին ու վզերնին շղթայված ու խաչաձև հաստատված՝ մութ, խոնավ ու ցուրտ զնդաններուն պատերուն վրա։ Ինչ բարբարոսություն, որպիսի անլսելի ամոթ քրիստոնյա կրոնքին. սոքա կմնան այդ դրու-

118 ՀՍՍՀ ՊԿՊԱ, Հ. Լազարյանցի ֆոնդ, № 48, գ. 11, թ. 79։

119 Ա. Թեզիպաշյան, Արծիվ իր բույնին մեջ, Փարիզ, 1936, էջ 211։

120 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոի ֆոնդ, թղթապ. № 1, թերթ 61—62։

121 Նույն տեղում, թ. 61—65։

թյան մեջ, մինչև որ շնչասպառ, անդամալույծ ու անզգա մեռյալ կարծելով վար կառնվին պատերեն»[122]։ Անգլիական դիվանագիտությունը շատ սառնասիրտ գտնվեց հայերի թե՛ դիմումում, և թե՛ կոչում նշված բազմաթիվ հուզիչ փաստերի նկատմամբ։

Վանի անգլիական հյուպատոսը Կ. Պոլսի իր դեսպանին հաղորդում է, որ հայերի կոչում մատնանշված փաստերը իրականության չեն համապատասխանում և ճիշտ չեն, իսկ անգլիական կառավարությունը սուլթանին մեղադրելու հիմք չունի, քանի որ բանտերում նստած են այն մարդիկ, որոնք զբաղվում են հեղափոխական պրոպագանդայով։ Հյուպատոսի գրությունը վերջանում է հետևյալ խոսքերով. «Գալով այն անձանց, որք ձերբակալված էին դավադրություն մը սարքած լինելու նպատակով՝ սուլթանը ըսավ, թե այդ անձերը, իրենց այս ոճիրին համար շատ ավելի ծանր պատիժ մը պիտի ենթարկին անգլիական կամ ամերիկյան օրենքներով»[123]։

1888 թ. մայիսի 28-ին սեր Հուայթը Սալսբերիին հաղորդում է, որ «հայերի մեջ գոյություն ունեցած էր և ունի գաղտնի շարժում մը ու կշարունակվին դեռ բռնության միջոցներ՝ աքսոր, բանտ և այլն։ Չեմ կարող ըմբռնել սակայն, թե արդյոք առաջինը ծնունդ առած է վերջինից, թե վերջինը արդյունք է գաղտնի հեղափոխական շարժման։ Լոնդոնի և Փարիզի մեջ հրատարակված թերթերը ոչ մի հակում չունեն ժողովուրդը հանդարտեցնելու, այլ նոքա նպատակված են ավելի զորացնելու հայ ազգաբնակության ու թուրք կառավարության միջև եղած գրգռումը»[124]։

Սեր Հուայթը, այսպիսով, չէր ընդունում, որ հայերի ազգային-ազատագրական շարժումները հետևանք էին թուրքական կառավարության սաստկացած ճնշումների, հարստահարությունների և իրավազրկության։ Նա նույնիսկ չէր ուզում սուլթանին մեղավոր ճանաչել և Լոնդոնում ու Փարիզում հրատարակվող թերթերին կշտամբում էր այն բանի համար, որ նրանք հոդվածներ էին տպագրում թուրքական կառավարության գազանությունների դեմ և իրենց համակրանքն էին արտահայտում հայերի արդարացի պահանջների նկատմամբ։

---

122 ՀՍՍՀ ԳԱ պատմութ. ինստիտուտի արխիվ, Լեոի ֆոնդ, թղթապ. № 1, թ. 11—12։

123 Նույն տեղում, թ. 15։

124 Նույն տեղում, թերթ 19։

1889 թվականին Աբդուլ Համիդը իր մոտ է կանչում Կ. Պոլսի հայոց պատրիարք Խորեն Աշըգյանին և իր քարտուղարի միջոցով հայտնում է նրան, որ նա արգելի հայկական հրատարակությունները և միաժամանակ նախազգուշացնում է, որ հայերը պետք է մեկընդմիշտ իրենց մտքից հանեն ինքնավարության պահանջը, որ նրանք երբեք այդ ինքնավարությունը չեն ստանա, իսկ ինքը կկռվի այդ պահանջի դեմ այնքան ժամանակ, քանի դեռ երկրի վրա կգտնվի մի քրիստոնյա։

Եվրոպական տերություններին վախեցնելով հայերի ազատագրական շարժումներից համաշխարհային սոցիալական հեղափոխություն ծագելու ուրվականով, սուլթանի կառավարությունը հայերի ազատագրական հակումները դիտեց որպես իր պետական կարգերի դեմ ուղղված վտանգավոր քայլ և սկսեց անհեղ դատաստան տեսնել նրանց հետ։ 1894—1896 թվականներին նա գործի անցավ, սկսեց իրագործել իր նողկալի ծրագիրը՝ հայերի բնաջնջումը, որի մասին խոսք կլինի սույն մենագրության հինգերորդ գլխում։

3

Վերևում շարադրված փաստերն ասում են այն մասին, որ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները, նրանց սոցիալ-տնտեսական բովանդակության որոշման հարցերը մարքսիստական-լենինյան ճիշտ լուսաբանման խիստ կարիք ունեն։

Մարքսիզմ-լենինիզմն ընդունում է ֆեոդալական կարգերի դեմ ուղղված ազգային-ազատագրական պատերազմների պրոգրեսիվությունը, նրանց պատմական անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը, իսկ նրանց տնտեսական-դասակարգային բովանդակությունը համարում է համաժողովրդական կամ բուրժուա-դեմոկրատական։

Խոսելով կապիտալիզմի վերընթաց զարգացման ժամանակաշրջանում տեղի ունեցած ազգային-ազատագրական շարժումների բուրժուա-դեմոկրատական բնույթի մասին, «Ո՞r ժառանգությունից ենք հրաժարվում մենք» խորագրով իր նշանավոր աշխատության մեջ Լենինը գրում է. «...անհրաժեշտ է վերապահություն անել, որ մեզանում հաճախ ծայրահեղորեն սխալ, նեղ հակապատմականորեն են հասկանում այդ բառը, նրա հետ կապելով (առանց պատմական դարաշրջանների տարբերության) փոքրամասնության շահերի աշառու պաշտպանությունը։ Չի կարելի մոռանալ, որ այն

ժամանակ, երբ գրում էին XVIII դարի լուսավորիչները (որոնց բուրժուազիայի առաջնորդների շարքն է դասում ընդհանուրից ճանաչված կարծիքը), երբ գրում էին մեր լուսավորիչները 40-ական թվականներից մինչև 60-ական թվականները, հասարակական բոլոր հարցերը հանգում էին ճորտատիրական իրավունքի և նրա մնացորդների դեմ մղվող պայքարին։ Հասարակական-տնտեսական նոր հարաբերությունները և նրանց հակասություններն այն ժամանակ դեռ սաղմնային վիճակում էին։ Ուստի և այն ժամանակ բուրժուազիայի իդեոլոգների մեջ ոչ մի շահախնդրություն չէր դրսևորվում. ընդհակառակը, թե՛ Արևմուտքում և թե՛ Ռուսաստանում նրանք լիովին անկեղծորեն հավատում էին ընդհանուր բարօրության և անկեղծորեն ցանկանում էին այն, անկեղծորեն չէին տեսնում (մասամբ դեռ չէին կարող տեսնել) հակասություններ այն կարգի մեջ, որ ճորտատիրականից էր աճում»[125]։

Սուլթանական բռնակալական կարգերի դեմ Բալկանյան սլավոնների, հույների, հայերի և մյուս հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները Լենինը համարում է պրոգրեսիվ, որովհետև նրանք վերջին հաշվով խախտում էին ֆեոդալիզմի հիմքերը և ճանապարհ էին հարթում կապիտալիզմի ու կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար։ Այս տեսակետից ուշագրավ են թուրքական բռնապետության դեմ ուղղված Մակեդոնիայի ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մասին Լենինի հետևյալ խոսքերը. «Մակեդոնիայում կալվածատերերը (այսպես կոչված բսպահիները) թուրքեր և մահմեդականներ են, իսկ գյուղացիները սլավոններ և քրիստոնյաներ։ Դրա համար էլ դասակարգային հակասությունները սրվում են կրոնական ու ազգային հակասություններով»[126]։

Հետևապես, մարքսիզմ-լենինիզմը ժխտում է սոցիալ-տնտեսական բովանդակությունից դուրս ազգային շարժման գաղափարախոսությունը։

Մերկացնելով դասակարգային պայքարի պատմության մարքսյան թեորիան ազգային պայքարի պատմությամբ նենգափոխելու փորձերը, «Ուրիշ դրոշակի տակ» խորագրով իր աշխատության մեջ Լենինը գրում է. «Ժողովրդական շարժումը գլխավոր, պատերազմով շոշափված երկրներում այն ժամանակ իր տնտեսական և դասակարգային բովանդակությամբ համադեմոկրատական, այսինքն բուրժուա-դեմոկրատական շարժում էր։ Միանգամայն բնական է, որ այն ժամանակ այլ հարց չէր կարելի դնել, բացի այն հարցից, թե ինչպիսի կոմբինացիայի ժամանակ, ռեակցիոն (ֆեոդալական-աբսոլյուտիստական, բուրժուազիայի վերելքը կասեցնող) ուժերից, որի անհաջողության դեպքում, որ բուրժուազիայի հաջողությունն է ավելի լայն «ասպարեզ» խոստանում ժամանակակից դեմոկրատիայի համար»[127]։

Այսպիսով, Լենինը մի կողմից ընդունում է 1870—1890-ական թվականների ազգային պատերազմների համադեմոկրատական կամ բուրժուա-դեմոկրատական բնույթը, իսկ մյուս կողմից նշում է, որ մարքսիզմը պաշտպանում է ճնշված ազգերին ընդդեմ ճնշողների։

Սոցիալական բովանդակությունից զուրկ ազգային շարժումներ գոյություն չունեն։

«Բուրժուական թերթերը,—գրում է Լենինը,—սկսած «Новое время»-յից և վերջացրած «Речь»-ով, բարբառում են ազգային ազատագրության մասին Բալկաններում, ստվերի տակ թողնելով տնտեսական ազատագրությունը։ Իսկ իրականում հենց այս վերջինն է գլխավորը»[128]։

Այսպիսով, Լենինը ուղղակի ընդգծում է, որ առանց տնտեսական ազատագրության չի կարող լինել ազգային ազատագրություն։ «Կալվածատերերից ու աբսոլյուտիզմից լիովին ազատագրվելն,—գրում է Լենինը,—անխուսափելի հետևանք կունենար ազգային ազատագրությունը և ժողովուրդների լիակատար ինքնորոշման ազատությունը։ Ընդհակառակը, եթե ժողովուրդների վրա մնա կալվածատերերի և բալկանյան միապետությունների ճնշումը, այս կամ այն չափով անպայման կմնա նաև ազգային ճնշումը»[129]։

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները քննարկված ժամանակաշրջանում իրենց սոցիալ-տնտեսական բովանդակությամբ լինելով բուրժուա-դեմոկրատական շարժումներ, ղեկավարվել են գավառահայ բուրժուազիայի կողմից և ընթացել են նրա գաղափարախոսությամբ։ Սա անկասկած է։ Բայց այդ ազգային-ազատագրական շարժումների հիմնական շարժիչ ուժը հան-

125 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 2, Հայպետհրատ, 1943, էջ 646։
126 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, Հայպետհրատ, 1950, էջ 503։

127 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, Հայպետհրատ, 1950, էջ 175—176։
128 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, էջ 503։
129 Նույն տեղում։

դիտացել են գյուղացիներն ու արհեստավորությունը, առաջավոր ինտելիգենցիան, որոնք իրենց վրա կրում էին թուրքական բռնապետների, կալվածատերերի ու փաշաների կողմից եղած սոցիալական ու ազգային ճնշման ողջ ծանրությունը։

Կապիտալիզմի վերընթաց զարգացման ժամանակաշրջանում, որքանով որ խոսքը վերաբերում էր ֆեոդալական հարաբերությունների լիկվիդացմանը և կապիտալիստական հարաբերությունների հաստատմանը» բուրժուազիայի խաղացած դերը եղել է պրոգրեսիվ։

«Նարոդնիկների տնտեսական բովանդակությունը» խորագիրը կրող իր նշանավոր աշխատության մեջ Լենինը գրում է. «Միշտ ու ամենուրեք բուրժուազիան դասային՝ իրենց դարն անցրած շրջանակների ու միջնադարյան այլ հիմնարկների դեմ հանդես է եկել հանուն ամբողջ «ժողովրդի», որի ներսում դասակարգային հակասությունները դեռ զարգացած չէին և նա իրավացի էր ինչպես Արևմուտքում, այնպես և Ռուսաստանում, որովհետև քննադատվող հաստատությունները հիրավի նեղում էին բոլորին»[130]։

Հետևապես չի կարելի շփոթել բուրժուազիայի նկատմամբ ֆեոդալիզմի դեմ նրա մղած ազգային պատերազմների ժամանակ մարքսիստների ցուցաբերած բարյացակամ մոտեցումը իմպերիալիզմի դարաշրջանում եղած մարքսիստների խիստ բացասական վերաբերմունքի հետ։

«Երկրորդ ինտերնացիոնալի կրախը» խորագրով իր աշխատության մեջ մերկացնելով սոցիալ-շովինիստներին, Լենինը գրում է. «Նախորդ պատերազմները, որոնց վրա մատնանշում են մեզ, բուրժուազիայի բազմամյա ազգային շարժումների «քաղաքականության շարունակությունն» էին, շարժումներ ընդդեմ օտար՝ այլազգի ճնշման և ընդդեմ աբսոլյուտիզմի (տաճկական և ռուսական)։ Այն ժամանակ չէր էլ կարող լինել ոչ մի այլ հարց, բացի այս կամ այն բուրժուազիայի հաջողությանը նախապատվություն տալուց. մարքսիստները նման տիպի պատերազմների համար կարող էին նախորդ կոչ անել ժողովուրդներին, բարբաջելով ազգային ատելություն, ինչպես կոչ է արել Մարքսը 1848 թ. և ավելի ուշ՝ պատերազմելու Ռուսաստանի դեմ, ինչպես 1859 թվականին Էնգելսը բորբոքում էր գերմանացիների ազգային ատելությունը դեպի իրենց ճնշողները, դեպի Նապոլեոն III-ը և դեպի ռուսական ցարիզմը»[131]։

Քննադատելով Պոտրեսովին, մեղադրելով նրան հարցերի նկատմամբ մեխանիկական-մետաֆիզիկական մոտեցման համար, ազգային պատերազմների զարգացման էվոլյուցիան չհասկանալու և, հետևապես, մարքսիզմից հեռանալու համար, Լենինը գրում է. «Մարքսի մեթոդը ամենից առաջ այն է, որ հաշվի առնվի պատմական պրոցեսի օբյեկտիվ բովանդակությունը տվյալ կոնկրետ մոմենտում, տվյալ կոնկրետ իրադրության մեջ, որպեսզի ամենից առաջ ըմբռնվի, թե որ դասակարգի շարժումն է հանդիսանում հնարավոր պրոգրեսի գլխավոր զսպանակը այդ կոնկրետ իրադրության մեջ։ Այն ժամանակ, 1859 թվականին, կոնտինենտալ Եվրոպայում պատմական պրոցեսի օբյեկտիվ բովանդակությունը ոչ թե իմպերիալիզմը, այլ ազգային-բուրժուական ազատագրական շարժումներն էին։ Գլխավոր զսպանակն էր բուրժուազիայի շարժումն ընդդեմ ֆեոդալական-աբսոլյուտիստական ուժերի։ Իսկ գերիմաստուն Ա. Պոտրեսովը, 55 տարի անց, երբ ռեակցիոն ֆեոդալների տեղը գրավել են զառամյալ բուրժուազիայի ֆինանսական կապիտալի՝ նրանց նմանվող մագնատները, ուզում է գնահատել միջազգային կոնֆլիկտները բուրժուազիայի, և ոչ թե նոր դասակարգի տեսակետից»[132]։

Լենինի այս և նման բազմաթիվ ասույթները վերաբերում են նաև հայերի ազգային-ազատագրական շարժումներին, նրանց սոցիալ-տնտեսական բովանդակությանն ու պրոգրեսիվ բնույթին։ Մարքսիստ պատմաբաններն ու բանասերները չեն կարող այլ մոտեցում ունենալ այդ ազատագրական պատերազմների բնույթի գնահատմանը, քան տվել է Լենինը։

Արևմտահայ գյուղացիության ազատագրությունը սերտորեն միահյուսվում էր ազգային-ազատագրական շարժման հետ՝ որպես սոցիալական հարց, որովհետև ազգային հարցը բովանդակում է թե՛ գյուղացիության (ագրարային), թե՛ կուլտուրայի և թե՛ ազգի քաղաքական իրավունքի հարցերը։

Կշտամբելով Պոտրեսովին, Լենինը գրում է. «Մարքսիստները երբեք չեն բացասել ֆեոդալական-աբսոլյուտիստական ուժերի դեմ մղվող բուրժուական ազգային-ազատագրական շարժումների պրոգրեսիվությունը»[133]։

---

130 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, Հայպետհրատ, 1941, էջ 537։

131 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 271—272։

132 Նույն տեղում, էջ 169—170։

133 Նույն տեղում, էջ 167։

Հետևապես, հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները հակաֆեոդալական, բուրժուա-դեմոկրատական բովանդակություն ունեին, դրանում ոչ մի կասկած չի կարող լինել. չի կարող կասկած լինել նաև այդ շարժումների դասակարգային բովանդակության մասին։ «Ոչ միայն 1855, 1859, 1864, 1866, 1870 թվականների, այլև 1877 թվականի (ռուս-թուրքական) և 1896—1897 թվականների պատերազմների (Հունաստանի դեմ Թուրքիայի պատերազմի և հայկական հուզումների) ժամանակ,—գրում է Լենինը,—պատմական երևույթների հիմնական օբյեկտիվ բովանդակությունն են եղել ազգային-բուրժուական շարժումները կամ ֆեոդալիզմի տարբեր ձևերից ազատագրվող բուրժուական հասարակության «ջղաձգումները»[134]։

Ինչպես տեսնում ենք, Լենինը խոսում է թուրքական բռնապետության դեմ ուղղված հայ ժողովրդի ազատագրական շարժումների պրոգրեսիվ նշանակության մասին, բացահայտում է նրանց հետապնդած նպատակներն ու խնդիրները, նրանց սոցիալ-տնտեսական բովանդակությունը, պահանջում է երևույթների գնահատության հարցում ցուցաբերել պատմական կոնկրետ մոտեցում։

Արևմտահայ հատվածի ազգային-ազատագրական շարժումները հակաֆեոդալական էին, ուղղված էին ֆեոդալական-աբսոլյուտիստական բռնապետության դեմ և կրել են տնտեսական-դասակարգային բնույթ։ Ֆեոդալիզմի դեմ մղվող պայքարում գյուղացիական և ազգային շարժումները հանդես են եկել միասնաբար։ Այդ նույն բնույթն էին կրում ցարական միահեծանության դեմ ուղղված ճնշված ազգերի ազգային-ազատագրական շարժումները։

Մ. Նալբանդյանը ազգային-ազատագրական շարժման հեռանկարը չէր հասկանում այլ կերպ, քան գյուղացիության ազատագրությունը՝ հողի հետ միասին, որովհետև ազգ ասելով նա հասկանում էր հիմնականում գյուղացիությանը, ազգի և ազգաշինության հիմքը համարում էր տնտեսական ազատագրությունը։ «Այսօր ճնշված մարդերի համար ազգությունն է նոցա միակ դրոշը,—գրում է Նալբանդյանը,—որ կարող է բացվիլ բռնակալության դեմ»[135]։

Նալբանդյանը չէր սխալվում, երբ խոսում էր Ռուսաստանում «խմորված ազատության» համաշխարհային նշանակության մասին։ Նա գրում է. «Հյուսիսային կոթողը կշարժվի... Եվ ինչպես մեծ շինվածք մը կանգնելու համար շատ նյութեր կմտնեն անոր կազմվածքի մեջ, այնպես էլ՝ անոր կործանումեն ետքը՝ շատ նյութեր կստացվին շատ շինվածներու համար։ Ռուսիո մեջ խմորված ազատությունը համարձակ կարելի է մարդկային ազատություն անվանել, վասնզի ազատությունը հողի վրա կհիմնվի, քանզի ոչ միայն ինքը ռուս կուզե իր ազատությունը, այլ կքարոզեն թե Լեհաստան, Ֆինլանդիան, Փոքր Ասիա (15 միլիոն ժողովուրդ), Կովկաս, Վրաստան և Հայաստան պետք է որ ազատ և անկախ ըլլան Մեծ Ռուսիայեն...»[136]։

Այսպիսով, Նալբանդյանը նախ հայերի ազգային-ազատագրական շարժման հիմնական բովանդակությունը համարում է ժողովրդի տնտեսական ազատագրությունը և ամենևին չի անջրպետում ազգային ու գյուղացիական շարժումները, չի հակադրում միմյանց և, երկրորդ, որ հայ ժողովրդի ազատագրության նախադրյալը համարում է ռուսական ցարիզմի անկումը։

Մարքսիզմի մեթոդի կիրառումը, նրա ստեղծագործական զարգացումը հնարավորություն է տալիս ճիշտ հասկանալ և ճիշտ լուսաբանել 1870—1890-ական թվականների արևմտահայ ազատագրական շարժման հարցը, նրա դասակարգային բնույթն ու բովանդակությունը։

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների, նրանց սոցիալ-տնտեսական բովանդակության, նրանց բնույթի ու գործող ուժերի գնահատման հարցում որոշ սխալներ է թույլ տվել պրոֆ. Լեոն։ Պատմության նկատմամբ ունենալով իդեալիստական կոնցեպցիա, Լեոն հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները դիտում է որպես որոշ գրողների ու հրապարակախոսների սուբյեկտիվ կամեցողության թելադրանք, որպես նրանց ալեկոծող մտքերի հետևանք։

Այդ շարժումները Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Րաֆֆու, Գր. Արծրունու և մյուսների մտքերի ու գաղափարների արգասիք չէին, այլ ինքնաբուխ էին և հետևանք էին սոցիալական ու ազգային անտանելի ճնշումների, իսկ նրանց գաղափարախոսությունը (որին մենք հատուկ գլուխ ենք նվիրել), ընդառաջում էր ազատագրական շարժումներին և ուներ պրոգրեսիվ նշանակություն։

Րաֆֆու «Ջալալեդդին»-ը, «Խենթ»-ը, «Կայծեր»-ը, «Սամ-

134 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 175։

135 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 90։

136 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 61։

վել»-ը և մյուս աշխատությունները, որոնք ժամանակին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մարտական կոչեր էին, Լեոն համարում է հայդուկային վեպեր։ Նրանց դրական հերոսներին համարում է մտացածին, ֆանտաստիկ, օդային պատկերներ և բոլորովին անտեսում է այդ հերոսների վառ հայրենասիրությունը, նրանց բարձր գաղափարականությունը, նրանց դերը ժողովրդի ուժերի մոբիլիզացման, կազմակերպման և ուղղություն տալու գործում, ժողովրդի ազգային ինքնագիտակցության և ինքնաճանաչողության բարձրացման գործում։

Այսպիսով, հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման վերելքը սերտորեն կապված էր նաև հայերի ազգային ինքնագիտակցության ու ինքնաճանաչողության աճման և զարգացման հետ։ Հայերի ազատագրական շարժումն ուներ բուրժուա-դեմոկրատական, սոցիալ-տնտեսական բովանդակություն։ Այդ շարժումը ինքնաբուխ էր և ուներ պրոգրեսիվ նշանակություն։ Իսկ ազատագրական պայքարի գաղափարախոսությունը ընդառաջ էր գնում այդ շարժմանը, հանդիսանում էր նրա զենքերից մեկը։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

1870—1880 թվականների ազգային-ազատագրական պայքարի միտքը վերելքի շրջան ապրեց։ Բեռլինի կոնգրեսից միանգամայն հիասթափված և եվրոպական դիվանագիտական խաղերից վրդովված բնական է, որ հայ ժողովուրդը իր ազատագրության հույսը պետք է իր վրա դներ։ «Հայոց ազգ,—գրում է Սրվանձտյանը,—քեզ երկու թև պիտո է ազատության բարձունքը թռչելու—բարձրանալու համար»[1]։

Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածից հետո Սրվանձտյանը հանգեց այն հետևության, որ «Հայաստանի մեջն է բուն Հայկական խնդիրն և մենք Պերլինի մեջ կորոնենք զայն»[2]։

Սրվանձտյանը նշավակում էր ոմանց կողմից պաշտպանվող եվրոպական օրիենտացիայի սնամեջ գաղափարը։ «Այդ կեղծ բարերարները ոչ հայուն հորեղբայրն էին և ոչ էլ հայուն քեռին, այլ ավելի ճարպիկ որսորդներ ու մսագործներ, որ զմեզ էրե վայրիի, պատրաստ ոչխարներու և պարարկ կովերու տեղ դնելով մեր փարախեն կուզեին խրտնեցնել, հեռացնել, և իրենց ձեռքը ձգելով ի սպանդ մատուցելու...»[3]։

Ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը խոշոր դեր խաղաց հայերի ազգային ինքնագիտակցության և ինքնաճանաչողության բարձրացման, նրանց պայքարը նպատակասլաց դարձնելու, կազմակերպելու և ուղղություն տալու գործում։ «Մեզի վրա պետք է հույս դնենք և ոչ թե Բեռլինի,—գրում է «Մը-

---

1 Գ. Սրվանձտյան, Թորոս Ազբար, հատ. 1, Կ. Պոլիս, 1879, էջ 24։
2 Նույն տեղում, էջ 269—279։
3 Գ. Սրվանձտյան, Թորոս Ազբար, հատ. 5, Կ. Պոլիս, 1884, էջ ԺԷ։

շակ»-ը...—Այն ազգը, որ ինքն իր վրա հույս չունի, նա ապագա չունի»[4]։

Այս գիծը կարմիր թելի պես անցնում է ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսների հրապարակախոսական ելույթներում և գրական ստեղծագործություններում։

ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ Ռ. ՊԱՏԿԱՆՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Մեծ է եղել Պատկանյանի մտցրած լուման հայ ժողովրդի ազգային-ազատագրական գաղափարախոսության զարգացման գործում։ Նա հայ ժողովրդի քաղաքական կյանքի, նրա ազգային իդեալի փայլուն դեմքերից մեկն էր։ Նրա դամբարանի վրա փորված է.

Մի՛ կարծեք, որ ես սին փառքի համար
Իմ հառաչանքով լցրի... աշխարհ,
Այս հեգ ամբոխի ծափին ու գովքին,
Կարոտ չէր բնավ իմ հպարտ հոգին...

Այո՛, իմ քնարի տխուր ձայները
Ցնցեցին հայի հոգու լարերը,
Արյուն էլ աղնիվ սրտե քամեցին,
Կորիճի աչքե քունը փախցրին[5]։

Հ. Թումանյանը Պատկանյանի հուշարձանի բացման կապակցությամբ ուղարկած իր հեռագրում ասում է.

Կը գան, կանցնեն շատ-շատ ամիս ու տարի,
Չի մամռոտի գերեզմանը այդ քարի,
Եվ տանջալի նոր խաչը սրբազան,
Նորա անուն միշտ կմնա անսասան[6]։

Ընդառաջ գնալով արևմտահայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումներին, Պատկանյանն իր պոեզիան ավելի կոնկրետացրեց ու շեշտակի դարձրեց, նրա մեջ նոր, ավելի մարտական շունչ մտցրեց։ Նրա պոեզիան հնչեց որպես ռազմի շեփոր ու մարտահրավեր։

Սուլթանական Թուրքիայում հայ ժողովրդի համար ստեղծված օրհասական պայմանները նոր եռանդ տվին նրա գրչին, աննախընթաց ուժով սեր ու հավատ ներշնչելով հայրենիքի ու նրա գալիքի նկատմամբ։

Պատկանյանի «Ազատ երգեր»-ը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի այրող երգեր են, որոնց էությունը հանդիսանում է սեփական ուժերով հայ ժողովրդի ազատագրության գաղափարը։ Այդ իր բոցաշունչ երգերով Պատկանյանը հայ ժողովրդին նախազգուշացնում էր, որ նրա դրությունը սուլթանական Թուրքիայում անհանդուրժելի է, որովհետև նրա կյանքն ու գույքը վտանգված էր, իսկ պատիվը՝ արատավորված։ Ուստի, սովորեցնում էր Պատկանյանը, կույր հնազանդությամբ ու անվերջ գանգատներով, աղերսագրերով և ուրիշի օգնությամբ ազատություն ձեռք չի բերվում, այլ այն նվաճվում է հերոսությամբ ու քաջությամբ։

Բալկանյան թերակղզու սլավոն ժողովուրդները զենքի ուժով ազատություն նվաճեցին։ Իսկ ինչո՞ւ հայերը չպետք է գործեն նրանց օրինակով, երբ ստեղծվել են դրա համար նպաստավոր պայմաններ։

Վանեցի մոր բերանով Պատկանյանը հայ ժողովրդին թուրքական բռնապետության դեմ զինված ելույթների կոչ է անում.

Չար սուլթանի ոսկե թախտը ջարդրվեցավ, վար ընկավ,
Թախտի տակին հազար ազգաց ազատություն ծաղկեցավ,
Ով որ շուտով ոտքի ելլե, ազատություն կը գտնե,
Սիրուն որդի՞ս միթե մենակ չար լուծի տակ պիտ մտնե։

. . . . . .

Տուր սիրական, քակեմ ձեռքիդ պալուլները, արձակեմ,
Ու այդ թուլիկ աջիդ մեջը մի պողպատե սուր դնեմ...[7]

Չնայած արյունոտ սուլթանի կողմից հայ ժողովրդի նկատմամբ գործադրած բռնություններին ու հալածանքներին, Պատկանյանը գտնում է, որ հայ ժողովրդի արդար գործը ընդմիշտ դատապարտված չէ։ Նա ժողովրդի մեջ դաստիարակում է հաստատ համոզմունք իր հաղթանակի անխուսափելիության հավատով։

. . . . . .

Չէ՛ չէ՛, երգած չէ՛ դեռ Մայր Հայաստան

4 «Մշակ», № 125, 1879։
5 «Մշակ», № 214, 1901։
6 «Մշակ», № 230, 1901։
7 Ռ. Պատկանյան, Երկեր, Հայպետհրատ, 1955, էջ 145։

Կարապի երգը՝ երգն յուր տխրության.
Այն որ լսեցիք՝ այն երգն էր գարնան.
Ավետյաց երգ էր Հայոց սխակին...[8]

Ժողովրդին դաստիարակելով իր ուժերի ու ընդունակությունների նկատմամբ հավատի գիտակցությամբ, Պատկանյանը դատապարտում է Եվրոպայի օգնության սիրահարներին։ Նա ցույց է տալիս, որ շահամոլության իրենց ծարավը եվրոպական խոշոր տերությունները հագեցնում են հայերի արյունով.

Վերջ ի վերջո՝ հայ արյուն ալ վոթեցավ,
Եվրոպա, արդյոք արյան պասքդ հագեցա՞վ[9]։

Արտահայտելով եվրոպական դիվանագիտությունից հիասթափված հայ աշխատավորների ցասումը, Պատկանյանը «Բողոք առ Եվրոպա» բանաստեղծության մեջ գրում է.

. . . . . .

Ապերախտ Եվրոպա, հիշե հայերուն,
Դու շատ մի խաբվիլ սուրի շաչյունին.
Արյուն վոթելն չէ առաքինություն,
Եվ ոչ նա ազատ ոգու նշան է[10]։

Պատկանյանը իր «Ո՛չ խնդիր, ո՛չ հրաման» բանաստեղծության մեջ անարգանքի սյունին է գամում թուրքական բռնակալներին՝ հայ ժողովրդի նկատմամբ գործադրած գազանությունների և նրան ոչնչացնելու նենգ դիտավորություններ ունենալու համար։ Նա նախազգուշացնում է, որ այդ չարագործությունները չեն կարող վերջ տալ դարերի ահեղ հողմերով անցած հայ ազգին, որ նա կարթնանա և այն ժամանակ վայ բռնակալներին։

1890 թվականին Էրզրումի հայությունը նորից արտահայտեց իր վրդովմունքը սուլթան Համիդի ռեժիմի դեմ, վրդովմունք, որը հետևանք էր չտեսնված կամայականությունների, ճնշման ու հարբստահարությունների։ Թուրքական հրոսակները դաժանորեն ճնշեցին հայերի այդ ազատագրական շարժումը։

8 Ռ. Պատկանյան, Երկեր, Հայպետհրատ, 1955, էջ 194—195։
9 Ռ. Պատկանյան, Ընտիր երկասիրություններ, հատ. 1, էջ 177։
10 Նույն տեղում, էջ 148։

«Կարինի կոտորածը» բանաստեղծությունը Պատկանյանը նվիրում է անմեղ նահատակներին, փառաբանում է նրանց՝ ազգի ազատության գործին ցուցաբերած արիության համար։

Այսպիսով, Պատկանյանը եղել է հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մեծագույն գաղափարախոսներից մեկը. նա իր վրա կրում է Նալբանդյանի գաղափարական ազդեցությունը։

Կղերա-պահպանողական օրգանները ամեն տեսակի լուտանք էին թափում նրա հասցեին այն բանի համար, որ նա իր գրիչը նվիրեց ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությանը։ Կղերա-պահպանողականներին խորթ էր նաև այն, որ Պատկանյանը քննադատում ու մերկացնում էր հայ հարուստներին, կոմպրադորական բուրժուազիային ու կղերական դասի բարքերը, հայրենիքի ու ժողովրդի նկատմամբ նրանց ցուցաբերած սառնասիրտ վերաբերմունքը։

Պատկանյանի պոեզիայի մեջ կարմիր թելի պես անցնում է այն միտքը, որ ազգի ու նրա ազատագրության համար պայքարող հիմնական ուժը ժողովուրդն է։

Սակայն Պատկանյանն իր երկերում դրսևորել է նաև ազգայնական որոշ տրամադրություններ։

«Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմում Պատկանյանն իր հերոսի բերանով քարոզում է հայերի ու պարսիկների միջև ցեղային անհաշտ թշնամանք սերնդից-սերունդ։ Նա այդ տրամադրությունները դրսևորել է նաև «Թե իմ ալևոր հերքս սևնային» բանաստեղծությունում։ Նա պատրաստ է արյան գետերով ողողել Ասիան ու Եվրոպան, երկնային շանթ ու որոտ պատուհասել հայերի վրա իշխող, նրանց հարստահարող և իրավազրկող բոլոր զավակներին, միայն թե հայն ազատ լինի և վերականգնի իր վաղեմի պետականությունն ու անկախությունը։

Պատմական իրադրությունները բոլորովին այլ էին։ Հայ ժողովուրդը սուլթանական Թուրքիայում ապրում էր սոցիալական և ազգային ճնշման բացառիկ ծանր պայմաններում։ Հենց այդպիսի հանգամանքները նկատի ունենալով, Լենինը գտնում է, որ «ճնշված ազգերի յուրաքանչյուր բուրժուական նացիոնալիզմի մեջ կա համադեմոկրատական բովանդակություն ընդդեմ ճնշման»[11]։

Լինելով հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի բոցաշունչ գաղափարախոս, Պատկանյանն այդ հարցում միանգամայն սահմանազատվում է պահպանողականներից։

11 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 513։

Բաֆֆի.—Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մեծ գաղափարախոսներից մեկը եղել է Բաֆֆին, որը իր վեպերով ու վիպակներով, իր հրապարակախոսական ելույթներով պրոպագանդել է թուրքական բռնապետությունից զինված ապստամբության ճանապարհով հայերի ազատագրության գաղափարը։

Հենց այդ գաղափարով են տոգորված նրա «Խենթ»-ը, «Ջալալեդդին»-ը, «Դավիթ-Բեկ»-ը, «Սամվել»-ը, «Սալբի»-ն, «Կայծերը», «Տաճկահայք»-ը և այլ վեպերն ու վիպակները։ Բաֆֆու այս երկերը ժամանակին հնչել են որպես ազգային-ազատագրական պայքարի մարտական կոչեր։

Մնալով ռուսական ցարիզմի ռեակցիոն քաղաքականության նկատմամբ եղած ընդհանուր հակակրանքի դիրքերում, Բաֆֆին արևմտահայ ժողովրդի ազատագրության հույսը միաժամանակ կապում է Ռուսաստանի օգնության հետ։

«Տաճկահայք»-ում և ուրիշ աշխատություններում Բաֆֆին մերկացնում է Անգլիային և ցույց է տալիս, որ նա չի ցանկանում Հայկական հարցի լուծումը և ամեն կերպ արգելակում է Ռուսաստանին՝ նրա այդ ուղղությամբ եղած ձեռնարկումները, վախենալով նրա ազդեցության ու հզորության աճումից։ Նա գրում է. «...անգլիացիք չուզեցին մտածել, որ եթե թուրքաց հայերը համակրությամբ էին վերաբերվում դեպի ռուսները, այդ ուներ յուր բնական պատճառները։ Նրանք տեսնում էին ազգակիցներին ռուսական Հայաստանում ավելի բախտավոր վիճակի մեջ, մինչդեռ իրենք օրըստօրե մաշվում և ոչնչանում էին մի անարգ և նենգամիտ կառավարության բարբարոսությունից»[12]։

Բաֆֆին արևմտահայերի համար ստեղծված ծանր կացությունից դուրս գալու երկու ելք է նախատեսում։ Առաջին՝ «կամ իրենք էլ սլավոնական ցեղերի նման պետք է զենք առնեն և...պատերազմի դաշտում մեռնին», և երկրորդ՝ «կամ իրենց բողոքը գրավոր արտահայտեին, պաշտպանեին իրենց իրավունքները մարդկության առաջ»[13]։

Այս վերջին ուղին Բաֆֆին չի ընդունում։ Նա գտնում է, որ ամիրաների կուսակցությունը կամ հարմարվում էր գոյություն ունեցող պայմաններին, կամ ծվարվում էր օտարների ու դիվանագետների թևի տակ, իսկ երիտասարդությունը, նոր սերունդը, լուսավորականների կուսակցությունը «իրավ է, պատրաստում են հեղափոխականներ, բայց չեն պատրաստում ասպարեզ դուրս եկող հերոսներ»[14]։

Իսկ ո՞վ է մնում, ո՞ւմ վրա է հենվում Բաֆֆին։ Մնում է ժողովուրդը, որը ազատագրական շարժման հիմնական ուժն է, մնում են գյուղացիությունն ու արհեստավորները և առհասարակ դեմոկրատական լայն խավերը, պատմություն կերտողները, որոնց դերը հայ բուրժուական պատմագրությունը երևան չի հանել, մասսաներ, որոնք Հայկական հարցի լուծումը, իրենց փրկության հույսը տեսնում էին զինված ապստամբության և Ռուսաստանի օգնության մեջ։ «Մեր պատմության մեջ գրեթե բոլորովին մոռացված է ամբոխը,—գրում է Բաֆֆին։—Մեր պատմագիրները չեն նկատել, որ բացի թագավորներից և իշխաններից, բացի հոգևորականներից ու զինվորներից, Հայաստանում կար և ժողովուրդ, որ ապրում էր, որ յուր կյանքն ուներ, որ յուր տոները, հանդեսները և ցնծություններն ուներ, և որի հոգեկան և բարոյական հակումներն արտահայտվում էին այս և այն հասարակական երևույթների մեջ։—Մեր պատմության մեջ ժողովուրդը չկա, կան միայն տիրապետողներ։ Մենք չգիտենք, թե ինչպե՞ս էր ապրում հայց շինականը, ի՞նչ տեսակ հարաբերությունների մեջ էր յուր տերերի հետ, կամ ի՞նչ էր ուտում և ի՞նչ էր հագնում և ի՞նչ տեսակ զվարճություններ ուներ։ Մենք չգիտենք, թե ի՞նչ էր շինում հայոց արհեստավորը, ո՞ր երկրների հետ առևտուր ուներ հայոց վաճառականը, կամ ի՞նչ տեսակ անասուններ էր սնուցանում հայոց խաշնարածը։ Մեր պատմությունը լուռ է այդ բոլորի մասին»[15]։

Այսպիսով, Բաֆֆին կանգնած էր այն տեսակետի վրա, որ պատմությունը արքաների ու հոգևորականների պատմությունը չէ, այլ հասարակության նյութական բարիքները արտադրող ժողովրդի պատմություն է և իրավացիորեն կշտամբում է հայ պատմագիրներին, որոնք աչքաթող էին արել պատմության իսկական կերտողին՝ ամբոխին, ժողովրդին։ Բաֆֆին փաստորեն մոտենում է պատմության մատերիալիստական ըմբռնմանը։

Ժողովրդական մասսաների դերի խոր ըմբռնումը հանդիսանում է Բաֆֆու դեմոկրատիզմի լավագույն արտահայտությունը. «...դեմոկրատը,—գրում է Լենինը,—հավատում է մասսային, մաս-

12 Բաֆֆի, Տաճկահայք, էջ 41—42։
13 Նույն տեղում, էջ 7։
14 Բաֆֆի, Տաճկահայք, էջ 7։
15 Բաֆֆի, Սամվել, Հառաջաբան, էջ 4։

սաների գործողությանը, տրամադրությունների օրինականացմանը, մասսայի պայքարի մեթոդների նպատակահարմարությանը»[16]։

Նալբանդյանի գաղափարական ազդեցությամբ, Պատկանյանի և Րաֆֆու աշխատություններում մենք գտնում ենք պատասխան ազգային-ազատագրական շարժումների մեջ յուրաքանչյուր դասակարգի խաղացած դերի մասին։ Սրանք իրենց հույսերը չէին կապում ո՛չ հոգևորականության, ո՛չ վաճառականության դասի, և ոչ էլ ամիրաների դասի հետ, որոնք որպես իշխող և շահագործող դասեր, լուրջ արգելք էին հասարակության առաջադեմ ուժերի զարգացման ճանապարհին։

«Տաճկահայք»-ում Րաֆֆին գրում է. «Այժմ կարծեմ հասկանալի եղավ, թե ինչ տեսակ անձերից է բաղկացած Կ. Պոլսում այն կուսակցությունը, որ մենք յուր հին անունով կոչեցինք ամիրաների կուսակցություն, մի կարգ մարդիկ, որ անունով միայն հայ են, իսկ սրտով թուրքերից ավելի թուրք, որոնք անձնական շահը պաշտպանելու համար, հայտնի բան է, կցանկանան միշտ կանգուն տեսնել Թուրքիան իր կառավարության այժմյան անկարգ այլանդակության մեջ»[17]։

Նույնպիսի ատելությամբ Րաֆֆին մերկացնում է հոգևոր դասի վերնախավերին, որոնք ժողովրդի մեջ դաստիարակել են հնազանդության ստրկական ոգի։ «Եթե մի օր հայոց աստվածը կխնդրե Հայաստանի կործանման ու նրա զավակների արյան վրեժը մեր ազգային թշնամիներից,—գրում է նա,—առաջին պատասխանատուն կլինեն մեր եկեղեցականները։ Դրանք թաղեցին ժողովրդի սիրտը, խլեցին նրա քաջությունը, մեռցրին նրա բոլոր կենսական ուժերը, և քրիստոնեական խոնարհության, քրիստոնեական համբերության անունով սովորեցրին նրան ստրուկ լինել»[18]։

Րաֆֆին անարգում է հայ ժողովրդի վերասերված, ունևոր խավերի այն դասերին, որոնք իրենց գծուծ շահերի համար դավաճանում էին հայրենիքին ու ժողովրդին. «Ով որ իր ազգը, իր հայրենիքը չի սիրում,—գրում է նա,—իրավունք չունի օտարներից սեր պահանջելու»[19]։

Ազգի ու հայրենիքի սիրո գաղափարները Րաֆֆին տեսնում է

16 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 17, Հայպետհրատ, 1950, էջ 357։

17 Րաֆֆի, Տաճկահայք, էջ 13։

18 Րաֆֆի, Դավիթ-բեկ, Երկերի ժողովածու, հատ. 6, Հայպետհրատ, 1956, էջ 292։

19 Նույն տեղում, էջ 136։

ժողովրդի մեջ, ժողովուրդ, որը ղեկավարների, ազգին ու հայրենիքին նվիրված առաջնորդների կարիք ունի. «...Հայի սրտում չի հանգում հայրենասիրության կայծը,—գրում է նա,—բավական է փչել նրա վրա և ահա նա կբորբոքվի, կբոցավառվի...»[20]։

Պաշտպանել ազգն ու հայրենիքը, բացահայտել եղած թերությունները, ամեն կերպ օգնել հայրենիքի բարգավաճմանը, պաշտպանել այն օտար բռնակալներից,—այս էր Րաֆֆու կարևոր հոգսը։ «Մենք մի ազգ ենք,—գրում է նա։—Ազգը—մի մեծ անհատ է, որ ունի իր սեփականությունները։ Մենք էլ ունենք մեր հայրենիքը, որ մեր հորերից մնացել էր մեզ որպես ժառանգություն։ Այդ հողի վրա, որպես մեր սեփական տան մեջ, մենք ազատ վարում էինք, ցանում էինք, հնձում էինք ու հանգիստ ապրում էինք... բայց թշնամին եկավ, բոլորը հափշտակեց, բոլորը ոչնչացրեց և մեզ ստրուկ դարձրեց»[21]։

Ազգի ու հայրենիքի ազատության ու անկախության համար մղված պատերազմը, ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը Րաֆֆին համարում է սրբազան ու արդարացի. «...հայրենասիրությունը, ազգասիրությունը ամեն մի անհատի սուրբ պարտականությունն է։ Եվ հայրենիքի ազատության, հայրենիքի պաշտպանության համար կատարված պատերազմը սուրբ պատերազմ է»[22]։

Հետևապես Րաֆֆին պահանջում է, որ յուրաքանչյուր հայի գործունեությունը առաջին հերթին ծառայի հայրենիքի շահերին, հայրենասիրությունը պետք է տոգորի բոլորին։ «Հայրենիքի սերը և նրա ազատության միտքը պետք է թագավորի ամեն գործողությունների վրա,—գրում է նա,—և ամեն ինչ պետք է զոհվի այդ ազատությունը գնելու նպատակին»[23]։

Իր հերոսներից մեկի՝ Վարդանի բերանով դիմելով ժողովրդին, Րաֆֆին ասում է. «Մենք պետք է կռվենք բռնության, անարդարության և ստրկության դեմ... Ես իմ հույսը դրել եմ իմ նեղված, տանջված, հարստահարված ժողովրդի վրա և ձեզ վրա, եղբայրներ, որ ժողովրդի ներկայացուցիչներն եք։ Հավատքով, անկեղծությամբ, անձնազոհությամբ դիմենք մեր նպատակին,—և այդ նրա հաջողության ամենագլխավոր պայմանն է»[24]։

20 Րաֆֆի, Դավիթ բեկ, էջ 239։

21 Նույն տեղում, էջ 293։

22 Նույն տեղում, էջ 295։

23 Նույն տեղում, էջ 297։

24 Նույն տեղում։

Ազգային-ազատագրական շարժման գլխավոր ուժը համարելով ժողովուրդը, Ռաֆֆին միաժամանակ խարազանում է ժողովրդի մեջ եղած որոշ խավերի դանդաղկոտությունն ու պասիվությունը՝ նրանց ակտիվացնելու, ազատագրական պայքարի մեջ նրանց ներգրավելու նպատակով։ Ռաֆֆին բարձր է գնահատել ժողովրդական մասսաների դերը ազատագրական պայքարում և ամբողջովին կողմնորոշվել է դեպի մասսաները. «Երբ մի ժողովուրդ այնքան զարգացած է, որ հասկանում է յուր իրավունքները և հասկանում է, որ ինքը բռնաբարվում է և միևնույն ժամանակ այնքան պատրաստված է, որ կարող է ընդդիմադրել բռնակալի ընդդիմադրությանը, ժողովուրդն ինքն է բողոք բարձրացնում, թե՛ զենքով և թե՛ խոսքով։ Այդ լինում է հեղափոխական ցույցերով և դրան ասում են, թե ազատության զգացմունքն արմատից է ծագում, ամբոխի սրտից է բխում, ցածից դեպի վեր է բարձրանում։

Իսկ երբ ժողովուրդը զարգացած չէ և գտնվում է մի այնպիսի հիվանդոտ դրության մեջ, որ միայն զգում է յուր ցավերը, բայց դարման անելու շնորհ չունի, այն ժամանակ նրան յուր թշվառ վիճակից ազատելու հոգսը վերևից դեպի ցած է իջնում։ Դա հայտնվում է բարձր կենտրոններում, մայրաքաղաքներում, ուր գտնվում են ժողովրդի ավելի զարգացած, գործունյա դասերը։ Ամբոխը ենթարկվում է այդ դասերին և կրավորական դեր է խաղում։

Առաջին միջոցը արմատական է, իսկ վերջինը ներգործական»[25].

Ռաֆֆու ստեղծագործություններում միաժամանակ երևան է գալիս սուբյեկտիվ գործոնների ակտիվ, վերափոխող և ուղղություն տվող դերն ու նշանակությունը։ Նրա դրական հերոսները հենց այդ սուբյեկտիվ ուժերն են, որոնք կապված են ժողովրդի հետ և կոչված են դաստիարակելու, ուղղություն տալու նրա ազատագրական պայքարին, մոբիլիզացնելու նրան և բարձրացնելու նրա ազգային ինքնագիտակցությունն ու ինքնաճանաչողությունը։

Պարսկական և թուրքական բռնակալների ծանր լծից ազատագրվելու համար մղվող պայքարի վճռական օրերին հայ ժողովուրդը առաջ է քաշում իր անվանի զավակ, հայրենիքին ու ժողովրդին անհուն սիրով նվիրված Դավիթ բեկին, որին ասում է. «Դանակը ոսկորին է հասել... Մեր ստրկության լուծը օրըստօրե ծանրացավ, մեր վիճակի դառնությունն օրըստօրե սաստկացավ։ Այժմ ժողովուրդը ուխտել է կատարել մի վճռական գործ՝ կամ միանգամայն կործանվել և բնաջինջ լինել, կամ բոլորովին ազատվել մահմեդական բռնակալությունից։ Բայց ժողովրդին պետք է մի փորձված ձեռք, որ առաջնորդի նրան։ Այդ ձեռքը նախախնամության կամքով պետք է լինի քոնը...»[26]։

Փառաբանելով հայ ժողովրդի անձնուրաց ու ազնիվ զավակներին, Ռաֆֆին ընդգծում է հայ ժողովրդի վեհությունն ու առաքինությունը։ Վարդան Մամիկոնյանի դյուցազնական սխրագործությունների, նրա ժողովրդականության մասին Ռաֆֆին գրում է. «Ձեզանից ամեն մեկը գիտե, թե ով էր Վարդանը։ Բայց գուցե շատերը չգիտեն, թե ինչ էր Վարդանը,—Վարդանը մի ամբողջ ժողովուրդ էր. Վարդանը այդ ժողովրդի մարմնացած բողոքն էր։ Բողոք՝ բռնության դեմ, բողոք՝ անարդարության դեմ, բողոք՝ անազնվության դեմ...։ Վարդանի անձնավորության մեջ միացած էր ժողովուրդը։ Նրա փառքը ժողովրդին է պատկանում։ Վարդանը,—ինքը ժողովուրդն էր... Վարդանը ժողովրդի հոգու արտահայտության ծնունդն էր»[27]։

Իր վրա կրելով Նալբանդյանի գաղափարական խոր ազդեցությունը, Ռաֆֆին հանդես էր գալիս որպես ազատության խոշոր երգիչ։ Նրա բոլոր դրական հերոսները տոգորված են ազատության վեհ գաղափարներով և պայքարում են իրենց ազգի ու ժողովրդի ազատագրության համար։ Իր հերոսների բերանով Ռաֆֆին ապացուցում է, որ ազատությունը հանդիսանում է կենդանի օրգանիզմի զարգացման անհրաժեշտ պայմանը, մարդու գլխավոր հատկանիշներից մեկը։ Ռաֆֆու հերոսները լավ են գիտակցում, որ ազատությունը թանկ է բնության շնորհած բոլոր բարիքներից. «...ազատությունը,—գրում է Ռաֆֆին,—մարդու ընդաբույս բնազդումներից մեկն է, նա ստեղծված և ծնված է մարդու հետ... Ազատությունը... մարդու հասարակական կյանքի մթնոլորտն է, որի մեջ զարգանում է նա, կատարելագործվում է և հասնում է իր մարդկային բարձր նշանակությանը։ Որքան ճնշված, որքան սահմանափակված լինի այս մթնոլորտը, այնքան մարդը անզոր, ծույլ ու բթամիտ կմնա։ Ազատությունը մարդ սովորում է ազատության մեջ»[28]։

Խոշոր և կարևոր նշանակություն տալով սուբյեկտիվ գործոններին, առաջավոր անհատներին և պրոգրեսիվ գաղափարներին,

25 Ռաֆֆի, Տաճկահայք, էջ 8։

26 Ռաֆֆի, Դավիթ բեկ, Երկերի ժողովածու, հատ. 6, էջ 132—133։

27 Նույն տեղում, էջ 287—288։

28 Ռաֆֆի, Կայծեր, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 490—491։

Բաֆֆին գրում է, որ ազատագրական պայքարի գաղափարախոսությունը պետք է դառնա մասսաների սեփականություն հենց այդ առաջավոր մարդկանց միջոցով։ Այդ անհատները պետք է ժողովրդին լուսավորեն, կրթեն, բարձրացնեն նրա ազգային ինքնագիտակցությունը, մոբիլիզացնեն և ուղղություն տան նրա պայքարին։ Այդպիսի անհատներ Բաֆֆին համարում է երիտասարդներին, որոնք կրթված ու լուսավորված լինելով ազատագրական պայքարի գաղափարախոսությամբ, դառնում են քաջ ու համարձակ։

«Խենթ»-ի հերոսներից մեկի՝ Միքայել Դուդուկչյանի բերանով Բաֆֆին ասում է. «Երբ որևիցե ժողովրդական շարժման գաղափարը մի քանի անհատների երևակայության ցնորք է միայն, և տակավին չէ ընդհանրացել, չէ պատրաստվել ամբոխի գոնե մի մասի մեջ,—մի հարվածով կարելի է ոչնչացնել բոլորը, երբ առաջնորդող անձինքը ոչնչացված կլինեն։ Բայց ամբոխը ուրիշ բան է, ամբոխի մեջ միտքը սպանել անհնարին է»[29]։

Բաֆֆին միանգամայն ճիշտ է հասկանում այն իրողությունը, որ ժողովրդի առաջնորդ ու ղեկավար դառնալու համար, հարկավոր է գիտակցել նրա առջև կանգնած նպատակը։ Լինել կրթված ու լուսավորված, որովհետև նպատակի խոր և բազմակողմանի գիտակցումը, ուսումն ու լուսավորությունը ուժ են տալիս ազատագրական շարժմանը, մարդուն դարձնում են արի ու քաջ։ «Իսկական քաջ լինելու համար,—ասում է նա,—պետք է գիտակցաբար ոգևորված լինել որևիցե գաղափարով»[30]։

Բաֆֆին դատապարտում է արևմտաեվրոպական օրիենտացիայի սիրահարներին։ Նա արևմտահայ ժողովրդի ազատագրության հույսը կապում է Ռուսաստանի և Արևելահայաստանի կողմից նրան ցույց տրվող օգնության հետ։ Եվրոպական լուսավորված ազգերին Բաֆֆին համարում է վամպիրներ, որոնք իրենց խորամանկ քաղաքականությամբ ծծում են իրենց զոհերի արյունը և կողոպտում նրանց ունեցվածքը։

Պահանջելով օգտագործել ռուս-թուրքական պատերազմի հետ կապված բարենպաստ հանգամանքները հայերի ազատագրության համար, Բաֆֆու հերոսներից Դուդուկչյանը կոչ է անում հայերին՝ ակտիվ կերպով մասնակցել պատերազմին, օգնել ռուսներին, ցուցաբերել քաջագործություններ և հավատացնում է, «որ ռուսներն ամեն կերպ կօգնեն մեզ»[31]։

29 Բաֆֆի, Խենթ, Երկերի ժողովածու, հատ. 3, էջ 274։
30 Բաֆֆի, Տաճկահայք, էջ 50։
31 Բաֆֆի, Խենթ, էջ 192։

Հավատ ժողովրդի ուժերի ու ընդունակությունների նկատմամբ, հավատ երիտասարդության հեղափոխական ոգևորության, անձնազոհության ու քաջության նկատմամբ, զուգադիպում են Բաֆֆու «Հայ երիտասարդությունը» աշխատության մեջ ոգևորությամբ փառաբանված Փարիզի այն հեղափոխական երիտասարդությանը, որը 1871 թվականի Փարիզի կոմունայի օրերին զենքը ձեռքին պայքարում էր Ֆրանսիայի ժողովրդի ազատության համար։ «Ով փոքր ի շատե ծանոթ է Ֆրանսիայի պատմությանը,— գրում է Բաֆֆին,— գիտե, թե որպիսի մեծ դեր խաղացին ուսանողները 1830 և 1848 թվականներում և մանավանդ կոմունայի ժամանակ»[32]։

Բաֆֆին դատապարտում է հայ ունևոր և իշխող դասակարգերին, որոնք իրենց նեղ շահերից ելնելով, դավաճանում էին ազգի շահերին, ժողովրդի շահերը զոհում էին բռնակալներին, դառնում էին նրանց ձեռքին կույր գործիք, որոնց միջոցով բռնակալներն իրենց քաղաքականությանը օրինական ձև էին տալիս։ Այդ դասակարգերի որոշ մարդկանց դավաճանական արարքները Բաֆֆին ներկայացնում է Թոմաս էֆենդու կերպարով։

1884 թվականին լույս է տեսնում Բաֆֆու նշանավոր «Կայծեր»-ը։ Այս իր ստեղծագործությամբ Բաֆֆին հայերին ակտիվ ինքնապաշտպանության, խիզախության ու աննկուն կամքի է կոչում. «Թե՛ բնության մեջ և թե՛ մարդկային կյանքում,—գրում է նա,— ոչինչ առանց պատճառի չի կատարվում։ Մենք տեսնում ենք, որ ամեն մի ճնշված ու սահմանափակված զորություն, որքան ավելի սեղմվում է, այնքան ավելի զարգանում է նրա մեջ ընդդիմահատության ուժը։ Այնուհետև նա պիտի պայթի, նա պիտի խորտակի իրեն սահմանափակող պատվարը և իր բնական ազատ ծավալականության պիտի հետևի։ Ժողովուրդը, ամբոխը, նույնպես մի զորություն է։ Նա երկար չի կարող համբերել իրեն ճնշող և ստրկացնող կոպիտ ձեռքին։ Նա վերջապես պիտի խլրտի, պիտի խորտակի իր շղթաները և պիտի թոթափե բռնակալի լուծը։ Բոպեն հասել է... Այս դրության մեջ է այժմ մեր ժողովուրդը»[33]։

Բռնության ու ճնշման նկատմամբ աճում էր մասսաների ցասումը։ Բռնակալության դեմ ուղղված ատելությունը բոցավառվում է ժողովրդի սրտում։ Ազատության տենչը նրան մաքառման ուժ ու եռանդ է ներշնչում։ Իրավացի է Բաֆֆին ասելով, որ «ազատության

32 Բաֆֆի, Հայ կինը և հայ երիտասարդությունը, Թիֆլիս, 1890, էջ 92։
33 Բաֆֆի, Կայծեր, Երկեր, հատ. 4, էջ 478։

հայրը բռնությունն է, իսկ մայրը՝ անիրավությունը»[34]։ Ռաֆֆին իրավացիորեն նշում էր, որ երբ ժողովուրդը գիտակցում է ազատության անհրաժեշտությունը, այլևս չի կարող տանել բռնակալների լուծը, ոտքի է կանգնում ու թոթափում է այդ լուծը, փշրում է իրեն կաշկանդող շղթաները և նվաճում է իր ազատությունը։ Ժողովրդի մեջ ազատության անհրաժեշտության գաղափարը պետք է մտցնեն նրա ղեկավարները։ «Լինում է, այո,—գրում է նա,—որ մի ամբողջ ժողովուրդ ինքն է կանգնում ոտքի վրա, ինքն առանց օտարի ձեռնատվության թոթափում է իր վզից ստրկության լուծը։ Բայց դա լինում է այն ժամանակ, երբ նա բավականին հասկացել է, թե ինչ բան է ազատությունը։ Եթե մեր ժողովրդի առաջնորդող մասը նրան այդ շավիղի մեջ դրած լիներ, նրան այնպիսի ուղղություն տված լիներ, որ վերջապես հասկանար, թե որքան վատ է օտարի կոպիտ ուժի տակ ճնշված դրությունը, թե որքան լավ է իր սեփական հողի վրա իր քրտինքով ազատ ապրելը,—մեր գործը շատ հեշտ առաջ կերթար»[35]։

Ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպման և ազգային ինքնագիտակցության բարձրացման լավագույն զենքերից մեկը Ռաֆֆին համարում է գիտությունն ու լուսավորությունը։ «Առանց հիմնավոր գիտության,—գրում է նա,—մարդ չի կարող օգուտ բերել ո՛չ իր ազգին, ո՛չ իր հայրենիքին, և ոչ էլ մարդկությանը»[36]։

Առանց գրքի չկա գիտություն, ժողովուրդը դպրոց է, նրան պետք է գիրք ու բանաստեղծություններ տալ, առաջավոր գաղափարներով զինել նրան, որովհետև «մի գիրք կարող է փրկել մի ամբողջ ազգ»[37]։

Հենց այդ վեհ նպատակին են ծառայում «Կայծեր»-ի հերոսները՝ Ասլանը, Կարոն, Ֆարհատը և ուրիշներ, որոնք կոչված են բորբոքելու ժողովրդի հայրենասիրական զգացմունքները, բարձրացնելու նրա ազգային ինքնագիտակցությունը, կազմակերպելու նրա ինքնապաշտպանությունը, կրթելու և լուսավորելու նրան, մոբիլիզացնելու նրա ուժերը բռնակալների լուծը խորտակելու, ազգի ազատությունն ու անկախությունը նվաճելու համար։

Այդպիսիներից է, որ ժողովրդի չհանգած կայծերից պետք է առաջացնել մեծ հրդեհ։ Անհրաժեշտ է ուժ տալ այդ կայծերին, բոցավառել ու թեժացնել կրակը։ «Այո՛,—գրում է Ռաֆֆին,—հանգած չեն, բայց մնացել են նրանց անզոր կայծերը միայն, որոնց պետք է շունչ տալ, բորբոքել, մինչև նրանք բոցավառվեն։ Իսկ դա կլինի տոկուն և հիմնավոր կրթությամբ, որպեսզի ժողովուրդն ինքը հասկանա, թե որքան լավ է ազատությունը, որքան հանգիստ և ուրախ է լինելու մարդու կյանքը, երբ նա ազատ է»[38]։

Ողջունելով զեյթունցիներին՝ իրենց անձնուրաց ու հերոսական պայքարի համար, Ռաֆֆին դատապարտում է արևմտահայ լիբերալներին, որոնք դեռևս որոշ ակնկալություններ ունեին արևմտաեվրոպական դիվանագիտությունից, փոխանակ ղեկավարելու ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները։ «Զեյթունից,—գրում է նա,—ապստամբության ձայն էր լսվում։ Արզրումի մեջ որոնում են մի ինչ-որ դավադրություն, Կ. Պոլսում այդ միջոցին զբաղված էին երկու հանելուկային թվերով՝ 16 և 61»[39]։

Այսպիսով, Ռաֆֆին չի գերագնահատել անհատի դերը։ Նա իր դրական հերոսների, հայ ժողովրդի լավագույն զավակների պատմական դյուցազնական սխրագործությունները վեր հանելով, փառաբանում է հայ ժողովրդի փառքն ու վեհությունը։ Նա ժողովուրդն է համարում պատմության կերտող. հերոսների դերը ստորադասել է ժողովրդի դերին, ճիշտ է տվել ժողովրդի ու հերոսների նպատակների ու գործողությունների դիալեկտիկական միասնությունը, ճիշտ է ըմբռնել սուբյեկտիվ գործոնների դերը պատմության անիվի շարժումն արագացնելու գործում։ «...Մենք բոլորովին հուսահատ չենք,—գրում է Ռաֆֆին,—մենք ունենք... մեծ զորություն—ամբոխը—դա բավական է...»[40]։

Ռաֆֆին ազգային դեմոկրատ է, ազգային-ազատագրական պայքարի բոցաշունչ գաղափարախոս, մեծ հայրենասեր։ Նա իր ամբողջ կյանքը նվիրել է իր ազգի ազատության ու անկախության վեհ նպատակին։

1888 թվականին Ռաֆֆին ավարտեց «Սամվել» խորագրով իր պատմավեպը, որը տոգորված է ջերմ հայրենասիրությամբ և ազատագրական պայքարի գաղափարախոսությամբ։

Ռուսական ցարիզմի և թուրքական սուլթանիզմի կողմից հայ ժողովրդի ասիմիլացման քաղաքականություն էր տարվում։ Հայ ազգի գոյությունը վտանգված էր։ Իր այդ վեպով Ռաֆֆին հայ ժո-

34 Ռաֆֆի, Կայծեր, էջ 478։
35 Նույն տեղում, էջ 487։
36 Նույն տեղում, էջ 456։
37 Նույն տեղում։

38 Ռաֆֆի, Կայծեր, էջ 490։
39 Նույն տեղում, էջ 477։
40 Նույն տեղում, էջ 491։

ղովրդին սպառնացող վտանգի դեմ միասնական պայքարի կոչ է անում։

Չորրորդ դարը վերականգնվում էր։ Այն ժամանակ պարսկական բռնակալները կամենում էին հրի և սրի ճանապարհով ոչնչացնել հայ ժողովրդին, ասիմիլացման ենթարկել նրան։ Բայց հայ դյուցազները իրենց արյան գնով փրկեցին ժողովրդին սպառնացող վտանգից։

Րաֆֆին այդ նոր պայմաններում հայ ժողովրդին ցարիզմի ու սուլթանիզմի նենգ դիտավորությունների դեմ պայքարելու կոչ է անում։

Ազգն ու հայրենիքը տեսնել ազատ ու անկախ, տեսնել նրանց աճման ու զարգացման երջանիկ ուղու վրա,—այս է Րաֆֆու նվիրական իղձը։

Մեծ է եղել Րաֆֆու դերը ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության պրոպագանդման գործում։ Նա որպես խոշոր արվեստագետ և բոցաշունչ հայրենասեր, միշտ էլ կենդանի է մնում հայ ժողովրդի համար։ Նրա լավագույն ստեղծագործությունները արթնացրել են մտքերը և հայ ժողովրդին օգնել են առաջ շարժվելու և ընթանալու ազատագրության ուղիով։

«Րաֆֆին և հայ վիպասանությունը» խորագիրը կրող հոդվածում Ա. Արփիարյանը գրում է. «Ներենց, Մամուրյան, Պերճ Պռոշյան, Տեր-Սարգսենց, իրենց գլուխ ունենալով Րաֆֆին, կներկայացնեն հայ ազգի ոգին և ի նման տիրապետող գաղափարներին... Ազգ մը որուն մեջ այնքան զանազան կարգի բաժանումներ կտիրեն, ազգ մը որ թեպետ այնքան ցիր ու ցան չէ, որքան սխալմամբ կկարծվի լինել, բայց կգտնվի ընդ հովանյավ այնպիսի տերության, որ իրարմե բոլորովին տարբեր քաղաքականության կպատկանին, այդ ազգը թե յուր հողին վրա և թե յուր գաղթականության մեջ կսնուցանե գաղափարներու համերաշխություն։ Պ. Րաֆֆին այդ գաղափարներու ամենեն կենդանի ներկայացուցիչը հանդիսացավ»[41]։

Վանի երիտասարդ հայրենասերները արծաթյա ոսկեզօծ թանաքաման են ուղարկում Րաֆֆուն, հետևյալ մակագրությամբ. «Վանի հայ երիտասարդությունը Րաֆֆիին, 1884, փետրվարի 16»։

«Մշակ»-ի խմբագրությանը ուղարկած իրենց հեռագրում նրանք գրում են. «Վանի երիտասարդությունը այս բոպեիս տոնում է Րաֆֆիի հոբելյանը։ Կեցցե Րաֆֆին»[42]։

41 «Մասիս», 1884, № 3734, էջ 130—131։
42 «Մշակ», № 39, 1884։

Այսպիսով, Րաֆֆին հանդես եկավ որպես հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոս, մեծ արվեստագետ ու հայրենասեր։ Նա կարողացավ նայել միշտ դեպի առաջ և իր վեպերով ու վիպակներով, իր հրապարակախոսական ելույթներով առաջ էր մղում հայ հասարակական-գաղափարական միտքը, օգնում ժողովրդին՝ գտնելու իր ազատագրության ուղին։

ԳՐ. ԱՐԾՐՈՒՆԻ ԵՎ ՆՐԱ ՕՐԳԱՆ «ՄՇԱԿ»-Ի ԴԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊՐՈՊԱԳԱՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Արևմտահայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ու նրա գաղափարախոսության ծավալման բնագավառում նշանակալից դեր են խաղացել Գր. Արծրունին և նրա օրգան «Մշակ»-ը։

«Մի՞թե այժմ հայերի հերթը չէ՞» վերնագրով առաջնորդող հոդվածում, Բալկանյան սլավոն ժողովուրդների զինված ապստամբության փորձից ելնելով, Գր. Արծրունին պահանջում է, որ արևմտահայերը նույնպես զենքի դիմեն։ «Մենք կարող ենք այնուամենայնիվ այն համոզմունքին մնալ,—գրում է նա,—որ թուրքաց տերության պես վայրենի, բարբարոս տերությունից մարդկային իրավունքները պահանջելու համար ուրիշ ճանապարհ չկա, եթե ոչ զենքը ձեռքին արյուն թափելով»[43]։

«Գոյության կռվի համար» առաջնորդող հոդվածում Գր. Արծրունին նորից արևմտահայերին զենք վերցնելու կոչ է անում։ Հայերի համար ստեղծված օրհասական դրությունից դուրս գալու միակ ելքը նա համարում է զինված ապստամբությունը։

Ողջունելով վեյթունցիների 1878 թվականի զինված ելույթը, Արծրունին գտնում է, որ հայերի մեջ արդեն հասունանում է զինված ապստամբության գաղափարը, որ նրանք արդեն գիտակցում են ապստամբության անհրաժեշտությունը, որ նրանք արդեն զենքի են դիմում։ «19-րդ դարի,—գրում է նա,—քաղաքական բարոյականությունը այն է՝ «Ես ապստամբվում եմ, ուրեմն ես կամ»[44]։

Ունենալով ռուսական օրիենտացիա և արևմտահայերի ազատագրության հույսերը կապելով արևելյան պատերազմներում Ռուսաստանի հաջողությունների և նրա օգնության հետ, Արծրունին, Րաֆֆին և «Մշակ»-ի մյուս հրապարակախոսները արևմտահայերին

43 «Մշակ», № 182, 1877։
44 «Մշակ», № 165, 1878։

կոչ են անում կազմակերպել ապստամբական ջոկատներ, օգնել ռուսական զորքերին։

«Այսպես է միշտ» վերնագրով առաջնորդող հոդվածում Արծրունին գրում է. «...միայն զենքը, արյունը, բռնի ուժը, այդ հնացած միջոցները մեր լուսավորված դարում գին ունեն մի ազգության գոյության մասին վկայելու համար»[45]։

Զարգացնելով իր այդ թեզը «Քաղաքական մտածմունքներ» առաջնորդողում Արծրունին գրում է, որ Հայկական հարցը կամ արևմտահայության ազատագրության հարցը կլուծվի միայն զենք վերցրած հայերի ձեռքով։ «...Թուրքաց հայերի ձեռքով զենքի բարձրացնելը ավելի կառաջացնի հայոց խնդիրը,—գրում է նա,—քան թե նրանց ամենազորեղ բողոքները թուրքերի և քրդերի հարբստահարության դեմ»[46]։

Արծրունին չի հրաժարվում եվրոպական տերությունների միջամտությունից ու օգնությունից։ Նա քննադատում է նրանց խոստմնազանցության, իրենց հանձն առած պարտավորությունների կատարման ուղղությամբ ցուցաբերած անվճռականության և անհետևողականության համար, իսկ հայերի զինված ելույթները պետք է հարկադրեն նրանց արագացնելու իրենց միջամտությունը։

Զանազան առիթներով Գր. Արծրունու խաղացած դերի մասին մենք խոսել ենք մեր աշխատության համապատասխան էջերում, շատ մեջբերումներ ենք արել նրանից։ Արծրունին հիմնադրեց «Մշակ» թերթը և այն ծառայեցրեց որպես ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության պրոպագանդման ամբիոն։

«Մշակ»-ը հանդիսացավ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության, արևմտա-եվրոպական տերությունների դիվանագիտության կեղծ խոստումների մերկացման և հայ ժողովրդին զինված ապստամբության կոչելու հրապարակային օրգան։ Ավելին. այն հանդիսացավ որպես ժամանակի հայ առաջավոր մտքի, առաջավոր հրապարակախոսության, քննադատական մտքի ծավալման և հետադիմական ուղղությունների դեմ պայքարող մարտական օրգան։ Նրա ակտիվ գործակիցներն ու հրապարակախոսներն էին Գր. Արծրունին և Բաֆֆին։

«Մշակ»-ը,—գրում է Բաֆֆին,—յուր մոգական հարվածով միանգամից շարժեց հասարակական թմրած մարմինը։ Մարդիկ

45 «Մշակ», № 138, 1880։
46 «Մշակ», № 156, 1880։

հանկարծ աչքերը բաց արին, սկսեցին մտածել իրենց գործերի վրա, սկսեցին մտածել իրենց պետքերի վրա։ Լրագիրը դարձավ հասարակության դաստիարակ և, միևնույն ժամանակ, նրա ընդհանուր կարիքների արտահայտությունը։

«Մշակ»-ը ընդարձակեց, լայնացրեց հայկական աշխարհի նեղ հորիզոնը ոչ միայն Ռուսաստանի հայի, այլ ամենուրեք, ուր հայերն էին ապրում...»[47]։

Այնուհետև Բաֆֆին իր այդ նույն հոդվածում նշում է այն լուրջ և խոշոր նշանակությունը, որ ունեցավ «Մշակ»-ը հայ հասարակական, գաղափարական քննադատական մտքի և հայ վիպասանության վրա։ «Վաղեմի ավանդական ինքնախաբեության փոխարեն,—գրում է նա,—սկսեց տիրապետել կրիտիկական հայացքը։ Ինքնաքննադատությունը և ինքնաճանաչողությունը—ահա այն դրդող և առաջ մղող տեսակետը, որով սովորեցրեց նա հայ հասարակությանը մտածել յուր պետքերի և յուր թերությունների վրա»[48]։

Իբրև հայ լիբերալիզմի օրգան, «Մշակ»-ը շարունակեց և առաջ տարավ «Հյուսիսափայլ»-ի տրադիցիաները։ Իր երևան գալու առաջին իսկ օրից (1872), նա պայքար է մղել կղերապահպանողական հոսանքի և մյուս հետադիմական ուղղությունների դեմ, որոնք լուրջ արգելք էին հանդիսանում հայ հասարակական-գաղափարական մտքի զարգացման և ազատագրական պայքարի գաղափարախոսության ծավալման գործին։ «Այդ բոլորը, իհարկե,—գրում է Բաֆֆին,—չէր կարող չգրգռել խավարամոլների բարկությունը։ Հին փարիսեցին կատաղեց, հին դպրոցը փրփրեց և ամեն կողմից սկսեց քարեր արձակել։ Բայց քաջ մարտիկը անվեհեր կերպով առաջ տարավ յուր սկսած գործը և լավ տարավ»[49]։

Բաֆֆու մահվանից մեկ տարի հետո «Մշակ»-ի էջերում լույս տեսած նրա այս հոդվածը մի մահախոտական և լուրջ ապտակ էր խավարամոլներին, որոնք սկսեցին քարկոծել «Մշակ»-ին այն բանի համար, որ նա տպագրել էր Բաֆֆու վեպերն ու վիպակները, որոնք նոր դարագլուխ էին հայ գրականության համար և հագեցված էին ազատագրական պայքարի գաղափարներով։

Կղերա-պահպանողականները փորձում էին «Մշակ»-ին մեղադրել դավաճանության, կաշառվածության և այն բանի համար,

47 «Մշակ», № 9, 1889։
48 «Մշակ», № 9, 1889։
49 Նույն տեղում։

որ նա շարունակում էր «Հյուսիսափայլ»-ի տրադիցիաները, քննադատում էր եկեղեցու սպասարկուների այլանդակությունները, պրոպագանդում էր ազգային-ազատագրական պայքարի և զինված ապստամբության գաղափարախոսությունը և մեծարում էր Րաֆֆուն։

«Մշակ»-ի և Րաֆֆու դիրքերի պաշտպանությամբ հանդես եկավ Գր. Արծրունին, մինչև վերջ մերկացրեց «Մեղու»-ի խմբագիր Սիմոնյանցին, որը զայրացած էր «Մշակ»-ի խմբագրության դեմ՝ Րաֆֆու երկերի տպագրության համար։

Պաշտպանելով Րաֆֆուն, բարձր գնահատելով նրա ստեղծագործությունները հայ ժողովրդի ազատության և հայ կուլտուրայի զարգացման ու հարստացման գործում, Գր. Արծրունին գրում է. «Նրա (իմա՝ Րաֆֆու—Հ. Վ.). վեպերը... կկազմեն հայոց նոր գրականության մեջ մի նոր դարագլուխ։ Խավարամիտ «Մեղու»-ն... աշխատում է մոլորեցնել հասարակության այդ տեսակ բթացնող և անազնիվ լոգիկայով»[50]։

«Մամուլի անբարոյականությունը» հոդվածում Րաֆֆին Սիմոնյանցին որակում է որպես անազնիվ, գրականության և մամուլի բարքերն արատավորող մարդ, որը «այնքան պատկառանք չունի, որ համարձակվում է դարձյալ միևնույն համարի առաջնորդող հոդվածի մեջ խոսել մամուլի ազնվության վրա։ Մի՞թե մամուլի ազնվություն է այդ նույն համարի մեջ կամ մեկին մինչև երկինք բարձրացնել, կամ աշխատել մրոտել նրան»[51]։

«Մշակ»-ի շուրջը համախմբված ազգային լիբերալներն ու ազգային դեմոկրատները պահպանողական հոսանքների դեմ ծավալված պայքարում հաղթանակ շահեցին և նվաճեցին նորանոր կողմնակիցներ։ «Աղբյուր» և «Տարազ» պարբերականները կանգնեցին առաջին դիրքերում ու մերկացրին խավարամոլներին։ «Հին գաղափարներով պաշարված միտքը,—գրում է «Տարազ»-ը Գր. Արծրունու հոբելյանին նվիրված առաջնորդողում,—որին հեշտությամբ տեղ չի տալիս և սկսում է կռվել նորամուտ գաղափարների դեմ։ Օրինակ՝ դուրս է գալիս մի Գալիլեյ և ասում է. «Երկիրն է պտտվում արեգակի շուրջը և ոչ թե արեգակը՝ երկրի»։ Այսպես ասելու համար նրան հերետիկոս են համարում, բանտարկում են խեղճ ծերունուն, որի հանճարը համարձակվել էր մի բնական ճշմարտություն հայտնագործել»[52]։

50 «Մշակ», № 34, 1883։

51 «Մշակ», № 35, 1883։

52 «Տարազ», № 5, Թիֆլիս, 1890, էջ 69։

«Տարազ»-ը պահպանողականներին համարում է 19-րդ դարի ինկվիզիտորներ, որոնք հալածում են առաջավոր միտքն ու գաղափարախոսությունը, հալածում են առաջավոր գործիչներին։ «Արտակարգ մտքի տեր եղողները, նոր միտք, նոր գաղափար, նոր ճշմարտություն հայտնողները,—գրում է նա,—ոչ միայն պատվի չեն արժանանում, այլ կամ խելագար են համարվում և գժանոց գցվում, կամ հերետիկոս համարվում, բանտարկվում և գլխատվում են»[53]։

Խոսելով Գր. Արծրունու խաղացած դերի մասին, փառաբանելով նրան, «Տարազ»-ը գրում է. «Ո՞վ պիտի կատարե մարգարեի դերը, ո՞վ պիտի լուսավորե ժողովրդի միտքը, ո՞վ պիտի տա ժողովրդին գիտության պայմաններ, եթե ոչ լուսամիտ հրապարակախոսությունը, եթե ոչ առողջադատ գրականությունը։ Ահա այդ գրականության գլուխն է կանգնած Գր. Արծրունին շարունակ 25 տարի և ձայն ու եղանակ է տալիս հրապարակական խոսքին»[54]։

Այսպիսով, պայքարելով ֆեոդալական հարաբերությունների լիկվիդացման և կապիտալիստական նոր հարաբերությունների հաստատման համար, պրոպագանդելով ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը, Գր. Արծրունին ու նրա օրգան «Մշակ»-ը վայելում էին հայ պրոգրեսիվ հասարակայնության համակրանքն ու աջակցությունը։

Մ. Մամուրյան.—Մամուրյանը ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության խոշորագույն դեմքերից մեկն էր, արևմտահայ դեմոկրատական-լուսավորական ուղղության մեջ եռակի գործիչ[55]։ Նա հանդիսանում էր ազգային-դեմոկրատ, ականավոր գրող ու հրապարակախոս, թարգմանիչ, անողոք քննադատ ու ազատության երգիչ, Նալբանդյանի գաղափարական մերձակիցը, որը հայ ժողովրդի ազատագրության հարցում իր յուրահատուկ ծրագիրն ու տեսակետներն ուներ։ Նրա աշխատությունները, հրապարակախոսական ելույթները տոգորված են ազգային ազատագրական պայքարի շնչով։

53 «Տարազ», № 5, էջ 69։

54 Նույն տեղում։

55 Մ. Մամուրյանի մասին տե՛ս 1) Ա. Գ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 1, էջ 488—495 և հետո, Հայպետհրատ, 1955, 2) Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, էջ 270—272, 3) Վ. Ա. Պարսամյան, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, էջ 46—56, 4) Հ. Ղազարյան, Մաթեոս Մամուրյան, Հայպետհրատ, 1961։

Մ. Մամուրյանը ատում էր բռնակալներին ու նրանց իշխանությունը, ատում էր ժողովրդի հարստահարողներին։ Ազատություն նվաճելու համար նա մասսաներին կոչ էր անում ոտքի կանգնել և միացյալ ուժերով փշրել ազատությունը կապկպող շղթաները։ Նա իր վրա կրել է Մ. Նալբանդյանի հեղափոխական-դեմոկրատական գաղափարների ազդեցությունը։ Եվ պատահական չէ, որ նա 1866 թվականին, Նալբանդյանի մահվան կապակցությամբ «Ծաղիկ»-ի էջերում զետեղված իր հոդվածում Նալբանդյանին անվանում է «մեծ մարդ», «ճշմարտության և ազատության համար հոգի և շունչ տվող գործոն իմաստասեր»[56]։

Կարդալով Նալբանդյանի «Երկու տող»-ը, «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» և այլ գրական ստեղծագործություններն ու հրապարակախոսական ելույթները, ծանոթանալով ազատության մասին Նալբանդյանի ունեցած հայացքին, Մամուրյանը ցույց է տալիս այն խոշոր նշանակությունը, որ ունեցել են այդ աշխատությունները արևմտահայ դեմոկրատական-լուսավորականների՝ Սրվանձյանի, Չիլինկիրյանի, Հայկունու, Սրվանձտյանի և ուրիշների համար։ Նալբանդյանի մասին Մամուրյանը գրում է. «Այս վսեմ և սպառնալից գոչումը, որ Նալբանդյանցի կենաց և մահու բոլոր խորհուրդները կպարունակե, իր մահարձանի վրա պետք է արձանագրել, ինչպես որ պետք է դրոշմվի ամեն հայի սրտի մեջ իբրև նվիրական կտակ մը, որուն գործադրությունը ապագա սերունդին հանձնարարված է»[57]։

Այսպիսով, Մամուրյանը հայ մատաղ սերնդին հանձնարարում է ազատության մասին Նալբանդյանի վեհ գաղափարների իրականացումը։ Նալբանդյանին նվիրված իր այդ հոդվածը Մամուրյանը ավարտում է հետևյալ խոսքերով. «Նալբանդյանը, ինչպես կենդանության ատեն, նույնպես մահվանեն ետև պիտի գործե ազգին մեջ, քանի որ շղթան և սուրը չեն կրնա կաշկանդել և սպանել այն լուսատու գաղափարները, որ հոետոր կանգնեցավ նաև, որոնք իբրև ամպրոպային փոթորիկներ կորոտան թագակիր բռնավորներու գլուխներուն վրա, մինչև որ փայլակն ու կայծակը պայթին և թագ ու գլուխ այրին, տոչորին վասն զի Նալբանդյանը հավատքի մը համար, ճշմարտության և ազատության հավատքին համար զոհ ընկավ։

56 «Ծաղիկ», № 124, 1866, էջ 490։
57 Նույն տեղում։

Նալբանդյանցի ազատական հայրենասիրությունն անդադար հրավեր մը ունի կարդալու մեզ, և ազգը նվիրական պարտք մը կատարելու»[58]։

Այս տողերը վկայում են, որ Մամուրյանը միանգամայն բաժանում էր Նալբանդյանի հեղափոխական-դեմոկրատական հայացքները, կողմնակից էր ժողովրդական հեղափոխության ճանապարհով՝ հայ ժողովրդի ազատության նվաճմանը՝ ինչպես բռնակալների տիրապետությունից, այնպես էլ ազգային հարստահարողներից։

Նկարագրելով հայերի ծանր վիճակը, Մամուրյանը գրում է, որ Թուրքիայում «շատ հայեր սովամահ կորան, բռնավորներու որդ ընկան, ստրկության լեղիի բաժակն ըմպեցին և դեռ կըմպեն... Հայրենյաց և գիտության կարոտ մեռան և դեռ կմեռնին»[59]։

Մամուրյանը նշում է, որ Թուրքիայում հայերը բառիս իսկական իմաստով զուրկ են ազատությունից։ Նա նկատի ունի գավառահայությանը, որը ստրկացված էր։ «Քաղաքական ազատության նշույլ չկա այստեղ,—գրում է նա,—«Մեծ ձուկը պստիկը կկլլե»—առածն այստեղ իր ամբողջ իմաստով կգործածվի...»[60]։

Ո՞րն էր հայերի համար ստեղծված այդ դրությունից դուրս գալու ելքը։ Մամուրյանը այդ ելքը համարում է ժողովրդի ապստամբությունը, նրա զինված ելույթը։ Նա գրում է, որ օտարներից հայերին ոչ մի փրկության հույս չկա։ Հետևապես, հայերը իրենց ազատության հույսը իրենց վրա պետք է դնեն, պետք է նվաճեն ազատությունը, փշրեն շղթաները սեփական ուժերով. «Հուսալ, որ օտար ազգ մը Հիսուսի ըրած հրաշքը պիտի գործե—ցնորք է։ Սպասել, որ արտաքին փրկիչներ գան և հայ ժողովրդյան սև պատանքը քակեն՝ հիմարություն է։ Հեգ և ստրուկ ժողովրդյան մ'առաջին և միակ ազատարարն ինքն է, իր աշխատությունն է, իր ներքին ուժն է, իր լույսն է, միությունն ու հաստատ կամքն է»[61]։

Հավատը հայ ժողովրդի ուժերի ու ընդունակությունների նկատմամբ՝ Մամուրյանի հայրենասիրության գլխավոր հատկանիշներից մեկն է։ Նա գտնում է, որ հայ ժողովուրդն ունի պոտենցիալ ուժ՝ ընդունակ խորտակելու բոլոր բռնակալների իշխանությունը, բայց միաժամանակ պարսավում է ժողովրդի մեջ եղած պասիվությունը, անշարժությունն ու դանդաղկոտությունը։

58 «Ծաղիկ», № 124, էջ 490։
59 Մ. Մամուրյան, Հայկական նամականի, էջ 30։
60 Մ. Մամուրյան, Անկլիական նամականի, էջ 194։
61 Մ. Մամուրյան, Արևելյան մամուլ, 1876 թ. հունվար, էջ 5։

«Ժողովուրդ ըսածդ այն գետերուն կնմանի, որուն ջրերն մերթ ճդաշտանան և հանդարտ երես մը կառնուն, մերթ աներևույթ կլինին ու գետնափոր անձավներե անտես անցնելով՝ հանկարծ կպայթին, հեղեղատի պես լեռներեն կգահավիժին որոտընդոստ և քար ու ժայռ թավալոր կբերեն»[62]։

Այսպիսով, ժողովուրդն է, ըստ Մամուրյանի, պատմության շարժիչ ուժը, նա է ընդունակ լեռներ գահավիժելու, ժայռեր կործանելու։ Բայց ժողովուրդ ասելով, նա բոլորովին չէր շփոթում այդ ուժը նրա պարազիտ, ուրիշին բռնադատող, ուրիշի վաստակը հափշտակող ունևոր վերնախավերի հետ։ «Արդի ազնվականը հին ամուր դղյակին մեջ նստած զրահապատ ասպետին որդին է,—գրում է նա,—որ լորտերու ժողովին մեջ ունի աթոռ մը, որ իր արժանավորության տրիտուրը չէ, ազգի գործավորին միջին դարու ստրուկ է, որ՝ քաղաքակրթության անապատին մեջ տեսակ մը վայրենի՝ ոչ տուն, ոչ իրավունք, ոչ քվե, ոչ արև ունի և երկրին վրա թիզ մը տեղ չգտնելով՝ կիջնե անոր անդնդային հատակն ու շատ անգամ արահատեն իր հացը մուրալու ատեն կայրի, կխեղդի և դիակն անգամ անհետ կլինի»[63]։

Համոզված լինելով հայ ժողովրդի արդար գործի հաղթանակի անխուսափելիությանը, Մամուրյանը նախատում էր եկեղեցականներին, որոնք քրիստոնեական իրենց քարոզներով ժողովրդին դարձրել էին հավատի «կենդանի նահատակներ»[64], մեռցրել էին նրա մեջ ազատագրական ձգտումը, դատապարտել էին նրան անշարժության։

Խաղաղ միջոցներով հայերը օսմանյան բռնապետությունից ազատագրվել չեն կարող, ասում է Մամուրյանը, որ նրանք կարող են և պետք է դիմեն ապստամբության, դիմեն զենքի։ Ուրիշ ճանապարհ չկա։ «Բողոքն այս բռնության դեմ,—գրում է նա,—այսպես է աշխարհը, կգոռան, կապստամբեն, և իսկույն սուրին թիկն կհասնի զենքը...»[65]։

Ժողովրդի ապստամբության հաջողությունների համար Մամուրյանը շատ կարևոր նշանակություն է տալիս սուբյեկտիվ գործոններին, ժողովրդի անձնուրաց զավակներին, նրանց ղեկավարող, կազմակերպող և ուղղություն ցույց տվող դերին, նրանց ցուցաբերած քաջագործություններին, որոնք ժողովրդի ազատագրության

62 Մ. Մամուրյան, Հայկական նամականի, էջ 206։
63 Մ. Մամուրյան, Անկլիական նամականի, էջ 151—152։
64 Մ. Մամուրյան, Հայկական նամականի, էջ 60։
65 Մ. Մամուրյան, Անկլիական նամականի, էջ 68։

անսասան հավատով զոհում են իրենց կյանքը հայրենիքի համար։ Նրա աչքում ամեն մի հայրենասերի ցուցաբերած անձնուրաց սխրագործությունը գերազանց է տասնյակ վարձկան զինվորների արարքին, զինվորներ, «որոնք անիրավ դատի և շահու համար միայն ասպարեզ կիջնեն»[66]։

Մամուրյանը ժողովրդի ազատագրության հույսը կապում է սոցիալական հեղափոխության հետ՝ որպես ազատության նվաճման միակ ուղին։ Դա այն վեհ գործի համար մղվող պայքարի լուրջ խոչընդոտներն էր համարում՝ իրենց նեղ շահերից ելնող և բռնակալների իշխանությանը ստրկաբար ծառայող, օտարների առջև սողացող հայ հարուստներին, էֆենդիներին, կղերա-պահպանողականներին։ Մամուրյանը համոզված էր, որ այդ փառասերների և ազգուրացների դեմ մղվող պայքարում անխուսափելիորեն պետք է հաղթանակի հայրենասիրությունը։ «Օտարին ոտքը կամ գիրկն ընկած՝ երկու ճամբա կա մեր առջև,—գրում է նա,—կամ սողալ ճզմվելու շափ, կամ կանգնել պատվով՝ հարգվելու շափ... Արդարև պայքարը մեծ պիտի լիներ շահասիրության և հայրենասիրության մեջ, և հայրենասիրությունը հաղթանակ տարավ»[67]։

Ծաղրելով ու նշավակելով ազգն ու հայրենիքն ուրացող շահասերներին, Մամուրյանը ցույց է տալիս, որ ժողովրդի այդ աննշան մասը կազմող հետադիմական խավերը, թուրքական բռնակալների կողմից հովանավորվելով, հալածում են բոլոր նրանց, ովքեր անշահախնդիր կերպով ծառայում էին ազգին ու ժողովրդին։ «Ահա բոժոժավոր սատանան ծակն ու ծուկը գիտե,—գրում է նա,—լրտեսներ ունի և ամեն տուն ինչ կանցնի, ինչ կխոսվի, կինն էրկան հետ ինչ կընե, սիրահարն որ դռնեն կամ պատուհանեն ներս կմտնե, կայսրը գիշերը ո՞ր կողմին վրա կպառկի, արքունի գանձն ո՞վ կկողոպտե, գիտե, գիտե թե վաղն ո՞վ պիտի մեռնի, մյուս օր ո՞վ պիտի աքսորվի... Ահա Երևակի նշանով մոլորական երազն ալ, որուն միակ պաշտոնն է զրպարտել, ու դարձյալ զրպարտել... Իր լեզուն իժ մէ, գրիչը՝ պիծակ մը, իր գործին՝ թուղթ մը, որ մեռելի փտություն ունի, իր լույսը մոգական լապտեր մը, որով պատմության գերեզմանին մեջ սատակներ ու դիակներ կփնտրե, հավատաքննության խարույկներու մոխիրը կխառնե, որ կայծ մը գտնե գոնե և բոլոր աշխարհը կրակի տա...»[68]։

66 Մ. Մամուրյան, Անկլիական նամականի, էջ 290։
67 Մ. Մամուրյան, Հայկական նամականի, էջ 222։
68 Նույն տեղում, էջ 175—176։

Սոցիալական այս վերասերված խավերը սուլթանական ռեժիմի ջերմ պաշտպաններն էին, թուրքական պետական օրգանների կողմից հովանավորություն գտած՝ հայ և թուրք աշխատավորների հարստահարիչներն էին։ «Պոնզ ու Մոնտարեն,—գրում է Մամուրյանը,—թև թևի տված անդադար կծծեն ողորմելի ժողովրդին արյունն o-մի-դիֆը ըսելով՝ ջուրի տեղ արյուն կխմեն, հացի տեղ մարդու միս կուտեն, անկողնի տեղ արյունալի դիակներու վրա կպառկին և ժողովուրդն որ կսպասե, ինչպես կսպասեն գառնուկները սպանդարանին դուռն, այս գառնուկներուն չափ չկան, որ քանի դահիճին մերկ ու շողուն դանակը տեսնելեն՝ աչքերնին կգառնա, կցատկոտեն, գալանային և մարդու դեմքով ներկայացնող անբնական մահվան դեմ խեթկելով կմաքառին...»[69]։

Հավատ տածելով ժողովրդի ուժերի ու ընդունակությունների նկատմամբ՝ բռնակալների իշխանություններին վերջ տալու և իրենց ազատագրությունը նվաճելու համար մղվող պայքարում, Մամուրյանը նախատում էր բոլոր այն մարդկանց ու հոսանքներին, ովքեր կույր հնազանդության քարոզներով մեռցնում էին ժողովրդի մեջ ազատասիրական տենչը, նրա մարտական եռանդը։

Մամուրյանն ատում էր հայ հարուստներին, նրանց համարում փառասներներ, անձնական փառքի ետևից վազողներ, որոնք բացի շաղակրատանքից, ոչնչով չէին օգնում հայրենիքին ու ժողովրդին։ Այդ խավերը հրճվելով օսմանյան «Սահմանադրական կարգերով» աչքաթող էին արել գավառահայությանը, որն իր ուսերի վրա տանում էր օսմանյան բռնապետության ծանր ու մահացու լուծը. «Շուրթերու վրա Հայաստան և Սահմանադրություն կշրջեին,—գրում է նա,—իսկ մտքերու և գործերու մեջ Հայաստանի համար զոհողություն մը չէր տեսնվեր»[70]։

Մամուրյանը հավանություն չէր տալիս ազգային հիմնարկությունների գլուխը կանգնած կղերականների և հայ էֆենդիների հարմարվողական, ռեֆորմիստական և աղերսանքների քաղաքականությանը։ Նա հայ ժողովրդի ազատագրական պայքարի մեջ էր տեսնում նրա փրկության հույսը։ Նա շատ բարձր էր գնահատում հայ ժողովրդի ազգային վեհությունը և նրա արժանապատվությանը ցածր էր համարում օտարներին աղերսելու, օգնություն հայցելու քաղաքականությունը։ Այդ է խորեն Նար-պեյի դեմ ուղղված նրա քննադատության իմաստը։ «Ազգ մը ճանաչելու համար նավու կամ

69 Մ. Մամուրյան, *Հայկական նամականի*, էջ 169։

70 «Արևելյան մամուլ», 1878 թ. մայիս, էջ 6։

ջեռի մը երկայնությունը չափելով չի լինիր,—գրում է նա,—անոր բարուց, հիմնարկություններու, գործերու, հանճարի մեջ փնտրելու է հոգին։ Եվ այս՝ անոր մեջ ապրելով և տեսնելով կլինի»[71]։

Այո, Կ. Պոլսում նստած ազգային ջոջերը և բարձրաստիճան հոգևորականությունը կտրված էին գավառահայությունից, չէին ապրում նրա կրած ծանր ցավերով ու տառապանքներով, անկարող էին հասկանալ ու ըմբռնել նրա մեջ եղած ուժն ու եռանդը՝ բռնության դեմ ուղղված իր ազատագրական պայքարում։ Մամուրյանը ծաղրում էր նրանց կեղծ հայրենասիրությունը և իսկական հայրենասիրությունը տեսնում էր աշխատավոր ժողովրդի մեջ։ «Հայրենասիրությունը վսեմագույն իղձ և թռիչք ունի,—գրում է Մամուրյանը,—որ ամեն մի հայրենական վիշտը և խնդությունը կհամարե, հայրենի երկրի փառաց և թշվառության մասնակից կլինի և իր անձնաձիր թևերը անդուլ հայրենյաց ամեն սահմանն, ամեն խորշն ու ամեն անկյուն անձկանոք կտարածե»[72]։

Մամուրյանը իրավացիորեն նշում է, որ հայ ժողովուրդը իր պատմական հերոսական անցյալով, օտար բռնակալների դեմ մղած հերոսական մարտերով ու բազմաթիվ փորձությունների հաղթահարման ճանապարհով ապացուցել է իր ազգային վեհությունը։ Իսկ այժմ, 19-րդ դարում, նա այդ պետք է ապացուցի ու ցույց տա իր ստեղծագործական աշխատանքներով։ Հին ազգերի ձայնը, ասում է Մամուրյանը, նրանց պատմությունն է, «իսկ նորերինն՝ իրենց գործերը»[73]։

Մամուրյանը գրում է, որ ժողովրդի ստեղծագործական եռանդը չի կարող ծավալվել բռնության ներքո։ Միմիայն բռնապետների իշխանության կործանումը և ազատության նվաճումը կարող են երաշխիք լինել ժողովրդի անխափան զարգացման համար։

Մամուրյանը ցույց է տալիս, որ հայերի ազատագրական ձգտումները բոցավառվեցին սուլթանական Թուրքիայում ստեղծված օրհասական պայմանների թելադրանքով։ «Հայք ազատասիրությունը գիտությամբ և ուսմամբ չստացավ,—գրում է նա,—այլ իր հոգվույն մեջ գտավ, այլ իր մարդկային իրավանց մեջ տեսավ։ Նա զգաց իր ծննդյան իրավունքը, որ ոտից կոխան լինել մոտ էր, նա հիշեց իր նախնյաց պարզ և անկախ կենսավարությունը, որ արդեն ապականելու վտանգին կդիմեր...»[74]։

71 Մ. Մամուրյան, *Անկլիական նամականի*, էջ 17։

72 Նույն տեղում։

73 Նույն տեղում, էջ 94։

74 Նույն տեղում, էջ 20։

Մամուրյանը հայ ժողովրդի տնտեսական, հասարակական-քաղաքական, մտավոր ու կուլտուրական կյանքի զարգացման միակ երաշխիքը համարում էր ազատությունը, որից զուրկ էր գավառահայությունը։ Ազատությունից զրկվածությունը նրա թշվառությունների պատճառներից մեկն էր ու թերևս գլխավորը, որը և նրան մղում էր ազատագրական պայքարի ուղին։

«Ազատությունն իմ կյանքս ու հավատս է,—ասում է նա,—կանգոսեմ զինքդ, ըստ անվեհեր, մինչդեռ հրեշտակս սիրտ առ կգոչէր... լախտն իջավ, ըղեղս դուրս թափվեր... Ահա այն ատեն կոկորդեն խնչյուն մ'ելավ... աչքս բացի և երբ զքեզ հրացանով առջևս տեսա, Վրույր, կարծեցի թե երազ չէ տեսածս, այլ իմ անհաշտ թշնամիս...

—Է՛հ, աժան ազատեր ես, ըսի Պարույրին հորանջելով, ազատության զոհ ընկար քունիդ մեջ, իսկ եթե արթուն լինեիր գիտեմ, որ մազիդ մեկ թելն անգամ չէիր զոհեր։ Ազատության համար տրքնող մեր ժամանակ երիտասարդությունն ճիշտ քեզի կնմանի։ Ամեն տեսակ ազատություն, հայրենիք, նահատակություն կերազե, մեծ մեծ կջարդե, ու արյուն կթափե, իր անկողինին մեջ, իսկ երբ բայ աչքով աշխարհիս գահավեժ լեռան վրա գործելու ժամը գա, կծիկը կդնե ու կերթա վատորեն բռնակալներու ոտքը կլիզե»[75]։

Իր հերոսների միջոցով Մամուրյանը այն միտքն է արտահայտում, որ միայն ազատության մեջ կարելի է դառնում զարգացնել մարդու առողջ բանականությունը։ Գնահատելով բուրժուական հեղափոխությունների դերը ավատական բռնապետական կարգերի լիկվիդացման և նոր, բուրժուական հարաբերությունների հաստատման գործում, Մամուրյանը ժամանակին անարգում էր բուրժուական շահագործող դասակարգերին, որոնք իրենց դասակարգային բռնությունը հաստատեցին աշխատավորների վրա։ Դրա համար էլ նա քարոզում էր ժողովրդական հեղափոխություն, որը կբարձրացներ աշխատավորներին ու նրանց ազատ զարգացման հնարավորություններ կընձեռեր, կհաստատեր իսկական ազատություն։ «Գիտեի,—գրում է նա,—որ Եվրոպայի քաղաքակրթություն կոչվածը, հարստությունն ու երջանկությունը միայն դաս մը մարդիկ կվայելեն, իսկ մյուսները թշվառներ են, ոչ միայն կրթությամբ, այլև ապստամբությամբ պիտի վերածնեն և իրենց շղթաները քակելու պիտի հաջողին...»[76]։

75 Մ. Մամուրյան, Հայկական նամականի, էջ 177։
76 Մ. Մամուրյան, Անկլիական նամականի, էջ 136։

Այս բոլորից հետո Մամուրյանը հանգում է այն հետևության, որ բռնակալների տիրապետությունից հայ ժողովուրդը կարող է ազատագրվել հեղափոխության ճանապարհով, որովհետև «այլևայլ քաղաքական հեղափոխությանց դրոշմներն այս թշվառ ժողովրդյան կերպարանին վրա կտեսնվին»[77]։

Մտահոգված լինելով հայ ժողովրդի ազգային ուժերի հավաքագրման լուրջ հոգսերով, Մամուրյանը զայրանում է հայ ունևոր խավերի դեմ, որոնք օտար երկրներում իրենց անձնական շահի ետևից ընկնելով, կորցնում են իրենց ազգային պատկանելությունը, և մատը մատին չէին խփում ազգի վերածննդի համար։ «Եվ իրոք,—գրում է նա,—Բարիզեն հասնող հայը՝ բարիզեցի, Անկլիայեն եկողը՝ իտալացի կուզե ընել հայը, իսկ ամենեն առաջ հայը բուն հայ ընելու մտածող քիչ կա։ Ազգ մ'իր հատուկ տարրներով կրնա զարդանալ, եթե անոնց լավ ու լուսավոր ուղղություն մը տրվի։ Հառաջադիմության օրենքը բռնաբարել, որ որոշյալ արդյունք մ'արտադրե, բարեշրջության օրենքն անդիտել է, ամեն զարգացում իր հատուկ տեղն ու ժամանակն ունի։ Փոխադրե հայոց մեջ եվրոպական քաղաքակրթության ամեն հանգամանքն և իսկույն հայությունը կջնջվի, պահե հայը միշտ իր անցյալուն կամ մնայուն վիճակի մեջ և հայությունը հալ ու մաշ կհյուծե։ Կարևորն է նկատել, անոր իսկական պիտույքը։ Արմատական նորոգումն՝ ըստ իս իր կրթության եղանակին նորոգումն է»[78]։

Պայքարելով ասիմիլացման վտանգի դեմ, պահանջելով ազգի լուսավորության եղանակի նորոգումը՝ որպես ազգի առաջխաղացման կարևորագույն գործոն, ժողովրդական հեղափոխության հաղթանակը դիտելով որպես այդ խնդիրների արմատական լուծման միակ պայմանը, Մամուրյանը չէր անտեսում ժողովուրդների բարեկամությունը, նրանց մերձեցման անհրաժեշտությունը։ Նա չէր կամենում հայ ժողովրդի կողմից թուրքական բռնապետության դեմ ուղղված ազգային-ազատագրական շարժումներն օգտագործել նեղ ազգայնական նպատակների համար։

Մամուրյանը գտնում էր, որ ազգերի անջատ-անջատ և ազատ զարգացումը վերջ ի վերջո կհասցնի բոլոր ազգերի ու ժողովուրդների միության ու եղբայրության հաստատման։ «...Ամեն ազգ առանձին գործելով՝ մարդկային ազգի շրջանին մեջ,—գրում է նա,—

77 Նույն տեղում։
78 Նույն տեղում, էջ 269—270։

նույն մարդկության ավելի հոգն է իր հատուկ միջոցներով, և այսպես անհատական ուրույն ուժեր, իրենց ուրույն պաշտոնը կատարելով՝ թերևս կպատրաստեն այն ասպարեզն, որ ամեն ժողովուրդներ իրարու պիտի հանդիպին, միության ու եղբայրասիրության ոգով իրարու ձեռք պիտի կարկառեն»[79]։

Այսպիսով, ազգերի ազատ զարգացման ճանապարհով դեպի նրանց բարեկամական համագործակցությունը, դեպի եղբայրություն ու միություն,— այս է Մամուրյանի տենչը, որը շատ պրոգրեսիվ է ու հումանիստական։

Խորհելով հայ ազգի ազատագրության և նրա տնտեսական, կուլտուրական ու քաղաքական կյանքի անկախ ու անխափան զարգացման մասին, Մամուրյանը դրա երաշխիքը համարում է հայ ժողովրդի բոլոր հատվածների կոնսոլիդացումը։

Տածելով իր հակակրանքը Անգլիայի նկատմամբ, որը հովանավորելով թուրքական սուլթաններին, ավելի ցավալի էր դարձնում հայերի վերքերը, այնուամենայնիվ, Մամուրյանի հերոսները գնում են Լոնդոնի հայերին հավաքագրելու և իրենց հայրենիքը վերադարձնելու համար։

Իր հերոսներից մեկի բերանով Անգլիայի մասին Մամուրյանն ասում է. «...Շատ պարզ ու տխուր կերևի ինձ այժմ Անկլիա, որ համակրության, սիրո, շահու կապ մը չունիմ, այլ միայն վշտալի հիշողություններ։ Եթե Պ. Վուտ չգտնվեր այստեղ, հաղիվ պիտի հիշեի Լոնտոն, որ իմ աղետից թատրն եղավ...»[80]։

Հայերի հավաքագրման և նրանց ասիմիլացման վտանգից ազատելու հարցը Մամուրյանը դիտում էր որպես հայ ժողովրդի ազատագրության համար մղվող պայքարի կարևորագույն խնդիրներից մեկը։ Հայերը պետք է հավաքվեն և աշխատեն Հայաստանում,— այս է Մամուրյանի իդեան։— «Եվ սակայն,— գրում է նա,— Հայաստանի սիրտը դեռ կբախե, դեռ նա շունչ ունի և այն ժամանակ պիտի շարժի, վերականգնի, երբ իր ժիր զավակներն, բանվոր, արհեստավոր, մշակ, վաճառական, գիտուն, հարուստ, որ այժմ օտար աստղերու տակ կտառապին և կչքանան, որ հայրենի երկրին անուշությունները ու թաքուն գանձերը կանգիտեն, որ օտար աշխարհներ իրենց գիտությամբ, ճարտարությամբ ու հարստությամբ կճոխացնեն, խմբովին վերադառնան հայրենիք, քու օրինակիդ հետևելով, սիրելի Ներսես, զոհելով նյութական հանգիստ, օտարոտի փառք ու պաշտոն, ինչպես դու զոհեցիր, ավելի մեծ զոհ, դժբախտ սեր մ'որ սակայն նոր երանության մ'աղբյուր և հայրենասիրության վառարանը պիտի դառնա»[81]։

Հայրենիք վերադառնալու ուղղությամբ Մամուրյանի հերոսների բացատրական աշխատանքն ունենում է այն հետևանքը, որ Անգլիայում ապրող հայերը, տոգորված հայրենասիրությամբ, թողնում են իրենց հարստություններն ու վերադառնում իրենց հայրենիքը՝ ազգի ազատագրության, նրա տնտեսական, կուլտուրական ու քաղաքական կյանքի վերածննդին ակտիվ մասնակցություն ունենալու համար։ Նրանք իրենց հայրենիքում որոնում են հարստության նոր աղբյուրներ, զարգացնում են հայրենի արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, ձեռնամուխ են լինում տնտեսական ու կուլտուրական շինարարությանը, որի մեջն է տեսնում Մամուրյանը յուրաքանչյուր հայի անկեղծ ու անշահախնդիր հայրենասիրությունը։ «...Պետք է, որ հանքեր, այգեստաններ, նավարկելի ծովեր ու ջրանցքներ, բանակ, արահետներ, գործարաններ, պարտեզներ դառնան, պետք է որ գործունի աշխատավորներ, հողատերեր, հանդարտ ու բարեկարգ, ժիր ու օրինաց հնազանդ քաղաքացիներ դառնան, պետք է որ մետաղներ, զանազան արմտիք ապրանք, ուսմունք ու լույս սփռեն, պետք է որ երկաթը, շոգին, էլեկտրական հոսանքը կենդանություն, շարժում տան այս անշունչ ու փշալից բնությանը»[82]։

Մամուրյանը ճիշտ էր նկատում, որ 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմը բարենպաստ դրություն ստեղծեց հայերի ազգային ինքնագիտակցության բարձրացման և նրանց ուժերի կոնսոլիդացման համար այնքանով, որքանով Հայաստանի հարցը դարձավ հանրաճանաչ՝ իբրև Արևելյան հարցի մի բաղկացուցիչ մասը։ Բայց եվրոպական տերությունների շահասիրությունը Հայաստանի հարցը իր «նպատակեն դուրս նետեց»[83]։

Հայերի ստրկական վիճակը և պատերազմը,— ասում է Մամուրյանը,— «երբեմն այնպիսի ցնցումներ կտան թմրյալ ազգի մ'անդամաց, որ եթե այս ցնցումներեն անվնաս ազատվին՝ հանկարծական գործունեության և միության շնորհիվ կարող կլինի քեզ

79 Նույն տեղում, էջ 346—347։
80 Նույն տեղում, էջ 448—449։
81 Նույն տեղում, էջ 454—455։
82 Նույն տեղում, էջ 457—458։
83 «Արևելյան մամուլ», 1878, մայիս, էջ 8։

շուտ վերականգնել։ Հայաստանցին գրեթե հոգևարք էր, իր հնչյունը Եվրոպայի հայոց ականջն հասավ, եվրոպական մամուլի թղթակիցները հայոց վրա ուշադրություն հրավիրեցին, այլևայլ տետրակներ հրատարակեցին հայոց դատին ի նպաստ և քաղաքագետները սկսան ատեն-ատեն ակնարկ մը նետել Հայաստանի վրա։ Այն ատեն Հայաստանի բարվոքման խնդիրը օրվան խնդիր դարձավ հայոց մեջ։ Եվրոպա նոր իմացավ, որ Հայաստան մը կա, Արևելյան խնդրույն լուծման մեջ էական տարրը կազմող»[84]։

Մամուրյանը իրավացիորեն գտնում էր, որ եղած մտավոր շարժումներն ու աղմուկները անզոր եղան Հայկական հարցի դրական ընթացքի համար, դրանք անզոր էին նաև մյուս հպատակ ժողովուրդների շահերի պաշտպանության հանդեպ, ժողովուրդներ, որոնք լավ հասկացան, թե «Սուրն ու թնդանոթը ավելի զորությամբ կխոսեն, քան թե բողոքն ու գրիչը»[85]։

Սակայն սրի ու թնդանոթի ուժով կամ զորությամբ արևմտահայ ժողովրդի ազատագրությունը նվաճելու քարոզիչ Մամուրյանը Բեռլինի կոնգրեսից հետո հրաժարվեց իր այդ սկզբունքներից և հայ ժողովրդի փրկության հույսը կապեց արևմտաեվրոպական տերությունների և, գլխավորապես, Անգլիայի օգնության հետ։

Հրաժարվելով իր դեմոկրատական հայացքներից և ռեֆորմիզմի բանակն անցնելով, Մամուրյանը հայ ժողովրդի ազատագրության հույսը կապում էր Անգլիայի օգնության հետ։ Անգլիայի նենդ ու շահադիտական քաղաքականության քննադատությունից հրաժարվելով, նա սկսեց արդեն գովերգել Անգլիային, որն ապացույց է նրա հայացքների անհետևողականության։ «Ես ալ,—գրում է նա,— երազ մը տեսա անցյալ գիշեր։ Անկլիա թռա. տեսա մարդասեր ծերունի մ'որ ամեն թշվառությանց կհամակրի և մանավանդ հայոց»[86]։

Իր սպասածին հակառակ, Մամուրյանը Անգլիայում բարյացակամ վերաբերմունքի չի հանդիպում, որովհետև անգլիական դիվանագիտությունը հայ ժողովրդին ռազմիկ չէր համարում, որին հարկավոր էր օգտագործել Ռուսաստանի դեմ՝ իր շահերի համար։

Անգլիայի հույսերն արդարացնելու նպատակով, Մամուրյանը երազում էր հայերի սպառազինության և աշխատանքային ունակությունների զարգացման մասին։ «Դիվանագիտութենեն մեծ բան չեն սպասեր, ըսավ ինձ,—գրում է նա,—թշվառ ազգերը պիտի տառապին միշտ, քանի որ մեր քաղաքագետները հաշվապետ են, շահամոլ են, եսասեր են և մարդկության իրավունքն առ ոչինչ գրեն։ Հայք պետք է, որ իրենց ուղղությունը փոխեն, ոչ միայն վաճառական, այլ արվեստագետ, մեքենագործ, շինարար ժողովուրդ մը լինեն, որպեսզի լավ մշակներ դառնան»[87]։

Երիտասարդ Շահնուրը (Մամուրյանը) երազում հանդիպում է նաև Բիսմարկին, զրույց է ունենում նրա հետ, որը անբարյացակամորեն ասում է. «—Գնա, պոռաց, ես բանաստեղծի հետ գործ չունիմ, ձեր այստեղի պատգամավորներն (իմա՝ Բեռլինի կոնգրես մեկնած հայ պատգամավորները—Հ. Վ.) ալ քեզի պես կխոսին 'և ստեպ իրարու հակառակ դիրք կբռնեն։ Արդեն բավական կնճռոտ խնդիրներ ունինք լուծելու, դուք ալ նոր բեռ մը մի դնեք մեր վրա։ Եվ ի՞նչ իրավունք ունիք, ի՞նչ ըրիք, որ ուշադրության արժանանաք։ Իրավունքը զենքինն է։ Քանի՞ կաթիլ արյուն թափեցիք պատերազմին դաշտին վրա...

Բայց տեր իմ, չե՞ք հիշեր մեր կոտորածները զոր մինչև այսօր կկրենք...

— Ապիկարության նշան։ Մենք զինուց վճիռներու վրա խաղաղության պայմանները պիտի կնքենք և դուք զենք չունիք, հարեց Պիսմարգ իշխանն ու հրամայեց, որ զինվորական դպրոց մտնեմ, գլուխս զարնելով։ Այս զարկեն արթնացա, սեղանի վրա դտա ճիշատակագիր մը, որու վրա պիտի գրեմ»[88]։

Այսպիսով, արևմտաեվրոպական տերությունների կողմից պաշտպանություն գտնելու համար հայերին հարկավոր էր զենք, սպառազինություն։ Այս էր պահանջում Մամուրյանը։ Այդ տերությունների և, հատկապես, Անգլիայի դեմ ուղղված նրա քննադատությունը մի նպատակ էր հետապնդում՝ թույլ չտալ, որ Հայաստանը Ռուսաստանի ազդեցության տակ ընկնի։

«Սև լեռին մարդը» վերնագրով իր աշխատության մեջ Մամուրյանը արևմտաեվրոպական տերություններին մեղադրում էր այն բանի համար, որ նրանց ներքին դրությունից օգտվելով, Ռուսաստանը ձգտում էր իրագործել Թուրքիայի տերիտորիաները զավթելու իր ծրագիրը։ «Այո՛, Ռուսիա պիտի հարթի Կովկասը,—գրում է

84 «Արևելյան մամուլ», 1878, մայիս, էջ 9։
85 Նույն տեղում։
86 «Արևելյան մամուլ», 1878, հունիս, էջ 74։
87 «Արևելյան մամուլ», 1878, հունիս, էջ 75։
88 Նույն տեղում, էջ 75—76։

նա,—Ռուսիա պիտի ճզմի Արարատը և պիտի ջանա Եփրատա հովիտին ու Տիգրիսի բերանին տիրանալ, Ռուսիան պիտի ալեկոծի Ասիան, ասիական տարրերով, ասիական միջոցներով և իր բնիկ տիրապետող հանճարով։ Այս տարրներեն մինը մենք ենք»[89]։

«Գործիք դառնալե ետև՝ պետք է գործող դառնալու հնարը մտածել և ուրիշ ոսոխ զորության մը վրա հենվել... Այս դիմադրությունը մեզ նպաստավոր կրնա դառնալ»[90]։

Մամուրյանը արևմտաեվրոպական տերություններից պահանջում էր վերջ տալ ներկուսակցական տարաձայնություններին, պառլամենտական պայքարին՝ Ռուսաստանի նվաճողական ձեռնարկումները խափանելու նպատակով։ Նա Ռուսաստանի տերիտորիալ զավթումներից, Թուրքիայի դեմ մղված պատերազմներում նրա ունեցած հաջողություններից այդ տերությունների համար սպառնալիք էր տեսնում, նախազգուշացնում էր նրանց՝ զգաստ լինել Ռուսաստանի ոտնձգություններից։ «Ռուսիան կգործե և պիտի գործե միշտ Եվրոպայի դեմ,—գրում է նա,—որպեսզի ժողովուրդները ժամանակ չունենան իրենց բուն շահերը մտածելու, և ամեն բռնակալության դեմ միահամուռ կանգնելու։ Եվրոպա աչք չպիտի բանա քանի Ռուսիա ապրի, այլ սակայն Ռուսիո այս կյանքն ալ երկարատև չէ և իր տարածության հետ կավելանան իր տկարության տարրները և ցեղական ներքին գժտությունները»[91]։

Կանխատեսելով Ռուսաստանի ներսում աճող հասարակական ահեղ ցնցումների անխուսափելիությունը, որոնք պետք է վերջ տային միապետական կարգերի զավթողական քաղաքականությանը, Մամուրյանը, այնուամենայնիվ, հայ ժողովրդի ազատագրության հույսը Ռուսաստանի օգնության հետ չէր կապում։ Ընդհակառակը, նա կշտամբում էր Անգլիային այն բանի համար, որ նա Թուրքիային հովանավորելու իր քաղաքականությամբ, հայերին Ռուսաստանի գիրկն է նետել և պիտի նետի[92]։ Դրա համար էլ նա պահանջում էր, որ Անգլիան հրաժարվի Թուրքիայի վրա հենվելուց, նրան հովանավորելու և պաշտպանելու քաղաքականությունից, հենվի հայերի վրա, պաշտպանի և հովանավորի նրանց՝ Ռուսաստանի ազդեցությունից նրանց զերծ պահելու նպատակով[93]։

89 «Արևելյան մամուլ», 1878, հոկտեմբեր, էջ 247։
90 Նույն տեղում։
91 Նույն տեղում, էջ 244։
92 «Արևելյան մամուլ», 1879, ապրիլ, էջ 467։
93 Նույն տեղում, էջ 128։

«Քաղաքական գուշակներ» վերնագրով իր առաջնորդող հոդվածում Ռուսաստանի կողմից Հայաստանը նվաճելու մտադրությունների մասին «Արևելյան մամուլ»-ը գրում է. «Ներկա անիշխանության մեջ ձգելով՝ Հայաստան անշուշտ բոլորովին Զարին ներքև պիտի ընկնի, որ հարատև ու իրավացի պատրվակ մը պիտի ունենա միջամտելու իր սահմանագլխուն վրա տառապող և հուսահատ ժողովրդյան մը փրկության համար։ Ուշ կամ կանուխ Հայաստան պիտի մտնե նա, ինչպես մտավ Պուլղարիա, իբրև ազատարար, և ավելի հիմնավոր պատճառով։ Ռուսական ազատությունն ընդհանրապես կնշանակե երկրակալություն»[94]։

Մամուրյանի հայացքների էվոլյուցիան անժխտելիորեն արդյունք էր Եվրոպայի տնտեսական, հասարակական ու քաղաքական կյանքում տեղի ունեցող հեղաբեկումների, ֆեոդալիզմից կապիտալիզմի անցման ժամանակաշրջանի հակասությունների։

Մերկացնելով ռուսական ցարիզմի զավթողական քաղաքականությունը, պետք է ասել, որ Մամուրյանը չէր շփոթում ռուս ժողովրդին ցարիզմի հետ։ Նա և իր օրգանը ճիշտ էին հասկանում ճնշված ժողովուրդների ապագան, հասկանում էին Ռուսաստանի զարգացման դիալեկտիկան։ Նրանք տեսնում էին, որ Ռուսաստանում աճող ու զարգացող ներքին ուժերը վերջ կտան միահեծանությանը։ «Ռուսիա նոր Զրուան մ'է, որմե պիտի ծնի Որմիզդ և Արհմն։ Բայց Ռուսիա բուն կառավարությունը չէ, կառավարություն մը պատահական կամ ժամանակի ու ժողովրդյան հանգամանաց արթունքն է, ժողովրդյան հառաջադիմության ու ժամանակին հետ կայլափոխի։ Արդ՝ Ռուսիա ներկայիս մեջ զենքով կընկճեր, զի զենքն իր արվեստն է, հրդեհելը իր փրկությունը, շղթայելը իր ապահովությունը»[95]—գրում է Մամուրյանը։

Այսպիսով, Մամուրյանը գտնում էր, որ զենքի ուժով ստրկացված, շղթաներով կապկպված ժողովրդական մասսաները վերջի վերջո պետք է ներքին հեղաշրջման միջոցով խորտակեն միապետական կարգերը, նվաճեն իրենց ազատությունը, կյանքը կառուցեն նոր ձևով։ «Զատե ռուսերն իրենց գլխեն և մարմինը կվերածնին,—գրում է նա,—ընկերասեր, զվարթ, գործունյա, ընտիր ժողովուրդ մը կդառնան։ Եթե այս ժողովրդային հեղաշրջումը վրիպի, քաղաքականը պիտի վարեն—կառավարեն իրենց հատուկ շահերն տար-

94 «Արևելյան մամուլ», 1880, օգոստոս, էջ 222։
95 «Արևելյան մամուլ», 1878, հոկտեմբեր, էջ 244։

բեր օրինաց ու սովորությանց ներքև... Ռուսական ներքին հեռավոր հեղափոխությունը նաև Ասիա պիտի դղրդե, հրդեհե։ Նոր ժողովուրդներ հին ժողովրդոց հետ պիտի զարնվին և հին աշխարհի բեկորներն իրար մեջ պիտի բաժանեն»[96]։

Ճիշտ էին Մամուրյանի կռահումները Ռուսաստանի և նրա ժողովուրդների ապագայի նկատմամբ։ Այդ ցույց է տալիս, որ նա նույնպես տեսնում էր մի կողմից միապետական-ազնվականական Ռուսաստանը և, մյուս կողմից, աշխատավորական Ռուսաստանը, որը պետք է հեղափոխական ճանապարհով վերջ տար բռնակալների իշխանությանը և նվաճեր ազատություն։ Մամուրյանն ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոս էր, մեծ հայրենասեր։

Ներենց.— Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման ու նրա գաղափարախոսության բնագավառում նշանակալից դեր է խաղացել արևմտահայ դեմոկրատ-լուսավորական, հրապարակախոս և անվանի գրող Ներենցը։

1875 թվականին լույս է տեսնում Ներենցի առաջին պատմավեպը՝ «Թորոս Լեռնի» խորագրով։ 1879 թվականին լույս է տեսնում նրա երկրորդ պատմավեպը՝ «Երկունք Թ. դարու» խորագրով և, վերջապես, 1881 թվականին լույս է տեսնում նրա երրորդ պատմավեպը՝ «Թեոդորոս Ռշտունի» խորագրով։

1870—1880-ական թվականներին հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող լուրջ իրադարձությունները նպաստավոր հող հանդիսացան հայ նոր պատմավեպասանության զարգացման համար։ Այդ իրադարձությունների շղթայի գլխավոր օղակը կազմում էր արևմտահայ ժողովրդի ազատագրության հարցը։ Այդ իրադարձությունները, անշուշտ, նպաստում էին հայերի ազգային ինքնագիտակցության և անկախ պետականության հաստատման գաղափարի ուժեղացմանը։

Ներենցի նշված պատմավեպերը խորապես տոգորված են հենց այդ գաղափարներով և հետապնդում էին հայերի առջև կանգնած նպատակի իրագործմանը։

Խոսելով Ներենցի ազատագրական ձգտումների, նրա ջերմ հայրենասիրության ու ժողովրդականության, նրա հոգու ազնվության ու մաքրության մասին, նրա վեպերի գաղափարայնության մասին, Հովհ. Թումանյանը գրում է. «Եվ ինչ իմաստուն ու գեղեցիկ

96 Նույն տեղում, էջ 244—245։

է դնում նա իր գործի հիմքը՝ իրեն հերոս առնելով Թորոս Լեռնին, բյուզանդական բանտում փակված հայ իշխանազն, որ բանտից դուրս փախչելով, հասնում է իր հայրենիքը, ազատասիրության շունչ է փչում, սիրտ տալիս, ոտքի է հանում իր ժողովրդին ու կանգնեցնում է ամուր՝ իր ազատ կյանքով ապրելու։

Էսպիսով նա հանդիսանում է մի խորհրդանշան—հայ ժողովրդի ազատասիրության ոգին, մի ոգի, որ թագավորում է հայոց թե պատմական, թե ժամանակակից կյանքի վրա հենված գրականության մեջ և զորանում ու ամրանում է ժողովրդական ուժով՝ հերոսական խորհուրդներից հերոսներ ծնելով»[97]։

Ներենցը հայ ժողովրդի ազատագրական շարժման հիմնական ու գլխավոր ուժը համարում է ժողովրդին։ Նրա այս միանգամայն ճիշտ դրույթը կարմիր թելի պես անցնում է բոլոր վեպերում։

«Թորոս Լեռնի» պատմավեպում նա երևան է հանում 12-րդ դարում օտար նվաճողների դեմ ուղղված հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի փառավոր էջերը։ Իր այս մտային հերոսի օրինակով, Ներենցը կամենում է ցույց տալ, որ ժողովրդին սպառնացող ահեղ փորձությունների ժամին նրան հարկավոր են Թորոսի նման անձնուրաց, անշահախնդիր, ազգին ու հայրենիքին անսահմանորեն նվիրված հերոսներ, որոնք կարող լինեն դիմանալ կյանքի բոլոր դառնություններին ու ապահովել հաղթանակը։ Այս ազնիվ գաղափարով են տոգորված նաև նրա մյուս վեպերը, որոնք իրենց վրա կրում են ժամանակի ոգու խոր ազդեցությունը։

Ներենցի պատմավեպերը ներշնչում, քաջալերում են արևմտահայերին թուրքական բռնապետության դեմ ուղղված նրանց ազգային-ազատագրական պայքարում։ Այդ պատմավեպերն ընդառաջ էին գնում 1870—1890-ական թվականների հայերի ազգային-ազատագրական շարժումներին։

Ներենցը համաձայն չէր մասսաների նախաձեռնությամբ ներքևից նվաճված ազատությանը, չէր ընդունում սոցիալական հեղափոխություն, ապստամբություն, քաղաքական պայքար, այլ կողմնակից էր խաղաղ զարգացման։ Նա կամենում էր ազատության հասնել վերևից սպասվող ռեֆորմների միջոցով։ «Մենք կուզենք,—գրում է նա,—որ ամեն հեղափոխություն վերեն գա և ոչ վարեն։ Վարեն եկած հեղափոխությունը (թե որ հաջողվի ալ) այնչափ աղետք՝ այն-

97 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Հայպետհրատ, 1951, էջ 450։

չափ թշվառություն ունին և այնչափ արյուններու առիթ կլինին, և հայ ազգն այնչափ քիչ արյուն ունի յուր երակներուն մեջ, որ իր կարողութենեն վեր է այդ մասին շռայլ լինի և, ընդհակառակը, վերեն եկած հեղափոխությունք միշտ հաստատ են և երբեք այն արյան գիներով չեն լիներ... Ռուսիո ինքնակալությունն երեսուն միլիոն մարդու ազատություն տվավ գրեթե առանց արյուն թափելու հրովարտակով մը միմիայն...»[98]*։*

Ծերենցի այս կոնցեպցիան հայ ազգային լիբերալների կոնցեպցիան էր, լիբերալներ, որոնք ընդառաջելով արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումներին, միաժամանակ վախ էին զգում աշխատավորական մասսաների սոցիալական հեղափոխությունից, սարսափում էին սոցիալիզմից։

1876 թվականին «Արևելյան մամուլ»-ում տպագրվեց Ծերենցի նամակը, որում արծարծված գաղափարը Մամուրյանը հակակրանքով ընդունեց։ Ծերենցը քննադատում էր Բաֆֆու և Գր. Արծրունու կողմից հայ ժողովրդին ուղղված ապստամբական կոչերը։ Նա գրում էր. «Մենք կուզենք, որ ամեն մի հեղափոխություն վերեն գա և ոչ վարեն»:

Մամուրյանը կշտամբելով Ծերենցին՝ նրա ռեֆորմիստական տեսակետների համար, գրում է. «Ներվի մեզ ըսել, որ այդ մասին մեծ նամակագրին հետ տարակարծիք կգտնվինք: Այդ դրությունն ամեն տեղ ու ապագայի չկրնար հասկանալ»[99]:

Սակայն, ինչպես Մ. Մամուրյանի, այնպես էլ Ծերենցի հայացքների էվոլյուցիան, նրանց աշխարհայացքների հակասությունները բնավ չեն ստվերում այն խոշոր դերը, որ նրանք խաղացել են հայ ազատագրական պայքարի գաղափարախոսության պրոպագանդման բնագավառում։ Արևմտահայ ազգային դեմոկրատ-լուսավորականների համաստեղության մեջ սրանք փայլուն աստղեր էին։ Այդ լուսատու աստղերի թվին էին պատկանում ո՛չ միայն Հ. Սվաճյանը, Չիլինկիրյանը, Հայկունին՝ իրենց «Մեղու», «Ծաղիկ» և այլ առաջադեմ պարբերականներով, այլև հայ խոշոր երգիծաբան Հ. Պարոնյանը, Ա. Արփիարյանը, Դ. Վարուժանը, Ե. Օտյանը և ուրիշներ, որոնք առավել կամ նվազ չափերով խոշոր ծառայություն են մատուցել հայերի ազատագրության, ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության պրոպագանդման գործին։

98 *«Արևելյան մամուլ», 1876, հոկտեմբեր, էջ 349—350։*

99 *Նույն տեղում, էջ 350։*

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 1894—1896 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1

Սուլթանական Թուրքիան Բեռլինի կոնգրեսից հետո մշակեց հայերի բնաջնջման իր նողկալի ծրագիրը խորամանկորեն ու դավադրաբար իրագործում էր այն։ Նրա այդ քաղաքականությունը ավելի բացահայտ դարձավ 1890-ական թվականներին, երբ կազմակերպվեցին համիդիեական զորագնդեր և նրանց արտոնվեց դատաստան տեսնելու հայ բնակչության հետ[1]*։*

1 *Պետք է ասել, որ քրդական շեյխերի ու բեկերի ղեկավարության տակ գործող հեծյալների համախմբմանն ու կազմակերպմանը սուլթանական կառավարությունը ձեռնամուխ էր եղել դեռևս 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմի նախօրյակից։*

1876 թվականին Վանի զինվորական ընդհանուր հրամանատարի օգնական չերքեզ Հասան փաշան նախօրոք կազմակերպեց Վասպուրականի քրդական ցեղապետների՝ շեյխ Ջալալեդդինի և շեյխ Ուբեյդուլլայի հեծյալներին, որոնք օգտվելով պատերազմի նպաստավոր առիթից, կոտորում էին հայերին, կողոպտում ու թալանում նրանց ունեցվածքը։

Պատերազմի ժամանակ Մոսուլի, Տիգրանակերտի, Բիթլիսի և Վասպուրականի քուրդ ավազակապետները՝ իրենց հրոսակներով շարժվեցին Ալաշկերտի ու Բայազետի ուղղությամբ՝ անասելի զրկանքներ ու տառապանքներ պատճառելով հայերին։ Նրանցից ամենից մոլեռանդն ու գիշատիչը՝ շեյխ Ջալալեդդինն էր, որի բարբարոսական արարքները Բաֆֆին կենդանի գույներով նկարագրել է «Ջալալեդդին» պատմավեպում։

Պատերազմից հետո, թուրքական կառավարության հանձնարարությամբ Վան գործուղված Մյուշյուր Սամի փաշան անմիջապես ձեռնամուխ եղավ քրդական հրոսակների հավաքագրմանն ու կազմակերպմանը՝ օգտագործելով նրանց հայերի

Օգտվելով վիլհելմյան Գերմանիայի և ռուսական ցարիզմի հովանավորությունից, Մերձավոր Արևելքին և Փոքր Ասիային տիրապետելու շուրջը անգլո-ռուսական շահերի խիստ բախումներից, թուրքական սուլթանը անցավ իր այդ հրեշային ծրագրի իրագործմանը։ «Այժմ նա յուր նպատակին հասավ,—գրում է Խրիմյանին դոկտոր Թորոս Թուզեյանը,—և սկսավ հայերը բնաջինջ ընելու մասին յուր ծրագիրը արձակ համարձակ առաջ տանել...»[2]։

Համիդիեական զորագնդերը կազմակերպվում էին արագորեն։ Զիա փաշան Ալաշկերտում կազմակերպեց ութ զորագունդ, որոնք գործում էին սանձարձակորեն, կոտորում, ոչնչացնում էին հայ բնակիչներին՝ առանց որևէ առիթի։

Հետևապես, քրդական հեծելազոր գնդերը կազմակերպվում էին վաղօրոք, բայց 1890-ական թվականներին դրանք պաշտոնական կերպարանք ստացան, սպառազինվեցին ամերիկյան ու անգլիական զենքերով, կատարում էին զինվարժություններ և գործում թուրքական զինվորական հրամանատարության ներքո։

«Նրա նախաձեռնությամբ,—գրում է «Մշակ»-ը,— զինվորական մի առանձին հանձնաժողով է կազմակերպված քուրդ աշիրեթներից (ազատ բեկեր), որոնց թվում գտնվում են և զիլանելի, այդերանելի, սելագլի, զարափափախչի ցեղերի ցեղապետները»[3]։

«Թուրքաց նորակազմ զորքը» վերնագրով «Մշակ»-ում եղած թղթակցության մեջ նշված է, որ Քրդստանում քրդերի թիվը կազմում է 1.300.000, որոնցից յուրաքանչյուր 17 տարին լրացած արական սեռին պատկանողը բանակ է կանչվում. «Օֆիցերները պետք է լինեն առավելապես քուրդ ազնվական տոհմերից... Քրդական հեծելազորը, ի պատիվ սուլթանի «Համիդիե գնդեր» անունն են կրում. քրդական բոլոր գնդերի հրամանատար է նշանակվում մի ֆերիկ-դեներալ»[4]։

Վասպուրականի մի խումբ հայեր Խրիմյանին ուղարկած հեռագրում քրդական այդ զորագնդերի և տեղական իշխանությունների կողմից հայերին հոշոտելու մասին գրում են. «Վեհափառ տեր։ Մեր հայրենիքը կրակի ու բոցի մեջ է այսօր։ Տաճիկ տերությունը որոշած է դատարկել Հայաստանը։ Նա դիմում է ամեն տեսակ տարսափեցնող միջոցների, որպեսզի գաղթեցնի հայերին։ Տանել այլևս անկարելի է»[5]։

Ալաշկերտի Գուբ-Ղշրան գյուղից կոտորածներից ազատված երեք հայ ընտանիքներ Խրիմյանին ուղարկած իրենց դիմումի մեջ շարադրում են այն ահավոր դրությունը, որ տիրում է իրենց գյուղում և որը առիթ դարձավ փախուստի դիմելու համար, որպեսզի փրկեն իրենց կյանքը և չտեսնեն «սուրբ և պաշտելի տների ապականումն ու անարգումը»[6]։

Սուլթանական սպանդանոցից Բուլղարիա փախած մի խումբ փախստականներ Խրիմյանին ուղարկած դիմումի մեջ գրում են. «Հայաստանը դարավոր բազմաչարչար պատմական կյանքի ընթացքում, պարսիկներից սկսած մինչև արաբների, թաթարների, մոնղոլների արշավանքները, որքան էլ ասպատակություն է կրել, որքան էլ այրվել ու ավերվել է, բայց այս տեսակ հալածանքի չի ենթարկվել։ Այսօրվա բուն նպատակը ոչ այլ ինչ է, եթե ոչ բնաջինջ անել հայ ժողովուրդը իր մայրենի երկրից»[7]։

Ադանայից (Կիլիկիա) «Նոր-դար»-ի թղթակիցը թուրքական ու քրդական հրոսակների կողմից հայկական ջարդերի կազմակերպման և անպաշտպան հայերի համար ստեղծված մահաբեր վիճակի մասին գրում է. «Մեզ համար Ջինգիսխաններու և Լենկ Թեմուր-

---

դեմ՝ իր կառավարության ծրագիրը իրականացնելու, Վան-Վասպուրականն ամայացնելու նպատակով։ Սամի փաշայի թելադրանքով շեյխ Ուբեյդուլլան արագորեն ստեղծում է քրդական միությունը։ Նրան հանձնարարված էր գրավել պարսկական Ատրպատականը՝ այնտեղ քրդական պետություն հաստատելու համար (տե՛ս «Մշակ», № 289, 1879)։

1880 թ. հուլիսի 2-ին Վանում եղած ժամանակ Խրիմյանը քրդական միության ստեղծումը համարեց «օսմանյան քաղաքականության» արդյունք՝ ուղղված Հայկական հարցի և հայերի գոյության դեմ (տե՛ս Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հատ. Ա, էջ 120)։

Քրդական հեծելազորների կազմակերպման, նրանց սպառազինման մասին հիշատակություններ կան Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանի կողմից թուրքական կառավարության մեծ վեզիրին ներկայացրած զեկուցագրերից մեկում (տե՛ս ՀՍՍՀ Մ. Մատենադարան, Իզմիրլյանի արխիվ, թղթապանակ № 14, վավերագիր 621 և այլ աղբյուրներում)։

2 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվան, ֆոնդ № 57, գործ № 693, թերթ 3։

3 «Մշակ», № 110, 1891։

4 «Մշակ», № 146, 1892։

5 ՀՍՍՀ ՊԿՊԱ, Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվան, ֆ. № 56, գ. № 46, թ. 2։

6 Մաշտոցի անվան Մատենադարան, Խրիմյանի արխիվ, ֆ. № 17, գործ № 101, վավերագիր 17։

7 ՀՍՍՀ ՊԿՊԱ, Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվան, ֆ. № 56, գ. № 46, թերթ 17։

ներու ժամանակը նորոգված է։ Ամեն կողմը մահ և արյուն կհոսե, ոչ ոք յուր կյանքի ու պատվի վրա վստահ չէ»[8]։

Այս և նման շատ փաստերի հիման վրա և հայերի նկատմամբ գործ դրված գազանություններին անձամբ իրազեկ, պրոֆեսոր Դիլլոնը գտնում է, որ սուլթանական կառավարության գործողությունների բոլոր ձևերը մի նպատակ են հետապնդում՝ վերջ տալ քրիստոնյա հայերին։ «Իրողություն է,—գրում է նա,—որ բնաջնջման նախագիծը գործադրվում է լավ և հիմնովին։ Քրիստոնյա ազգաբնակությունը բնաջնջվում է, գյուղերը անցնում են ուրիշների ձեռքը համարյա նույնպիսի արագությամբ, ինչպիսի արագությամբ դեկորացիաները փոխվում են օպերաներում»[9]։

Երբ Էմիլ Դիլլոնը մեկնում է Հայաստանից, նրան են ներկայանում Խնուսի հայ ազգաբնակության ներկայացուցիչները և հանձնում իրենց համախոսականը՝ եվրոպական մեծ տերություններին ներկայացնելու, հայերին սպառնացող ահեղ վտանգի մասին նրանց իրազեկ պահելու համար։ Նրանց համախոսականն ավարտվում է հետևյալ խոսքերով. «Միթե եվրոպական համակրությունը պետք է արտահայտվի մեր դագաղների վրա խաչակնքելու ձևով միայն»[10]։ Անօգնական և մահվան դողով սարսափի մեջ եղած հայերը դեռ չէին հասկացել, որ սուլթան Աբդուլ Համիդը հայկական կոտորածների դիմեց հենց եվրոպական այդ մեծ տերությունների թողտվությամբ։

Էրզրումի անգլիական հյուպատոս Կլիֆֆորդ Լոյդը Կ. Պոլսի՝ իր կառավարության դեսպանին գրում է, որ «Սուլթանի հայ հպատակները տառացիորեն անպաշտպան են այնպես, ինչպես գայլերով շրջապատված ոչխարի հոտը»[11]։ Բայց անգլիական կառավարողները և նրանց դեսպանները մատը մատին չխփեցին հայերին իրական օգնության հասնելու և սուլթանական դահիճներին պատժելու համար։

Թուրքական սուլթանը խորամանկություններ գործադրելու ճանապարհով կարողանում էր կապել եվրոպական մեծ տերությունների աչքերը։ Նա իր ոստիկանական գաղտնի գործող հիմնարկությունների միջոցով լրտեսական կազմակերպություններ էր ստեղծում, սարքովի դավադրություններ կազմակերպում և դրանք հա-

8 «Նոր-դար», № 25, 1895։

9 «Положение армян в Турции», էջ 156։

10 Նույն տեղում, էջ 12։

11 Նույն տեղում, էջ 133։

մարում հայերի կողմից իշխանության դեմ ուղղված «ապստամբություններ»[12]։ Բայց այդ դահիճը կամենում էր անպատճառ իր ձեռքի տակ ունենալ գրավոր ապացույցներ՝ հայերի կողմից իշխանության դեմ պատրաստվող հեղափոխության վերաբերյալ, որպեսզի մեծ տերությունների առջև արդարանար և արդարացներ իր «զզվելի ոճիրները, զանոնք արդարության գործեր նկատելտար»[13]—գրում է Ժագ դը Մորգանը։

Պաստոր Լեպսիուսը «Հայաստան և Եվրոպա» խորագրով աշխատության մեջ ուշագրավ փաստեր է հրապարակում սուլթանի կառավարության ստոր գործողությունների վերաբերյալ։ Նա գրում է. «Խարբերդի շրջանի Հողե գյուղին քրիստոնյաները կը հավաքեն մզկիթի մը մեջ։ Անոնց մեջեն կընտրեն 80 երիտասարդներ և գյուղեն դուրս կը տանին՝ կոտորելու համար։ Հարյուրավոր հայեր տանջանքներու կը մատնեն, որովհետև կը մերժեն ստորագրել սուլթանին ուղղված գրություն մը, որուն մեջ իրենց ազգականներն ու դրացիները ամբաստանված էին որպես պետական մեծ դավաճաններ։ Երբ անոնցմե մին կը մերժե դահիճին հանձնել իր գյուղի ամենապարկեշտ մարդիկը, դատավորները կը հրամայեն զայն շարշարել և ամբողջ գիշերը զայն կը տանջեն։ Նախ կը գանահարեն ոտքին ներբանները սենյակի մը մեջ, որուն կից սենյակը կը գտնվին իր ընտանիքի իգական անդամները։ Հետո կը կապեն զայն, կը խարազանեն, անոր մորուքին մազերը մեկիկ մեկիկ կը փրցնեն, կարմրած երկաթով մը կայրեն անոր մարմինը։ Ան միշտ կը մերժե իրմե պահանջված խոստովանությունը և կըսե.—քրիստոնյա եմ, չեմ կրնար իմ հոգիս արատավորել անմեղ արյունով... հանուն աստվածային գթության, սպանեցեք զիս»[14]։

Ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս, պատմության թուրքական կեղծարարները փորձում էին և փորձում են ծածկել ոճրագործությունների հետքերը։ Նրանց չի հաջողվել և չի հաջողվի սքողել հազարավոր մեղադրական փաստերը։ Ի՞նչ է գրում պաստոր Լեպսիուսը իր «Հավատք և կյանք» աշխատությունում։ Նա գրում է. «Այստեղ 300-են 400 կիներ, այնտեղ 200 կիներ զինվորներու գազանության հանձնվելե վերջ՝ կը բնաջնջվին սուրի կամ սվիններու

12 Տե՛ս լրտես Զիա բեյի խոստովանությունները («Երիտասարդ Հայաստան», № 10, 1908)։

13 Ժագ դը Մորգան, Հայ ժողովրդի պատմությունը, էջ 340։

14 Նույն տեղում։

հարվածներու տակ։ Ուրիշ տեղ մը 60 կիներ, դեռատի աղջիկներ օրերով կը բանտարկվին փոքրիկ եկեղեցիի մեջ. հետո կը հանձնվին զինվորներուն, վերջապես կը խողխողվին, արյան հեղեղ մը կը հոսի եկեղեցիի դռան առջև։ Ուրիշ տեղ ալ լեռան մը վրա քանի մը հազար փախստականներ տասը օր կը դիմադրեն։ Բայց իզուր։ Կին մը կը հառաջանա ժայռի մը վրա ու կը պոռա. «Քույրեր, պետք է ընտրել երկուքեն մեկը,—կամ հանձնվիլ Թուրքերուն, կամ ընծի հետևիլ» և գրկելով իր մեկ տարեկան զավակը, կը գահավիժի անդունդը։ Իր ընկերակիցները անոր կը հետևին։ Եվ սուլթանը շքանշաններ կը պարգևե մարդասպաններու հրամանատար պաշտոնյաներուն։ Արծաթազօծ դրոշակ մը կը ղրկե քյուրդ բեկերուն»[15]։

Կոտորածներին զուգընթաց Արևմտյան Հայաստանում մոլեգնում էր նաև սովը, որը սուլթանական կառավարության ջարդարարական քաղաքականության և քրդական զորագնդերի անողոք ասպատակությունների արդյունքն էր։ Սովի մատնված տասնյակ հազարավոր հայ ընտանիքներ բռնում էին կործանարար գաղթականության ուղին։

«Սով Վանի նահանգում» վերնագրի տակ «Մշակ»-ը տպագրեց արտասահմանյան մի լրագրի հետևյալ հաղորդագրությունը. «Վասպուրականի համայն հայ ժողովուրդը այժմ սովե սաստկապես կը տառապի։ Օսմանյան հոռի վարչություն, յուր ուղղակի կեղեքումներով և բարբարոս քուրդերի անվերջ հափշտակություններով չկարողանալով բնիկ հայ ժողովուրդը հեռացնել հայրենիքեն, պարբերաբար սովեր առաջ կբերե, զանոնք բոլորովին հուսահատեցնելու համար»[16]։

Արևմտահայերի գաղթի պատճառների մասին Ա. Արփիարյանը գրում է. «Կարինի և Բաղեշի վիլայեթներում տեղի ունեցած այս երկու տարվա սովից հազարավոր ընտանիքներ գաղթեցին աշխարհիս այլևայլ կողմեր, թողնելով իրենց սեփական անշարժ կալվածներ, հայրենի հողը և բնակությունը. շատեր ցրտեն ու քաղցեն մեռան, շատերը կորան և գրեթե բոլոր բնակիչները մեծ թշվառությունների և անբախտությունների մատնվեցան»[17]։

Արևմտահայ մի խումբ մարդիկ համիդիեական զորագնդերի կողմից հայերին պատճառած չարիքների և նրանց հարկադրաբար գաղթելու մասին Խրիմյանին գրում են «Նա. (իմա՝ հայ ժողովուրդը—Հ. Վ.) թողնում է իր երկիրը ոչ թե այն պատճառով, որ չէ կամենում հերկել հողը, ապրել իր ճակատի քրտինքով, որ խույս է տալիս ծանր աշխատանքից, որ հրաժարվում է կատարել իր քաղաքացիական պարտավորությունները դեպի իր իշխանությունը, ո՛չ, հազար անգամ ո՛չ։ Նա գլուխն առած փախչում է, գաղթում է քուրդ հրոսակների անթիվ ասպատակություններից և ավազակություններից ստիպված, տաճիկ փաշաների և ուրիշ պաշտոնյաների անտանելի կամայականություններից բռնադատված։ Այդ հարբստահարությունները այնպիսի ծայրահեղ աստիճանի հասան, որ հայ ազգի մի մասը, մի բուռն աղքատ լեռնականներ ստիպված եղան զենքով դիմադրել վարչական կամայականություններին և պաշտպանել իրենց մարդկային իրավունքներն ու ընտանիքի պատիվը»[18]։

Վանի անգլիական հյուպատոսը Կ. Պոլսի իր կառավարական դեսպանին հաղորդում է մի սարսափելի տեսարանի մասին. «Ինձ տեղեկություններ են հասել,—գրում է նա,—ընթացիկ ամսվա 17-ին Բիթլիսի Ալիբեկի որդին, չերքեզ զափթիաների ուղեկցությամբ, որոնց թիվը հասնում է մինչև 40 հոգու, երևացին հայկական Խորմուզ գյուղակում և գիշերը անցկացրին Նիկոև Խաչիկի տանը։ Այդ մարդը ենթարկվեց խոշտանգումների այն բանի համար, որ իր պատիվը պաշտպանելու նկատառումով դիմեց միջոցների և հետո մեռավ»[19]։

Անպաշտպան և բախտի քմահաճույքներին մնացած հայերը բազմաթիվ դիմումներ են ուղարկում Խրիմյանին և խնդրում են շուտափույթ օգնություն իրենց վտանգված կյանքը փրկելու նպատակով։

Համիդիեական զորագնդերի կողմից հայ աշխատավորներին պատճառած ահավոր սարսափների մասին Բաղեշի հայերը Կ. Պոլսի հայոց պատրիարքին ուղարկած իրենց ուղերձում գրում են. «Քոսի Մարգարի եղբոր կինը կամեցան բռնությամբ տանել Լատան գյուղի շեյխ Ամարը յուր մարդկանցով։ Բայց նրանց ընդդիմացան և ընդդիմացողները սպանվեցին։ Չարագործները մնացին առանց պատժի... Նույն գյուղացի Շնգեռի Թաբեի որդի Նազարին քրդերը սպանեցին կալի մեջ գիշերը այն պատճառով, որ մերժեց տալ նրանց ցորեն։ Չարագործները մնացին անպատիժ... Նույն գյու-

15 Ժագ դը Մորգան, *Հայ ժողովրդի պատմությունը*, էջ 341։
16 «Մշակ», № 11, 1892։
17 «Մշակ», № 86, 1894։
18 ՀՍՍՀ ՊԿՊԱ, Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվան, ֆ. 57, գ. 496, թ. 3։
19 «Братская помощь армянам», Մոսկվա, 1897, էջ XI։

ղացի Ըռչո Կակոյի աղջիկ Գյոզալին փախցրեց Խաչգո գյուղացի շեյխ Մատոն։ Կակոն բողոքեց ղայմաղամին և Մուշի փաշային։ Բայց գանգատը մնաց անլսելի և աղջկան տաճկացրին։ Նույն գյուղացի ժամկոչ Ենգոյի կինը մարդի համար հաց է տանում արտը։ Ճանապարհին նրան պատահում է խութեցի քուրդ Իբոն 3 ընկերով. բռնում է այդ կնոջը և զոռով տանում է, տաճկացնում և յուր կինն է շինում։ Ենգոն բողոք տվավ ղայմաղամին ու փաշային։ Բայց նրա բողոքը մնում է անլսելի և 4 երեխեքն մնացին առանց մայր»[20]։

Այդ նույն ուղերձում Բաղեշի հայերը հիշատակում են է՛լ ավելի ահավոր փաստերի մասին, որոնք վկայում են, որ թուրքական կառավարությունը ամեն ջանք գործ էր դնում հայերի ասիմիլացման և բնաջնջման համար։ Համախոսականում ասված է.

«Ապրի գյուղացի շեյխ Քամիրը անցյալ 1893 թ. մի քանի զինավորված քրդերով մտավ Մելոյի տունը և նրա որդի Օհաննեսի կնոջը զոռով հափշտակեց տարավ մերձակա Կաբուլ քրդի գյուղը, տաճկացրավ, յուր կին դարձրավ։ Այդ հարսը երեք ամիս էր, որ պսակվել էր։ Մելոն բողոքեց ղայմաղամին և Մուշի փաշային շեյխի բարբարոսական չարագործությունների վրա, բայց նրա բողոքը անլսելի մնաց և հարսը մնաց շեյխի մոտ. դրանից սավայի շեյխը Մելոյի տան արծաթեղենը և ոսկեղենը հափշտակեց...»[21]։

Այս ահավոր սարսափներից հետո, 1892 թվականին սուլթան Համիդի ծննդյան տոնակատարության առնչությամբ, Աշըգյանը մի հեռագիր է ուղարկում գավառի բոլոր հայ հոգևոր առաջնորդներին և պահանջում է ժողովրդի մասնակցությամբ հատուկ պատարագներ կազմակերպել, աղոթել և երկար կյանք մաղթել սուլթանին։ «Հենց որ,—գրում է «Մշակ»-ը,—Կ. Պոլսում կամ Թուրքաց Հայաստանում մի որևէ արտասովոր դեպք է պատահում, լինի դա սով թե խոլերա, հայոց ազգի տոն, թե մահմեդական մի մեծ ծես, Սահմանադրության տարեդարձ, թե սուլթանի գահակալության տարեդարձ»—միևնույն է, Աշըգյան պատրիարքը առիթից օգուտ է քաղում և իջնելով մայր եկեղեցին կամ կոնդակ հրապարակելով՝ հրավիրում է համայն թուրքահայերին, որ սուլթանին երկար կյանք պարգևէ, ի փառս և ի մխիթարություն օսմանյան պետության»[22]։

Եթե Աշըգյանը և հայ էֆենդիները բաժակ էին բարձրացնում և աղոթում սուլթան Համիդի համար ու ցանկանում նրան երկար

20 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 42, գ. 29, թ. 16։
21 Նույն տեղում, թ. 18։
22 «Մշակ», № 13, 1892։

կյանք, մաղթում արևշատություն, ապա Համիդի կառավարության դաժանություններից Փարիզ փախած հայ գաղթականների մի խումբն էլ իր բաժակն էր բարձրացնում և ասում. «Սուլթան Ապտյուլ—Համիդ, այս հանդեսին մեջ՝ մենք ալ մաղթանք մը ունինք քեզի ըսելիք։ Կմաղթենք, որ կյանքդ դեռ քիչ մը տևի։ Մեզի համար տաժանելի պիտի ըլլար տեսնել քու հանկարծական անհետացումդ՝ հասարակ մահով մը, առանց քու գոյությունդ իր տրամաբանական պսակումը ստացած ըլլար, առանց որի դու ընդունած ըլլաս պատիժը, որ քեզի կսպասե և որ այնքան ահավոր պիտի ըլլա, որքան դու գարշելի եղար։ Վրեժը, որ կուտակված կմնա այն անհամար տառապանքներուն խորը զոր դուն քո ձեռքովդ քսանուհինգ տարիներ ի վեր կազմեցիր պետությանդ ամբողջ պատմության մեջ պիտի չունենա պայթելու այնքան ավելի զորությամբ, որքան բիրտորեն զսպվեցավ մինչև ցարդ։ Քու վախճանիդ արհավիրքը այնքան մեծ պիտի ըլլա, որքան քու ոճիրներուդ ահագնությունը։

Մեռելներու ձայնովը թնդացող այս բաժակաճառը՝ ամբողջ հայ ժողովուրդը կկրկնե այս վայրկյանիս իր՝ ցավով ուռած սրտին խորեն։ Եվ հայ ժողովրդի հետ այս նույն բաժակաճառը կհուզեցնե բոլոր այն ժողովուրդները, որ դժբախտության մեջ մեզի եղբայր են եղած կամ տակավին, պուլկարները, ասորիները, եզիդիները, կրետացիները, մակեդոնացիները, բոլոր այն ժողովուրդները, որոնք կրած են արյունի և ամոթալի լուծը նոր ժամանակներու ամենեն զազիր ճիվաղեն։

Հակառակ այդ խնջույքը պաշարող զինվորներու թանձր ցանկապատին, այս բաժակաճառին արձագանքը պիտի հասնի մինչև կոչնակները, պիտի որոտա պաշտոնական ճառերուն լկտի արվեստականության մեջտեղը, պիտի տիրապետե անոնց։

Եվ եթե կոչնակները համառին խուլ մնալ այս ձայնին, ազատ մարդոց խիղճը զայն պիտի լսե աշխարհիս չորս անկյուն և պիտի մասնակցի, վստահ եղեք, այս անեծքի և վրիժառության աղաղակին։

Մի խումբ սգավոր հայեր»[23]։

Տառապյալ հայերի այս բաժակաճառը, վրիժառությամբ լցված նրանց անեծքն ու ցասումը Աբդուլ-Համիդին ուղղված, ողջ հայ ժողովրդի վրեժի ու ցասման արտահայտությունն է ընդդեմ թուրքական բռնակալության։

23 «Անահիտ», № 9, 1901, Փարիզ։

Հայկական կոտորածները տեղի էին ունենում եվրոպական մեծ տերությունների դեսպանների աչքի առջև ու նրանց գիտությամբ։ 1894—1896 թվականներին սուլթանական ռեժիմը սրի քաշեց ավելի քան 300 հազար հայերի։ Հրկիզվեցին և հողին հավասարվեցին ավելի քան 3000 հայկական գյուղ, տասնյակ հազարավոր հայեր իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու համար ստիպված էին թողնել հայրենիքը և ցրվել ամբողջ աշխարհով[24]։

Ծանր ու անդառնալի էր արևմտահայ ժողովրդի կորուստը։ 1895 թ. մարտի 20-ին Նուբար փաշային գրած իր նամակում հայկական ողբերգության և սուլթանական կառավարության չար դիտավորությունների մասին Խրիմյանը նշում է, որ Աբդուլ-Համիդը Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի կիրառումը տեսնում է հայերի բնաջնջման մեջ։ «Եթե բովանդակ հայոց գաղթականները հավաքենք,—գրում է նա,—թե ընտանիքով և թե անընտանիք, թիվը հասնում է մինչև 180.000-ի... Այսպես ի գործ դրավ Բարձր Դուռն յուր գաղտնի նպատակը. այնչափ խեղդեց ու ճնշեց հայու կյանքն ու հոգին, մինչև որ նա ստիպվեցավ թողուլ յուր սիրելի բնակավայրը՝ ուր յուր պապերուն թողած արդար ժառանգությունն էր, ու դիմել օտարության։ Եվ դու գիտես, թե չկա աշխարհի վրա մի թշվառություն ազգի համար, քան թե հայրենազուրկ լինել։ Այսպես հայու հողեն քանդել կուզե հայոց արմատը,—որպեսզի հետո ասե. «Ոչ հայ կա, ոչ Հայաստան» և այս կերպ փակե Արևելյան խնդիրը և պատասխան տա քրիստոնյա տերությանց... «Իմ կայսրությունն միայն իսլամ ժողովրդի համար է. թողեք ինձ, որպես կամիմ, այնպես կառավարեմ» և այլն[25]։

Էմիլ Դիլլոնը նշում է, որ ջարդարարության հետևանքով որբ մնացած երեխաների թիվը հասնում էր 100.000-ի։ Նա իրավացի կերպով պնդում է, որ թուրքական կառավարությունը լրիվ կերպով չի հրապարակել սպանված հայերի թիվը, որովհետև «նրանցից շատերը իրենց մահը գտան Հայաստանի լեռներում կամ Բոսֆորի լազուրյա ալիքների մեջ»[26]։

Անասելի վշտերի տակ ճնշված, ստրկական կահանքներով շղթայված, թախծի մռայլ կնիքով ճակատը դրոշմված, մարմնացած տանջանքը կյանքի ու գույքի անապահովություն, պատվի

24 Տե՛ս Ե. Սարգսյան և Ռ. Սահակյան, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության ենթափոխումը թուրք պատմագրության մեջ, Հայպետհրատ, 1963, էջ 12։

25 Գ. Լազյան, Հայաստան և հայ դատը (վավերագիր), Փարիզ, 1946, էջ 119։

26 «Положение армян в Турции», էջ 128։

արատավորում, ասիմիլացման սպառնալիք, մահաբեր արտագաղթ,—այսպիսին է եղել գավառահայության իսկական սրտառուչ պատկերը սուլթանական Թուրքիայում։

«Այլասերել տաճկահայ ժողովուրդը,—գրում է «Մշակ»-ը,—զրկելով նրան մարդկային ոգու հատուկ բոլոր ձգտումներից և ինքնագիտակցությունից՝ սոսկալի տանջանքներով և կաշկանդիչ դառն պայմաններով... լայն ասպարեզ տալ գոռ քրդերին իրենց սուրն ու հրացանը հայ կենդանի անձեն զոհերի վրա փորձելու, նպաստելու տաճկահայ ժողովրդի բարոյական մահացությանն ու ֆիզիկական վերջնական անկման... ստիպել նրան գաղթականության կորստաբեր քայլեր անդադար անելու, փչացնելու, անդառնալի կորստի մատնելու հայտնի դիտումով,—ահա թուրք կառավարության վտանգավոր քաղաքագիտական հայացքների համառոտակի ամփոփումը»[27]։

Սուլթանական կառավարության ջարդարարական քաղաքականությունը արևմտահայերի ապստամբական ելույթների առիթը եղավ։ Նրանք սրտատրոփ սպասում էին Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով խոստացված բարենորոգումների կիրառմանը, բայց թուրքական իշխանությունները ամենևին հաշվի չնստեցին այդ հոդվածի հետ։ Նրանք արհամարհեցին 1880 թ. հուլիսին և սեպտեմբերին եվրոպական դեսպանների կողմից եղած ազդարարումները և ուղղակի անցան հայերի մասսայական ջարդերի կազմակերպմանը։ «Բարձր Դուռը,—գրում է Ժակ դը Մորգանը,—այս դիտողության չի պատասխաներ (իմա՝ ազդարարումներին—Հ. Վ.), և շնորհիվ Եվրոպայի անտարբերության կը շարունակվին հայոց հալածանքները, Հայաստանի մեջ՝ ամեն տեղ, հայերը կը զրկվին իրենց հողերեն և իրենց հուսահատության մեջ շատ անգամ կապստամբին»[28]։

Իրենց ֆիզիկական գոյության և ազգային արժանապատվության համար հայերի արդարացի պայքարը թուրքական կառավարիչները դիտում էին որպես իրենց պետականության դեմ ուղղված սեպարատիստական քայլ և այդ պատրվակով ձեռնարկեցին հայկական կոտորածները։ Արդարացնելով սուլթանական կառավարության չարանենգ դիտավորությունները, մեղադրելով հայերին «սեպարատիստական» հակումներ ցուցաբերելու մեջ, Ջեմալ փաշան

27 «Մշակ», № 111, 1894։

28 Ժակ դը Մորգան, Հայ ժողովրդի պատմությունը, էջ 328։

գրում էր. «Եվ որովհետև հայերն անկախ մի պետություն հիմնելու ձգտում ունեին, մի պետություն, ուր նրանք, չնայած քուրդերի և թուրքերի թվական գերազանցությանը, պետք է վերջինների վրա իշխեին, ուստի ինքնըստինքյան հասկանալի է, որ սրանք էլ իրենց կողմից ամեն կերպ աշխատում էին ի դերև հանել հայերի այդ ծրագիրը»[29]։

Թուրքական գիշատիչներն իրենց զենքը առաջին հերթին ուղղեցին այն քաղաքների ու գավառների դեմ, որոնք աչքի էին ընկել օսմանյան բռնապետական կարգերի դեմ մղած ազատագրական պայքարի հերոսական անցյալով։

ԷՐԶՐՈՒՄՑԻՆԵՐԻ ՑՈՒՅՑԸ 1890 Թ. ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ

Թուրքական հետախուզական — ոստիկանական օրգանները սուլթանին տեղեկացրել էին այն մասին, թե Էրզրումի հայերը զենքեր են կուտակել և պատրաստվում են ինքնապաշտպանության։ Սուլթանը հրաման է ուղարկում նահանգապետին (վալիին) և պահանջում է դիմել կտրուկ միջոցների։ Նահանգապետի կարգադրությամբ 30 ոստիկաններ ներխուժում են Էրզրումի հայկական եկեղեցու բակը և սկսում են խուզարկել այն ժամանակ, երբ եկեղեցում տեղի էր ունենում պատարագ։ Այդ քայլը առիթ դարձավ հայերի ու ոստիկանների միջև տեղի ունեցած զինված ընդհարման։

Հայ երիտասարդները վազում են դեպի եկեղեցին՝ արգելելու համար ծրագրված խուզարկությունները, որոնց առաջնորդում էր Հակոբ Իզգալացյանը։ Նրանցից մի քանիսը զինված էին ատրճանակով։ Հայերը փորձեցին համոզել ոստիկանապետին՝ զինվորներին եկեղեցուց դուրս հանելու համար, բայց նրանց գործադրած ջանքերը ապարդյուն եղան։ Զինվորներն ու ոստիկանները սկսում են կրակել հայերի բազմության վրա, սպանում են չորս մարդու։ Հայերը հերոսաբար դիմադրում են թշնամուն և իրենց հերթին սպանում մի քանի զինվորների։ Բայց ուժերը անհավասար էին։ Թշնամին գործում էր սանձարձակությամբ։ Շարունակվում էին խուզարկություններն ու ձերբակալությունները։ Դպրոցի տեսուչ Գր. Զիլինկիրյանը փախավ Կովկաս, իսկ ցույցի ղեկավարները՝ Խ. Կերեկցյանը, Իշգալացյանը, Սահաթճյանը և Հակոբ Նշկյանը թաքնվում են։ Թուրքական կառավարությունը ինքնապաշտպանության դիմած Էրզրումի հայ հասարակության նկատմամբ անասելի գազանություններ գործադրեց։

29 Ջեմալ փաշա, Հայկական հարցը, Երևան, 1927, էջ 11։

Էրզրումցիների նկատմամբ սուլթանական իշխանությունների գործադրած գազանությունները է՛լ ավելի ուժեղացրին հայերի զայրույթն ու ցասումը։

Բշրեցան դրոներն սուրբ տաճարներին,
Նորից խոխոջաց արյուն հորդառատ,
Լիճ քստմնելի դարձավ խեղճ Կարին,
Հայ արտասուքի, արյան անարատ[30],—

գրում էր այդ օրերին Ռ. Պատկանյանը։

Էրզրումի անցքերին նվիրված պոեմում Ս. Շահազիզը անարգանքի սյունին է գամում եվրոպական տերություններին, որոնք իրենց շահերից ելնելով՝ քաջալերում էին սուլթանին իր ոճրագործությունների մեջ.

Լախտեր չափելով կաշեհան մեջքին,
Քաշում են անապատ, անմեղ Հիսուսին...
«Ազատ բարաբվա՝ գող ու ավազակ,
«Ազատ է օսման, վճռեց Եվրոպան.
«Խեղդեցեք դրան, ջարդեցեք կզակ,
Որ այլևս մեզ բողոք չկարդա»[31]։

Շահազիզը միաժամանակ քաջ Էրզրումցիներին համարձակ մարտի էր կոչում, դաստիարակում նրանց մեջ հաստատ համոզմունք իրենց արդար գործի վերջնական հաղթանակի նկատմամբ։

Վտանգի ենթարկված արևմտահայ ժողովրդի ազատագրության հարցը կազմում էր ժամանակի հուզող հարցը։ Արևելյան Հայաստանից հարյուրավոր հայ երիտասարդներ մեկնում էին Արևմտյան Հայաստան՝ իրենց եղբայրներին օգնելու, սուլթանական ռեժիմից նրանց ազատագրությանը աջակցելու համար։

Ապրելով իր հարազատ եղբայրների կրած ծանր ցավերով ու տառապանքներով, հայ ժողովրդի անվանի բանաստեղծ Ալ. Ծատուրյանը «Ես չեմ երգում» բանաստեղծությունում գրում է.

Ես չեմ երգում։ Իմ երգերում ցավատանջ
Այն հարազատ իմ տառապյալ խեղճ եղբայր
Դուք լսում եք խուլ հեծեծանք ու հառաչ
Եվ կարդում եք ազգիս վիշտը դարավոր[32]։

30 «Մշակ», № 21, 1893։
31 Ս. Շահազիզ, Երկեր, էջ 118։
32 Ալ. Ծատուրյան, Երկեր, էջ 41, Հայպետհրատ, 1948։

«Զինվորի երգը» բանաստեղծության մեծ Ծատուրյանը ձգտում է ընկնել կռվի դաշտ, օգնության ձեռք մեկնել իր եղբայրներին՝ բռնության շղթաները թոթափելու համար նրանց ծավալած ազատագրական պայքարին։

— Թռիր, իմ նժույգ, սլացիր շուտով,
Տար ինձ ցանկալի կռվի փոթորիկ,
Կռվի մեջ միայն ես արյան գնով
Կը փրկեմ իմ խեղճ, ստրուկ հայրենիք[33]։

Բռնակալության դեմ հայ մարտիկներին պայքարի կոչելով, Ալ. Ծատուրյանը տեսնում է նրանց համար առաջընթացի նորանոր հնարավորություններ ու գալիք նոր ապագա։

—Հառաջ, իմ եղբայր... հերի՛ք, որքան՝
Խրղճուկ, անձնատո՛ւր, ապիկար լացի՝
Ողբացի անլուռ, սրգավորի նման,
Զուր սպասելով վարդ լուսաբացին,

Հառա՛ջ... քաջաշունչ, հաղթական հոգով
Բա՛ց քեզ ճանապարհ,—վաղ թե ապագան
Քո հարթած ուղին կը ծածկվի ծաղկով.
Այլ ուղի չունի քո լույս ապագան...[34]։

Իրենց եղբայրների ապագայի նկատմամբ եղած այս վառ հույսերով ոգևորված, ծանր փորձություններ հաղթահարելու ճանապարհով, հայ երիտասարդները մեկնում էին կռվի դաշտ և մասնակից դառնում սուլթանական բռնապետության դեմ ուղղված արևմտահայ հատվածի ազատագրական պայքարին։

Էրզրումի անցքերի առիթով հնչակյանները կազմակերպեցին մի շարք ցույցեր՝ եվրոպական տերությունների ուշադրությունը Հայկական հարցի վրա բևեռելու նպատակով։ Հնչակյանների Տրապիզոնի կազմակերպությունը որոշում է հերթական ցույց կազմակերպել Կ. Պոլսում՝ մեծ տերությունների դեսպանների աչքի առջև։

1890 թ. գարնանը Ռուբեն Խանազատը մեկնում է Կ. Պոլիս և հանդիպում Գ. Կաֆեյանին, Հ. Ճանկյուլյանին, Մուրադին (Հարություն Պոյաճյանին)։ Հուլիսի 12-ին Մուրադը, Տամատյանը, Հ. Ճանկյուլյանը, Գ. Աշրգպաշյանը, Գ. Գրլճյանը, Հ. Գազանճյանը և Մ. Վարդանյանը որոշում են խաղաղ ցույց կազմակերպել Պոլսում,

33 Նույն տեղում, էջ 127։
34 Նույն տեղում, էջ 240։

որպեսզի կարելի լինի լավ կերպով Հայկական հարցի վրա դարձնել մեծ պետությունների ուշադրությունը»[35]։ Խրիմյանն այդ մարդկանց անվանեց «խենթեր» և Մամբրե վարդապետի միջոցով հայտնեց, որ կրակի հետ խաղ չանեն։

Ցույցը տեղի ունեցավ 1890 թ. հուլիսի 15-ին, որը նշանավոր է Գում-Գաբուի ցույց անունով։ Այն տեղի ունեցավ Գուրբան Պայրամ Ալիի առաջին օրը։ Ցուցարարները բողոքում էին Կարինի (Էրզրումի) խուզարկությունների և հայերի դեմ սկսված գազանությունների դեմ։ Գում-Գաբուի եկեղեցում, պատարագի ժամին, Աշրգյանը կարդում է սուլթանին ներկայացվելիք հայերի բողոքն ու պահանջները։ Գում-Գաբուի պահակապետ Մուստաֆա բեկը ուշադրությամբ հետևում էր հայերի գործողություններին։

Այն ժամանակ, երբ ժողովրդի ոգևորությունից քաջալերված Հ. Ճանկյուլյանը և հնչակյանների ճնշման ներքո՝ Աշրգյանը կառքը նստած շարժվում են դեպի Բ. Դուռը, այն ժամանակ 50 ոստիկաններ իսկույն շրջապատում են կառքը, ձերբակալում Ճանկյուլյանին և հարձակվում ցուցարարների վրա։ Սկսվում են կռիվներ։ Կառավարական նոր զորքեր են նետվում կռվի մեջ, զոհվում են շատ մարդիկ։ Մուրադը թաքնվում է, իսկ Ճանկյուլյանը ձերբակալվում և ենթարկվում ցմահ բանտարկության[36]։

1890 թ. օգոստոսի 21-ին Կ. Պոլսի անգլիական դեսպան սեր Հուայթը իր կառավարությանը հաղորդում է հետևյալը. «Զինվորական ատյանը կուգա հայտարարելու յուր վճիռներն ընդդեմ այն անձանց, որոնք Գուրբան-Պայրամի առաջին օրը հավաքվելով պատրիարքարանի մեջ՝ գործում են ոճրագործ արարքներ՝ մեծ խռովություն մը առաջ բերելու, անտեսելով իրենց հպատակության պարտավորությունները։ Արթին Ճանկյուլյանը, որ առաջին դերակատարը եղած է օսմանյան հպատակներուն մեջ ապստամբություն մը ծագեցնելու ընդդեմ օսման կառավարության... մահվան դատապարտված է»[37]։

Այսպիսով, բոլորովին արդարացի պահանջներով խաղաղ ցույցի դիմած հայերի շարքերը գնդակոծվեցին, իսկ մեծ տերությունների դեսպանները իրենց անտարբերությամբ քաջալերում էին սուլթանին և հայկական կոտորածները համարում նրա ներքին գործը։

35 Ռուբեն Խանազատ, Հիշողություններ Խրիմյանի մասին, Թիֆլիս, 1908, էջ 16։
36 «Պատմություն Ս.-Դ. Հնչակյան կուսակցության», հատ. Ա և հետո, Պեյրութ, 1962, էջ 53։
73 ՀՍՍՀ ԳԱ պատմ. ինստիտուտի արխիվ, Լեոի Ֆ., թղթապ. № 1, թերթ 67։

Էրզրումի իրադարձությունների, Կ. Պոլսում տեղի ունեցած գազանությունների և սուլթանական կառավարության ջարդարարական քաղաքականության լուրը հասնում է լեռնային Սասուն։ Հասկանալով սուլթանի կառավարության նենգ դիտավորությունները, Սասունի հերոս ժողովուրդը նախապատրաստվում է զենքով դիմավորելու սպառնացող ահեղ վտանգին։ «1890-ին սուլթանը,—գրում է Ժագ դը Մորգանը,—որ արդեն կը պատրաստվեր հայեր բնաջնջելու, հանճարեղ գաղափար մը հղացած էր, այն է Հայաստանի դրացի քյուրդ հրոսները զինել՝ Համիդիե ձիավորներ անվան տակ։ Ինչպես նախատեսել է, իր նպատակն էր այս ավազակները գրգռել քրիստոնյաներու դեմ։ Հետո քաջալերվելով դեսպաններու վարանոտ դիրքեն, 1894-ին կը հրամայե Սասունի մեջ կատարել կոտորածի փորձ մը, որ երեք շաբաթ կը տևե։ Նույն ինքն՝ կանոնավոր զորքն էր, որ ստանձնած էր մահ սփռել ամբողջ Հայաստանի մեջ»[38]։

Իր չար դիտավորություններն իրագործելու համար սուլթանական կառավարությունը և նրա տեղական իշխանությունները նախապես սկսեցին գրգռել քրդական ավազակապետների կրոնական մոլեռանդությունը հայերի դեմ։ 1890—1891 թվականներին Բաղեշի իշխանությունները քրդական շեյխեր ուղարկեցին Սասուն՝ քրդերին հայերի դեմ տրամադրելու նպատակով։ Այդ շեյխերի թվումն էր նաև նշանավոր Հաջի Դայիբը, որը հայտնի էր, որպես զորեղ նեցուկ հանրածանոթ դահիճ Մուսա բեկի ոճրագործություններին։ Նա իր մոլեռանդ ռեակցիոն քարոզներով գրավեց քրդական վերնախավերի ու ամբոխի համակրությունը, հայերին հռչակեց որպես քրդական հավատի թշնամի (դինդուշմանի), խափանեց հայերի ու քրդերի համերաշխությունը, ոտքի հանեց քրդերին հայերի դեմ։ Դիայբին և նրա հրոսակները միանգամայն արդարացրին սուլթան Համիդի հույսերը։ Քրդական այդ արյունարբուները ասպատակում էին հայկական գյուղերը և անասելի զրկանքների առջև կանգնեցնում հայերին։

Սասունի դեմ կազմակերպած իր գործողություններով թուրքական կառավարությունը վրեժ էր լուծում նրա հերոս ժողովրդից, ժողովուրդ, որը 19-րդ դարում արդեն չարդարդ անգամն էր ըմբոստանում օսմանյան բռնապետական կարգերի դեմ։ Հետևապես, Սասունի ապստամբությունը ինքնաբուխ էր և արդարացի, որը նշանակալից ավանդ է հայ ժողովրդի ազատագրական պայքարի տարեգրության մեջ։

Սասունի ժողովրդի անձնուրաց զավակները նախապատրաստեցին ու ղեկավարեցին ժողովրդի հերոսական պայքարը թուրքական բռնապետության դեմ։

Լեռնային Սասունը գտնվում էր Բիթլիսի նահանգում, Մուշ քաղաքից դեպի հարավ։ Նրա հարևանները իսլամացած քրդերն էին։ Բայց հայերի ավելի կատաղի թշնամիները բաքրանցիների, վալքացիների, բադրքանցիների, զիանցիների, զիլանցիների, շեշդանցիների, ինրկացիների, խատրկանցիների ցեղապետներն էին, որոնք գործում էին թուրքական իշխանությունների թելադրանքով և իրենց զինված հրոսակներով հանգիստ չէին տալիս հայ բնակչությանը։ «Սասունի քյուրդերի մեջ այժմ հայտնի են երկու շեյխեր,—գրում է Ա. Քալանթարը,—Զիլլանում ապրող շեյխ Մահմադը և Դուգատում (Հեղինի մոտ) ապրող շեյխ Ամարը։ Դրանք քյուրդերի առաջնորդներն են, կամ, ինչպես սասունցիներն են ասում, քյուրդ եպիսկոպոսները։ Վերջին կոտորածի նախապատրաստական գործողությունների մեջ այդ շեյխերը ունեցան մեծ մասնակցություն։ Նրանց հետ էր խորհրդակցում Բիթլիսի տխրահռչակ քաղաքապետ Թահսին փաշան»[39]։

Քրդական ցեղապետների սանձարձակ ոտնձգությունները և թուրքական տեղական իշխանությունների անկաշկանդ կամայականությունները, անասելի հարստահարությունները այլևս տանել անհնարին էր։ Սուլթանական կառավարության քաղաքականության դեմ Սասունի ժողովրդի ըմբոստությունը դրսից եկած մարդկանց թելադրանքով չէր, ինչպես փաստարկում էին թուրքական իշխանությունները, այլ հայ ժողովրդի օրինական ցասումն էր՝ իր մարդկային արժանապատվության համար։ Ոստիկանական օրգանները իշխանությանը տեղեկացրել էին, թե Սասունում երևացել են դրսեցիներ. և այդ բավական էր, որ նրանք հրահրեին քրդական ավազակապետներին՝ հայերի դեմ հարձակումներ սկսելու համար։ Հայերը հերոսաբար ետ էին մղում քրդական հարձակումները, նրանց հասցնելով մարդկային զգալի կորուստներ։ Հայերի ու քրդերի հարաբերությունները ծայր աստիճանի սրվել էին։

1893 թ. աշնանը Բիթլիսի նահանգապետ Թահսին փաշան իր

38 Ժագ դը Մորգան, Հայ ժողովրդի պատմությունը, էջ 340։

39 Ա. Քալանթար, Սասուն, Թիֆլիս, 1895, էջ 24—25։

մոտ խորհրդակցության է կանչում քրդերի գլխավորներին, կրոնական հոգևոր պետերին՝ Զիլլանի շեյխ Մահմեդին և Դուգարի շեյխ Ամարին և ուրիշ պաշտոնյաների՝ քրդական ցեղերը հավաքելու, կազմակերպելու նպատակով և խոստանում է զենք մատակարարել նրանց։ Թահսին փաշան կառավարական մի վաշտ է բերել տալիս՝ գարնանը լեռներ բարձրանալու համար և վրաններ է կանգնեցնում Շենիկ գյուղի առաջ։ Շենիկ և Սեմալ գյուղերը հարմար դիրքեր չունեին պաշտպանվելու համար։ Ուստի այդ գյուղերի հայ բնակիչները փոխադրվեցին Գելիե-Գուզան և այնտեղից էլ կարողացան կռվել թուրքական և քրդական հրոսակների դեմ ամբողջ երեք շաբաթ։

Սասունի հերոս ժողովուրդը, հաշվի առնելով իրեն սպառնացող վտանգը, պատրաստվում էր հակահարվածի։ Նրա անձնուրաց ու քաջարի զավակները նախապատրաստեցին ու ղեկավարեցին իրենց ազատագրության համար մղվող պայքարը։ 1894 թ. հուլիսի 15-ին Շենիկ գյուղում, Մոսեի Գիքոյի տանը հավաքվեցին Սասունի իշխաններն ու գործիչները՝ իրենց սպառնացող վտանգի շուրջը խորհրդակցելու համար։ Խորհրդակցությունում առաջին ելույթն է ունենում հնչակյան կուսակցության ներկայացուցիչ Համբարձում Պոյաճյանը (Մուրադը), որն ասում է. «Եղբայրներ, Սասունը պաշարված է։ Ձեզ հայտնի է առաջին օրվան արյունահեղ ընդհարումը բագկանցի աշիրաթի հետ։ Կառավարական զորքը արդեն եկել հասատավել է մեզանից մեկ երկու ժամ հեռու Մերկե-Մոզանում, և բյուրդ աշիրեթներն ու հրոսակներն իրենց անթիվ ոհմակներով պաշարել են մեր լեռները։ Պատերազմը անխուսափելի է, իսկ մեր դրությունը վատ, որովհետև մենք անպատրաստ ենք։ Սակայն իմ կարծիքով, մենք չպետք է վհատվինք, այլ մինչև մեր արյան վերջին կաթիլը պաշտպանել մեր հայրենի լեռները, մեր ընտանեկան սուրբ օջախը»[40]։

Գյուղի ռես Գիքոն քաջալերված ոտքի ելավ և սկսեց կրակոտ խոսել. «...Ահա դուշմանը,—ասում է նա,—եկել է մեր դուռը, ուզում է մեր տերը լինել, մեր օջախը քանդել, տակն ու վրա ընել, մեզ գերել, տանել, բանտարկել. մի՞թե մոռացաք մեր քաջ իշխաններ Ազոյի և Գուրգեի նահատակությունը թուրքական բանտում։ Մեր թշնամին ուզում է թրքացնել մեր կույս աղջիկներին, կին-զավակներին, քանդել մեր եկեղեցիները և ոտնակոխ անել մեր ընտանեկան պատիվը, նամուսը։ Մի՞թե մենք տղամարդիկ չենք. էլ ո՞ր օրվա համար ենք ապրում. ես իմ 120 մարդկանցով պատրաստ եմ. բոլորս էլ ուխտել ենք մեռնել և գլուխ չծռել թշնամուն։ Մահ կամ ազատություն»[41]։

Տալվորիկ գյուղի բնակիչ Տեր-Գաբրիելի ելույթը խորհրդակցության մասնակիցները տհաճությամբ ընդունեցին։ Դիմելով Գիքոյին, նա հայտարարեց. «Մենք առայժմ կարող ենք ձեզ օգնել ոչ ավելի, քան 300 մարդով, որովհետև Խաչոյի Գասպարը մայր խումբերով ստիպված է սպասել Տալվորիկում, ինչպես երևում է, այն կողմից ևս շուտով հարձակում պիտի սկսվի։ Միայն պետք է ասեմ, որ մենք բնավ պատրաստություն չունինք ո՛չ հացի, ո՛չ զենքի»[42]։

Գիքոն խիստ առարկեց Տեր-Գաբրիելին, որն արժանացավ խորհրդակցության մասնակիցների ջերմ համակրանքին։ «Մեր կռիվը օրհասական է,—ասում է նա,—մենք պիտի պաշտպանենք մեր նամուսը և պիտի կռվենք մեր երկրի համար, մեր ազատության համար»[43]։ Ժողովուրդը միահամուռ կերպով ձայնակցեց Գիքոյին, կրկնելով՝ «Այո՛, այո՛, կռվինք, կռվինք»[44]։

Խորհրդակցությունում գտնվեցին առանձին թուլամորթ մարդիկ, որոնք պահանջում էին հրաժարվել կռվելուց և դիմել զիջումների։ Այդպիսիներից էր Գելիե-Գուզանի ներկայացուցիչ Տեր-Պողոսը, որին առարկեց նույն գյուղացի ռես Ավոն։ «...Բայց ի՞նչ զիջումներ։ Թուրքը երկու ոտքը դրել է մեկ կոշիկում և յոթ տարվան բախիա մնացած 175.000 ղուրուշի տուրք միանգամից ուզում է գանձել...»[45]։ Կշտամբելով Տեր-Պողոսին, նույն հռետորը նշում է, որ Մուշի իշխանությունները պահանջել են, որ Տալվորիկի և Սասունի 67 աշքի ընկնողները գնան և հպատակության ու հավատարմության խոստում տան, օտարերկրացիներին բռնեն և կառավարությանը հանձնեն և այլն։ Ուստի Ավոն հուդա է անվանում նրանց, ովքեր փախուստ տալով կռվից, կամենում են իրենց թուրքական իշխանություններին հանձնել առաջավոր մարտիկներին։ «Ահա, այս է, տերբաբա,—ասում է Ավոն,—թուրքիո հետ հաշտվելու միակ միջոցը»[46]։

---

40 Գլակ Տարոնցի, *Ապստամբ Սասունը*, Ժընև, 1903, էջ 4։

41 Նույն տեղում, էջ 5։
42 Նույն տեղում։
43 Նույն տեղում, էջ 6։
44 Նույն տեղում։
45 Նույն տեղում, էջ 7։
46 Նույն տեղում։

Ուշագրավ է նաև նույն գյուղի ներկայացուցիչ Պետոյի ելույթը։ Նա հայտարարեց. «Պետք է կռվել, էլ սպասելու ժամանակ չունինք։ Կեցցե կռիվ, կեցցե Սասուն»։ Ժողովուրդը միաբերան կրկնում է նրան՝ «Կեցցե կռիվ, կեցցե Սասուն»[47]։ Պետոն շարունակեց. «Այո, հաղթությունը կախված է առաջին հարվածից. խորհուրդ եմ տալիս, որ գաղտնի հարձակվենք թուրք զորքերի վրա, որոնք թվով շատ քիչ են. մեր լրաբերներն իմացել են, որ նրանք հազիվ 2—300 հոգի են։ Կհարձակվենք գիշերով, փախուստի կստիպենք և նրանց զենքերը, ռազմամթերքը և պաշարն առած՝ կը քաշվենք Գելլի ու Դալվորակի սարերը. այստեղ, Ավոյի ցույց տված ծրագրով կը պաշտպանենք մեր նամուսը և ազգությունը...»[48]։

Խորհրդակցությունը որոշում է հարձակումը սկսել հաջորդ գիշերը։ Ի նշան իրենց ոգևորության նրանք սկսում են երգել.

«Մենք սրտով կտրիճ ու բոյով պարթև,
Հաստ հաստ ունինք թև ու վազենք թեթև,
Բեզարանք նստելուց, մենք կռիվ կուզենք,
Միայն թե հայեր, տվեք մեզի զենք...»[49]։

Այսպիսով, Սասունի հերոս ժողովուրդը պատրաստվում էր գոտեմարտ տալու թուրքական և քրդական հրոսակներին։ Անկասկած է, որ նրանց ապստամբական շարժման կազմակերպման, ղեկավարման և ուղղություն տալու գործում նշանակալից դեր խաղացին հնչակյան կուսակցության մի քանի աչքի ընկնող գործիչներ՝ Մուրադը (Հ. Պոյաճյան), Միհրան Տամատյանը, Քոլոզը, Գևորգ Չավուշը և ուրիշներ[50]։

1891 թվականի վերջում Տամատյանը մեկնում է Սասուն, կապվում է տեղի աչքի ընկնող մարդկանց հետ և զբաղվում կազմակերպական ու բացատրական աշխատանքով։ 1892 թվականին Աթենքից Սասուն է ուղևորվում Մուրադը, որը 1893 թվականին մեկնում է Կովկաս՝ Սասունի ապստամբներին նախապես նյութական օգնություն ձեռք բերելու համար։ Սասունցի Հրայր Դժոխքը (Արմենակ Սարգսյանը) և Տամատյանը զբաղվում են ապստամբության գործերով։ 1894 թվականի սկզբին Մուրադը վերադառնում է Սասուն, որին և հանձնում Տավլորիկցի Մկրեի շտապ նամակը։

47 Նույն տեղում, էջ 8։
48 Նույն տեղում։
49 Նույն տեղում, էջ 9։
50 «Պատմություն Ս.-Դ. հնչակյան կուսակցության», հատ. Ա, էջ 58 և հետո։

Թուրքական կառավարությունը Սասուն ներխուժելու դիտավորությամբ արհեստավորներ էր ուղարկել «Սատանի կամուրջը» նորոգելու համար, որը լուրջ վտանգ էր սասունցիների համար։ Այդ մասին էր գրում Մկրեն։ Սասունցիները վճռում են ամեն կերպ խափանել թշնամու այդ ձեռնարկումը։

Այս առիթով ռես Գասպար Խաչոյանի տանը տեղի է ունենում ապստամբության ղեկավարների հավաք, որտեղ ներկա են լինում նաև Անդրանիկը, Մուրադը, Տամատյանը, Գևորգ Չավուշը և ուրիշներ։ Բոլորն էլ միաբերան վճռում են թույլ չտալ կամուրջի նորոգումը, իրենց ներկայացուցիչներն են ուղարկում Տավլորիկ, Շենիկ, Գելիե-Գուզան և այլ քաղաքներ ու գյուղեր՝ մասսաներին նախապատրաստելու համար։ Բոլոր հայերն էլ պաշտպանում են այդ որոշումը։

Մկրեի խումբը հանձնարարություն է ստանում շարժվել կամուրջի ուղղությամբ և կրակել 25 թուրքական զինվորներից բաղկացած պահակախմբի վրա։ Կրակում են նաև թշնամու զինվորները։ Այս կռվում հայերը հաղթում են, տակնուվրա են անում կամուրջի շինությունները։ Հայերի այդ հերոսական ու հանդուգն քայլը ավելի գաղափարացրեց սուլթանական կառավարությանն ու նրա տեղական իշխանություններին, որոնք վճռեցին քրդական ուժեր նետել հայերի դեմ։

1894 թ. հուլիսի 28-ին քրդական ավազակապետները իրենց հրոսակներով հարձակվում են Շենիկ գյուղի վրա, քշում-տանում են ամբողջ նախիրը։ Համարելով այդ քայլը որպես մարտահրավեր Սասունի դեմ կռիվներ սկսելու համար, շենիկցիները վճռում են զենքի ուժով ետ բերել նախիրը։ Նրանք իրենց այդ վճիռը հայտնում են հարևան գյուղացիներին։ Պահանջում են միանալ և համատեղ ուժերով վրեժ լուծել թշնամուց։ «Միաժամանակ քաջ ու կտրիճ շենիկցիները հայտարարում են,—գրում է «Մշակ»-ը,—որ իրենք վճռել են «վահանը ձեռքին, կամ վահանի վրա» դառնալ կռվից, այսինքն՝ կռվից առանց երես դարձնելու կամ հետ պետք է բերեն նախիրը կամ մինչև վերջին շունչը կռվելով՝ վճռել են մեռնել»[51]։

Բոլոր հարևան գյուղացիները բախտակից էին շենիկցիներին և բոլորը միասին կռվի ելնելով թշնամու դեմ՝ ետ են բերում նախիրը։ Շենիկցիների այս հաղթանակը ևս մի ապտակ էր թուրքական իշխանություններին և քրդական ցեղապետներին։

51 «Մշակ», № 106, 1894։

Բիթլիսի թուրքական 4-րդ բանակը թնդանոթներով և համիդիեական քրդական հեծելազորների ուղեկցությամբ, Մյուշիր Զեքի փաշայի հրամանատարությամբ՝ շարժվում են դեպի Սասուն և շրջապատում այն։ Ճանապարհին նրանք կողոպտում ու թալանում էին Մուշի դաշտավայրի հայկական գյուղերը։ Իշխանաձորի գայմագամը պահանջում է իշխանությանը հանձնել Մուրադին։ Նրան ներկայացող հայ պատվիրակները պատասխանում են, որ իրենց այդպիսի մարդու գոյությունը հայտնի չէ։ Գայմագամի հրամանով ձերբակալվում են հայ պատվիրակները։ Այդ առիթով հայերը հարձակվում են Իշխանաձորի վրա, ոչնչացնում են թուրքական կայազորը և ազատում ձերբակալվածներին։

1894 թ. օգոստոսի 1-ին թշնամին ծավալուն հարձակում սկսեց Սասունի դեմ։ Տալվորիկը պաշարված էր քրդական աշիրեթների կողմից։ Մուստաֆա փաշան և Բիթլիսի նահանգապետն իրենց զորքերով ու թնդանոթներով հարձակվեցին Շենիկի և Սեմալի վրա։ Այսպիսով, Սասունը գտնվում էր կրակի օղակում։ Բայց սասունցիները՝ տղամարդիկ ու կանայք, զենքի ու պարենի խիստ պակասություն կրելով, հաղթահարելով սովը, կռվում էին անձնազոհ կերպով։ Նրանք ջախջախիչ հարված հասցրին թշնամու գերազանց ուժերին և փախուստի մատնեցին նրանց։

Սասունցիները երգում էին.

Դե զարկեք, զարկեք, եղբայրնե՛ր, զարկեք,
Թշնամու մեծին, մոլլին ու շեյխին,
Մոսինը բերեք, փամփուշտը դրեք,
Թշնամի... գլորեցեք գետին[52]։

Զեքի փաշան նոր հարձակում ձեռնարկեց՝ Սասունը հիմնովին կործանելու նպատակով։ Նրա բանակում հաշվում էին 7.800 հետևակ, 2000 հեծելազոր և 150-ից ավելի թնդանոթ։ Սասունի դեմ կռվող քրդական զորքերի թիվը հասնում էր 43.000-ի[53]։

Հասնելով Անդոք, Զեքի փաշան հրամայում է հարձակմանն անցնել և թնդանոթների կրակով տակն ու վրա անել Սասունը։ Թշնամու այդ գերազանց ուժերի դեմ սասունցիները կռվում էին քաջաբար։ Մուշի դաշտավայրը ծածկվեց մարդկային դիակներով։ Ուժերը անհավասար էին. շարունակել կռիվը այլևս անհնարին էր. ապստամբությունը պարտվեց։ Թշնամուն հաջողվեց գերի վերցնել

52 Ա.—Դո, Վանի, Բիթլիսի և Երզրումի վիլայեթները, էջ 131։
53 Տե՛ս «Մշակ», № 131, 1894։

Մուրադին և տանջամահ անելով փոխադրել Մուշի բանտը և սուլթանի հրամանով վերջ տալ նրա կյանքին։

Զեքի փաշան իր զորքերի հետ Սասուն էր տարել շեյխ Մահմեդին, որը բարձրանալով մի ժայռի վրա, բացականչում էր. «Ո՜վ իսլամի զավակներ, կեավուրին կինը և աղջիկը առևանգելը արդարություն է, անոնց եկեղեցիները քանդելն ու այրելը աստվածային գործ մըն է, ձեր թափած արյան կաթիլներուն չափ հյուրի և փերի պիտի առնեք Ալլահին ճեննեթին մեջ»[54]։

Իսլամի ռեակցիոն գաղափարախոսությամբ արբեցած թուրքական զորքերը և քրդական ավազակապետները գազանային դատաստան էին տեսնում հայերի նկատմամբ։ Նրանք տակն ու վրա արին Սասունը։ «Գելի 360, Շենիկ 106, Սեմալ 85, Աշյան 185, Իշխանաձոր 70, Աղբեն 66 տներով, կայրվեն ամբողջովին, և բնակիչներ բոլորը, բացի մաս մը փախստականներից, սրի քաշվեցին...»[55]—գրում է «Մշակ»-ի թղթակիցը։

«Սասունի դեպքերը» վերնագրով հոդվածում «Նոր-դար»-ի Կ. Պոլսի թղթակիցը գրում է. «...Այսօր ճշմարիտ իրողություն է, թե Սասունը կիսովին այլևս չկա, կործանված է»[56]։ Նկարագրելով հայերի նկատմամբ գործադրված եղեռնագործությունների պատկերը, այդ նույն թղթակիցը նշում է, որ հայ երիտասարդներին կոտորում են, ծերերին՝ բանտարկում, իսկ «տները կողոպտում են անխնա, կույս օրիորդներն ու մատաղ հարսները զոհ են գնում բարբարոս զորքի գազանային կրքերին... Փոքրիկ մանուկները գառան նման մորթվում են իրենց մայրերի աչքի առջև...»[57]։

Սասունի կոտորածը սուլթանական կառավարության գիտակցորեն կազմակերպած գործն էր, բայց միջազգային պրոգրեսիվ մարդկության խոր ցասումը լռեցնելու նպատակով, նա փորձում էր հերքել կատարված դեպքերը և դրանց մասին եղած հաղորդումները։ Մասսայական բողոքների ճնշման ներքո սուլթանական կառավարությունը համաձայնվեց հանձնաժողով ուղարկել Սասուն՝ հանգամանքները ուսումնասիրելու համար՝ Շեյֆիք բեկի նախագահությամբ։ Հանձնաժողովի կազմում էին Զալալ բեկը, Մեջիտ բեկը, Թեֆիք փաշան և ֆրանսիական, անգլիական ու ռուսական դիվանագիտական հիմնարկությունների ներկայացուցիչները։ Հանձնաժողովը Սասուն հասավ 1895 թ. հունվարի 23-ին։ Նա ունեցավ

54 «Պատմություն Ս.—Դ. հնչակյան կուսակցության», հատ. Ա, էջ 144։
55 «Մշակ», № 131, 1894։
56 «Նոր-դար», № 197, 1894։
57 Նույն տեղում։

106 նիստ և քննեց 190 վկաների, որոնք ապացուցում էին դեպքերի իրողությունը։

1895 թ. մայիսի 2-ին Կ. Պոլսից Ա. Արփիարյանը գրում է, որ «Սասունի քոմիսիոնին Եվրոպայի անդամները գացած են Սասուն, գացած են լեռները, հորեր փորել տված և ջարդվողներուն ոսկորները գտած են։ Ալ ամեն ինչ հաստատված է»[58]։ Հանձնաժողովի թուրքական կառավարության ներկայացուցիչները հայկական ջարդերի կազմակերպիչներն էին և նրանք ամեն կերպ սքողում էին ոճրագործությունների հետքերը։ Հետևապես, այդ հանձնաժողովը չէր կարող ամեն ինչ իր մանրամասնությամբ երևան հանել։

Անգլիական «Կապույտ գրքում» թուրքական կառավարողների կողմից Սասունի հերոս ժողովրդի ոչնչացման վաղուց նախապատրաստված ծրագրի մասին ասված է. «Թուրք անկարգ կառավարությունը վաղուց ի վեր է, որ մտածում էր ոչնչացնել Սասունի շրջանի ազգաբնակչությանը։ Այդ բնակիչների անկախության ձգտումները նա հանդուրժել չէր կարողանում։ Իր մտադրությունն էր՝ ոչնչացնել հայերին քիչ-քիչ, անզգալապես և առանց աղմուկ հանելու»[59]։

Այդ նույն փաստաթղթում ասված է, որ սուլթանական կառավարությունը իր պատրաստի զորքերի հետ միասին, հայերի դեմ հանեց քրդական ցեղապետներին՝ իրենց բազմաթիվ հրոսակներով։ Եվ սովի մատնված հայ գյուղացիներից պահանջում էր կերակրել իրենց կոտորող զինվորներին, վերցնում էր նրանց ոչխարներն ու կովերը, նրանց վերջին պատառ հացը։ Բայց գյուղացիները անզոր էին բավարարելու կառավարության այդ պահանջը և «ահա թե ինչու գայլը բարկացավ գառան վրա և ասաց նրան. «Մի պղտորիր իմ ջուրը»[60]։

Թուրքական և քրդական մարդասպանները աննկարագրելի գազանություններ գործադրեցին ազատասեր Սասունի հայ ժողովրդի նկատմամբ։ Սասունի դեպքերը քննող հանձնաժողովին տված իր ցուցումներում ականատեսներից մեկն ասում է. «Հետևյալ օրը։ Խորհրդակցելուց հետո, Սեմալի Տեր-Հովհաննես քահանայի ընկերակցությամբ, մոտ 300 հոգի, նրանց հետ կանայք և երեխաներ գնացին դեպի Գելիե-Գուզան՝ այնտեղ բնակված զինվորներին անձնատուր լինելու համար։ Գես ճանապարհին, չնայած քահանայի

58 «Մշակ», № 51, 1895։

59 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոի ֆոնդ, տետր № 25, էջ 144։

60 Նույն տեղում, էջ 146։

ապահովեցնելուն, թե որ եթե անձնատուր լինեն իրենց ոչ մեկին չեն վնասի...»։ Բայց, պատմում է վկան, դա խաբեություն էր։ Շատերին Մուշի դաշտում սպանեցին, իսկ «Հովհաննես քահանան, երբ հասավ Գելիե-Գուզանի զորաբանակը, այստեղ Միր աղայի (հրամանատարի) հրամանով սպանվեց՝ նրա աչքերը հանել տալուց և ծաղրի ենթարկելուց հետո։ Կանանց և երեխաներին անխնա սպանեցին և փոսերի մեջ ձգեցին։ Հետո զինվորները բանտարկեցին կանանցից շատերի...»[61]։

Մի այլ ականատես հանձնաժողովին տված իր ցուցումում նշում է, որ իրոք թուրքական կառավարությունը Սասունի կոտորածը վաղուց էր պլանավորել և այդ մասին քրդական հեծելազորներին հրաման ուղարկել։ «Գարնանամուտին,— պատմում է ականատեսը,— լսել էի ուրիշներից, որ քյուրդերը ասել էին, թե «կառավարությունից հրաման է ստացվել հայերին կոտորելու»[62]։

Քննիչ հանձնաժողովի անդամներից մեկը զեկուցում է. «Մի կին նստած լաց էր լինում դիակի մոտ։ Վերցնել տվի դիակը ծածկող կարպետը—աչքերը հանած էին, ականջները, քիթը և շուրթերը կտրած և ծոծրակի վրա մի ծանր վերք»[63]։

Զափազանց ուշագրավ և մարդկանց սիրտը այրող հոդված է հրատարակում Լոնդոնի «Duily news» թերթը՝ «Փոսի կոտորածը» վերնագրով։ Հոդվածագիրը նկարագրում է Մուշի մոտ տեղի ունեցած կոտորածների մի զարհուրելի տեսարան։ Հեղինակը «Փոսի կոտորածը» համարում է «Դժոխային անգթությունների մի սարսափելի արտահայտություն, որ երբևիցե տեղի է ունեցել օսմանյան ցեղի պատմության մեջ»[64]։

Հենվելով մի թուրք զինվորի իրազեկ ցուցումների վրա, թղթակիցը այդ բոլորը համարում է նախերգանքը այն ահավոր տեսարանի, որը հայտնի է Գելիե-Գուզանի փոսի կոտորած անունով։ Դահիճները փախստական հայերի ձեռքով փորել էին տալիս փոսեր ու կիսակենդան վիճակում թաղում նրանց։

Հոդվածում հիշատակված փաստերը վերցված են մի թուրք զինվորի ցուցումներից։ Թուրք զինվորը պատմել է, թե ինչպես «քուրդերը կրակի են մատնում բնակիչներին, այրելով այն անտառները, որտեղ նրանք փախել-պահվել էին։ Նրանք չէին նայում ոչ

61 ՀՍՍՀ ԳԱ պատմ. ինստիտուտի արխիվ, Լեոի ֆ., տետր № 3, էջ 83 և հետո։

62 Նույն տեղում, տետր № 33, էջ 81։

63 Նույն տեղում, տետր № 17, էջ 41։

64 «Մասիս», № 37, 1895։

սեռին, ոչ հասակին, կանայք և մանր երեխաները, որոնք պատահում էին ճանապարհներում, ընկնում էին այդ անհավասար ընդհարումների միջոցին»[65]։

Դահիճները փախստականներին կերակրում էին այնքան, որքան հնարավոր էր իրենց ձեռքերով ծածկելու սեփական դիակները։

«Երբ փոսերը պատրաստ էին,—գրում է նա,—զինվորները հրաման ստացան խումբ-խումբ տանել զոհերին այդ փոսերի մոտ և սպանել, երեկոները, մութն ընկնելուց, ամբողջ յոթ թե տասն օր զոհերին բերում էին փոսերի մոտ, սվիններով սպանում և փոսի մեջ ածում»[66]։

Թուրքական դահիճներին են ներկայանում 470—500 հոգի հայ տղամարդիկ, կանայք ու երեխաներ։ Թուրքական գնդապետը մահվան դռանը կանգնած, անճար ու անօգնական հայերին հարցնում է.

— «Ո՞վ է ձեր մեջ գլխավորը։

— Ես եմ,—ասաց գյուղի գլխավորը, Քեռհան, առաջ գալով։

Ինչի՞ է արժան այն մարդը, որ վատ ճանապարհով է առաջնորդում ժողովրդին, հարցրեց գնդապետը։

Սպանիր, եթե կամենում ես,—ասաց Քեռհան,—ես ինձ վրա եմ վերցնում այն բոլորի պատասխանատվությունը, ինչ որ կատարվել է։

Թող նա կուրանա, ինչպես կույր է եղել մինչև այժմ,—աղաղակեց մի ձայն։

«Հանեցեք նրա աչքերը» պատվիրեց գնդապետը և զինվորի դանակը մի վայրկյանում կատարեց այդ պատվերը։

Սպանեցեք ինձ,—աղաղակեց Քեռհանը։ Եվ երեք զինվորներ սվիններով հոշոտեցին նրա մարմինը»[67]։

Այս ահեղ և հուզիչ փաստերից հետո էլ սուլթանի կառավարությունը անամոթաբար հանդես էր գալիս իր հերքումներով։

Լոնդոնի թերթերում տպագրված հոդվածները է՛լ ավելի զայրացրին անգլիական առաջադեմ հասարակայնությանը։ Անգլիական թերթերը մեղադրում էին արտաքին գործերի մինիստր լորդ Կիմբեռլեին՝ հայ պատվիրակությանը տված անորոշ պատասխանի և թուրքական վանդալների դեմ կտրուկ միջոցներ ձեռք չառնելու համար։

65 «Մշակ», № 37, 18955։

66 Նույն տեղում։

67 Նույն տեղում։

Լոնդոնի «meitodes Jimes» թերթը գրում է, որ լորդի տված պատասխանը անբավարար է. «Թող լորդը չմոռանա,—գրում է նա,—որ Անգլիան ունի իր սեփական հատուկ պատասխանատվությունը։ Մենք վերցրել ենք մեզ վրա Թուրքիայի գոյությունը հզոր պահելու վտանգավոր պատասխանատվությունը, իսկ Ռուսաստանը իրեն ազատ պահեց նրանից։ Ուստի մենք էլ բարոյապես պատասխանատու ենք կոտորածների և գազանությունների համար։ Օլիվեր Կրոնվելը խնդիրը կլուծեր մի օրում»[68]։

1894 թ. նոյեմբերի 15-ին (27-ին) Անգլիայի Բրայդոն քաղաքից Կարապետ Հակոբյանը և Մինաս Չերազը, որոնք անգլիական օրիենտացիայի վրա էին կանգնած, Սասունի ջարդերի և հայերի գաղթի առիթով հեռագիր են ուղարկում Ամենայն Հայոց կաթողիկոսին և խնդրում են դիմել Ռուսաստանի օգնությանը՝ մահվան դուռը կանգնած ժողովրդին օգնության ձեռք մեկնելու համար։

Պայմանների թելադրանքով Չերազը հանգեց այն հետևության, որ հայերի փրկությունը կախված է Ռուսաստանի միջամտությունից, նրա օգնությունից։

1894 թ. նոյեմբերի 27-ին Խրիմյանին ուղարկած նույն հեռագրում ասված է. «Սասունի և օսմանյան Հայաստանի մյուս գավառաց մեջ վերջերս պատահած ահռելի կոտորածներն ի խոր հուզեցին Անգլիո և Եվրոպիո մյուս մասանց մեջ հաստատված հայ գաղթականները։ Ի դիմաց այս գաղթականության, համարձակվեցանք այսօր ուղղել Ձեր վեհափառության մի հեռագիր, որի պատճենը և թարգմանությունը պարտ կհամարենք հաղորդել ներկայումս։

«Առ Նորին Օծություն Մկրտիչ Ա. Ծայրագույն պատրիարք ամենայն Հայոց, Էջմիածին, Կովկաս, Ռուսաստան։

Անգլո-հայ գաղթականությունս, հանուն յուր և հանուն բովանդակ հայ գաղթականությանց Եվրոպիո, անկեղծությամբ կդիմե Ձեր սրբազնության իբրև գերագույն պետին հայ եկեղեցվո և ժողովրդյան, օսմանյան Հայաստանի մեջ հազարավոր հայոց վրա վերջերս գործ դրած կոտորածոց և խժդժությանց առթիվ, արդյունք անգործության Բարձրագույն Դրան խոստմանց և դաշնագրական հանդիսավոր հանձնառությանց, և թախանձագին կխնդրե Ձեր Սրբազնությունեն սփոել առ այս Գանոյից վեհափառ կայսրին Ռուսիո զհիշատակություն այն ահավոր աղետից և բարբարոսությունց, որք անդադար կպատահեն ի հայաբնակ գավառ և հայցել հանուն մար-

68 «Մշակ» № 48, 1895։

դասիրության և քրիստոնեության յուր ամենաողորմած բարեգութ միջամտությունը իբրև ավանդական հզոր պաշտպան քրիստոնեից։

Ձերդ վեհափառությունը քաջ գիտե, թե անգլիական կառավարությունն Սան-Ստեֆանոյի դաշնագրին 16-րդ հոդվածը քայքայելե հետո, հայության վերքերը դարմանելու համար լուրջ ջանք մը չէ ըրած և ընելու ալ մտադրություն չունի։ Եվրոպիո հայ գաղթականությունք կցանկանան, որ ազգին դատը ներկայացվի Ռուսիո օգոստափառ ինքնակալի ուշադրությանն, ոչ դիվանագիտական, այլ մարդասիրական և քրիստոնեական տեսակետով, և քաջահույս են թե վեհափառությունն պետք է հաճի պարտ ու պատշաճ տնօրինել այս անել ճգնաժամուն մեջ։

Կարապետ Հակոբյան
Մինաս Ձերազ»[69]։

1895 թ. մայիսի 24-ին Խրիմյանը դիմում է ներկայացնում ռուսական կայսրին, նկարագրում է այն կորստաբեր վիճակը, որի առաջ կանգնած էր արևմտահայությունը և խնդրում է իր վրա վերցնել այդ բազմաչարչար ժողովրդի փրկությունը։ Բայց ռուսական կայսրը չէր ցանկանում միջամտել՝ իր հարաբերությունները սուլթանի հետ չվատացնելու նպատակով, որից կարող էր օգտվել Անգլիան։

Հետևապես, ռուսական ցարին Խրիմյանի ուղարկած դիմումները չէին կարող որևէ դրական հետևանք ունենալ, որովհետև ցարիզմը ինքն էր հրահրում հայկական կոտորածները։ Այդ դիմումները չմեղմացրին դրությունը։ Սուլթանի կառավարությունը գործում էր իրեն հաճելի եղանակով։ Սասունից հետո նա անցավ հերթական կոտորածներին։

2

1895 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՌԵՖՈՐՄՆԵՐԸ

Միջազգային պրոգրեսիվ հասարակայնության բարձրացրած բողոքների ու բարոյական ճնշման ներքո, 1895 թ. ապրիլի 30-ին անգլիական, ֆրանսիական ու ռուսական դեսպանները Թուրքական կառավարությանը ներկայացրին Արևմտյան Հայաստանում ռեֆորմներ մտցնելու ծրագիրը։

69 ՀՍՍՀ ՊԿՊԱ, Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվան, ֆ. 56, գ. 55, թ. 1922։

Այդ ծրագրի առաջին մասը պահանջում էր. «Բարձրագույն կոմիսար նշանակել, ներում շնորհել քաղաքական հանցավորներին, քաղաքական դատաստանական գործերը վերաքննել, այդ դատերից մի քանիսը դադարեցնել և բանտարկվածներին ազատություն շնորհել»[70]։

Վարչական ռեֆորմների ուղղությամբ երեք տերությունների հայտագիրը պահանջում էր. «Վեց վիլայեթներում, այն է՝ Վանի, Էրզրումի, Սիվասի, Բիթլիսի, Խարբերդի և Տրապիզոնի նահանգապետների և փոխնահանգապետների նշանակումը պետք է կախված լինի քրիստոնյա ազգաբնակության ավելի կամ պակաս թվից։ Բայց այնտեղ, ուր նշանակված է մահմեդական նահանգապետ, պետք է փոխնահանգապետը քրիստոնյա լինի «viceversa»[71]։

Սուլթան Աբդուլ-Համիդը ձևականորեն ընդունեց առաջարկված ռեֆորմների ծրագիրը։ Ժագ դը Մորգանը իրավացիորեն նշում է, որ խաբեությունն ու փարիսեցիությունը սուլթանի դիվանագիտության հիմքն են կազմել։ Իր այդ թեզը հիմնավորելու համար նա վկայակոչում է Ռոլլեն Ժեքմենին, որը ասել է. «Խաբուսիկ երեվույթներու տակ իրողություններու և մտադրություններու իսկական բարբարոսությունը քողարկելու ընդունակություն մը. անխռով հանդգնություն մը՝ խոստովանել այն, ինչ որ չեն ուզեր, ոչ ալ կրնան կատարել. վերջապես հայրական և քաղցրական ոճ մը, որ պատրաստված է հավատացնելու, թե զոհ են անարդար ամբաստանությանց կամ ատելի զրպարտությանց»[72]։ Հեղինակը գտնում է, որ այդպիսի կեղծիքով պարուրված սուլթանական պետությունից և «ահեղ սպառազինություններով պառակտված եվրոպական տերություններից քրիստոնյա հայերը ոչինչ սպասել չէին կարող»[73]։

1895 թ. սեպտեմբերի 30-ին Անգլիայի արտաքին գործերի մինիստր Սալսբերիին ուղարկած իր նամակում Աբդուլ-Համիդը գրում է. «Երբ բարենորոգումները գործադրեմ, զանոնք պարունակող վավերագրերը պիտի քննեմ և անձամբ պիտի հսկեմ, որ յուրաքանչյուր հոդված գործադրվի։ Ահա վերջնական որոշումս։ Այս մասին պատվո խոսք կուտամ»[74]։

Երեք տերությունների հայտագիրը ամենևին նոր բան չէր խոս-

70 «Մշակ», № 54, 1895։
71 Նույն տեղում։
72 Ժագ դը Մորգան, Հայ ժողովրդի պատմությունը, էջ 331։
73 Նույն տեղում։
74 Նույն տեղում։

տանում կորստի առջև կանգնած հայերին։ Այն ոչնչով չէր սպառնում սուլթանին։ Դրա համար էլ այդ տերությունների կառավարողներին ուղարկած իր պատասխանում Աբդուլ-Համիդը գրում է. «Նորին գերազանցություններ՝ Անգլիո, Ֆրանսիայի և Ռուսիայի դեսպանների նախընթաց և վերջին հայտարարություններից հետևվում է, որ վերոհիշյալ երեք պետություններն հենվում են միայն Բեռլինի դաշնագրության 61-րդ հոդվածի վրա և իրենց տեսությունն են հաղորդում բարենորոգումների մասին, որ, հոդվածի մեջ բովանդակած խոստումների գործադրությունից դուրս, նրանք չեն պահանջում կայսր. կառավարությունից հսկողության մի նոր իրավունք և որ նրանք չեն մտածում առաջադրելու որևէ առաջարկ, որ համաձայն չլինի հաստատված օրենքներին և կանոնադրություններին։

Կայսերական կառավարությունը, արձանագրելով այդ հայտարարությունները և վստահացումները, որոնք տրվում են դեսպանների կողմից, որ նրանց կառավարությունները երբեք չեն մտածել վերոհիշյալ ռեֆորմներով նույնիսկ ամենափոքր հարված հասցնել Ն. կ. վեհ. սուլթանի վեհապետական իրավունքներին—հայտնում է իր շնորհակալությունները պետություններին»[75]։

Հասկանալի է դառնում, թե ինչու ռեֆորմներ մտցնելու հայտագրի տակ ստորագրելուց հետո, պատվո խոսք տալուց հետո, սուլթանը ամեն կերպ ձգձգում էր իր խոստման կատարումը։ Ջարդելով հայերին, արտաքսելով ու ասիմիլացման ենթարկելով նրանց։ Թուրքական կառավարությունը չէր ընդունում հայկական նահանգներում՝ Թուրքերի համեմատությամբ հայերի թվի գերակշռությունը և այդ պատրվակով նահանգների կառավարիչներ էր նշանակում մահմեդականներից։

Պատրիարքարանի վիճակագրության համաձայն, 1882 թվականին Թուրքիայում հայերի թիվը հասնում էր 2.660.000-ի, որից 1.630.000-ը բնակվում էին հայկական նշված վեց նահանգներում. իսկ 1.030.000-ը՝ ապրում էին Արևմտյան Հայաստանից դուրս, Կիլիկիայում և Թուրքիայի զանազան քաղաքներում։ Պատրիարքարանի 1912 թվականի վիճակագրության համաձայն, հայկական նահանգներում (1894—1896 թթ. ջարդերից և գաղթականությունից հետո) հայերի թիվը կազմում էր 1.018.000։ Թուրքական կառավարությունը նվազեցնելով այն, հասցնում էր 666.000-ի, իսկ քրդերին՝

75 ՀՍՍՀ ԳԱ պատմ. ինստիտուտի արխիվ, Լեոի ֆ., տետր № 87, էջ 1—2։

424.000-ի. ընդամենը՝ 2.615.000։ Այս փաստերից ելնելով, Ժագ դը Մորգանը նշում է, որ հայերը կազմում էին 38,9 տոկոս, Թուրքերը՝ 25,4 քրդերը՝ 26,5 տոկոս[76] և ցույց է տալիս, որ 1882—1912 թվականների ընթացքում 612 հազար հայեր ոչնչացվել և գաղթել են։

Հայերի թվի նվազեցումը սուլթանական կառավարության հայաջինջ քաղաքականության քողարկման և միջազգային պրոգրեսիվ մարդկության առջև արդարանալու ձևերից մեկն էր։ Բարենորոգումների ուղղությամբ սուլթանական կառավարության հրատարակած կանոնների 5-րդ հոդվածում ասված է. «Կարնո, Վանա, Բաղեշի, Տիգրանակերտի, Խարբերդի և Սեբաստիո նահանգած մեջ վարչական պաշտոններ պիտի հանձնվին կայսերական մահմեդական և ոչ մահմեդական հպատակներուն, ամեն նահանգաց մահմեդական և ոչ մահմեդական հասարակության թվույն համեմատությամբ»[77]։

Թուրքական կառավարությունը նախատեսել էր բարձրագույն կոմիսար նշանակել Պետերբուրգի նախկին դեսպան Շաքիր փաշային։

«Կարդացեք և պարմացեք» առաջնորդողում «Մշակ»-ը իրավացի կերպով հայկական ռեֆորմների մայիսյան ծրագիրը համարում է շատ սահմանափակ, հայերին ոչինչ չխոստացող փաստաթուղթ։

Կ. Պոլսից Ա. Արփիարյանը գրում է, որ թուրքական կառավարության պատասխանը փաստորեն մերժողական է։ «Թուրք շրջաններուն մեջ այն համոզումը կա,—գրում է նա,—որ սուլթանը հզորապես պիտի դիմադրե ծրագրին ընդունելությանը, մինչև որ չտեսնի, թե երեք պետությունները սպառնական միջոցներու կդիմեն։ Երբ ապահով ըլլա, թե նավատորմիղները պիտի շարժին, այն ատեն պիտի ընդունի»[78]։

Երեք տերությունները, որոնք առանձին շահեր ունեին Թուրքիայում, հայերի և Հայկական հարցի համար երբեք չէին սպառնա սուլթանին և իրենց նավերը չէին ուղարկի նրա դեմ, չէին գոհի իրենց ոչ մի զինվորի կյանքը հայերի համար։ Այս իսկ վստահությամբ էլ թուրքական կառավարողները իրենց իրավունք էին վերապահում համարձակորեն հայտարարելու, թե «մենք Եվրոպա չենք,

76 Ժագ դը Մորգան, Հայ ժողովրդի պատմությունը, էջ 351։

77 Մաշտոցի անվան Մատենադարան, Իզմիրլյանի արխիվ, ֆ. № 34, թղթապ. № 14, վավերագիր 640։

78 «Մշակ», № 64, 1895։

ճանաչում, մեզ համար չկա հայոց հարց»։ Այդ կապակցությամբ «Մշակ»-ը գրում է, որ Թուրքիան փոխանակ ընդունելու, մերժեց, և այն էլ ամենահամարձակ կերպով։ Կարդացեք նրա պատասխանը և զարմացեք»[79], որ «Թուրքիան մերժեց հայկական ռեֆորմների ծրագիրը»[80]։

Պետք է ասել, որ սուլթանական բռնապետությունը չարիք էր ոչ միայն հայերի համար։ Նա անողոք կերպով հարստահարում, ճնշում ու հալածում էր նաև թուրք աշխատավորներին և նրանց պրոգրեսիվ գործիչներին։ Պատահական չէ, որ նրան անվանում էին XIX դարի Ներոն։

Լոնդոնի «Pale male cartte» թերթը իր 1895 թ. մայիսի 30-ի համարում տպագրում է «Թուրքիայի կարծիքը Թուրքիայի մասին» վերնագրով չափազանց ուշագրավ հոդվածը, որը բացահայտում է սուլթանի ռեժիմի տակ տառապող թուրք աշխատավորության ծանր վիճակը։ Մոլլան խնդրում է, որ գավառները մեկնող հանձնաժողովները, որոնք զբաղվելու են հայերի հարցով, զբաղվեն նաև թուրք աշխատավորների դրությամբ, որոնք ոչ մի պաշտպանության հույս չունեին։

«Հայկական հանձնաժողովը,—գրում է նա,—պետք է իր ծրագրած ռեֆորմների մեջ մտցնե բարեփոխություններ ոչ միայն Վանի երկրագործ հայերի կամ Թուրքիայի որևէ մասում բնակվող կրթված հայերի, այլև իմ դժբախտ հայրենիքի մահմեդական ժողովրդի վիճակի մեջ»[81]։

Հեղինակը նշում է, որ թուրք աշխատավորների և քրիստոնյա հպատակների համար միակ ելքը—նրանց համատեղ պայքարն է ընդհանուր թշնամու դեմ։

«Իմ կարծիքով,—գրում է նա,—մենք մահմեդական և քրիստոնյա հպատակներս, պետք է միացած լինենք՝ ընդհանուր ուժերով մեր երկիրը պաշտպանելու, բայց ծերունի փաշաները հարկավ հակառակ են այսպիսի միջոցի, որ նրանց իշխանությունը պիտի սահմանափակե։ Հետո՝ մենք հնարավորություն չունենք դիմելու մամուլին, դեսպաններին և հյուպատոսներին՝ մեր խնդիրն արտահայտելու համար։ Մենք զրկված ենք նաև եվրոպական ազգերի համակրությունից, որոնք մեզ շփոթում են այն իշխանության հետ, որ հավասարապես ճնշում է ինչպես թուրք, նույնպես և այլացեղ հպատակներին»[82]։

Մոլլայի խոստովանություններում ճշմարտություններ կան։ Թուրքիայի հպատակ քրիստոնյա ժողովուրդների վիճակով, թեկուզ իրենց շահերից ելնելով, այնուամենայնիվ, եվրոպական խոշոր տերությունները զբաղվում էին, որը այս կամ այն կերպ ձգում էր թուրքական կառավարությանը, մի բան, որից զուրկ էր թուրք աշխատավորությունը։

«Եթե նրանց ծանոթ լիներ մեր վիճակը,—շարունակում է մոլլան,—եթե քննվեր այն սոսկալի եղելությունները, որոնք բազմաթիվ մահմեդական կանանց այրիացնում են և բազմաթիվ մահմեդական երեխաներ որբ են թողնում, զայրույթի և սարսափի այնպիսի աղաղակ կբարձրանար, որ կխեղդեր հայոց սարսափների միակողմանի աղաղակը։ Թող Դարդանելի նեղուցը, Սև ծովը և Արաբիայի անապատները խոսեն, թե ազատության գործի համար քանի-քանի մահմեդականներ են զոհ գնացել և արտաքսվել։ Վայն եկել է այն թուրքին, որը կհամարձակվի որևէ կարծիք հայտնել ի նպաստ Անգլիայի կամ հօգուտ որևէ վարչական բարեփոխության։ Այն աստիճան մենք ճնշված ենք, որ այսօր անսովոր բան չէ լսել մահմեդականներին աղոթելիս՝ որ շուտով գա մեզ տիրե մեր դարավոր թշնամին, քան մենք շարունակում ենք մնալ այս անձնական բռնակալության տակ, որ ներշնչված է սպանության երկյուղով և ամեն ազգի լրտեսներով, այնպես որ «Բարձրագույն Դռան» պաշտոնական կառավարությունը լոկ անուն է դարձել, որի տեղը բռնել է սուլթանի պալատի ձրիակերների անպատասխանատու տեսորը»[83]։

Բնութագրելով Թուրքիայում իշխող դրությունը, քրիստոնյա հպատակների և բուն իսկ թուրք աշխատավորների նկատմամբ գործադրված ահեղ սարսափների պատկերը թուրքական մոլլան հարցնում է, թե «Չե՞ն կարող արդյոք հայկական հանձնաժողովին մասնակցող Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպանները ռեֆորմներին այն ուղղությունը տալ, որ սրանք գործադրելի լինեն ամբողջ պետության մեջ, որ մահմեդական ազգաբնակությունն էլ քրիստոնյաների և հրեաների հետ, ձայն ունենա մի պառլամենտում, որպիսին փորձեց հաստատել Միդհատ փաշան։ Թող մասնաժողովը քննության ենթարկե նաև թուրքերի անտանելի դրու-

79 Նույն տեղում։
80 «Մշակ», № 65, 1895։
81 «Մշակ», № 77, 1895։
82 Նույն տեղում։
83 «Մշակ», № 77, 1895։

թյունը և արդարությամբ հետազոտե նրա իսկական աղբյուրները։ Այն ժամանակ նա կգտնե թե ի՞նչն է առաջ բերել այն կոտորածները, որոնք այնքան ատելի են թե քրդերի և թե թուրքերի ի բնե կարեկից հոգուն, գտնե պատճառը, թե ինչու ենք մենք նախանձում Անգլիայի կառավարության տակ եղող մահմեդականների բախտին»[84]։

Թուրք մոլլայի այս վկայությունները չափազանց կարևոր են։ Իսլամիզմի, պանթուրքիզմի ռեակցիոն շմույլքով մոլորված թուրքական աշխատավորներին՝ հասկանալու սուլթանական արյունոտ ռեժիմի ողջ էությունը և հայերի կողմից այդ ռեժիմի դեմ ուղղված ազգային-ազատագրական պայքարի արդարացիությունը։

Դժբախտաբար, երեք տերությունները թուրքական կառավարությանը հայտագիր ներկայացնելու ձևական արարողությունից ոչ մի քայլ առաջ չգնացին։ Հասկանալի էր դառնում, որ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը մերժող թուրքական սուլթանի համար դժվար չէր նաև մայիսյան ռեֆորմների ծրագրի մերժումը։

«Սոսկալի թվեր» վերնագրով հաղորդագրության մեջ «Մշակ»-ը հրապարակում է հետևյալ փաստերը, որոնք բացահայտում են XIX դարում թուրքական սուլթանների կողմից հպատակ ժողովուրդների նկատմամբ գործադրված գազանությունների պատկերը։

«Միայն այս վերջին յոթանասուն և երկու տարում Թուրքիան տվել է աշխարհին կոտորածների «հինգ մեծ ներկայացում»—գրում է «Մշակ»-ը։

Ահա, այդ հինգ մեծ կոտորածներին վերաբերող թվերը, որ առաջ ենք բերում ամենաճիշտ փաստաթղթերից քաղելով.

1822 թ.	կոտորել են	50.000 հույն
1850 թ.	»	10.000 հայ և նեստորական
1860 թ.	»	11.000 մարոնյան և հակոբ
1876 թ.	»	10.000 բուլղարներ
1894 թ.	»	12.000 սասունցի հայեր
	Ընդամենը	93.000 քրիստոնյա

Ի՞նչ կարող է ասել այդ թվերի դեմ Թուրքիան»[85]։

Մայիսյան ռեֆորմների ծրագիրը ի չիք դարձնելու մտադրությամբ, թուրքական կառավարությունն իր պաշտոնական օրգաններով նորից դիմեց հայերի թվի կեղծմանը, որպեսզի հիմնավորեր բարենորոգումների համար իր առաջարկած ծրագրի իրավասությունը։ «Մշակ»-ը գրում է.

«Ամբողջ Թուրքիայի մեջ բնակված հայերի թիվը,—ասում է «Սաբահ» լրագիրը,—մայրաքաղաքի մեջ բնակվածներն ևս հաշվելով, պաշտոնական արձանագրությունների հիման վրա՝ 997.369 է...»։

«Ահա այն գորդյան հանգույցի լուծումը, որ վաղուց թուրքաց կառավարությունը աշխատում էր գտնել և կարծում է, թե արդեն գտել է։ Ի՞նչ պետք կա բարենորոգությունների, քանի որ բովանդակ Թուրքիայի մեջ հայերի թիվը 997.369 է... հայերն այլևս Ալլահի կամքով ու սուլթանի շնորհիվ գաղթելու վրա են, և շուտով այդ գյավուրների հետքն անգամ չի մնա»[86]։

Այսպիսով, հայերին գաղթականության ուղին մղելու, նրանց մեթոդաբար բնաջնջելու և նրանց թիվը արհեստականորեն նվազեցնելու ճանապարհով թուրքական կառավարողները իրենց իրավունք վերապահեցին արխիվ նետելու ինչպես Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը, այնպես էլ մայիսյան բարենորոգումների ծրագիրը։

Թուրքական դահիճները հենց երեք տերությունների հայտագրից հետո էլ սկսեցին զբաղվել հայերի մասսայական կոտորածների կազմակերպմամբ և նրանց բռնի ճանապարհով իրենց հայրենիքից վտարելու քաղաքականությամբ։

1894 թ. դեկտեմբերի 5-ին՝ Անգլո-Հայկական ընկերության նախաձեռնությամբ Լոնդոնում տեղի է ունենում միտինգ՝ Սասունի կոտորածների առնչությամբ։ Նախագահում էր համայնքների պալատի անդամ Ստիվենսոնը։ Նա կարդաց Գլադստոնի նամակը, որը պահանջում է «հույս հայտնել օսմանյան կառավարությանը, իր սեփական պատիվը պահպանելու տեսակետից, անկեղծ օգնություն ցույց տա գործի մանրամասն և լուրջ քննության»[87]։ Ահա Գլադստոնը, հայկական դատի «պաշտպանը», որը սպասում էր թուրքական կառավարության «անկեղծ օգնությունը», տեղի ունեցավ դեպքերի ուսումնասիրման համար։

Գլադստոնը հայտարարեց, թե 1876 թվականի Բուլղարիայի դեպքերը կրկնվում են Հայաստանում, բայց միաժամանակ ընդունեց, որ Սասունի կոտորածների մասին եղած լուրերը չափազանց-

84 Նույն տեղում։

85 «Մշակ», № 102, 1895։

86 «Մշակ» № 15, 1893։

87 «Մշակ» № 146, 1894։

ված են[88]։ Այդ առիթով 1894 թվականի դեկտեմբերի 7-ին Կ. Պոլսի «Մշակ»-ի թղթակիցը նշում է, որ կեղծ են Թուրքական կառավարության կողմից հանձնաժողովներ կազմելու և դրությունը պարզելու վերաբերյալ եղած հայտարարությունները։ Նա գտնում է, որ Թուրքական կառավարության խոստումներին հավատալ երբեք չի կարելի։ «Կարելի՞ է արդյոք,— հարցնում է թղթակիցը,—այդ բոլորից հետո հավատալ Թուրք կառավարության խոսքերին կամ նրա կազմած հանձնաժողովին»[89]։

Հունահատության դուռը հասած ժողովրդական մասսաները գիտեին, որ սուլթանի կառավարությունը նոր մեքենայություններ է գործադրում հասարակայնության լայն խավերի վրդովմունքը լռեցնելու նպատակով։ Ժնևի հայտնի «Lecenovais» թերթը իր էջերում տպագրում է մի թղթակցություն՝ Սասունի դեպքերի մասին։ Թղթակիցը իրազեկորեն և օբյեկտիվ կերպով նկարագրում է հայերի նկատմամբ գործադրված գազանությունների պատկերը, որը պրոգրեսիվ մարդկության խոր զայրույթն է շարժում։ Նա գրում է. «Չեզի պետք է պատմեմ մի շարք դեպքեր, որ կատարվում են Թուրքաց Հայաստանում, մի շարք քստմնեցուցիչ դեպքեր, որոնցից, ինչպես նկատում է «figaro»-ն, քաղաքակրթված աշխարհը պիտի ամաչի։ Բազմաթիվ արյունհեղությունները, սոսկալի և չլսված անգթությունները թեմուրլենգի ժամանակներին հատուկ գազանությունները և զզվելի ոճիրները վրեժխնդրության են գոչում, վրեժ են

88 Տեղին է ասել, որ պրոֆեսոր Լեոն 1899 թվականին «Գլադստոն» խորագրով աշխատության մեջ մինչև երկինք է բարձրացնում Գլադստոնին՝ որպես «մարդասեր» տանջվածների պաշտպան, համամարդկային առաջադիմության, ազգերի եղբայրության հզոր պաշտպան» (էջ 5)։

Հետագայում, 1925 թվականին իր մեմուարներում Լեոն հարկադրված եղավ վերագնահատել Գլադստոնի մասին արտահայտած իր տեսակետները։ Նա գրում է. «Հայկական հարցի մեջ Գլադստոնի վարմունքը բացարձակ թշնամական և ազնտաբեր էր հայ ժողովրդին։ Հայ-Թուրքական հարաբերությունները անհաշտ-թշնամական են դառնում հենց 1880-ի դեսպանական հավաքական հուշագրից հետո։ Այդ ժամանակն է, որ որոշվում է Թուրքահայության վիճակը—բնաջնջումը։

Բազմահռչակ անգլիական պետական գործիչը բնավ էլ չէր մտածում այս մասին, երբ փախուստի էր դիմում Թուրք դիվանագետների առջև։ Իսկ հայե՞րը։ Հասկացա՞ն նրանք անգլական «հայասիրության իսկական արժեքը։ Հասկացա՞ն, թե ի՞նչ է Գլադստոնը»։

Չհասկացան։ Գլադստոնը նրանց համար մնաց դարձյալ «մեծ մարդ», «հայասեր» («Անցյալից», էջ 39)։

89 «Մշակ» № 148, 1894։

պահանջում անգութ երկնքից, որը անողոքելի է մնում դեպի ճնշված ազգի անբախտ զավակները»[90]։

Եղեռնագործությունները սկսվում են ոչ թե 1894 թվականից, ասում է թղթակիցը, այլ 1878 թվականից, 61-րդ հոդվածից հետո, երբ ավելի ու ավելի սաստկացան հարստահարությունները, ճնշումն ու իրավազրկությունը։ Ովքե՞ր էին դրանց հեղինակները, հարցնում է թղթակիցը և ապա պատասխանում. «Քուրդեր, չերքեզներ, Թուրքեր, նույնիսկ Թուրք պաշտոնյաներ,— ահա բոլոր ոճիրների, ավարառությունների, ամեն տեսակ սրբապղծությունների, բռնաբարությունների, սպանությունների, հրդեհների իսկական հեղինակները։ Եվ գիտե՞ք ինչ է անում Բ. Դուռը այդ անտանելի զբրկանքների առջև առնելու համար։ Նա զինում է քուրդերին, նրանցից կազմում է «Համիդիե» գնդեր և նրանց հանձնում հայերին պաշտպանելու գործը։ Ո՞ւմից պետք է պաշտպանեն այդ քուրդերը հայերի կյանքը։ Նույնիսկ իրենց դեմ, քուրդերի դեմ։ Այսպիսով, նա կազմեց բաշիբոզուկ քուրդերի ավազակային խմբեր, արգելելով աշխատող և խաղաղասեր հայ ժողովրդին ինքնապաշտպանության համար զենք կրել. մի խոսքով նա հանձնեց գառը գայլի հսկողության տակ։ Եվ այս բոլորը արավ Թուրք կառավարությունը, որպեսզի արդարությունը և հավասարությունը հաստատվի... Ինչ գեղեցիկ երկիր»[91]։

Համառոտակի բնութագրելով սուլթանական Թուրքիայի կերպարը, բացահայտելով նրա կառավարության նենգ դիտավորությունները, նույն թղթակիցը շարունակում է. «Հարցրեք Հայաստանի հողին,— քանի քանի անմեղ զոհեր է նա ծածկում իր ծոցում։— Սա մի մարդկային սպանդանոց է, ասում է. Jeurnafcenov-ը Հայաստանի վերջին կոտորածների առթիվ։ Այո՛, սա մի մարդկային սպանդանոց է, մի հավիտենական սպանդանոց։

Ահա այսպես է Թուրքիան ուզում իրագործել 61-րդ հոդվածը, նա ուզում է բնաջինջ անել հայ տարրը Փոքր Ասիայում, որպեսզի Բեռլինի դաշնագիրը ստորագրող պետություններին ասի՝ «Հայաստանում այլևս հայ չկա, հետևապես, այլևս գոյություն չունի «Հայկական հարցը»[92]։

Մեքսիկայի մամուլը դատապարտեց եվրոպական տերություններին և, առանձնապես, Անգլիային՝ Հայկական հարցի ձախողման և հայերի կոտորածների համար։ Նա Հայկական հարցի լուծման և

90 «Մշակ», 9, 1895։

91 «Մշակ», № 9, 1895։

92 Նույն տեղում։

հայերի կյանքի ապահովման միակ երաշխիքը համարում էր Արևմտյան Հայաստանի միացումը Ռուսաստանին։ Համարելով Հայկական հարցի լուծումը որպես անհետաձգելի մի խնդիր, նա գրում է. «Շատերը գիտեն այն դեպքերը, որոնք կատարվեցին Հայաստանում։ Քուրդերը... նոր հարստահարություններ գործեցին հայերի դեմ, հարստահարություններ, որոնք վերջապես ահագին կոտորածներով հավատացնում են, որ զոհերի թիվը հասնում է 10.000-ի... Պետք է, անհրաժեշտ է ապիկար Թուրքիայի ձեռքից խլել քրիստոնյա ժողովուրդների կառավարությունը, որովհետև նա չէ կարողանում, կամ չէ կամենում նրանց պաշտպանել քուրդերի ֆանատիկոսության դեմ։

Ամենալավ լուծումը, միակ հնարավոր լուծումը կլիներ զիջել Ռուսաստանին Օսմանյան դրոշակի տակ մնացած Հայաստանի մասը։

Ռուսաստանն արդեն տիրապետում է Հայաստանի մի մասին, որտեղ նա հաստատել է անդորրություն և կարգ՝ կովկասյան մյուս նահանգների պես։ Պետք է թողնել, որ նա վերջացնե իր քաղաքակրթելու միսիան այդ բազմաչարչար երկրում»[93]։

1895 թվականին «Նոր-դար»-ում տպագրվեց տիկին Նովիկովայի «Ո՞վ է մեղավոր» ուշագրավ հոդվածը։ Հեղինակը անարգանքի սյունին գամելով սուլթանի կառավարությանը՝ հայերին հոշոտելու համար, միաժամանակ մեղադրում է Անգլիայի կառավարողներին՝ Սան-Ստեֆանոյի դաշնագրի ձախողման ու թուրքական սուլթանի հետ գաղտնի համաձայնություն կնքելու համար։ «Իսկական հանցապարտները և քաղաքակրթված աշխարհի անվան ամոթ բերող բարբարոսությունների պատասխանատուն,— գրում է նա,— քուրդերը չեն—չեն ամենևին, այլ թուրք կանոնավոր զորքերը, որոնց հրամայում էին թուրքական կառավարության կողմից բացարձակ պատվերներ ունեցող թուրք սպաները. թեև Բ. Դռան ունեցած մասնակցությունն այդ նողկալի արարքների մեջ չէ հերքվում նույնիսկ Ստամբուլի փաշաների կողմից։ Սակայն նրանց վրա չէ՝ որ ծանրանում է այդ սարսափելի պատահարների պատասխանատվությունը, այլ այդ պատասխանատվությունը ընկնում է ամենից առաջ Անգլիայի վրա»[94]։

Բացահայտելով թուրքական կառավարության կողմից հայերի բնաջնջման դրտապատճառները, Նովիկովան շատ իրավացիորեն

93 «Մշակ», № 23, 1895։

94 «Նոր դար», № 91, 1895։

նկատում է, որ սուլթանի կառավարությունը այդ սանկցիան ստացավ Բեռլինի կոնգրեսից։ «Դա այն հարգելի խաղաղության կորստաբեր հետևանքներից մինն էր,— գրում է նա,— որի հաստատումը Բեռլինում, 1878 թվին անգլիական կառավարությունը վերագրում է իրեն ի դեմս լորդ Բիկոնսֆիլդի...»[95]։

1882 թվականին «Արձագանք» № 2-ում տպագրված է «Մշակ»-ի Բեռլինի թղթակցի փետրվարի 12-ի հաղորդումը պրոֆեսոր Զախաևի՝ «Քրիստոնյաների դրությունը Արևելքում» թեմայով կարդացած ուշագրավ դասախոսության բովանդակությունը։ Անցնելով պատմական շատ աղետալից փորձություններով անցած հայերին, դասախոսը ասում է. «Երկրորդ քրիստոնյա ազգը, որի մասին կարճ պիտի խոսեմ, բայց որին վիճակված է ամենամոտ ժամանակում ամբողջ Եվրոպան և ամբողջ եվրոպական մամուլը զբաղեցնել,— հայերն են, որոնց դիմացը Եվրոպան պարտավորություններ իր վրա հանձն առավ, և որ ստիպված է կատարել և որ կկատարի, վասնզի մենք առիթ չունենք թերահավատ աչքով նայել եվրոպական դիպլոմատիայի խոստումների վրա»[96]։

Պրոֆեսոր Զախաևը ճիշտ է արձանագրում իրերի դրությունը, բայց հայերին խորհուրդ է տալիս հուսալ և սպասել եվրոպական դիվանագետների բարիկամեցողությանը։ Նա կշտամբում է թուրքական կառավարությանը պայմանազանցության և վեց տերություններին՝ անհետևողականության համար։ Խոսելով 61-րդ հոդվածի մասին, նա հարկադրված եղավ ասել, որ այդ շարաբաստիկ հոդվածից անցել է չորս տարի, բայց «ոչինչ բարենորոգություններ զգալի չեղան Հայաստանում։ Հուսանք, որ հարկավոր չի լինի, որ հոսի և այս քրիստոնյա ճնշված ազգի արյունը և որ նա սրով հասնի մարդավայել կյանքի և անձնական ապահովության։ Հուսանք և վստահ լինենք Եվրոպայի դիպլոմատիայի մարդասեր ջանքերի վրա, թեպետ պետք է ասել, որ Եվրոպային քիչ պատիվ է բերում, որ նա անմիջապես քաղաքակիրթ աշխարհի դռների մոտ համբերում է Թուրքիայի կամայական վարմունքը մի հին և հարգելի քրիստոնյա ազգի դեմ»[97]։

Բայց պրոֆեսոր Զախաևի բարի կամեցողությունը չխանգարեց ո՛չ եվրոպական դիվանագետներին և ո՛չ էլ գերմանական կառավարողներին, որոնք Թուրքիայում տիրապետող ազդեցություն

95 «Նոր դար», № 91, 1895։

96 «Արձագանք», № 2, 1882։

97 Նույն տեղում։

ունենալու նպատակով սիրաշահում էին սուլթանին և հրահրում նրան հայերի դեմ։

Ուշագրավ է Բրյուսելի աշխարհագրական ընկերության նախագահ Ժյուլ Լեկլերկիի «поездка на Арарат» ֆրանսերեն լեզվով գրված և ռուսերեն թարգմանված աշխատությունը, որի մի ամբողջ գլուխը նվիրված է հայերին ու Հայկական հարցին։

Մեծ հումանիստ և աշխարհագետ գիտնականը մի քանի տեղեկություններ տալով հայ ժողովրդի պատմության, նրա խաղացած դերի ու լեզվի մասին, նկարագրելով արևմտահայ ժողովրդի ծանր ու դժվար վիճակը՝ սուլթան Համիդի իշխանության օրոք, յուրջ կշտամբանքներ է ներկայացնում եվրոպական տերություններին՝ իրենց անհոգի վերաբերմունքի համար։

«Տասնչորս տարի է,— գրում է նա,— ինչ որ հայերի ինքնավարությունը ստորագրված է եվրոպական պետությունների լիազորների ձեռքով, բայց նրանց վիճակը դրանով ամենևին չէ բարվոքվել։ Կար մի վայրկյան, երբ հայերը կարող էին հուսալ, թե հասել է փրկության ժամը, նրանց պատվիրակները սիրով ընդունվեցան Բեռլինի կոնգրեսում և քանի որ միջոցներ էին որոնում պաշտպանելու միլիոնավոր քրիստոնյա ժողովուրդը, որ կոչում էր անում իր արևմտյան եղբայրներին։ Բայց հետո, 1878 թվականի դաշնագրով այդ մարդասիրական գործում Անգլիան փոխարինեց Ռուսաստանին և ամեն բան մնաց առաջվա դրության մեջ, կամ ավելի լավ ասենք, ավելի վատացավ»[98]։

Հեղինակը իրավացիորեն նկատում է, որ հայ ժողովրդի դրությունը գնալով վատացավ շնորհիվ վեց տերությունների կոլեկտիվ խնամակալության։

Օգտվելով հայերի համար սահմանված անորոշ հոդվածից «Թուրքերը ամեն միջոց գործ դրեցին այդ հույսերը հիմնահատակ անելու համար՝ կամ հեռացնելով գործից ազդեցիկ հայերին, կամ խրախուսելով քուրդերի ավազակությունները և չերքեզների ասպատակությունները, կամ ընդդիմադրելով եկեղեցիների և դպրոցների գործունեությանը։ Մարդ դժվարությամբ է հավատում այն բոլորին, ինչ որ այդ խստությունների մասին գրում են անգլիական լրագրերը... Պետք է միայն զարմանալ, որ ոմանք մինչև այսօր այդ լուրերը երևակայական են համարում, մինչդեռ Հայաստանի

98 «Մշակ», № 8, 1893։

ավերման գործը դիտմամբ կատարվում է Թուրք իշխանության աչքի առաջ»[99]։

Ժյուլ-Լեկլերկին մեղադրում է սուլթանական կառավարությանը և արժանավայել կերպով գնահատում հայ ժողովրդի խաղացած դերը քաղաքակրթության համար մղված պայքարում։

«Կար ժամանակ,— գրում է նա,— երբ Հայաստանը կիրակրում էր երեսուն միլիոն ժողովուրդ, միջին դարերում նա ամենաբարեկյաց երկրներից մինն էր, երկրագործությունը և արդյունագործությունը ծաղկած էին, ինչպես գրականությունը և գիտությունը։ Տաճիկների տիրապետությունը ոչնչացրեց քաղաքակրթությունը, կանգնեցրեց երկրի բնական արդյունահանության զարգացումը և դարձրեց երկիրն անապատ—անապատը հաղթական իսլամի թողած հետքն է»[100]։

Այս բոլորից հետո հեղինակը հարցնում է՝ «Ինչո՞ւ հայերը, այդ եվրոպացիները Ասիայում, չեն կարողանում հաղթել դրացիներին, որոնք թե՛ թվով և թե՛ բարոյապես ավելի տկար են, ի՞նչ պատճառով այդ ազգը, որը աճում է ուրիշ տեղերում, նվազում է Թուրքիայում, և ինչի՞ նա չի կարողանում ձեռք բերել իր անկախությունը։ Ինչի՞, վերջապես, այդ ճնշված քրիստոնյաները, հպատակվելով Թուրքերի լուծին, մնում են նրանց հավատարիմ և չեն ապստամբում մահմեդական տիրապետության դեմ, որը կարծես թե նրանց բնածին ընդունակությունները անհետք կերպով այլասերել է»[101]։

Հումանիստ գիտնականը մեծ սիրով ու համակրությամբ է տոգորված դեպի հայ ժողովուրդն ու նրա արդար դատը։ Բայց, անշուշտ, նա սխալվում է, կարծելով, թե հայերը չեն պայքարել Թուրքական բռնապետության դեմ, բռնապետություն, որը «նրանց բնածին ընդունակությունները այլասերել է»։ Այդ բոլորից հետո էլ հայ ժողովուրդը արիաբար պաշտպանեց իր ազգային վեհությունը։

Խոսելով հայերի օրինական պահանջների մասին, Ժյուլ-Լեկլերկին գրում է. «Նրանց ամբողջ ցանկացածն այն է, որ քրիստոնյա կառավարիչներ նշանակվեն այնտեղ, որտեղ ժողովրդի մեծամասնությունը քրիստոնյա է և այդ միակ խնդիրը արտահայտված է այն հիշատակարանի մեջ, որ առաջարկվեց մեծ պետություններին հայ ազգի կողմից Բեռլինի կոնգրեսի նախընթաց օրը»[102]։

99 «Մշակ», № 8, 1893։
100 Նույն տեղում։
101 Նույն տեղում։
102 Նույն տեղում։

Թուրքական սուլթանի կողմից հայերին տրված խոստումները չկատարելու պատասխանատվությունը նույն հեղինակը շատ իրավացի կերպով բարդում է եվրոպական տերությունների վրա՝ իրենց հանած որոշման նկատմամբ անհետևողական լինելու համար։ Հետևապես, նկատում է նա, որ հայերը բացասաբար են տրամադրված դեպի արևմտա-եվրոպական տերությունները, համակրանք տածելով Ռուսաստանի նկատմամբ։

«Կա մի ազգ,— գրում է նա,— դեպի որ Հայաստանը շնորհակալության մի առանձին պարտավորություն ունի, և պետք է խոստովանել, որ նա չի մոռանում, որ Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածում ազնիվ և մեծահոգի սկիզբը Ռուսաստանն է դրել, որը, իհարկե, հետաքրքրվում է այդ խնդիրներով...»[103]։ Հեղինակը այստեղ հաշվի չի առել, որ Բեռլինի կոնգրեսից հետո ռուսական ցարիզմը հայերի նկատմամբ թշնամական կուրս ընդունեց՝ սուլթանին մտերմանալու, նրան իր ազդեցությանը ենթարկելու նպատակով։

Միանգամայն ճիշտ է հեղինակը, երբ հայ ժողովրդի ողբերգության պատասխանատվությունը միաժամանակ դնում է Անգլիայի վրա, որը Կիպրոսի դաշնագրով իր վրա վերցրեց Թուրքիայի պաշտպանությունը Ռուսաստանի դեմ։ «Պահպանել Կիպրոսը և մոռանալ իր սրբազան պարտքը,— գրում է նա,— որ հանձն է առել այդ երկիրը ձեռք բերելով, մի՞թե դա դավաճանել չի նշանակում Եվրոպայի վստահությանը, որ հանձնել է նրա մարդասիրության և քաղաքակրթության գործը, և իր հանձն առած պարտավորությունները իրագործելու եղանակով նմանվում է Բարձրագույն Դռանը»[104]։

Հայ ժողովրդի օրինական պահանջը այդ նույն հեղինակը ձևակերպում է մեկ նախադասությամբ. «Հայկական կառավարություն Թուրքաց Հայաստանում»։ Նա միաժամանակ նշում է այդ կառավարության կազմակերպման վարչական սկզբունքները, այսինքն՝ «Պետք է ամբողջ երկրից մեկ առանձին նահանգ կազմել, հինգ շրջանների բաժանված—Էրզրում, Վան, Դիարբեքիր, Մուշ և Խարբերդ՝ հայ նահանգապետի գլխավոր վարչության տակ, որին նշանակում է սուլթանը, պետությունների համաձայնությամբ։ Նահանգապետը պարտավորվում է բնակվել Էրզրումում և ունենալ իր կարգադրության տակ հեծելագունդ, որը կազմվում է նստակյաց

103 «Մշակ», № 8, 1893։
104 Նույն տեղում։

ազգաբնակությունից և ոչ թե թափառաշրջիկներից։ Այդ հեծելախումբը պետք է պաշտպանե հայերին քուրդերի և չերքեզների հարձակումներից. հայերը իրավունք են ստանում ծառայության մտնել զորքի, ոստիկանության, քաղաքացիական և դատաստանական հիմնարկությունների մեջ, որտեղից նրանց մինչև այժմ արտաքսում էին։ Եթե քուրդերին զինաթափ անելը անհարմար համարվի, այն ժամանակ պետք է թույլ տալ հայերին զենք կրել անձնապաշտպանության համար»[105]։

Այս նպատակի համար հայերի մղած ազգային-ազատագրական պայքարը նույն հեղինակը համարում է օրինական և անխուսափելի։ «Հրեշավոր չէ՞ արդյոք, որ մի ժողովուրդ, որ հաճախ քաջություն է ցույց տվել, թույլ է տալիս, որ ոչխարի նման կոտորեն իրեն և իր մերձավորներին»[106]։

Ամփոփելով հայ ժողովրդի վիճակին և նրա դատին վերաբերող իր աշխատությունը, Ժյուլ-Լեկլերկին գրում է. «1860 թվի կոտորածից հետո Եվրոպան տվեց Լիբանանի քրիստոնյաներին հավատակից նահանգապետներ, խառն դատարաններ, տեղական ոստիկանություն և անձնապաշտպանության համար զենք կրելու իրավունք։ Եվրոպան չէ կարող մերժել նույն արտոնությունները այն ժողովրդին, որը բոլոր ասիական ցեղերի մեջ միակ ընդունակն է յուրացնելու եվրոպական քաղաքակրթությունը և որը կատարելապես արժանի է օգտվելու նրա բարիքներից»[107]։

Սուլթան Համիդի գազանությունների դեմ արտահայտվեց նույնիսկ «Երիտասարդ Թուրքիա» կուսակցությունը, որը քաղաքական իշխանության էր ձգտում և կամենում էր դեմոկրատացնել երկիրը։ Այդ կուսակցությունը ժամանակին շատ ճիշտ կերպով պարսավում էր եվրոպական տերություններին սուլթանի իշխանության պաշտպանության, նրա գահակալության քսանհինգամյակի կապակցությամբ փառաբանական հեռագրերի համար։

Ուշագրավ է, թե ինչպես է բնութագրում այդ կուսակցությունը Աբդուլ-Համիդին և եվրոպական տերությունների նրա հանդեպ ունեցած վերաբերմունքը։ «Ապտուլ Համիդ այսօր կտոնե քսանհինգամյա տարեդարձը պատմության մեջ նմանը չունեցող ոճիրներով ու հրեշություններով լեցուն իր թագավորությունը։ Բովանդակ քա-

105 «Մշակ», № 8, 1893։
106 Նույն տեղում։
107 Նույն տեղում։

ղաքակիրթ աշխարհը ողբաց այս արյունռուշտ բռնապետին անհամար զոհերուն վրա, բայց դժբախտաբար, եվրոպական համաձայնությունը գրեթե բարեկամական դիտավորություններե ուրիշ բան չտվավ անոր։ Երիտասարդ Թուրքերու կուսակցությունը ուժգնապես կբողոքե այն անարդար հաճոյակատարության դեմ, որով եվրոպական պետությունները արտասովոր առաքելություններ կղրկեն մեծ մարդասպանին հոբելյանի հանդեսին, ինչ-որ ուրիշ բան չէ, բայց եթե ոճրին ու մարդասպանության աստվածացումը։ Եվրոպան ներողամիտ դիրք մը բռնելով կարմիր սուլթանին ոճիրներուն հանդեպ, արդեն մեծ պատասխանատվություն մը վրան առած էր, հիմա զայն քաջալերելով, անոր ապագա արարքներուն մեղսակից չըլլա՞ր միթե։ Մեր կուսակցությունը հավատարիմ թարգման դժբախտ օսմանյան ազգին, քսաներորդ դարուն սեմին վրա կհեծե այս միջնադարյան բռնավորին լուծի տակ, կհուսա, որ եվրոպական մամուլը, այնքան ազատամիտ ու վեհանձն, մեր արդար բողոքին պիտի ձայնակցի՝ պատմության ցիցին վրա առհավետ գամելու համար այս նոր Ներոնը»[108]։

Գեղեցիկ է ասված։ Բայց ցավոք սրտի, այդ կուսակցությունը, որը ճիշտ է բնորոշել Աբդուլ-Համիդի հրեշային կերպարը՝ որպես ոճրագործ և արյունարբու,— 1908 թվականին նվաճելով քաղաքական իշխանությունը, շարունակեց նրա ռեակցիոն քաղաքականությունը։

1895 թ. սեպտեմբերի 18-ին, հնչակյանների ու դաշնակների ղեկավարությամբ Կ. Պոլսում հայերը կազմակերպեցին խաղաղ ցույց (Պապ-Ալիի ցույցը)՝ եվրոպական տերությունների ակտիվ միջամտությունը հայցելու նպատակով։ Ոստիկանները նախօրոք տեղեկացել էին հայերի մտադրությունների մասին։ Ավելի քան 4000 հայեր՝ երկուշաբթի օրը շարժվում են դեպի սուլթանի պալատը՝ «Զայնը ճնշեց Էրզրումի հայոց լեռներեն» երգելով։ Բայց ոստիկանները արգելում են նրանց դարպասից ներս մտնել։

Պապ-Ալիի հսկիչ հազարապետի թիկնապահ Սերվեթ բեկը հայերի վրա կրակ արձակելու կառավարական հրամանը կարդալիս նրա խոսքերը լսում է 18 տարեկան Աբրահամ անունով գավառահայ մի երիտասարդ, որը ատրճանակի հարվածով տեղն ու տեղը սպանում է Սերվեթ բեկին։ Այս դեպքը բավական էր, որպեսզի Թուրքական մոլեռանդները իրագործեին հայերի բնաջնջման իրենց կառավարության ծրագիրը։

108 «Անահիտ», № 9, 1901, էջ 233։

Անողոք կռիվներ են տեղի ունենում ցուցարարների ու ոստիկանների միջև։ Հայերը կռվում են քաջաբար։ Սուլթանի կառավարության զինվորական հրամանատարությունը ցուցարարների դեմ դուրս բերեց իսլամ սոֆթաներին, իսկ հայերին օգնության է հասնում Անտոն Ռուբինշտեյնի՝ իր մի քանի տասնյակ զինված մարդկանցով։ Կռիվը սաստկանում էր, բայց ուժերը անհավասար էին։

Սուլթանական ջարդարարները սրի քաշեցին ավելի քան 2000 հայերի, իսկ եվրոպական դեսպանները նորից շատ անհոգի գտնվեցին սուլթանական կառավարության գործադրած գազանությունների նկատմամբ, կառավարություն, որը երեք տերությունների մայիսյան հայտագրով բարենորոգումներ մտցնելու փոխարեն, ձեռնարկել էր հայերի համատարած կոտորածը։ Հետևապես, հասկանալի է, որ այդ տերությունների հայտագիրը ձևական ազդարարում էր։

1895—1896 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԵՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Սուլթանական կառավարության կողմից Էրզրումում, Սասունում, Կ. Պոլսում և այլուր կազմակերպված կոտորածները զգալի տվեցին զեյթունցիներին, որ մոտավոր ժամանակներում այդ օրհասի առջև կանգնելու են նաև իրենք։ Եվ իրոք, սուլթանական դահիճների տեսադաշտից դուրս չէր մնացել դյուցազնական Զեյթունը, որը 19-րդ դարում չորրորդ անգամն էր ըմբոստանում օսմանյան բռնապետության դեմ։ Լեռնային Սասունի և Զեյթունի ժողովուրդներն իրենց քաջագործություններով, անձնուրացությամբ ու ազատասիրությամբ ընդհանուր նկարագիր ունեին։ «Երկուսն ևս,— գրում է Հ. Առաքելյանը,— քաջ, հանդուգն, համարձակ են...»[109]։

Ֆրանսիացի աշխարհագետ-դիտնական Վիկտոր Լանգլուան խոսելով զեյթունցիների մասին, նշում է, որ «զեյթունցիները առհասարակ բարձրահասակ, քաջ և աշխույժ բնավորության տեր մարդիկ են»[110]։

Բարյացակամորեն տրամադրված լինելով զեյթունցիների արդար գործի նկատմամբ, ողջունելով նրանց ազատագրությունը, այդ

109 Հ. Առաքելյան, Զեյթուն, Թիֆլիս, 1896, էջ 5։
110 Նույն տեղում, էջ 71։

նույն գիտնականը զեյթունցիներին համարում է «Արևելքի ֆրանսիացիներ»[111]։

Կ. Պոլսի անգլիական դեսպանը իր կառավարությանը ներկայացրած զեկուցագրերից մեկում՝ զեյթունցիների և օսմանյան բռնապետության դեմ նրանց հաճախակի կրկնվող ապստամբական ելույթների մասին գրում է. «Զեյթունցիք քաջ ու անվախ նկարագիր մը ունին. ինչ որ մասնահատուկ են ամեն անգամ, որ առիթ ունեցած են զենք վերցնելու թուրք կառավարության դեմ»[112]։

Զեյթունում ջարդեր կազմակերպելու դիտավորությամբ, սուլթանական կառավարության թելադրանքով, տեղական իշխանությունները ոչ միայն հարստահարում, այլև արատավորում էին զեյթունցիների ընտանեկան պատիվը։ Կ. Պոլսի անգլիական դեսպանը իր կառավարությանը իրավացիորեն գրում է, որ թուրքական իշխանությունների հարկային քաղաքականության ապօրինի ընթացքը «դեպի ապստամբություն մղած է զեյթունցիները...»[113]։

Կիլիկիայի Մկրտիչ կաթողիկոսի բողոքների հիման վրա 1893 թվականին գայմագամի պաշտոնից ազատվեց դաժան Թեֆիկ բեկը, որին հաջորդեց իսլամական կրոնի պետ և մոլի ռեակցիոներ Գադին, որը նորանոր հարկերով ու իր անբարոյական արարքներով ավելի էր զայրացնում զեյթունցիներին։ Նոր գայմագամի ստոր արարքների մասին Կ. Պոլսի անգլիական դեսպանը իր կառավարությանը գրում է. «Երբ հնչակյան կուսակցության գործակալները մտան Զեյթուն ապստամբություն մը գրգռելու նպատակով՝ տեսան, որ տեղական կառավարությունը դուրացրած էր իրենց գործը... ժողովուրդը ծայրահեղորեն դժգոհ թուրք գայմագամեն՝ հասունացած էր դեպի ապստամբություն»[114]։ Դեսպանը միաժամանակ նշում է գայմագամի կողմից զեյթունցիներին բանտարկելու և ծեծելու բազմաթիվ փաստեր՝ հնից մնացած տուրքերը վճարելուց հրաժարվելու համար և ապա գրում է. «Գադին սովորաբար կը կոչեր զեյթունցիներին «շուներ» կամ «գեավուրներ», օր մը չէր անցներ առանց լուրջ նախատինքներու և բռնության»[115]։

Հետևապես, զեյթունցիների ապստամբությունը սուլթանական կառավարության հայաջինջ քաղաքականության հետևանքն էր և ոչ

111 Հ. Առաքելյան, Զեյթուն, Թիֆլիս, 1896, էջ 71։

112 ՀՍՍՀ ԳԱ պատմ. ինստիտուտի արխիվ, Լեոի ֆ., թղթապ. № 1, թերթ 122։

113 «Մշակ», № 144, 1895։

114 ՀՍՍՀ ԳԱ պատմ. ինստիտուտի արխիվ. Լեոի ֆ., թղթապ. № 1, թերթ 124։

115 Նույն տեղում։

թե մի քանի հնչակյանների թելադրանքով կազմակերպված գործ։ «Զեյթունցին իր կղզիացած վիճակին մեջ այլևս անտարբեր չհանդիսանար ազգային ճակատագրին և Հայաստանի անցուդարձերուն,— գրում է Զեյթունցին (Տեր-Օհանը կամ Տելի Քեշիշը),— ան ականջ կը դնե հեռավոր արձագանքներուն, իր հայրենակիցներու ցավերուն, ազատության աղաղակներուն և իրերու անողոք բիրուսով կը մտնե ազգային ընդհանուր շարժման ալիքներուն մեջ, միշտ պահելով սակայն իր հատուկ պատերազմողի մասնավոր դրոշմը»[116]։

Զեյթունի ազգային ժողովը նախազգուշացրեց Գադիին՝ իր արարքներին վերջ տալու համար, որովհետև դրանք կարող են վատ հետևանքներ ունենալ։ Գադին պատասխանում է. «Ես հրահանգ ունիմ իմ սիրելի թագավորես՝ այդպես վարվելու, որպեսզի դուք ալ գրգռվեիք և մի խլրտում հանեք, այն ատեն թագավորը բարկանա և զձեզ ալ Սասնո վիճակին հասցնե»[117]։

Գադիի հանձնարարությամբ զինվորները պղծում էին հայ կանանց ու աղջիկների պատիվը։ Մի կնոջ տուն մտնելու և սանձարձակություններ գործադրելու կապակցությամբ զեյթունցիները բողոքում են գայմագամին, որը լկտիաբար պատասխանում է. «Ի՞նչ ընեմ, մի՞թե զինվորներն ալ մարդ չեն. եթե այդ կին չի սիրեր զինվորներ, թող չթողու որ երթան յուր տուն»[118]։ Մի քանի օրից հետո մի տան մեջ զեյթունցի երիտասարդները զինվորներին լավ ծեծում են ու ասում. «Դե գացեք, ինչ որ տեսաք պատմեցեք ձեր աղաներուն»[119]։

Այսպիսով, զեյթունցիների և թուրքական իշխանությունների հարաբերությունները խիստ լարված էին։ Այդ հարաբերություններն էլ ավելի սրվեցին, երբ Զեյթունի զինվորական մասի հրամանատար Ճիազիմ էֆենդին սկսեց զորանոցի շուրջը խրամատներ պատրաստել։ Բայց զեյթունցիների ուշադրությունը շեղելու և նրանց հանգստացնելու նպատակով Մարաշի իշխանությունները Գադիին հանեցին պաշտոնից և նրա տեղը նշանակեցին Ավնի բեկին, որը իր նախորդից էլ սարսափելի դաժան էր։ Զեյթունցիները ըմբոստացան նաև սրա դեմ։

1895 թ. հուլիսին Արգեն գյուղում երևում են վեց հնչակյան-

116 Զեյթունցի, Զեյթունի անցյալեն և ներկայեն, Վիեննա, 1900, էջ 6։

117 Նույն տեղում, էջ 2։

118 Նույն տեղում, էջ 4։

119 Նույն տեղում։

ներ։ Մարաշի իշխանությունները հոտը առնում են։ Չերքեզ Ասլան բեկին հրամայված էր ձերբակալել նրանց։ Օգոստոսի 5-ին (17-ին) նա լինում է Արգենում և պահանջում է վճարել տուրքերը։ Գյուղացիները նրան պատասխանում են, որ «այժմ դրամ չունենք, երբ ունենանք՝ կը վճարենք»[120]։ Ոստիկանապետ Ասլան բեկը կատաղում է, ծեծում ու բանտարկում է գյուղի ղեկավար Խաչեր Քեհյանին։ Դրա հետ միասին նա պահանջում է իշխանությանը հանձնել վեց օտարականներին։ Այդ ժամանակ գյուղացիները նրան զայրույթով պատասխանում են. «Մենք այժմ ո՛չ տուրք տալու ժամանակ ունինք, և ո՛չ ալ կրնանք մեր սիրելի հյուրերը ձեր անգութ կառավարության ձեռք հանձնել. ավելի լավ է բոլորս միասին ջարդվինք, քան թե այդ վատությունը կատարենք»[121]։ Ասլան բեկը խայտառակ պարտությամբ վերադառնում է։

Հաշվի առնելով վերահաս վտանգը, զեյթունցիները խնամքով ուժեղացրին ապստամբության նախապատրաստումը։ Զեյթունի չորս իշխանների ներկայացուցիչ Շավրոյան Ղազարը իր մոտն է կանչում Ֆրնուզի փոխ-վանահայր Բարթուղիմեոս վարդապետին և գաղտնի հանձնարարությամբ ուղարկում Գարանլըխ-դերե կոչված վայրը՝ հնչակյանների հետ բանակցելու համար։ Խորհրդակցությունը տեղի է ունենում Մութ ձորում, որին մասնակցում էին՝ Բարթուղիմեոս վարդապետը՝ 40 Ֆրնուզցիներով, Խաչեր Քեհյանը՝ 30 արգենցիներով, Գոճայան Հարություն աղան՝ 30 ավագկալցիներով։ Հնչակյաններից խորհրդակցությանը ներկա էին՝ Աղասին, Հրաչյան, Ապահը, Նշանը, Մլեհը և Կարապետը։ Հնչակյանների տրված հաղորդումներից հետո, խորհրդակցությունը քննության առավ ապստամբությունը կազմակերպված սկսելու հարցը։

Բարթուղիմեոսը Զեյթունի իշխանին է ներկայացնում հարցաքննության արդյունքները և նրան հայտնում, որ եկվորները նպատակ ունեն օգնելու ապստամբներին։ Իշխանը կարդում և իր մոտն է կանչում Պապիկ փաշայի եղբայր Նազարեթ Չաուշին և առաջարկում է հրաժարվել թուրքական իշխանությանը ծառայելուց, անցնել Բարթուղիմեոսի տրամադրության տակ և կռվել սուլթանական բռնապետության դեմ։ Նազարեթը պատասխանում է. «Այո՝, կընդունիմ»[122]։

120 Զեյթունցի, Զեյթունի անցյալեն և ներկայեն, էջ 6։
121 Նույն տեղում։
122 Նույն տեղում, էջ 22։

Այդ նույն ժամանակ Մարաշի իշխանությունները ամրացնում էին զորանոցը։ Նրանք մի զինվորական գունդ ուղարկեցին, որը 1895 թ. սեպտեմբերի 26-ին (հոկտեմբերի 8-ին) հասավ Բերդիս չայ։ Զեյթունցիները հասկացան, որ թշնամին հարձակման է նախապատրաստվում։ Նազարեթի և Աղասու ղեկավարությամբ 150 հայ քաջեր շարժվեցին դեպի Բերդիս և երեք ժամ տևող կռիվներից հետո սպանեցին թշնամու 33 և վիրավորեցին 12 զինվոր։ Թշնամին փախուստի դիմեց, բայց օժանդակ ուժեր ստացավ, որի հետևանքով հայերը դադարեցրին կռիվը։ Հայերից զոհվեցին երեք հոգի, որոնց թվում Չալլադ-Կարապետը, վիրավորվեցին չորս հոգի, որոնց թվում՝ Նազարեթը, որը մոր հեքիմական դեղորայքով արագորեն ապաքինվեց։ Թշնամին կտրեց Չալլադի գլուխը և Մարաշ ուղարկեց որպես Նազարեթ չաուշի գլուխը[123]։ Բերդիս չայի կռիվը վերջացավ զեյթունցիների հաղթանակով։ Ապստամբությունն արդեն սկսված էր։

Բերդիս չայի կռվի առաջին գիշերվա արշալույսին Բարթուղիմեոսը 100 Ֆրնուզցիների գլուխն անցած, պաշարում է զորանոցը, կտրում հեռախոսի կապը։ 1895 թ. հոկտեմբերի 12-ի (24-ի) առավոտյան սկսվում են հրաձգությունները։ Զորանոցի 540 հոգուց բաղկացած կայազորը չէր կամենում անձնատուր լինել։ Ապստամբների կռվողների թիվը հասավ 1000-ի և երեք օրվա համառ կռիվներից հետո թշնամին անձնատուր եղավ, գայմագամ Ավնի բեկը գերի ընկավ։ «Զորանոցի մեջ 650 հոգի զորք, կին և երեխաներե զատ,— գրում է Զեյթունցին,— զեյթունցիք գրավեցին 120.000 փամփուշտ, 2 կրուբի թնդանոթ, 600 մարթին հրացան, 170 ռումբ, 2 տակառ վառոդ, 2 գարիի ամբար լիք, 2 բրինձի և լոբիայի ամբար, 30 հատ վառարան, 40.000 քիլո ալյուր, 30 տակառ ձիթապուղ, 1500 գուլպա, 300 զորքի համազգեստ, 6 ջորի, 3 ձի, 1 դեղարան»[124]։

Զորանոցի գրավումը լուրջ հարված էր թուրքական կառավարությանը և նրա տեղական իշխանություններին։ Դրա համար էլ գազազած թշնամին այդ նույն օրը Ֆրնուզի շրջանի Զուգուր-Հիսար գյուղի չերքեզներին հրաման տվեց կոտորել 20 տուն կազմող հայ բնակիչներին։ Հարյուր զինված հայեր մեկնում են այդ գյուղը՝ կանխելու համար հայերին սպառնացող վտանգը։ Նրանք չերքեզ-

123 Զեյթունցի, Զեյթունի անցյալեն և ներկայեն, էջ 39—40։
124 Նույն տեղում, էջ 42։

ներին համոզում էին, որ հայերին կոտորելու փորձեր չանեն, բայց երբ չերքեզները չուզեցին համոզվել և փորձում էին կոտորել անմեղ հայերին, այն ժամանակ հայերը պահանջեցին հանձնել զենքերը։ Թշնամին չենթարկվեց և հարձակման անցավ։ Հայերը հակահարձակման անցան, սպանեցին 40 հոգի։ 1895 թ. հոկտեմբերի 19-ի (նոյեմբերի 1-ի) կռիվները վերջացան ապստամբների հաղթանակով։ Թշնամու ուժերի մի մասը անձնատուր եղավ և մի զգալի մասն էլ փախավ։

Այդ փախստականները սկսեցին սոսկալի գույներով նկարագրել զեյթունցիների և ֆրնուզցիների գործողությունները։ ԷյՃի օղլի դերեբեյը՝ բաշիբոզուկների գլուխն անցած՝ հարձակվեց Շիվիլիկ կոչված հայկական գյուղի վրա՝ վրիժառության նպատակով։ Հայերը նրան հայտնեցին, որ տերությանը հավատարիմ են և խնդրեցին իրենց չկոտորել։ «Եթե հավատարիմ եք՝ հանձնեցեք ուրեմն զենքերնիդ» ասավ պեյը. — «Ո՛չ, պատասխանեցին նոքա, չենք կռվիր ձեզ հետ, բայց չենք ալ հանձներ զենքերնիս»[125]։

Թշնամին հաշվի չնստեց հայերի այդ առաջարկի հետ և հարձակման անցավ։ Հայերը երեք օր կռվում էին նրա դեմ։ Հարություն քահանան սուրհանդակի միջոցով լուր ուղարկեց Բարթուղիմեոսին՝ օգնության հայցով։ Բարթուղիմեոսը 200 ֆրնուզցիներով, 150 շիվիլիկցիներով և 100 զեյթունցիներով շտապում է կռվի վայրը։ Բայց այդ նույն պահին նա տեղեկացավ, որ Անտրունիի գայմագամության կենտրոնում բանտարկված են 150 հայեր, որոնց մահ էր սպառնում։ Նա մի թուրքի միջոցով նամակ է ուղարկում գայմագամին՝ հայերին անվնաս թողնելու բովանդակությամբ։ Պատասխան չստանալով, Բարթուղիմեոսը 400 քաջերով մեկնում է Անտրուն։ Թշնամին կրակոցներով է դիմավորում հայերին, բայց հայերն իրենց կրակոցներով ընկճում են նրա դիմադրությունը։ Թշնամին բռնեց նահանջի ճանապարհը՝ տալով 40 մարդկանց կորուստ։ 1895 թ. նոյեմբերի 8-ին (20-ին) հայերը գրավեցին Անտրուն և փրկեցին բանտարկված իրենց եղբայրների կյանքը[126]։

Թուրքական կառավարողները գազազած էին զեյթունցիների հաղթանակի հետևանքով։ Նրանք մեծ ուժեր հանեցին ապստամբների դեմ։ Ադանայի կառավարական զորքերի ընդհանուր հրամանատարն իր բանակը հասցրեց Կապան, այրեց 300 տնից բաղկացած գյուղը՝ կողոպտելուց հետո, կոտորեց 150 մարդ, իսկ ժողովրդի մնացած մասը փախավ և ապաստանեց Ֆրնուզում։

Փանոս Քեշիշյանի առաջնորդությամբ 1500 հայեր 1895 թ. նոյեմբերի 19-ին (դեկտեմբերի 1-ին) պետք է մտնեին Կապան՝ Ալի բեկի բանակը կործանելու համար, բայց թշնամին իր զորքերը Սիսնե փոխադրեց։ Դրա համար էլ հայերից միայն 50 հոգի մտան Կապան, սպանեցին 50 մարդ և նույնքան էլ կին ու աղջիկ գերի վերցրին։ Չնայած հայերի հաջողություններին, այնուամենայնիվ, նրանց դրությունը ծանրանում էր։ Անտրունի և Ֆրնուզի շրջանների հայ բնակիչները՝ մոտ 1340 տուն, ապաստանեցին Ֆրնուզում, որոնց հանգիստ չէր տալիս գազազած թշնամին։

1895 թ. դեկտեմբերի 1-ին (13-ին) Ալի բեկի բանակը՝ 30.000 մարդկանցով, երեք ուղղություններով հարձակվեց Ֆրնուզի վրա, որի դեմ կռվում էին 1500 հայեր։ Այդ իսկ պատճառով հայերը հարկադրված եղան դիմելու ինքնապաշտպանության։ Շարժվելով դեպի Զեյթուն, թշնամին ճանապարհին սպանեց 600 և գերի տարավ 400 մարդ։ Կրիտիկական էր Զեյթունի վիճակը։ Նա ուներ 1500 բնակիչ, իսկ նրանում ապաստան գտած հայերի թիվը հասնում էր 1750-ի։ Կերակրել կռվող ուժերին, 3250 մարդկանց և թուրքական գերիներին՝ շատ դժվար էր։

Երբ Ալի բեկի բանակը Ֆրնուզի կողմից էր հարձակվում Զեյթունի վրա, այդ նույն ժամանակ Մուստաֆա Ռիմզի փաշան իր մեծ բանակով անցավ Ջահան գետը, որը գտնվում էր Զեյթունից 5-ժամյա հեռավորության վրա։ Մոտենում էր Զեյթունի բախտը վճռող ժամը։ Ամբողջ ժողովուրդը ոտքի կանգնեց թշնամուն հանդիպելու։ Անտրուն։ Թշնամին կրակոցներով է դիմավորում հայերին, բայց եթե թշնամին ուժեղ էր իր զինված բանակներով, ապա զեյթունցիները՝ բարոյական ուժով։

1895 թ. դեկտեմբերի 13-ին (25-ին), կիրակի օրը, 1500 զեյթունցիներ Սանդուխ կոչված լեռան վրա խրամատվելով, սպասում էին նոր ճակատամարտի, որը տեղի ունեցավ նույն օրը։ Նրանք կռվում էին թշնամու 60.000-անոց ահեղ բանակի դեմ, բայց նրանց ուժերը թուլացան, որի պատճառով խույս տվին ճակատամարտից և անցան դեպի Սուրբ Աստվածածին վանքը։ Լուրջ կորուստ կրեց նաև հակառակորդը։ Նա այդ կռվի դաշտում թողեց 400 զինվոր և մեկ թնդանոթ։ Թուրքական հրոսակները նպատակ էին դրել տակն ու վրա անել Զեյթունը։ Գերի ընկած թուրքական զինվորները կամենում էին այրել Զեյթունը՝ սկսելով այն կառավարական շենքերի

125 Զեյթունցի, Զեյթունի անցյալն և ներկայն, էջ 45։
126 Նույն տեղում, էջ 46—47։

հրդեհով։ Զեյթունցի կանայք կացիններով ու դանակներով սպանեցին զինվորներին և փրկեցին քաղաքը հետագա աղետներից։

1895 թ. դեկտեմբերի 17-ին (19-ին) Մարաշի իշխանությունները պատվիրակներ ուղարկեցին Զեյթուն և պահանջեցին անձնատուր լինել։ Պատվիրակների թվումն էին Պետրոս Սալաթյանը, Հարություն Մուրադյանը, Տիգչեքյանը և Կոստան Տեր-Հովհաննիսյանը։ Զեյթունցիները դրանց մի քանի օր պահեցին բանտում և ապա Աղասու նամակի հետ նրանց ուղարկեցին Մարաշ։ Նամակում ասված է. «Կալևորություն չենք տար ո՛չ ձեզ և ո՛չ ձեր առաքյալներին»։ Փաշան կատաղած խեղճ պատգամավորներուն բանտարկեց, «թե դուք գնացիք, ավելի քաջալերեցիք զեյթունցոց»[127]։

Մուստաֆա Ռեմզի փաշան զեյթունցիներից պատգամավորներ պահանջեց և նրանց հաղորդեց սուլթանի հրամանի մասին ու սպառնալից կերպով ասաց. «Վաղը Զեյթուն պիտի մտնեմ և 15 տարվանե վեր և 60-են վար եղող բոլոր ժողովուրդը սուրի պիտի անցնեմ ըստ բարձրագույն հրամանի... Որպեսզի այս սոսկալի պատուհասեն զերծ մնաք, փութացեք կատարել հետևյալ պահանջները.

—Ա.—Նազարեթ իշխանը (առաջ չավուշ) և հեղափոխական առաքելության բոլոր անդամները պիտի ինծի հանձնեք։

Բ.— Այն զեյթունցիները, որ այդ հեղափոխականաց գործակից ըլլալով կարևոր դեր կատարեցին այս պատերազմին մեջ, նույնպես հանձնեք։

Գ.— Զորանոցը՝ միջի եղած ամեն ռազմամթերքներովը, վանքը և գերի ինկած զորքերը ինծի դարձընեք։

Դ.— Ամեն ունեցածնիդ — զենք, ստացվածք, կահ-կարասիք և անասունները թողնելով մի միայն ձեր կանանց ու զավակաց հետ բանակ գալով անձնատուր ըլլաք»[128]։

Ռեմզի փաշայի պահանջները շատ ծանր էին ու վիրավորական դյուցազնական զեյթունցիների համար։ Նրանք մերժեցին զորոզամիտ փաշայի պահանջները։ «Զեյթունցիների ներկայացուցիչները,— գրում է Սմբատ Բյուրատը,— զորոզ հրամանատարի սպառնալիքներեն վախեցողներ չէին, վարժված էին հաճախ այդպիսի պոռոտ ճառեր լսելուն»[129]։ 1895 թ. դեկտեմբերի 16-ին

127 Զեյթունցի, Զեյթունի անցյալեն և ներկայեն, էջ 58։

128 Նույն տեղում, էջ 59—60։

129 Սմբատ Բյուրատ, Ազատության համար—Զեյթունի վրեժ, Կ. Պոլիս, 1911, էջ 665։

(28-ին) այդ զորոզամիտ փաշան հարձակման անցավ, բայց մեծ կորուստներով ետ մղվեց։ Քսան օր հարձակումներ կազմակերպելով, փաշան ոչ մի առանձին հաջողություն չունեցավ։ Օգտվելով մշուշապատ եղանակից, նա գաղտագողի տեղավորվեց զորանոցի շուրջը գտնվող կառավարական մեծ շենքերի և մզկիթի մեջ։ Նկատելով այդ, զեյթունցիները ներսից կրակ տվին զորանոցը և 400 հոգով անցան Զեյթուն։ Կարծելով, թե հայերը զորանոցումն են, փաշան ինքն էլ կրակ տվեց զորանոցը։ Նա տեսավ, որ անկարող է գրավել Զեյթունը, «հուսակտուր հեռագրեց սուլթան Համիդին, թե 110.000 զորքով անկարելի է գրավել Զեյթունը, եթե 50.000 զորաց բանակ մըն ալ օգնության չի հասնի»[130]։

Սուլթանի հրամանով Ռեմզի փաշան ազատվեց և նրա տեղը զորքերի հրամանատար նշանակվեց Էտհեմ փաշան։ Բայց նա ևս չկարողացավ արդարացնել սուլթանի հույսերը։ Հալեպից եկած այդ փաշան, տեսնելով նաև Ալի բեկի մեծ բանակի ծանր վիճակը, ստիպված եղավ օգնություն խնդրել։

Ապստամբ զեյթունցիները փաստորեն հաղթողի դերում էին։ Նրանք հպարտորեն երգում էին.

Արևն ելավ զեյթունցիներ,
Դեհ, ձի հեծնենք, առնենք զենքեր, դիմենք հառաջ,
Քանի՞ այսպես գլուխ ծռած,
Բռնավորին մենք վիզ պարզած։
. . . . . .
Կեցցե՛ Զեյթուն, ապրի Զեյթուն,
Թող չի տեսնե ըստրկություն,
Քանի ունի մեզ պես որդիք,
Կեցցե՛ Զեյթուն, ապրի Զեյթուն...[131]

Տեսնելով, որ իր բանակներն անկարող են ընկճել զեյթունցիների ըմբոստությունը, թուրքական սուլթանը 1895 թ. դեկտեմբերի 15-ին (27-ին) վեց տերությունների դեսպանների միջամտությունը խնդրեց։ 1896 թ. հունվարի 5-ին (17-ին) թուրքական զինվորը սպիտակ դրոշով մտնում է Զեյթուն՝ իր ձեռքում ունենալով Հալեպի և Մարաշի օտարերկրյա վեց հյուպատոսների դեկտեմբերի 23-ի (1896 թ. հունվարի 4-ի) հեռագիրը։ Զեյթունցիները համա-

130 Զեյթունցի, Զեյթունի անցյալեն և ներկայեն, էջ 60։

131 Նույն տեղում, էջ 80։

ձայնվեցին։ Հյուպատոսները եղան Զեյթունում հունվարի 1-ին (13-ին), բանակցությունները սկսվեցին հունվարի 15-ին (27-ին) և ավարտվեցին հունվարի 28-ին (փետրվարի 9-ին)։

Եվրոպական տերությունների ներկայացուցիչները կռվող կողմերի համար առաջարկեցին նախնական համաձայնության հինգ պայմաններ, որոնք չէին գոհացնում զեյթունցիներին։ Կ. Պոլսի անգլիական դեսպան սըր Ֆ. Քըրտինը նույն թվականի փետրվարի 11-ին Սալսբերիին հաղորդում է թուրքական կառավարության հետ նախապես համաձայնեցրած նախնական հետևյալ պայմանները.

«1. Զեյթունցիք և այն ձորին մեջ բնակվող որևիցե օսմանցիներ պետք է որ հանձնեն իրենց պատերազմական զենքերը։ Անոնց թույլատրված է պահել իրենց զբոսանքի հրացանները, դաշույնը և վեցհարվածյանները։

2. Ընդհանուր ներման շնորհումը։

Հնչակյան ընկերության քանի մը օտարահպատակ անդամները պետք է որ օսմանյան հողեն դուրս քշվին[132]։ Անհատներ, սակայն և այնպես, հասարակ օրինաց առջև ներման արժանացած անհատներու դեմ ունեցած դատերնուն կրնան հետապնդել։

3. Ծտամնաց տրոց շնորհման խնդիրը նկատողության պիտի առնվի և զորանոցը վերաշինելու մասին եղած պահանջի վրա պիտի չպնդվի։ Այս զիջողությունք, սակայն և այնպես, համաձայնության հանգված պայմանագրություններ չեն. սուլթանեն իբրև շնորհ պետք է խնդրվին։

4. Քրիստոնեի մը գայմագամի պաշտոնին ընտրելու խնդիրը պիտի կարգադրվի բարեկարգությանց ծրագրի տրամադրությանց համեմատ։

5. Այն պահանջը, որ փոքրամասնության կողմեն եղած է՝ տաճիկ պահակ զորքերը դուրս հանելու մասին՝ մերժվում է։

Դեսպանները ավելացուցին, որ իրենք այս պայմանները ընդունելի կնկատեն, իրենք անձամբ անկարող են զայնս երաշխավորելու, բայց այդ մասին Դռան մի հայտարարությունը պիտի պահանջեն։

Ներկայիս Զեյթունի մեջ ապստամբողներու ապագա ապահովության համար տաճիկ հրամանատարի կողմեն կարգադրություն մը առաջարկված ըլլալով, տաճիկ հրամանատարին առ այս ունեցած պայմաններուն մասին համաձայնության մը գալու, և անոր գործադրությանը վրա հսկելու համար պաշտոն ստացած են»[133]։

Այսպիսով, թուրքական կառավարությունը իր այս պահանջների հետ միասին պնդում էր, որ ապստամբության ղեկավարները իրեն հանձնվեն՝ դատի տալու նպատակով։ Բայց զեյթունցիները մերժեցին նրա այդ պահանջը։

Անգլիական «Daily news» թերթի հաղորդագրության մեջ նշված է, որ «մի նոր զեկուցագրի համաձայն, Մարաշի իշխանությունը մտադիր է պատգամավորություն ուղարկել Զեյթուն՝ բաղկացած 20 նշանավոր հայերից, տեղական կղերի հետ միասին, որպեսզի կարգադրեն հաշտության պայմաններ»[134]։

Զեյթունցիների համար թուրքական կառավարության այդ դիտավորությունը հասկանալի էր։ Նրանք քաջ կերպով հասկանում էին, թե թուրքական կառավարությունն ինչպիսի հայերի կուղարկի՝ բանակցությունների համար։ Նրանք հաստատապես մնում էին իրենց դիրքերում։

Ռուսական «Биржавая ведомсстн» թերթը Զեյթունի ինքնապաշտպանության մասին գրում է. «Զեյթունը անառիկ է։ Նա Փոքր Ասիայի Զերնոգորիան է։ Միայն սովով կարելի է նրան անձնատուր անել, սակայն զեյթունցիները վեց ամսվա պաշար ունեն։ Հայերի դրությունը շատ բավարար է, իսկ թուրք զինվորներինը՝ անմխիթարական է, և օգնություն չեն ստանում ոչ մի կողմից։ Թուրքական կառավարության համար միայն մի ելք է մնում՝ հաշտություն կայացնել զեյթունցիների հետ...»[135]։

Նույն թերթը նշում է, որ «Զեյթունի ապստամբների հետ սկսած բանակցությունները նպաստավոր հետևանք ունեցան»[136]։

«Զեյթունի դեպքերը» վերնագրով հոդվածում «Մշակ»-ը գրում է. «Այժմ, երբ Զեյթունի խնդիրը վերջանալու վրա է, երբ թուրքաց կառավարությունը համաձայնել է բանակցություններ անել, հաշտությամբ վերջացնելու գործը՝ սկսում են երևան գալ մանրամասնություններ այն դեպքերի մասին, որ տեղի են ունեցել Զեյթունում»[137]։

---

132 «Կառավարությունը շատ ջանացած է, որ անոնք իրեն հանձնվին, բայց զեյթունցիք բացե ի բաց մերժած են, և անոնց ապահովության վրա պնդած»։— Ծանոթությունը խմբագրինն է։

133 Կ. Թումայան, Պատմ. արևել. խնդրո և առաջնորդ հայկական հարցի, հատ. բ, Լոնդոն, 1905, էջ 383—384։

134 «Մշակ», № 144, 1895։

135 «Մշակ» № 14, 1896։

136 Նույն տեղում։

137 Նույն տեղում։

Այսպիսով, հաղթող էին զեյթունցիները։ Նրանք պետք է թելադրեին իրենց կամքը և իրոք թելադրեցին։ Հաշտության բանակցությունների ընթացքում նրանք ներկայացրին 15 կետից բաղկացած իրենց հետևյալ պահանջները.

«1. Զեյթունցիները անպայման կերպով կմերժեն հանձնել օսմանյան կառավարության իրենց նորեկ պարագլուխները։

2. Զեյթունի «նորեկ» վեց պատգամավորները պիտի ձգեն օսմանյան հողը։ Բ. Դուռը երաշխավորություն կուտա վեց պետության Պոլսո ներկայացուցիչներուն, որ այդ «նորեկներուն» մեկնումը մինչև Եվրոպա պիտի կատարվի ապահով և անվնաս կերպով և հարկ եղած պատվով, օսմանյան տերության ծախսով։

3. Բանակցող հյուպատոսներու միջոցով դեսպանները երաշխավորություն կուտան վեց «նորեկ» պարագլուխներուն հոդ. 2-րդի ճշտիվ գործադրությանը, նույն եղանակով՝ որպես կկատարվի Եվրոպական հպատակներու և հյուպատոսներու նկատմամբ։

4. Կատարել ամբողջական ներում ոչ միայն զեյթունցիներուն, այլև այնտեղ ապաստանած գյուղացիներուն, ճամբորդներուն և հայ հրոսակային խմբերուն։

5. Պիտի հաստատվի մի քրիստոնյա կառավարիչ, որ պիտի ընտրվի Եվրոպական պետություններու հովանավորությամբ։

6. Զեյթունի ոստիկանները, հարկահանները, զինվորները և կառավարական պաշտոնյաները պիտի ընտրվին և կազմվին նույնիսկ զեյթունցիներեն։

7. Զեյթունցիք չպիտի վճարեն հետամնաց տուրքերը (պագիե), և հինգ տարվա պայմանաժամով տուրք վճարելե ազատ պիտի լինին։

8. Հաստատումն հարկերու համեմատական դրության, յուրաքանչյուրի կարողության համեմատ։

9. Զեյթունցիներուն կյանքը, ինչքը, պատիվը և կրոնական ապատությունը կապահովվի և կերաշխավորվի Եվրոպական պետություններու կողմեն։

10. Զեյթուն ապաստանած բոլոր հայ գյուղացիներու, ինչպես և Թուրքիո այլևայլ վայրերեն եկած և այնտեղ գումարված բոլոր հայ խումբերու և անհատներու ապահով և անվնաս վերադարձը իրենց տեղերը պիտի կատարվի բանակցող հյուպատոսներու անմիջական հսկողության տակ։

11. Զեյթունցիներուն ձեռքով զորանոցեն գրավված պատերազմական զենքերու (մարթիններու և 2 թնդանոթներու) հանձնումը օսմանյան կառավարության՝ այն պայմանով սակայն, որ Զեյթունի շրջակա գավառներու ամեն թուրք և չերքեզ գյուղացիներեն ալ նույնպես վերցվին նույնօրինակ զենքերը։ Հայերունցիներուն պիտի մնան իրենց սովորական զենքերը։

12. Համաձայն զեյթունցիներու մերժման՝ ասոնք պիտի չվերաշինեն այրված զորանոցը։ Այդ վերաշինությունը կվերաբերի օսմանյան կառավարության։

13. Օսմանյան բանակը պիտի ձգե Զեյթունի գավառակը և հեռանա, միայն մի գունդ զինվոր պիտի մնա։ Այս գունդը որևէ իրավունք չունի միջամտելու Զեյթունի բոլոր ներքին գործերուն և անոր խաղաղության պահպանման։

14. Եվրոպական բանակցող հյուպատոսները Զեյթունեն պիտի չմեկնին մինչև ներկա պայմանագրի դրությունները անթերի գործադրությունը։

15. Եվրոպական պետությունները Մարաշի մեջ հյուպատոսներ պիտի հաստատեն։ Անոնց պաշտոնը պիտի լինի հսկել Զեյթունի նոր ռեժիմի պահպանությունը, մշտական գործադրությունը և իրադրությունը[138]։

Ինչպես տեսնում ենք, հաշտության զեյթունցիների պահանջները կազմված էին ռազմադաշտում փառավոր հաղթանակ տարած զորավարի հպարտ ու համարձակ ոճով։

Թուրքական կառավարությունը մտադիր էր Զեյթունի կառավարիչ նշանակել մի հայ կաթոլիկ, որը հավանության արժանացավ վեց տերությունների կողմից, մի մարդ, որը առանձին ոչ մի դեր չէր խաղացել հայ ժողովրդի ազատագրության համար մղված պայքարի գործում և ամենայն հավանությամբ ուներ թուրքական օրիենտացիա։ «Դեսպանները մտադիր չեն հակառակել,— գրում է «Մշակ»-ի թղթակիցը,— եթե Դուռը Զեյթունի կառավարիչ նշանակե Պետրոս էֆենդի Նաշյան, փաստաբան։ Այս մարդը բավական լավ դաստիարակություն առած է Եվրոպա, թեպետ ազգային գործերե հեռու գտնված է, սակայն մինչև հիմա ազգին դեմ հոռի վարմունք մը ունեցած չէ, եթե չարիք մը հասցուցած չէ, բարիք մըն ալ գործած չէ»[139]։

---

138 Կ. Թումայան, Պատմ. արևել. խնդրո և առաջնորդ հայկական հարցի, հատ. բ, էջ 580—582։ Կամ, տես՝ Զեյթունցի, Զեյթունի անցյալեն և ներկայեն, էջ 71—73։

139 «Մշակ», № 52, 1896։

Չնայած զեյթունցիների հերոսամարտերի հաջող ընթացքին, այնուամենայնիվ, բանակցությունները ավարտվեցին երկու կողմերի փոխադարձ զիջումներով։ Ըստ դաշնագրության, զեյթունցիք պետք է հանձնեին իրենց գրաված զենքերը, թնդանոթները և հրաժարվեին ապստամբելուց, իսկ թուրքական կառավարությունը զեյթունցիներին պետք է տար մի քրիստոնյա կառավարիչ։ Մյուս պաշտոնյաները պետք է ընտրվեին զեյթունցիներից, կառավարությունը պետք է հինգ տարի հրաժարվեր հարկեր գանձելուց, հնչակյան վեց պարագլուխները հյուպատոսների հովանավորությամբ պետք է կառավարության ծախսերով մեկնեին Եվրոպա։ Զեյթունի կառավարիչ նշանակվեց հույն Վասիլաքի էֆենդին[140]։ Հաշտությունից հետո զեյթունցիները առժամանակ զերծ մնացին կոտորածներից և հափշտակումներից։

Եվրոպական հյուպատոսները իրականում արջի ծառայություն մատուցեցին զեյթունցիներին։ Նրանց միջամտությունն օգտակար եղավ սուլթանական կառավարությանը։ Ֆրանսիական դեսպանի տեղակալը իր կառավարությանը գրում էր, թե «այս մեծ ծառայություն էր, որ պետությունները մատուցեցին տուլթանին»[141]։ Հալեպի նահանգում, երբ թուրքական հրոսակները կոտորում էին հայերին, եվրոպական տերությունները, նրանց դեսպաններն ու հյուպատոսները ոչ մի օգնության ձեռք չմեկնեցին տառապյալ հայերին։ Եվրոպական տերությունները, գրում էր Լեոն, կարծես սուլթանին մանդատ էին տվել ջարդելու հայերին որքան կարելի է շատ։ «Թուրքական նացիոնալիզմին տրված էր վեց տերությունների մանդատ՝ այդ իսկ բովանդակությամբ»[142]։

ՎԱՆԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1896 Թ. ՀՈՒՆԻՍԻՆ

Չկար հայկական նահանգ, գավառ կամ քաղաք, որոնք ենթակա չլինեին ջարդերի, թալանի ու ավերածության։ Հայ ժողովուրդը ապրում էր ծանր ողբերգություն։

«Ի՞նչ կընենք» վերնագրով առաջնորդողում նկարագրելով հայ

140 Տե՛ս Հ. Անառյան, Տաճկահայոց հարցի պատմությունը, Ն. Նախիջևան, 1915, էջ 39։

141 Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հատ. Ա., էջ 192։

142 Նույն տեղում։

ժողովրդի համար ստեղծված մահաբեր դրությունը, և անարգանքի սյունին գամելով Խորեն Աշրգյանին ու հայ մեծամեծ էֆենդիներին՝ արյունոտ սուլթանին արևշատություն ցանկանալու համար, «Արմենիա»-ն գրում է. «Զրպարտություն, մատնություն, հալածանք, աքսոր, բանտ, շղթա, մահ ու գերեզման. ահա բարեխորհրդումք բարեխնամ թուրք կառավարության, դժոխային բռնապետության... Սար ու ձոր, բանտեր ու բերդեր, ծանոթ ու անծանոթ վայրեր կծածկվին ծանոթ ու անծանոթ հայ նահատակաց գերեզմաններով... Վասպուրական, Տարոն, Ալաշկերտ, Կարին, Սեբաստիա, Կիլիկիա, ո՞ր քաղաք կամ գյուղ նահատակաց գերեզման չկա, մեզ և մեր սերնդոց համար վրեժխնդրության ուխտատեղ չկա»[143]։

Վանը առայժմ դուրս էր մնում կոտորածներից, որը սուլթանական կառավարության ջարդարարական ձեռնարկումներից պրծնել չէր կարող։ Սուլթանական իշխանությունները անհանդուրժելի էին համարում ռուսական սահմանում գտնվող էրզրումում և Վանում հայերի կենտրոնացումը ու նրանց հայկական կեցվածքը։ Կոտորածների հերթը հասել էր Վան-Վասպուրականին։

Սպառնացող վտանգի օրերին Սալմաստից Վան է վերադառնում Մ. Ավետիսյանը (Թերլեմեզյանը) և դաշնակցական Պետության հնչակյան պրոպագանդիստ Մարտիկի հետ միասին ձեռնամուխ է լինում քաղաքի ինքնապաշտպանության կազմակերպմանը։ «Զոհը Սաբեկա ծառեն պետք է կախվի»— ասում էր Ավետիսյանը։ Նա ժողովրդին համոզում ու նախազգուշացնում էր, որ հանկարծակիի չգա, թուրքական մոլեռանդության պրովոկացիային չենթարկվի և անտեղի զոհողությունների ու արյունհեղությունների տեղիք չտա։

1896 թ. գարնանը Վան է հասնում, այսպես կոչված, «բարեկարգիչ հանձնաժողովի բարձր կոմիտեության» կողմից իբրև «քննիչ» ուղարկված Ֆերիտ Սաատետտին փաշան՝ կառավարության հրամանը գործի դնելու պատրվակով։ Իրականում նա ուղարկված էր հայկական ջարդեր կազմակերպելու և ուղղություն տալու համար։ Տեղ հասնելուն պես նա կազմակերպեց քրդական վերնախավերին։

Նախօրոք հասկանալով սուլթանական կառավարության դիտավորությունները, հայերը անակնկալի չեկան և, ընդհակառակը,

143 «Արմենիա», № 62, մարտ 25 (13), 1893։

խնամքով նախապատրաստվում էին հակահարվածի։ Մ. Ավետիսյանին հաջողվում է հանգանակությամբ ձեռք բերել 600 թուրքական ոսկի՝ Ներսեսին (Գրիգոր Շիկահերին) Պարսկաստան գործուղելու և այնտեղից զենք ձեռք բերելու համար։ Ներսեսին ընկերակցում էին մարտիկներ, որոնց թվում՝ Արմենակ Եկարյանը։ Սակայն Ավետիսյանի այդ խրախուսելի նախաձեռնությունը ձախողվում է։ Լրտեսական օրգանների հաղորդած տեղեկությունների հիման վրա պարսկական իշխանությունները նրանց ձերբակալում և ուղարկում են Թավրիզ։ Մինչև սրանց արձակվելը, արդեն 1896 թ. հունիսի 3-ին Վանում սկսվում են ուժեղ կռիվներ։

Վանի շուրջը կենտրոնացված էին համիդիեականներ, որոնց և աղ փոխադրող քրդերի միջև տեղի ունեցած շինծու ընդհարումը առիթ եղավ հայերի դեմ կատաղի գրոհներ կազմակերպելու համար։ Թուրքական հրոսակները նախապես հարձակվեցին հայկական հեռավոր թաղամասերի վրա և կոտորեցին ավելի քան 800 մարդ։ Հաջորդ օրը թշնամին մոտեցավ հայկական մյուս թաղերին, որոնց կատաղի գրոհներին հայերը դիմադրում էին արիաբար։

Վանի ինքնապաշտպանության համար կազմակերպված էին 35 զինված խմբեր՝ 1500 մարդկանցով, որոնց գլխավորում էին Մ. Ավետիսյանը, Պետոն, Մարտիկը և ուրիշներ։ Նրանք կռվում էին հերոսաբար՝ լուրջ կորուստներ պատճառելով թշնամուն։

Հունիսի 5-ին (17-ին) թուրքական հրոսակներին օգնության եկան քրդերը։ Նշանավոր Շաքիր աղայի ավազակախումբը հարձակվեց հայերի գրաված դիրքերի վրա, բայց 90 մարդկանց կորուստով ետ նահանջեց։ Այդ վճռական ժամին թուրքերին օգնության հասան համիդիեականները՝ 15.000 հոգով։ Հայերը, առանց խուճապի մատնվելու, հաստատ մնում են իրենց դիրքերում։

Անգլիացի հյուպատոս Ջեյմս Ուիլյամսի խորհրդով թշնամին սկսեց հայերի դիրքերը ռմբակոծել թուրքական թնդանոթներով։ Բայց այս անգամ էլ ջախջախվեց՝ կռվի դաշտում թողնելով թնդանոթները, ետ նահ նջեց։ Հայերին ընկճելու համար նա փորձի դրեց կրակի մեծ թնդանոթները։

Այսպիսով, քաղաքի ինքնապաշտպանության գլուխ կանգնած հայերը իրենց փոքրաթիվ մարդկանցով, վեց օր զինված դիմադրելով, կարողացան Վանը փրկել ջարդերից։ Ցերիտ Սաատետտին փաշան չէր կարող հանգիստ լինել։ Նա հայերի դեմ հանեց նորանոր ուժեր։ Շարունակել դիմադրությունը անհնարին էր։ Սուլթանական կառավարությունը պահանջեց, որ ինքնապաշտպանության գլուխ կանգնած ղեկավար անձինք հանձնվեն իշխանությանը։ Այդ բանին էր ձգտում անգլիական հյուպատոսը, որը հանցավոր դեր խաղաց և ձախողեց հայերի ինքնապաշտպանությունը։

Ստանձնելով միջնորդի դեր, Ուիլյամսը պահանջեց, որ ինքնապաշտպանության ղեկավարները անձնատուր լինեն իշխանությանը՝ իր երաշխավորությամբ նրանց արտասահման ուղարկելու պայմանով և նախապես իրենց զենքերը հյուպատոսարան հանձնելով։ «Հայերը պատասխանեցին պարզապես,— գրում է Ա. Եկարյանը,— որ իրենք ապստամբներ չեն, այլ սոսկ ինքնապաշտպաններ...»[144]։

Մինչև ատամները զինված թուրք կանոնավոր զորքերի, մոլեռանդ ամբոխի և համիդիեական քրդական զորագնդերի դեմ 1000—1500 մարդկանցով կռվելը անօգուտ էր։ Ուստի հայերը համաձայնվեցին բանակցությունների առաջարկին՝ պահանջելով, որ այդ գործին մասնակից լինեն ռուսական ու ֆրանսիական հյուպատոսները։ Վերջիններս հրաժարվեցին, որովհետև իրենց կառավարությունները հովանավորում էին սուլթանին։

Հայերը հանձն առան զինաթափվել և հեռանալ քաղաքից։ Ինքնապաշտպանության գլուխ կանգնածները 200 զինված և 600 անզեն մարդկանցով բարձրանում են լեռները՝ Պարսկաստան գնալու համար։ «...Դիմելով դեպի Պարսկաստան,— գրում է Հ. Աճառյանը,— սահմանի մոտ պաշարվում են 8—10.000 համիդիե քրդերով և կանոնավոր զորքերով, 10—12 օր անքուն կռվում են և վերջապես ռազմամթերքը սպառվելով՝ բոլորն էլ այնտեղ նահատակվում են, 30—35 հոգի միայն փախչելով ազատվում են»[145]։

Չնայած զինված դիմադրության հաջող կազմակերպմանը, այնուամենայնիվ, հայերը տվին 700 մարդկային զոհ։ Վանը և նրա գավառները ջարդերից զերծ մնացին։ Ծանր եղավ հայերի կորուստը հատկապես Պարսկաստանի սահմաններում տեղի ունեցած ուժերի անհավասար մարտերում։ «Եղած կորուստը,— գրում է Ա. Եկարյանը,— անփոխարինելի էր... Մտավորականության այս անհետացումը ավելի տուր արժեց Վասպուրականին և բոլոր հայության համար, քան բուն իսկ Վանի կոտորածը»[146]։

Վան-Վասպուրականի կոտորածների հանցավորը սուլթանական կառավարությունն էր։ Աղբակը և նրա նման գավառները հա-

---

144 Հուշեր Արմենակ Եկարյանի, Կահիրե, 1947, էջ 101։

145 Հ. Աճառյան, Տաճկահայոց հարցի պատմությունը, էջ 41։

146 Հուշեր Արմենակ Եկարյանի էջ 108—109։

յաբնակ էին։ Բայց թուրքական իշխանությունները ամայացրին։ Աղբակը Վանի նահանգի վրա էր ու նրան ենթակա, Պարսկաստանի սահմանագլխին։ Հռչակավոր ավազակապետ Շարաֆ բեկը իր խանասորով այս սահմանագլխումն էր։ Նրա հովանավորության տակ էր Ս. Բարթուղիմեոսի վանքը։ Աղբակում ամբողջապես բնակվում էին հայերը, որոնք քրդերի հետ ապրում էին շատ համերաշխ։ Բայց 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո, թուրքական կառավարությունը հայերին համարեց Ռուսաստանի հենարանը իր երկրում, կրոնական հողի վրա սկսեց գրգռել քրդերին հայերի դեմ՝ խափանելու համար նրանց բարեկամական ու մտերմական նորմալ կյանքը։

Պատերազմից հետո սուլթանական կառավարությունը Հայկական հարցը դիտեց Ռուսաստանի հետ նոր պատերազմի շարժառիթ։ Նրա հաշիվները, գրում է «Արմենիա»-ի հրապարակախոս Վահեն՝ «...շատ հասարակ ու պարզ էին։ Նախ՝ Տաճկահայաստանի մեջ բնակող տարրերը հայերն էին ու քրդերը, որոնք կարող էին մի օր միմյանց հետ համերաշխության գալ և իր դեմ դժվարություններ ստեղծել. երկրորդ՝ հայ տարրը լինելով քրիստոնյա, ապագա արևելյան պատերազմի մը դուռը կարող էր բանալ։ Դորա համար թուրք կառավարությունը ամեն ջանք ի գործ դրավ քուրդերի միջոցով հայերը հալածել այդ հայաբնակ գավառների մեջ, և մեր ազատագրումին աշխատող անհմուտ և անփորձ գործիչների տաքտիքը ևս մեծապես նպաստեց սուլթանի ծրագրին... Աղբակի մեջ 1877 են ի վեր այն չափ հայ արյուն թափվեցավ, որ անոր ամեն մի թիզ հողը հայ արյունով ներկված է։ Դեռ 10 տարի հազիվ անցած է, որ գործվեցավ ամենամեծ և ահռելի ոճիրը, վանեցի «հազար» կոտորածը (Ավետիսյանի խումբ), որի անդամներ Զուխ Կետուկեն սկսած մինչև Խաչ Կետուկ՝ պարսկական սահմանագլուխ, մինչև Սալմաստի հողը դիակներով ծածկեցին»[147]։

«Տարաբաղդ Զավակ» անունով հրապարակախոսը «Կոտորած» վերնագրով «Արմենիա»-ի էջերում զետեղված հոդվածում Վան-Վասպուրականում տեղի ունեցած հայկական կոտորածների մասին գրում է. «Վան ևս կոտորվեցավ, Վան՝ հայության հույսը, Վան՝ Հայաստանի լույսը ճառագայթ. դրախտի աշխարհն ավերակ դարձավ»[148]։ Նշավակելով եվրոպական մեծ տերություններին և, մասնավորապես, Վանի անգլիական հյուպատոսին՝ հայերի նկատմամբ նրա անբարյացակամության համար, նույն հեղինակը գրում է. «Ահա՝ դաշնագիր, ահա՝ պայման, ահա՝ 61-րդ հոդված, ահա անգլիական հյուպատոս, ահա քաղաքակրթություն...»[149]։

«Արմենիա»-ի նույն համարում վերեղված «Ո՞վ է կոտորածների հեղինակը» իր հոդվածում Մ. Փորթուգալյանը անարգանքի սյունին գամելով սուլթանական կառավարությանը՝ հայկական կոտորածների կազմակերպման համար, միաժամանակ նախատում է անգլիական իշխանություններին, որոնք կամենում էին սուլթանի վրայից ջնջել հանցագործության հետքերն ու պատասխանատվությունը։ «Վերջապես,— գրում է նա,— քննիչի պաշտոնոք Վան ղրկվեցավ սուլթանի թիկնապահներեն Ֆերիդ Սաատետտին փաշան, որ ամեն ջանք ի գործ դրավ քուրդերը հայերի դեմ գրգռելու և շնչին պատրվակներե օգուտ քաղելով, Վանի մեջ այս կոտորած մ'անելու համար։ Հիմա կը հարցնենք, թե ո՞վ է կոտորածների բուն հեղինակը... Արդյոք լորդ Սալզպերին տակավին երես ունի՞ բազմության առջև ներկայանալու և հայտարարելու իր ճառերի մեջ թե այդ կոտորածներ սուլթանի գիտակցությամբը եղած չեն»[150]։

Անգլիայում պահպանողականների կառավարությունը փաղաքշում էր սուլթան Համիդին՝ նրան ռուսական ազդեցությունից ազատելու և Մեծ Բրիտանիայի օրհենտացիային ենթարկելու, իր զավթողական նպատակները իրագործելու համար։

Գեներալ Հ. Լազարյանցին ուղարկած իր նամակում վանեցի Սաքո Թարգուլյանը, որպես տեղի ունեցած դեպքերի ականատես, հաստատում է, որ Վան-Վասպուրականի հայ բնակչությունը մեծ կորուստներ չէր կրի, եթե չլիներ անգլիական հյուպատոս Ջեյմս Ուիլյամսի դավաճանությունը։ «Այսպես,— գրում է նա,— 2 օրվա մեջ 500—600 տուն կողոպտեցին, 850 նշանավոր տներ այրեցին, և 10 օրվա մեջ քաղաքում և նահանգում մոտ 20.000 կոտորեցին շնորհիվ անգլիացոց հյուպատոսի կեղծ պաշտպանության»[151]։

Վանում հայերի զինված դիմադրության հետևանքով քաղաքի հայ բնակիչները համեմատաբար քիչ զոհեր ունեցան։ Բայց դրու-

147 «Արմենիա», № 19, փետրվար 6 (հունվար 24), 1907։

148 «Արմենիա», օգոստոս 12 (հուլիս 31), 1896։

149 «Արմենիա», օգոստոս 12 (հուլիս 31), 1896։

150 Նույն տեղում։

151 ՀՍՍՀ ՊԿՊԱ Հ. Լազարյանցի ֆ. № 42, գործ № 11, թերթ 83։

թյունը շատ ծանր եղավ գավառահայության համար։ Թուրքական ու քրդական ջարդարարները անասելի գազանություններ գործադրեցին անմեղ ու անպաշտպան հայ բնակիչների նկատմամբ։ «Բավական է,— գրում է Ա.—Դո-ն,— որ մարդ ոտք դնի այդ երկրի ներսը, ականատես ու հանդիսատես լինի սոսկալի ամայացումներին, անձամբ լսի ականատեսներից սոսկալի նկարագրություններն իրենց մանրամասնություններով, որ միանգամայն համոզվի, թե ինչպես հայ ժողովուրդը և հայաբնակ շրջանները մի որոշ ծրագրով ենթարկվել են ավերիչ գործողությունների և ամայացել», որ «այդ երկրում չկա մի քար, մի անկյուն, որ չհիշեցներ արյունոտ մի անցք, բարբարոս մի գործողություն հայ ժողովրդի նկատմամբ»[152]։

Արճեշի գավառում թուրքական ու քրդական դահիճները կոտորում էին անմեղ բնակիչներին՝ մանուկներից սկսած մինչև ծերունիները։ «Այդ կոտորածը,— գրում է Ա.-Դո-ն,— որպես մի անվերջ հոդմ անցել է ամբողջ գավառի վրայով և չորս կողմը մահ տարածել։ Այս գավառի շատ գյուղերը, իբրև ավերակ կույտեր, չինգիզխանյան օրերի ողբն են ողբում», որ «Արճեշի մեջ բնավ խտրություն չեղավ մարդու կամ կնոջ, տղայի կամ ծերունու. ամենքն ալ սպանվեցան, իսկ մյուս գավառաց ու գյուղերու մեջ արուներ սպանելով, գեղեցկադեմ կիներ ու աղջիկներ առևանգվեցան»[153]։

Գավառի ականատես գյուղացիներից մեկը վկայում է, որ «Աջի գյուղացի Նադր օղլի Ալի պեյ անունով մի քուրդ Արճեշի Դանձակ գյուղին մեջ 20-ի չափ մանուկներ ու պառավ կիներ լցրեց հորի մը մեջ և անոնց քարերով ծածկեց։ Կենդանի թաղուծներու այդ գերեզմանոցեն երեք օր աղեկտուր ձայներ կլսվեին և հոգևարքի բառաչներ կելնեին։ Դարձյալ նույն գյուղի բնակիչներեն տասնյակներով իրարու պարանոցեն կապելով նշանառությամբ ամենքն ալ մի առ մի սպանեցին։ Մանկամարդ կիներ ու աղջիկներ արևու առաջ կբռնաբարվեին»[154]։

Այս և հազարավոր նման փաստերի հիման վրա Հնչակյան կուսակցության անդամ Փարամազը (ռուսահպատակ) թուրքական դատարանի առաջ համարձակորեն հայտարարեց. «Պր. նախագահ, վերջին չորս տարվան ընթացքին կոտորված են 175 հազարեն ավելի հայեր, կողոպտված են 80 հազարեն ավելի ընտանիքներ, կրակի տրված են 250 գյուղեր։ Ասոնք բոլորը եղած են սուլթանին կողմե նշանակված երեք բարձր պաշտոնյաներու կողմե, որոնց անուններն են՝ Սաատեդդին, Զեքի և Բահրի փաշաները, Վանի բարձրաստիճան պաշտոնյա Ղալիպ փաշան նախ հարուստ հայերեն 200 ընտանիքներ իր տունը կը կանչեր և ինչքերը գրավելեն ետք կը սպաներ զանոնք։ Արճեշի մեջ 450 հոգի եկեղեցիի մեջ ոչխարի պես մորթեցին։ Ալճավազի մյուտիրը 600 անձ կենդանի թաղել տվավ հորի մը մեջ»[155]։

Այսպիսով, հայկական ջարդերը կազմակերպված ու թելադրված էին սուլթանական կառավարության կողմից։ Վան-Վասպուրականի հայ ժողովուրդը մշակեց սուլթանական բռնապետության դեմ ուղղված ազգային-ազատագրական պայքարի իր տակտիկան՝ զինված ինքնապաշտպանությունը։ Բայց, եթե պայքարի այդ ձևը 1895—1896 թվականներին հասցրեց զեյթունցիների հաղթանակին, ապա Վանում այն չունեցավ իր դրական արդյունքը, որի հանցավորն էր անգլիական հյուպատոսը։ Այնուամենայնիվ, Վանի զինված ինքնապաշտպանությունը 1896 թվականին նշանակալից սվանդ է հայ ժողովրդի պատմության նորագույն ժամանակաշրջանի ազգային-ազատագրական պայքարի տարեգրության մեջ, նշանակալից դաս հանդիսացավ 1915 թ. ապրիլ-մայիսի Վանի գոյամարտերի համար։

* * *

1896 թվականի օգոստոսի 14-ին, եվրոպական տերությունների ուշադրությունը Հայկական հարցի շուրջը բևեռելու նպատակադրմամբ, մի քանի տասնյակ դաշնակցականներ օսմանյան բանկի գրավման անհաջող փորձ կատարեցին, որը առիթ ծառայեց սուլթանին, սրատելու ավելի քան 6000 հայ։

Ուշագրավ է հետագայում «Երիտասարդ Հայաստան» հնչակյան թերթի էջերում տպագրված «Սուլթանի լրտեսները» վերնագիրը կրող հոդվածը։ Այդ լրտեսներից աչքի ընկնող և սուլթան Համիդի աջ ձեռքը հանդիսացողը Զիա-բեկն էր։ Նշված թերթի աշխատակիցներից մեկի հետ խոսելիս նա ասել է. «Այո՛, ես եմ Զիա պեյը, սուլթանի լրտեսապետը, գողը, դավադիրը և անպատիվ

152 Ա.-Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 302։
153 Նույն տեղում։
154 Նույն տեղում, էջ 314։

155 «Պատմություն Ս.—Դ. Հնչակյան կուսակցության», էջ 199։

մարդը։ Ես հիմար մըն էի, անխիղճ և անսիրտ, և ըրած եմ շատ բաներ, որ խղճի տեր մարդ մը չէր կրնար ընել։ Սակայն ես մեղադրելի՞ եմ,— ո՛չ, վասնզի աչքս այդ մթնոլորտին մեջ բացած եմ։ Մանկության հասակես ի վեր ականատես եղած եմ մեկի դավադրության՝ մյուսի դեմ։ Դրամաշորթություն, անխղճություն տեսա և ապրեցա այդ կյանքը, հետևեցա ուրիշներու օրինակին՝ իմ անձնական շահերու, իմ բարձրանալու համար։ Աննշան թաթար մըն էի և Կ. Պոլսո ոստիկանապետին տան բարձր պաշտոնին հասա, անկե փոխադրվեցա Ելլտրզ Քեոշկ՝ կառավարության գործերով պարապելու համար»[156]։

Զիա-բեկը ճիշտ է նշում, որ սուլթանի պետականությունն էր հանցավորը, նրա կառավարման սիստեմն էր ստեղծել մի այդպիսի դժոխային կարգ Թուրքիայում։

«Հանցավորը ոչ թե ես եմ,—ասում է նա,— այլ սիստեմն էր։

Աբդուլ Համիդը կսիրեր շրջապատվիլ անպարկեշտ պաշտոնյաներով, որոնք շատ լավ կհարմարվեին իրեն։

Սուլթան Համիդը խելացի մարդ է, սակայն կասկածոտ, անձնապաշտ, անխիղճ և կաշառակեր։ Իր դեմքը պատկառելի է, բայց վախկոտությունը և սարսափը միշտ իր աչքերուն մեջ է։ Ամենահանդուգն մարդն անգամ կսարսափի, երբ կտեսնե որ փաթիշահը՝ մեջքը ծռած, դողդոջուն և ահաբեկ նայվածքով կանցնի իր քովեն»[157]։

Սուլթանի այս լրտեսի խոսակցությունների մեջ շատ ուսանելի բաներ կան։ Նա ցույց է տալիս, որ հայերի մասսայական կոտորածները տեղի են ունեցել սուլթան Համիդի թելադրանքով՝ նրան շրջապատող պալատական բարձրաստիճան պաշտոնյաների գործոն մասնակցությամբ։

«Թե՛ պալատի, և թե՛ կայսրության բոլոր կողմերը,— ասում է նա,— ինչ-որ պատահած է՝ սուլթանի հրամանով եղած է։ Անշուշտ զինք շրջապատող նախարարները մեղսակիցներ էին։ Մեծ Եպարգոս Ֆերիք փաշան, Սերասքեր Ռեմզի փաշան, Ֆեհիմ փաշա և Իզզեթ փաշա... ձեռք ձեռքի տված միասին ծրագրեցին և գործադրեցին ոճիրներն ու կոտորածները... Հայկական կոտորածները, կանխամտածված, դավադրված և գործադրված են պաշտոնական պաշտոնյաներու կողմեն Ապտուլ Համիդի հանձնարարությամբ, որը առիթ մը եղավ Նազըմ և Իզզեթ փաշաներու սահագին հարստություն դիզելուն»[158]։

Զիա բեկը վկայում է, որ սուլթանի լրտեսական հիմնարկությունները կեղծ դավադրություններ էին կազմակերպում և դրանք դիտում էին որպես հայերի կողմից կազմակերպված ապստամբություններ։ Այդ լրտեսական օրգանները խորամանկորեն ու ճարպկությամբ իրենց ցանցի մեջ էին ներքաշել հնչակյան ու դաշնակցական մի քանի գործիչների։

Այսպիսով, սրի քաշվեցին ավելի քան 300.000 հայ։ Բայց վշտերով լի և մահացու ցավերով տառապող հայ ժողովուրդը, այնուամենայնիվ, բոլորովին չկորցրեց իր արիությունը, իր հավատը՝ գալիք նոր, լավ ապագայի, իր սկսած արդար գործի հաղթանակի անխուսափելիության նկատմամբ։

Սուլթան Համիդի կառավարության կողմից հայկական ջարդերի նկարագրությանն է նվիրված արևմտահայ անվանի գրող Դ. Վարուժանի (1894—1915) «Ջարդը» աշխատությունը։ Իր այդ և ուրիշ աշխատություններում Վարուժանը այն միտքն է առաջ մղում, որ որքան էլ թուրքական բռնակալությունը դահճային ճանապարհով ձգտի ջնջել հայերին՝ նրանց պատմական հարազատ հայրենիքը ժառանգելու դիտավորությամբ, անզոր է. նոր սերունդը Վարդանների լեզվով կխոսի իր դահիճների հետ։

Վարուժանի «Ջարդը» անհուն վշտի, ցասման ու վրեժի զգացմունքներով է համակված, որն արտահայտում է սուլթանիզմի դեմ միայնակ և անօգնական մնացած, եվրոպական դիվանագիտությունից խաբված ու հուսալքված Հայաստանի ողբերգական պատկերը։

Մեր մեռելները բոլոր՝
Միահամուռ ոստումով
Պիտի կանգնին գերեզմանի մեջ իրենց,
Ու անհամբեր հեռո՞ւն, հեռո՞ւն ակնապիշ
Պիտի սպասեն վարդահեղեղ գալուստին
Արշալույսի մը՝ արշալույսի մը՝ որուն
(Հավատացեք ինձ, մայրեր),
Ես ոտնաձայնը կառնեմ...[159]։

156 «Երիտասարդ Հայաստան», № 10, 1908, Նյու-Յորք։
157 Նույն տեղում։
158 «Երիտասարդ Հայաստան», № 10, 1908 Նյու-Յորք.
159 Դ. Վարուժան, «Ջարդը», Փարիզ, 1908, էջ 16։

3

Թուրքիայում տեղի ունեցած հայկական ջարդերին մեղսակից եղան եվրոպական մեծ տերությունները՝ սուլթանական կառավարությանը հովանավորելու իրենց շահադիտական քաղաքականությամբ։ Այդ տերությունների վարքագիծը խիստ կերպով նշավակվեց ամբողջ աշխարհի մարդկության առաջավոր խավերի կողմից։ Փարիզից «Դրոշակ»-ի խմբագրությանը ուղարկած մի նամակում իտալացի գրող-հրապարակախոս Ամելկար Չիպրիանին գրում է. «Այո՛, Եվրոպան ձեր սպանիչին մեղսակիցը և քյուրդերուն հետ համերաշխ եղավ։ Ան (Եվրոպան) նախադասեց ձեր արյունին մեջ թաթախ ձեռքեր ունենալ, քան ձեռք դպցնել գահու մը, նույնիսկ երբ այդ գահուն վրա կը բազմեր գռեհիկ չարագործ մը, ավազակ մը, եղեռնագործ մը... Այս տխուր փորձերեն ետքը ալ քաղաքակիրթ ըսված Եվրոպային հուսալիք բան չունիք...»[160]։

Անգլիան, որ իրեն հռչակել էր «հայկական դատի պաշտպան», շարաշահում էր Հայկական հարցը՝ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու և նրան իր օրիենտացիային ենթարկելու համար։ Պահպանողականների կառավարության այդ քաղաքականությունը հավանություն չէր գտնում առաջավոր խավերի կողմից։ Լոնդոնի «Metodes times» թերթը գրում է. «Թող լորդը չմոռանա (իմա՝ արտաքին գործերի մինիստր լորդ Կիմբելլեին—Հ. Վ.), որ Անգլիան ունի իր սեփական հստակ պատասխանատվությունը։ Մենք վերցրել ենք մեզ վրա Թուրքիայի գոյությունը հզոր պահելու վտանգավոր պատասխանատվությունը, իսկ Ռուսաստանն իրեն ազատ պահեց նրանից։ Ուստի մենք էլ խորապես պատասխանատու ենք կոտորածների և գազանությունների համար։ Օլիվեր Կրոնվելը խնդիրը կլուծեր մի օրում»[161]։

Մանչեստրում գումարված միտինգներից մեկում անգլիացի մի եպիսկոպոս իր կառավարության քաղաքականության դեմ ուղղված մեղադրական ճառում ասում է. «...Ի՞նչ սարսափելի ամոթ քեզ, Անգլիա, որ կպաշտպանես Թուրքիան ու կքաջալերես նորա կոտորածներն ու բարբարոսությունները դեպի այն դժբախտ ազգը, որու պաշտպանությունը խոստացած ես հանձն առնել»[162]։

160 «Եվրոպացիների կարծիքը հայկական դատի մասին», Ժրնև, 1907, էջ 8։

161 «Մշակ», № 48, 1895։

162 ՀՍՍՀ ԳԱ պատմութ. ինստիտուտի արխիվ, Լեոի ֆոնդ, թղթապ. № 1, թերթ 156։

Անգլիական կառավարողները պատճառաբանում էին, թե իրենք միայնակ օգնել չեն կարող, թե իրենց նավերը Տավրոսի լեռները բարձրանալ չեն կարող և այլն։ Բայց նրանց նավերը Տավրոսի լեռների մոտ չէին կանգնած, այլ կանգնած էին Դարդանելի ու Բոսֆորի նեղուցներում, ուր ապրում էր սուլթան Համիդը։

Անկասկած է, որ Անգլիան հայկական ողբերգությունների մեղսակիցներից մեկն էր։ Նա մի կողմից հրապարակում էր հայասիրական կեղծ դեկլարացիաներ, իսկ մյուս կողմից ոգեշնչում ու քաջալերում էր սուլթանական կառավարությանը հայերի դեմ։ Անգլիան իր այդ երկդիմի քաղաքականությամբ ձգտում էր սրել Ռուսաստանի ու Թուրքիայի հարաբերությունները։

Հայկական կոտորածների կազմակերպման գործում քիչ հանցանք չուներ Գերմանիան։ Օսմանյան կայսրությունը օգտվում էր ոչ միայն եվրոպական տերությունների անհամաձայնությունից, այլև գերմանական կայսրության հովանավորությունից։ Հայերին խոստացված բարենորոգումները խափանելու համար, գրում է Ժագ դը Մորգանը, սուլթան Աբդուլ-Համիդին «հարկավոր էր ուժեղ նեցուկ մը. և այս նեցուկը կը գտնե Գերմանիո կայսրի մեջ. շահախնդիր բարեկամ մը, որ քանի մը տարիեն կը վերածե գերմանական գաղութի մը»[163]։

Գերմանիան չէր կամենում քաղաքական կերպարանք տալ Հայկական հարցին, անժամանակ էր համարում այն, որովհետև սուլթանի ջարդարարական քաղաքականության խորհրդատուն էր։ Սուլթանի գրպանում պահվում էր Վիլհելմի ինքնագիր նամակը՝ մի «Cart blanche» արքայական բարեկամին, որի մեջ ասված էր. «Թագավորիր, ինչպես կամքդ ուզում է, չէ՞ որ դու Ալլահի ստվերն ես երկրի վրա»[164]։

Գերմանիայում նմանապես գտնվեցին ողջախոհ մարդիկ, որոնք հանդես եկան վիլհելմյան կառավարության ռեակցիոն քաղաքականության դեմ։ Բեռլինում տեղի ունեցած միտինգներից մեկում ականավոր քաղաքական գործիչ՝ դանիացի Գեորգ Բրանդեսը իր ելույթում խիստ կերպով մեղադրեց Գերմանիայի կառավարող շրջաններին՝ թուրքական սուլթանին հովանավորելու և հայկական կոտորածներին մեղսակից դառնալու համար։ «Առանց Գերմանիայի բարեկամության Թուրքիան հնարավորություն չէր ունենա-

163 Ժագ դը Մորգան, Հայ ժողովրդի պատմությունը, էջ 330։

164 Ա. Ամֆիտեատրով, Եվրոպա և Հայաստան, Թիֆլիս, 1906, էջ 27։

վատարել այն բոլոր հրեշավոր ոճիրները, որ նա գործեց Թուրքահայաստանում,— ասաց Բրանդեսը։— Այդ հայտնությունը կարող է դուր չգալ գերման շովինիստներին... Սակայն ասածս ճշմարտություն է։ 1896 թվականի օգոստոսին, երբ թուրքական մոլեռանդության զոհ էին գնում Պոլսում հազարավոր հայեր, Գերմանիան Թուրքիայի հետ ընծաների փոխանակություն էր անում՝ ի նշան բարեկամության։ Այդ բանը հիշելիս յուրաքանչյուր գերմանացի, որ թանկ է համարում իր հայրենիքի պատիվը, պետք է ամոթից այրվի»[165]։

Գերմանիան Թուրքիայի համար հանդիսանում էր հուսալի դաշնակից՝ Անգլիայի ու Ռուսաստանի նվաճողական քաղաքականության դեմ մղվող պայքարում։ Ֆրանսիան ու Անգլիան վաղուց էին տիրապետող դիրքեր գրավել Թուրքիայի տնտեսական կյանքում։ Թուրքիան դարձել էր այդ տերությունների հարկատուն, որի հետևանքով նա կախյալ վիճակումն էր գտնվում։ Նրա պետական բյուջեի բացը տարեկան հասնում էր 62 միլիոն ֆրանկի։ 1882 թվականից մինչև 1909 թ. մարտի 1-ը կնքված էր մեկ միլիարդ 178 միլիոն ֆրանկի նոր փոխառություն։ Սուլթանի կառավարության գաղտնի պարտքերը կազմում էին 1.691 միլիոն ֆրանկ[166]։ Նրա հուսալի դաշնակիցը Գերմանիան էր։

Գերմանական բուրժուազիան տիրապետող դիրքեր էր գրավել Օտոմանյան բանկի գործողությունների, Բեռլին-Բաղդադ-Բասրա երկաթուղային շինարարության գործում։ Նրան ձեռնտու էր հայկական ջարդը՝ որպեսզի խուսափեր Թուրքիայում մրցակիցներ ունենալուց։ «Ապտյուլ-Համիտն է,— գրում է Մանդելշտամը,— որ Թուրքիա կանչեց գերմանական զինվորական մարզիչները, և այսպիսով, օսմանյան պանքը Տևտոններու ձեռքը հանձնեց։ Ապտյուլ-Համիտն է, որ Տոյչե պանքին տվավ Պաղտատի երկաթուղիի արտոնությունը, որ համագերմաններու երազներուն համաձայն, սահմանված էր կազմելու աշխարհի վրա գերման գերազանցության ամենեն զորավոր խարիսխներեն մեկը... Ապտյուլ-Համիտն է, որ հայու արյունով կարմրած իր ձեռքերը դրավ այն թագակիր մեծ խեղկատակին ձեռքին մեջ, որ ինքզինքը հայտարարեց իբրև բարեկամ 300 միլիոն իսլամներու»[167]։

165 «Մուրճ», № 2, 1903, էջ 250

166 Տե՛ս Անդրե Մանդելշտամ, Օսմանյան կայսրության ճակատագիրը, էջ 20—21։

167 Նույն տեղում, էջ 27—28։

Մանդելշտամը իրավացի կերպով նշում է, որ եթե Աբդուլ-Համիդը գերմանացիների առաջ բացեց միջնաբերդի արտաքին դռները, ապա երիտասարդ թուրքերը բաց արին նրա ներքին դռները։ «Եվ եթե գալիք ժամանակներու մեջ գտնվի իսլամի խղճահար պատմագիր մը, որ ուզե իր վճիռը արտասանել, ֆեթվա մը պիտի տա, նույն հավիտենական ամոթին հանձնելով թե՛ ծերունի սուլթանը, և թե՛ երիտասարդ թուրքերը»[168]։

Գերմանական իմպերիալիստները ձգտում էին պահպանել Թուրքիայի ամբողջականությունը և թշնամական դիրք բռնեցին հայերի ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ։ Ահա թե ինչու նրանք հրահրում էին անգլո-ռուսական գժտությունները։ Գերմանիան մեղսակից դարձավ նաև երիտասարդ թուրքերի կողմից 1914—1918 թվականներին ավելի քան մեկ միլիոն հայերի ոչնչացմանը։

Ֆրանսիայի դիրքը նույնպես անբարյացակամ էր Հայկական հարցի նկատմամբ։ Նա քայլում էր ռուսական դիվանագիտության հետ համաքայլ և ոչ մի օգնություն ցույց չտվեց մահվան դուռը կանգնած հայերին, որոնք կռվում էին թուրքական բռնապետության դեմ։ Ռուսական ցարիզմի հետ միասին Ֆրանսիան կանգնած էր սուլթանական կայսրության անձեռնմխելիության և անբաժանելիության կողմը՝ Թուրքիայում իր վաղեմի դիրքերը պահպանելու համար։

Խարբերդի ֆրանսիական միսիոնարության անդամներից դոկտոր Բարնեմը նշում է, որ ռուսական թագավորը Փարիզում եղած ժամանակ Շիշկինի և Հանստոնի միջև բանակցություններ տեղի ունեցան, որոնց արդյունքը եղավ այն, որ «Ֆրանսիան և Ռուսաստանը ամենից առաջ աշխատում են համաձայնություն կայացնել պետությունների միջև, որի հիմքը պետք է ծառայի Օսմանյան կայսրության անձեռնմխելիությունը։ Նրանք համաձայն են այն բանի հետ, թե անհրաժեշտ է սուլթանի անձնական հեղինակությանը չդիպչել»[169]։

Ֆրանսիայում հրատարակվող «pro Armenie» թերթի շուրջը համախմբված ականավոր հասարակական-քաղաքական գործիչներ՝ Պրեսանսեն, Դ. Կոլեն, Դ. Սենը, Ժան Ժորեսը և ուրիշներ,

168 Նույն տեղում, էջ 28։

169 Մաշտոցի անվան Մատենադարան, Ա. Երիցյանի արխիվ, թղթապ. № 151, վավերագիր 30։

իրենց ճառերում ու հոդվածներում դատապարտում էին ֆրանսիական կառավարությանը՝ հայկական կոտորածների հանդեպ քարոզություն ցուցաբերելու համար։ Փարիզում տեղի ունեցած միտինգներից մեկում Ժան Ժորեսը հայտարարեց. «Ֆրանսիայի իրավունքն է բարձրացնել իր ձայնը, Ֆրանսիայի պարտքն է ծեծել մյուս ազգերի դռները, նա պետք է զարթնեցնե քնած խղճերը...»[170]։

Մի այլ ելույթում մեղադրելով եվրոպական տերություններին՝ եվրոպական քաղաքակրթությունը վարկաբեկող շահադիտական քաղաքականություն վարելու և հայերի պաշտպանության գործում պայմանազանցության համար, Ժան Ժորեսը ասում է. «Եվրոպան այս անգա՞մ էլ արդյոք պիտի թույլ տա ջարդ։ Նա արդեն մեծ ոճիր գործեց, զոհելով մի ամբողջ ազգաբնակություն սուլթանի մոլեգին սարսափներին և դիվանագիտության դավերին։ Բայց ոճիրը այս անգամ ավելի մեծ պիտի լինի, քանի որ Եվրոպան ահռելի փորձառությամբ աղդարարում է այն հետևանքների մասին, որոնց հանգում են նրա երկպառակությունները, մրցումներն ու հաշիվները... Եթե վերսկսվին Հայաստանի ջարդերը և Եվրոպայի անտարբերության ու մեղսակցության ոճիրը, քաղաքակրթության գաղափարն անգամ չի դիմանար դրան»[171]։

Անատոլ Ֆրանսը խոր վշտով գրում է. «Հայը մեռնում է, որովհետև նա մեր եղբայրն է, որովհետև նա բաժանել է մեր զգացմունքները, սիրել է այն, ինչ որ մենք ենք սիրում, մտածել է այնպես, ինչպես մենք ենք մտածում և հավատացել է այն բանին, ինչին մենք ենք հավատացել։ Ճաշակել է այն, ինչին մենք՝ իմաստություն, արդարություն, պոեզիան, արվեստները։ Սա է նրա անները՛լի ոճիրը»[172]։ Հետևապես, ասում է Անատոլ Ֆրանսը, հայ ժողովրդի դատը ամբողջ մարդկության դատն է։ Հայ ժողովրդի փրկությունը նա տեսնում էր հայերի համերաշխ գործողության մեջ։ «...Եվրոպայեն և արար-աշխարհեն իրենց ձայնը լսվելու համար,— գրում է նա,— բոլոր հայերուն ձայնը մեկ ձայն պետք է կազմեն. անոնց համար փրկությունը կը կայանա միմիայն համերաշխ գործունեության մեջ»[173]։

Մեղադրելով Ֆրանսիայի կառավարությանը՝ հայերի հանդեպ

170 «Մուրճ» № 2, 1903, էջ 251։

171 «Եվրոպացիների կարծիքը հայկական դատի մասին», էջ 13—14

172 Ստ. Կուրտիկյան, Արմենիա, «Գրական թերթ», № 48 (10641). 1960։

173 «Եվրոպացիների կարծիքը հայկական դատի մասին, էջ 39։

իր ստանձնած պարտավորություններին ուխտադրժություն ցուցաբերելու համար, գրող-հրապարակախոս **Յուրբեն Դոնիեն** գրում է. «Հայաստանը և Օսմանյան կայսրության զոհ նահանգները երկար ատեն հավատացին Եվրոպայի անկեղծության ընդհանրապես և Ֆրանսիայի վեհանձնության մասնավորապես... Ֆրանսիան լքեց իր դերը, իր ավանդությունները, իր պարտականությունը։ Ամբողջ Եվրոպան 1878-ի հանձնառությունները դրժեց, և որովհետև այս դավաճանությունները կանխամտածված, սիստեմական էին, երեսե ձգված ժողովուրդներու գանգատը անապատին մեջ արձագանք գտավ»[174]։

Բայց Ֆրանսիայի այդ հումանիստ գործիչների ու նրանց գաղափարակիցների կարեկցական ելույթները, նրանց ազնիվ ու անշահախնդիր խոսքերը ոչնչով չփոխեցին Ֆրանսիայի կառավարության արտաքին քաղաքականության կուրսը։ Այդ ականավոր գործիչները միաժամանակ իրենց ցասումն արտահայտեցին ռուսական ցարիզմի հակահայկական քաղաքականության դեմ։ Ի պատասխան նրանց այդ ցասման, Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր իշխան Լոբանով-Ռոստովսկին հայտարարեց. «Ես չեմ ցանկանում, որպեսզի Տաճկահայաստանը դարձնել երկրորդ Բուլղարիա, և որպեսզի ռուսական հայերը. թուրքական պրոտեկտորատի ներքո գտնվող հայկական ավտոնոմ հիմնարկները օգտագործեն մեր դեմ»[175]։

Այսպիսով, ռուսական ցարիզմի դիվանագիտության հետ համերաշխված ֆրանսիական կառավարությունն ու նրա դիվանագետները ամենևին հաշվի չառան իրենց ժողովրդի առաջավոր խավերի բողոքի ձայնը և իրենց քաղաքականությամբ օգնում էին սուլթանի կառավարությանը։

Արևմտահայ ժողովրդի ծանր ողբերգության խոշոր մեղսակիցներից էր նաև ցարիզմը։ Ցարական ռազմա-ֆեոդալական բյուրոկրատիան, հակառակ ռուս ժողովրդի ու նրա առաջավոր խավերի կամքի, վարում էր հակահայկական քաղաքականություն։ Այն ժամանակ, երբ Արևմտյան Հայաստանը ողողված էր անմեղ հայերի արյունով, երբ դեռ զոհերի արյան լճերը չէին ծծվել հողի մեջ, «հեռագիրը լուր է տարածում երկրի բոլոր կողմերը,— գրում է Լեոն,— թե Նիկոլայի կինը, այժմ տխրահռչակ Ալեքսանդրան,

174 «Եվրոպացիների կարծիքը հայկական դատի մասին», էջ 12։

175 А. Амфитеатров. Армянский вопрос, էջ 17։

Զմեռային պալատի մեծ հարկինքի մեջ, բարեհաճեց պարել սուլթանի կողմից նոր եկած փաշայի հետ»[176]։

Երբ վտանգի ենթարկված արևմտահայերին օգնության էին գնում հարյուրավոր արևելահայ երիտասարդներ, ցարական կառավարությունն ու նրա տեղական իշխանությունները ձերբակալում, դատում ու աքսորում էին այդպիսիներին՝ արյունոտ սուլթանին հաճոյանալու համար։

Երևանի նահանգապետի 1890 թ. օգոստոսի 13-ի գաղտնի գրության համաձայն, նահանգի ոստիկանապետը Էջմիածնի գավառի պրիստավին հաղորդում է, որ «Կովկասից թուրքական կառավարությանը հայտնի է դարձել, որ այստեղ հայերը գաղտնի ճանապարհով, Բաթումի և Նախիջևանի սահմաններից, Թուրքիայում իրենց ազգակիցներին զենք և հանդերձանք են ուղարկում»։ Այդ նույն հաղորդման մեջ միաժամանակ ասված է, որ «մի խումբ զինված հայեր Թուրքիայում իրենց ազգակիցներին օգնելու համար Կաղզվանի և Սուրմալուի սահմաններից անցնում են Թուրքիա»[177]։ Ոստիկանապետն առաջարկում է կտրուկ միջոցների դիմել նմաններին ձերբակալելու և իշխանությանը հանձնելու համար։

Այնուհետև, 1890 թ. սեպտեմբերի 9-ին Երևանի նահանգապետի կողմից Էջմիածնի գավառապետին ուղարկված գրավոր կարգադրության մեջ ասված է հետևյալը. «Երևանի նահանգի ոստիկանական վարչության կողմից տեղեկություններ են հասել ինձ, որ անբարյացակամորեն տրամադրված հայերը կեղծ և չափազանցված լուրեր են տարածում Թուրքիայում հայերի նկատմամբ գործադրված գազանությունների մասին»[178] և առաջարկում է այդպիսիներին հայտնաբերել և առնել կալանքի տակ։ Ռուսական ցարիզմի դահճային քաղաքականությունը մերկացնող այսպիսի արխիվային փաստերը բազմաթիվ են։ Ցարիզմի հակահայկական քաղաքականությունը կորստաբեր եղավ հայերի համար։ Մեղադրելով իր կառավարությանը և նրա Կ. Պոլսի դեսպան Նելիդովին՝ հայերի նկատմամբ թշնամական քաղաքականություն վարելու համար, Ամֆիտեատրովը գրում է. «Փակելով իր աչքերը ռասայական և դավանանքի կոտորածի հանդեպ, նա (իմա՝ Նելիդովը—Հ. Վ.)

176 Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հատ. Ա, էջ 187։

177 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆոնդ № 38/102, գործ № 58, թերթ 19։

178 Նույն տեղում, թերթ 23։

պնդում էր, որ Հայկական հարցը Թուրքական կայսրության ներքին գործն է, որ սուլթանին որպես միահեծան թագավորի, չի կարելի զրկել իրավունքից՝ զսպելու հպատակների միջև բացահայտորեն ծնունդ առնող հակակառավարական ապստամբությունը»[179]։

Ցարիզմը և նրա դիվանագետները, փաղաքշելով թուրքական սուլթանին, սկսեցին Հայաստանի վրա նայել «որպես հեղափոխության սպառնալիքի ամենավտանգավոր օջախ,— և Անդրկովկասի փրկությունը հանձնեցին երկաթների երկաթ կնյազ Գոլիցինին»[180]։

Արտահայտելով իր խոր զայրույթը հայերի մասսայական կոտորածների դեմ և գնահատելով՝ Ռուսաստանին հայերի մատուցած պատմական մեծ ծառայությունները, Ամֆիտեատրովը գրում է. «Մորթելով հայերին, Աբդուլ Համիդը մորթեց ռուսական ուժը, ռուսական համակրությունը»[181]։

Գոլիցինի ռեակցիոն քաղաքականությունը Անդրկովկասում օգնում էր թուրքական սուլթանին և նրա հրոսակներին՝ հայերի բնաջնջման գործում։ Այդ քաղաքականությունը խիստ պարսավանքի ենթարկվեց ոչ միայն հայ, այլև ռուս առաջավոր հասարակայնության կողմից։ Պետերբուրգում հրատարակվող «Новости» ռուսական թերթը գրում է, որ «Փոքր Ասիայի հայերը փառավոր պատմական անցյալ ունեցող, մի չափազանց ընդունակ ազգ են, և բոլորովին անարդար կերպով տանջվում են մինչև այժմ թուրքաց կառավարությունից»[182]։ Այդ նույն լրագիրը նշում է, որ թուրքական կառավարությունն իր ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու նպատակով «իր գաղտնի ագենտների միջոցով, ամեն ջանք գործ է դնում ներկայացնել հայերին որպես վարակված արևմտաեվրոպական սոցիալիզմով ու կոմունիզմով»։ Համարելով այդ իբրև պրովոկացիա, լրագիրն իր համոզմունքն է հայտնում, որ հայերի արդար գործը վաղ թե ուշ հաջողությամբ կպսակվի»[183]։ «Тифлисский листок» թերթի էջերում լույս է տեսնում մի ռուս հրապարակախոսի հոդվածը, որը բարձր գնահատելով հայ և վրաց ժողովուրդների մատուցած ծառայությունները Ռուսաստանին՝ նրա արևելյան քաղաքականության բոլոր ժամանակ-

179 А. Амфитеатров. Армянский вопрос, էջ 18։

180 Նույն տեղում, էջ 24։

181 Նույն տեղում, էջ 28։

182 «Մշակ», № 4, 1893, «Թուրքաց հայերի վերաբերյալ» հոդվածը։

183 Նույն տեղում։

ներում, գրում է. «Մոտ մի դար ժամանակամիջոցում ռուսաց զորքերի շարքերում կռվել են ոչ սակավաթիվ վրացի և հայ իբրև ռուսահպատակներ։ Նրանց մեջ եղել են և զորապետներ և նրանցից ոչ ոք չէ արատավորել իր անունը անարժան վարմունքով։ Եթե ռուսները Բաթումը առնելիս թափել են իրենց արյունը, նրանց հետ միասին, մի դրոշակի տակ թափվել է և վրացական և հայկական արյունը»[184]։

Նույն հրապարակախոսը գրում է. «Ինչու՞ դիտմամբ փակենք մեր աչքերը և չտեսնենք ազգությունների լավ կողմերը և ծառայությունները, և թմբուկները զաթկենք այնպիսի դեպքերի առիթով, որոնք չնայելով իրենց անախորժ էության, կրում են մասնավոր բնավորություն։ Եթե վրացիները և հայերը երբևիցե նկատի են ունեցել ազգային շահեր, այդ եղել է միայն իրենց լեզվի և կրոնի ազատության վերաբերմամբ, միայն այս բանին նրանք առանձնապես ձգտել են։ Բայց մենք ռուսներս ինքներս կդարձնենք ատելությամբ մեր երեսները նրանցից, եթե նրանք չգնահատեին այն, ինչ թանկ պետք է լինի ամեն մի պատվավոր մարդու համար»[185]։

Սուլթանական Թուրքիայի գազանություններից պաշտպանվելու համար հայերի ինքնապաշտպանությանը քայլերը ցարական կառավարությանն ու նրա դիվանագետներին դուր չեկան։ 1894—1896 թվականներին սուլթանը որևէ բարենորոգման փոխարեն,— գրում է Ա. Ամֆիտեատրովը,— վճռեց ուղղակի ջնջել, կոտորել հայերին և ուրեմն ոչնչացնել Բեռլինի դաշնագրի ձանձրացուցիչ 61-րդ հոդվածը... Կոտորածն արժանացավ սուլթանի եվրոպական բարեկամների օրհնությանն ու բարեկամությանը։

«Massacrez, maiest, massacrez —Ջարդեցեք, վեհափառ տեր, ջարդեցեք»,— Ռուսաստանի ներկայացուցիչ Ա. Խ. Նելիդովի այս խորհուրդը ճախրում էր Եըլդիզ-Կիոսկի օդի մեջ ու ոգևորելով իսլամը՝ 300.000 հայերի արյան գին դարձավ»[186]։

Այո, ցարական կառավարության կողմից Թուրքիայի նկատմամբ վերցրած քաղաքականության նոր կուրսը և հայերի նկատմամբ նրա թշնամական վարմունքը քաջալերեցին թուրքական դահիճներին։ Ցարիզմի այդ քաղաքականությունը հայ ժողովրդի ողբերգության պատճառներից մեկը հանդիսացավ։ «Ռուսաստանի

184 «Մշակ», № 9, 1894, «Մի ռուս մարդու կարծիք» հոդվածը։

185 Նույն տեղում։

186 Ա. Ամֆիտեատրով, Եվրոպա և Հայաստան, էջ 19—20։

վերաբերմունքը,— գրում է Ամֆիտեատրովը,— դեպի այդ մարդկային սպանդանոցը՝ ցավով ու ամոթով հարկադրված ենք բնորոշել մի խոսքով — թույլատվություն»[187]։ «Մենք երկրորդ Բուլղարիա չենք ուզում» — այս էր ռուսական ցարիզմի հակահայկական քաղաքականության նշանաբանը, որը համապատասխանում էր սուլթան Համիդի նենգ դիտավորություններին, ջուր էր լցնում նրա ջրաղացին՝ «Հայաստանը՝ առանց հայերի» գազանաբարո այդ ծրագրի իրագործման համար, ռուսաց դիպլոմատիան քանդեց թուրքական սուլթանի ձեռքի կապանքները, որ նա ազատորեն գործադրի «սրի և արյան քաղաքականությունը»[188]։

Ռուսական ցարիզմի ոճրագործ քաղաքականությունը օգտագործվեց Անգլիայի կողմից, որը նորից հանդես եկավ հայկական դատի «պաշտպանությամբ»՝ Թուրքիան Ռուսաստանի ազդեցությունից հանելու, նրա վրա ճնշում գործադրելու, տնտեսական ու տերիտորիալ զիջումներ ստանալու իսկական նպատակով։ Անգլիան աշխատում էր օգտագործել հայերին Ռուսաստանի դեմ։ «...Բանից դուրս էր գալիս,— գրում է Ամֆիտեատրովը,— որ Ռուսաստանը անում էր ամեն ինչ սուլթանի համար, իսկ հայերի համար-ոչինչ, ու դեռ ավելին՝ նա կարծես դաշն էր կապել սուլթանի հետ հայերի դեմ։ Անգլիան դարձավ պաշտելի»[189]։

1894—1896 թվականների հայկական ջարդերը նպաստավոր առիթ եղան Անգլիայի համար նորից չարաշահելու Հայկական հարցը՝ սուլթանական կառավարության վրա ճնշում գործ դնելու և նրան Ռուսաստանի ազդեցությունից ազատագրելու, իր ազդեցությանը ենթարկելու նպատակադրմամբ։ Նրա կողմից 1880 թվականին Եգիպտոսի գրավումը սառը ջուր լցրեց անգլո-թուրքական հարաբերությունների վրա։ Սուլթանական կառավարությունն սկսեց «մտերմանալ» ռուսական ցարին, իսկ վերջինս սուլթանին հովանավորելու կուրս վերցրեց և առժամանակ հրաժարվելով նեղուցները գրավելու մտքից՝ նրան դիտեց որպես նեղուցների «պահապանը»՝ Անգլիայի ոտնձգություններից։

Հասկանալի է, որ ռուսական ցարիզմի այդ նոր կուրսը վտանգավոր էր Անգլիայի համար։ Դրա համար էլ Անգլիան հայկական դատի «պաշտպանության» իր կեղծ քաղաքականությամբ կամե-

187 Ա. Ամֆիտեատրով, Եվրոպա և Հայաստան, էջ 20։

188 Նույն տեղում, էջ 23։

189 Նույն տեղում, էջ 26։

նում էր վախեցնել սուլթանին, ստիպել նրան համաձայնելու Եգիպտոսի օկուպացման հետ և ռուսական ցարիզմի հետ հաստատած բարեկամությունը փոխարինել բրիտանական բարեկամությամբ։

Անգլիական նավատորմը՝ լորդ Սեյմուրի հրամանատարությամբ, պտույտներ էր գործում Դարդանելի շուրջը, պատրաստ էր մտնելու Կ. Պոլիս և ուղղելու իր թնդանոթները դեպի Եըլդիզը։ Նրա օրինակին հետևեցին Ֆրանսիան, Ռուսաստանը, Իտալիան՝ Անգլիայի դիտավորությունները խափանելու համար։ Այսպիսով, փոթորիկը բարձրանում էր, Եվրոպայի մթնոլորտը՝ էլեկտրականանում։ Բայց տնտեսապես, ֆինանսապես սնանկացած սուլթանական կառավարությունը, հենվելով իր հովանավորյալների և եվրոպական կոնցերտի անհամաձայնության վրա, սառնասիրտ չէր նայում իրադարձություններին։ Նա գրոհ սկսեց Անգլիայի դեմ՝ հայերի «պաշտպանությամբ» հանդես գալու համար։

Սուլթան Աբդուլ-Համիդը հայտարարեց, թե հայերը գործիք են Անգլիայի ձեռքին՝ թուրքական կայսրությունը բաժան-բաժան անելու, նրան կործանելու համար։ Դիմելով երկրի մոլեռանդ, ռեակցիոն խավերին, Աբդուլ-Համիդը բացականչում է. «Ազատեցեք հայրենիքը, փրկեցեք իսլամը։ Չե՞ք տեսնում, որ «գեավուրը» իր հաղթանակով արբել է արդեն։ Նա արձակել է արդեն իր լեզվի և շարժումների կապանքները։ Նա ձեր մեջ, ձեր քթի տակ, խրախճանքներ է սարքում իր մոտալուտ ու անխուսափելի անկախությունն ու ձեր ստրկությունը տոնելու համար։ Այո, նա բարձրացրել է արդեն իր գլուխը և շուտով կբարձրացնի նաև իր կախաղանը ձեր դեմ»[190]։

Իսկ երբ սարսափահար եղած ռեակցիոն խավերը սուլթանին հարցնում են, թե ի՞նչ պետք է անել, նա պատասխանում է. «Պետք է կախել նրանց, պետք է փշրել այն բազուկները, որոնք պատրաստվում են ձեր գլխի վրա ճոճեցնելու իրենց զենքը, պետք է ավերել այն բույները, ուր նյութվում են բացարձակ ոճիր ձեր դեմ, պետք է զրկել նրանց այն միջոցներից, որոնք գործ են դրվելու ձեր թշվառացման ու ոչնչացման համար»[191]։

Սուլթանի այս ռեակցիոն ելույթը է՛լ ավելի բորբոքեց թուրքական ու քրդական ամբոխի մոլեռանդությունը և նրանց նպատակամղեց հայերի դեմ, առաջ բերեց նորանոր կոտորածներ։

190 «Երկրի ձայն», № 10, 1906։

191 Նույն տեղում։

Դարդանելի շուրջը անգլիական նավերի պտույտները երկյուղ էին ներշնչում թուրքական կառավարողներին։ Նրանք գտնում էին, թե Անգլիան դրանով օգնում է հայ «ազիտատորներին»՝ մայրաքաղաքում և գավառներում նոր «անկարգություններ» առաջ բերելու համար։ Այդ առիթով 1895 թ. սեպտեմբերի 25-ին սուլթանի կառավարությունը բողոք ներկայացրեց եվրոպական պետություններին, որը վերջանում է հետևյալ խոսքերով. «Բ. Դուռը հույս ունի, որ Մեծն Բրիտանիո կառավարությունը ի նկատի կունենա այս դիտողությունները և թույլ կտան վեհափառության ներկայացուցիչներին չկնդելու այլևս իր առաջարկի վրա, որը, այս րոպեին իրեն ապահովությունն ու վստահությունը սկսում է վերածնել, կայսերական կառավարության համար չի երևում արդարացի»[192]։

Հետևապես, Հայկական դատի «պաշտպանության» շուրջը Անգլիայի բարձրացրած նոր աղմուկը հայերին ոչինչ չտվեց, բացի նոր աղետներից։ Անգլիայի բարձրացրած աղմուկը հետապնդում էր իր երկրի իմպերիալիստական բուրժուազիայի նվաճողական քաղաքականության ապահովությունը։ Հայտնի է, որ Հնդկաստան տանող ծովային ուղիներն ապահովում էին Բրիտանիայի տիրապետությունը Եգիպտոսում և Կիպրոսում ու թույլ չէին տալիս նեղուցների նկատմամբ Ռուսաստանի հսկողությունը։ Դրա հետ միասին կային նաև Հնդկաստան տանող ցամաքային ուղիներ։ Աղվանստանից բացի, Պարսկաստանը, Արաբիան, Ասիական Թուրքիան, որոնք կամուրջ էին Եվրոպայից Հնդկաստան գնալու համար։ Անգլիական կառավարության ուշադրության կենտրոնում էին նաև այդ ուղիները, որոնք հնարավորություն էին տալիս նրան կապվելու Հնդկական օվկիանոսի և Պարսկական ծոցի հետ, օգտագործելու դրանք իր տնտեսական ու ռազմա-ստրատեգիական նպատակների համար։

Բեռլին-Բաղդադ-Բասրա երկաթուղու կառուցումը Գերմանիայի կողմից սպառնալից էր Անգլիայի համար։ Անգլիան մշակեց Կեյպտաուն-Կահիրե երկաթուղու նախագիծը, որը իր զարգացումը ստացավ Կահիրե-Կալկաթա նախագծում։ Հասկանալի է, որ Հայկական հարցի առաջ քաշումը Անգլիայի կողմից նպատակ ուներ ճնշում գործադրելու սուլթանի վրա ոչ թե ի նպաստ հայերի, այլ ի նպաստ իր երկրի բուրժուազիայի շահերի։ Անգլիայի քաղաքականության իրական ապացույց կարող են լինել նաև Լոնդոնի թուր-

192 ՀՍՍՀ ԳԱ պատմ. ինստիտուտի արխիվ, Լեոի Ֆ., տետր № 87, էջ 48։

քական դեսպանի երկու զեկուցագրերը, որոնք սուլթանի չինովնիկների կողմից վաճառվեցին ռուսական դեսպանին։ «Եթե Օտոմանյան կառավարությունը կամենում է գործել իր շահերին համապատասխան՝ ֆինանսական և այլ ձևով,— ասում է լորդ Սալսբերին թուրքական դիվանագետին,— ապա նա պետք է փոխի իր ներկա քաղաքականությունը։ Բարձրացնելով Եգիպտոսի հարցը, Դուռը լոկ իրեն է անհանգստություն պատճառում՝ առանց որևէ օգուտ ստանալու»[193]։

Թուրքական դեսպանի այդ զեկուցագրերից մեկում էլ ասված է, որ «Սալսբերին պարզ կերպով հիշեցրեց — բրիտանական կառավարության կողմից ֆինանսական օգնության մասին այն դեպքում, եթե սուլթանը կընդունի անգլիական օրիենտացիան։ Լոնդոնի գերմանական դեսպան գրաֆ Գատցֆելդը միանգամայն ճիշտ էր որոշում Թուրքիայի հարցում անգլիական քաղաքականությունը. «կամ կհաջողվի կենդանի պահել թուրքական պետությունը՝ իրական ռեֆորմ կիրառելով և դրանով նրան հանել բացառապես Ռուսաստանի ազդեցությունից,— գրում է նա,— կամ եթե այդ նախագիծը չհաջողվի, ապա գործը կհասնի մինչև Թուրքիայի սնանկացմանն ու բաժանմանը»[194]։

1895 թվականին Սալսբերին Վիլհելմ II-ին ներկայացրեց Թուրքիայի բաժանման նախագիծը և դրա հետ միասին Դարդանելի ու Բոսֆորի նեղուցներն ուղարկեց իր ուժեղ ռազմական էսկադրան՝ դիվանագիտական հաղթանակ շահելու համար։ Նրա այդ պաշտոնական քայլը անհանգստություն առաջացրեց ռուսական կառավարողների շրջանում։ Ռուսական կառավարությունը Լոնդոնին իրազեկ դարձրեց, որ իր Սևծովյան նավատորմը անհապաղ կմտնի Բոսֆորը։ Որոշված էր, որ ոչ մի կերպ թույլ չտալ Անգլիային՝ ամրանալու նեղուցներում, որովհետև Հարավային Ռուսաստանի ամբողջ առևտուրը կատարվում էր միայն նեղուցներով, որոնք գտնվում էին Անգլիայի հսկողության տակ։

Ռուսաստանը, Ֆրանսիան և Իտալիան կանխեցին Անգլիայի ոտնձգությունները։ Լորդ Գոշեն դեմ էր Սալսբերիի քաղաքականությանը և նախազգուշացնում էր նրան՝ սպառնացող վտանգի մասին։ Նա գտնում էր, որ անգլիական նավերը կշրջապատվեն ֆրանսիական ու ռուսական նավերի կողմից։ Գոշենի այդ հակառությանը Սալսբերին հեգնորեն պատասխանեց հետևյալ կերպ. «Եթե նրա նավերը կառուցված են ապակուց, ապա հասկանալի է, որ հարկ կլինի փոխել քաղաքականությունը»[195]։

Անգլիան իր այդ քաղաքականությամբ չկարողացավ դիվանագիտական հաջողությունների հասնել։ Ռուսաստանը՝ հենվելով Գերմանիայի ու Ֆրանսիայի աջակցության վրա, խափանեց Մերձավոր Արևելքում Անգլիայի զավթողական դիտավորությունները՝ իր զավթողական ծրագիրը առաջ տանելու նպատակով։

Նշավակելով այդ տերություններին, հայերի նկատմամբ անմարդկային վարմունք ունենալու և սուլթանին հովանավորելու համար, իր «Ջարդը» քերթվածում Դանիել Վարուժանը գրում է.

Ալլահն ամպին մեջ է, սուլթանը՝ ցեխին՝
Հոտոտելով փոխն ի փոխ՝
Կը ժպտին հաշտ իրարու,
Ու Եվրոպան դեմքն իր հետև դարձուցած
Կոպերը կը շփե—
Մեր ծուխեն աչքն ի բոցե
Կըսկրծելուն համար լոկ[196]։

Եվրոպական տերությունների դիվանագիտական խարդախությունները չհասկացան հայ ազգայնական կուսակցությունները, որոնք հարելով իմպերիալիստական տերությունների այս կամ այն զինակցությանը, հաճախ առիթներ էին ստեղծում հայկական նորանոր աղետների համար։

193 «История дипломатии», том II, Москва 1945, էջ 119։
194 Նույն տեղում։

195 Նույն տեղում։
196 Դ. Վարուժան, Ջարդը, էջ 12։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՐՔԱՎՈՐՈՒՄԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

1

Սուլթանական ռեժիմի դեմ ուղղված Բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները մի կողմից, 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմը՝ մյուս կողմից, է՛լ ավելի նպաստեցին հայերի ազգային ինքնագիտակցության և ինքնաճանաչողության աճմանն ու զարգացմանը, հայ ժողովրդի ազգային ուժերի կոնսոլիդացման տենդենցների ուժեղացմանը։

Սակայն հայերի ազգային ինքնագիտակցության աճումը, նրանց ազատասիրությունը և ինքնուրույն քաղաքական կյանք ստեղծելու հակումները ամենևին դուր չեկան թուրքական բռնակալներին, որոնք, ինչպես տեսանք, հայերի ասիմիլացման, արտաքսման ու բնաջնջման ճանապարհով կամեցան վերջ տալ Հայկական հարցին։ Արևմտահայ ժողովրդի դրությունը հուսահատական էր։ Նրա ազատագրության հարցում իրենց դիրքավորումը ցուցաբերեցին հայ հասարակական հոսանքները։

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԸ

1860-ական թվականներին առաջացավ ու ձևավորվեց հեղափոխական դեմոկրատական հոսանքը, որը բոլորովին նոր երևույթ էր հայ հասարակական-գաղափարական կյանքում, մի թռիչք՝ հասարակական առաջավոր մտքի զարգացման բնագավառում։

Հեղափոխական-դեմոկրատական հոսանքի առաջացումն ու գործունեությունը անխզելիորեն կապված է Մ. Նալբանդյանի անվան հետ։ Նալբանդյանի և նրա ուղղության վրա նշանակալից ազդեցություն ունեցան Ռուսաստանում սկսած հեղափոխական շարժումներն ու առաջավոր հեղափոխական դեմոկրատական գաղափարախոսությունը, Եվրոպայում փոթորկող բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունները, Բալկանյան ժողովուրդների և, հատկապես, ավստրիական բռնապետության դեմ ուղղված իտալական ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները, որոնք հասցրին Իտալիայի ազատագրությանն ու անկախությանը։

Նալբանդյանը մշակեց հայ ժողովրդի ազատագրության իր ծրագիրը, որը տարբերվում է մյուս բոլոր հոսանքների ծրագրերից։

Հայ ժողովրդի ազատագրության իր մշակած ծրագրի իրագործումը Նալբանդյանը սկսեց ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության պրոպագանդայով՝ որպես հզոր զենքի ժողովրդական մասսաների մոբիլիզացման, նրանց ազգային ինքնագիտակցության բարձրացման, բռնակալների իշխանության կործանման և ազատության նվաճման համար մղվող պայքարում։

Պայքարելով հետադիմական ուղղությունների դեմ, և ժողովրդին ազատագրական պայքարի կոչելով, Նալբանդյանը կամենում էր ազատությունը նվաճել մասսաների ներքևից կազմակերպված ապստամբությունների և ոչ թե բռնակալների վերևից տրված ողորմածությամբ, ինչպես այդ տեղի ունեցավ Ռուսաստանում 1861 թվականին։

Նալբանդյանը հայ ժողովրդի ազատագրության ճանապարհին թշնամի էր համարում ինչպես թուրքական սուլթանիզմը, այնպես էլ ռուսական ցարիզմը։ Դրա համար էլ նա ժողովրդին սոցիալական հեղափոխությունների զինված ապստամբության կոչ էր անում։

Ժողովուրդն է պատմության շարժիչը, նրա առաջմղիչ ուժը։ Այդ առումով էլ Նալբանդյանը սոցիալական հեղափոխության մեջ էր տեսնում նրա ազատագրության գրավականը։ Ռուս հեղափոխական դեմոկրատ Չերնիշևսկին իր «Ի՞նչ անել», աշխատությունով ռուսական մուժիկին կոչ էր անում կացնի միջոցով նվաճել ազատությունը, չբավականանալ 1861 թվականի գյուղացիական ռեֆորմով։ Չերնիշևսկու օրինակով Նալբանդյանը հայ ժողովրդին զինված ապստամբության կոչ էր անում։

Հայ ժողովրդի ազատությունը խեղդված էր ոչ միայն արտաքին, այլև ներքին թշնամիների կողմից։ Ազգի ներքին թշնամիներն էին կղերա-ֆեոդալական վերնախավերը՝ հայ էֆենդիները, ամի-

բաները, որոնք խորշում էին ժողովրդական մասսաների ապստամբական ելույթներից։ Այս խավերից շատերը թուրքական պետական ապարատի ծակոտիներում խցկված այս մի քանի «վատթար մարդիկ, կղերի հետ միացած, յուրյանց ձեռքը ձգելով ազգային ջարդ ու փշուր լաստի ղեկը, առանց օրինավոր հոգաբարձության, առանց մաքուր խղճմտանքի և միայն յուրյանց անձնական շահին, ախտերին և կրքերին ծառայեցնելով, ոչ միայն հառաջ չէին մղում այդ կիսակործան և ալետանջ լաստը, ոչ միայն փույթ չունեին գոնե մի խաղաղ ծովածոցի կամ նավահանգստի մեջ և նորան ապահովելու, այլև փակում էին և խլում էին այդ լաստից այսօր այս փայտը, վաղն այն երկաթը, երրորդ օրը մյուս չվանը և հրավիրում նույնը գործելու ազգի խպառ կործանության համար»[1]*— գրում է Նալբանդյանը։*

Շահամոլ այս խավերը սուլթանական Թուրքիան համարում էին «դրախտավայր», ծունկ էին չոքում սուլթանների իշխանության առջև, աչքը փակելով գավառահայ գեղջուկի համար ստեղծված ստրկական վիճակի հանդեպ, դատապարտում և անօրինական էին համարում նրա ամեն մի տրտունջը, ազատասիրական ամեն մի բաղձանքը։

Այդ խավերի մերկացումը Նալբանդյանը դիտում է որպես ազատագրական պայքարի հաջողությունների պայմաններից մեկը։

Կանգնած լինելով գիտության ու լուսավորության ազատ զարգացման անխախտ դիրքերում, անողոք լինելով խավարի ու բռնության նկատմամբ և միշտ դեպի առաջ նայելով, Նալբանդյանը նշավակում է ժողովրդի ազատագրության ճանապարհին արգելք հանդիսացող խավարամիտներին, բոլոր նրանց, ովքեր կամենում էին համաձայնության լեզու գտնել լույսի և խավարի, պայքարող դեմոկրատական ուղղության և կղերա-պահպանողականների միջև։

«Նա, ով փախչում է պատերազմից,— գրում է նա,— մարդ չէ բարոյապես, այլ մի թշվառ արարած կնամարդի բնավորությամբ։ Սուտ խաղաղասիրությունը, որի տակ, որպես գայլ ոչխարի զգեստով, թաքնված անձնական օգուտ ու փառք, մենք մեծարում ենք **եզուիտ** *պատվանունով։ Ճշմարտության բուն հետևանքը բաժինք է, պիտո է լինի հերձվածներ, որ ընտրվածքը երևին։ Եվ գինին մինչև չխմորվի և չպղտորվի, չի պարզվի»*[2]*։*

1 Մ. Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 103։*

2 *Նույն տեղում, էջ 263։*

Կղերա-ֆեոդալական խավերը հալածում էին ազատ խոսքը, ազատ միտքը, հալածում էին դեմոկրատներին ու լուսավորականներին՝ քննադատական խոսքի և ազատագրական պայքարի գաղափարախոսության համար, վախ էին զգում քննադատությունից և ազգի ներսում եղած թերությունների բացահայտումից։

1860 թ. սեպտեմբերի 19-ին Հ. Սվանյանին *ուղղված իր նամակում, խոսելով ազգի ներսում եղած բացերի ու թերությունների դեմ ուղղված քննադատության մասին՝ որպես նրա առողջացման ու առաջխաղացման անհրաժեշտ ու կարևոր պայմանի, Նալբանդյանը գրում է. «Ստույգ արժանավորության վկայությունը, եթե կա, այդ է միայն պակասության խոստովանելը։ Ազգի պակասությունը խոստովանել կամ դատապարտել ոչ թե միայն հանցանք չէ, այլ առաքինություն։ Ամենայն ազգային անդամ ինչ չափով պարտական է նշավակել և սպանել նորա պակասությունքը, որպեսզի ազգությունը, ավելի մաքուր շրջանակի մեջ հանդիսանա ընդհանուր մարդկության առջև... Թող սարսափին պարկեշտ ականջները մի տեսակ մարդերի, որ նվիրած են յուրյանց անձը, խոսք և գրիչը սորա կամ նորա պակասությունը ծածկելու»*[3]*։*

Այսպիսով, Նալբանդյանն առաջիններից է, որ վեր բարձրացրեց քննադատության դրոշը և առաջավոր միտքը նպատակամղեց այդ ուղղությամբ։ Միայն քննադատության ծավալման ճանապարհով հնարավոր է թոթափել հնության փոշին և ազգը շարժել քաղաքակրթության, լուսավորության և ազատագրական ուղիով։

Մահաբեր հնոտիներով հայ ժողովուրդը չէր կարող կազդուրվել, չէր կարող ազատագրվել և համաքայլ առաջ ընթանալ քաղաքակիրթ ազգերի ու ժողովուրդների հետ։ Պետք էր հանել ժողովրդին կրոնական մշուշի քողի տակից, ընդլայնել նրա մտահորիզոնը, դաստիարակել նրան նոր, առաջավոր գաղափարներով, իր լավն ու վատը, իր շարն ու բարին հասկանալու կարողությամբ, առանց որի անհնար էր ձեռք բերել ազատություն։

1861 թ. փետրվարի 10-ին, իր նամակներից մեկում, Նալբանդյանը գրում է. «...Յավալի հայոց ազգ, մինչև ե՛րբ պիտո է մնաս մահաբեր քնի մեջ, մինչև ե՛րբ պիտո է քո նախկին կենդանության շունչը աննորոգելի մնա...»[4]*։*

Այսպիսով, ազգի ազատագրությունը, նրա զարգացումն ու

3 Մ. Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2. էջ 203։*

4 *Նույն տեղում, էջ 160։*

առաջխաղացումը պահանջում են բռնության շղթաների խորտակում, մտքի ու բանականության ազատություն։

Ազատությո՛ւն, գոչեցի, թող որոտա իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ, թող դավ դնե թշնամին,
Ես մինչ ի մահ, կախաղան, մինչև անարգ մահու սյուն
Պիտ գոռամ, պիտի կրկնեմ անդադար, ազատություն[5]։

Ազատության այս վեհ գաղափարով Նալբանդյանն արթնացրեց և առաջ մղեց հայ հասարակական-գաղափարական առաջավոր միտքը, դաստիարակեց մի ամբողջ սերունդ և նրան նպատակամղեց խավարի ու բռնության դեմ ուղղված ազգային-ազատագրական պայքարի ուղին։

Բռնության ու խավարի դեմ ծավալված այդ սրբազան պայքարում Նալբանդյանը հստակորեն տեսնում է առաջավոր գործող ուժերի հաղթանակի անխուսափելիությունը։

«Մենք, վաղ, ուրեմն, գուցե շատ առաջ,— գրում է նա,—քան թե գրիչ առնենք ու հրապարակ իջնենք, գիտեինք, որ խավար շրջապատի մեջ բանտարկվածների համար շատ ցավացուցիչ է ազատ լույսը, թերևս աչքերի նկատմամբ գիտեինք, որ հին խելքերը երբեք համաձայնելու չէին խաղաղությամբ տեղի տալ նոր գաղափարներին, գիտեինք, որ նորը պատերազմով պիտի կանգնեցներ իր դրոշակը հնության ավերակների վրա։

Այս գիտակցությունից հետևցվեց այն, որ հարձակմունքը, թերևս շատ անգամ մեր անձին վերա—փոխանակ մեր գաղափարների, ոչ երբեք կարողացան, և ոչ նաև մի մազի չափ խոտորացնել մեզ մեր ուխտյալ ճանապարհից»[6]։

Նալբանդյանը պահանջում է կրկնապատկել ազատության համար մարտնչողների շարքերը, ոտքի հանել ժողովրդին, հույսը դնել նրա վրա և օտարներից երբեք օգնություն չսպասել։

Ժողովուրդը, պատմություն կերտողների պոտենցիան է։ Նա է ազգի ազատագրության ու վերածննդի հույսն ու ապավենը, նա է ի վիճակի կործանելու բռնակալների լուծը։ Այս հաստատ համոզմանն էր Նալբանդյանը։ Բայց ժողովուրդը խավար էր ու դեռևս անշարժ, նրան պետք է կոփել շահագործողների դեմ մղվող պայքարում, լուսավորել և զինել առաջավոր գաղափարներով։ Առանց լուսավորության չի կարող լինել ազատության գիտակցում։ Դրա համար էլ Նալբանդյանը գրում է.

Ե՛լ, Հայկ, Տիգրանին հիշենք մենք, եղբայրք,
Նորոգենք նոցա փառքը սուրբ անվան,
Գուցե այս կերպով մի ստույգ նոր կյանք,
Առնու խեղճ, այրի մայրն Հայաստան[7]։

Աշխատավոր ժողովուրդը հենց ինքը՝ ազգն է։ Այս միանգամայն ճիշտ հասկացողությունից մեկնելով, Նալբանդյանը հենց այդ ժողովրդին է համարում ազգի առաջադիմության գործոնը։ Որտեղի՞ց պետք է սկսել ազգակազմության գործը, ազգաշինությունը։ Նալբանդյանն ուղղակի պատասխանում է.

«Ազգային շինությունը, բնական կերպով, պիտի հառաջանա ցածից—հիմքից, այդ հիմքը հասարակ ժողովուրդն է։ Այն մարդը, որ սիրում է ազգը, որ նվիրում է յուր անձը ազգի բարոյական սպասավորության, պարտական է ծառայել ոչ ազգի կուռքերին, այլ հասարակ ժողովրդի օգտին։ Հասարակ ժողովրդից կազմվում է ազգության մեքենան, լուսավոր մարդիկ կարող են, և պարտավոր են, զարկ և ընթացք տալ այդ մեքենային»[8]։

Այսպիսով, ժողովրդի գիտակցության բարձրացումը անխզելիորեն կախված է նաև լուսավորությունից։ Այստեղից հետևում է, որ Նալբանդյանը շատ լավ էր հասկանում այն ճշմարտությունը, որ լուսավորությունից հեռու կանգնած մարդը դուրս է քաղաքականությունից, իր դասակարգային շահերի գիտակցությունից, հետևապես, ժողովրդի լուսավորության հարցը դարձավ ժամանակակից բոլոր դեմոկրատական-լուսավորական առաջավոր գործիչների մտահոգության կարևորագույն գործը։

Ազգության այդ մեքենային—հասարակ ժողովրդին նվիրեց Նալբանդյանն ամբողջ իր գիտակցական կյանքը։ Դրա մեջն էր նա տեսնում ամեն մի ազնիվ հայի բարձր առաքինությունը։ Նալբանդյանն անարգանքի սյունին էր գամում կղերա-պահպանողականներին, որոնք թշնամաբար էին վարվում ժողովրդի լուսավորության զարգացման և նրա ազգային գիտակցության բարձրացմանը ծառայող առաջավոր մտածողների ու գործիչների նկատմամբ։

«Մեր համար ազգությունը և ամբողջ ազգի կատարելության

5 Նույն տեղում, էջ 15։
6 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 15։
7 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու. հատ. 1, էջ 106։
8 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 453։

գաղափարը,— գրում է նա,— այնքան ծանր կշիռ ունի, որ դորան պահպանելու և օգնելու մտքով պատրաստ ենք ամենայն զոհաբերության... Ուստի մաքուր խղճմտանքով և ձեռքերս սրտերիս վրա դրած, ոչ միայն զոհում ենք նորանց, այլ որպես քաղդեական սերմից հառաջացած ծնունդներ քարին ենք դարկում։

Շատ լավ գիտենք, որ մենք այս պատճառով ատելի ենք կացուցանում մեր անձը և այս է պատճառը, որ Հյուսիսափայլը փուշ է շատերի աչքին...»[9]։

«Մամիկոնյան մեծ Վարդանի պատասխանը» խորագրով ոտանավորով Նալբանդյանը ժողովրդին կոչ է անում ըմբոստանալ ազդուրացների ու խավարամիտների դեմ և սեփական ուժերով կործանել ներքին ու արտաքին բռնակալների լուծը։

Եվրոպայում և Բալկաններում շատ ժողովուրդներ ապստամբությունների ճանապարհով նվաճեցին իրենց ազատությունը և ընթացան քաղաքակրթության ճանապարհով։

«Ազատությունը, այն վսեմական աքսորականը,— գրում է Նալբանդյանը,— վերստին և վերստին սրբված արյունով, հարաբորբոք տառերով գրվում է պայծառ ճակատների վրա, իսկ հայը և այսօր չէ կարող կատարելապես դուրս հանել յուր ճակատը սև վերարկուի տակից, ուր դարերով ահա որջացել են պարկայնք, ազատության բողբոջները մկրտելու համար»[10]։

Կղերա-պահպանողականները, փառասեր և շահամոլ հայ էֆենդիները Թուրքական փաշաներից և քրդական բեկերից ետ չէին մնում գավառահայությանը հարստահարելու, նրան անասելի զրկանքներ պատճառելու և երկիրն ամայացնելու, մարդկանց բնավեր դարձնելու գործում։

Նալբանդյանը նշում է, որ կղերական խավարամոլները հալածել և աքսորել են ժողովրդի լավագույն զավակներին, ազատության ու լուսավորության դրոշակակիրներին, նրանց, ովքեր հավատարիմ և անձնուրաց կերպով ծառայել են ազգին ու ժողովրդին, պայքարել են հայրենիքի ազատության ու անկախության համար։

«Աքսորվեցան, կախվեցան, գլխատվեցան և այրվեցան,— գրում է նա,— բայց նոցա հոգին կենդանի մնաց, յուրյանց ամայացած հայրենիքի փլատակների մեջ... Յեղո՛ւկ ձեզ, Հայաստանի սարեր, Հայաստանի ձորեր և Հայաստանի նվիրական անտառներ։

9 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 443։

10 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 29։

Այրարատից մինչև Տորոս, ստիպված եք դուք հնչեցնել միայն հեկեկանք և հռնդյունք Հայաստանի որբ զավակների, հարստահարողների և եկեղեցականների գավազանի տակից»[11]։

Պատմական անժխտելի փաստերի հիման վրա Նալբանդյանն ապացուցում էր, որ հայ հոգևորականները կրոնական իրենց մոլեռանդությամբ, կրոնական քարացած դոգմաներով, ժողովրդի տառապանքների, գաղթականության, սովամահության, ստրկության և այլ դառնությունների պատճառներից մեկն են եղել։

«Ո՛վ հայոց ազգը յուր շահասիրության և պատվամոլության համար երկրից երկիր գաղթեցնելով մի կեսին պատճառ եղավ,— գրում է նա,— օդի և կյանքի հանգամանքներին անսովորությունից, իսկ մյուս կեսին աղքատության և ստրկության սանդուխի ամենաբարձր աստիճանի վերա ոտք կոխելու... Այս բոլորը պատմական ֆակտեր լինելուց հետո, դեռևս հոգևորականությունը պիտի պարծի թե ազգ պահեց»[12]։

Նալբանդյանը միաժամանակ ցույց է տալիս, որ «Խնկելի Խորենացին, Ղազար Փարպեցին, Խոսրովիկը և շատ ուրիշներ զոհ են դառել հայ հոգևորականության ձեռքով՝ որպես «աղանդավոր»-ներ հռչակված»[13]։ Հետևապես, նկատում է Նալբանդյանը, կրոնական ժողովը, որպես ազգի մի անդամ, պետք է ծառայի և աջակցի նրա առաջադիմությանը, օգնի նրա զարթոնքին և ոչ թե արգելք լինի նրա ազատագրական հակումներին։

Ժողովրդին, նրա ազատության ու փառավոր ապագա հաստատելու համար մղվող պայքարին ազնվորեն ծառայելու մեջ էր տեսնում Նալբանդյանը ամեն մի հայի բարձր առաքինությունը։ «Մենք,— գրում է նա,— ազատական նվիրեցինք մեզ հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու։ Մեր անձը և գրիչը չնվիրեցինք հարուստներին, նոքա յուրյանց արծաթի թումբերի տակ միշտ անխոցելի են, նաև բռնակալների իշխանության մեջ»[14]։

Հետևապես, փողի ուռեցված քսակը չէ մարդու արժանապատվության ցուցանիշը։ Իսկական հայրենասերը նա է, ով իր անձնական ողջ կյանքը նվիրում է ազգի ազատագրությանը, նրա բախտավորությանն ու երջանկությանը։ Այս է ուսուցանում Նալբանդյանը։

11 Նույն տեղում, էջ 30։

12 Նույն տեղում, էջ 27։

13 Նույն տեղում, էջ 28։

14 Նույն տեղում, էջ 22։

«Բայց այն խեղճ հայը,— գրում է նա,— այն հարստահարված, ողորմելի աղքատ, մերկ ու քաղցած հայը, ոչ միայն ճնշված օտարներից և բարբարոսներից, այլև յուր հարուստներից, յուր հոգևորականներից, կիսագրագետ, ուսումնական կամ փիլիսոփա ասվածներից, ահա այն հայը ամենայն արդարացի իրավունքով գրավում է մեր ուշադրությունը և նորան դարձյալ, առանց և վայրկենական երկմտությամբ, նվիրեցինք մեր բոլոր կարողությունը։

Պաշտպանել այն հայի առաթուր իրավունքը է մեր կյանքի բուն խորհուրդը և նպատակը։ Եվ այս նպատակին հասնելու համար չէ պիտո ընկճենք ո՛չ բանտի և ո՛չ աքսորի առջև, ոչ միայն բանիվ և գրչով, այլև զենքով և արյունով, եթե մի օր արժանի լինենք դենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությունը նվիրագործել և սրբել մեր արյունով։

Ահավասիկ մեր դավանությունը, որի մեջ տեսնում ենք ազգի փրկությունը»[15]։

Այսպիսով, Նալբանդյանը ազատության նվաճման կարևոր միջոցը համարում է զենքը և իր օրինակով ժողովրդին զինված ապստամբության է կոչում։

Հետևապես, քանի որ ժողովուրդը արտաքին ու ներքին թշնամիների կողմից տնտեսապես ու քաղաքականապես ստրկացված է և իրավազուրկ, ապա, ուրեմն «Ստրկության մեջ և չի կարող լինել լուսավորություն»[16]։ Իսկ առանց լուսավորության չկա գիտակցություն։

Արևմտահայ ժողովրդի ազատագրության հույսը Նալբանդյանը երբեք չի առնչում ո՛չ Ազգային Սահմանադրության, և ո՛չ էլ եվրոպական տերությունների սատարկման հետ։ Նա այդ հարցը կապում է Ռուսաստանում և Եվրոպայում դեմոկրատական հեղափոխությունների հաղթանակի հետ։

Այս առումով խոշոր է եղել Նալբանդյանի և նրա ժամանակակից առաջավոր հայ մտածողների, հասարակական գործիչների ու հրապարակախոսների վրա իտալական ժողովրդի ազգային-ազատագրական շարժման ու նրա գաղափարախոսության բարերար ազդեցությունը։ Ազատություն! Ահա իտալացի բոլոր ազնիվ հայրենասերների մարտական կոչը, նրանց պայքարի ու հաղթանակի նշանաբանը։ Մաձձինիի և Գարիբալդիի առաջնորդությամբ իտալա-

15 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 23—24։
16 Նույն տեղում, էջ 72։

կան ժողովուրդը ազատության դրոշ բարձրացրեց ավստրիական բռնակալության դեմ և 1859 թվականին, զենքի միջոցով նվաճեց իր անկախությունը։

Անկեղծորեն ողջունելով գարիբալդիականներին՝ նրանց անօրինակ քաջագործությունների համար, Նալբանդյանը գրում է. «Ջեմ նախանձում Իտալիայի ազատության, դորա հակառակ առ ի սրտե ուրախ եմ, սակայն տեսնելով նորա ազատությունը և իմ ազգի տկարությունը, կրծում է սիրտս և այրվում է հոգիս... Էտնան և Վեզուվին ծխում են, Արարատի հին վուլկանի մեջ մի՞թե կրակ կմնա իսպառ... մահաբեր մտածություն»[17]։

Իտալական ժողովրդի ազատագրությունը առաջ բերեց բարի նախանձ, հուզեց ազգային-ազատագրական պայքար մղող հայ ժողովրդի ու նրա ազնիվ, անձնուրաց զավակների սիրտը, բորբոքեց նրանց հույզերն ու խոհերը և նրանց էլ ավելի քաջալերեց թշնամու դեմ մղվող պայքարում։

Հայ դեմոկրատներն ու լուսավորականները բարձր են գնահատում «Երիտասարդ Իտալիա»-ի և գարիբալդիականների հերոսական պայքարը և նրանց հետապնդած նպատակը, աշխատում են հայերի ազատագրական շարժումները առաջ մղել նրանց օրինակով։

Իտալական ժողովրդի հաղթանակով ոգեշնչված, Նալբանդյանի օրինակով, «Լևոնի վիշտը» պոեմում Շահազիզը քարոզում է ազատություն, կամենում է տեսնել ազատ Հայաստան և այդ նվիրական գործի համար նրա զավակներին մարտի է կոչում։

Ուրե՛մն թրեր, ուրե՛մն սրեր,
Թո՛ղ հանդիսանան այստեղ դարավոր,
Թո՛ղ թափվին անպարտ արյան առուներ,
Դա անմահ գործ է ավետավոր[18]։

Հայաստան աշխարհը տնքում էր օտար բռնակալների դաժան տիրապետության ներքո, ողողված էր նրա ժողովրդի դառն արտասուքով։ Վերջ տալ այդ արտասուքին, թոթափե՛լ բռնակալների լուծը, ազատել հայրենիքը կապկված շղթաներից,— գոչում է բանաստեղծը.

17 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 86։
18 Ս. Շահազիզ, Երկեր, Հայպետհրատ, 1947, էջ 191։

Մի վե՛ր կաց, կանգնիր, աշխարհ Հայաստան,
Մի թա՛փ տուր ուժով, թող ճեղքվեն կապանք,
Ահա՛ քեզ արյուն իմ նվիրական,
Թող ցողեն դաշտերդ փրկության հոսանք[19]։

Այսպիսով, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը, իտալական ժողովրդի ազատագրության օրինակով, նոր շունչ ու նոր թափ ստացավ։

Հակառակ Վիկտոր Էմմանուել III-ի և Կավուրի, որոնք պահպանում էին միապետական կարգերը Իտալիայում, «Երիտասարդ Իտալիա»-ն և գարիբալդիականները պայքարում էին ժողովրդական-դեմոկրատական կարգերի հաստատման համար։

1860 թվականին Նեապոլից Սվաճյանին գրած իր նամակում Նալբանդյանը բացահայտում է իտալական ազգային-ազատագրական շարժման մեջ գործող դասակարգային-սոցիալական խմբավորումներն ու նրանց հետապնդած նպատակները։ Նա իր խոր համակրությունն է հայտնում ժողովրդի կամքն արտահայտող Մաձզինիի և Գարիբալդիի նկատմամբ։

Մաձզինիի և գարիբալդիականների հեղափոխական-դեմոկրատական հայացքներ, ժողովրդի գերիշխանությունը հաստատելու ուղղությամբ նրանց ծրագիրն ու գործունեությունը, որոշ դեր խաղացին Նալբանդյանի հեղափոխական-դեմոկրատական աշխարհայացքի ձևավորման գործում։ Պատահական չէ, որ Մարքսն ու Էնգելսը Մաձզինիի կուսակցությունը համարում են «Դեմոկրատիայի աստվածաշունչը»[20]։

Նալբանդյանը ազգի ազատագրության գլխավոր ու հիմնական նախապայմանը համարում է նրա տնտեսական զարգացումը։ «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» իր աշխատության մեջ Նալբանդյանը մշակեց հայ ժողովրդի ազատագրության կոնկրետ ծրագիրը։ Նա մատնանշում է, որ հողը պետք է պատկանի ժողովրդին, առանց որի չի կարող լինել իսկական ազատություն և առանց դրան «թաքավորում է բռնությունը»[21]։

Առանց տնտեսական խնդրի լուծման, առանց տնտեսական անհավասարության վերացման, չի կարող լինել ժողովրդի ազատագրություն։

19 Ս. Շահազիզ, *Երկեր*, էջ 198։
20 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, том IX, Москва, 1933, էջ 271։
21 Մ. Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 3, էջ 56։

«Ազատությունը,— գրում է Նալբանդյանը,— ըստինքյան լոկ խոսք է և իրողապես չէ կարող մարմնանա, առանց տնտեսական խնդրի լուծելուն։ Ոչ մի ազատ կառավարություն, ոչ մի ազատ օրենսդրություն չէ կարող փրկել մարդը ստրկությունից, մինչև որ մարդը հողի իրավունք ունեցող չխոստովանվի»[22]

Այստեղից հետևում է, որ Նալբանդյանը չի բավականանում սովորական բուրժուական կարգերով ու նրանց օրենսդրություններով, որոնք սրբագործում են բուրժուական սեփականությունն ու իրավունքը, իսկ աշխատավոր մասսաները մնում են իրավազուրկ վիճակում։

Իր այդ դրույթից Նալբանդյանը եզրակացնում է. «Այսօր, եթե մի ժողովուրդ ստրուկ է, եթե նա հող չունի և եթե հաջողի նորան հող ձեռք բերել, իրավունքը և ժամանակը պահանջում են տնօրինել այնպես, ինչպես ցույց է տալիս ներկա հարկը, ինչպես ցույց է տալիս բանականությունը, և ոչ այնպես, ինչպես հին օրերից մնացած ավանդական կառավարությունքը տնօրինել են մինչև այժմ, այսինքն՝ տերության կամ ազնվականության, սեփականելով հողը և հասարակ ժողովուրդը զրկելով իրավունքից։ Վերջին դիպվածում ազգությունը ազատություն չէ ժողովրդին, նա փոխում է միայն նորա լուծը...»[23]։ Ըստ Նալբանդյանի «ներկա հարկը» և «Բանականությունը» պահանջում են հողի համայնական սեփականություն, որը վերջ կտա մեկի բռնությանը մյուսի նկատմամբ։ «Հողը պատկանում է հասարակության, որի ամեն մի անդամ հավասար իրավունք ունի հավասար քանակության վերա, հավիտյանս ժամանակների, և մի կողմից վաճառելու իրավունք չունենալով, իսկ, մյուս կողմից, առանց արգելքի հողը գործելու և արդյունավորելու իրավունքը անկողոպտելի պահելով, այդ հասարակության անդամը և նորա սերունդը հաստատում է յուր կյանքը մի ամուր և ապահով հիմքի վերա և անհնար է, որ նա կամ աղքատության հանդիպի կամ իսպառ կարոտ մնա»[24]։

Այսպիսով, Նալբանդյանը ռուս հեղափոխական-դեմոկրատների օրինակով, հողը ժողովրդին տալու հետ է կապում սոցիալիզմի իրականացման հեռանկարը, որը, անշուշտ, ուտոպիական է։ Նալբանդյանը իրավացի կերպով մեղադրում է ֆրանսիական բուր-

22 Մ. Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 3, էջ 61։
23 Նույն տեղում, էջ 92։
24 Նույն տեղում, էջ 49։

ժուազիային՝ հեղափոխության հիմնական սկզբունքներին դավաճանելու, բուրժուական սեփականությունը սրբազան ու անձեռնմխելի համարելու և հեղափոխությունը իրենց ուսերի վրա տարած բանվորներին ու գյուղացիներին իրավազրկելու համար։ «Ազատությունը, հավասարությունը, եղբայրությունը,— գրում է նա,— յուրյանց հիշատակը թողեցին մի քանի ոսկիների վրա, պատերի վերայի կարմիր գրերը դատապարտվեցին մնալ մի սպիտակ ներկի տակ»[25]։

Նալբանդյանը ձգտում է դեմոսի հեղափոխության հաղթանակին, նրա գերիշխանությանը, առանց որի նա չի պատկերացնում ազգի ազատագրությունը բռնակալների տիրապետությունից։ Նրա աչքում ազգը—հենց ինքը դեմոսն է, հասարակ ժողովուրդը, որը իր քրտնաջան աշխատանքով, իր ստեղծագործական եռանդով, իր ջերմ հայրենասիրությամբ և հայրենիքին մինչև վերջ իր նվիրվածությամբ, ազգի բախտավորության ու երջանկության է ձգտում։ Դրա համար էլ նա զբաղվում է ազգաշինության հարցով։ «Ազդ ասելով,— գրում է նա,— պիտի իմանալ հասարակ ժողովուրդը և ոչ նորա միջից, նորա քրտինքով ու նորա արյունով առաջացած մի քանի մեծարանք»[26]։

Ժողովրդի ազատագրության և ազգի բախտավորության հույսը Նալբանդյանը առաջին հերթին կապում է երիտասարդության հետ։ Նա է կանգնած ազատագրության համար մղվող պայքարի առաջավոր դիրքերում։

Հաստատակամություն, արիություն ու քաջություն, դժվարություններն ու արգելքները հաղթահարելու կարողություն ու անվհատություն, առաջ գնալու հակում, վստահություն արդար գործի հաղթանակի անխուսափելիության նկատմամբ, զարգացման դիալեկտիկայի ըմբռնումը,— այդ է պահանջում Նալբանդյանը ազգի ապագան ներկայացնող երիտասարդներից։

Ազգերի ու ժողովուրդների փրկության ուղին Նալբանդյանը տեսնում է ազգերի լիակատար ինքնորոշման և ազգային-ազատագրական պայքարի հետևանքով տեղի ունեցող դեմոկրատական հաղթական հեղաշրջման մեջ։

Կառավարման ձևերի փոփոխությունները ազատության երաշխիք չեն հանդիսանում, ասում է Նալբանդյանը։ Այդ երաշխիքը

25 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 49։
26 Նույն տեղում, էջ 54։

մարդկանց նյութական հավասարությունն է, իսկ այդ հնարավոր է դառնում այն դեպքում, երբ հողի մասնավոր սեփականությունը կփոխարինվի հողի համայնական սեփականությամբ։ «...Թող քառասուն անգամ, եթե կամենան,— գրում է Նալբանդյանը,— փոփոխեն կառավարման ձևը, բայց քանի որ հասարակության մի մասը տիրապետող է հողին, իսկ մյուս մասը մնում է մուրացիկ, այնտեղ թագավորում է բռնությունը»[27]։

Համազգային չարիք հանդիսացող պանդխտության ու գաղթականության գլխավոր պատճառներից մեկը Նալբանդյանը համարում է հողազրկությունը, որովհետև «տնտեսական խնդիրը մահու և կյանքի խնդիր է»[28], որովհետև «տնտեսական խնդիրն է... այն միակ հաստատ ուժը, որ ազգի անձնավորության մեջ ներգործելով, հավասարակշիռ է պահում արտաքին ուժերի ընդդեմ, որով և ազգությունը ապրում է»[29]։

Հետևապես, ասում է Նալբանդյանը, պետք է «քարոզել տնտեսական խնդիրը, քարոզել մարդը, քարոզել ազատությունը, միստիկներին գայթակղություն և բռնակալներին սահմանադրություն, իսկ հասարակ ժողովրդին փրկություն»[30]։

Այսպիսով, Նալբանդյանը ժողովուրդների ազատագրության ուղին տեսնում է միմիայն ներքևից եկած սոցիալական հեղափոխության, բռնակալների տիրապետության տապալման մեջ։

Թուրքական սուլթանիզմի և ռուսական ցարիզմի բռնակալական իշխանություններից հայ ժողովրդի ազատագրության հույսը։ Նալբանդյանը կապում է ցարիզմի դեմ ուղղված ռուսական ժողովրդական հեղափոխական-դեմոկրատական շարժումների հաղթանակի հետ, որի հետ կապելով միաժամանակ թուրքական և ռուսական բռնակալների կողմից ճնշված, հարստահարված և ստրկացված բոլոր ժողովուրդների ու, այդ թվում, թուրք ժողովրդի ազատագրության հույսը։

Այսպիսին է եղել հայ ժողովրդի ազատագրության Նալբանդյանի ծրագիրը, նրա վարքագիծն ու օրիենտացիան։ Խոշոր է եղել Նալբանդյանի գաղափարական ազդեցությունը արևմտահայ դեմոկրատական-լուսավորական գործիչների, արևելահայ ազգային դե-

27 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 56։
28 Նույն տեղում, էջ 61։
29 Նույն տեղում, էջ 73։
30 Նույն տեղում, էջ 91։

մոկրատների, հրապարակախոսների ու գրողների վրա, սուլթանական ռեժիմի դեմ պայքարող 1870—1880-ական թվականներին առաջացած գաղտնի կազմակերպությունների վրա։

2

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԼԻԲԵՐԱԼ ՀՈՍԱՆՔԸ

Ազգային-լիբերալ հոսանքի առաջացումն ու գործունեությունը կապված են Ստ. Նազարյանցի և Գր. Արծրունու անվան հետ։

Այս հոսանքը նախ՝ «Հյուսիսափայլ»-ի և ապա «Մշակ»-ի միջոցով պրոպագանդում էր նոր զարգացող հայ արդյունաբերական բուրժուազիայի՝ ժամանակին պրոգրեսիվ նշանակություն ունեցող գաղափարախոսությունը, պայքարում էր ֆեոդալական հարաբերությունների վերացման և նոր, կապիտալիստական հարաբերությունների հաստատման համար, պայքարում էր կղերա-պահպանողականների, խավարամոլների դեմ՝ դպրոցի, աշխարհիկ լեզվի ու գրականության, քաղաքակրթված ու լուսավորված հոգևորականության համար։

Այս հոսանքը կանգնած էր ռուսական օրիենտացիայի պաշտպանության դիրքերում, բայց միանգամայն տարբեր նալբանդյանի պաշտպանած ռուսական օրիենտացիայից։ Մեկը նայում էր դեպի միապետական-բուրժուական-ազնվականական Ռուսաստանը, իսկ մյուսը՝ դեպի աշխատավորական-դեմոկրատական հեղափոխական Ռուսաստանը։ Նրանց հետապնդած դասակարգային նպատակները տարբեր էին։

Հայ հասարակական-գաղափարական հոսանքների կողմից պաշտպանված այս կամ այն օրիենտացիան հայ ժողովրդի դասակարգային ներհակությունների արտահայտությունն է եղել։ «Օրիենտացիայի խնդիրը,— գրում է Աշոտ Հովհաննիսյանը,— տցիալական խնդիր է, ենթակա ժողովուրդների դասակարգային ներհակությունների ներքին դիալեկտիկային»[31]։

Չնայած իրենց հետապնդած բուրժուական նպատակներին, այնուամենայնիվ, ազգային-լիբերալները, պաշտպանելով ռուսական օրիենտացիա, արևմտահայերին տալիս էին ճիշտ կողմնորոշում, դաստիարակում էին նրանց մեջ այն հավատը, որ նրանք

31 Ա. Հովհաննիսյան, Հայ-ռուսական օրիենտացիայի ծագման խնդիրները, Էջմիածին, 1921, էջ 67։

թուրքական բռնապետությունից կարող են ազատվել Ռուսաստանի օգնությամբ։

Միաժամանակ լիբերալների ու նրանց գաղափարախոսների՝ Ստ. Նազարյանցի, Գր. Արծրունու առավելությունները շոշափված հարցերի շրջանակներում այն էր, որ նրանք խիստ կերպով քննադատում ու մերկացնում էին արևմտաեվրոպական դիվանագիտության խաղերն ու խարդախությունները, բարձր էին գնահատում Ռուսաստանի օգնությունը, նրա կուլտուրան ու գրականությունը։

1860 թվականին «Հյուսիսափայլ»-ի էջերում Ստ. Նազարյանցը գրում է. «Հայոց այժմյան գոյությունը Ռուսաստանի օրենքի հավասարության տակ այնքան լավ է, որ ոչինչ համեմատություն չկա մի եվրոպական քրիստոնյա տերության և մի բռնակալ ասիացի մահմեդական կառավարության մեջ, հայը Ռուսաստանում վայելում է քաղաքական իրավունք, ոչինչ բռնություն չէ հասնում ո՛չ նրա անձին, ո՛չ նրա ընտանիքին և ո՛չ նրա վաստակին, ամենը նա կարող է վայելել օրենքի պաշտպանության տակ, լցուցանելով միայն յուր պարտքը իբրև քաղաքացի մի տերության, որ նյութապես և բարոյապես սնուցանում է նրան, և տալիս է ամեն մի հային նույնքան իրավունք, որքան յուր ազգին, ամենևին անխտիր, իբրև միևնույն թագավորի որդիների»[32]։

Անկասկած է, որ Նազարյանցը շատ էր չափազանցնում ցարական Ռուսաստանում ազատությունն ու օրենքը, անտեսում էր ցարիզմի ազգահալած քաղաքականությունը, ցարիզմը, որը միշտ ազգերին հրահրում էր միմյանց դեմ, սերմանում էր ժողովուրդների միջև ազգայնական-ռասայական ատելություն և, հետևապես, հայը չէր կարող համահավասար քաղաքացի ճանաչվել, օրենքի առաջ հավասար լինել, միևնույն թագավորի իրավահավասար որդի լինել։

Շարունակելով իր մտքերը, Նազարյանցը գրում է. «Եվ Ռուսաստանը, մեր բարեմիտ Ռուսաստանը և մեր բարի թագավորը, որի բերանից դուրս են եկել այս մեծ խորհրդավոր խոսքերը... «Да, развивается по всуду и с новою стремление к просвещению» և թող ամենայն տեղ և նոր զորությամբ աճե ու զորանա ձգտողությունը դեպի լուսավորություն»...[33]։

Բայց Նազարյանցը միաժամանակ ճիշտ էր գնահատում Ռուսաստանի օգնությամբ պարսկական բռնապետությունից Հայաս-

32 «Հյուսիսափայլ», 1860, էջ 270։

33 «Հյուսիսափայլ», 1859, հունվար, № 1, էջ 11—12։

տանի արևելյան հատվածի ազավելու պատմական ակտի նշանակությունը հայ ժողովրդի տնտեսական, կուլտուրական ու քաղաքական կյանքի արթնացման համար։ «...Հայերը,— գրում է նա,— ճշմարտապես և իրավացի շնորհակալ են Ռուսաստանին, որ ազատել է նրանց մի անտանելի, անարգական ստրկությունից, և բացել է նոցա առջև մի նոր քաղաքական կյանքի ասպարեզ»[34]։

Ստ. Նազարյանցը, Գր. Արծրունին, որպես հայ լիբերալների առաջնորդներ ու գաղափարախոսներ, իրենց ունեցած ռուսական օրիենտացիայով, օբյեկտիվորեն օգնում էին հայ և ռուս ժողովուրդների բարեկամությանը։ Բայց այդ չէր նրանց հետապնդած բուն նպատակը։

Հայտնի է, որ 1860—1880-ական թվականներին լուրջ հեղաբեկումներ են տեղի ունենում նաև կովկասյան ժողովուրդների, և այդ թվում՝ հայ ժողովրդի տնտեսական կյանքում։ Կապիտալիզմը սկսում է արագորեն զարգանալ, որը արդյունք էր մի կողմից ռուսական կապիտալի ազդեցության և մյուս կողմից՝ կովկասյան ժողովուրդների պատմական առանձնահատկությունների։

Կովկասում կապիտալիզմի զարգացման առաջին ողջունողը եղավ հայ բուրժուազիան, որովհետև առևտրական կապիտալը հեշտությամբ տեղափոխվում է դեպի արդյունաբերական ձեռնարկությունները, վեր է ածվում արդյունաբերական կապիտալի և դրանով իսկ նա հանդես է գալիս որպես հասարակության խթանող նոր ուժ։

Անարգել զարգացման ու իր ճանապարհին եղած արգելքները հաղթահարելու համար հայ արդյունաբերական բուրժուազիային հարկավոր եղավ ստեղծել իր գաղափարախոսությունը։ Այդ գաղափարախոսությունը լիբերալիզմն էր։

Հայ բուրժուազիայի այդ գաղափարախոսության առանցքը կազմեց ազգային հարցը, որի պատվանդանը գործնականորեն դարձավ Թուրքական բռնապետությունից արևմտահայության ազատագրությունը և հայ ժողովրդի առանձին հատվածների կոնսոլիդացումը, նրա ազգակազմության պրոցեսի ավարտումը, որոնք առաջ քաշվեցին 1877—1878 թվականների ռուս-Թուրքական պատերազմի հետևանքով միջազգային իրադրությունների փոփոխման ու Բուլղարիայի և Բալկանյան մի շարք այլ սլավոն ժողովուրդների ազատագրման պայմաններում։

Գրիգոր Արծրունին և «Մշակ»-ի շուրջը համախմբված հրապարակախոսները քարոզում էին ազգային տնտեսության կազմակերպման անհրաժեշտության մասին, պահանջում էին զարգացնել արդյունաբերությունը, նրանք գտնում էին, որ հայ բուրժուազիան կարող է տիրապետող տնտեսական մեծ ուժ դառնալ Կովկասում և իր ձեռքում կենտրոնացնել նրա արդյունաբերությունը։ Ուստի նրանք կոչ էին տնում հայերին, որ նրանք բոլոր միջոցները գործադրեն ազգի կապիտալիստական վերածնության համար։

Ազգային լիբերալներն ընդունում էին, որ Ռուսաստանի հովանավորության տակ կովկասահայ բուրժուազիան նյութական ու մտավոր զարգացման համար մեծ հնարավորություններ ունի, իսկ արևմտահայությունը համեմատաբար այդ հնարավորություններից զուրկ է։

Հայ լիբերալները անկախ իրենց հետապնդած դասակարգային-քաղաքական նպատակներից, միանգամայն ճիշտ էին, երբ արևմտահայ ժողովրդի փրկության հույսերը կապում էին Ռուսաստանի օգնության ու նրա զենքի հաղթանակի հետ, կոչ էին անում հայերին օգնել և աջակցել ռուսական զենքի հաղթանակին, ներգրավվել ապստամբական կազմակերպությունների մեջ։

Այս հարցում ևս պահպանողականների դեմ մղված պայքարը վերջանում է լիբերալների հաղթանակով։ Հայ բուրժուազիան ու նրա գաղափարախոսությունը տվյալ ժամանակաշրջանում խաղացին պրոգրեսիվ դեր հայ հասարակական, տնտեսական ու քաղաքական կյանքում։ Բայց այդ բուրժուազիան ու նրա գաղափարախոսությունը հեղափոխական դեր չեն խաղացել։ Բուրժուազիան ու նրա գաղափարախոսությունը երևան եկան այն ժամանակ, երբ նրանց աչքի առջև երևում էր արդեն սոցիալիստական հեղափոխության ուրվականը։ Հայտնի իրողություն է, որ Արևմուտքի բուրժուազիայի համեմատությամբ, արևելյան երկրների բուրժուազիան ավելի անհետևողական, թույլ ու երկչոտ էր։

1903 թ. փետրվարի 23-ին «Бакинские известия»-ի էջերում լույս է տեսնում Բ. Կնունյանցի «Մի քանի խոսք «Մշակ»-ի մասին» խորագիրը կրող հոդվածը՝ նվիրված Գր. Արծրունու մահվան 10-ամյակին։ Կնունյանցը ճիշտ է գնահատում «Մշակ»-ի պրոգրեսիվ դերը՝ Գր. Արծրունու ժամանակաշրջանում և սուր կերպով քննադատում ու մերկացնում է Քալանթարի և Հ. Առաքելյանի խմբագրած «Մշակ»-ի վարքագիծը։ «Այդ օրգանի շուրջը,— գրում է Կնունյանցը,— այն ժամանակ համախմբվել էր այնպիսի հասարակություն, որ անհնարին էր նրանց տալ ընդհանուր բնութագիր։

34 «Հյուսիսափայլ», 1859, էջ 12։

Հայերի մոտ նրանք «լիբերալ» մեկ կատեգորիայի տակ են դրված»[35]։

Միանգամայն իրավացի է Կնունյանցը։ «Մշակ»-ի շուրջը համախմբված ոչ բոլոր գրողներն ու հրապարակախոսներն էին լիբերալներ։ Բաֆֆին, Ա. Արփիարյանը և ուրիշներ համախմբված էին «Մշակ»-ի շուրջը, հանդիսանում էին նրա հրապարակախոսները, բայց ազգային դեմոկրատներ էին։ Թե Ստ. Շահումյանը և թե Բ. Կնունյանցը բարձր են գնահատում հայ լիբերալների և մասնավորապես նրանց առաջնորդ Գր. Արծրունու դերը հնի դեմ նորի, առաջադիմականի համար մղված պայքարում։ Հետևապես, դոցենտ Ա. Ոսկերչյանը անտեղի է կշտամբում Ստ. Շահումյանին, Բ. Կնունյանցին և հայ մյուս հեղափոխական մարքսիստներին՝ Գր. Արծրունուն տված միանգամայն ճիշտ գնահատության համար[36]։

1860—1880-ական թվականներին ազգային լիբերալիզմն առաջադիմական էր, պայքարում էր սուլթանական Թուրքիայի մեծապետական շովինիզմի հարձակումների դեմ, արտահայտում էր թուրքական բռնապետությունից արևմտահայ ժողովրդի ազատագրական ձգտումը, պայքարում էր հայերի ազգային ուժերի հավաքագրման և մի ամբողջական Հայաստան ստեղծելու համար և այլն։ Նացիոնալիզմն ու լիբերալիզմը անբաժան կերպով կապված են միմյանց հետ։ «Նացիոնալիզմը եղել է և կա,— գրում է Ստ. Շահումյանը,— այն տարբերությամբ միայն, որ նախկին առաջադիմական ու հեղափոխական նացիոնալիզմը դարձել է այժմ մի ծայրահեղ հետադիմական իդեոլոգիա»[37]։

Այսպիսով, Նազարյանցի-Արծրունու ժամանակաշրջանի նացիոնալիզմը եղել է առաջադիմական։ Հայ մարքսիստների հին սերունդը նիհիլիստորեն չի մոտեցել անցյալի պատմական դեպքերի ու դեմքերի գնահատության հարցին։ Նա ըստ արժանվույն գնահատել է Արծրունու ժամանակաշրջանում «Մշակ»-ի խաղացած պրոգրեսիվ դերը։

Ստ. Շահումյանը տարբերում է «Մշակ»-ի Արծրունյան ժամանակաշրջանը նրան հաջորդող ժամանակաշրջանից։ «Լիբերալիզմից առաջ բուրժուազիան ապրել է դեմոկրատիզմի շրջանը,— գրում է նա,— այժմ նա ապրում է իմպերիալիզմի շրջանը, որ

35 «Бакинские известия», № 44, 23 февраля 1903.

36 Տես՝ Ա. Ոսկերչյան, Հայ մարքսիստական քննադատության հիմնադիրները, Հայպետհրատ, 1962, էջ 425—441։

37 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 2, Հայպետհրատ, 1957, էջ 298։

բուրժուազիայի տիրապետության վերջին շրջանն է. նացիոնալ-դեմոկրատիզմ, ապա նացիոնալ-լիբերալիզմ և այժմ նացիոնալ-իմպերիալիզմ...»[38]։

Այսպիսին է եղել Ստ. Շահումյանի վերաբերմունքը հայ հասարակական լիբերալ հոսանքի, նրա խաղացած դերի և կատարած էվոլյուցիայի մասին։ Բայց Ա. Ոսկերչյանը Շահումյանից և Կնունյանցից պահանջում է, որ նրանք Արծրունու մակարդակին դասեն նաև Սպանդար Սպանդարյանին։ Նա գրում է. «Բայց նույնպիսի մոտեցում նա (իմա՝ Կնունյանցը—Հ. Վ.) հանդես չի բերել «Նոր դարի» և նրա հիմնադիր՝ Սպանդար Սպանդարյանի գնահատության ժամանակ։ Այստեղ արդեն չի կարելի համաձայնվել հարգելի հեղինակի այն ընդհանուր գնահատականի հետ, թե «Նոր դարը» եղել է կղերականության ու հետադիմության արտահայտություն, իսկ նրա շուրջը համախմբվածները եղել են միայն կոնսերվատիվ տարրեր։ Ինչպես Գր. Արծրունուն, առանց վերապահության, առաջադիմության ջատագով դարձնելու, այնպես էլ «Նոր դարը» դարձյալ առանց վերապահության, ռեակցիոն օրգան համարելու հարցում Բ. Կնունյանցը որոշակիորեն սխալվում է»[39]։

Գր. Արծրունին իրոք որ բուրժուական պրոգրեսի ջատագով էր և իրավացի է Կնունյանցը։ «Նոր դարը» և նրա խմբագիր Սպանդար Սպանդարյանը հայ հասարակական-գաղափարական կյանքում նույն դերը չեն խաղացել, ինչպիսի դեր խաղացել են «Մշակ»-ը և նրա խմբագիր Գր. Արծրունին։ Այս պատմական ճշմարտությունը հասկանում և ընդունում են բոլորը, բայց չի ուզում ընդունել Ոսկերչյանը։

1860—1880-ական թվականներին հայ հասարակական հոսանքների բարոյա-քաղաքական կերպարը որոշող հարցերից գլխավորը՝ հայ ժողովրդի ազգակազմության պրոցեսի ավարտման հետ կապված սուլթանական ռեժիմից արևմտահայ ժողովրդի ազատագրության հարցն էր, Հայկական հարցի լուծումը։ Գր. Արծրունին Հայկական հարցի, ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսն էր, ռուսական օրիենտացիայի ջերմ պաշտպանը։ Իսկ Սպանդար Սպանդարյանը նշված հարցերի նկատմամբ այլ դիրքերումն էր և այնտեղ հասավ, որ պահանջում էր հայերի հլու-հնա-

38 Նույն տեղում։

39 Ա. Ոսկերչյան, Հայ մարքսիստական քննադատության հիմնադիրները, էջ 430։

զանդությունը սուլթանական բռնապետությանը և հայ ազգի գոյությունը պայմանավորում էր Թուրքիայի գոյությամբ։

Հետևապես, ինչպես կարելի է Գր. Արծրունուն և Սպանդար Սպանդարյանին կշեռքի միևնույն նժարի վրա դնել։ Մեր կարծիքով ու համոզմամբ ոչ թե Ստ. Շահումյանն ու Բ. Կնունյանցն են սխալվում, այլ կոպիտ կերպով սխալվում է ինքը՝ Ոսկերչյանը։ Հայ ազգային-լիբերալները և նրանց առաջնորդ Գր. Արծրունին 1870—1880-ական թվականներին ճիշտ դիրքավորում ունեին արևմտահայ ժողովրդի ազատագրության նկատմամբ, գաղափարական ուղղություն էին տալիս հայերին՝ նրանց ազգային-ազատագրական պայքարում։

3. Արևմտահայ ժողովրդի ազատագրության հարցի վերաբերմամբ իր յուրահատուկ վերաբերմունքը դրսևորեց կղերա-պահպանողական հոսանքը, որի դիրքավորման հետ համերաշխվում էին նաև ազգային-պահպանողականները։

«Մեղու Հայաստանի»-ի, «Նոր դար»-ի խմբագիրներն ու հրատարակիչները բացահայտորեն հանդես էին գալիս հայերի ազգային-ազատագրական շարժման ու նրա գաղափարախոսության ծավալման դեմ, պահանջում էին նրանց կույր հնազանդությունը սուլթանական ռեժիմին և արևմտահայերի ինքնուրույն գոյություն չէին պատկերացնում առանց սուլթանական Թուրքիայի գոյությանը։ Այս վնասակար տեսակետն էր պաշտպանում «Մեղու»-ի հրապարակախոս և «Նոր դար»-ի խմբագիր Սպանդար Սպանդարյանը։

Նշված օրգաններն ու նրանց խմբագիրները արևմտահայ ժողովրդի ազատագրության հույսը կապում էին արևմտաեվրոպական տերությունների հսկողության ներքո թուրքական կառավարության բարիկամեցողության հետ։ Կանգնած լինելով արևմտաեվրոպական և, հատկապես, անգլիական օրիենտացիայի դիրքերում, այս անձնավորությունները թշնամաբար էին վերաբերվում այն հոսանքների նկատմամբ, որոնք ունեին ռուսական օրիենտացիա և հայ ժողովրդի ազատագրության հույսերը կապում էին Ռուսաստանի օգնության հետ։

Կղերա-պահպանողական հոսանքի այդ պարագլուխների բռնած դիրքի հետ համերաշխվում էին նաև ազգային- պահպանողական «Կռունկ Հայոց աշխարհի»-ի հրատարակիչներն ու խմբագիրները, որոնք դատապարտում էին բոլոր այն առաջավոր գործիչներին, հրապարակախոսներին ու գրողներին, որոնք ձգտում

էին դեպի Ռուսաստանը և ճանաչեցին Արևմտյան Հայաստանի միացումը Ռուսաստանին։

Ազգային-պահպանողականների օրգան «Կռունկ»-ի խմբագիրներն ու հրատարակիչները ողջունեցին դաշնակից տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի ու Թուրքիայի հաղթանակը 1853—1856 թվականների Ղրիմի պատերազմում, պատերազմ, որի ժամանակ դաշնակիցների բլոկի դեմ, ռուսական զորքերի հետ միասին, արիաբար կռվում էին նաև հայ ժողովրդի շատ զավակներ թուրքական բռնապետությունից արևմտահայ հատվածի ազատագրության մեծ հույսերով։

Ազգային-պահպանողականների դիրքերի վրա կանգնած Կ. Շահնազարյանը, Աղաբեկյանը, Հ. Էնֆիաջյանը, Գ. Ախվերդյանը և մյուսները, արտահայտելով իրենց զայրույթը ռուսական ցարիզմի նվաճողական քաղաքականության դեմ, չկարողացան տարբերել միապետական Ռուսաստանը հեղափոխական-դեմոկրատական Ռուսաստանից։ Հենց այդ էլ նրանց մղեց արևմտաեվրոպական օրիենտացիայի ուղին։

Ազգային պահպանողականները իրենց այդ քաղաքականությամբ փաստորեն դատապարտում էին արևմտահայերին՝ թուրքական բռնապետությունից ազատվելու և Ռուսաստանի հպատակությունն ընդունելու ձգտումների համար։ «Պիտի նկատենք, սակայն,— գրում է Աշոտ Հովհաննիսյանը,— որ 60-ական թվականների կեսերին գլուխ բարձրացրած ռեակցիայի պայմաններում ռուսահայ ազգային պահպանողականների միտքը անխտիր կերպով գնաց քաղաքական համակերպողական ճանապարհով։ Մինչդեռ, ընդառաջելով ցարիզմի քաղաքականությանը, 70-ական թվականներին ռուսահայ ազգային լիբերալները ակտիվ միջամտություն էին բերում թուրքահայերի ներքին կյանքին և առաջ քաշում այսպես կոչված «Հայկական հարցի» քննարկումը, ռուսահայ ազգային-պահպանողականները ընդառաջում են Թուրքիայի Status guo —պաշտպանող արևմտաեվրոպական քաղաքականությանը և դիմադարձ լինում թուրքահայ ազատագրական շարժումից»[40]։

Պահպանողական այդ երկու հոսանքներն էլ արևմտահայ ժողովրդի ազատագրության հարցում միևնույն դիրքավորումն ունեին։ 1878 թ. փետրվարի 4-ի առաջնորդողում «Մեղու Հայաստանի»-ն գրում է. «Արևելյան քրիստոնեայք, թե՛ հայք և թե՛ այլք,

40 Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 2, էջ 57։

իրենց վիճակի փոփոխությունն ու իրենց ազատությունը պետք է հուսան Եվրոպայի մեծ տերությանց մարդասիրությունից և պաշտպանությունից, իրենք իրենց ուժով գործ տեսնել անկարող են։ Այս է մեր անձնական կարծիքը»[41]։

Խոսելով Բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների մասին և դրա հետ միասին դատապարտելով հայերի ազատագրական շարժումները, «Մեղու Հայաստանի»-ն գրում է. «Մինչև ե՞րբ պետք է սպասենք, ուրեմն, որ Տաճկաստանի հայերն էլ վայելեն ազատ քաղաքական իրավունքներ»։ Իր այդ հարցին տեղն ու տեղը պատասխանում է. «Մինչև այն ժամանակ, երբ նոքա կզարգանան գիտությամբ և ուսմամբ... Երկուս ու կես անբարեկարգ դպրոցներով, թերուս ազգային մշակներով և հողմ տարածող պուբլիցիստներով ազգերը երբեք հասած չեն իսկական ազատության կողափարին...»[42]։

Այդ ոչ ճիշտ դրույթից ելնելով մեղվականները դատապարտում էին այն հայերին, որոնք ռուսական զորքերի հետ միասին 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմի ժամանակ կռվում էին Թուրքիայի դեմ, աջակցում էին ռուսների հաղթանակին։ «Մի՞թե մինչև այժմ հայերը չհասկացան,— գրում է «Մեղու Հայաստանի»-ն,—որ ռուսաց կառավարությունն և ոչ էլ նրա զորքերը կարոտ չեն նոցա համակրության արտաքին ցույցերին, որոնց հետևանք է լինում նոցա թշվառությունը... Ռուսաստանը եթե պատերազմ հայտնել է քրիստոնեից ազատության համար, երբեք չի ցանկացել, որ նոքա իբրև անզեն և թույլ խղճուկներ կոտորվեն իրենց անխոհեմությամբ...»[43]։ «Մեղու Հայաստանի»-ի խմբագրությունը սխալվում էր։ Նախ, որ Ռուսաստանի և նրա բանակների համար ստրատեգիական նշանակություն ունեին հայերի կողմից եղած համակրությունն ու աջակցությունը՝ պատերազմում հաղթանակ շահելու համար։ Երկրորդ, որ Ռուսաստանի կողմից մղված պատերազմը առաջին հերթին և գլխավորապես հետապնդում էր ռուսական ցարիզմի զավթողական նպատակը և ոչ թե քրիստոնյա ժողովուրդների ազատագրությունը։ Չնայած ռուսական ցարիզմի նպատակներին, այնուամենայնիվ, այդ ժողովուրդները Ռուսաստանի հաջողությունների հետ էին կապում իրենց փրկության հույսը։ Բալկանյան սլավոն ժողովուրդները թոթափեցին թուրքական լուծը Ռուսաստանի օգնությամբ։

Բեռլինի դաշնագրի 61-րդ շարաբաստիկ հոդվածից հետո, երբ հայ ժողովուրդը հիասթափված էր կոլեկտիվ միջամտության եվրոպական տերությունների սին խոստումներից, մեղվականները պահանջում էին համբերատար կերպով սպասել նրա դրական հետևանքներին։ «Շատերը կարծում են,— գրում է «Մեղու Հայաստանի»-ն,— որ տաճկահայերի հարցը քննեցավ, երբ նոցա հիշատակագիրը դեսպանաժողովում ընդունելություն չգտավ և չքննվեցավ. ուստի և շատերի մեջ հուսահատություն է երևում, մանավանդ տաճկահայերի... Մենք կարծում ենք, որ այդպիսի երկյուղը տեղի չունի...»[44]։

«Մեղու Հայաստանի»-ն 1878 թվականը համարում է «նշանավոր տարի», որովհետև «նա դարագլուխ եղավ հայ ազգի պատմության մեջ...»[45]։

Մեղվականների կարծիքով Ազգային ժողովի գործիչները՝ Ստեփան Փափազյանի, Գրիգոր Օտյանի և մյուս էֆենդիների խելոք քաղաքականությամբ հայերը կհասնեն բարենորոգումների։

«Չերկբայենք և հավատանք,— գրում է «Մեղու Հայաստանի»-ն,— որ Ստեփան փաշայի և Օտյան էֆենդիի գործունեությունը.... խեղճ հայ ազգի վիճակի բարօրության հիմք դնեն, շնորհիվ Բ. Դոան և եվրոպական տերությանց մարդասեր հայացվածքների և կանմահացնեն իրենց անունները հայ պատմության էջերում»[46]։

Թերթի այդ նույն համարում «Գ. Ա. Օտյան էֆենդի» խորագիրը կրող հոդվածում ասված է. «Օտյան էֆենդին Բ. Դոան այն հավատարիմ և ուղղախոհ հայ պաշտոնյաներից է, որոնք աշխատում են հայ ազգի շահերը կապել օսմանյան պետության շահերի հետ»[47]։

Որ Օտյան էֆենդին և հայ էֆենդիները Բ. Դոանը հավատարիմ էին, այդ հասկանալի է։ Բայց ինչու՞ հայ ազգի շահերը պետք է կապվեին օսմանյան պետության շահերի հետ, այդ անհասկանալի է, այն պետության, որը Բեռլինի դաշնագրից հետո հայերի արտաքսման, ասիմիլացման և բնաջնջման կուրսն էր վերցրել։

«Մեղու Հայաստանի»-ի խմբագիրները գտնում էին, որ Հայ-

41 «Մեղու Հայաստանի», № 5, 1878։
42 «Մեղու Հայաստանի», № 29, 1876։
43 «Մեղու Հայաստանի», № 28, 1877։

44 «Մեղու Հայաստանի», № 31, 1878։
45 «Մեղու Հայաստանի», № 50, 1872։
46 «Մեղու Հայաստանի», № 40, 1872։
47 Նույն տեղում։

կական հարցը արդեն լուծված է 61-րդ հոդվածով և, հետևապես, ուրիշ ճանապարհ չկա նրա լուծման համար։

«Այս գաղափարներն են հայոց հարցի վճռողն ու ոչ ունայն ցույցեր, այս գաղափարների ծառա և պաշտպան են Եվրոպայի լուսավորյալ տերությունք և ազգերն, որոնց բարոյական ճնշումն շատ ավելի զորեղ է, քան մի քանի անզոր հայ երիտասարդների աննշան ցույցերը...»[48]։

Փակելով իրենց աչքերը սուլթանական Թուրքիայում գավառահայության համար ստեղծված օրհասական դրության առջև, մեղվականները դատապարտում էին հայերին՝ ապստամբություններ և ցույցեր կազմակերպելու համար։ Նրանք գտնում էին, որ հայերը իրենց խոհեմությամբ, թուրքական բռնապետությանը իրենց հանգիստ հնազանդությամբ միայն կկարողանան հասնել բարենորոգումների։

«Մենք կարծում ենք,— գրում է «Մեղու Հայաստանի»-ն,— որ այսպիսի ընթացքով մեր Կ. Պոլսի եղբայրք ավելի կգրավեն թե Եվրոպայի և թե Տաճկաստանի կառավարության համակրությունը, քան նախորդ բուռն միջոցներով...»[49]։

Մեղվականները համառորեն պնդում էին, որ «տաճկահայերը պետք է հուսան անկասկած Եվրոպայից իրենց ազատությունը»[50]։ Հայ ժողովրդի ազատագրության հույսը կապելով արևմտաեվրոպական տերությունների օգնության հետ, նրանք այնտեղ հասան, որ կապիտալիստական խոշոր տերություններին հռչակեցին որպես փոքր ազգերի ու ժողովուրդների շահերի «պաշտպաններ», այն տերություններին, որոնք այդ ազգերին ու ժողովուրդներին ծառայեցրել են իրենց զավթողական-եսական շահերի համար և այդ ժողովուրդների անբախտության, զրկանքների ու տառապանքների վրա կառուցել են իրենց շահութաբեր գործարքները։

«Մեծ ազգերը միշտ պաշտպան են եղած փոքր ազգերին,— գրում է «Մեղու Հայաստանի»-ն,— նոցա առաջանալուն և զարգանալուն նպաստած են, մանավանդ ճնշյալ ազգերուն։ Վերջին ռուս-տաճկական պատերազմի ժամանակ, որ հանուն Տաճկաստանի քրիստոնյա ազգերու ազատության մղվեցավ, զարթեցավ և տաճկահայոց վիճակի բարենորոգման հարցը։ Տարակույս չկա, որ հինգ հարյուր տարի ճնշված տաճկահայք ազատության ձայն լսելով Եվրոպայից հափշտակվեցան և իրենց ուրախության ցույցերը գուցե և չափազանցության հասցրին»[51]։

Մեղվականները մեղադրում էին մշակականներին, որոնք մերկացնում էին Անգլիայի շահադիտական դիտավորությունները և նրա վարած հակահայկական քաղաքականությունը։ 1880 թ. մայիսի 14-ի իր առաջնորդողում անհիմն հարձակումներ սկսելով «Մշակ»-ի հրապարակախոսների դեմ, «Մեղու Հայաստանի»-ի հրապարակախոս Սպանդար Սպանդարյանը գրում է. «Ուստի և սխալ և վնասակար էին այն ծուռ կարծիքները, որ հայ ժողովրդի մեջ տարածվեցան Անգլիայի վերաբերմամբ, շնորհիվ մեր մի քանի կարճատես և միմոս քաղաքագետների ու հրապարակախոսների, որոնք չամաչեցան Անգլիայի կառավարությունը տգետ, շահամոլ, բարբարոս և այլ սոցա նման տիտղոսներով կնքելու»[52]։

Սպանդարյանը գտնում է, որ Անգլիան հայերի միակ «բարեկամ» պետությունն է եղել և նրա շահերը չեն հակասել հայերի շահերին։ Նա գրում է, որ նախ՝ հայերը պատրաստ չեն ինքնուրույն կյանքի, այսինքն՝ ինքնավարության համար։ Եվ երկրորդ, որ ինքնավարություն ստանալով, հայերը գործիք կդառնային Ռուսաստանի ձեռքում՝ Անգլիայի դեմ։

Ամեն կերպ պաշտպանելով Անգլիային և քարկոծելով մշականներին, պաշտպանելով իր նիհիլիստական կոնցեպցիան, Սպանդարյանը գրում է. «Մենք միշտ, տարիներ առաջ ասել ենք, որ Անգլիայի շահերը պահանջում են, որ Տաճկահայաստանը ստանա վերանորոգություններ, մենք միշտ պնդել ենք և հիմա էլ համոզված ենք, որ Անգլիայից հայ ազգությանը երբեք վտանգ չի սպառնում, և չի էլ կարող սպառնալ»[53]։

Սպանդար Սպանդարյանը մեղադրում էր արևմտահայերին այն բանի համար, որ նրանք իրենց օրինական զայրույթն էին արտահայտում Բեռլինի դաշնագրով հայերի կոլեկտիվ խնամակալությունը ստանձնած եվրոպական տերությունների նկատմամբ։ «Թշվառ Հայաստանի հեգ զավակները գուցե կարծում են,— գրում է նա,— որ ազգային գործերը վատ վիճակի մեջ են, առաջ չեն գնում նրա համար, որ 61-րդ հոդվածը չի կատարվում, որ եվրոպական տերությունները հայ ազգի վիճակին անտարբեր են, որ Դուռը դեմ

48 «Մեղու Հայաստանի», № 65, 1879։

49 Նույն տեղում։

50 Նույն տեղում։

51 «Մեղու Հայաստանի», № 85, 1879։

52 «Մեղու Հայաստանի», № 35, 1880։

53 «Մեղու Հայաստանի», № 182, 1881։

է հայերին... Ո՛չ, ամենևին ո՛չ։ Ազգի թշվառ դրության գլխավոր պատճառն այն է, որ գործողներ չկան»[54]։

Իսկ երբ Խրիմյան Հայրիկը, Մ. Փորթուգալյանը և Կ. Կամսարականը և մյուսները Վանում ղեկավարում ու ուղղություն էին ցույց տալիս ժողովրդի ազգային-ազատագրական շարժումներին, Սպանդարյանը պահանջում էր դատապարտել նրանց։ «...Նրանք պետք է հայհոյեն իրենց բարերարները,— գրում է նա,— պետք է երկրից արտաքսեն, հալածեն իրենց բարեկավության համար աշխատողները...»[55]։

«Մեղու Հայաստանի»-ի դադարումից հետո, Սպանդար Սպանդարյանի խմբագրությամբ լույս աշխարհ եկավ «Նոր դար»-ը, որը շարունակեց իր նախորդի տրադիցիաները։ Այդ իր օրգանը Սպանդարյանը նորից ծառայեցրեց անգլիական օրիենտացիայի պաշտպանությանը՝ ընդդեմ ռուսական օրիենտացիայի։

«Միմիայն այսքանը կասենք,— գրում է նա,— որ տաճկահայերը չպետք է վհատվեն, հաստատ գիտենալով, որ մինչև այսօր ապրող ժողովուրդը չի մեռել, եթե ինքն իրեն չսպանե։

Մենք մեր կողմից Անգլիային միշտ տաճկահայերի բարեկամ ենք ճանաչել և անցյալում աշխատել ենք զգուշացնել տաճկահայերին այն հրապարակախոսներից, որոնք ճիգ էին թափում Անգլիային թշնամի ներկայացնել տաճկահայերին»[56]։

Այսպիսով, Սպանդարյանը հայերի ազգային-ազատագրական շարժումները, ազատագրական պայքարի գաղափարախոսությունը և այդ ուղղությամբ հրապարակի վրա եղած Նալբանդյանի, Շահազիզի, Ռ. Պատկանյանի, Բաֆֆու, Արծրունու և մյուսների աշխատությունների ընթերցումը համարում է ինքնասպանության քայլ և խորհուրդ է տալիս հրաժարվել այդ քայլից և ազատագրության հույսը սպասել Անգլիայից։

Նիհիլիստորեն գնահատելով հայ ժողովրդի պատմական անցյալը, խաչ քաշերով օտար բռնակալների դեմ նրա մղած հերոսական ու անձնուրաց պայքարի տրադիցիաների վրա, Սպանդարյանը փորձում է ապացուցել, որ հայերը միշտ էլ հեզությամբ տարել են բոլոր բռնակալների լուծը և այդպես էլ պետք է տանեն թուրքական բռնապետության լուծը։

---

54 «Մեղու Հայաստանի», № 39, 1884։

55 «Նոր դար», № 17, 1884։

56 «Նոր դար», № 6, 1884։

«Անմտության հերոսները» վերնագրով «Նոր դար»-ի առաջնորդող հոդվածում Սպանդարյանը գրում է. «Ամենահին ժամանակներից հայ ազգը հայտնի է իբրև վերին աստիճանի տիրասեր և հավատարիմ հպատակ։ Փաստ է, պատմական անհերքելի փաստ, հայն յուր հարազատ, արյունակից տերին այնքան անձնվիրաբար չի ծառայել, որքան օտարին... Մեր կրոնը մեզ պատվիրում է՝ թե՝ ծառայ, հնազանդ եղեք ձեր տերերին»[57]։ (Ընդգծումները մերն են—Հ. Վ.)։

Այս տողերը Սպանդարյանը գրում էր այն ժամանակ, երբ Աբդուլ-Համիդի կառավարությունը ձեռնարկել էր հայերի ֆիզիկական ոչնչացման վաղօրոք մշակած իր նողկալի ծրագրի իրագործումը։

Սպանդարյանը արևմտահայերի համար ձեռնտու էր համարում մնալ թուրքական բռնապետության ներքո, քան միանալ Ռուսաստանին։ Նա արևմտահայերի ինքնուրույն գոյությունը չէր պատկերացնում առանց Թուրքիայի։ Դրա համար էլ պահանջում էր հլու-հնազանդ ու խոհեմ հպատակություն նրա կառավարությանը։ «Թուրքահայերը այնքան խոհեմ կլինեն և անցյալից խրատված,— գրում է նա,— որ ջրից դուրս գալուց առաջ կնայեն, որպեսզի կրակի մեջ չընկնեն, և այնպես չանեն, որ իրենց վերայի եզան լուծը հանելով՝ ձիու խամուտը չհագնեն։ Հետևաբար թուրքահայերը խոհեմությամբ և զգուշությամբ կվարվեն և հավատարիմ մնալով կառավարության, կաշխատեն հենց այդ վերջինից ձեռք բերել իրենց հուսալի իրավունքները և մարդավայել կացություն, քանի որ իրենց բախտը կապված է Թուրքիայի գոյության հետ»[58]։

Սպանդարյանը արևմտահայերին կշտամբում էր նաև ինքնապաշտպանության փորձերի դիմելու համար այն դեպքում, երբ սուլթանի կառավարությունը նրանց զրկել էր ինքնապաշտպանության դիմելու բոլոր հնարավոր միջոցներից։

«Նոր դար»-ի էջերում տպագրված էրզրումից ստացված թղթակցության մեջ ասված է, որ «թուրքական կառավարության համար բավական է մի չնչին կասկած այս կամ այն հայի վրա, որ առանց դատի ու քննության աքսորեն նրան Արաբիա կամ Եգիպտոս, որ մարտ ամսվա սկզբներում թրքական ավազակախմբերը հարձակվեցան Խարբերդի մոտ գտնված Հիսսենիկ գյուղի վրա..., սկսեցին անգթաբար կոտորել հայերին և հափշտակություններ և ավերում-

---

57 «Նոր դար», № 127, 1894։

58 «Նոր դար», № 131, 1886։

ներ գործել։ Այդ ժամանակ հայ գյուղացիները պաշտպանվում էին մահակներով։ Տեղական վարչությունները հայերի պաշտպանությունը ապստամբություն համարելով, իսկույն 40 հոգի ձերբակալեցին և կալանավորեցին»[59]։

Այդ նույն թղթակցության մեջ միաժամանակ ցույց է տրված, որ թուրքական կառավարության ապօրինի և անօրինական գործողությունների հետ միասին, հայերին տանջում են քրդական բեկերն ու չերքեզները՝ նրանց վրա սիստեմատիկ հարձակումներ գործելով՝ մնալով բոլորովին անպատիժ։ Թղթակիցը նշում է, որ «ամբողջ երկիրը համարյա թե ամայացրել ու ծածկել են սավանով»[60]։

«Մի թղթակցության առթիվ» առաջնորդող հոդվածում Սպանդարյանը գրում է. «Զարմանալի չէ, որ այդպես լինի։ Այստեղ կարելի է Մոլերի մի կոմեդիայի մեջ յուր կնոջից նեղացած ամուսնու ասած խոսքը կրկնել։ «Դու ինքդ կամեցար այդ, Ժոժո Դաղեն»։ Իրենք՝ մեր անխոհեմ բախտախնդիր հերոսները կամեցան, որ թուրք իշխանությունը կասկածանքով նայե իրեն հպատակ հայերի վրա։ Իրենք՝ այդ թեթևամիտ, վախկոտ և շահախնդիր հայերը իրենց մասնավոր հաշիվների համար չեղած տեղը հրդեհ գոռացին, թշնամի չեղած տեղը՝ մեծ կոտորածներ արին, գինու բաժակների շրխկոցները թշնամուն իբրև հրացանների թնդյուններ ցույց տվին...»[61]։ Փաստորեն Սպանդարյանը ասում էր այն, ինչ ասում էին և ասում են պատմության թուրքական կեղծարարները։

Թուրքական կառավարության կողմից հայերի բնաջնջման ծրագրի կետերից մեկն էլ արհեստական սովի կազմակերպումն էր։

Մենք նախորդ գլուխներում այդ հարցը քննարկել ենք հանգամանորեն։ Մեր խնդիրն է այստեղ ցույց տալ, թե ինչպիսի՞ դիրք էին գրավում կղերա-պահպանողականները դեպի այդ և նրա հետևանքով ուժեղացած հայերի արտագաղթը։ «Տառապյալ զեյթունցիների մասին» առաջնորդող հոդվածում, խոսելով Զեյթունում և Վասպուրականում տեղի ունեցած և սիստեմատիկորեն կրկնվող սովի համաճարակի մասին, Սպանդարյանը հանցավոր չի համարում թուրքական կառավարությունն ու նրա վարած քաղաքականությունը, այլ, ընդհակառակը, նա գտնում է, որ «վեհ սուլթանը

59 «Նոր դար», № 91, 1886։
60 Նույն տեղում։
61 Նույն տեղում։

առաջինն է, որ օգնության ձեռք է մեկնում յուր տառապյալ հպատակներին»[62]։

Իր այս սխալ տեսակետից ելնելով, Սպանդարյանը նախատում է հայերին, որոնք հարկադրաբար գաղթում էին կամ բռնում էին պանդխտության ուղին՝ մի կտոր հաց վաստակելու, իրենց կյանքն ու ընտանեկան պատիվը պաշտպանելու համար։ «Գաղթելու հակումը հայերի մեջ» վերնագրով առաջնորդող հոդվածում Սպանդարյանը գրում է. «Այսօր էլ տեսնում ենք, որ հայերը գաղթում են օտար երկրներ ամենայն պատրաստակամությամբ, թեպետև ստիպողական հանգամանքներ չկան»[63]։

Այսպիսով, Սպանդարյանը ժխտում է Թուրքիայում հայերի հողազրկումը, նրանց նկատմամբ գործադրված սոցիալական և ազգային ճնշումը, նրանց հարստահարությունների ու իրավազրկության ուժեղացած փաստերը։ Այդ բոլորը նա գաղթականության «ստիպողական հանգամանքներ» չի համարում։ Ապա ո՞րն է եղել հայերի գաղթի դիմելու դրդիչ պատճառը։ Սպանդարյանը պատասխանում է, որ գաղթը հայերի կողմից վաստակի հետևից վազելու ձգտումն է։ «Գաղթելու բուն շարժառիթն այն է,— գրում է նա,— որ կարծում են թե կարճ ժամանակում ավելի դյուրին միջոցով մի հայտնի գումարի տեր կդառնան»[64]։

Մի քանի տարի անց նորից անդրադառնալով այդ հարցին, Սպանդարյանը նշում է, որ Փոքր Ասիայից ավելի քան 40.000 հայեր գաղթել են։ Բայց ինչու՞։ «Ով ինչ ուզում է թող ասի,— պատասխանում է նա,— բայց մենք հայերի մեջ գաղթելու ձգտումը վերագրում ենք նրա առևտրական հոգուն... Մեր ամեն գործերի մեջ տիրապետող ոգին՝ առևտրական հոգին է»[65]։

«Թրքահայ գաղթականության խնդիրը» վերնագրով մի այլ առաջնորդող հոդվածում Սպանդարյանը փաստորեն պահանջում էր փակել Կովկասի դռները Թուրքիայից գաղթող հայերի առջև։

«Պետք է ապագա գաղթականության առաջն առնելու համար,— գրում է նա,— Վանի, Մուշի և այլ գավառների հայ հասարակություններին հասկացնել, որ Կովկասում ոսկու հանք չկա, և թե իրենք հայրենի երկիրը ձգելով, նրանք ավելի մեծ թշվառության են դիմում»[66]։

62 «Նոր դար», № 4, 1888։
63 «Նոր դար», № 9, 1888։
64 Նույն տեղում։
65 «Նոր դար», № 102, 1890։
66 «Նոր դար», № 129, 1894։

1890—1896 թվականներին, երբ հայ ժողովուրդը օրհասական վիճակումն էր, Սպանդարյանը գտնում էր, որ «Թուրքահայերը խաղաղ և անդորր կացություն ունին»[67]։ Ավելին. «Հայաստանի հայերի մասին» վերնագրով հոդվածում «Նոր դար»-ի խմբագրությունը սկսեց մեղադրել եվրոպական պրոգրեսիվ թերթերին այն բանի համար, որ նրանք «Մշակ»-ի հրապարակախոսների օրինակով «չափազանցնում» էին Մուսա բեկի անվան հետ կապված հայերի նկատմամբ գործադրված չարագործությունները։ Իսկ երբ հայերը այլևս դիմանալ չկարողանալով գաղթում էին, նա պահանջում էր, որ նրանք «իրենց երկրում մնան, և ինչպես առաջ, այսուհետև էլ հավատարիմ մնան իրենց պետին՝ սուլթանին և պաշտպանեն իրենց անձը»[68]։

«Թուրքահայերի արդի դրությունը» վերնագրով առաջնորդող հոդվածում Սպանդարյանը դատապարտում էր արտասահմանից Թուրքիա ուղարկված թերթերի խմբագրություններին, որոնք դրանով ալեկոծում են հայերի անդորրությունը և տեղիք են տալիս սուլթանին զայրանալու և պատժելու նրանց իբրև ապստամբների։ Նա պահանջում էր, որ հայերը հրաժարվեն ազգային-ազատագրական պայքարից և հեզաբար գլուխ խոնարհեն սուլթանի իշխանության ամենակարողության առաջ։

«Քանիցս անգամ առիթ եղած տեղը ասել ենք և այս անգամ էլ մեր ձայնը բարձրացնելով պիտի կրկնենք այն միտքը,— գրում է Սպանդարյանը,— ազգի կենսական շահերը պահանջում են, որ թրքահայերը հավատարիմ լինեն օսմանյան պետության... որ օսմանյան պետության բարգավաճումը թրքահայերի գոյության խնդիրն է, ինչպես և նրա անկումը՝ թրքահայերի անհետանալն աշխարհիս երեսից... Ամեն տեղ հայերը պետք է որ հավատարիմ լինեն իշխող կառավարության, թրքահայերը եղել են և միշտ էլ պետք է լինեն հավատարիմ իրենց կառավարության, մանավանդ որ դրանով է պայմանավորված ազգի գոյությունը»[69] (ընդգծումը մերն է—Հ. Վ.)։

Թուրքիայում տիրող ռեակցիայի ժամանակ, երբ տեղի էին ունենում ձերբակալություններ, հետապնդվում էին մամուլը, գրականությունը, փակվում էին դպրոցները և այլն, Սպանդարյանը իր

67 «Նոր դար», № 221, 1894։
68 «Նոր դար», № 130, 1889։
69 «Նոր դար», № 17, 1888։

օրգանով հանդես էր գալիս հերքողի դերում և պաշտպանում թուրքական կառավարությանը։ Նա գրում է. «Ընդհակառակը, մենք մինչև օրս այնպես ենք հավատացած, որ հայ դպրոցները Թուրքիայում և Հայաստանում կարող են ազատ գոյություն ունենալ և ունին, որ հայոց կրոնը, կրոնի և մայրենի լեզվի ուսումն և այլն վայելում են կատարյալ ազատություն»[70]։

Այս դատողությունից հետո Սպանդարյանը գրում է, որ «Քրիստոնյա Եվրոպան չէ, որ Երուսաղեմի վրա ունեցած հայոց դարավոր իրավունքները պաշտպանում է, այլ թուրք կառավարությունը... Մի քանի անմիտների արարքը հարուցել են թուրք կառավարության կասկածները հայերի դեմ և դրանից է առաջացել այն ձերբակալությունները, դպրոցների փակումը, որոնց մասին եվրոպական թերթերը չափազանցրած լուրեր են հաղորդում»[71]։

Այսպիսով, Սպանդար Սպանդարյանը բացահայտորեն կանգնած էր հայ ժողովրդի թշնամիների պաշտպանության դիրքերում և իր գաղափարախոսությամբ արդարացնում էր սուլթանական կառավարության հայաջինջ քաղաքականությունը։ Այս բոլորից հետո դոցենտ Ա. Ոսկերչյանը կշտամբում է Բ. Կնունյանցին և պահանջում է Սպանդար Սպանդարյանին դասել Գր. Արծրունու շարքում, որը դատապարտելի է։

Ամփոփենք. Մ. Նալբանդյանի գլխավորած հեղափոխական դեմոկրատ հոսանքը միանգամայն իրավացի էր, երբ արևմտահայերի ազատագրության հարցը լծորդում էր համաեվրոպական և, գլխավորապես, ռուսական դեմոկրատական հեղափոխության հաղթանակի հետ։

Ազգային-լիբերալները՝ որպես հայ բուրժուազիայի գաղափարախոսներ, խորշում էին սոցիալական հեղափոխություններից, բայց արևմտահայերի ազգային-ազատագրական շարժման գործում դրական դեր խաղացին, որովհետև այդ հարցը սերտորեն կապված էր հայ ժողովրդի ազգային ուժերի կոնսոլիդացման և ազգակազմության պրոցեսի ավարտման հետ։ Կանգնած լինելով ռուսական օրիենտացիայի դիրքերում, նրանք, անկախ իրենց հետապնդած դասակարգային-քաղաքական նպատակներից, ճիշտ կողմնորոշում էին տալիս արևմտահայերին՝ իրենց ազատագրության համար մղվող պայքարում։

70 «Նոր դար», № 20, 1888։
71 Նույն տեղում։

Կղերա-պահպանողական հոսանքը արևմտահայերի ազատագրությունը կամ Հայկական հարցի լուծումը կապելով եվրոպական մեծ տերությունների հսկողության ներքո սուլթանական Թուրքիայի բարեկամեցողության հետ, իրականում ապակողմնորոշում էր հայերին և արգելք դառնում նրանց մղած ազգային-ազատագրական պայքարին։ Ավելին. այդ հոսանքի ղեկավարներն ու նրանց օրգանները արդարացնում էին սուլթանական կառավարության հակահայկական քաղաքականությունը։ Այդ են ասում վկայակոչված բազմաթիվ անհերքելի փաստերը։

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՀԱՅ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՐԱՆՑ ԾՐԱԳՐԵՐՆ ՈՒ ՏԱԿՏԻԿԱՆ

1880—1890-ական թվականներին հայերի տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքում առաջացած հեղաբեկումների և սուլթանական բռնապետության դեմ ուղղված արևմտահայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման վերելքի ժամանակամիջոցում ծնունդ առան ազգային-քաղաքական կուսակցություններ՝ արևմտահայության ազատագրության իրենց ծրագրերով և տարբեր տակտիկայով, որոնց մարքսիստական-լենինյան ճիշտ լուսաբանումը կկազմի մեր աշխատության նախավերջին գլխի հիմնական բովանդակությունը։

1. Արմենականներ.— Հայ ազգային քաղաքական հոսանքներից առաջինը եղել է արմենականների կուսակցությունը[1]։ Արմենականների գլխավոր կենտրոնը Վանն էր, Վասպուրականը։ «Վանի մեջ,— գրում է Արտակ Դարբինյանը,— ծնունդ առավ մեր ազգային-ազատագրական շարժման նվիրված անդրանիկ հայ կազմակերպությունը— արմենականությունը»[2]։

Վանում արմենականների կազմակերպությունը 1890 թվականին իր շարքերում ուներ 70—100 անդամ և համակրող։ Վանի դա-

---

1 Արմենականները առաջացան 1885 թվականից՝ Մ. Փորթուգալյանի ղեկավարությամբ, երբ Մարսելում հիմնվեց «Արմենիա» անունով թերթը։ Լինելով դավառահայ բուրժուազիայի ներկայացուցիչները, նրանք մոտիկից ծանոթ էին Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի պայմաններին, որի հետևանքով մշակեցին ավելի ճիշտ տակտիկա, գործում էին ավելի խելոք ու մտածված։ Նրանց մասին մենք չենք ծավալվում, որովհետև պատրաստում ենք 10 մամուլ ծավալով առանձին մենագրություն։

2 Ա. Դարբինյան. Հայ ազատագրական շարժման օրերեն (հուշեր 1890 են 1940), Փարիզ, 1947, էջ 6։

վառում՝ Թիմարում, Հայոց ձորում, Գավաշում, Շատախում և Բիթլիսում սովորող հասակավոր աշակերտները և ուսուցիչները մտնում են արմենականների շարքերը և դառնում ազատագրական պայքարի պրոպագանդիստներ։ Կիրակի և տոն օրերին երիտասարդները Վարագա վանքի լեռն էին բարձրանում՝ զինավարժության համար։

Արմենականների պրոպագանդիստները այլևս չէին երգում դավառահայությանը ոչինչ չխոստացող Ազգային Սահմանադրության մասին, այլ «անոնց փոխարեն կերգվեին նոր, ազատաշունչ երգեր։ Գամառ-Քաթիպայի «Ազատ երգերը», կոմս Էմմանուելի (Մ. Նալբանդյանի), «Ազատն ասուած»-ը, «Մեր Հայրենիք»-ը, Բաֆֆու «Ձայն տուր, ով ծովակ»-ը, Խրիմյանին նվիրված «Հայրիկ, Հայրիկ, քո հայրենիք»-ը, Մ. Փորթուգալյանին ձոնված «Թեև վտար քաղաքե քաղաք»-ը և ուրիշ բազմաթիվ հայրենասիրական, ազատատենչ և ռազմաշունչ երգեր ամենքի շրթունքի վրա էին»[3]։

1885 թվականին, պողոսականների դավաճանության ու մատնության հետևանքով, Խրիմյանն ու Փորթուգալյանն արտաքսվում են քաղաքից։ Բայց Ապապողոսականները—Մ. Փորթուգալյանի գաղափարակիցները՝ անհաշտ պայքար են ծավալում Պողոսականների դեմ, ուժեղացնում են ազգային-ազատագրական պայքարի պրոպագանդան։ Փորթուգալյանի աշակերտները «Նախաձեռնարկ ըլլալով,— գրում է Սարգիս Իզմիրլյանը,— կազմեցին առաջին հեղափոխական կուսակցությունը, որ կոչվեցավ Արմենական, որուն գործունեությունը սահմանափակվեցավ Վասպուրականի շրջանին մեջ»[4]։

Փորթուգալյանի զինակիցներից էր Մ. Թերլեմեզյանը, որը ղեկավարում էր Ապապողոսականների պայքարը։ Ա. Դարբինյանը նշում է, որ նա իր հոր անունով Մ. Ավետիսյան կոչվեց ու ստանձնեց Փորթուգալյանի դերը՝ կիրակի օրերը ակումբներում կարդացած դասախոսություններով։ «Մ. Ավետիսյանի գաղափարակիցները՝ Մ. Փորթուգալյանի աշակերտները,— գրում է Դարբինյանը,— հետզհետե ամրացուցին նորաստեղծ հեղափոխական կազմակերպությունը»[5]։

3 Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերեն (հուշեր 1890—1940), էջ 18։

4 Ս. Իզմիրլյան, Դատումներ մեր հարյուրամյա հեղափոխության մասին (անձնական հուշերուս ընդմեջեն), Պեյրութ, 1962, էջ 26։

5 Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերին (հուշեր 1890 են 1940), էջ 19։

Այսպիսով, 1885 թվականին սուլթանական ռեակցիայի հետապնդումներից Ֆրանսիա մեկնած Մ. Փորթուգալյանը (1848—1921) Մարսել քաղաքում հիմնադրեց «Արմենիա» անունով թերթը, որը արմենականների օրգանն էր և նշանակալից դեր խաղաց հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության պրոպագանդման, հայերի ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության պրոպագանդման, հայերի ազգային ինքնագիտակցության բարձրացման ու սուլթանական կառավարության հարձակումների դեմ նրանց ինքնապաշտպանության կազմակերպման գործում։

Արմենականների կազմակերպության գործունեությունը սերտորեն կապված է Մ. Փորթուգալյանի անվան ու գործունեության հետ։ Նրա նախաձեռնությամբ կազմակերպվեց «Հայոց Հայրենասիրական Միություն»՝ «Արմենիա» թերթի անխափան գործունեության և նրան նյութապես ու բարոյապես օգնություն կազմակերպելու նպատակով։

Մ. Փորթուգալյանը հանդիսացել է արևմտահայ ազատագրական պայքարի լավագույն գաղափարախոսներից մեկը։ 1870-ական թվականների սկզբում Մ. Փորթուգալյանը ծառայում էր լուսավորության բնագավառում, ուսուցչություն էր անում Եվդոկիայում։ Իր մանկավարժական գործունեությունը նա սերտորեն զուգակցում էր ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության պրոպագանդման և երիտասարդներին ազատագրական պայքարի նախապատրաստելու հետ։ Այդ պատճառով էլ Սեբաստիայի իշխանություններ՝ի կարգադրությամբ նրան ձերբակալում և ուղարկում են Կ. Պոլիս։ Այստեղ նրան հաջողվում է հիմնել «Ասիա» անունով առաջադիմական թերթ, որը շուտով փակվեց։

Հետագայում Փորթուգալյանը մեկնում է Վան՝ Ալյուր գյուղում դպրոց հիմնելու մտադրությամբ։ 1876 թվականին նա պաշտոնավարում է Հայկազյան վարժարանում, 1878 թվականին Վանում հիմնում է վարժապետանոց։

Բեռլինի կոնգրեսից հետո Մ. Փորթուգալյանի աջակցությամբ հիմնվում են «Արարատյան ընկերություն», «Կիլիկյան ընկերություն»։ Կիլիկիայում հիմնվում է «Դպրոցասերների ընկերությունը», որին միանում է «Արևելյան ընկերությունը», որոնց օգնությամբ Մուշ քաղաքում կազմակերպվում է «Կենտրոնական վարժարան», որը վերանվանվեց «Ներսիսյան վարժարան» անունով։

1881 թվականին Արարատյան, Կիլիկյան և դպրոցասերների

Արևելյան ընկերությունները միանալով՝ կազմում են «Հայոց միացյալ ընկերություն», որին ոգեշնչում և ուղղություն էր տալիս «Մշակ»-ի խմբագիր Գր. Արծրունին։ Այս ընկերությունները և նրանց ենթակա դպրոցներն ու վարժապետանոցները ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության պրոպագանդման օջախներ էին։

«Խումբ մը երիտասարդներ կազմեցին նաև զինավարժական ընկերություն մը (Զինակից),— գրում է Համբարձում Երամյանը,— որ կիրակի օրերը Վարագա լեռներուն մեջ փորձեր կկատարեր։ Գրեթե ամեն կիրակի, այս կամ այն վարժարանի մեջ լսարաններ կկազմակերպվեին. Փորթուգալյանն իր դերին մեջն էր։ Հայկազյան վարժարանի իր աշակերտներեն կազմված Հայրենասիրաց միության կիրակնօրյա բեմին վրա, ուր հաճախ կերևար նաև վարժապետանոցի ուսուցիչ Մարկոս Նաթանյանը»[6]։

Մ. Փորթուգալյանը հաճախ է լինում Թիֆլիսում, կապեր հաստատում Գր. Արծրունու հետ և ցուցումներ ստանում հայերի ազատագրական շարժումները ղեկավարելու համար։

1881 թվականին Փորթուգալյանը Թիֆլիսից վերադառնում է Վան և ծավալում իր պրոպագանդիստական ու կազմակերպչական աշխատանքը։ Կ. Պոլսի Հայոց մայր եկեղեցում ժողովրդի առջև Խրիմյան Հայրիկի ունեցած ելույթը, Գր. Արծրունու Ռ. Պատկանյանի, Բաֆֆու աշխատությունները օգնում են Փորթուգալյանին՝ ազատագրական շարժման գաղափարախոսության ծավալման գործում։

1870—1880-ական թվականներին Փորթուգալյանը, Կ. Կամսարականը և Խրիմյան Հայրիկը կանգնում են Վասպուրականի հայ ժողովրդի ազատագրական շարժումների ղեկավարման կենտրոնում ու դաստիարակում անխոնջ մարտիկներ, բոցաշունչ հայրենասերներ։

1878 թվականին բազմաթիվ հայ երիտասարդներ միանում և կազմակերպում են «Սև խաչ» մականունով մի կազմակերպություն, որն իր խնդիրն էր համարում ժողովրդի մեջ արմատավորել ինքնապաշտպանության դիմելու անհրաժեշտության գաղափարը։ Նրա նպատակն էր՝ պայքար ժողովրդի իրավունքների և կյանքի նորմալ պայմանների ստեղծման համար։

Թուրքական բռնապետության դեմ մղվող ազգային-ազատագրական պայքարի ժամանակ հաճախ էին լինում մատնության ու դավաճանության դեպքեր՝ գլխավորապես սուլթանական կառավարության օրգանների հետ կապված ազգուրաց ու շահամոլ հայ ունևոր դասակարգի ներկայացուցիչներից։ Դրա համար էլ «Սև խաչ» կազմակերպությունն իրեն նպատակ էր դրել սպանել մատնիչներին ու դավաճաններին, ոչնչացնել և սև խաչ քաշել այդպիսիների վրա։ Այդ կազմակերպությունը Վանում ուներ իր ակումբը, որտեղ տեղի էին ունենում հավաքույթներ, դասախոսություններ և երեկույթներ՝ ժողովրդին ազգային-ազատագրական պայքարի նախապատրաստելու նպատակով։

1882 թ. մայիսին Վանի հայ հասարակայնությունը տրագիցիոն կարգով և մեծ շուքով նշեց Ազգային Սահմանադրության տարեդարձը։ «Սև խաչ» կազմակերպությունը այդ տոնական հավաքույթը օգտագործեց ազատագրական պայքարի գաղափարախոսության համար։

Սուլթանական կառավարությունը քնած չէր։ Նա ուշադրությամբ հետևում էր երկրում տեղի ունեցող իրադարձություններին։ Նրա հետախուզական օրգանները բանտարկում, աքսորում ու մահվան դատապարտում էին կասկածելի և ժողովրդին հորդորող մարդկանց՝ Փորթուգալյանին, Կամսարականին, Խրիմյանին և ուրիշների։

1885 թ. մայիսի 10-ին Հասան փաշան Խրիմյանին պատվեր առաջարկում է ութ օրվա ընթացքում դուրս գալ Վանից և մեկնել Կ. Պոլիս։ Մարտի 16-ին նման առաջարկություն է ստանում նաև Փորթուգալյանը[7], որը որոշ ժամանակ Պոլսում մնալուց հետո, խույս տալով հետապնդումներից, մեկնում է Մարսել, հիմնում է սեփական տպարան և հրատարակում է հայերեն լեզվով գործող թերթ՝ արևմտահայերի ծանր վիճակի մասին ամբողջ աշխարհի պրոգրեսիվ մարդկությանը իրազեկ դարձնելու, հայերի ուշադրությունը իրենց հարստահարված եղբայրների ազատագրության շուրջը կենտրոնացնելու և ազատագրական պայքարի գաղափարախոսությունը պրոպագանդելու համար։ Այդ թերթը «Արմենիա»-ն էր, որի առաջին համարը լույս է տեսել 1885 թ. հուլիսի 20-ին (օգոստոսի 1-ին)։

Արմենականները մշակեցին արևմտահայությանը թուրքական բռնապետության ստրկական լծից ազատագրելու իրենց ծրագիրն

6 Հ. Երամյան, Հուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Ա, էջ 114։

7 Մ. Փորթուգալյանը 1883 թ. գարնանը նախաձեռնեց Վարագա տպարանում լույս ընծայել «Վանա գութան» անունով մի թերթ, բայց ոստիկանական հետապնդումները խափանեցին նրա այդ նախաձեռնության իրականացումը։

ու գործողության տակտիկան։ Նրանց հետապնդած նպատակը հարց ու պատասխանի ձևով ամփոփված է «Վարդապետարան Հայաստանի ազատագրության» խորագիրը կրող գրքույկում[8]։

Օտարների ձեռքից Հայաստանի ազատագրության գործը նրանք համարում են հայ ազգի գործը։ Հայերը իրենք պետք է առաջին հերթին ազատագրեն իրենց. «Ինքը հայ ազգը պիտի ազատե Հայաստանը օտարներու ձեռքեն»։ Այն հարցին, թե ի՞նչ հնարներով է հնարավոր հասնել հայ ժողովրդի ազատագրությանը, պատասխանում ասված է, որ «Հնարները զանազան են, նայելով հանգամանքներին,— երբեմն սեփական զենքով, երբեմն փողով և երբեմն օտարի օգնությամբ»։

Հայ է համարվում նա, ով անկեղծորեն կձգտի և կաջակցի Հայաստանի ազատագրությանը, իսկ «մնացյալները ոչ միայն անպիտան հայեր, այլև անպիտան մարդեր են»։

Ծրագիրը ամեն մի հայի սրբազան պարտքն է համարում պահպանել իր ազգի լեզուն, դաստիարակել իր զավակներին հայկական ոգով, սովորեցնել նրանց զենքի գործածությունը, ձեռք բերել հողային կալվածք և օգնել «Հայրենասիրական Միության»։

«Հայոց Հայրենասիրական Միության» նպատակն է,— գրում է Փորթուգալյանը,— աշխատել վարչական բարենորոգումներ մտցնել Թուրքահայաստանի մեջ, հայ ժողովրդի տեղական պետքերին համեմատ։ Հայ ժողովրդի ցանկությունն է իրավունք ստանալ ազատորեն ինքդինք կառավարելու, որով միայն պիտի կրնան վերանալ այն հարստահարությունները, որոնք այսօր Հայաստանի թշվառության և ավերակ դառնալուն պատճառ կլինին»[9]։

Պարզաբանելով արմենականների հետապնդած նպատակը, Փորթուգալյանը միաժամանակ շարադրում է նրան հասնելու կոնկրետ ուղիները։

«Հայոց Հայրենասիրական Միությունը,— գրում է նա,— յուր նպատակն իրագործելու համար յուր կարողության չափով կգործադրե ամեն հարմար եղած միջոցներն, ժամանակի պահանջներին համեմատ, կաշխատի ներքին ուժ գոյացնել ազգին մեջ, յուր ազատության համար հրատարակություններ կանե, որոնք որ պետք է

8 Ռ. Պատկանյանի այդ աշխատությունը նրանք համարում էին իրենց պայքարի ծրագիր։

9 «Արմենիա», № 33, 1890։

նյութապես ու բարոյապես քաջալերե անոնց, որոնք անձնվիրաբար կաշխատին հայրենիքի ազատության գործին»[10]։

Կա՛մ սեփական ուժերով և զենքի ճանապարհով, կա՛մ փողով և կա՛մ օտարի օգնությամբ հասնել արևմտահայերի ազատագրությանը,— այս էր արմենականների վարդապետության բուն էությունը։

Այն հարցին, թե հայերը երբ պետք է ոտքի կանգնեն և իրենց զենքը ճոճեն սուլթանական բռնապետության դեմ ու իրենց ազատությունը նվաճեն, արմենականների վարդապետարանը պատասխանում է՝ այն ժամանակ, «երբ որ մեծամեծ ազգերի մեջ կսկսվի կենաց և մահվան պատերազմը»[11]։

Արմենականների վարդապետարանը, իր բացասական կողմերի հետ միասին[12] ունի նաև որոշ ուսանելի կողմեր, տոգորված է հայրենասիրական գաղափարներով, ժողովրդին դաստիարակում է արիության ոգով։ Այն իր առաջնահերթ խնդիրն էր համարում սուլթանական ռեժիմից հայ ժողովրդի ազատագրությունը, նրա արդար դատի պաշտպանությունը։ Իր նպատակին հասնելու համար նա աշխատում էր ոտքի հանել ամբողջ ժողովրդին՝ մերժելով դավադրական գործողությունները, անժամանակ ցույցերի դիմելու փորձերը։

Արմենականների վարդապետարանը սուլթանական բռնապետության դեմ մղվող ազգային-ազատագրական պայքարի ընթացքում առաջին հերթին հենվում էր ժողովրդի ուժերի և ընդունակությունների վրա, ազգի ազատագրության հույսը կապում էր այդ ուժերի անձնուրաց ու հերոսական պայքարի հետ։ Առանց անձնազոհության չէր կարող լինել ազատություն։ «Ի՞նչ պետք է ընել,— հարցնում էր «Արմենիա»-ն։ Եվ ապա պատասխանում. Միակ դարման, միակ պատասխան. Սաբեկա ծառեն պետք է կախվի զոհի ոչխարը, պետք է զոհի սեղան կանգնել Հայաստանի լերանց վրա. արյան պետք կա»[13]։

Արմենականները ժողովրդի մեջ դաստիարակում էին մարտական եռանդ, հաղթանակի հավատ, սեր դեպի հայրենիքը և անսահ-

10 «Արմենիա», № 33, 1890։

11 «Վարդապետարան Հայաստանի ազատագրության», էջ 26։

12 Բոլորին Հայաստան գնալու և կալվածային տնտեսություններ ստեղծելու, հոգևոր առաջնորդներին հայ ազգային-ազատագրական շարժման առաջնորդներ համարելու գաղափարը և այլն, հանդիսանում էին վարդապետարանի արատավոր կողմերը։

13 «Արմենիա», № 24, 1888։

ման ատելություն սուլթանիզմի նկատմամբ։ Այդ գործում խոշոր և նշանակալից դեր էր խաղում «Արմենիա» թերթը, որը տարածվում էր և՛ Արևմտյան Հայաստանի բոլոր նահանգներում ու գավառներում, և՛ արտասահմանյան գաղթօջախներում։ Թուրքունջյանի ղեկավարած Բուլղարիայի արմենական կազմակերպությունը հայերին կոչ էր անում բուլղարների օրինակով ոտքի կանգնել և թոթափել սուլթանական ատելի լուծը։

Վան-Վասպուրականում, Բուլղարիայում, Սալմաստում և այլուր արմենական կազմակերպությունները աճում և ծանրակշիռ դեր էին խաղում հատկապես 1880—1890-ական թվականներին։ Վանում արմենականները խոշոր դեր խաղացին 1896 թվականի զինված ինքնապաշտպանության կազմակերպման և ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության պրոպագանդման գործում։ «Մ. Փորթուգալյանի վարչության տակ գտնվող Արարատյան-Միացյալ վարժապետանոցը և անոր հաջորդ կենտրոնականը— 1879—1885 մտավոր վերածնության մը վառարանը ըլլալե զատ եղավ խմորը ազգային ազատագրության գաղափարի հասունացումին»[14],— գրում է Ա. Դարբինյանը։

Վանում հիմնադրված արմենականների կազմակերպությունը թուլացավ 1894—1896 թվականների հայկական ջարդերի ժամանակ։ «Վանեն հեռանալուս օրը,— գրում է Դարբինյանը,— մեր «խումբ»-ը 10 անդամ ուներ, անոնցմե ութը «96-ի դեպք»-ին ատենը ինկեր էին Բարթուղիմեոսի լեռնալանջերուն վրա, Մ. Ավետիսյանի կողքին...»։ Այսպիսով, գրում է նա, «Ազատագրական շարժման նվիրված ամենամեծ կազմակերպությունը՝ արմենականությունը՝ ծանրորեն հոշոտված էր, իր ղեկավար ուժերուն և կազմակերպված զանգվածին 70 %-ը չկար»[15]։

Սալմաստում արմենականների կազմակերպությունն էլ լուրջ վնասներ կրեց 1897 թ. հուլիսին դաշնակների կողմից Խանասորի վրա կազմակերպված արշավանքի հետևանքով։ Դարբինյանը նշում է, որ «Խանասորի արշավանքը շատ ծանր ազդած էր Սալմաստի վրա»[16]։

1896 թվականին Մ. Ավետիսյանի սպանությունից հետո Վանի արմենականների կազմակերպությունը նորից հավատարիմ մնաց իր դավանանքին՝ ազատագրական պայքարի գաղափարախոսության ծավալմանն ու ինքնապաշտպանության կազմակերպմանը։ Ա. Դարբինյանը իրավացիորեն նշում է, որ հնչակյաններն ու դաշնակները իրենց սխալ գործելակերպով վնաս էին հասցնում ազատագրական շարժմանը։ Հետևապես, «արմենականները պետք է պայքարեն այդ վնասակար գործելակերպի դեմ»[17]։

2. Հնչակյաններ.— *Հնչակյան կուսակցությունը կազմակերպվել է 1887 թվականին Ժնևում՝ իր «Հնչակ» անունը կրող կենտրոնական օրգանով, որի խմբագիրն էր Ա. Նազարբեկյանը։ Նրա կենտրոնի անդամները համախմբված էին «Արմենիա» թերթի շուրջը և ակտիվ կերպով թղթակցում էին նրան, զբաղվում էին ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության պրոպագանդայով։*

1886 թվականին արմենականներից սահմանազատվեցին Ֆրանսիայում և Ժնևում սովորող որոշ հայ ուսանողներ։ Նրանք կազմեցին մի հանձնաժողով՝ Մարիամ Վարդանյանի, Ա. Նազարբեկյանի և Գևորգ Ղարաջյանի ղեկավարությամբ՝ իրենց նոր կազմակերպության համար ծրագիր մշակելու։ Այդ ծրագիրը հաստատում գտավ։ Հնչակյան կուսակցությունն արդեն ձևավորված էր։ Նրա կենտրոնի անդամներն էին՝ Մ. Վարդանյանը, Ա. Նազարբեկյանը, Գ. Ղարաջյանը, Գ. Կաֆեյանը, Ռուբեն Խանազատը և Լևոն Ստեփանյանը։

Այդ կուսակցության օրգան «Հնչակ»-ը անլեգալ էր, տարածվում էր անլեգալ և ընթերցողներին տրվում էր ձրի։ Նրա առաջին համարը լույս տեսավ 1887 թ. նոյեմբերին՝ Ժնևում։ Այդ է հետագա երկու տարվա ընթացքում հրատարակված գրեթե բոլոր համարների հոդվածները գրել է Ա. Նազարբեկյանը։ Բայց այդ թերթի կանոնավոր գործունեությունը սկսվում է 1888 թվականին։

«Մենք մազաչափ անգամ չէինք վհատվում,— գրում է Ռուբեն Խանազատը,— և միանգամայն վստահ մեր սկսած գործի ճշմարտությանը և կատարելապես հավատացած նրա ապագա հաջողությանը՝ մենք անհամբեր երազում էինք այն երջանիկ օրվան մասին, երբ Հայաստան պիտի գնայինք և մեր ծրագրի իրագործման դիմեինք»[18]։

---

14 Ա. Դարբինյան, *Հայ ազատագրական շարժման օրերեն (հուշեր 1890 են—1940)*, էջ 115։

15 *Նույն տեղում*, էջ 107, 108։

16 *Նույն տեղում*, էջ 100։

17 *Նույն տեղում*, էջ 111։

18 Ռուբեն Խանազատ, *Հայ հեղափոխականի հուշերից*, «Հայրենիք», 1927, № 9(57), էջ 63։

Հնչակյան կուսակցությունը մանրբուրժուական, ազգայնական էր։ Նրա սոցիալական հիմքը գյուղացիությունն էր։ Նա ձգտում էր ստեղծել «Ազատ Հայաստան»՝ որպես մերձավոր նպատակ, որից հետո պետք է ստեղծվեր «ընկերվարական սոցիալիստական հասարակություն»։ Ահաբեկումների, ցույցերի, ապստամբական շարժումների կամ, ինչպես իրենք՝ հնչակյաններն էին ասում «Հայկական հեղափոխության» ճանապարհով Արևմտյան Հայաստանում ձեռք բերել «անկախ հայրենիք» և սոցիալիստական ընկերվարական կարգերի հաստատման ճանապարհով խուսափել կապիտալիզմից ու նրա պատճառած չարիքներից։

Հնչակյանները կոչվում էին «սոցիալիստ հեղափոխականներ»։ Նրանք որդեգրեցին ռուսական նարոդնիկների մանրբուրժուական սոցիալիզմի գաղափարախոսությունն ու ահաբեկումների անարխիստական տակտիկան։

Հնչակյաններն իրենց ուսուցիչներն էին համարում անարխիստներ՝ Կրոպատկինին, Բակունուն, Լավրովին և ապա հեղափոխական դեմոկրատներ՝ Գերցենին, Չերնիշևսկուն և Նալբանդյանին։

«Հնչակյան հեղափոխություն» հնչակյանների գաղափարախոսությունը, նրանց անարխիստական, դավադրությունների ու ահաբեկումների քաղաքականությունը ոչ մի առնչություն չունեին հեղափոխական դեմոկրատ Նալբանդյանի հետ, որը ժողովուրդների բարեկամություն էր քարոզում և հայ ժողովրդի ազատագրության հույսերը սերտորեն կապում էր ռուսական դեմոկրատական հեղաշրջման հաղթանակի հետ։

Հետևապես, սխալվում է Լեոն, երբ գրում է, թե «Հնչակ»-ը 1860-ական թվականների այն հոսանքի ծնունդն էր, որը «տվեց իր առաջին ծաղիկը՝ Միքայել Նալբանդյանին»[19]։

Խուսափելով կապիտալիզմի զարգացման ֆազան անցնելուց, նրանք կամենում էին սոցիալիզմին հասնել գյուղական համայնքների միջոցով։ «Նոր ճոսանք» (խոսակցություն խաղաղ առաջադիմականի և սոցիալիստ հեղափոխականի միջև) խորագիրը կրող հոդվածում «Հնչակ»-ը գրում է, որ եվրոպական երկրները անցել են զարգացման զանազան փուլեր և իրերի բնական ընթացքը նրանց հասցրել է սոցիալիզմին։ Բայց հայ ժողովուրդը այդ փուլը չի մտել և չի էլ մտնելու։ Նա դատապարտում է բոլոր նրանց, ովքեր կաչակցեն հայ իրականության մեջ կապիտալիզմի մուտք գործելուն՝ առանց գիտակցելու, որ ոչ ոքի չէր հաջողվի արգելակել կապիտալիզմի զարգացմանը, որն արդեն մուտք էր գործել հայ իրականության մեջ, քաղաքում ու գյուղում և առաջ բերել լուրջ հեղաբեկումներ հայերի տնտեսական ու քաղաքական կյանքում, մարդկանց հարաբերություններում, գաղափարախոսության մեջ ու կենցաղում։ «Աջակցել այդ կապիտալիզմի մուտք գործելուն մեր ժողովրդի մեջ... հանցանք է»[20]։

Ճիշտ կերպով նկարագրելով կապիտալիզմի կողմից աշխատավորներին բերած չարիքները, «Հնչակ»-ը գտնում է, որ եվրոպական ժողովուրդները չեն կարողացել խուսափել այդ չարիքից, բայց հայ ժողովուրդը իր զարգացման պատմական առանձնահատկություններով կարող է և պետք է խուսափի զարգացման այդ ուղուց։ Հետևապես, «Դա դեռ չի նշանակում,— գրում է նա,— որ հայ ժողովուրդն անպատճառ պիտի անցնե եվրոպական կապիտալիստական արդյունագործության ֆազիսը, ինչպես նա անցել է եվրոպական ժողովուրդների տնտեսական կացության մի քանի նախկին ֆազիսները»[21]։

Սա կապիտալիզմի կողմից ծեծկված, հարստահարված, սեփականազրկված մանր բուրժուազիայի ջղաձգությունների արտահայտությունն է, նրա գաղափարախոսությունը։ Այդ մանր բուրժուազիան դեմ էր հասարակական տնտեսական կյանքի պրոգրեսիվ ընթացքին, կամենում էր վերադառնալ դեպի նահապետական նախկին կյանքը, վերականգնել իր նախկին դրությունը։ Դրա համար էլ «Հնչակ»-ը կոչ է անում փրկել այդ մանր բուրժուազիային կապիտալիզմի սարսափներից։ «Բայց հայ ժողովրդին կարելի է և պետք է փրկել,— գրում է նա,— կարելի է և պետք է նախազգուշացնել այդ թշվառ պերսպեկտիվայից»[22]։ Եվ ապա. «չէ՞ որ մեր, սոցիալիստներիս, ամենագլխավոր հոգսերից մեկն է, ինչպես մեր խոսակցության սկիզբը բացատրեցի, նախազգուշացնել հայ ժողովրդին կապիտալիզմի սխտից, առաջն առնել Հայաստանում այդ սխտի մուտք գործելուց»[23]։

1896 թ. օգոստոսի 20-ին Լոնդոնում տեղի ունեցավ Հնչակյանների համաժողովը, որն իր ծրագրից հանեց սոցիալիզմի պահան-

---

19 Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հատ. Ա, էջ 146,

20 «Հնչակ», № 2, 1889։

21 Նույն տեղում։

22 Նույն տեղում։

23 Նույն տեղում։

ջը և թողեց նրա մերձավոր նպատակը՝ արևմտահայության ազատագրության հարցը։ Հնչակյանների ծրագիրը մշուշապատ էր, առաձգական ու անբովանդակ ֆրազ էր։ Նրանք խոսում են աշխատավորների ազատագրության, նրանց քաղաքական իրավունքների, աշխատանքի պայմանների հեշտացման մասին՝ առանց որևէ խոսք ասելու բանվոր դասակարգի ու նրա պատմական միսիայի մասին։

Հնչակյան կուսակցության գործունեության թատերաբեմը Արևմտյան Հայաստանն էր։ Նա իր վրա էր վերցնում հայերի դատի պաշտպանությունը՝ ըստ ծրագրի մերձավոր նպատակի, ձգտում էր սուլթանական ռեժիմից հայերի ազատագրությանը, նրանց քաղաքական անկախության նվաճմանը՝ անպայման ապստամբության ճանապարհով։ «Թուրքահայաստանի հայ ժողովրդի վերաբերմամբ,— գրում է «Հնչակ»-ը,— մենք այն խորին համոզմունքն ունենք, որ պետք է անպատճառ շուտով ջարդվեն նրան առաջադիմել արգելակող ամրապնդին շղթաները և նա ունենա քաղաքական անկախություն, իբրև անհրաժեշտ պայման նրա կյանքի ապահովության և նրա բազմադիմի զարգացման համեմատ»[24]։ Իրենց այդ քայլը հնչակյանները համարում էին հաստատուն պայման՝ արևմտահայության ազատագրության համար։

«Թուրքահայ ժողովրդի շարժումը,— գրում է «Հնչակ»-ը,— ստիպողական միջոցներն, ապստամբական, հեղափոխական սպառնալիքները թուրք կառավարության դեմ, նպատակահարմար են և միանգամայն անհրաժեշտ»։ Եվ ապա՝ «Մեզ հարկավոր են բռնի, ստիպողական միջոցներ... Մենք ուժով և քաջությամբ ետ կխլենք այն, ինչ որ դարեր առաջ ուժով ու քաջությամբ խլել են մեզանից մեր ինքնուրույնությունը... Ազատությունը չէ տրվում, այլ առնվում է»— ասում է անարխիստ Կրոպատկինը։ Այդ պատմական ճշմարտությունը մենք, հայերս, միշտ աչքի առջև պետք է ունենանք։ Պատրաստ լինենք՝ ժամանակը մոտ է»[25]։

Նման անարխիստական գործելակերպով հնչակյանները կամենում էին կործանել արյունոտ սուլթանի իշխանությունը, որը հովանավորվում էր եվրոպական տերությունների կողմից և սպառազինված էր ամերիկյան, անգլիական ու գերմանական ժամանակի նորագույն զենքերով։

Հայ ժողովրդի ազատագրությունը բռնակալների իշխանությունից կարող էր տեղի ունենալ ճնշված ժողովուրդների հետ մերձենալու և ոչ մեկուսացված պայքարելու ճանապարհով։ Նրանք ձգտում էին «հանուն առաջադիմության» արևմտահայությանը զատել «թուրք պետությունից ու ժողովրդից»[26]։

Ի՞նչ է գրում «Հնչակ»-ը. «Նրանք (իմա՝ թուրքական կառավարողները— Հ. Վ.) լավ հասկացել են, որ իրենց լծի տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների ճարտարությանը, արդյունագործության, առևտրի, երկրագործության մեջ, որպես նաև նրանց մտավոր ու բարոյական ուժերն ու ընդունակությունները՝ մեկ տհագին վիհ են բացել այդ ժողովուրդների և թուրքերի մեջ, այս վերջինը չունենալով այդ հատկությունները և չլինելով արդյունաբերող, այլ լինելով միայն պատերազմիկ ցեղ, ընդունակ արշավանքների համար և անընդունակ կառավարող, աշխատավոր ու առաջադիմող տարր լինելու։ Այդպիսի պարագաներում թուրքը կարող է միայն ապրել իբրև օտարակեր (parasit), իբրև սպառող ու կործանող այդ քրիստոնյա ժողովուրդների հարստությունները»[27]։

Այս կոնցեպցիան կարմիր թելի պես անցնում է հնչակյանների գաղափարախոսության միջով։ Նրանք չէին ուզում հասկանալ, որ թուրք աշխատավոր ժողովուրդը նույնքան ընդունակ է արդյունագործության, առևտրի, գյուղատնտեսության, կուլտուրայի ու գիտության զարգացման, որի ընդունակությունների ու կարողությունների երևան գալուն արգելք էին հանդիսանում թուրքական շահագործող դասակարգերը, կրոնական ֆանատիզմը և նրանց հովանավորող սուլթանական կառավարությունը, որը ժողովուրդներին միմյանց դեմ էր լարում։

Նույնը պետք է ասել նաև քրդերի մասին։ Սուլթանական կառավարությունը, հենվելով քրդական շեյխերի ու բեկերի վրա, խախտեց հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը, կրոնական ֆանատիզմով թունավորեց քուրդ աշխատավորների գիտակցությունը և նրան օգտագործեց հայերի դեմ։

Խոսելով քրդերի կողմից հայերի նկատմամբ գործադրված եղեռնագործությունների մասին, հնչակյանները ոչ մի տարբերություն չեն դնում քրդական վերնախավերի ու աշխատավորական մասսաների միջև, որոնք հաճախ հայերի դեմ կռվում էին հարկադրված, իրենց խղճին ու կամքին հակառակ։

24 «Հնչակ», № 1, 1887։
25 Նույն տեղում։
26 «Հնչակ», № 2, 1889։
27 «Հնչակ», № 5, 1897։

* * *

Հնչակյաններն իրենց մերձավոր նպատակին հասնելու համար նախընտրեցին ապստամբությունների, դավադրությունների և ահաբեկումների տակտիկան։ Արտահայտելով իրենց ցասումն այն հոսանքների դեմ, որոնք կանգնած էին խաղաղ, դիվանագիտական ճանապարհով Հայկական հարցի լուծման ուղու վրա, հնչակյանները դեմ չէին եվրոպական տերությունների միջամտությանը։ Նրանք իրենց ապստամբական ելույթներով կամենում էին ակտիվացնել այդ միջամտությունը, համոզված էին, որ իրենց թափած արյունն է, որը վերջնականապես «կազատե աշխատավոր ժողովրդին դարավոր լծից և կգծե նրա ճանապարհը դեպի ազատություն»[28]։

Հնչակյանները անհեռատես էին և միամտաբար կարծում էին, թե իրենց կհաջողվի մեկ հարվածով վերջ տալ օսմանյան կայսրությանը և նվաճել հայերի ինքնավարությունը։ «Ժամանակը մոտ է,—գրում է «Հնչակ»-ը,—և հայկական աշխարհում պետք է կատարվեն մեծամեծ անցքեր։ Ավելի ուշ քան երբևէ, մենք հայերս, պետք է լինենք պատրաստ»[29]։

Գտնելով, որ Անգլիան և Ռուսաստանը կարող են օգտվել հարմար առիթից, տուլթանի կառավարության դեմ սկսած իրենց մղած պայքարի «հաջողություններից», շահադիտական նպատակով կսկսեն միջամտել Հայկական հարցին, թերթը պահանջում է չենթարկվել ոչ մեկի ազդեցությանը, մի բռնակալից մյուսի ազդեցությանը չենթարկվել, այլ ղուտ օգտվել հանգամանքից, որովհետև կոտրելով «Թուրքի լուծը, «Հնչակ»-ը կհռչակի իր մոտակա նպատակը ազգային անկախություն՝ ռամկավարական հանրապետությամբ»[30]։

Ուստի թերթը իր կուսակցության կազմակերպությունների հերթական ու անհետաձգելի խնդիրն է համարում ապստամբության նախապատրաստումը։

«...Պատրաստել ժողովրդային ապստամբությամբ արմատապես հեղափոխել հայ ժողովրդի ներկա նիստ ու կացը, պատրաստվել ապստամբության համար»[31]։

28 «Հնչակ», № 4, 1894։
29 «Հնչակ», № 3, 1889։
30 Նույն տեղում։
31 «Հնչակ», № 5, 1892։

Այս ֆրազներով ոգևորված, հնչակյանների պարագլուխներից Կաֆեյանը 1890 թվականին Էրզրումի և Կ. Պոլսի (Գում-Գարուի) անցքերի ժամանակ պատռում և ոտքի տակ տրորում է Թուրքիայի ազգային զինանշանը ու սուլթանի լուսանկարը, որը միայն գրգռեց կրոնական մոլեռանդությամբ արբեցած թուրքական հրոսակների կրքերը։ Դրանք միայն առիթ էին ծառայում սուլթանի կառավարությանը հայերի նկատմամբ իր դժոխային դիտավորությունները ի կատար ածելու համար։ Բայց հնչակյանները գտնում էին, որ շարժումները «մեծ բարոյական ազդեցություն ունեցան հայ ժողովրդի հեղափոխական կրթության համար և... մեծ դարկ տվին հեղափոխական գործին»[32]։

Ըստ հնչակյանների, եթե հայերը մինչև իրենց երևան գալը եղել են խաբված, ապա այսուհետև նրանք չեն խաբվելու, որովհետև առկա է հնչակյան կուսակցությունը, որը համարվում է «նոր արևի ծագում հայ ժողովրդի համար», որը նրանց դեպի ապրստամբություն է առաջնորդում ու «պատերազմ մղում յուր թշնամու դեմ... մի տկար և թուլամորթ թշնամի չպիտի կարենա դիմադրել սուրբ պատերազմին, որ շուտով պիտի հասնի յուր նպատակին և պիտի իրագործե յուր դաղափարները»[33]։

Համառորեն շարունակելով իրենց վնասակար գործը, հնչակյանները արևմտահայությանը մոլորության մեջ էին գցում։ Նրանք հայտարարում էին, թե իրենց կազմակերպության առաջացմամբ և ծավալված ապստամբական գործողություններով երկյուղի ու սարսափի տակ են դրել սուլթանի կառավարությանը, որը «առաջին տպատակն դեռ շշմած է, ի՞նչ պիտի անի նա արդյոք, երբ ստանա երկրորդը, երրորդը...»[34]։

Պատերազմ հայտարարելով թուրքական կառավարությանը, հնչակյանները սկսեցին բանակցել արմենականների ու դաշնակցականների հետ։ Հնչակյանների կենտրոններն էին Տրապիզոնը և Կ. Պոլիսը։ Այդ կենտրոնների գլուխ էին կանգնած Ռուբեն Խանազատյանը և Շմավոնը (Գաբրիել Կաֆյանը)։

Դաշնակցականների հետ բանակցությունները մինչև 1890 թվականի սկզբին, նրա առաջին նիստին մասնակցում էին 18 հոգի։ «Որոնցից հիշում եմ,—գրում է Ռուբեն Խանազատյանը։

[illegible]
[illegible]
[illegible]

Խ. Մալումյանին, Ս. Հախումյանին, Նիկ. Մատինյանին, Հով. Արղությանին, Հակոբ Քոչարյանին, Տիգրան Հովհաննիսյանին, Երվանդ Թաղիանոսյանին, Արամ Նազարեթյանին, Հար. Յուսուֆյանին, Գուլագոզյանին, Վարդգես Քաջազնունուն, Ռոստոմ Զորյանին, Մարտին Շաթիրյանին, Ալեքսանդր Պետրոսյանին (հետագայում Վանի գործիչ Պետոն)»[35]։

Ժողովի նախագահ Մալումյանը հայտարարեց, որ իրենք հավաքվել են Խանազատի պահանջով։ Խոսքը տրվում է Խանազատին, որը ժողովում մեծ ճառ է արտասանում՝ նվիրված Հայկական հարցին և արևմտահայ ժողովրդի թշվառ վիճակին։ Նա մի կողմից կամենում էր բորբոքել ժողովին մասնակցողների հայրենասիրական կրքերը և մյուս կողմից՝ նրանց օգնությամբ ստեղծել հեղափոխական ընդհատակյա կազմակերպություններ, որոնք պետք է համաձայնվեին երկու հիմնական սկզբունքի հետ. «առաջինը՝ սոցիալիստական ծրագիր, որպիսին արդեն ուներ Հնչակյան կուսակցությունը, և երկրորդ՝ հիմնվելիք հեղափ. ընկ. անդամները պարտավոր էին անպայման Թուրքահայաստան գնալու և այնտեղ աշխատելու»[36]։

Ժողովականները համաձայնվում են հեղափոխական ընդհատակյա ընկերության ստեղծմանը, բայց խիստ կերպով առարկում են սոցիալիզմին ու Թուրքահայաստան գնալուն։ Նոր հիմնադրվելիք հեղափոխական ընկերությունը պետք է գործեր ոչ թե սոցիալիստական, այլ զուտ «ազգային ծրագրով»[37]։ Այդ ժողովը փաստորեն հիմք դրեց հնչակյանների ու դաշնակցականների միավորմանը՝ «Հայկական հեղափոխության» հարցում։

«Այս պայմանագրով Հնչակյան և Հ. Հ. Դաշնակցություն կուսակցությունների միջև միություն կատարված էր,—գրում է Ռուբեն Խանազատը,—կամ ավելի ճիշտ կլինի ասել, Հնչակյան կուսակցությունը, որպես առանձին մարմին, այլևս չէր լինելու, նա հայ հեղափոխականների Դաշնակցության մի անբաժան մասն էր կազմում... Այսպես Հ. Հ. Դաշնակցությունը կազմակերպված էր»[38]։

Ռուբեն Խանազատը մեկնում է Օդեսա, ուր արդեն հիմնադրված էր ուսանողներից բաղկացած դաշնակցական կազմակերպություն, որը անախորժորեն էր տրամադրված Թուրքիա գնալու

35 «Հայրենիք», № 11 (59), 1927, էջ 1—27։

36 Նույն տեղում։

37 Նույն տեղում, էջ 129։

38 «Հայրենիք», № 3 (63), 1928, էջ 120—121։

և այնտեղ հեղափոխական աշխատանք տանելու հարցի նկատմամբ։ Դաշնակցական կազմակերպության ղեկավար տիկին Անուշը անբարյացակամորեն էր վերաբերվում Հնչակյան կուսակցության ղեկավարին։ Խանազատին զբաղեցնում էր գլխավորապես 10.000 հրացան հայթայթելու խնդիրը։ Տիկին Անուշը խոստանում է ձեռք բերել հրացաններ՝ դաշնակցությանը հանձնելու պայմանով։

«Տիկին Անուշը և ուսանողները,—գրում է Ռուբեն Խանազատը,—թեև արդեն մի որոշ հասկացողություն ունեին «Հնչակ»-ի ու հնչակյանների մասին, թեկուզ ռուսական թերթերից, բայց մենք բոլորին էլ բացատրեցինք, որ Հնչակյան կուսակցությունն այլևս արդեն գոյություն չունի և որ նա էլ միացել է Հ. Հ. Դաշնակցությանը»[39]։ Եվ հետո «Խորհրդակցության նյութ եղող կարևոր խնդիրները,— գրում է Խանազատը,— ժնևում Հ. Հ. Դաշնակցության հետ միանալու և դրան հարակից հարցերն էին։ Ժնևի ընկերներս սաստիկ դժգոհ էին Թիֆլիսից։ Նրանք գտնում և ապացուցում էին, թե միությունը անկեղծ ու շիտակ չէ կատարված. թե Թիֆլիսը կամ դաշնակցականները, «Հնչակի» շուրջը համախմբվածների վրա նայում էին ոչ որպես հավասար ընկերների վրա, այլ, ընդհակառակը, նախանձով լցված, վատաբանում, չարախոսում և ամեն կերպ աշխատում էին վարկաբեկ անել նրանց»[40]։

Հնչակյանների նկատմամբ Թիֆլիսեցիների (դաշնակների) նման վարմունքի պատճառը նրանց ծրագրում եղած և հեռավոր նպատակը հանդիսացող սոցիալիզմն էր։ Դրա համար էլ նրանք պահանջում էին փակել «Հնչակ»-ի հրատարակությունը և ոչ մի գումար չէին հատկացնում նրա համար։

Խանազատի գովերգած դաշնակցության ու նրա օրգան «Դրոշակ»-ի գծի հետ համաձայն չէին Նազարբեկյանն ու նրա համախոհները։ Նազարբեկյանը գտնում էր, որ «Դրոշակ»-ը բովանդակազուրկ է, որովհետև նրա կուսակցության մեջ «ինչ գույնի մարդ ասես մտել է. դա հեղափոխական կուսակցություն չէ, այլ մի կատարյալ շիլափլավ է»[41]։

Եթե բուրժուական հասարակության անտագոնիստական հարաբերությունների բացահայտումը, դասակարգային պայքարի

39 «Հայրենիք», № 4 (64), 1928, էջ 124։

40 Նույն տեղում։

41 Նույն տեղում։

եղանակների բացահայտումը հնչակյաններին հեռացնում էր դաշնակցականներից, ապա «Հայկական հեղափոխությունը», մասնակի ապստամբությունների ու դավադրությունների միջոցով արևմտահայության ազատագրությանը հասնելու միտումները միացնում էր նրանց։

Հնչակյան կենտրոնի հանձնարարությամբ Ռուբեն Խանազատը 1890 թ. գարնանը մեկնում է Կ. Պոլիս։ Նա հանդիպում է Խրիմյան Հայրիկին և Ա. Արփիարյանին, որոնց օգնությամբ կամենում էր ստեղծել «հեղափոխականների» կազմակերպություն՝ Հնչակյան կուսակցության ծրագրով։ Նա մեծ հույս ուներ այդ մարդկանց վրա, որոնք պետք է աջակցեին իրեն գաղափարակիցներ հավաքագրելու և սուլթանի մայրաքաղաքում հեղափոխական գործունեության սկիզբ դնելու նախաձեռնությանը։ Բայց Խրիմյանը ծաղրանքով է դիմավորում նրա այդ դիտավորություններին[42]։

Կ. Պոլսից Խանազատը վերադառնում է Տրապիզոն։ Բայց նա շատ անհանգիստ էր իր գործի ձախողման ու Խրիմյանի սառնասիրտ վարմունքի համար։ 1890 թ. ամռանը նա նորից մեկնում է Կ. Պոլիս։

Խանազատը այժմ Խրիմյանին բացատրում է իր կուսակցության նպատակը՝ ամբողջությամբ։ Ծաղրելով հնչակյաններին՝ իրենց քաղաքական մանկամտության համար, Խրիմյանը հարցնում է. «Այդ ի՞նչ պիտի ընեք, Խայաստան պիտի ազատեք»—Խանազատը պատասխանում է. «Այստեղ ես արդեն սկսեցի իմ ամբողջ երիտասարդական եռանդով ու ֆանատիկոսությամբ բացատրել Հայրիկին «Հնչակ»-ի մանրամասն ծրագիրը՝ հեռավոր սոցիալիստական ապագան, Հայաստանի մոտակա Ռամկավարական կառավարությունը, մեր ապագա գործունեության եղանակներն ու տակտիկան...»[43]։

Հայկական հարցի շուրջը մտքերի փոխանակությունից հետո, Խրիմյանը այն միտքն է հայտնում, որ այդ հարցի լուծումը եվրոպական դիվանագիտությունից է կախված, իսկ Խանազատը գտնում էր, որ այն կլուծվի «Հայաստանի ապստամբությամբ», որը կհարկադրի Եվրոպային միջամտելու»[44]։

Նկատելով, որ իր առջև կանգնած է մի ինքնատես քաղաքական գործիչ ու հնչակյան կուսակցության քաղաքականությունը

42 Ռուբեն Խանազատ, Հիշողություններ Խրիմյանի մասին, էջ 5։

43 Նույն տեղում, էջ 11։

44 Նույն տեղում, էջ 15։

համարելով միանգամայն կործանարար արևմտահայության համար, Խրիմյանը ծաղրանքի տոնով Խանազատին պատասխանում է, որ Կ. Պոլսում նա կարող է կապվել «Բուլաշըղներ» (խառնակիչներ)—հեղափոխականներ—Կաֆյանի և Զաքարյանի հետ, որոնք կարող են օգնել մարդկանց հավաքագրելու համար։

Զայրույթով դիմավորելով «Հայկական հեղափոխության» հնչակյանների պրոպագանդային, նրանց սխալ գործունեությանը, Խրիմյանը ասում է. «Ի՞նչ պիտի ըսե Գլադստոնը, ինչպե՞ս պիտի վերաբերվի Սոլյուզբրին, ի՞նչ կասե Բիսմարկը, ցարը և այլն» և ապա ավելացնում է. «Դուք խենթեր եք»[45]։

Խրիմյանը դատապարտում էր Խանազատին, Գ. Կաֆյանին և Մեղավորյանին, որոնք իրենց մի քանի համախոհների հետ միասին կրակի հետ էին խաղում։ Նրանք նախապատրաստում էին 1890 թ. հուլիսի 15-ի ցույցը Կ. Պոլսում։ Տեղեկանալով այդ մասին, Խրիմյանը իր մոտն է կանչում Մամբրե վարդապետին և նրա միջոցով նախազգուշացնում է հնչակյաններին՝ դավադրական փորձերի չդիմելու համար։

—«Ամման, Մամբրե վարդապետ, գիտեմ, դու կճանչնաս Խանազատը, Շմավոնը ու Մեղավորյանը, գնա շուտ ատոնց։ Մեկն ու մեկը գտիր և ըսե այն, որ Խանազատը ինձի ըսավ, թե պիտի ընենք հուլիսի 15-ին, թող չընեն։ Կհասկնա՞ս, ըսե, որ Հայրիկը կըսե, որ չընեք։

— Այդ ի՞նչ պիտի ընեն, Հայրիկ,— հարցրել էր Մամբրեն, միամիտ ձևանալով։

— Դու անոնց ըսե, անոնք կհասկնան,— պատասխանեց Հայրիկը...»[46],— գրում է Խանազատը։

1890 թ. հուլիսի 15-ի ցույցը Կ. Պոլսում տեղի ունեցավ՝ իր ողբալի հետևանքներով։ Ոգևորված Գոմ-Գաբուի ցույցով, Պոլիս է մեկնում Անտոն Ռշտունին՝ հնչակյաններին, արմենականներին, «L. Armenia»՝ «Haiassdan» թերթի շուրջը համախմբված գործիչներին Հայկական հարցի շուրջը միավորելու և համատեղ գործելու համար։ Բայց հնչակյանների ծրագրում բովանդակած սոցիալիզմը արդեն էր հանդիսանում միավորմանը՝ իր հիշողություններում նշում է Հ. Ճանկիլյանը։

Կ. Պոլսում Խանազատը տեսակցում է Անտոն Ռշտունու հետ, որը եկել էր Աթենքից։ Բայց անբարյացակամորեն էր տրամա-

45 Ռուբեն Խանազատ, Հիշողություններ Խրիմյանի մասին, էջ 21։

46 Ռուբեն Խանազատ, Հիշողություններ Խրիմյանի մասին, էջ 21։

դրված հնչակյանների նկամամբ՝ ռամկավարական կարգերի և սոցիալիզմի համար։ Իսկ քանի որ հնչակյանները հրաժարվել էին սոցիալիզմից և կանգնել էին զուտ ազգայնական հողի վրա, ուստի այդ հնարավորություն տվեց Խանազատին և Անտոն Ռշտունուն ձեռնամուխ լինելու ընդհատակյա կազմակերպությունների ստեղծմանը և ապստամբությունների նախապատրաստմանը։ «...Այժմ (1890 թ. ամռանը) բուռն հեղափոխական հովերով բռնված,— գրում է Խանազատը,— առավոտից մինչև կես գիշեր ժողովներ էի գումարում, ծրագրեր մշակում, այս ու այն կողմը վազվզում, կազմակերպություններով զբաղվում։ Հենց այդ ժողովների ու իրադրանցումների արդյունքն է Հ. Հ. Դաշնակցությունը, որի հետ պիտի միանար և հնչակյան կուսակցությունը։ Եթե միայն կարելի լիներ վերջնական համաձայնության գալ ծրագրային ու կազմակերպչական հարցերի վերաբերյալ»[47]։

Այս բոլորից հետո Խանազատը հարկադրված է ընդունել, որ Արևմտյան Հայաստանում սկսվող հեղափոխության համար ոչ մի նշանակություն չէր կարող ունենալ «Կուկունյանի մի քանի տասնյակ մարդկանցից կազմված արշավախումբը կամ մանավանդ 2—3 հազար ռուբլիները...»[48]։

Խանազատը միաժամանակ նշում է, որ «Հայկական անդրանիկ հեղափոխական շարժումը սաստիկ ազդել ու տգևորել էր Գր. Արծրունուն, որը իր բարեկամ բժշկի հետ հավաքել էր 2 թե 3 հազար ռուբլի, օգնել և ճանապարհ էր դրել Կուկունյանին և Սարկավագին խմբով դեպի Հայաստան»[49]։

Հնչակյանների ու դաշնակցականների միջև եղած վեճերից մեկը կազմում էր այն հարցը, թե ո՞ւմ պետք է հանձնվեր 10.000 հրացանը, որը ձեռք էր բերված Օդեսայում, տիկ. Անուշի ղեկավարությամբ։ Սիմոն Զավարյանը և Քրիստափոր Միքայելյանը պահանջում էին հանձնել դաշնակցությանը։

Օդեսայից Թիֆլիս վերադառնալով, Ս. Զավարյանը և Ք. Միքայելյանը ձեռնարկում են դաշնակցության վերակազմությանը՝ ֆեդերատիվ հիմունքներով, որը իր ձեռքումն էր կենտրոնացնելու «Հայկական հեղափոխությունը» ղեկավարելու միսիան։ Բայց պետք է ասել, որ մինչև 1896 թվականը «Հայկական հեղափոխությունը» ղեկավարվում էր հնչակյան կուսակցության կողմից։ Այդ կուսակ-

47 Ռուբեն Խանազատ, *Հիշողություններ Խրիմյանի մասին*, էջ 21։

48 Նույն տեղում, էջ 23։

49 Նույն տեղում, էջ 21։

ցության ներկայացուցիչներն էին ղեկավարում ինչպես 1893—1894 թվականների Սասունի, այնպես էլ 1895—1896 թվականների զեյթունցիների ապստամբությունը։

Հնչակյանները չհասկացան, որ անջատ-անջատ, անժամանակ ապստամբությունների ճանապարհով, ցույցերի դիմելով հաղթանակի հասնել անհնարին էր։ Օգտվելով հանգամանքից, սուլթանական կառավարությունը հեշտությամբ ճնշում էր հայերին, իսկ եվրոպական մեծ տերությունները այդ համարում էին սուլթանի կառավարության ներքին գործը և ամենևին չէին կամենում գժտվել նրա հետ։

1894 թ. ամռանը սուլթանի հանձնարարությամբ 4-րդ զորաբանակի հրամանատար Զեքի փաշան դաժանորեն ճնշեց Սասունի շարժումը և սրի քաշեց ավելի քան 10 հազար հայերի։ Սուլթանական կառավարության հայաջինջ այդ քաղաքականությունը առաջ բերեց Եվրոպայի պրոգրեսիվ հասարակայնության խոր զայրույթը։

Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դիվանագետները, առաջադեմ մարդկության բողոքների ու ցույցերի բարոյական ճնշման ներքո, սկսեցին միջամտել և մշակեցին հայկական վիլայեթների համար, այսպես կոչված, «Մայիսյան» վարչական ռեֆորմներ։ Չհասկանալով այդ տերությունների դիվանագիտության խարդախությունները, հնչակյանները շտապեցին անել իրենց համար միանգամայն ձեռնտու հետևություն։ Այդ ռեֆորմները նրանք համարեցին իրենց վարած քաղաքականության «հաղթանակը» և պարծենկոտությամբ սկսեցին մշակել ապստամբության նոր ծրագիր։ «Այսպես,— գրում է «Հնչակ»-ը,— այսօր մինիստրների կողմից մատնանշված և հաստատված իրողություն է, որ հայկական խնդիրն իր ներկա եռանդուն վիճակում, որը բերել, նրան դրել է իր լուծման նախընթաց օրերը, պարտական է հայ հեղափոխականներին... Պատասխանը պարզ է, անցյալ ամիսներում արդեն, Սասունի դեպքերեն անմիջապես վերջ մենք գրեցինք — մենք կշարունակենք, և ավելի մեծ եռանդով, մեր հեղափոխական գործունեությունը, մենք կնայենք, թե ինչ է անում Եվրոպան իր քննությունները ու դիպլոմատիայով, և պետք եղած դեպքում հեղափոխական շարժումներով մենք կծանրանանք նրա վրա, այսպիսով հարկադրելով նրան լուծում տալ մեր խնդրին»[50]։

«Մայիսյան» ռեֆորմները համարելով իբրև «Հայկական հեղափոխության» հարկադրանքի արդյունք, իբրև իր կուսակցության

50 «Հնչակ», № 4, 1894։

ծավալած գործունեության առաջին հաջողություն, «Հնչակ»-ը իր առաջնորդողում գրում է. «Մեր նպատակն է ցույց տալ այն, ինչ որ ութ տարի շարունակ ասել ենք, թե միայն հեղափոխական շարժումները եղան, որ Եվրոպային ստիպեցին մեր խնդրին ձեռնհաս լինել և որ նրան հարկադրեցին այսօր մեր ժողովրդին կյանքի բարենորոգման ծրագիր կազմել և սուլթանից պահանջել նրա գործադրությունը»[51]։

«Մայիսյան» ռեֆորմները հնչակյանների պրոպագանդած «Հայկական հեղափոխության» թելադրանքով չէին։ Այդ ռեֆորմների ծրագիրը սոսկ պատրվակ էր միջազգային առաջադեմ մարդկության ցասումը լռեցնելու համար։ Այդ տերությունները լավ էին հասկանում, որ Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածով նախատեսված ռեֆորմների ծրագիրը մերժող սուլթանը ընդունակ էր մերժելու նաև երեք տերությունների մշակած ռեֆորմների ծրագիրը, մի բան, որը չուզեցան հասկանալ հնչակյանները։ Նրանք չուզեցին հասկանալ, որ եվրոպական խոշոր տերությունների հակամարտությունները սրվում էին աշխարհի նոր վերաբաժանման և այդ թվում Թուրքիայի նկատմամբ տնտեսական ու քաղաքական ազդեցություն ձեռք բերելու համար։ Այդ հակամարտությունների մեջ Հայկական հարցը և հնչակյանների «Հայկական հեղափոխությունը» ոչ մի էական դեր չէին խաղում։ Ավելին. այդ տերությունները շարաշահում էին Հայկական հարցը, իսկ «Հայկական հեղափոխության» պրոպագանդան առիթ էր դառնում Թուրքիային հովանավորելու, հայերի նկատմամբ գործադրված գազանությունները նրա ներքին գործը համարելով։

Լինելով դյուրահավատներ և զբաղվելով սնապարծությամբ, հնչակյանները «Մայիսյան» ռեֆորմների նախագիծը համարում էին ավելի լայն, քան Ներսես Վարժապետյանի կողմից մշակված և Խրիմյանի կողմից Բեռլինի կոնգրեսին ներկայացրածը։ Այդ առթիվ «Հնչակը»-ը գրում է. «Երեք տերությունների այդ նախագծում կա մի ուրիշ կետ, որ անշուշտ չէ խուսափել հայ ընթերցողի աչքից։ Այդ կետի կարևորությունը մեծ է։ Ակնհայտ է, որ նա արդյունք է Հայ հեղափոխական շարժումների։ Նախագիծը՝ իբրև բարենորոգելիք նահանգներ՝ մեծ Հայաստանին միացնում է Փոքր Հայքը, որպես և Տիգրանակերտի նահանգը, պարզ է, ի նկատի ունենալով

51 «Հնչակ», № 6, 1895։

այդ երկու վայրերում ևս տեղի ունեցած մի շարք հեղափոխական շարժումները»[52]։

Այսպիսով, հնչակյանները չէին ուզում ընդունել, որ այդ ոչինչ չխոստացող «Մայիսյան» ռեֆորմները հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների թելադրանքն էին։ Իհարկե, սուլթանական կառավարությունը ամենևին էլ հաշվի չառավ երեք տերությունների ներկայացրած ռեֆորմների նախագիծը։ Նրանց սնապարծությունը միաժամանակ արտահայտվում էր նրանում, որ նրանք կարծում էին, թե սուլթանական Թուրքիան ոչ այլ ինչ է, եթե ոչ մի «թղուկ բռնակալ» տերություն։

1895 թ. սեպտեմբերի 18—30-ը Կ. Պոլսում հնչակյանները ցույց կազմակերպեցին, որը ոչ թե «փրկության կանթեղ» էր, ինչպես իրենք էին հոխորտում, այլ հանդիսացավ նոր կոտորածների շարժառիթ։ Եվրոպական կառավարությունները, դիպլոմատիան, մամուլն ու հասարակությունը,— անհամեստորեն գրում է «Հնչակ»-ը,—«Սարսափահար եղած հայ հեղափոխական կարմիր տեսիլից, մի չտեսնված մեծ իրարանցման մեջ են ընկել հայկական խնդրի առիթով։ Ցույցը, հեղափոխական այդ ձայնը, կտրեց պետությունների հաշվի թելը, պատռեց նրանց դիմակները... ստիպեց նորից լուրջ կերպով դիմել հայկական խնդրի լուծման»[53]։

Սուլթանի կառավարությունը հայերի դեմ անողոք հարձակումներ կազմակերպեց։ Անմեղ հայերի տղերը գնալով սաստկանում էր։ Կ. Պոլսի փողոցները ողողվել էին հայերի արյունով, իսկ հնչակյանները աղմկում էին Կ. Պոլսի շարժման խոշոր նշանակության մասին։ «Կ. Պոլսի շարժումը,— գրում է «Հնչակը»-ը,— այդ հրաբուխը, ինչպես մեկ անսպասելի երկրաշարժ, հանկարծ ցնցեց ամբողջ Եվրոպան, կառավարությունները, մամուլ, հասարակություն։ Հնչակյան կարմիր տեսիլը նորից երևեցավ Կ. Պոլսում և սուլթանական քաղաքն ամբողջովին տակն ու վրա եղավ»[54]։

Սուլթանական քաղաքը ամենևին տակն ու վրա չեղավ։ Ավելի ճիշտ կլինի ասել, որ նրանց կործանարար քաղաքականության հետևանքով տակն ու վրա եղան հազարավոր հայկական տներ և պոհ դարձան հազարավոր անմեղ հայեր։ Այդ վնասակար քաղաքականությունը արևմտահայ ժողովրդի ազատագրության ուղին

52 «Մշակ», № 8, 1895։
53 «Հնչակ», № 16, 1895։
54 «Հնչակ», № 17, 1895։

չէր ու չէր կարող դառնալ։ Էլ որտե՞ղ մնաց սնապարծ հայտարարությունն այն մասին, որ իբր թե իրենց հնչակյանների հարկադրանքի ներքո թուրքական կառավարությունը «ծունկի է եկել և գլուխ ծռել» իրենց առջև։

«... Այսօր համայն հայությունը,— գրում է «Հնչակ»-ը,— համայն աշխարհ վկա է կուսակցության այդ մեծ հաղթության, որ մենք տարինք այնքան արյան և այնքան եռանդի զորությամբ»[55]։

Սուլթանական կառավարությունը կանգուն էր և հոշոտում էր հայերին, բայց հնչակյանները սնապարծորեն խոսում էին նրա «պարտվածության» մասին, որը ծիծաղելի է։ «Կ. Պոլսի և Զեյթունի հեղափոխական ձայնը,— գրում է «Հնչակ»-ը,— հայկական աղաղակն ասաց Եվրոպային, որ հայերը որոշել են հաղթել, իսկ հալթված կլինի միայն այն ժամանակ, երբ հայերի համար իրենց հայրենիքը կլինի այլևս գերեզման»[56]։

Հնչակյանների քարոզած «Հայկական հեղափոխությունը» պակաս դեր չխաղաց սուլթանի համար ռուսական ցարին այդ ուրվականով վախեցնելու, սուլթանի իշխանության հետ «մտերմական» հարաբերություններ հաստատելու և հայերի նկատմամբ թշնամական կուրս վերցնելու, նրանց «սեպարատիստական» հակումները խափանելու գործում։

Հայտնի է, որ 1895—1896 թվականներին Զեյթունի հերոսամարտը լուրջ հարված էր նենգ ու դաժան թշնամուն։ Պայքարը վերջացավ երկու կողմերի համաձայնությամբ՝ եվրոպական տերությունների միջամտությամբ։ Զեյթունցիների հաջողությունները հնչակյանները համարեցին իրենց տարած «փայլուն» հաղթանակը»[57]։

«Ահա թե ուր է հասցնում ապստամբական զենքի հարվածը,— գրում է «Հնչակ»-ը,— և նրա հմուտ գործադրությունը։ Եվ Զեյթունն այսօր այդ կարևոր դիրքն է բռնել միջազգային քաղաքականության մեջ շնորհիվ իր ապստամբության, որ կազմակերպել ու վարում էր շարունակ Հնչակյան կուսակցությունը... Դրանից նաև էլ ի՞նչ ավելի փառավոր ապացույց կարելի է առաջ բերել հօգուտ Հնչակյան կուսակցության փայլուն գործունեության»[58]։

Հնչակյանները չկարողացան կամ չկամեցան հասկանալ եվրոպական դիվանագիտության շահամոլ բնույթը։ Հայկական հարցում ամենանենգ դիտավորությամբ հանդես էր գալիս Անգլիան։ Բայց հնչակյանները Գլադստոնի «մարդասիրական» ճառերով հիպնոսացած, ավելի ու ավելի էին կողմնորոշվում դեպի նա և նրա անմիջական օգնության հետ էին կապում Հայկական հարցի լուծումը։

«Մեր դատի բնական պաշտպանի դերն Անգլիայի վրա է ընկնում,— գրում է «Հնչակ»-ը,— և դա՝ հենց այն պարզ պատճառով, որ այս վերջին տերության շահերը, հակառակ լինելով Ռուսաստանի շահերին, նպաստավոր էին Հայկական դատի լուծման հօգուտ հայոց պահանջների, հօգուտ հայոց ինքնուրույնության»[59]։

Ընդունելով այն ճշմարտությունը, որ հենց այդ անգլո-ռուսական հակամարտություններն էին, որոնք ոգևորում էին սուլթանական Թուրքիային հայերի նկատմամբ իր նողկալի քաղաքականությունը իրականացնելու։

Բայց քանի որ Անգլիան հայտարարում էր, թե ինքը միայնակ օգնել չի կարող, որ իր նավերը Տավրոսի լեռները բարձրանալ չեն կարող, ուստի հնչակյանները պետք է շարունակեն իրենց «ապստամբական» գործողությունները՝ նրա վրա ճնշում գործ դնելու, նրան ակտիվացնելու համար։

Քաղաքական այսպիսի կուրությամբ էլ հնչակյանները շարունակեցին իրենց վնասակար գործունեությունը։

* * *

1896 թ. օգոստոսին Լոնդոնում գումարված համաժողովը հանդիսադումարի բերեց Հնչակյան կուսակցության քաղաքականության տխուր արդյունքները։ Հնչակյան կուսակցության կորստաբեր քաղաքականության հետևանքները հասկացան ու գիտակցեցին նրա շարքերում եղած որոշ մարդիկ՝ Ա. Արփիարյանը, Միհրան Տամատյանը, Անտոն Ռշտունին, Աղասին, Մ. Սվազյանը, Հ. Օհանջանյանը և ուրիշներ, որոնք վտարվեցին այդ կուսակցությունից այն բանի համար, որ պահանջում էին վերջ տալ հայ ժողովրդի գոյությանը սպառնացող խաղերին և Հայկական հարցի լուծմանը ձգտել խաղաղ դիվանագիտական ճանապարհով։

Հնչակյան կուսակցությունը պառակտվեց։ Նա իր տեղը զիջում

55 «Հնչակ», № 18, 1895։
56 «Հնչակ», № 22, 1895։
57 «Հնչակ», № 24, 1895։
58 «Հնչակ», № 3, 1896։

59 «Հնչակ», № 5, 1896։

էր դաշնակցությանը։ Հնչակյանների համաժողովը կուսակցությունից և նրա Կենտկոմի կազմից հեռացրեց Ա. Նազարբեկյանին և նրա կնոջը՝ Մարիամ Նազարբեկյանին[60]։

«Հիմա ալ ժամանակն է,— գրում է «Հնչակ»-ը,— որ ավելի ճշգրիտ ծրագրով, ավելի ընդարձակ միջոցներով գործենք»[61]։

Ծրագրի ճշգրտումը՝ ընկերվարական-սոցիալիստական կարգերից հրաժարումն էր, իսկ ընդարձակ միջոցները՝ դաշնակցության հետ սերտ-աճումն էր, զուտ ազգայնական նպատակին ծառայելն էր։

«Նախ պետք է ունենանք ազգայնական պահանջներու որոշ, հստակ ծրագիր մը,— գրում է «Հնչակ»-ը,— հայոց ազգը գիտենալու է, թե ի՞նչ կուզե։ Կուսակցական չընենք այդ ծրագիրը, այլ ազգային։ Ամբողջ հայ ազգը մեկ հոգով, մեկ սրտով այդ ծրագրին իրականացումին պետք է աշխատի։ Պատրաստ ունինք այդ ծրագիրը»[62]։ Այնուհետև «Այդ ծրագիրը 1895 թ. սեպտեմբեր 18/30-ին,— գրում է «Հնչակ»-ը,— իբրև հայտարարություն ներկայացավ Դրան, եվրոպական տերություններուն, ամբողջ աշխարհին։ Հայ ազգը ամբողջապես ծափեց այդ ծրագրին... Իսկ օգոստոսի 14/26-են ետքը Դաշնակցական կուսակցության պահանջումներին ալ, որոնք հաղորդվեցան եվրոպական պետություններուն, նույնանում էին մեր ծրագրին պարունակությանը»[63]։

Այս ծրագիրը հնչակյանները ներկայացնում էին որպես արևմտահայ ժողովրդի աղատագրության փաստաթուղթ, որը երազանք էր։ Այդ ազգայնական ծրագիրը հայ ժողովրդին մեկուսացնում էր մյուս ժողովուրդներից ու ազգերից և չէր կարող հասցնել նրա սոցիալական ու ազգային ազատագրությանը։

Հնչակյանների նոր ծրագիրը իրավունք էր վերապահում հասարակության սոցիալական խավերին ազատորեն նախընտրելու իրենց համար հասարակական-տնտեսական կարգ, չբացասելով նույնիսկ միապետական կարգը։

Հնչակյանները հայտարարում էին, թե իրենց ապստամբական գործունեությունները են, որոնք Թուրքիային մահվան եզրին են հասցրել։ «Հայ հեղափոխական գործունեության հարվածների տակ նա (իմա՝ Թուրքիան — Հ. Վ.),— գրում է «Հնչակ»-ը,— վերջնականապես կորցրեց թե քաղաքական և թե նյութական հենակետը...

60 «Հնչակ», № 18, 1896։
61 «Հնչակ», № 19, 1896։
62 Նույն տեղում։
63 Նույն տեղում։

Սուլթանն ու իր ռեժիմը, հայ հեղափոխական գործունեության շնորհիվ, հասած էին այդ վիճակին, որից նրան փրկեցին Սելդզ-Քեշկի խարդախությունը և գլխավորապես եվրոպական մեկ-երկու միապետներ»[64]։

Եվրոպական դիվանագիտության օգնության սիրահարները հարկադրված եղան ասելու, որ «Եվրոպան այսօր դարձել է Թուրքիայի խնամակալն ու տերը»[65]։ Եվրոպան հապաղում էր, Անգլիան, «Հայկական դատի այդ բնական «պաշտպանը» չէր օգնում։ Ի՞նչ անել, ղենքը վա՞յր դնել,— ոչ, պատասխանում էին հնչակյանները, պետք է շարունակել կռիվը և ստիպել Եվրոպային միջամտելու։ «...Մեր դրությունն այսօր շատ որոշ է,— գրում է «Հնչակ»-ը։— մենք գիտենք, թե ինչ վիհի գլխին է կախված սուլթանական ռեժիմը. մենք գիտենք նույնպես, որ եվրոպական տերությունների անորոշ ու անհամարձակ դիրքն էլ կխախտվի, եթե Թուրքական կայսրության մեջ ներսից սուլթանական ռեժիմը ստանա ուժգին հարված։ Մեր պատմական դատն էլ հենց դրանում կարող է գտնել իր միակ լուծումը։ Հետևաբար, պատմական սնխուսափելի պահանջ է, որ ներկա կրիտիկական ու ծանր ժամանակներին էլ մենք շարունակենք մեր կռիվը...»[66]։

Իր հովանավորյալների ու տերերի օգնությամբ ու թողտվությամբ սուլթանական Թուրքիան հնչակյանների կողմից իր դեմ ուղղված ամեն մի «ուժգին հարված»-ին պատասխանում էր հայերի կոտորածներով ու արտաքսմամբ։ Հնչակյանները այդ բոլորից հետո խոսում էին հայ ժողովրդի, հայ ազգի շահերից, «Հայկական հեղափոխության» գաղափարը համարում էին «նրա միսը, արյունը, նրա մտածելու ու զգալու միակ եղանակը»[67]։

Իր այդ հայտարարությունից «Հնչակը»-ը անում է այն հետևությունը, որ իբր թե հայ ժողովուրդը ազգ է դառել և տեղ է գտել մյուս ազգերի շարքերում շնորհիվ «Հնչակյան» կուսակցության «հեղափոխական գործունեության», որ «Եվրոպայի աչքում «մեռած երկիր» Հայաստանը վերածվեց նոր կյանքով, նոր մտքով, նոր գործով և անցավ ազգերի շարքը»[68]։

Հնչակյանների ղենքը ուղղված էր Ա. Արփիարյանի և նրա

64 «Հնչակ», № 8, 1897։
65 Նույն տեղում։
66 «Հնչակ», № 9, 1897։
67 «Հնչակ», № 6, 1897։
68 «Հնչակ», № 11, 1897։

կողմնակիցների դեմ, որոնք շեշտակիորեն պահանջում էին վերջ տալու արյունահեղություններին, ահաբեկումներին ու դավադրություններին և Հայկական հարցի լուծումը թողնել եվրոպական դիվանագիտության միջամտությանը։ Իհարկե, եվրոպական դիվանագիտությունը Հայկական հարցի լուծման ուղին չէր կարող դառնալ։ Բայց նրանց կողմից հնչակյանների կոռստաբեր քաղաքականության մերկացումները միանգամայն ճիշտ էին։ Այդ էր պատճառը, որ հնչակյանները սկսեցին անհիմն մեղադրանքներ հորինել Արփիարյանի և նրա կողմնակիցների դեմ։

Մերկացնելով հնչակյանների ու դաշնակցականների վնասակար գործունեությունն ու գաղափարախոսությունը Ստ. Շահումյանը ցույց է տալիս, որ այդ քաղաքական կուսակցությունները շեղում էին հայ ժողովրդի ուշադրությունը ընդհանուր թշնամու՝ ռուսական ցարիզմի դեմ մղվող պայքարից, ցարիզմ, որի կործանման հետ էր կապված ոչ միայն ռուս ժողովրդի, այլև ճնշվող բոլոր ժողովուրդների և այդ թվում հայ ժողովրդի ազատագրության բախտը։

«Այո՛, —գրում է Ստ. Շահումյանը,— մենք հակառակ ենք եղել դաշնակցականների, հնչակյանների ազգային քաղաքականությանը։ Մենք ասել ենք նրանց՝ դուք, պարոններ, հայ ազգի համար կույր առաջնորդներ եք։ Դուք ունեք բարի ցանկություններ, բայց ձեր գործերը, ձեր ճանապարհը կոռստաբեր են հայ ժողովրդի համար»[69]։

Շահումյանը միաժամանակ նշում է, որ այդ կուսակցությունների ազգայնական գաղափարախոսությունը, հայերին մյուս ժողովուրդներից մեկուսացնելու և նրանց հետ թշնամացնելու քաղաքականությունը կոռստաբեր էին ոչ միայն արևմտահայության, այլև կովկասահայության համար։

«Ազգը այսինքն՝ ժողովուրդն իր մեծամասնության մեջ,— գրում է նա,— ոչ միայն չշահեց հնչակյան-դաշնակցական «ազգասիրությունից», այլ կրեց ամենասոսկալի պատիժները, զոհ դարձավ ամենաահռելի պատուհասների»[70]։ Եվ ապա «մեր «ազգասերները» ...կարծես դիտմամբ ամեն ջանք դրած էին դնում մեկուսացնելու հայ ժողովուրդը հարևան ազգերից, թշնամացնելու նրա հետ

69 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 2, Հայպետհրատ, 1957, էջ 407։
70 Նույն տեղում, էջ 409։

բոլորին և հող պատրաստելու՝ սուլթանի ու Նիկոլայ Ռոմանովի դժոխային ծրագիրները իրականացնելու համար»[71]։

Ելնելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության սկզբունքներից, Ստ. Շահումյանը իրավացի կերպով նշում է, որ միայն հարևան ժողովուրդների հետ համերաշխ ապրելու և գործելու քաղաքականությունն է երաշխիք հայ ժողովրդի հանգիստ գոյության։

Այսպիսով, քննարկելով դեպի արևմտահայ ժողովրդի ազատագրությունը հնչակյանների ունեցած վերաբերմունքը, հանրագումարի բերելով նրանց քաղաքականության արդյունքները, մենք հանգել ենք այն հետևության, որ նրանք ոչ միայն չէին կարող հասնել հայերի ազատագրությանը, այլև ձախողում էին նրանց պայքարի հաջողությունները։

3. Հ. Հ. Դաշնակցությունը — Հայ քաղաքական կյանքում, այդ ժամանակաշրջանի երկրորդ ազդեցիկ կուսակցությունը դաշնակցությունն էր, որը առաջացավ 1890 թվականից։ Նա իր խնդիրն էր համարում զբաղվելու արևմտահայերի ազատագրության հարցով, որի հիմնադիրները ամենևին ծանոթ չէին Արևմտյան Հայաստանի պայմաններին։ Նրանք միայն գիտեին, որ Թուրքիայում հայեր կան և ճնշվում են թուրքական բռնապետության կողմից։

Թե՛ հնչակյանները և թե՛ դաշնակցությունը կարծում էին, որ թուրքական պետությունը կազմալուծվում է՝ որը հնարավոր է դարձնում ներքին խռովությունների կազմակերպման և կոլեկտիվ խնամակալությունը հանձն առած եվրոպական խոշոր տերությունների միջամտությամբ հասնել Արևմտյան Հայաստանի ինքնավարությանը։ Այդ ենթադրությունների հիման վրա նրանք մշակեցին իրենց ծրագրերը և գործողության եղանակները։ Ահա թե ինչու Ռոստոմ Զորյանի և Մարտին Շաթիրյանի ստեղծած ու գլխավորած դաշնակցական կազմակերպությունը բացառապես անդամագրում էր արևմտահայերին։

Դաշնակցության հիմնադիրներից Սիմոն Զավարյանը և Քրիստափոր Միքայելյանը նարոդովոլցիներ էին և գտնվում էին նրանց գաղափարական ազդեցության տակ։ Այդ իրադրությունների ծնունդ էր նաև Ռոստոմ Զորյանը։ Սրանք ամենևին չհրաժարվեցին նարոդնիկական հայացքներից, նրանց անսուրխիստական դավադրական գործողություններից, այլ, ընդհակառակը, դրանք հարմարեցրին

71 Նույն տեղում, էջ 408։

հայ իրականությանը, իրենց բուրժուա-նացիոնալիստական քաղաքականությանը։

Ռուսական նարոդնիկները տեռորի ու դավադրությունների ճանապարհով կամենում էին հեղաշրջել Ռուսաստանի միապետական կարգերը և հասնել ժողովրդի ազատագրությանը։ Դաշնակցության հիմնադիրներն էլ կարծում էին, թե ցույցերի, արշավանքների, տեռորիստական ակտերի կազմակերպման, հրոսակային խմբերի ծավալած գործողությունների ճանապարհով կարելի է հասնել Հայկական հարցի լուծմանը։

Նարոդովոլցիների օրինակով Քր. Միքայելյանը քաղաքական պայքարը նույնացնում էր քաղաքական դավադրությունների հետ։ Նա մերժում էր կազմակերպված դասակարգային պայքարի անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը, պաշտպանում էր հրոսակախմբերի ստեղծման, զինման ու դրանց միջոցով պետություններին ահաբեկելու սխալ քաղաքականությունը։

1890 թվականին դաշնակցությունը հրապարակեց իր, այսպես կոչված, «Մանիֆեստը», որը ազդարարում էր, թե «Սուլթանը սարսափահար է, թուրք կառավարությունը գլուխը կորցրել է, նոր դաշնակցությունը մտել է այն կռվի մեջ, որ սկսել է ինքը՝ ժողովուրդը տաճկաց կառավարության դեմ»։

1891 թվականի մայիսին «Դրոշակ»-ը գրում է. «...Հայ ժողովրդի կռիվը պետք է պարտիզանական կռիվ լինի. մենք մեր այժմյան դրության մեջ ուրիշ կերպ կռվել չենք կարող... Այդ պարտիզանական պատերազմի նախաձեռնողը կլինեն ժողովրդից դուրս եկած մարտնչող մարդիկ, որոնք միայն ձև են փնտրում արտահայտելու իրենց հիանալի զգացմունքները, ուժերն ու ընդունակությունները։ Այդ ձևը — հրոսակային (հայդուկային — ավազակային) խմբերի կռիվը — կթելադրեն ժողովրդին և կժողովրդականացնեն՝ հեղափոխական ինտելիգենցիայի ներկայացուցիչները»[72]։

1892 թվականին Դաշնակցության առաջին համագումարը իր ընդունած ծրագրում հայտարարեց, որ Դաշնակցության «նպատակն է ապստամբության միջոցով Թուրքահայ Հայաստանի մեջ ձեռք բերել քաղաքական և տնտեսական ազատություն»։ Իր նպատակին հասնելու համար դաշնակցությունը «կկազմակերպե հեղափոխական խմբեր, որոնք կառավարության դեմ անընդհատ և զո-

72 «Դրոշակ», № 2, 1891։

բեղ կռիվ մղեն»։ Եվ ապա՝ «կռվել և ահաբեկել կառավարության պաշտոնյաները...»[73]։

Այդ ծրագիրն ընդունելուց հետո Քր. Միքայելյանը հարկադրված եղավ խոստովանել, որ իր կուսակցության նախընտրած գործողության եղանակը պարզապես «մի սրբազան դիսկ է՝ պայմանական հաջողությամբ»[74]։

Դաշնակցության աղմկարարության դեմ ինչպես արևմտահայերի, այնպես էլ բոլոր ողջախոհ մտածող արևելահայերի դժգոհությունը գնալով մեծանում էր, որովհետև նրանք ոչ մի լավ բան չէին տեսնում, ոչ մի շոշափելի արդյունքի չէին հասնում դաշնակցության գործունեությունից, բացի վնասից։ Այդ օրինական դժգոհությունը առիթ եղավ Քր. Միքայելյանին՝ հանդես գալու «Ամբոխային տրամադրություն» խորագրով իր կուսակցության քաղաքականությունը արդարացնող հատուկ աշխատությամբ։ Նա հայերին մեղադրում էր «ամբոխային տրամադրություն» ցուցաբերելու, իր կուսակցության վարած քաղաքականության հեռանկարները չհասկանալու մեջ։ Ի՞նչ էր պահանջում այդ «Ամբոխը»։ Նա պահանջում էր հրաժարվել անժամանակ և անկազմակերպ ցույցերի և ապստամբությունների դիմելու փորձերից, դավադրություններից, տեռորիստական ակտերից, հայդուկային գործողություններից, որոնք առիթներ էին ստեղծում սուլթանական կառավարության համար հայերի բնաջնջման իր վաղուց մշակած ծրագիրը համարձակորեն իրագործելու և միաժամանակ միջազգային պրոգրեսիվ մարդկության ցասումը լռեցնելու, իր հանցագործությունը հայերի վրա բարդելու համար։

«Ամբոխը շատ իրավացի կերպով գտնում էր, որ եթե հայերը սուլթանական բռնապետությունից պետք է ազատագրվեն իրենց ֆիզիկական ոչնչացման ճանապարհով, ապա ո՞ւմ էր պետք այդպիսի ազատությունը։

«Ամբոխը» դաշնակցության քաղաքականությունից ու գործելակերպից դժգոհ էր, որովհետև դրանցից ոչ մի դրական բան չէր սպասում։ Նա պահանջում էր վարել այնպիսի քաղաքականություն և ունենալ այնպիսի գործելակերպ, որոնք օգնեին նրան ազատագրվելու ոչ միայն բռնակալների հարստահարություններից, սոցիալական ու ազգային ճնշումներից, այլև ֆիզիկական բնաջնջումից։

73 «Ծրագիր Հ. Հ. Դաշնակցության», Ժնև, 1906, էջ 11—14։

74 Քր. Միքայելյան. Հեղափոխականի մտքեր. Ժնև, 1906, էջ 37։

Նշանակում է, որ «Ամբոխային տրամադրությունը» ավելի առողջ էր, քան դաշնակցության պարագլուխների տրամադրությունը։ Այդ բանը սկսեցին գիտակցել նույնիսկ այդ պարագլուխներից ոմանք։ Նրանք դաշնակցության առաջին համագումարում, որպես չափավորներ հրաժարվեցին կրակի հետ խաղ անելու, սրի ու զենքի քաղաքականությունից։ Բայց դաշնակցական բյուրոկրատիան, հաշվի չառնելով ժողովրդական մասսաների դժգոհությունը, շարունակեց իր վնասակար քաղաքականությունը՝ այն է՝ բռնի ուժով վերջ տալ թուրքական բռնապետությանը, «թոթափել այդ խայտառակ լուծը, ոչնչացնել արդի միապետական բռնակալ ռեժիմը»։ Այսպիսով, հայդուկային հրոսակային խմբերի միջոցով դաշնակցությունը կամենում էր խորտակել մի պետություն, որն օգտվում էր եվրոպական խոշոր տերությունների աջակցությունից ու հովանավորությունից։ Այսպես կարող էին մտածել միմիայն քաղաքական անհեռատես մարդիկ, որոնք իրոք, որ ռիսկի էին ենթարկում հայ ժողովրդի բախտը։

Հետևապես, միանգամայն սխալվում է Լեոն, երբ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը սմբողջապես դիտում է որպես նարոդնիկական — բունդարական ռուսական սոցիալիզմի գաղափարախոսության արդյունքը։ Նա հայ ազգայնական այդ կուսակցությունների բունտարական գործունեությունը կապում է Նալբանդյանի և նրա գաղափարակիցների գործունեության հետ։ Ըստ Լեոյի ստացվում է, որ առաջին բունտարը եղել է Նալբանդյանը, երկրորդը՝ «Հնչակը» և երրորդը՝ Դաշնակցությունը։ «Ուրեմն,— գրում է նա,— դարձյալ նույն ռուսական սոցիալիզմն էր բունտարական — ապստամբական սկզբունքով, որ այս երրորդ անգամն էր — Նալբանդյանից և «Հնչակ»-ից հետո գալիս էր կազմակերպելու թուրքահայության ազատագրումը ապստամբության միջոցով»[75]։

Նալբանդյանը բունտարական-դավադրական ելույթների կողմնակից չէր։ Նա ամբողջ հայ ժողովրդին կոչ էր անում զինված ճանապարհով կործանելու բռնակալների իշխանությունը, նվաճելու ազատությունը։ Նրա համար թուրքական սուլթանիզմը նույնքան վտանգավոր էր, որքան՝ ռուսական ցարիզմը։ Նա հայ ժողովրդի ազատագրությունը սերտորեն կապում էր ռուս ժողովրդի ազատագրության հետ։ Նալբանդյանը հայ ժողովրդին մյուս ժողովուրդների հետ բարեկամական համագործակցությամբ պայքարի էր կոչում։ իսկ այդ ազգայնական կուսակցությունները հայ ժողովրդին թշնամացնում էին հարևան ժողովուրդների հետ և դրանով լուրջ արգելք էին դառնում նրա ազատագրության գործին։

1893—1894 թվականների՝ Սասունի ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը վերջացավ հայերի՝ պարտությամբ։ Բայց հայ ազգայնական կուսակցությունները, առանց որևէ լուրջ հետևություններ անելու, կոչ էին անում «կրկին դիմել դեպի կոտորած, դեպի արյուն, դեպի զոհ. ահա միակ ճանապարհը, մինչև որ կկործանվի սուլթանի գահը...»[76]։

Ռիսկի ենթարկելով ժողովրդի բախտը, հայ ազգայնական կուսակցությունները նրան օբյեկտիվորեն մղում էին կործանման ուղին։ «Կտրված գլուխներ, սովամահ եղած դիակներ, բանտերում փտող կալանավորներ, հեղեղներով հոսող արյուն,— գրում է «Դրոշակ»-ը,— ահա թե ինչից է ծնում ազատությունը, ահա թե ինչեր են անկախության և բարօրության աշխարհ բերողները»[77]։

Դաշնակցական գոռոզամիտների աչքում նույնպես թուրքական սուլթանը երևում էր ինչ որ մի աննշան մեծություն, մի թզուկ, և կարծում էին, թե իրենց մի քանի հայդուկային խմբերով հնարավոր կլինի վերջ տալ նրա գոյությանը և հասնել հայերի ազատագրությանը։

Սուլթանի իշխանությունը շատ ամուր էր. նա մասսայաբար կոտորում էր հայերին, իսկ դաշնակցականներն իրենց արարմունքներով բորբոքում էին նրա կրքերը։ Սասունի ապստամբությունը համարում էին «Հայկական հեղափոխություն», «կյանքի գարուն»[78], որովհետև ուրիշ ճանապարհ չկա, ասում էին նրանք, «ազատությունը ձեռք բերելու միջոցը զենքն է, արյունն է...»[79]։

Այդ զենքի ու արյան իր վարած քաղաքականության «հաջողությանը» վերագրելով Սասունի ապստամբությունը, դաշնակցությունը սկսեց թմբկահարել, թե «Հեռու չէ ժամանակը, հայ ժողովուրդ, զանգն արդեն խփել է։ Թուրք պետության օրհասն արդեն մոտ է...»[80]։ Այդ օրհասն ավելի մոտեցնելու նպատակով, դաշնակցու-

75 Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հատ. Բ, Փարիզ, 1935, էջ 8։

76 «Դրոշակ», № 14, 1894։

77 Նույն տեղում։

78 «Դրոշակ», № 4, 1895։

79 «Դրոշակ», № 2, 1895։

80 «Դրոշակ», № 14, 1894։

թյունը դիմեց ահաբեկումների քաղաքականությանը՝ որպես սուլթանական կառավարության ուժերը չլատելու «միակ նպատակահարմար միջոցը, ուղին»[81], որն ավելի ու ավելի մեծ աղետների առջև կանգնեցրեց հայ ժողովրդին։

Թուրքական կառավարությունն անտարբեր չէր դեպի դաշնակ հրոսակների ահաբեկումները։ Նա իր ամեն մի պաշտոնյայի սպանությանը պատասխանում էր բոլորովին անմեղ հաղարավոր հայերի ոչնչացմամբ։

«Հայ Հեղ. Դաշնակցությունը,— գրում է «Դրոշակ»-ը,—հավատարիմ մնալով յուր սկզբունքին, կշարունակե կռիվը. կռվի մեջն է կյանքը, կռվի մեջն է հաղթությունը... մենք կկռվենք»[82]։

Բայց ու՞մ դեմ էին կռվում նրանք,— մի ուժեղ ու հզոր տերության, որը նյութական և բարոյական ուժ էր ստանում եվրոպական հենց այն տերություններից, որոնցից միջամտություն էին սպասում իրենք։ Իսկ ո՞րն էր իրենց կռվի անհաջողությունների պատճառը։ Պատճառը, պատասխանում էին նրանք, Թուրքիայից դուրս գտնվող հայերն էին, որոնք կամ փող չէին տալիս, կամ հույս էին դնում եվրոպական դիվանագիտության միջամտության վրա՝ բացասելով հայկական հեղափոխության» անհրաժեշտությունը։

«Այո՛,— գրում է «Դրոշակ»-ը,— հայ թշվառ ժողովուրդը մենակ է ու անզեն, և ո՞վ է մեղավորը, ինքը՝ Տաճկահայաստանից դուրս ապրող հայ ժողովուրդը, որ անտարբեր գտնվեց հեղափոխականների հրավերին ու յուր խաղաղ ուղիով հարեց դիպլոմատիային»[83]։

Ուրեմն, «Հայկական հեղափոխության» անհաջողության պատճառը Թուրքիայի սահմաններից դուրս եղած հայությունն է, նրանց եվրոպական օրիենտացիան։ Բայց չէ՞ որ իրենք էլ այդ օրիենտացիայի ջերմեռանդ պաշտպաններն էին։ Տարբերությունն այն էր, որ մեկը կամենում էր Հայկական հարցի լուծմանը հասնել խաղաղ դիվանագիտական ճանապարհով, իսկ մյուսը մեղադրելով այդ տերություններին՝ սառնասիրտ վերաբերվելու համար և իր «հեղափոխական» գործողություններով կամենում էր կոտրել նրանց քարը, ակտիվացնել նրանց՝ «հոգևարքի» մեջ գտնված սուլթանին վերջ տալու, Հայկական հարցը լուծելու համար։

81 Նույն տեղում։
82 Նույն տեղում։
83 «Դրոշակ», № 17—18. 1895։

Բայց ցավոք սրտի, ասում էին դաշնակցականները, այդ «թշվառական հիվանդը» կարողանում է ապրել ու կենդանի մնալ մի կողմից եվրոպական դիպլոմատ բժիշկների, և մյուս կողմից՝ Թուրքիայից դուրս գտնվող հայերի սառնասիրտ վարմունքի հետևանքով։ Թող նրանք այդպես վարվեն, իսկ մենք կշարունակենք մեր կռիվը և «այդ կռիվն է մեր ճակատագիրը վճռողը»[84]։ Միայն կռվի միջոցով, արյուն թափելով, սրեր ճոճելով հնարավոր կլինի սրել Արևելյան հարցը և ընթացք տալ Հայկական հարցին։ Այդպիսի դյուրահավատությամբ ու մանկամտությամբ «Դրոշակ»-ը գրում է. «Որովհետև Հայկական խնդիրը կապված է Արևելյան հարցի հետ, ուստի դիպլոմատիայի վրա ճնշում գործ դնելու ամենազորեղ միջոցը, հայտնի է, հեղափոխական շարժումներն են։ Հայկական հեղափոխական շարժումը ներկայումս Արևելյան հարցի, այդ քաղաքական-պայթուցիկ պատրույգն է, իսկ հեղափոխականները այդ պատրույգը, նրա կրակը։ Արևելյան հարցի պայթումից սարսափում է քաղաքակիրթ աշխարհը և առանձնապես նրա քաղաքական ներկայացուցիչները»[85]։

Որ Հայկական հարցը սերտորեն կապված էր Արևելյան հարցի հետ, այդ անկասկած է։ Բայց եվրոպական ոչ մի տերություն իր ոչ մի զինվորի կյանքը չէր զոհի Հայկական հարցի լուծման համար, նրանցից ոչ մեկն էլ Թուրքիայի հետ պատերազմ չէր վարի, որովհետև նրանցից յուրաքանչյուրը ղեկավարվում էր իր շահերով։

1895—1896 թվականներին զեյթունցիները կազմակերպեցին իրենց հերոսական ինքնապաշտպանությունը և ամենևին էլ անձնատուր չեղան։ Այնինչ դաշնակցական կուսակցությունները սկսեցին կըշտամբել նրանց «անձնատուր լինելու» համար և պահանջում էին շարունակել արյունահեղությունը։ «Զեյթունի անձնատուր լինելու խնդիրը դնելով հեղափոխական տեսակետից,— գրում է «Դրոշակ»-ը,— մենք չենք կարող նրա այդ վարմունքին նայել հաշտ աչքով և ներողամիտ սրտով... Զեյթունի այս անկումը մեզ չի վհատեցնիլ, ինչպես որ չվհատեցրին հարյուր հազար զոհերը. կռիվը շարունակվում է և կշարունակվի»[86]։

Իրենց այս ծրագրի իրագործման դիտավորությամբ նրանք սկսեցին դատապարտել և «հայրենիքի դավաճաններ» անվանել

84 «Դրոշակ» № 4, 1896։
85 «Դրոշակ» № 19, 1895։
86 «Դրոշակ» № 7, 1896։

բոլոր այն հայերին, ովքեր իրենց կյանքը փրկելու նպատակով թողնում, փախչում էին։ «Եվ այժմ, երբ գետերով արյուն թափելուց հետո,— գրում է «Դրոշակ»-ը,— հայկական խնդրի լուծման ժամանակը զարկում է,— դու հայրենիքդ ուրանո՞ւմ, փախչո՞ւմ ես։ Դատապարտելի է... Ո՜հ, դու դավաճանում ես հայրենիքիդ... Դու կլրնես դավաճան, մի գաղթիր»[87]։ Եվ ապա՝ «Ամոթ քեզ հայ ժողովուրդ... փոխանակ հայրենիքում մնալու... դու դառնում ես մի ոճրագործ, դավաճան և վատաբար անդունդից անդունդ փախչում... Այո՛, քո ընթացքը-գաղթելը կորստաբեր է. ամենասարսափելի կոտորածները ոչինչ են դրա դիմաց, մի ազգի կորստյան պատճառը գաղթականությունն է»[88]։

Ինչո՞ւ վհատվել, ինչո՞ւ փախչել, երբ դաշնակցական հայդուկների հարվածների տակ արդեն գլուխ է խոնարհում սուլթանի իշխանությունը, երբ «մեր թշնամին օրեցօր թուլանում, ընկնում է. նա հիմա նստած է հրաբխի վրա և այսօր կամ վաղը կժայթքի այդ հրաբուխը իր լավայի տակ թողնելով մեծ ոճրագործին՝ իր բռնակալությամբ»[89]։

Այս ոգևորությամբ 1896 թ. օգոստոսի 14-ին Օտոմանյան բանկի գրավման կապակցությամբ Կ. Պոլսի դաշնակցական կոմիտեն մշակում և սուլթանի կառավարությանն է ներկայացնում 12 կետերից բաղկացած իր ուլտիմատում-պահանջը։

Իսկ բանկի վրա հարձակվող դաշնակցականները ֆրանսերեն լեզվով կազմում են իրենց ուլտիմատում-պահանջը՝ 4 կետից բաղկացած։

1. Ապահովել միջազգային միջամտությամբ ամբողջ երկրի խաղաղությունը։

2. Ընդունել բոլոր պահանջները, որ գրել է Հ. Հ. Դաշնակցության Պոլսո Կենտրոնական կոմիտեն։

3. Մեր դեմ ուժ գործ չդնել։

4. Կյանքի կատարյալ ապահովություն թե բանկի մեջ գտնվողների և թե քաղաքի այն մասերում խառնակչությանց մեջ մասնակցողների»[90]։ Հակառակ դեպքում դաշնակցականների հայդուկային խումբը սուլթանին սպառնում էր բանկի կործանմամբ։

87 «Դրոշակ» № 14, 1896։
88 «Դրոշակ» № 28, 1896։
89 «Դրոշակ» № 16, 1896։
90 «Դրոշակ» № 21, 1896։

Բանկի գրավման հետ կապված արկածախնդրության համար սուլթանի կառավարությունը սրի քաշեց ավելի քան 6000 հայերի, իսկ իրենք պարոնայք դաշնակցականները ֆրանսիական «Ժիրոնդա» շոգենավով Ֆրանսիա մեկնեցին։

Անարգանքի սյունին գամելով հայ ազգայնական կուսակցությունների այդ դավադրական քաղաքականությունը, Ա. Զոբանյանը գրում է. «Պանքային ցույցեն ետո, երբ 6000 հայ ջարդվեցան Պոլիս, երբ Պոլսո հայության դիրքը վերջնականապես խախտվեցավ ու քայքայվեցավ այդ քաղաքի մեջ ու ողբալի, փախստական տարաբներում մը սկսավ դեպի օտարություն «Դրոշակ»-ը կպարծեցնար ու կցնծար՝ «Հիմա, կըսեր, սուլթան զգաց հայուն ուժը...»։ Այս քստմնելի կատակը տևեց երկայն ատեն»[91]։

Մեղադրելով Փարիզում բնակվող դաշնակցական բախտախնդիրներից մեկին, որը Հայաստանի հետ ոչ մի կապ չուներ և միայն նրա անունն էր լսել, բայց կամենում էր հայերի արյան գնով հասնել Հայկական հարցի լուծմանը, բերելով նրա խոսքերը, Զոբանյանը գրում է. «Ի՞նչ կա, կըսեր Պանքային ցույցեն քիչ հետո, բարիզաբնակ գործիչ մը, «ինչո՞ւ իրար անցնիլ որովհետև քանի մը հազար հոգի մեռեր է. լավագույն է որ ամբողջ ազգը ջնջվի, քան թե արդի կացության մեջ մնա», ըսողը մատը արյունած չէ երբեք դրացիին համար, և այս խոսքը կըսեր Հայաստանեն շատ հեռու, Բարիզին սիրուն մայթին վրա»[92]։

Ծաղրի ենթարկելով մի ուրիշ դաշնակցական պրոստախոսի, Զոբանյանը հիշատակում է նրա հայտարարությունը. «Պետք է հայոց խնդիրը կարգադրել» ըսեր է. «Օ՜, կը գոչեր, քանի որ այդպես է, պետք չէ անշարժ մնանք, պետք է իսկապես քիչ մը փայտ նետել կրակին մեջ... «Քիչ մը փայտ նետել»-ը այդ արարածին բառարանին մեջ կնշանակեր Հայաստանի մեկ անկյունը դեպք մը բռնեցնել և քանի մը հազար հայու ջարդ առաջ բերել»[93]։

Այդ բոլորից հետո «Դրոշակ»-ը գրում է. «Եվ ահա օգոստոսի 14-ին, Պոլսում, փաթիշահների մայրաքաղաքում, հմուտ դիպլոմատների ամենանշանավոր կրկեսում որոտաց հայ հեղափոխականի ռումբը... Հայության վրա խաչ դնող դիպլոմատները նախ

91 «Անահիտ» № 3, էջ 85, 1898։
92 «Անահիտ» № 3, էջ 86, 1898։
93 Նույն տեղում։

շշմեցին, և ապա գժվածի նման իրար ընկան և ավելի տաք կերպով ձեռք առան Հայկական հարցը։ Հուզվեց ամբողջ լուսավոր մարդկությունը և հայ հեղափոխական վիշապից արդեն վախեցած դիպլոմատներից պահանջեց բավականություն տալ հային... Նոր տարին սկսում ենք գոչելով՝

Կռի՛վ, կռի՛վ և ավելի ահեղ կռի՛վ»[94]։

Հենց այդ «ահեղ կռվի» քաղաքականությունը եվրոպական դիպլոմատիայի սառնասիրտ վարվելու պատճառներից մեկն էր։ Այդ «ահեղ կռիվները» չկարողացան և չէին կարող ակտիվացնել այդ տերությունների միջամտությունը Հայկական հարցում։ Այս բոլորից հետո «Դրոշակ»-ը ստիպված եղավ ասել, թե «երբ դիպլոմատիան ցույց է տալիս, որ ինքը անզոր է խաղաղ միջոցով Հայկական խնդիրը լուծել, իսկ պատերազմելու էլ երբեք տրամադիր չէ, մենք չենք կարող մի րոպե անգամ շեղվել մեր գծած ճանապարհից... Թշնամին զինաթափ չի եղել, զինաթափ չենք եղել և մենք»[95]։

Թուրքական սուլթանը Վան-Վասպուրականի հայության շատ ուժեղ ջարդ կազմակերպեց։ Ժողովուրդը սգում էր իր ծանր կորուստը։ Բայց դաշնակցականները սկսեցին նախատել այդ թշվառ ժողովրդին այն բանի համար, որ նա հույն-թուրքական պատերազմի առիթով նորից գլուխ չէր բարձրացնում։ «Իսկ դուն ի՞նչ կխորհիս, հայ ժողովուրդ,— գրում է «Դրոշակ»-ը,— մի՞թե այդ ավետարեր ձայնը միշտ հեռու պիտի հնչե քու ականջին։ Եթե դու այդպես մտածես, գերեզմանն է քո բաժինը... Ինչ կընե Վասպուրականը... ձեռները ծալած, դողահար, լեղապատառ՝ կսպասե ահավոր րոպեին։ Ամոթ քեզ, նախատինք քեզ...»[96]։ Այսպես էր գրում «Դրոշակ»-ը այն ժամանակ, երբ հայերի ազգային-ազատագրական շարժումները պարտություն են կրել։

Դաշնակցականները մի քանի հայդուկային արշավանքներ կազմակերպեցին թուրքերի և քրդական որոշ ցեղերի դեմ, որոնք ժամանակ ոչնչացնում էին ոչ միայն մոլորված տասնյակ հայ հայրենասերներ այլև հազարավոր անմեղ հայ ընտանիքներ։

1897 թ. օգոստոսի 6-ին (Ն. տ.) դաշնակցական ֆիդայիները հարձակում են գործում Խանասորի լեռներում բնակվող քրդական Մազրիկ կոչված ցեղի վրա և տեղիք տալիս նոր արյունահեղություններ։ Խանասորի արյունոտ կռիվները դաշնակցականները համարեցին իրենց խոշոր հաղթանակը։ «Ֆիդայիների շեշտակի գնդակները,— գրում է «Դրոշակ»-ը,— գրեթե բնաջինջ արին այդ թշնամի ցեղը... Ցեղապետ Շարաֆ-բեյ իր ընտանիքով սրախողող եղավ։ Հաջողությունը փառավոր և եզակի էր մեր հեղափոխական տարեգրության մեջ... կռիվը տևեց լեռնոտ դիրքերում մինչև ուշ գիշեր։ Թշնամիների դիակները կույտեր էին կազմում։ Դաշնակցական ֆիդայիները ցույց տվին քաջություն և անվեհերություն։ Զոհ տվինք միայն 19 քաջեր...»[97]։

Դաշնակցական Ֆիդայի Օհանյանը «Դրոշակ»-ի խմբագրությանը գրում է. «Նոր վերադարձա արշավանքից... Մասնակցեցի իբրև հասարակ զինվոր... Մոտեցել էինք Շարաֆ-բեյի վրանին մինչև 15 քայլ... Գնդակները կարկուտի պես էին թափվում... Պատերազմից շատ ավար է բերված...»[98]։

Շարաֆ-բեկի ցեղի դեմ ուղղված կռիվը—կռիվ է սուլթանի իշխանության դեմ, որովհետև նա հանդիսանում էր համիդիեական զորախմբերի ղեկավարներից մեկը, զորախմբեր, որոնց վրա մեծ հույս էր դրել սուլթանը՝ հայերի բնաջնջման իր նողկալի ծրագրի իրագործման համար։ Այդ ցեղի ոչնչացման դաշնակցական ֆիդայիների սկսած կռիվների դիմաց թուրքական կառավարությունը սրի քաշեց հազարավոր անմեղ հայերի, լուրջ կորուստներ կրեց Սալմաստի արմենականների կազմակերպությունը։ Հայ ազատագրական շարժման պարտությունից հետո Խանասորի արշավանքը բացարձակապես ավանտյուրիստական քայլ էր։

Իսկ «Դրոշակ»-ը հպարտորեն գրում է. «Տեսոր Բաղեշում, ֆիդայիների արշավանքը Վասպուրականում, ջախջախված զինվորներ, սրախողխող քրդական ամբողջ ցեղեր, ավերված քրդական գյուղեր, դինամիտ Պոլսում, պայթյուն Բ. Դռան մեջ... Դարձյալ հայեր. ինչպե՞ս այսքան արհավիրքներից հետո դեռ հանդգնում են ձեռք բարձրացնել։ Չէ՞որ խեղդված էր նրանց ձայնը, մարած էին հույսերը, թուլացած արյունաքամ բազուկները»[99]։

Իրենց վարած ավանտյուրիստական, հայ ժողովրդի համար միանգամայն կորստաբեր քաղաքականությունը արդարացնելով, դաշնակցականները կշտամբում էին բոլոր ողջախոհ ու բանիմաց

94 «Դրոշակ» № 8, 1897։
95 «Դրոշակ» 8, 1897։
96 Նույն տեղում։

97 «Դրոշակ» № 11, 1897։
98 Նույն տեղում։
99 Նույն տեղում։

մարդկանց ու հոսանքներին, ովքեր նրանց մեղադրում էին բախտախնդրության ու հայ ժողովրդի գոյության հետ խաղ անելու հանցագործության մեջ։ «Թող կաշվից դուրս գան ապացուցանելու մեր ռումբերի վնասակարությունը,— գրում է «Դրոշակ»-ը,— մենք կշարունակենք ահ ու դողի մեջ պահել մեր թշնամիներին... Մեր անցյալի ապստամբությունները դատապարտում էին։ Ներկան արդարացրեց մեր անցյալը—այսօր թշնամին զգում է մեր ուժը»[100]։

Հնչակյան ու դաշնակցական կուսակցությունները, արտասահմանյան կազմակերպությունների պարագլուխները ստեմատահայ ժողովրդի ազատագրության պատրվակով ահագին գումարներ էին կորզում և մի քանի հայդուկային խմբերի միջոցով դաշնակցությունը կամենում էր ծունկի բերել թուրքական սուլթանին, ոչնչացնել նրա միապետությունը և ձեռք բերել «Ազատ» Հայաստան, մի քանի ռումբերի պայթեցումով, դավադրական ելույթներով նա կամենում էր իր կամքին ենթարկել տալ եվրոպական դիվանագետներին։

Ամփոփելով իրենց 6—7 տարվա կործանարար քաղաքականության արդյունքները, դաշնակցականները հարկադրված եղան ընդունելու, որ իրենք պարտված են. «Մենք պարտված էինք։ Բայց թշնամին ալ հաղթական չէր»[101],— գրում է Մ. Վարանդյանը։

Այս բոլորից հետո պարտված դաշնակցականները սուլթանի կառավարությանը հաշտության իրենց անխոհեմ պայմաններն էին թելադրում։ Հաշտության բանակցությունների համար թուրքական կառավարության կողմից Ժնև մեկնեց Արթին փաշա Տատյանը։ Անկասկած է, որ թուրքական կառավարությունը դաշնակցության հետ հաշտության իր բանակցություններով կամենում էր եվրոպական պրոգրեսիվ հասարակայնության ցասումը լռեցնել, իր քաղաքականության արյունոտ հետքերը ծածկել, ռճրագործության ամբողջ հանցանքը հայերի վրա բարդել և որ գլխավորն է՝ այդ բանակցությունների միջոցով վերջ տալ եվրոպական տերությունների կողմից Թուրքիայի դեմ Հայկական հարցի օգտագործման շարժառիթներին։

Դաշնակցությունը չհրաժարվեց սրի ու զենքի իր քաղաքականությունից։ Նա աշխատեց իր կամքը թելադրել թուրքական սուլթանին՝ առանց ընդունելու, որ ինքը պարտված էր։ «...Անոր բոլոր

100 «Դրոշակ» № 14, 1897։

101 Մ. Վարանդյան. Հ. Հ. Դաշնակցության պատմություն, հ. 1, էջ 40։

առաջարկությունները Ժնևի Բյուրոյին,— գրում է Մ. Վարանդյանը,— ծայրե ի ծայր ներշնչված կամ պարզապես թելադրված էին Համիդին»[102]։

Ժնևում արտաքին գործերի մինիստրի օգնական Արթին փաշա Տատյանի բանակցությունները գլուխ չեկան։ Դաշնակցությունը իրեն համարում էր հաղթող կողմ և հանդես էր գալիս ուղղակի թելադրողի դերում։ Տատյանը թողնում է Ժնևը։ 1897 թ. փետրվարին Ժնև է մեկնում Վաղինակ Աճեմյանը։ Բայց դրությունը ամենևին չփոխվեց։ Դաշնակցական բյուրոն նրան էլ մերժողական պատասխան տվեց։ 1897 թ. հոկտեմբերի 26-ին Պոլսից նորից Ժնև մեկնեց Տրդատ փաշա Տատյանը՝ թուրքական կառավարության հավաստիացումներով։ Դաշնակցական բյուրոն և 1898 թվականին կայացած դաշնակցականների երկրորդ համագումարը հավատ չընծայեցին սուլթանի կառավարության հավաստիացումներին[103] և որոշեցին ընդհատել բանակցությունները, եթե այդ կառավարությունը չընդուներ իրենց առաջադրած պայմանները։ Մինչև 1899 թ. մայիսը տևող բանակցությունները ավարտվեցին առանց որևէ դրական արդյունքի։

Անկասկած է, որ սուլթանի կառավարության հավաստիացումներին անվերապահորեն հավատ ընծայել չէր կարելի, որովհետև նա Բեռլինի կոնգրեսից հետո վճռել էր Հայկական հարցը «լուծել» հայերի ֆիզիկական բնաջնջման ճանապարհով։

Բայց դաշնակցականները չկարողացան կամ ուղղակի չկամեցան օգտագործել հարմար առիթը՝ բանակցությունների պրոցեդուրան սուլթանական կառավարությանը մերկացնելու, մարդկանց համոզելու համար, որ իրոք բանակցությունների առաջարկը այդ կառավարության կողմից հետապնդում էր նոր ռճիրներ կազմակերպելու հետին նպատակ։ Դաշնակցության երկրորդ համագումարը իր որոշումը ընդունեց առանց նշված հանգամանքները հաշվի առնելու։ Նրա այդ ոչ խելոք քաղաքականության ու գործելակերպի դեմ էր բողոքում «Ամբոխը»։ Դաշնակցության պարագլուխները բարորովին էլ հաշվի չառան ժողովրդական մասսաների բողոքն ու զայրույթը և նորից շարունակեցին իրենց վարած վնասակար ու կործանարար քաղաքականությունը։

102 Մ. Վարանդյան, Հ. Հ. Դաշնակցության պատմություն, հատ. 1, էջ 196։

103 Տե՛ս «Դրոշակ», № 4, 1899։

* * *

Հավատարիմ մնալով իրենց դավանանքին, դաշնակցականները չհրաժարվեցին եվրոպական դիվանագիտական հիմնարկությունների սին խոստումներին հավատալուց։ Նրանք չուզեցան հասկանալ, որ սուլթանական կառավարությունը չէր համարձակվի ոչնչացնելու 300 հազար հայ, եթե չլիներ եվրոպական մի քանի խոշոր տերությունների թողտվությունը, նրանց համաձայնությունը։ Նրանք չկամեցան ընդունել, որ եվրոպական իմպերիալիստական տերությունների դիվանագիտության ուղին Հայկական հարցի լուծման ուղին չէր կարող լինել։

1906 թվականին երևան եկավ դաշնակցության մի նոր օրգան՝ «Հառաջ» անունով։ Փոխանակ վերանայելու 1890-ական թվականների իր կուսակցության կործանարար քաղաքականությունը, շարունակեց պաշտպանել ու արդարացնել նրա վերցրած գիծը. «... Պարզ է,— գրում է «Յառաջ»-ը, որ եվրոպական միջամտություն առաջ բերելու համար, եթե մի կողմից անհրաժեշտ էր տառապող հայ երկրի բողոքը թեկուզ հուսահատական ճիչերով լսելի դարձնել մարդկությանը, նույնքան անհրաժեշտ էր եվրոպական հասարակական կարծիքը գիտակից պահել, հուզել, աղմկել և այսպիսով անդրադառնալ միջազգային քաղաքականության վրա հօգուտ հայկական գատի»[104]։

Դաշնակցության գաղափարախոս Մ. Վարանդյանը «Գորդյան հանգույց» վերնագրով իր հոդվածում խրախուսում էր իր կուսակցության ղեկավարների վերցրած քաղաքական կուրսը, և պահանջում էր շարունակել այն։ Նա գրում է. «Դաշնակցությունը գիտե, որ իրական միջամտություն հրավիրելու է գորդյան հանգույցը լուծելու համար՝ անհրաժեշտ են այլ կարգի ձեռնարկներ (իմա՝ հայդուկային նոր շարժումներ—Հ. Վ.)։ Եվ ահա փաստերը գալիս են ամրապնդելու այդ համոզումը»[105]։

Դաշնակցության հրապարակախոսը այս տողերը գրում է այն ժամանակ, երբ իր կուսակցության կողմից կազմակերպված հայդուկային ելույթները անասելի աղետների առիթներ հանդիսացան։ Նրա վկայությունները ապացուցում են, որ դաշնակցության տասնըհինգ տարվա «հեղափոխական» գործունեությունը ունեցել է բացառապես մի նպատակ՝ հրավիրել եվրոպական մեծ տերությունների ուշադրությունը, հարկադրել նրանց՝ ստանձնած պարտավորությունների համաձայն՝ ազատել հայերին սուլթանական թուրքիայի բռնություններից։

«Բեռլինի դաշնագիրը,— գրում է «Յառաջ»-ը,— հակառակ Սան-Ստեֆանոյի՝ Հայկական հարցը դարձրեց միջազգային։ Հայը չէ, որ կարող է այդ քաղաքական ակտը ժխտել, և նա ստիպված է իր հենակետն ընդունել 61-րդ հոդվածը»[106]։

Եվրոպական տերությունները ըստ իրենց ստանձնած պարտավորությունների, պարտավոր էին միջամտելու և պատժելու թուրքական սուլթանին 1890-ական թվականներին հայկական կոտորածների կազմակերպման համար։ Բայց նրանք մատը մատին չխփեցին և սուլթանին պատժելու փոխարեն, հաճախ քաջալերում էին նրան։ Եվ, հետևապես, նրանք չէին միջամտի նաև հետագայում, երբ նրանց միջև մահու և կենաց պայքար էր գնում աշխարհի նոր վերաբաժանման համար։ Այս հասկանալի էր բոլոր հայ պրոգրեսիվ խավերի, հասարակական ու քաղաքական գործիչների համար, անհասկանալի էր մնում դաշնակցական ռոմանտիկների ու դյուրահավատների համար։

«Շնորհիվ մի շարք հայ և օտար գործիչների և մասնավորապես «Pro Armenie» թերթի շուրջը խմբված ականավոր ֆրանսիացիների, հայկական հարցը եվրոպական կարծիքի համար դարձավ մի կիզիչ այժմէություն ունեցող և գերազանցորեն արդար գատ»[107] գրում է «Յառաջ»-ը։ «Pro Armenie»-ն իրոք, որ որոշ դեր խաղաց հասարակական կարծիքը Հայկական հարցի շուրջը կենտրոնացնելու ուղղությամբ։ Նա լույս էր տեսնում նաև Անգլիայում ու ԱՄՆ-ում, որի խաղաղ, դիվանագիտական ճանապարհով Հայկական հարցի լուծման քաղաքականության դեմ մեծ աղմուկ բարձրացրեց «Դաշնակցությունը» 1890-ական թվականներին՝ նրան և նրա նմաններին «ազգային դավաճանության» մեջ մեղադրելով։ Իսկ այժմ հարկադրված եղան ասելու իրենց դրական խոսքը նրա մասին։ Բայց ճշմարտությունը մնում էր անփոփոխ։ Եվրոպական հասարակական կարծիքը անզոր էր ազդելու իմպերիալիստական տերությունների պետական գործիչների արտաքին քաղաքականության վրա, մի քաղաքականություն, որը և միաժամանակ ազգերի ու ժո-

104 «Յառաջ» № 23, 1906։

105 «Յառաջ» № 53, 1906։

106 «Յառաջ» № 25, 1906։

107 «Յառաջ» № 22, 1906։

ղովուրդների ստրկացմանն էր ձգտում հանուն մի բուռն միլիարդատեր շահագործողների։

Լինելով եվրոպական դիվանագիտության ճանապարհով Հայկական հարցի լուծման ջերմեռանդ պաշտպանն ու պրոպագանդիստը, մեծ աշխատանք կատարելով Հայկական հարցի շուրջը հասարակական լայն կարծիք կազմակերպելու ուղղությամբ, Մինաս Չերազը, որը հակառուսական օրիենտացիա ուներ, 1890-ական թվականների հայկական կոտորածների ժամանակ հարկադրված եղավ ընդունելու, որ հայ ժողովրդի փրկությունը կախված է Ռուսաստանից։

Մինաս Չերազը հիասթափվեց եվրոպական դիվանագիտության սառնասրտությունից և սկսեց դատապարտել դաշնակցությանը իր քաղաքական մանկամտության ու սխալ գործունեության համար։ «Նա դաշնակցության անհաշտ թշնամին էր,— գրում է Շիրվանզադեն,— նա կրկնում էր. «Մեր մեծագույն աղետն այդ կուսակցությունը եղավ»[108]։

Բայց դաշնակցությունը համառորեն շարունակում էր կառչած մնալ եվրոպական դիվանագիտությանը և բոլորովին ուժ չունեցող հասարակական կարծիքի նախապատրաստման իր ռոմանտիզմին։ «...Հայկական հարցը,— գրում է «Յառաջ»-ը, որպես արևելյան կնճռոտ հարցի մի մասը, չէր կարող լուծվել առանց եվրոպական մեծ պետությունների ակտիվ, իրական միջամտության, ինչպես և չէր լուծվել Բալկանյան մանր ազգերի բախտը առանց նույն միջամտության»[109]։

Եվրոպայում կազմակերպված «Pro Armenie» թերթի շուրջը համախմբված հրապարակախոսների՝ լսողներին արդեն ձանձրույթ պատճառող աղմուկը մի կողմից, Ամերիկայում Ռուզվելթի նախագահ ընտրվելու կապակցությամբ ծավալված կամպանիան՝ մյուս կողմից, դաշնակցականները համարեցին բարենպաստ մոմենտ Հայկական հարցի համար։ Այդ կապակցությամբ «Յառաջ»-ը ոգևորված տոնով գրում է. «Այսպես է ստեղծվել հայկական դատին այնքան նպաստավոր մթնոլորտը Եվրոպայում, և այս կարգի աշխատանքի արդյունքն է նաև Ամերիկայում սկսված հայանպաստ

108 Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 8, Հայպետհրատ, 1951, էջ 297։

109 «Յառաջ» № 23, 1906։

շարժումը ինչպես և Ռուզվելտի միջամտության հավանականությունը»[110]։

Դաշնակցությունը, գրում է Ա. Ամիրյանը, «Իր համազգային իդեալների և ազատ Հայաստանի քարոզներով բթացնում էր բանվորի դասակարգային գիտակցությունը և ետ էր պահում նրան դասակարգային կռվից»[111]։

Այնուհետև, գրում է Ամիրյանը, դաշնակցությունը չարաշահում էր տաճկահայերի խնդիրը իր բուրժուական նպատակի և Ռուսաստանում ու Կովկասում սաճող հեղափոխությունների դեմ կռվելու համար[112]։

Այո՛, «որքան շատ դիակներ, այնքան շուտ ազատություն» իրենց կործանարար լոզունգով, դաշնակցականները կովկասահայ ժողովրդի վզին էին փաթաթում արևմտահայ ժողովրդի ազատագրության հարցը և դրանով կամենում էին շեղել արևելահայ ժողովրդի ուշադրությունը Ռուսաստանի սահմաններում մղվող հեղափոխական պայքարից «հանուն հայերի ազատագրության»[113]։ Նրանք իրենց բուրժուա-ազգայնական քաղաքականությամբ «մի քանի տարով կասեցրին հեղափոխական շարժման զարգացումը կովկասահայերի մեջ»[114]։

Այսպիսով, արևմտահայերի ազատագրության հարցում դաշնակցության դիրքորոշման վերաբերյալ բերված բազմաթիվ փաստերը հնարավորություն են տալիս անելու մի քանի հետևություններ.

1. Դաշնակցությունը բարյացակամորեն էր տրամադրված արևմտահայերի ազատագրության նկատմամբ։ Սակայն նրա վարած քաղաքականությունը ու գործելակերպը սխալ էին ու վնասակար։ Անցած դարի վերջին և ընթացիկ դարի սկզբին արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները պարտություն էին կրել։ Դաշնակցությունը ոչ մի հետևություն չարեց և նորից շարունակեց իր նախկին գործունեությունը։ Նշված ժամանակաշրջանում, հեղափոխական սոցիալ-դեմոկրատների ղեկավարությամբ Ռուսաստա-

110 «Յառաջ» № 23, 1906։

111 Մրավյան (Ա. Ամիրյան), «Դաշնակցության կրիզիսը», Վիեննա, 1907, էջ 17։

112 Նույն տեղում, էջ 36։

113 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 1, էջ 182։

114 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 1, էջ 284։

նում և Անդրկովկասում լայն ծավալ էին ստացել բանվորների ու գյուղացիների հեղափոխական շարժումները, որոնք ուղղված էին դարավոր ինքնակալության ու բուրժուազիայի դեմ։ Դաշնակցությունը օգտագործեց արևմտահայերի ազատագրության հարցը սոցիալիզմի ու սոցիալ-դեմոկրատների դեմ պայքարելու, հայ աշխատավորական մասսաներին բուրժուական նացիոնալիզմով վարակելու, հեղափոխական շարժումներից մեկուսացնելու համար։ «Պայքարելով կովկասյան սոցիալ-դեմոկրատների դեմ,— գրում է Ստ. Շահումյանը,— «Դաշնակցությունը» պայքարում է ոչ միայն սոցիալիզմի դեմ, ոչ միայն բանվոր դասակարգի դեմ։ Պայքարելով Կովկասի ոչ միայն սոցիալիստական, այլև միակ դեմոկրատական կուսակցության դեմ, նա պայքարում է կովկասյան ժողովուրդների ազատության, նրանց պրոգրեսի դեմ և ծառայում է ռեակցիայի շահերին»[115]։

2. Արևմտահայերի ազատագրության մասին իր երկար աղմկարարություններից հետո Դաշնակցությունը սկսեց համագործակցել երիտասարդ թուրքերի հետ, որի կործանարար հետևանքները հայտնի են բոլորին։ Ավելին, 1918—1920 թվականներին հասնելով քաղաքական իշխանության, նա սկսեց պրոպագանդել այն մասին, թե Թուրքիան է Անդրկովկասի ժողովուրդների և այդ թվում հայ ժողովրդի դարավոր բարեկամն ու ազատարարը, հրաժարվեց արևմտահայերի ինքնավարության պահանջից, թուրքական ջարդարարների կողմից հայերի մասսայական կոտորածների հանցանքը բարդեց հայերի վրա, նրանց «անուղղելի ռուսասիրության» համար։ Այս բոլորը ասում են այն մասին, որ արևմտահայերի ազատագրության հարցում դաշնակցությունը անկեղծ չէր։

3. Հայկական հարցի լուծման կամ արևմտահայ ժողովրդի ազատագրության դաշնակցության նախընտրած եվրոպական դիվանագիտության ուղին հայ ժողովրդին մղում էր կործանման եզրը։ Ինչո՞ւ, «Որովհետև,— պատասխանում է Ալ. Մյասնիկյանը,— նա չէր գնում իսկական ուղղությամբ։ Իսկ ուղղությունն անսխալ ընտրելու համար ճանապարհորդը զինված պետք է լինի իրական կյանքից բխած օրենքների ընդունումով։ Պատմությունը այնպես է սարքել, որ դրան ընդունակ է բուրժուական հասարակության դասակարգերից միայն մեկը՝ պրոլետարիատը... «Հայկական հարցի» կամ գաղթականության խնդրի մինչ այժմյան լուծումը եղել է

115 Նույն տեղում, էջ 291։

բուրժուական՝ անիրական, սխալ ու կորստաբեր, որովհետև նրան լծված են եղել ժամանակի հետադիմական դասակարգը և հակահեղափոխական կուսակցությունը՝ հայ բուրժուազիան և դաշնակցությունը։ Հայ աշխատավորությունը սրանց համար եղել է միայն հում նյութ, գործիք և ոչ թե գործող, առաջ ընթացող ուժ, մինչդեռ շարժման կորիզը կազմելու էր նա, քանի որ «Դատը» նրա գործն էր, նրա բախտի հետ էր կապված։ Արդեն Հասունացած հայ բանվորը և նրա հետ միասին հայ գյուղացին Հայաստանում խլել են հայ բուրժուազիայի ձեռքից «դատի» մենաշնորհը, փշրել են նրան և «դատը» լուծել են[116]։

Պատմությունը ցույց տվեց, որ բուրժուական դիվանագիտության ուղին Հայկական հարցի լուծման ուղին չէր ու չէր կարող լինել։ Պատմությունը ապացուցեց, որ հայ ժողովրդի փրկության և Հայկական հարցի արմատական ու վերջնական լուծման ուղին անցնում է Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակի ու նրա հետևանքով Հայաստանում հաստատված սովետական կարգերի միջոցով։ Ուրիշ ճանապարհ չկար։ Բայց երկրից վտարված դաշնակցական բեկորները այսօր էլ անհաշտ են մնում Հայաստանում հաստատված սովետական կարգերի նկատմամբ, ահաբեկման են ենթարկում պրոգրեսիվ խավերին, որոնք պաշտպանում են Սովետական Հայաստանը և այն դիտում են որպես ամբողջ աշխատավոր հայության ազատագրության հույսն ու ապավենը[117]։

116 Ալ. Մյասնիկյան, Կուսակցությունները գաղութահայության մեջ, էջ 57։

117 Ողջունելի է ժամանակակից հնչակյանների ու ռամկավարների վարքագիծը, որոնք ակտիվ պայքար են մղում դաշնակցության դեմ, պրոպագանդում են Սովետական Հայաստանի նվաճումները, սփյուռքահայությանը կապում են իրենց հարազատ հայրենիքի հետ, օգնում են ներգաղթի կազմակերպմանը և ընթանում են պրոգրեսիվ ուժերի հետ պատերազմների իմպերիալիստական հրձիգների դեմ նրանց մղած պայքարում։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄԱՐՔՍԻՍՏՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Արևմտահայերի ազատագրության հարցի նկատմամբ հայ հեղափոխական մարքսիստները անտարբեր լինել չէին կարող։ Ֆեոդալիզմի-աբսոլյուտիզմի դեմ ուղղված ազգային-ազատագրական շարժումների հիմնական բովանդակությունը համարելով բուրժուա-դեմոկրատական հայ հեղափոխական մարքսիստները Թուրքական բռնապետական կարգերի դեմ ուղղված արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումները համարում էին առաջադիմական ու բարոյապես օգնում նրան։

Սակայն հայ հեղափոխական մարքսիստները արևմտահայերին հասկացնում էին, որ ազգայնական կուսակցությունների ռոմանտիկ քաղաքականությունը, սխալ գործելակերպը ցանկալի արդյունքների հասցնել չէին կարող։ Նրանք իրավացի կերպով արևմտահայերի ազատագրությունը կամ Հայկական հարցի լուծումը կապում էին Ռուսաստանում հասունացող դեմոկրատական հեղափոխության հաղթանակի հետ։

Ընթացիկ դարի վերջում կապիտալիզմը թևակոխեց իր զարգացման նոր՝ իմպերիալիզմի ու պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանը։ Հեղափոխության շարժման կենտրոնը Եվրոպայից տեղափոխվել էր դեպի նրա արևելքը, դեպի Ռուսաստանը։ Ռուսաստանում ծավալված հեղափոխական շարժումները համաշխարհային նշանակություն ունեին։ Ռուսաստանը դառնում էր հեղափոխական շարժումների կենտրոնը։

Ռուսաստանի պրոլետարիատի հեղափոխականությունը օրինակ էր դառնում Արևմտյան Եվրոպայի համար, ռուսական հեղափոխությունը ազդակ էր դառնում համաշխարհային հեղափոխական շարժման աճման ու զարգացման համար։

Ղեկավարվելով մարքսիզմի հեղափոխության տեսությամբ, պրոլետարական ինտերնացիոնալիզմի և բոլոր աշխատավոր ժողովուրդների բարեկամության սկզբունքներով, հայ հեղափոխական մարքսիստները ցուցաբերեցին իրենց ուրույն վերաբերմունքը արևմտահայերի ազատագրության կամ Հայկական հարցի նկատմամբ։ Նրանք այդ հարցը սերտորեն լծորդում էին ռուսական հեղափոխության հաղթանակի հետ և վճռականորեն մերժում էին ազգայնական կուսակցությունների վարած սխալ քաղաքականությունն ու գործելակերպը, եվրոպական տերությունների միջամտությամբ Հայկական հարցի լուծման հնարավորության մասին ունեցած պատրանքները։

Հայ հեղափոխական մարքսիստները հաշվի էին առնում, որ 1880—1890-ական թվականներից եվրոպական տերությունները բաժանված էին երկու թշնամական լագերների, տենդորեն պատրաստվում էին նոր, ահեղ պատերազմի՝ աշխարհի նոր վերաբաժանման, պրոլետարական և ազգային-ազատագրական շարժումները ճնշելու, բանվոր դասակարգի ավանգարդը հանդիսացող հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները ոչընչացնելու նպատակով։ Հասկանալի է, որ այդ տերությունները երբեք չէին հանդուրժի հայերի ինքնավար գոյությունը։

Միանգամայն իրավացի է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը հնչակյանների ու դաշնակցության դեմ հարուցած իր մեղադրանքներում։ «Այդ կուսակցությունները չհասկացան, որ ազգային հարցի լուծումը հնարավոր է ոչ թե գաղութակալական շահախնդրությունների հետամուտ պետական քաղաքականության, այլ գաղութակալության դեմ ուղղված համաժողովրդական շարժումների միջոցով»[1]։

Սուլթանական Թուրքիայում համաժողովրդական միասնական ճակատ ստեղծելու պայմաններ չկային և, հետևապես «նման իրադրությունը վիժեցման էր դատապարտում Թուրք և քուրդ գործիչների հետ համագործակցություն ունենալու փորձերը»[2]։ Մեկնելով այդ միանգամայն ճիշտ տեսակետից, ակադեմիկոս Աշոտ Հովհան-

---

1 Ա. Հովհաննիսյան, *Միքայել Նալբանդյանի և ռուս հեղափոխական-դեմոկրատների գաղափարական ընդհանրություններն ու քաղաքական կապերը (տե՛ս «Գրական թերթ», № 16 (1324), 15 ապրիլի, 1966)։*

2 Ա. Հովհաննիսյան, *նշված աշխատությունը։*

նիսյանը նշավակում է դաշնակցությունը՝ 1908 թվականին Երիտասարդ Թուրքերի հետ համագործակցելու համար։

Հայ ազգայնական կուսակցությունները մինչև վերջ չհաշտվեցին հայ հեղափոխական մարքսիստների այն տեսակետի հետ, որ հայ ժողովրդի ազատագրության միակ ուղին կարող էր լինել և իրոք եղավ ռուսական հաղթական հեղափոխությունը։ Նրանք չկամեցան ընդունել, որ իրենց իմպերիալիստական կողմնորոշման և ազգային մեկուսացման քաղաքականությունը արևմտահայերի ազգային-ազատագրական շարժման անհաջողությունների գլխավոր պատճառներից մեկն էր։ «Եթե արևմտահայ շարժման պարտության պատճառը իմպերիալիստական կողմնորոշումն ու ազգային մեկուսացումը եղավ,— գրում է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը,— ապա արևելահայերի ազգային-ազատագրական շարժման հաղթանակի նախապայման դարձավ հեղափոխական դեմոկրատների օրերից ի վեր ցարիզմի դեմ պայքարող Ռուսաստանի և Անդրկովկասի ժողովուրդների հեղափոխական մարտակցությունը[3]։

Ազգայնական կուսակցությունները իրենց անցյալի սխալ գործելակերպից ու քաղաքականությունից ոչ մի հետևություններ չանելով հանդերձ, հայ հեղափոխական մարքսիստներին կշտամբում էին դեպի Հայկական հարցը կամ դեպի արևմտահայերի ազատագրությունը անտարբեր լինելու համար։ Այդ կշտամբանքներին տեղիք տվեց սպեցիֆիկների պարագլուխներից Բ. Իշխանյանի այն հայտարարությունը, թե սոցիալ-դեմոկրատիան «չունի մի առանձին վերաբերմունք դեպի այդ հարցը»[4] (իմա՝ դեպի Հայկական հարցը —Հ. Վ.)։

Բ. Իշխանյանը մարքսիզմի ու հեղափոխական սոցիալ-դեմոկրատների հետ ոչ մի առնչություն չուներ, բայց անբարտավանորեն հաճախ հանդես էր գալիս մարքսիզմի ու սոցիալ-դեմոկրատների անունից։ Նա բացասում էր 1870—1890-ական թվականների արևմտահայերի ազգային-ազատագրական շարժման պրոգրեսիվ նշանակությունը, դատապարտում էր ազատագրական պայքարի գաղափարախոսությունը ու կշտամբում էր բոլոր այն հոսանքներին, հասարակական-քաղաքական գործիչներին, ովքեր կանգնած էին ռուսական օրիենտացիայի դիրքերում և արևմտահայ ժողովրդի փրկության հույսը կապում էին Ռուսաստանի օգնության հետ։

3 Նույն տեղում։

4 «Երկրի ձայն», № 26, 1907։

Քննադատելով ու մերկացնելով հայ ազգայնականների «ազգասիրության» շահադիտականությունը, անարգանքի սյունին գամելով սպեցիֆիկներին, որոնք չարաշահում էին մարքսիզմի անունը և հայտարարում, թե սոցիալ-դեմոկրատիան առանձին վերաբերմունք չունի դեպի Հայկական հարցը, հայ հեղափոխական մարքսիստներն ապացուցում էին, որ իրենք մեծ համակրանք են տածում Թուրքական բռնապետության դեմ պայքարող հայ ժողովրդի նկատմամբ։ Նրանք արևմտահայությանը համոզում էին, որ նրա ազատագրությունը անհնարին է, առանց ցարիզմի ու սուլթանիզմի կործանման, առանց ռուսական հեղափոխության հաղթանակի։

1903 թվականին Կովկասյան սոցիալ-դեմոկրատների օրգան «Պրոլետարիատի կռիվ» թերթը գրում է. «Մենք բացարձակ կերպով հայտարարում ենք մեր համակրությունը բազմաշարչար տաճկահայ ժողովրդի ազատարար գործին և մեր անկեղծ ցանկությունն է, որ այդ ազատագրությունը հասնի որքան կարելի է շուտ»[5]։

Սա մի ուժգին ապտակ էր հայ ազգայնականներին, որոնք զրպարտում էին մարքսիստներին։ Հեղափոխական մարքսիստները հայ ազգայնականներին քննադատում ու մերկացնում էին ոչ միայն նրանց դաղափարախոսության, կազմակերպական սեպարատիզմի, այլև հայդուկային անիմաստ և կործանարար գործողությունների համար։

Ազատագրական շարժման գլուխն անցած հայ ազգայնականները, Ռուսաստանում աճող ու զարգացող հեղափոխական պայքարից հայերին մեկուսացնելու իրենց դիտավորություններով, կամենում էին այդ շարժումը վերածել ազգային ավանտյուրայի և այն դարձնել» հայ ազգային ռեակցիայի ռեզերվը»[6]։

Հեղափոխական մարքսիստները հետևողականորեն ղեկավարվում էին Հ. Աթաբեկյանի նամակին Ֆ. Էնգելսի գրած հակիրճ պատասխանով, որի մեջ փայլուն հստակությամբ նշված է հայ ժողովրդի ազատագրության նախադրյալը։

Խոսելով հայ ժողովրդի սոցիալական ու ազգային ազատագրության մասին, Էնգելսը գրում է. «... Իմ անհատական անկեղծ կարծիքը այն է, որ Հայաստանի ազատագրությունը տաճիկների (իմա՝ սուլթանիզմի — Հ. Վ.) և ռուսների (իմա՝ ցարիզմի — Հ. Վ.)

5 «Պրոլետարիատի կռիվը» № 2—3, 1903։

6 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 1, էջ 290։

հեռքից կարող է տեղի ունենալ միմիայն ռուսական ցարիզմի կործանման օրը»[7]։

Դաշնակցականները հեղափոխական մարքսիստներին մեղադրում էին այն բանում, որ իբրև թե նրանք «ազգություն չեն ճանաչում» հայ ազգի մասին չեն ուզում մտածել, թե հայ ժողովրդի մեծ ցավերը նրանց սրտին օտար են»[8]։

Ստ. Շահումյանը այդ բոլորը համարում է ստոր զրպարտություն հեղափոխական մարքսիստների հասցեին և նշավակելով հայ ազգայնականներին, գրում է, որ մարքսիստները իրոք «հակառակ են եղել դաշնակցականների, հնչակյանների ազգային քաղաքականության», որ այդ կուսակցությունները հայ ժողովրդի համար եղել են «կույր առաջնորդներ», որ նրանց քաղաքականությունը հայ ազգի համար բերեց «միմիայն դժբախտություն, կոտորածներ ու ավերումներ», որ այդ կուսակցությունները իրենց քաղաքականությամբ հող էին պատրաստում «Սուլթանի ու Նիկոլայ Ռոմանովի դժոխային ծրագիրները իրականացնելու համար»[9]։

Հեղափոխական մարքսիստները հանդես էին գալիս որպես իսկական հայրենասերներ։ Նրանց հայրենասիրությունը ներտորեն միահյուսվում էր պրոլետարական ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների բարեկամության մեծ սկզբունքների հետ։ Իսկական հայրենասիրությունը աշխատավորական մասսաների սոցիալական և ազգային ազատագրությանը ազնվորեն ծառայելու մեջ է արտահայտվում։ Դրա համար էլ, գրում է Ստ. Շահումյանը, «մենք սոցիալ-դեմոկրատներս, հակառակ էինք դաշնակցականների ազգային քաղաքականության։ Մեզ համար առաջուց պարզ էր, թե ինչ կոնստաբեր հետևանքներ կունենա այդ քաղաքականությունը։ Եվ երբ մենք հանդես էինք գալիս մեր անհաշտ քննադատությամբ հայկական ազգային կուսակցությունների դեմ, նրանք հավատացնում էին հայ մասսաներին, թե մենք, սոցիալ-դեմոկրատներս, հայ ազգի թշնամիներ ենք»[10]։

Բացահայտելով հայ հեղափոխական մարքսիստների և ազգայնական կուսակցությունների միջև եղած սկզբունքային տարաձայնությունները, Ստ. Շահումյանը վկայակոչում է Էնգելսի նամակում

7 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Սոչինենիյա, տոմ XXIX. էջ 341։

8 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 2, էջ 407։

9 Նույն տեղում, էջ 407—408։

10 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 2, էջ 410։

եղած նախազգուշացումը։ «Հայ ժողովուրդը,— գրում է նա,—բախտի բերմունքով ապրում էր երկու հրեշավոր բռնակալների՝ արյունոտ ցարի և կարմիր սուլթանի իշխանության տակ։ Նա շրջապատված էր իրենից էլ ավելի հետամնաց, դժբախտ տաճիկ և քուրդ ժողովուրդներով՝ Տաճկաստանում և թուրք ու վրացի ժողովուրդներով՝ Ռուսաստանում։ Հարկավոր էր խելոք և հեռատես քաղաքականությամբ ձգտել որքան կարելի է համերաշխ ապրել հարևանների հետ։ Հարկավոր էր այնպես ղեկավարել քաղաքականության նավը, որ նա չջախջախվի «տաճիկ բռնակալության Սցիլլայի և ռուսական ցարիզմի Խարիբդայի» արանքում, ինչպես խորհուրդ էր տալիս հայերին 22 տարի սրանից առաջ եվրոպացի սոցիալ-դեմոկրատ Ֆրիդրիխ Էնգելսը»[11]։

Հայ ազգայնական կուսակցությունների վարած քաղաքականության կորստաբերության խիստ քննադատությամբ հանդես եկավ նաև Արսեն Ամիրյանը։ Անկեղծորեն հակվելով դեպի արևմտահայ ժողովրդի ազատագրությունը թուրքական բռնակալությունից, Ամիրյանը խարազանում է դաշնակցականներին, մշակականներին ու հնչակյաններին, որոնք շեղում էին հայ ժողովրդին, անտեսում էին այդ ժողովրդի ազատագրության միակ հնարավոր ուղին, ցարիզմի կործանման և հեղափոխության հաղթանակի ուղին։

Արևմտահայ ժողովրդի ազատագրության համար իրենց կյանքն են նվիրել հայ ժողովրդի շատ անձնուրաց զավակներ։ Նրանք այդ գործին նվիրված են եղել միանգամայն մաքուր սրտով ու անշահախնդիր կերպով։ Այդպիսիներից էր Անդրանիկը։ Ամիրյանը ցույց է տալիս, որ Անդրանիկի մեջ արտահայտվում է իր ազատության համար պայքարող ժողովրդի մաքուր ազգասիրությունը, բայց նա նաև էր, չէր տեսնում հրապարակի վրա գործող քաղաքական կուսակցությունների դիտավորությունները և պահանջում էր նրանց համատեղ գործողություն՝ «ազգի ազատագրության համար»։ Ամիրյանը բերում է Անդրանիկի հետևյալ խոսքերը. «Հայը փոխանակ զանազան բաժանումներու ենթարկվելու այս ու այն ընկերային (այսինքն՝ սոցիալիստական) փիլիսոփայություններուն, մեկ նշանաբան մը պետք է գրե իր դրոշակի վրա — հանուն հայրենիքի փրկության վազել, սեղմվել այս դրոշակին տակ — բավարարություն տանք այսօրվան հայրենիքի պահանջին»։

Ամիրյանը իրավացիորեն Անդրանիկին զատում է դաշնակցու-

11 Նույն տեղում, էջ 408։

թյունից։ «Այսպես է խոսում Անդրանիկը,— գրում է նա,— իր հայրենիքի ազատության համար պայքարող մի պարզ մարտիկ, խոսում է, բայց և նրա այդ անկեղծության առաջ մենք կարող ենք միայն խոնարհվել։ Մենք կարող ենք վիճել նրա դեմ, մենք կարող ենք «հայրենիքի փրկությունը» այլ կերպ հասկանալ, քան հասկանում է Անդրանիկը, բայց պետք է խոստովանենք, որ մենք գործ ունենք մի որոշ գաղափարի, մի որոշ համոզմունքի հետ և որ այդ գաղափարի, այդ համոզմունքի արտահայտիչները չեն դիմում կեղծիքի ու խաբեության»[12]։

Անդրանիկի մոտ «հայրենիքի փրկություն» հասկացողությունը արտահայտում էր հուսահատության եզրին հասած հայ ժողովրդի ազնիվ ձգտումը։ Դրա համար էլ Ամիրյանը Անդրանիկին հասկացնում է, որ հայ ազգայնականները ժողովրդի այդ ազնիվ և վսեմ գաղափարին մոտենում են ոչ ազնիվ ու մաքուր խղճով։ Հայ ազգայնականները արևմտահայությանը կերակրում են եվրոպական դիվանագիտության միջամտության սին խոստումներով, բայց, ասում է Ամիրյանը, այդ դիվանագիտությունը հայ ժողովրդին ազատություն տալ չի կարող և չի ցանկանա, որ, հետևապես, հայ ժողովրդի ազատագրության միակ նախադրյալը Ռուսաստանում ծավալված հեղափոխության հաղթանակն է։

«Տաճկահայաստանի ազատագրումը,— գրում է Ամիրյանը,— պետք է ձեռք բերվի ոչ այնքան Սասունի բանաստեղծական և գեղատեսիլ լեռների վրա, որքան Պետերբուրգի և Թիֆլիսի պրոզայիկ փողոցների վրա»[13]։

Բոլոր ստրկացված ժողովուրդների բախտը, բացատրում է Ամիրյանը Անդրանիկին,— կժպտա միայն Ռուսաստանի հաղթական հեղափոխության հետևանքով։ Նախազգուշացնելով արևմտահայերին կովկասահայ բուրժուազիայի նենգ ու շահադիտական դիտավորություններից, Ամիրյանը գրում է. «... Եթե դուք ձգտում եք ազատության, ապա կտրեցեք ձեր կապը հավիտենապես դավաճան բուրժուազիայի հետ, կտրեցեք ձեր կապը... ժողովրդի բոլոր թշնամիների հետ և միացած Ռուսաստանի մեծ հեղափոխության դռռ հորձանքների մեջ, այնտեղ կգտնեք դուք ազատությունը ձեր դրժբախտ երկրի»[14]։

12 Մրավյան, Դաշնակցության կրիզիսը, էջ 32—33։

13 Նույն տեղում, էջ 39։

14 Նույն տեղում, էջ 49։

Ելնելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի անխախտ սկզբունքներից, բոլոր ազգերի ու ժողովուրդների ազատագրության, նրանց եղբայրության ու փոխադարձ համագործակցությամբ, ռուսական ու թուրքական բռնապետական կարգերի խորտակման անխուսափելիության սկզբունքներից, Ամիրյանը արևմտահայությանը կոչում է. «Ելեք փշրելու բռնապետական այն հսկա սպանդանոցը, որի անունն է ցարիզմ»։

Այնտեղ համաշխարհային բռնակալների ոսկեզօծ պալատներում դարբնվում են շղթաները բոլոր ազգերի աշխատավորների համար։

Ելեք փշրելու համաշխարհային այն մեծ Բաստիլիան, ուր կաշկանդված է բախտն ու ազատությունը բոլոր երկրների ստրուկ ժողովուրդների։

Իսկ եթե կգա այն օր, երբ ապստամբությունը Սասունի լեռներում կթելադրվի տաճկահայ ժողովրդի և ոչ կովկասահայ բուրժուազիայի շահերից, երբ կարիք կլինի թողնել Կովկասը՝ տաճկահայերի ազատագրմանը նվիրվելու համար, ապա այդ դեպքում գիտցած եղեք, որ մենք աշխատավորներս կլինենք առաջինը, որ մի կողմ կդնենք մուրճն ու սալը և մի նոր խաչակրաց արշավանք կսկսենք դեպի Տաճկաստանը—աշխատավորական կոշտ և ուժեղ ձեռքը մեկնելու՝ կարմիր սուլթանի ստրուկ ժողովուրդներին։ Եվ մեր շարքերում, մենք համոզված ենք, կլինեն աշխատավորներ բոլոր ազգերի։

Մենք գնում ենք ուղիղ և անսայթաք ճանապարհով, այն ճանապարհով, որը մենք ինքներս ենք հարթել, այն ճանապարհով, որ տանում է դեպի ազատություն...»[15]։

Տաճկահայ դատը հայ բուրժուազիայի ձեռքին դարձավ գործիք աշխատավոր մասսաների հեղափոխական ըմբոստ ոգին ընկճելու, ցարիզմի կործանման ուղղությամբ եղած հեղափոխական ամեն մի քայլ կանխելու համար։ Դրանից ելնելով «բուրժուազիան,— գրում է Ամիրյանը,— դավադրություն է նյութում սոցիալիզմի և հեղափոխության դեմ։ Դա դավադրություն է համայն Ռուսաստանի աշխատավոր ժողովրդի ազատության դեմ։ Դա դավադրություն է և տաճկահայ ժողովրդի դեմ։ Դա դավադրություն է այն բոլորի դեմ, որոնց «Մշակը» այնքան՝ լկտիորեն «քիսաչիներ և քաչալներ»

15 Մրավյան. Դաշնակցության կրիզիսը, էջ 49։

անունն է տալիս։ Դա դավադրություն է բոլոր աշխատավորների դեմ, որոնք արդեն սկսել են գիտակցության գալ...»[16]։

Հեղափոխական մարքսիստներն ընդունում էին սուլթանական բռնապետության դեմ արևմտահայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի արդարացիությունն ու անխուսափելիությունը։ Նրանք հասկանում էին, որ հայերի ազատագրական հակումները ոչ մի հիմք չէին տալիս նրանց ոչնչացման ասիմիլացման ու գաղթեցման համար։

Բայց հեղափոխական մարքսիստները միաժամանակ պնդում էին, որ հայդուկային գործողությունների և դավադրությունների ճանապարհով եվրոպական դիվանագիտության միջամտությունը արագացնելու տակտիկան կարող էր ունենալ կործանարար հետևանքներ հայ ժողովրդի համար։

Դատապարտելով հայ ազգայնական կուսակցություններին՝ նրանց կորստաբեր քաղաքականության համար, հեղափոխական մարքսիստները հայ ժողովրդին ներգրավում էին ցարիզմի դեմ ծավալված հեղափոխական պայքարի ընդհանուր հորձանքում և ցարիզմի կործանումը դիտում էին որպես բոլոր ճնշված ժողովուրդների և այդ թվում՝ հայ ժողովրդի ազատագրության նախադրյալ։

1914 թ. ապրիլի 30-ին «Հայ գրականության գալիք օրը» թեմայով Թիֆլիսում կարդացած իր դասախոսության մեջ Վահան Տերյանը նշում է, որ «Ռուսիայի ապագան ինձ համար աներկբայելի է։ Եվ կապելով իմ լավագույն հույսերը առաջավոր ռուս դեմոկրատիայի հույսերին և իմ բաղձանքները նրա բաղձանքների հետ, ես չեմ տարակուսում որ չեմ հիասթափվելու»[17]։

Արևմտահայ ժողովրդի ազատագրության հարցը կապելով ռուսական հեղափոխության հաղթանակի հետ, Տերյանը ասում է. «Մենք, հայերս, սոցիալ-դեմոկրատներս (բոլշևիկներս) հաստատ գիտենք, որ միայն պրոլետարական-գյուղացիական հեղափոխության և բանվորների ու չքավոր գյուղացիների կառավարության ստեղծումը կարող է ազատություն բերել մեր արտասահմանյան եղբայրներին, Թուրքահայերին և բուժել նրանց խոր վերքերը։ Մենք այդ միշտ ցույց ենք տվել բանվոր և գյուղացի հայ մասսաներին։ Մենք միշտ նրանց մեջ ցրում ենք այն պատրանքները, որ պատվաստում էին մանր բուրժուական և բուրժուական կուսակցությունները... Եվրոպայի իմպերիալիստական դիվանագիտության վերաբերյալ»[18]։

Այսպիսով, հեղափոխական մարքսիստները արևմտահայ ժողովրդի ազատագրության նկատմամբ սառնասիրտ լինել չէին կարող։ Ավելին, 1914 թ. փետրվարի 1-ին, «Путь Правды»-ում Հայկական հարցի մասին կարդում ենք. «Պրոլետարիատը բազմիցս իր բողոքն է արտահայտել Թուրքիայում տեղի ունեցող գազանությունների դեմ։ Առաջավոր բանվորները գիտակցում են և գտնում անհրաժեշտ՝ Թուրքահայերի դրությունը փոխել Թուրքիայում տիրող հին կարգերի լիակատար վերափոխման միջոցով։ Դրա հետ միասին մարքսիստները հայտարարում են, որ Թուրքահայաստանի բախտի որոշման մեջ գլխավոր դերը կարող է և պետք է պատկանի իրենց՝ Թուրքահայերին»[19]։

Արևմտահայ ժողովրդի ազատագրության հարցում, անկասկած, ուշագրավ է Հովսեփ Աթաբեկյանի այն նամակը, որ նա գրել է Ֆ. Էնգելսին՝ «Կոմունիստական մանիֆեստ»-ի հայերեն թարգմանության համար առաջաբան գրելու կապակցությամբ։

Հ. Աթաբեկյանի այդ նամակը հայ ընթերցողներին հանձնվեց 1959 թ. «Պատմա-բանասիրական հանդեսի» № 2—3-ում։ Այդ նույն համարներում զետեղված է տնտեսագետ Արտո Եղիազարյանի «Հովսեփ Աթաբեկյան» և ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի «Письмо Иосифа Атабекяна Ф. Энгельсу по поводу перевода на армянской язык Коммунистического Манифеста» խորագրերով հոդվածները։

Խոսելով Աթաբեկյանի ու նրա նամակի մասին, մենք բնավ չենք բաժանում Ա. Եղիազարյանի կարծիքը։ Հոդվածի հեղինակը շատ է գերագնահատում Հ. Աթաբեկյանի դերը, որը ոչ մի անհրաժեշտություն չի ներկայացնում։ Նա Աթաբեկյանին համարում է «ինքնուրույն թվականների հայ մարքսիստներից մեկը»[20], որը չի համապատասխանում իրականության։

Անվիճելի է, որ Աթաբեկյանը, որպես ժամանակի առաջավոր մտածողներից ու քաղաքական գործիչներից մեկը, իր վրա կրել է մարքսիզմի ազդեցությունը, բայց նա մարքսիստ չի եղել։ Կարճ ժամանակամիջոցում նա հրաժարվեց սոցիալիզմից։ Հետևապես, ոչ

16 Մրավյան, Դաշնակցության կրիզիսը, էջ 48—49։

17 Վ. Տերյան, Երկեր, հատ. 4, Երևան, 1925, էջ 324։

18 Վ. Տերյան, Երկեր, հատ. 4, Երևան, 1925, էջ 324։

19 Նույն տեղում։

20 «Պատմա-բանասիրական հանդես», № 2—3, էջ 205, 1959։

«Հորիզոն»-ից բերված» «մարքսիզմի հակառակորդ ժամանակակիցներից մեկ»-ի և ոչ էլ Գ. Ղարաջյանի վկայությունները չեն կարող հիմք ծառայել՝ Աթաբեկյանին հայ մարքսիստների պատմական նախորդը համարելու համար։

Աթաբեկյանը մարքսիզմի թշնամին չէր, բայց նրա իսկական բարեկամն էլ չէր։ Նա 1870-ական թվականների ռուսական հեղափոխական շարժմանը մասնակցած հայ նարոդնիկներից մեկն էր, որոնցից շատերը 1880-ական թվականներին, արևմտահայ ժողովրդի ազատագրական շարժման վերելքի ժամանակ հարեցին ազգային կուսակցություններին և գործեցին նրանց հետքերով։

Հ. Աթաբեկյանը բոլորովին բացասականորեն էր տրամադրված Հայկական հարցի լուծման գործում արևմտաևրոպական տերությունների միջամտությունը հայցողների նկատմամբ։ Նա Հայաստանի ազգային անկախության խնդիրը ամենևին չէր կապում վեց տերությունների կոլեկտիվ խնամակալության հետ։ Բայց այդ էական հարցում նրա դիրքը չէր կանխում հայերի ազատագրական շարժման հեռանկարը՝ նրա քաղաքական մեկուսացումից, իրավացիորեն նկատում է Ա. Հովհաննիսյանը, որը գործնականորեն հասցնում և իրոք հասցրեց այդ շարժման պարտությանը։

Ճիշտ նկարագրելով արևմտահայերի ծանր վիճակը սուլթանական Թուրքիայում, արտահայտելով իր ցասումը թուրքական փաշաների և քրդական բեկերի կողմից աշխատավոր մասսաների կեղեքումների ու հարստահարությունների նկատմամբ։ «Հեղինակը,— գրում է Ա. Հովհաննիսյանը,— դժբախտաբար, դրանից չի անում համապատասխան քաղաքական եզրակացություն։ Թուրքիայում քաղաքական փոփոխությունների հեռանկարը նա որոնում է ոչ թե համաժողովրդական, այլ ազգային հեղափոխության մեջ։ Ռուսական կայսրության մեջ եղած գործերից տարբեր, ասում է, նա,— Թուրքիայում հեղափոխական շարժումը կրում է ազգային-պատրիոտական բնույթ, պայքար ազգային անկախության համար։ Այդ պայքարի հաղթական վախճանի հույսը նա տեսնում էր միայն Թուրքահայերի ընդհանուր ապստամբության մեջ՝ անպատճառ ռուսահայերի օգնությամբ»[21]։

Հետևապես, Հ. Աթաբեկյանի տեսակետը այս հարցում միանդամայն համընկնում էր ազգայնական կուսակցությունների տեսակետներին և վերջին հաշվով հայերի ուշադրությունը բևեռում էր դեպի հայկական դատը։ Ճիշտ է նկատում Ա. Հովհաննիսյանը, որ Աթաբեկյանը դեռ չէր հաղթահարել իր իդեալական նախորդների՝ 1880-ական թվականների ազգային-նարոդնիկների սխալ տեսակետները։

Հենց այդ նկատառումով Էնգելսը հրաժարվեց «Կոմունիստական մանիֆեստ»-ի հայերեն թարգմանության համար ծավալուն առաջաբան գրելուց։ Նա այդպիսի առաջաբան գրելուց հրաժարվեց ոչ միայն նրա համար, որ նրանում արծարծված իր մտքերը կարող էին օգտագործվել ռուսական վարձկան մամուլի կողմից՝ նվաճողական ցարիզմի համար, այլև այն բանի համար, որ հայ ազգայնականները կարող էին այդ մտքերը օգտագործել իրենց վնասակար քաղաքականությունը առաջ տանելու և ժողովրդական մասսաների ուշադրությունը ցարիզմի դեմ նախապատրաստվող հեղափոխական պայքարից հեռացնելու համար։

Լինելով իր ժամանակի առաջավոր մտածողներից ու հասարակական-քաղաքական գործիչներից, Հ. Աթաբեկյանը հիմնականում,— իրավացիորեն գրում է Ա. Հովհաննիսյանը, «կանգնած էր 90-ական թթ. առաջին հնգամյակի բնորոշ կովկասահայ մանրբուրժուական նացիոնալիզմի ընդհանուր պլատֆորմայի վրա»[22]։

* * *

Արտահայտելով իրենց խոր համակրանքը արևմտահայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ, հեղափոխական մարքսիստները հաստատ համոզված էին, որ հայերի ազատագրությունը սուլթանական ռեժիմից անհնար է, առանց ցարիզմի կործանման և ռուսական դեմոկրատական հեղափոխության հաղթանակի։

Պատմությունը ցույց տվեց և Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում պրատիկորեն ապացուցեց հեղափոխական մարքսիստների գծի ճշտությունը, ապացուցեց, որ բոլոր ճնշված ժողովուրդների և այդ թվում՝ հայ ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրության ուղին անցնում է ռուսական հեղափոխության միջով։

Բանվոր դասակարգի ու աշխատավոր գյուղացիության դաշինքով տապալելով բուրժուազիայի ու կալվածատերերի տիրապետու-

21 «Պատմա-բանասիրական հանդես», № 2—3, էջ 323։

22 Ա. Հովհաննիսյան. Էնգելսը և հայկական հարցը, Մոսկվա, 1931, էջ 12։

թյունը և հաստատելով պրոլետարիատի դիկտատուրա, Լենինի առաջնորդությամբ կոմունիստական կուսակցությունը ձեռնամուխ եղավ իրագործելու սոցիալիստական հեղափոխության արմատական հարցերից մեկը՝ ժողովուրդների լիակատար իրավահավասարության և նրանց ազատ զարգացման հնարավորությունների ապահովմանը։

Հոկտեմբերյան հեղափոխությունը փշրեց ազգային ճնշման շղթաները և հռչակեց բոլոր ազգերի լիակատար ինքնորոշման իրավունքը։

Համառուսական սովետների երկրորդ համագումարը «Բանվորներին, զինվորներին և գյուղացիներին» ուղղված իր դիմումի մեջ հայտարարեց, որ սովետական իշխանությունը «Ռուսաստանում բնակվող բոլոր ազգերին կապահովի ինքնորոշման իսկական իրավունք»[23]։

Սովետական իշխանությունն իր գոյության երրորդ օրում ձեռնամուխ եղավ ստեղծելու Ազգությունների ժողովրդական կոմիսարիատ, որի խնդիրն էր կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության անխափան կիրառումը, բոլոր ազգերի ու ժողովուրդների ազատ զարգացման պայմանների ապահովումը։

Սովետական կառավարությունը 1917 թ. դեկտեմբերի 28-ին հատուկ դեկրետ հրատարակեց «Թուրքահայաստանի» մասին, որը հանդիսանում է հայ ժողովրդի ազատագրության պատմական խոշորագույն փաստաթուղթ։ Վահան Տերյանի կողմից կազմված, ժողովրդական կոմիսարների խորհրդի կողմից հաստատված և Լենինի ստորագրությամբ հրապարակված այդ դեկրետում ասված է. «Ժողովրդական կոմիսարների խորհուրդը հայտարարում է հայ ժողովրդին, որ Ռուսաստանի բանվոր-գյուղացիական կառավարությունը Ռուսաստանի կողմից օկուպացված Թուրքահայաստանում պաշտպանում է հայերի ազատ ինքնորոշումը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն։ Ժողովրդական կոմիսարների խորհուրդը գտնում է, որ այդ իրավունքի իրագործումը հնարավոր է լոկ միայն մոտավոր մի շարք երաշխիքների, որոնք բացարձակապես անհրաժեշտ են հայ ժողովրդի ազատ հանրաքվեի (ռեֆերենդումի) համար»[24]։

---

23 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 293, Հայպետհրատ, 1951։

24 «Декреты октябрской революции», стр. 393, Москва, 1934.

Այդ երաշխիքները համարվում էին՝ զորքերի դուրս բերումը Թուրքահայաստանից և հայկական ժողովրդական միլիցիայի կազմակերպումը՝ հայերի անձնական ու հասարակական ապահովության համար, փախստական հայերի և թուրքական կառավարության կողմից երկրի զանազան մասերը գաղթեցրած հայերի անխափան վերադարձը։ Դեկրետը պահանջում էր թուրքահայերի ժողովրդական ժամանակավոր վարչության կազմակերպումը՝ ի դեմս դեմոկրատական սկզբունքներով ընտրված դեպուտատների սովետի և Հանձնակատարական կոմիտեի։

Սովետական իշխանությունը Կովկասի գործերի արտակարգ ու ժամանակավոր կոմիսար Ստ. Շահումյանին հանձնարարում էր ամեն կերպ աջակցել Թուրքահայաստանի բնակչությանը՝ դեկրետով նախատեսված խնդիրների կենսագործման համար։

Սակայն գերմանա-թուրքական իմպերիալիստների օգնությամբ Անդրկովկասում հաստատված մենշևիկյան, մուսավաթական և դաշնակցական հակահեղափոխական կառավարությունները, որոշ հանգամանքների պատճառով, սոցիալիստական հեղափոխական հաղթանակի ուշացումը, Անդրկովկասի անջատումը Սովետական Ռուսաստանից, խանգարեցին արևմտահայերի ինքնորոշման մասին եղած դեկրետի իրականացմանը։

Հոկտեմբերյան հեղափոխությունը հռչակեց կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության լիակատար հաղթանակը, խորտակեց ազգային ճնշման կապանքները, ազգային ճնշման իմպերիալիստների քաղաքականությանը հակադրեց սովետական իշխանության կողմից հետևողականորեն կիրառվող բոլոր ճնշված ժողովուրդների լիակատար ազատագրության քաղաքականությունը։

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, տապալեցին դաշնակների տիրապետությունը և Հայաստանում հաստատեցին սովետական կարգեր, որոնք Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության արժանավոր ծնունդն էին։ Հայ ժողովուրդը դրանով իսկ մեկընդմիշտ նվաճեց իր սոցիալական ու ազգային անկախությունը և բռնեց իր ազգային վերածննդի ուղին։

Մեծ Լենինը ջերմորեն ողջունեց դաշնակցականների տիրապետությունից ազատագրված բազմաչարչար հայ ժողովրդին։ «Ողջու-

նում եմ իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Սովետական Հայաստանին»[25]։

Հայաստանում սովետական իշխանության հաստատումը միակ պայմանն էր Հայկական հարցի լուծման համար։ Սովետական կարգերը իրագործեցին հայերի դարավոր իղձերը։ Սովետական Հայաստանը հանդիսանում է ամբողջ հայության միակ ու հարազատ Հայրենիքը, նրա տնտեսական, քաղաքական ու մտավոր կյանքի կենտրոնը, որը իր գոյության 47 տարիների ընթացքում կառուցեց սոցիալիզմ և սովետական ժողովուրդների հետ միասին, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, պայքարում է կոմունիզմի ծավալուն կառուցման համար։

Սփյուռքահայ աշխատավորությունը, առաջավոր մտավորականներն ու քաղաքական գործիչները համախմբվել և համախմբվում են իրենց սովետական հայրենիքի շուրջը, ուրախանում ու քաջալերվում են նրա պատմական խոշոր նվաճումներով։ Սովետական կարգերի հաստատումից հետո մի քանի հարյուր հազար հայեր վերադարձել են իրենց Հայրենիքը և ակտիվ կերպով մասնակցում են կոմունիզմի կառուցման գործին։

Սովետական կառավարությունը ձեռք է առնում բոլոր հնարավոր միջոցները գաղութահայ աշխատավորներին իրենց հարազատ Հայրենիքը՝ Սովետական Հայաստան վերադարձնելու համար։ ՍՍՌՄ կառավարությունը հատուկ որոշում ընդունեց 1962 թվականից պարբերաբար հայրենադարձություն կազմակերպելու մասին, որը մի նոր վկայություն է կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության լենինյան ազգային իմաստուն քաղաքականության հաղթանակի, դեպի հայ ժողովուրդը նրանց ցուցաբերած բացառիկ հոգատարության։

---

25 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, Հայպետհրատ, 1952, էջ 550։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

1. Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 1, Հայպետհրատ, 1941։
2. Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 2, Հայպետհրատ, 1943։
3. Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 17, Հայպետհրատ, 1950։
4. Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, Հայպետհրատ, 1950։
5. Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 19, Հայպետհրատ, 1950։
6. Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, Հայպետհրատ, 1950։
7. Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, Հայպետհրատ, 1950։
8. Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, Հայպետհրատ, 1951։
9. Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, Հայպետհրատ, 1952։
10. Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 1, Հայպետհրատ, 1955։
11. Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 2, Հայպետհրատ, 1957։
12. Աշոտ Հովհաննիսյան, Հայ-ռուսական օրիենտացիայի ծագման խնդրի շուրջը, Էջմիածին, 1921։
13. Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 2։ Հայպետհրատ, 1955։
14. Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, Երևան, 1955։
15. Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4։
16. Կենսագրութիւն Մեսրոպայ Դաւթին Թաղիադեանց Երևանցւոյ, հավաքեց և խմբագրեց Տ. Հովհաննես, Կ. Մկրեան, Թիֆլիս, 1883։
17. Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1։
18. Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2։
19. Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3։
20. Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4։
21. Մ. Մամուրյան, Անգլիական նամականի։
22. Մ. Մամուրյան, Հայկական նամականի։
23. Ատենագրություն Ազգային ժողովո, հատ. Ե, Կ. Պոլիս։
24. Դիվան հայոց պատմության, հատ. ԺԳ, Թիֆլիս, 1915։
25. Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Հայպետհրատ, 1951։
26. «Տեղեկագիրք գավառական հարստահարությանց», Կ. Պոլիս, 1876։
27. Ռ. Պատկանյան, Երկեր, Հայպետհրատ, 1955։
28. Ռ. Պատկանյան, Ընտիր երկասիրություն, հատ. 1։

29. Բաֆֆի, Տաճկահայք, Թիֆլիս, 1894։
30. Բաֆֆի, Հայ կին և հայ երիտասարդությունը, էջ 92, Թիֆլիս, 1890։
31. Բաֆֆի, Խենթ, Երկերի ժողովածու, հատ. 3։
32. Բաֆֆի, Դավիթ Բեկ, Երկերի ժողովածու, հատ. 6, Հայպետհրատ, 1956։
33. Բաֆֆի, Կայծեր, Երկերի ժողովածու, հատ 4։
34. Բաֆֆի, Կայծեր, Երկերի ժողովածու, հատ. 5։
35. Լեո. Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանություն, հատ. Ա., Փարիզ, 1932։
36. Լեո. Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանություն, հատ. Բ., Փարիզ, 1935։
37. Լեո, Հայոց վավերագրերը, էջ 1, Թիֆլիս, 1915։
38. Լեո, Գրիգոր Արծրունի, հատ. 3։
39. Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925։
40. Բաֆֆի, Սամվել, Հայպետհրատ, 1957։
41. Կ. Թումայան. Պատմություն Արևելյան խնդրոյ և առաջնորդ Հայկական հարցին, հատ. Ա, Լոնդոն, 1905։
42. Կ. Թումայան. Պատմություն Արևելյան խնդրոյ և առաջնորդ Հայկական հարցին, հատ. Բ, Լոնդոն, 1905։
43. Գ. Վ. Սրվանձտյան, Թորոս աղբար, հատ. 1, Կ. Պոլիս, 1879։
44. Գ. Վ. Սրվանձտյան, Թորոս աղբար, հատ. 2, Կ. Պոլիս, 1884։
45. Ա. Մանդելշտամ, Օսմանյան կայսրության ճակատագիրը։ Կ. Պոլիս, 1919։
46. Համբարձում Երամյան, Հուշարձան Վան-Վասպուրականի, Ալեքսանդրիա, 1929։
47. Խրիմյան Հայրիկ. Վանդոյժ, Կ. Պոլիս, 1908։
48. Խաչեն Գապիկյան, Հայկական հարցը Արևելյան հարցի մեջ (1860—1880), Պեյրութ, 1962։
49. Ա. Աճեմյան, Պատմություն Արևելյան պատերազմի, հատ. 1, Կ. Պոլիս, 1879։
50. Սրամ, Սուլթան Ապտյուլ Համիդ ինչպես մեռավ։ Գահիրե, 1908։
51. Ժագ դը Մորգան, Հայ ժողովրդի պատմությունը, Պոստոն, 1947։
52. Ա. Ամֆիթատրով. Եվրոպա և Հայաստան, Թիֆլիս, 1906։
53. Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգ. սահմանադրությունը Թուրքիայում (1860—1910), Թիֆլիս, 1910։
54. Հ. Աճեմյան, Հայոց Հայրիկ, Թավրիզ, 1929։
55. Ա. Ալպոյաճյան. Մինաս Չերազ։
56. Հ. Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3։
57. Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հատ. 4։
58. Հ. Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 14։
59. Ա. Տեր-Կարապետյան, Գյուլիզար. Փարիզ, 1946։
60. Հ. Ճանկյուլյան. Հիշատակարաններ հայկական ճգնաժամեն, Կ. Պոլիս, 1913։
61. Ազգապատում, մասն երրորդ, Երուսաղեմ, 1927։
62. Գր. Արծրունի, Թուրքաց հայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1894։
63. «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 2, Հայպետհրատ 1957։
64. Ա. Թերզիպաշյան, Արծիվ իր բույնին մեջ, Փարիզ, 1938։
65. Գ. Լազյան, Հայաստանը և հայ դատը (վավերագրեր), Փարիզ, 1916։
66. Ջեմալ փաշա, Հայկական հարցը, Երևան 1927։
67. Է. Շահազիզ, Երկեր. Հայպետհրատ, 1947։

68. Ալ. Մատուրյան, Երկեր, Հայպետհրատ, 1948։
69. Վ. Պարսամյան. Հայ ազատագրական շարժման պատմությունից, Հայպետհրատ, 1958։
70. Մ. Ներսեսյան. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ. Երևան, 1955։
71. Ռուբեն Խանազատ. Հիշողություններ Խրիմյանի մասին, Թիֆլիս, 1908։
72. «Պատմություն Ս.—Գ. հնչակյան կուսակցության», հատ. Ա, Պեյրութ, 1962։
73. Ա. Քալանթար. Սասուն, Թիֆլիս, 1895։
74. Գլակ Տարոնցի, Ապստամբ Սասուն, Ժնև, 1903։
75. Հ. Առաքելյան, Զեյթուն, Թիֆլիս, 1896։
76. Զեյրունցի, Զեյթունի անցյալն և ներկայն, Վիեննա, 1900։
77. Սմբատ Բյուրատ, Ազատության համար — Զեյթունի վրեժը, Կ. Պոլիս, 1911։
78. Հ. Աճառյան, Տաճկահայոց հարցի պատմությունը, Ն. Նախիջևան, 1915։
79. Ա—ԹՈ, Վանի Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912։
79. Ա—ԹՈ, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912։
81. Դ. Վարուժան, Ջարդը, Փարիզ, 1908։
82. «Եվրոպացիների կարծիքը հայկական դատի մասին», Ժնև, 1907։
83. Սարգիս Իզմիրլյան. Դատումներ մեր հարյուրամյա հեղափոխության մասին (անձնական հուշերուս ընդմիջումեն), Պեյրութ, 1962։
84. Արտակ Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերեն (հուշեր 1890-ական — 1940), Փարիզ, 1947։
85. Մ. Վարանդյան, Հ. Հ. Դաշնակցության պատմություն, Փարիզ, 1932։
86. «Ծրագիր Հ. Հ. Դաշնակցության», Ժնև, 1906։
87. Քր. Միքայելյան. Հեղափոխականի մտքեր, Ժնև, 1906։
88. «Վարդապետարան Հայաստանի ազատագրության», Մարսել, 1891։
89. Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու. հատ. 8, Հայպետհրատ, 1951։
90. Մրավյան (Ա. Ամիրյան), Դաշնակցության կրիզիսը, Վիեննա, 1907։
91. Ալ. Մլասնիկյան. Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924, էջ 57։
92. Աշոտ Հովհաննիսյան. Էնգելսը և հայկական հարցը, Մոսկվա, 1931։
93. Վ. Տերյան. Երկեր, հատ. 4, Երևան, 1925։
94. Ե. Սարգսյան և Ռ. Սահակյան. Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության ներգափոխումը թուրք պատմագրության մեջ. Հայպետհրատ, 1963։
95. Ա. Ոսկերչյան, Հայ մարքսիստական քննադատության հիմնադիրները, Հայպետհրատ, 1957։

Ամսագրեր

1. «Պատմա-բանասիրական հանդես», № 1, Երևան, 1959։
2. «Պատմա-բանասիրական հանդես» № 2—3, Երևան, 1959։
3. «Նորք» № 1—2, Երևան, 1926։
4. «Մաղիկ» № 124, 1866։
5. «Անահիտ» № 4, Փարիզ, 1899, 3, Փարիզ, 1898, 9, Փարիզ, 1901։
6. «Մուրճ» № 2, Թիֆլիս, 1903։
7. «Փորձ», № 7—8, 1879։

8. «Գործ» № 3, Բաքու, 1917։
9. «Արձագանք» №№ 12, 2, Գ 3, 4, 1883, 2, 1882։
10. «Հայրենիք» № 9 (57), 11 (59), Բոստոն, 1927։ 3 (63), 4 (64), 1928։
11. գ «Հյուսիսափայլ», 1860։
12. «Հյուսիսափայլ», № 1, 1859։

Մամուլ

1. «Մասիս» №№ 2156, 1878, 3737, 1884, 2781, 1880, 1848, 1887 1874, 1877, 1884, 1877, 2324, 1879, 30, 1878, 3422, 1883, 3734, 1884, 37, 1895, 1459, 1888։
1. «Արևելք», №№ 2002, 1890, 1225, 1888, 1205, 1888։
2. «Կռունկ Հայոց աշխարհի», 1883։
3. «Մեղու Հայաստանի», №№ 37, 1879, 17, 1879, 129, 1882, 5, 1878, 29, 1876, 28, 1878, 31, 1878, 50, 1878, 40, 1879, 65, 1879, 85, 1879, 55—1880, 182, 1881։
4. «Նոր Դար» №№ 25, 1895, 131, 1894, 197, 1894, 91, 1895, 6, 1884, 127, 1894, 131, 1886, 91, 1886, 4, 1888, 9, 1888, 102, 1890, 129, 1894, 221, 1894, 130, 1889, 17, 1888, 20, 1888։
5. «Արևելյան մամուլ», հունվար, 1876, մայիս, 1878, մայիս, 1878, մայիս, 1878, հունիս, հոկտեմբեր, 1878, ապրիլ, 1879, օգոստոս, 1880, հոկտեմբեր, 1876։
6. «Արմենիա», №№ 24, 1888։ 19, 1907, օգոստոս 12 (հուլիս 31), 1896, 33, 1890, 60, 1893, 7, 1896, 33, 1890։
7. «մշակ», №№ 8, 1893, 51, 1895, 9, 1889, 13, 1892, 24, 1876, 21, 1893, 8, 1895, 126, 1879, 45, 1876, 29, 1881, 145, 1878, 16, 1875, 17, 1875, 162, 1878, 45, 1876, 5, 1878, 6, 1878, 47, 1876, 149, 1878. 146, 1878, 33, 1876, 143, 1896, 142, 1896, 6, 1879, 60, 1876, 122, 1879, 207, 1879, 89, 1879, 110, 1878, 189, 1878, 182, 1880, 191, 1879, 94, 1878, 134, 1878, 30, 1878, 64, 1880, 65, 1880, 66, 1880, 70, 1880, 74, 1880, 26, 1913. 23, 1877, 159, 1878, 152, 1878, 5, 1880, 4, 1883. 12, 1883, 20, 1883, 84, 1883, 125, 1879, 214, 1901, 230, 1901, 39, 1884, 182, 1877, 165, 1878, 138, 1880, 156, 1880, 9, 1889, 34, 1883, 35, 1883, 110, 1891, 146, 1892, 11, 1892, 86, 1894, 111, 1894, 106, 1894, 131, 1894, 197, 1894, 37, 1895, 38, 1895, 54, 1895, 64, 1895, 77, 1895, 102, 1895, 15,1893, 146, 1894, 148, 1894, 9, 1895, 23, 1895, 8, 1893, 144, 1895, 14, 1896, 52, 1896, 4, 1893, 4, 1893։
8. «Ընչակ», №№ 4, 1894, 6, 1895, 2, 1889, 1, 1887, 5, 1887, 3, 1889, 5, 1892, 6, 1891, 6, 1895, 18, 1895, 22, 1895, 24, 1895, 3, 1896, 5, 1896, 18, 1896, 19, 1896, 8, 1897, 9, 1897, 6, 1897, 11, 1897։
9. «Դրոշակ», №№ 4, 1899, 2, 1891, 14, 1894, 4, 1895, 3, 1895, 14, 1895, 17—18, 1895, 4, 1896, 19, 1895, 7, 1896, 14, 1896, 28, 1896, 16, 1896, 21, 1896, 3, 1898, 8, 1897, 11, 1897, 17, 1897։

10. «Յառաջ», № 23, 1906. 53, 1906, 25, 1906. 22, 1906։
11. «Տարազ», № 5, էջ 69, Թիֆլիս, 1890։
12. «Երկրի ձայն», №№ 10, 1906, 26, 1907։
13. «Գրական թերթ», № 48 (1064), 1966։
14. «Պրոլետարիատի կոիվը», № 2—3, 1903։
15. «Պրավդա», № 327 (6573), 1935։

Հայկական արխիվներ

1. ՀՍՍՀ ԳԱ պատմ. ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, թղթապանակ № 1, թերթ 156։
2. ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, տետր № 25, էջ էջ 144, 145։
3. ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, թղթապանակ № 12, վավերագիր № 38, թ. թ. 2, 3։
4. ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, թղթապ. № 3, թերթ 90—100։
5. ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, թղթապ. № 1, թերթ 11—12, 15, 19, 61—62, 62—65։
6. ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, տետր № 87, էջ 1—2։
7. ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, թղթապ. № 1, թերթ 122, 124, 67։
8. ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, տետր № 3, թերթ 83։
9. ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, տետր № 33, թերթ 81։
10. ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, տետր № 17, թերթ 41։
11. ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, տետր № 87, թերթ 48։
12. ՀՍՍՀ ՊԿՊԱ, Հ. Լազարյանցի ֆոնդ, № 42, գործ № 11, թերթ 66, 24, 26, 79, 83, 89։
13. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆոնդ № 101, գործ № 71, թերթ 16։
14. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆոնդ № 42, գործ № 30, թերթ 59։
15. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆոնդ № 42, գործ № 11, թերթ 70, 71։
16. Մաշտոցի անվան Մատենադարան, Իզմիրլյանի արխիվ, թղթապ. № 14, վավերագիր 521։
17. ՀՍՍՀ ՊԿՊԱ, Հ. Լազարյանցի ֆոնդ № 42, գործ № 28, թերթ 8։
18. Մաշտոցի անվան Մատենադարան, Ա. Երիցյանի արխիվ, թղթապ. № 149, վավերագիր 144։
19. ՀՍՍՀ ՊԿՊԱ, Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվան, ֆոնդ № 57, գործ № 693, թերթ 3։
20. ՀՍՍՀ ՊԿՊԱ, Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվան, ֆոնդ № 56, գործ № 46, թերթ 2։
21. Մաշտոցի անվան Մատենադարան, Երիմյանի արխիվ, ֆոնդ № 17, գործ № 101, վավերագիր 17։
22. ՀՍՍՀ ՊԿՊԱ, Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվան, ֆոնդ № 57, գործ № 496, թերթ 3։
23. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆոնդ № 42, գործ № 20, թերթ 16, 18։

24. ՀՍՍՀ ՊԿՊԱ, Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան, ֆոնդ № 56, գործ № 55, թերթ 1922։
25. Մաշտոցի անվան Մատենադարան, Իզմիրլյանի ֆոնդ № 34, թղթապ. № 14, վավերագիր 640։
26. Մաշտոցի անվան Մատենադարան, Ա. Երիցյանի արխիվ, թղթապ. № 151, վավերագիր 30։
27. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆոնդ 38/102, գործ № 58, թերթ 19։

1. *К. Маркс* и *Ф. Энгельс,* Сочинения, т. 9, Москва, 1957.
2. «Архив К. Маркса и Ф. Энгельса», т. V.
3. *К. Маркс* и *Ф. Энгельс,* Сочинения, т. 10, Москва, 1958.
4. *К. Маркс* и *Ф. Энгельс,* Сочинения, т. 22, Москва, 1962.
5. *К. Маркс* и *Ф. Энгельс,* Сочинения, т. IX, Москва, 1933.
6. *К. Маркс* и *Ф. Энгельс,* Сочинения, т. XXIX, Москва, 1933.
7. *Ллойд Джордж,* Правда о мирных договорах, т. I, Москва, 1957.
8. *Ролен-Жекмен,* Армения, армяне и трактаты, Москва, 1898.
9. «Русский архив 1889 г.», Книга 3 (9), стр. 332.
10. «Русский архив 1894 г.», Книга первая, стр. 67—68.
11. «Русский архив 1885 г.», Книга первая, стр. 102.
12. *Захарий Стоянов,* Записки о болгарских восстаниях, Москва, 1956.
13. *О. Бисмарк,* Мысли и воспоминания, том второй.
14. *Н. И. Беляев,* Русско-турецкая война 1877—1878 гг.
15. *Б. Колюбокин,* Русско-турецкая война 1877—1878 гг. на Кавказе Малой Азии, СП, 1906.
16. «Дневник Д. А. Милютина, 1878—1880», т. 3.
17. «Записки графа Н. Н Игнатьева о Сан-Стефано», Москва, 1965.
18. *Ш. В. Мегрелидзе,* Грузия в русско-турецкой войне 1877—1878 гг., Батуми, 1955.
19. *С. О. Кишмишов,* Война в Турецкой Армении в 1877—1878 гг., СП, 1884.
20. *Н. И. Кравченко,* Очерки из истории международных отношений конца XIX и начала XX вв., Саратов, 1925.
21. «История дипломатии», т. I, Москва-Ленинград.
22. «Положение армян в Турции», стр. XIII,
23. «Братская помощь армянам», стр. XI, Москва, 1897.
24. *А. Амфитеатров,* Армянский вопрос, Тифлис, 1906.
25. «История дипломатии», т. II, Москва, 1945.
26. «Декреты Октябрьской революции», Москва, 1934.
27. «*Голос*», от 24 декабря 1878 года.
28. «*Правительственный вестник*», № 179, 1879.
29. «*Бакинские известия*», № 44, 1903.
30. «*Путь Правды*», № 10, 1914.

Կենտրոնական Արխիվ

1. ЦГИА в Ленинграде, фонд Лорис Меликова № 866, дело № 7, л. 7.
2. ЦГИА в Ленинграде, фонд Лорис Меликова № 866, дело 7, л. 8.
3. ЦГИА в Ленинграде, фонд Лорис Меликова № 866, дело 7, л. 2.
4. ЦГИА в Ленинграде, фонд Лорис Меликова № 866, дело 74, л. 21.
5. ЦГВИА, фонд № 485, дело № 1250, л. 4.
6. ЦГВИА, фонд № 485, дело № 1251, л. 4.
7. ЦГВИА, фонд № 485, дело № 1251, л. 100.
8. ЦГВИА, фонд № 485, дело № 1260, л. 98.
9. ЦГВИА, фонд № 485, дело № 126Л, л. 124—125.

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպագրված է	Պետք է լինի
7	վ. 2	որկել	գրկել
13	վ. 16	մի մասին՝ հայկական լեռնաշխարհում	ազատագրեցին քրիստոնյաներին Բալկաններում և քրիստոնյաների մի մասին՝ հայկական լեռնաշխարհում։
138	վ. 3	սխակին	սոխակին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

Գլուխ առաջին. — *Արևմտահայերի տնտեսական և իրավա-քաղաքական դրությունը 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին* 25

Գլուխ երկրորդ. — *1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմը։ Սան-Ստեֆանոյի դաշնագիրը։ Բեռլինի կոնգրեսը և Հայկական հարցը* 51

Գլուխ երրորդ. — *Սուլթանական կառավարության հայաջինջ քաղաքականությունը Բեռլինի կոնգրեսից հետո։ Ազգային-ազատագրական շարժման վերելքը 1870—1880-ական թվականներին* 83

Գլուխ չորրորդ. — *Ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը* 135

Գլուխ հինգերորդ. — *Հայկական կոտորածները Թուրքիայում 1894—1896 թվականներին և եվրոպական մեծ տերությունները* . . . 173

Գլուխ վեցերորդ. — *Հայ հասարակական հոսանքները և նրանց դիրքավորումը արևմտահայության ազատագրության գործում* . . . 254

Գլուխ յոթերորդ. — *Հայ ազգայնական կուսակցությունները և արևմտահայ ժողովրդի ազատագրության նրանց ծրագիրն ու տակտիկան* . . 287

Գլուխ ութերորդ. — *Հայ հեղափոխական մարքսիստների դիրքորոշումը արևմտահայերի ազատագրության հարցում* 334

Օգտագործված գրականության ցանկը 349

ՀԱՄՈ ԳԵՎՈՐԳԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

АМО ГЕВОРКОВИЧ ВАРДАНЯН

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ

Պատ. խմբագիրներ Դ. Ա. Մուրադյան, Հ. Մ. Ղազարյան
Հրատ. խմբագիր Ա. Ա. Հովակիմյան
Նկարչական ձևավորումը Յու. Հ. Առաքելյանի
Տեխ. խմբագիր Մ. Ա. Կափլանյան
Սրբագրիչներ Ս. Կ. Զաքարյան, Ջ. Խ. Օրմանյան

ՎՖ 04532, հրատ. № 2817, ԽՀԽ № 1073, պատվեր 170, տպաքանակ 5000

Հանձնված է արտադրության 27/I 1967, ստորագրված է տպագրության 15/XII 1967 թ. տպագր. 22,37 մամուլ, հրատ. 18,55 մամուլ, թուղթ № 1, 60×90 1/16, Գինը 1 ռ. 37 կ.։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչության տպարան, Երևան, Բարեկամության 24։